

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ  
ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԵԼԹԻ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ



ԶԱՐԿԱԿ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2014

Հրատարակության են երաշխավորել ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհուրդները:

ՀՏԴ 330(479.25)  
ԳՄԴ 65.9(2Հ)  
Ս 259

Մասնագիտական խմբագիր՝ **Հ. Ի. Աղաջանյան**  
*դոկտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Սարգսյան Հայկ, Մարկոսյան Աշոտ  
Ս 259 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԵԼՔԻ  
ՀԵՌԱՆԿԱՐԳՆԵՐԸ/Հ. Սարգսյան, Ա. Մարկոսյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2014.— 552 էջ:

Գիրքը ներկայացնում է համաշխարհային և տարածաշրջանային նորագույն զարգացումների սոցիալական, տնտեսական և քաղաքատնտեսական ծավալուն հետազոտությունների արդյունքները, որոնք հեղինակները իրականացրել են համակարգային համապարփակ ուսումնասիրության դիրքերից: Գրքում արտացոլված են համաշխարհային տնտեսության զարգացման գերիշխող միտումները, հասարակական առաջընթացի և ընտրության տեսության հիմնահարցերը, պետության տնտեսական գործառույթների էվոլյուցիան:

Քննարկված խնդիրների համատեքստում կատարվել է Հայաստանում իրականացված վերափոխումների վերլուծությունը գրեթե քառորդարյա անկախության ժամանակահատվածի համար: Դիտարկվել են սոցիալ-տնտեսական զարգացման առանձին ոլորտների ծրագրային խնդիրները, ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման ու վճարային հաշվեկշռի բարելավման հիմնուղիները, տարածաշրջանային համագործակցության զարգացումների և արտաքին տնտեսական գործունեության վեկտորները և այլ հիմնահարցեր:

Հետազոտությունում զգալի տեղ է հատկացված ՀՀ տնտեսության առջև ծառայած մարտահրավերների բացահայտմանը, որոնց կառուցվածքավորման միջոցով պարզորոշվում են երկարատև կայուն տնտեսական աճի ու զարգացման նախադրյալները, այդ հենքի վրա ուրվագծվում է ՀՀ տնտեսական վերելքի տեսլականը:

Նախատեսված է ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, գիտաշխատողների, պետական ու հանրային կառավարման մարմինների, գործարարների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են Հայաստանի տնտեսության համակարգային և ինստիտուցիոնալ վերափոխումներով:

ՀՏԴ 330(479.25)  
ԳՄԴ 65.9(2Հ)

ISBN 978–9939–68–336–2

© Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., 2014  
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2014



## ԱՌԱՋԱԲԱՆ

Մենք երկար մտորում էինք աշխատության վերնագրի շուրջ: Պատմում են, որ ոմն գրող գրեթե ավարտուն վեպը ավելի հնչեղ վերնագրելու ակնկալիքով դիմում է հրատարակչության խմբագրին: Փորձառու խմբագիրը, տարակուսելով հանդերձ, հարցուփորձ է անում գրքի բովանդակության, ժամանակաշրջանի, առանցքային դրվագների ու այլնի շուրջ, այնուհետև հետաքրքրվում է՝ գրքում կան արդյոք երաժշտությամբ ուղեկցվող տեսարաններ: Ստանալով բացասական պատասխան՝ խմբագիրն այսպիսի վերնագիր է առաջարկում՝ «Առանց դիոլի և զուռնայի»: Այս աշխատությունում մենք արել ենք հակառակը: Արդարացված կլիներ գայթակղությունը՝ ունենալու հավակնոտ վերնագիր, որում նախանշված կլինեին *վեր* նախածանցով *վերափոխում* և *վերընթաց* բառերը, եթե հնարավորինս ամփոփ արտացոլվեին ինչպես տարատեսակ սոցիալ-տնտեսական վերափոխումները, այնպես էլ նշմարվեր երկրի տնտեսական վերելքի տեսլականը:

Տևական վերափոխումային անկումը մեզ ուղեկցել է անկախության գրեթե ողջ ժամանակահատվածում: Նկատենք, որ միայն 2005 թ. ձեռք բերվեց 1990 թ. մեկնարկային մակարդակը, իսկ հետագա տարիներին թափ առնող տնտեսական աճը ընդմիջվեց 2009 թ. համաշխարհային ճգնաժամով ու արտաժին շինարարական բումով, ինչը պայմանավորված էր ինչպես երկրում իրականացված տնտեսական քաղաքականության, այնպես էլ արտատնտեսական ոչ ստանդարտ իրադրություններով:

Գիտակցելով հանդերձ՝ այդ իրավիճակների բնորոշումն ու ընթացքի մեկնաբանությունը չի կարող զերծ լինել թե՛ ընկալման, թե՛ հետևությունների պայմանականություններից, ներկա վերլուծություններում աշխատել ենք առավելապես շեշտադրել տնտեսական բաղադրիչը: Այստեղից էլ մեր հիմնական նպատակադրումը՝ հնարավորինս համարժեք արտացոլել Հայաստանի և ԼՂՀ տնտեսության գրեթե քառորդդարյա զարգացման ընթացքը: Ելակետային այս հիմնադրոյթով էլ պայմանավորված՝ մենք առանձնացրել ենք այն հիմնահարցերի շրջանակը, որն էլ, ի վերջո, կանխորոշեց ներկա աշխատության կառուցվածքը՝ հասարակական ընտրությունից ու դրանում պետության դերաբաշխումից մինչև վերջիններիս անդրադարձը աշխարհաքաղաքական, էթնոմշակութային, անվտանգության ներկայիս մարտահրավերների և սոցիալ-տնտեսական իրողությունների վրա:

Ակնհայտ է, որ տարաբնույթ զարգացումները երբեմն հանգեցնում են դաժան դրսևորումների, ինչպիսին, օրինակ՝ աղքատությունն է, որն ուղեկցվել է բնակչության որոշակի շերտի ունեզրկմամբ ու եկամուտների աննախադեպ գերբևեռացմամբ: Զրկանքների սոցիալական գինը այդ գործընթացներում ամենացավազինն էր. շուրջ չորս միլիոնի հասնող բնակչության թվաքանակն արդեն կրճատվել է ավելի քան մեկ միլիոնով, ավելին՝ ահագնացող միզրահիան դեռևս չի փոխել իր ուղղվածությունը. մարդիկ լքում են իրենց հայրենիքը՝

անհաղորդ մնալով և տեղի չտալով մեծ բանաստեղծի հայտնի հորդորին. «Ախր ես ինչպես վեր կենամ գնամ...»:

Այս ամենի հետ մեկտեղ ակնառու փաստ է հայկական ևս մեկ անկախ պետության՝ ԼՂՀ-ի՝ հաստատուն քայլերով կայացումը: ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների համար ստեղծվում են անհրաժեշտ ենթակառուցվածքները: Հուսադրող է նաև արտահանման կողմնորոշմանն ուղղված տնտեսական քաղաքականության որդեգրումը, որի հաջող կենսագործումը պայմանավորված է մրցակցային բարենպաստ միջավայրի ստեղծմամբ, ՀՀ կառուցվածքափոխակերպված տնտեսությունում մարդկային կապիտալի որակավորման բարձրացմամբ ու առավելագույն գործադրմամբ:

Գրքի առաջին բաժինը նվիրված է հասարակական ընտրության հիմնահարցերի դիտարկմանը տարբեր տնտեսագիտական հայեցակարգերի տեսանկյունից, որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու քաղաքական գործընթացները (բյուրոկրատիայի էկոնոմիկան, սահմանադրության տնտեսագիտական տեսությունը և այլ ուղղություններ) և մեկնաբանելու դրանց տնտեսագիտության մեթոդաբանության հիմքերը:

Պետության տնտեսական գործունեության արդյունքները քննության առարկա են դարձել աշխատանքի երկրորդ բաժնում, որում փորձ է արված բացահայտելու քաղաքական անկախության ձեռքբերումից ի վեր իշխանությունների վարած տնտեսական քաղաքականությունը կառուցվածքային, արտաքին առևտրի, ֆիսկալ, դրամավարկային, հակամենաշնորհային ու սոցիալական քաղաքականության ոլորտներում:

ՀՀ տնտեսության բարելավմանն ուղղված կառուցակարգերի ու գործիքակազմի ընտրության, տնտեսության մրցունակության բարձրացման մարտահրավերների լուծման ուղիների շուրջ մեր քննարկումներում ուրվագծվում են երկարաժամկետ կայուն տնտեսական զարգացման ուղիներն ու վերելքի տեսլականի նախադրյալների ստեղծումը:

Հեղինակներն իրենց գոհունակության ու երախտիքի խոսքերն են ուղղում գործընկերներին՝ գլխավոր մասնագիտական խմբագիր, տ. գ. դ., պրոֆ. Հ. Ի. Աղաջանյանին, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ. գ. դ., պրոֆ. Վ. Լ. Հարությունյանին, տ. գ. դ., պրոֆ. Ա. Հ. Բայադյանին, փ. գ. դ., պրոֆ. Ա. Ե. Մկրտիչյանին, տ. գ. դ. Ռ. Ա. Գևորգյանին, տ. գ. թ., դոց. Գ. Ս. Գալստյանին, տ. գ. թ., դոց. Կ. Շ. Եղոյանին, տ. գ. թ. Ա. Գ. Մինասյանին, տ. գ. թ. Վ. Վ. Գաբրիելյանին, տ. գ. թ. Ն. Լ. Սարգսյանին, տ. գ. թ. Է. Ն. Մաթևոսյանին, տ. գ. թ. Լ. Ռ. Խաչատրյանին, տ. գ. թ. Բ. Ա. Ավագյանին, ինչպես նաև այն ասպիրանտներին ու մագիստրանտներին, որոնց հետ քննարկումների ընթացքում ձևավորվել ու արժևորվել են խնդրո առարկա շատ հարցադրումներ:

# ԲԱԺԻՆ I. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

## ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԸՆ ԴՎԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ

### 1.1. Գլոբալացումը և տնտեսական ինտեգրումը որպես համաշխարհային տնտեսության զարգացման գերիշխող միտումներ

Ժամանակակից աշխարհում կատարվող խորքային փոփոխությունները լուրջ տեղաշարժեր են առաջացրել միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, որի բնորոշ գծերից մեկը համաշխարհային տնտեսությանը ինտեգրումն է, և այդ հիմքի վրա էլ այն աստիճանաբար դառնում է **գլոբալացված**: Այս հասկացությունը սահմանվում է տարբեր կերպ. համաձայն գերակշռող տեսակետի՝ ոչ մի հասարակական գործընթաց (տնտեսական, սոցիալական, իրավաբանական, քաղաքական, ռազմական և այլն) ինչպիսի մասշտաբային կամ մասնակի բնույթ էլ կրի, չի կարող դիտարկվել այդ խորքային փոփոխություններից դուրս:

Գլոբալացումը նեղ իմաստով տնտեսական ինտեգրման այնպիսի մակարդակ է և տնտեսական փոխկապվածության այնպիսի աստիճան, երբ որևէ երկրի և անգամ տարածաշրջանի տեղական զարգացումն այլևս անհնար է առանց մյուս երկրների ու տարածաշրջանների զարգացման:

Տեղի ունեցած գործընթացների միջև փոխկապվածությունն ու փոխապայմանավորվածությունը գնալով խորանում է, որը պահանջում է հակադարձ էֆեկտի, բոլոր մոտակա և համեմատաբար աճանցյալ հետևանքների հաշվառում և գնահատում ինչպես հարակից, այնպես էլ մյուս ոլորտներում: Գնալով բարդանում է նախադրյալների գնահատումը և այդ հիմքի վրա խորքային վերլուծությունների կատարումը: Այս կամ այն իրավիճակները կարող են պայմանավորված լինել ոչ միայն և ոչ այնքան քաղաքական, որքան տնտեսական, սոցիալական, էթնիկական, քաղաքակրթական և այլ բնույթի գործոններով, իսկ տնտեսության մեջ փոփոխությունները հաճախ պայմանավորված են նաև ոչ տնտեսական գործոններով:

Գլոբալացումը դարեր շարունակվող գործընթաց է, որը ձեռք է բերել նոր որակներ և մասշտաբներ: Կարելի է ընդունել, որ համաշխարհային հանրության զարգացման ժամանակակից պայմաններում հատկանշական են գլոբալացման փուլի սկզբունքորեն նոր որակական նախանշաններ, որոնք հիմք են տալիս այն դիտարկելու որպես քաղաքակրթության զարգացման օրինաչափ,

սակայն առանձնահատուկ օղակ:

Լայն իմաստով գլոբալացումը նշանակում է կենսագործունեության տարբեր ոլորտների միջև անմիջական փոխհարաբերության միասնական դաշտի ստեղծում, իրականացում և հետևանքների ազդեցության էական մեծացում: Նման տարածական ընդլայնումն ընդգրկում է նաև համաշխարհային տնտեսությունը, միջազգային հարաբերությունների համակարգը:

Համաշխարհային մասշտաբով գլոբալացման գործընթացի արագացման վրա անմիջապես ազդում է կապի և տեղեկատվության ընդգրկումն համակարգի զարգացումը, միջազգային հաղորդակցության որակապես նոր պայմանների ստեղծումը:

Գլոբալացումը շոշափում է նաև միջազգային հարաբերությունների այնպիսի առանձնահատուկ ոլորտներ, ինչպիսիք են աշխարհատնտեսական կապերը և համաշխարհային տնտեսությունը: Դա նշանակում է, որ այն ընդգրկում է ներքին տնտեսությունը, արտադրությունը, ժողովրդագրությունը, բնապահպանությունը, սոցիալական հարաբերությունները, իրավական համակարգը, քաղաքականությունը և այլն:

Այսպիսով՝ կարող ենք նշել արդի գլոբալացմանը բնորոշ հետևյալ հիմնական գծերը.

**1. Գլոբալացումը ոչ միայն շուկաների, այլև արժեքների մրցակցություն է:** Սա նշանակում է՝ առաջին պլան է մղվում արժեհամակարգերի միջև մրցակցությունը, որն էականորեն ազդում է տնտեսական համակարգերի արդյունավետ գործունեության վրա: Մրցակցության դաշտում է հայտնվում ոչ միայն տնտեսությունը, այլև ժողովրդավարության և ազատության արժեքները, տնտեսական էթիկան: Դրանք, վերջին հաշվով, հասարակության բոլոր անդամների բարեկեցությանը նպաստող անհրաժեշտ խթանող գործոններն են:

Տնտեսական և քաղաքական ազատությունը պայմանավորված են միմյանցով, սակայն հարց է ծագում՝ ինչ է իրենից ներկայացնում ժամանակակից կապիտալիզմը: Վերջինս, որպես այդպիսին, տիրապետում է բարոյական որակների, քանի որ ապահովում է հասարակության լայն շրջանակների բարեկեցությունը [1 ]:

Կապիտալիզմի հիմնական տարրերը՝ մրցակցությունն ու շահույթին ձգտելը, դեռևս չեն նշանակում պայքար բոլորի կողմից բոլորի դեմ: Այդ իսկ պատճառով էլ իրավական պետության պայմաններում շուկայական տնտեսության հայեցակարգը համարվում է ժողովրդավարական, սահմանադրական համակարգի կարևորագույն բաղադրատարրը: Մրցակցությունը խոչընդոտում է տնտեսական և քաղաքական իշխանության կենտրոնացմանը, երաշխավորում է հնարավորությունների հավասարությունը, աշխատավարձի վճարման արդարացի բնույթը, սոցիալական պաշտպանվածությունը, ինչպես նաև համարվում է հասարակության վերափոխման շարժիչ ուժը: Եվ եթե երկրագնդի վրա մարդկանց մեծ մասը չի օգտվում այդ բարիքներից, ապա անհրաժեշտ է իրապես նպաստել շուկայական տնտեսության արմատավորմանը և կատարելագործմանը: Այդպիսի բարելավմանը կարելի է համենել տնտեսության շուկայական պետական կարգավորման զուգակցման միջոցով:

## **2. Գլոբալացումը նոր բախումների չի հանգեցնում, այն համարվում է խաղաղության հաստատման կարևոր միջոց:**

Ազգային բաց տնտեսական համակարգերի ձևավորումը արմատական նշանակություն ունի համաշխարհային տնտեսության կայունության և հասարակության բարեկեցության ապահովման գործում: ԵՄ-ն, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի շուկաների ինտեգրումը կարևոր նախադրյալներ դարձան, հատկապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի նախկին համայնավարական երկրների (վերջին ժամանակներս նաև Ուկրաինայի, Վրաստանի և Միդլոլայի) ազատության պահպանման համար: Տնտեսական և քաղաքական վերափոխումները սերտ փոխհարաբերության մեջ են, և արդյունավետ իրականացվում են այն երկրներում, որտեղ նախկինում սոցիալ-տնտեսական զարգացման համար անառողջ մթնոլորտ էր ստեղծված:

Տնտեսությունը միասնական ցանցի մեջ է ներքաշվում և տարբեր ազգերի ներկայացուցիչների համար ստեղծում է միասնական շահեր: Եվ իզուր չէ, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երիտասարդ ժողովրդավարական պետությունները ձգտում են ընդգրկվելու Եվրամիության կազմում: Համաշխարհային հանրության մասշտաբով անվտանգության և կայունության ապահովումն այժմ գրեթե անհնար է ռազմական մեթոդներով: Վերջիններս մեծ մասամբ կախված են համաշխարհային տնտեսության աճից: Գլոբալ ձեռնարկատիրությունը ստեղծում է ընդհանուր հիմք՝ բարեկեցության, աշխատատեղերի պահպանման և ապագան կանխորոշող տեխնոլոգիաների իրացման գործընթացում միջազգային համագործակցություն ապահովելու համար:

## **3. Գլոբալացումը չի ենթադրում սոցիալական չափանիշների աղավաղում և նպաստում է համաշխարհային մասշտաբով բարեկեցության բարձրացմանը:**

Հաճախ հայտնվում է այն կարծիքը, որ գլոբալ մրցակցությունը հանգեցնում է աշխատատեղերի կրճատման և սոցիալական դեմպինգի: Սակայն ուսումնասիրությունները հաստատում են հակառակը. 1970 թվականից ՏՀԶԿ անդամ-երկրներում միջին վիճակագրական զբաղվածությունը բարձրացել է 37%-ով կամ, այլ խոսքով, այդ նույն թվականից արդյունաբերական զարգացած երկրները կարողացել են ստեղծել 1310 մլն նոր աշխատատեղ:

Գլոբալացումը դեռևս չի նշանակում հիմնադիր երկրից կապիտալի արտահոսք. այն ներդրումները տեղափոխում է ապագա շուկաներ, որոնք իրենց հերթին զբաղվածություն են ապահովում նաև հիմնադիր երկրում:

Այդ հանգամանքը դրականորեն է ազդում նաև ՏՀԶԿ անդամ-երկրների բարեկեցության մակարդակի վրա: 1960 թվականից սկսած՝ այդ երկրներում բնակչության իրական եկամուտները ավելանում են կայուն տեմպերով: Առանձնապես բարենպաստ էր զարգանում ԵՄ-ն, որի անդամ-երկրներում 1960 թվականից բնակչության մեկ շնչին ընկնող իրական եկամուտը միջին հաշվով աճում էր 10 %-ով ավելի արագ, քան ՏՀԶԿ անդամ բոլոր եվրոպական երկրներում:

Դրա հետ մեկտեղ գլոբալացումը չի ենթադրում ներդրումների բնագավառում անպատասխանատու և իր գործողությամբ կարճաժամկետ որոշումների ընդունում, գլոբալ ընկերությունները ներդրումներ են կատարում երկարաժամ-

կետ ռազմավարությանը համապատասխան: Հենց այդ պատճառով էլ վերագրապահին կորպորացիաները (ՎԱԿ-երը) չհեռացան այնպիսի ձգնաժամային տարածաշրջաններից, ինչպիսիք են Արևելյան Եվրոպան, Հարավարևելյան Ասիան, Հարավային Ամերիկան կամ Աֆրիկան, այլ ընդհակառակը՝ բացեցին նոր մասնաճյուղեր և կազմակերպեցին նոր ապրանքների արտադրություն ու իրացում:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) ԱՊՀ երկրներում եթե 2006 թ. կազմել են 43,5 մլրդ դոլար (այդ թվում՝ ՀՀ-ում 453 մլն դոլար), ապա 2008 թ. այդ ցուցանիշը կազմել է 106,82 մլրդ դոլար (ՀՀ-ում՝ 935 մլն դոլար), 2011 թ.՝ 84,5 մլրդ դոլար (ՀՀ-ում՝ 525 մլն դոլար): Դրա հետ մեկտեղ ԱՊՀ երկրներից ավելացել է նաև ՕՈՒՆ-ի արտահոսքը, համապատասխանաբար, 23,3 մլրդ դոլար (ՀՀ-ից՝ 3 մլն դոլար), 58,4 մլրդ դոլար (ՀՀ-ից՝ 10 մլն դոլար), 72,7 մլրդ դոլար (ՀՀ-ից՝ 78 մլն դոլար) [2, էջ 40, 3, էջ 172]:

**4. Գլոբալացումը նպաստում է կապիտալի համաշխարհային շուկաների զարգացմանը, ձեռնարկատիրական արդյունավետության և ժողովրդավարական վերահսկողության բարձրացմանը:**

Միայն մեկ օրվա ընթացքում երկրագնդում շրջանառվող արժույթի քանակը գերազանցում է չորս ամսվա ընթացքում համաշխարհային առևտրի ծավալը: Ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ են ծերության օրոք իրենց կարողությունն ու ապահովությունը կապում կազմակերպությունների հաջողությունների հետ: Ներդրումային ինստիտուտները, օրինակ՝ Կալիֆոռնիայի պետական ծառայության կենսաթոշակային դրամարկղը, կապիտալի շուկայում սկսել են գործող անձանց դեր խաղալ: Ներկայումս նրանք տիրապետում են ավելի քան 8000 մլրդ դոլարի, որը կազմում է գլոբալ ՀՆԱ-ի ավելի քան 25%-ը: Դրա հետևանքով միջազգային կապիտալի համար խոշոր ընկերությունների միջև գլոբալ մրցակցությունը հետագայում ավելի կխորանա, քանի որ այդ կազմակորպությունները թափանցիկության, արդյունավետության և շահութաբերության բարձրացման կարևոր գրավականն են:

Որպես հակամիջոց՝ ֆինանսական շուկաների համար կպահանջվեն նոր, կայունացնող մեխանիզմներ: Արագ իրազեկման միջազգային համակարգի բարելավումը, կապիտալների հոսքերի թափանցիկությունը, ռիսկին համարժեք նյութական պատասխանատվության կանոնները, ինչպես նաև կապիտալ ներդրումների համար երկարաժամկետ հեռանկարների ստեղծումը նման շուկաներում պատասխան քայլերի իրական նախադրյալներն են:

**5. Գլոբալ շուկաների մրցակցության մեջ վճռորոշ ռեսուրս են ոչ թե հումքի պաշարները, այլ անսահմանափակ գիտելիքները:**

Ժամանակակից պայմաններում մրցակցության պայմանները, սպառողների պահանջունքները, տեխնոլոգիաները փոփոխվում են ավելի արագ, մասշտաբային և անսպասելի, քան երբևէ: Տնտեսության զարգացման գործում էական դերակատարությունը պատկանում է մարդկային կապիտալին: Նորարարությունների արժեքն աճում է, որին զուգահեռ փակվում են արտադրական «խուցերը», կրճատվում են արտադրական ցիկլերը: Հետևանքները միանշանակ են. ներդրումները նպատակահարմար են, եթե դրանք հնարավոր լինի տեղաբաշխել թողարկվող արտադրանքի խոշոր քանակության մեջ: Իսկ դա նշանա-

կում է, որ հարկավոր է ամբողջ աշխարհում իրականացնել մարքեթինգային հետազոտություն և բացել նորանոր շուկաներ:

**6. Գլոբալացման հետևանքով կապուղիների միջազգայնացումը ստեղծում է կապերի նոր տեսակներ:**

Եթե 1994 թվականին Ինտերնետից օգտվում էր միայն 3 մլն մարդ, ապա 1998 թվականին այդ թիվը կազմեց 100 մլն մարդ, իսկ 2003 թվականին այն անցել է 1 մլրդ մարդուց [2, էջ 41]: Ներկայումս այդ թիվը մոտենում է 4 մլրդ-ին:

World Wide Web համաշխարհային տեղեկատվական հոսքում յուրաքանչյուր 100 օրում տեղեկատվությունը կրկնապատկվում է: Միջազգային մրցակցության մեջ վճռորոշ մասշտաբի են վերածվում ոչ թե նյութաիրային չափանիշները, այլ կիրառյալները: Նորությունները, գաղափարներն ու նոր ապրանքները պարզապես աներևակայելի մակարդակ են ձեռք բերել: Ինտերնետ կապը ստեղծել է տնտեսական համագործակցության և փոխհարաբերության նոր հնարավորություններ, որոնք ապահովում են աննախադեպ բարձր արդյունավետություն:

**7. Գլոբալ ձեռնարկատիրությունը չի հանգեցնում առանձին երկրների պատասխանատվության նվազեցմանը, այն ամրացնում է տարածաշրջանների հետ կապվածությունը:**

Այն կազմակերպությունը, որն իր գործունեությունը կառուցում է ազգային մշակույթի և ավանդույթների վրա, համակցվում է միջազգային շուկաների պահանջներին, երկարաժամկետ հեռանկարում կհասնի հաջողության:

Ձեռնարկատիրական պատասխանատվությունն այն է, որ ոչ միայն պետք է ուշադրություն դարձնել շահույթի ստացմանը, այլև մտածել ձեռնարկատիրոջ գործողությունների ամբողջ համալիրի մասին: Երկարաժամկետ աճման միտում կարելի է ակնկալել միայն այն դեպքում, եթե կազմակերպությունները կատարում են տեսանելի և ընդունելի ներդրումներ այն երկրների տնտեսական, սոցիալական և բնապահպանական ոլորտներում, որտեղ գործում և աշխատում են:

**8. Գլոբալացումը ոչ միայն չի կրճատում առանձին քաղաքացու ազատությունը, այլ նրա անձնական գործունեության համար լայն հնարավորություն է ստեղծում:**

Ճկուն են դառնում ոչ միայն ապրանքների և ծառայությունների, այլև աշխատանքի շուկաները: Այդ պայմաններում մեծանում են աշխատատեղերի, տարբեր ընկերություններում աշխատելու ընտրության հնարավորությունները: Նրանք իրենց հնարավորություններն օգտագործում են ճկունությամբ, ոչ միայն մի կազմակերպությունից տեղափոխվելով մյուսը, այլև սկսելով սեփական գործը: Աստիճանաբար ավելի շատ երիտասարդներ են արիություն ցուցաբերում շուկայում իրենց համար «ազատության մասնիկ» նվաճելու գործում:

Կազմակերպությունները ցանկանում են իրենց հաստիքները լրացնել որակավորված մասնագետներով և պատասխանատվություն են կրում այդ աշխատակիցների համար աշխատանքի գրավիչ պայմաններ ստեղծելու գործում: Այդ իսկ պատճառով էլ բազմաթիվ կազմակերպությունների տնտեսական միավորումներում հետևողականորեն իրականացվում է աշխատակիցների վերապատրաստում ինչպես տվյալ կազմակերպություններում, այնպես էլ ուսումնական հաստատություններում:

**9. Գլոբալացումը պետություններին չի գրկում ինքնիշխանությունից. ստեղծում է տնտեսական և քաղաքական ոլորտների միջև համագործակցության նոր պայմաններ:**

Տնտեսական և քաղաքական համակարգերը սերտ փոխհարաբերությունների մեջ են: Գլխավոր հարցը հետևյալն է. այդ համատեքստում ինչպե՞ս կարելի է ուժեղացնել քաղաքական կառավարման ներուժը: Չէ՞ որ գլոբալացման պայմաններում ազգային կառավարությունները կարող են միայն խիստ սահմանափակ չափով ազդել իրադարձությունների վրա և կառավարել դրանք, որոնք, իհարկե, ազգային պետությունների համար ավելորդ չեն: Ազատության և իրավական պետության երաշխավորի կարգավիճակում պետությունները ծառայում են նոր միջազգային կանոնակարգի սահմաններում:

Բաց շուկաների ներուժի օգտագործման համար այժմ անհրաժեշտ է կիրառել միջպետական համագործակցության նոր սկզբունքներ, որոնք հնարավորություն են տալիս ի մի բերելու բոլոր երկրների շահերը:

**10. Մեր ապագա բարեկեցությանը կհասնենք ոչ թե մեկուսացման, այլ շուկաների բացման և ինտեգրման միջոցով:**

Ակնհայտ է, որ անցած տարիներին շուկաների բացման գործում հատկապես ՎԱԿ-երի կողմից արձանագրվել է խոշոր առաջընթաց: Դրա հետ մեկտեղ, մտահոգիչ են ազատ առևտրի դեմ ուղղված նկրտումները: Հարևան երկրների հետ մենք երկընտրանքի առջև ենք. ցանկանում ենք արդյոք բացվել դեպի գլոբալացվող աշխարհը և ապահովել անհրաժեշտ զարգացում, թե՛ կընդունենք որպես հօգուտ հովանավորչության, շուկայական ուժերի սահմանափակմանն ուղղված պետական միջամտության որոշումներ:

Վերջին հաշվով՝ հովանավորչության աճող ալիքը զսպելու համար այժմ անհրաժեշտ է տնտեսության և քաղաքականության մեջ կատարել միասնական ղեկավարում: Ընդ որում՝ ուշադրության կենտրոնում երկու խնդիրներ կա. վերատվանտյան շուկայի ստեղծումը Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի երկրների մասնակցությամբ, ինչպես նաև ԵՄ-ի ընդլայնումը դեպի Արևելք: Ո՛չ ԵՄ-ն, ո՛չ վերատվանտյան շուկան չպետք է ընտրյալների ակումբ լինի: Շուկաների բացման մասին խոսվում է վաղուց, սակայն հենց ԱՄՆ-ը և ԵՄ-ն (որոնք արդեն օգուտներ են քաղել գլոբալացումից) ոչ միայն «սահմանված» հեռավորության վրա են պահում հնարավոր մրցակիցներին, այլև միմյանց միջև սահմանում են նորանոր արգելքներ: Այս համատեքստում պատմական փաստ է Եվրասիական տնտեսական միությունը (ԵՏՄ), որի հիմնադրման պայմանագիրը ՌԴ-ի, Բելառուսի և Ղազախստանի նախագահների կողմից ստորագրվեց Աստանայում 2014 թ. մայիսի 29-ին:

Վերը շարադրվածը հիմք է տալիս հավաստելու, որ նոր հարյուրամյակում գլոբալ ընկերությունները ոչ միայն կարող են, այլև պարտավոր են իրենց ներդրումը կատարելու գլոբալացման գործում և դրանով իսկ իրենց նպաստը բերելու համաշխարհային հանրության կայուն զարգացման գործին:

Այսպիսով՝ գլոբալացումն ու տնտեսական ինտեգրումն իրենց հետ բերում են ինչպես առավելություններ, այնպես էլ վտանգներ: Գլոբալացման հակառակորդները, որպես կանոն, ժխտում են առավելությունները, մինչդեռ դրանք բավականաչափ տեսանելի են՝ գլոբալ մասշտաբով ռեսուրսների ռացիոնալ



օգտագործումից, բարձր տնտեսական աճից մինչև նոր աշխատատեղերի ստեղծում և բարեկեցության բարձրացում:

Տնտեսության գլոբալացման գործընթացն առավել մեծ առաջընթաց ունեցավ ֆինանսական ոլորտում, ինչն արտահայտվեց համաշխարհային ֆինանսական շուկայի ձևավորմամբ, որի արդյունքում դրա համար նախադրյալներ դարձան երեք հիմնական գոծոններ.

1. նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք միմյանց էին կապում հիմնական ֆինանսական կենտրոնները, կտրուկ նվազեցրին ֆինանսական գործարքների տրանսակցիոն ու դրանց իրականացման համար անհրաժեշտ ժամանակի ծախսերը,
2. ֆինանսական ինստիտուտների գործունեության պայմանների փոփոխությունը՝ կապված բանկային գործունեության կարգավորման հետ,
3. ֆինանսական շուկայում նոր գործիքների ներդրման գործընթացի զարգացումը՝ հեջավորման մեխանիզմը և ռիսկերի կառավարումը:

Զարգացած երկրներում 20-րդ դարի 80-90-ական թվականներին բանկային գործունեության կարգավորումը պայմանավորված էր այդ ոլորտում մրցակցության ուժեղացման և շահութաբերության կրճատմամբ, որի պատճառը Բրետտոն-վուդյան համակարգի փլուզումից հետո դեպի ազգային ֆինանսական շուկաներ օտարերկրյա կապիտալի էքսպանսիան էր:

Կարգավորումն ուղեկցվում էր ակտիվների ընդլայնված մասնավորեցմամբ, հարկերի և առևտրային տուրքերի կրճատմամբ, օֆշորային բանկերի ցանցի ձևավորմամբ, որոնք գործունեություն էին ծավալում արտոնյալ ընթացակարգով: Կարգավորման գործընթացում վերացվեցին բանկերի և մյուս ֆինանսական կառույցների կողմից իրականացվող բազմակողմանի ֆինանսական գործառնությունների վրա դրված սահմանափակումները: Ներդրումային բանկերը հնարավորություն ստացան զբաղվելու առևտրային վարկավորմամբ, իսկ առևտրային բանկերը՝ էմիսիոն գործունեությամբ, ապահովագրությամբ, ֆյուչերսների ու օպցիոնների առևտրով և այլն: Արդյունքում առաջ եկան ֆինանսական հոլդինգներ կամ «հանրախանութներ», որոնք հաճախորդին են առաջարկում ֆինանսական միջնորդության ոլորտում ծառայությունների համախումբ: Ներկայումս միջազգային ֆինանսական շուկայում գերակշռում են հատկապես ֆինանսական հոլդինգները, որոնց գործունեությունը նպաստեց գլոբալ ֆինանսական ցանցերի ստեղծմանը, որոնց կենտրոնում հոլդինգներն են:

Արդյունքում՝ ֆինանսական շուկան սկսեց գործել ապրանքների շուկայից անկախ: Պ. Դրակերի կարծիքով փողերն իրենք վերածվեցին ապրանքների, իսկ արժույթի փոխարժեքի վրա հիմնված սպեկուլյացիան՝ առավել շահավետ շուկայական գործընթացի:

Վերջին 20 տարիների ընթացքում համաշխարհային արժույթային շուկաներում գործարքների օրական ծավալները 1 մլրդ դոլարից աճեցին մինչև 1200 մլրդ դոլարի, իսկ ապրանքների և ծառայությունների ծավալն ավելացավ ընդամենը 50%-ով:

Ֆինանսական համակարգի առանձնացումն իրական տնտեսությունից դեռևս չի նշանակում, որ նրանց միջև կապը վերանում է: Ընդհակառակը, կապը

և կախվածությունը մեծանում են, սակայն ձեռք են բերում հակադարձ բնույթ: Ֆինանսական գործառնությունների ոլորտը սկսում է աճող մասշտաբներով կենտրոնացնել կապիտալ, որը արտադրության մեջ ուղղակի ներդրումների ձևով օգտագործելու փոխարեն ուղղվում է դեպի սպեկուլյատիվ ոլորտ: Երկրի սահմաններից դուրս կապիտալի հզոր զանգվածի տեղափոխման անկառավարելի գործընթացը (հիմնականում կարճաժամկետ պորտֆելային ներդրումների տեսքով) և ֆինանսական սպեկուլյատիվ ոլորտում դրա համակենտրոնացումը ծնում է համաշխարհային շուկայի ամբողջ համակարգի ստվերագծված անկայունություն: Դրա մասին են վկայում 1987 թ., 1997–1998 թթ. և 2009 թ. ֆինանսական ճգնաժամերը, որոնք ցնցեցին համաշխարհային ֆինանսական շուկայի ամբողջ համակարգը: Ավելին՝ վերջին ֆինանսական ճգնաժամը վերաճեց և դարձավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի:

Համաշխարհային տնտեսության ինտեգրման կտրուկ բարձրացած մակարդակն օբյեկտիվորեն պահանջում է համաշխարհային արժույթային համակարգի ստեղծում՝ որպես միջազգային և ներպետական հաշվարկների իրականացման անհրաժեշտ գործիք: Սակայն դա կնշանակեր ազգային արժույթային համակարգի կործանում և պետական ինքնավարության զգալի սահմանափակում ոչ միայն ֆինանսավարկային, այլև սոցիալ-տնտեսական և քաղաքական ոլորտներում:

Միևնույն ժամանակ ԱՄՆ դուլարը, որ երկար ժամանակ հետպատերազմյան աշխարհում համաշխարհային փողի դեր էր կատարում, աստիճանաբար կորցնում է իր գերիշխանությունը: Ամենից առաջ այն պատճառով, որ ԱՄՆ-ի տնտեսությունը, չնայած գերտերության իր կարգավիճակին, արտադրում է համաշխարհային ՀՆԱ-ի միայն 20–23%-ը (2013 թ.՝ 16,3 տրիլիոն դոլար), ինչը չի կարող ապահովել համաշխարհային շուկայում անհրաժեշտ իրացվելիություն: Բացի դրանից՝ ԱՄՆ դուլարի դիրքը խախտում է նաև ԱՄՆ-ի հսկայական բյուջետային պակասուրդը և պետական պարտքը: Վերջապես՝ մյուս զարգացած կամ նոր ինդուստրիալ պետությունները չեն կարողանում հաշտվել մեկ տերության արժույթի գերիշխանության հետ:

Համաշխարհային փողի դերը ներկայումս կատարում են երեք միջազգային արժույթներ՝ ԱՄՆ դոլարը, եվրոն և իենը: Մնացած ազգային արժույթային համակարգերը ստիպված են դրանք օգտագործել որպես պահուստային արժույթ և դրանց միջոցով իրականացնել միջազգային հաշվարկներ: Այսպիսի իրավիճակը ստեղծում է համաշխարհային ֆինանսական շուկայի անկայունություն և պահանջում է կառավարությունների ու կենտրոնական բանկերի ակտիվ գործունեություն արժույթավարկային և ընդհանուր տնտեսական քաղաքականության համակարգման ոլորտում: Վերջին տարիներին իրականացվող գործընթացը ցույց է տալիս, որ համաշխարհային ֆինանսական շուկայի կարգավորման գոյություն ունեցող գործիքները բավարար չեն: Այստեղից հետևում են նոր գաղափարների և հայեցակարգերի որոնումները «նպատակային գոտիների» մասին, այդ թվում՝ նոր Բրետտոն-վուդսյան համակարգի ստեղծման, և որոնց շրջանակներում հնարավոր կլինի սահմանել հիմնական միջազգային արժույթային փոխարժեքները: Առաջ են քաշվում նաև «միջազ-

գային արժույթային միավորի» և «համաշխարհային կենտրոնական բանկի» ստեղծման գաղափարները:

Առևտրի ազատականացման և նոր շուկաների բացահայտման խնդիրը ներկայումս համաշխարհային տնտեսության առավել հրատապ հարցերից մեկն է: Պայքար է գնում հովանավորչական խոչընդոտների վերացման ու ազգային շուկաներ արտասահմանյան ապրանքների, ծառայությունների և աշխատուժի ազատ մուտքն ապահովելու համար: Ազատականացման կարգախոսով հանդես են գալիս վերազգային կորպորացիաների և զարգացած երկրների ներկայացուցիչները, որոնք համաշխարհային շուկայում ունեն գերիշխող դիրք: Ազատականացման հայեցակարգի հիմքում ընկած է ազատ մրցակցության՝ որպես տնտեսության առաջընթացի գլխավոր շարժիչ ուժի արժեքավորման բացարձակ համոզվածությունը: Ընդ որում՝ ազատ կամ կատարյալ մրցակցության կանոնները փորձում են արհեստականորեն վերագրել ժամանակակից շուկայի իրականությանը, որտեղ գերիշխում են օլիգոպոլիստական կառուցվածքները: Նրանց ուժային դաշտում մրցակցային հարաբերությունները ձեռք են բերում խտրական և բռնի բնույթ: Ուստի դրա հետ կապված՝ շատ տնտեսագետներ հանդես են գալիս ազատականացման դեմ և կողմ են ազգային շուկաների պաշտպանությանը: Իրական քաղաքականության մեջ ազատականացման գաղափարը զգալիորեն ենթարկվում է վերափոխման: Օրինակ՝ ԱՄՆ-ի և մի շարք այլ զարգացած երկրների կառավարությունները, պահանջելով շուկաների բացություն, միևնույն ժամանակ պահպանում են արգելքները մրցունակ արտասահմանյան ապրանքների նկատմամբ: Առավել կոշտ ձևով դա արտահայտվում է օրենսդրության միջոցով իրականացվող հակադեմպինգային քաղաքականությամբ: Ազատականացումը նաև վերջանում է այնտեղ, որտեղ արտասահմանյան աշխատուժի ներհոսքը սպառնում է ազգային շահերին:

Արտադրության միջազգայնացումը թույլ է տալիս ՎԱԿ-երին թափանցել նոր շուկաներ՝ շրջանցելով մաքսային արգելքները: Ընդ որում՝ ՎԱԿ-երի կողմից իրականացվող առևտրային գործառնությունների ծավալի զգալի մասը իրականանում է ներֆիրմային շրջանառության շրջանակներում (օրինակ՝ ԱՄՆ-ում 40%-ը): Գլոբալ արտադրական ցանցերը խթանում են էժան աշխատուժի գլոբալացումը արտադրությունը զարգացող երկրներ տեղափոխելու ճանապարհով, որը բերում է զարգացած երկրներում աշխատատեղերի նվազման և բացասաբար է ազդում աշխատուժի շուկայի ընդհանուր իրավիճակի վրա: Զարգացող երկրներում արտասահմանյան ապրանքների էքսպանսիան խարխլում է տեղական ավանդական արտադրությունը՝ սրելով զանգվածային գործազրկության խնդիրը: Մեծանում է նաև գների մակարդակների (որոնք ձգտում են համաշխարհային գների մակարդակին) և բնակչության հիմնական զանգվածի եկամուտների միջև տարբերությունը:

Համաշխարհային շուկայի սուբյեկտների շահերի բախման դրամատիզմն արտահայտվում է գլոբալացման պայմաններում միջազգային առևտրի ինստիտուցիոնալ շրջանակների ձևավորման գործընթացում: Որպես օրինակ կարելի է բերել 1999 թ. Սիտլեյում գումարված Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) համագումարը, որտեղ 135 մասնակից երկրներ չկարողացան

համաձայնություն ձեռք բերել ծրագրի շուրջ՝ արմատական հարցերի վերաբերյալ սուր տարաձայնությունների պատճառով: Նույնը կարելի է ասել նաև ԱՀԿ-ի 2003 թ. (Մեքսիկայում) և հետագայում գումարված համագումարների մասին: Այդ տարաձայնություններն ի հայտ եկան ինչպես զարգացած երկրների շրջանակներում, այնպես էլ զարգացած և զարգացող երկրների միջև: Եվրամիության երկրներն իրականացնում էին հովանավորչական ագրարային քաղաքականություն ԱՄՆ-ի, Ավստրալիայի և գյուղատնտեսական ապրանքներ ներմուծող այլ երկրների նկատմամբ: Զարգացող երկրները դեմ էին զարգացած երկրներ արտահանվող իրենց ապրանքների նկատմամբ կիրառվող հակադեմպինգային արգելքներին, ինչպես նաև մտավոր արժեքների օգտագործման գործում իրենց ունեցած պարտականությունների կրճատմանը, աշխատանքային օրենսդրության ոլորտում ընդհանուր ստանդարտների ներդրմանը՝ որպես ԱՀԿ-ին անդամակցության պայման, ինչպես նաև կողմ էին օտարերկրյա կապիտալ ներդրումներին:

Այսպիսով՝ գլոբալացումը և տնտեսական ինտեգրումը կտրուկ կերպով ավելացրին ազգային տնտեսությունների և հասարակական համակարգերի բացության աստիճանը՝ ինտենսիվացնելով տեղեկատվության, մարդկանց, կապիտալի, ապրանքների և ծառայությունների, մշակութային և հոգևոր արժեքների փոխանակումը: Դրանք բերեցին անձի և առանձին հասարակական խմբերի անկախության աստիճանի բարձրացմանը՝ ընդլայնելով գլոբալ գործընթացներին նրանց ակտիվորեն մասնակցելու հնարավորությունը:

**Գլոբալացման հակասական բնույթը:** Գլոբալացման մասին քննարկումները վերջին տարիներին ավելի հաճախ են տեղի ունենում, և այդ հասկացությունն անընդհատ բազմաթիվ տարատեսակ ու բազմաբնույթ հրապարակումների տեսադաշտում է: Գլոբալացման գործընթացների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ երկուսի բացահայտման համար անհրաժեշտ են օբյեկտիվ գիտական հիմնավորումներ և դրա փաստացի բարդացող մոդելի բնույթի հակասական կողմերի վերլուծություն: Գլոբալացումն առաջին հերթին ընդունված է բնութագրել որպես գիտատեխնիկական հեղափոխության, տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային ցանցի, հեռահաղորդակցության և տրանսպորտային համակարգի զարգացման արդյունք, ինչպես նաև ազգային շուկաների փոխազդեցության, ամբողջ աշխարհում կապիտալի, ապրանքների, ծառայությունների և աշխատուժի շարժի բացառիկ ինտենսիվության արդյունք: Ճիշտ է նաև այն պնդումը, որ գլոբալացումը հետևանք է մարդկության տեխնիկական և տնտեսական հզորության աննախադեպ աճի, որը հաղթահարում է տարածությունն ու ժամանակը, մերձեցնում է ազգերին, երկրներն և մայրցամաքները:

Առհասարակ, գլոբալացումն ունի հակասական բնույթ, այսինքն՝ *մի կողմից* տեղի է ունենում համաշխարհային մասշտաբով տնտեսական գործընթացների միաձուլում: Եվ եթե արտադրության «սովորական» միջազգայնացման պայմաններում խորանում են համաշխարհային շուկայի միջոցով անընդհատ զարգացող ազգային տնտեսությունների միջև փոխհարաբերությունները, ապա գլոբալացման աստիճանում ձևավորվում է տնտեսության նոր վերազգային

կառուցվածքային մակարդակ՝ իր սեփական օրինաչափություններով և կարգավորման մեխանիզմներով: Մասնագիտական գրականության մեջ բազմիցս և մանրամասն նկարագրված է համաշխարհային ֆինանսական ու տեղեկատվական համակարգերի ձևավորումը, համաշխարհային տնտեսության կարգավորման կենտրոնների կազմավորումը: Ստեղծված են և գործում են տասնյակ հազարավոր ՎԱԿ-եր, բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, ստեղծվել է մի յուրատեսակ վերնաշերտ, որը, վերահսկելով ամբողջ համաշխարհային ռեսուրսների կեսից ավելին, գործում է իր սկզբունքների համաձայն: Ընդ որում՝ այդ սկզբունքները ավելի գերապատվելի են պետության կառավարման մարմինների համար ավանդական դարձած սկզբունքներից: Այսպես՝ հաճախ Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) դիրեկտիվ ձևով փաստացի սահմանում է համապատասխան պետությունների կառավարությունների գործունեության ծրագիրը: Ընդհանուր առմամբ, գլոբալացումը հիմնականում վերացնում է տնտեսական գործունեության արտաքին և ներքին ոլորտների միջև գոյություն ունեցող սահմանները՝ արտաքին գործոնները փոխակերպելով ներքին գործոնների:

*Մյուս կողմից* գործում է հակառակ միտումը՝ ազգային սահմանների և շահերի, ազգային առանձնահատկության պահպանման դեպքում համաշխարհային տնտեսությունում կձևավորվեն կայուն մեկուսացված կառույցներ: Այդ գործընթացի բաղադրիչներից մեկը տնտեսական շրջանացումն (ռեգիոնալացում) է, որը ծավալվել է ինչպես խոշոր պետությունների ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով:

Տնտեսական շրջանացումն ի հայտ է եկել ոչ այսօր և ենթադրվում է, որ այն ունի իր պատմական արմատները: Սակայն վերջին տարիներին համապատասխան գործընթացները ոչ միայն անսպասելիորեն ուժեղացել են, այլև փոխել են իրենց բնույթը: Առաջին հերթին դրանք ծառայել են որպես մոտ տարածաշրջանների միջև կապերի հաստատման միջոց: Այժմ տարածաշրջանային խմբավորումներն ավելի մեծ չափերով սկսել են իրականացնել համակարգման գործառույթ, ինչը նրանց թույլ է տալիս հանդես գալ որպես առանձին կառուցվածք և միավորված ուժերով պաշտպանել իր մասնակիցներին ու վերջիններիս ընդհանուր շահերը: Արդյունքում՝ համաշխարհային տնտեսությունում ձևավորվում են տնտեսվարման հինգ մակարդակներ՝

1. վերազգային ինստիտուտներ,
2. տարբեր երկրների տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումներ,
3. ազգային պետություններ,
4. պետության ներսում ինքնավար տարածքային միավորներ,
5. առաջնային տնտեսավարող կառույցներ:

Այդպիսի պայմաններում արմատապես փոխվում է տնտեսական գործունեության արդյունավետության որոշման վերաբերյալ մոտեցումը: Այն այժմ չի կարելի ներկայացնել որպես առանձին արտադրողների, ապրանքների և ծառայությունների մատուցման մրցունակություն, իբրև թե մեկ ուղղությամբ ձևավորված շահույթը կարող է ուղղվել մյուսներում առաջացած կորուստների փոխհատուցմանը: Արդյունքում առաջանում է «ընդհանուր արդյունավետության» հարցը և

առաջ է գալիս բազմամակարդակ գործոնների միասնական հաշվարկի անհրաժեշտությունը: Այլ խոսքով՝ արդյունավետությունը դառնում է իրադրության համակցման արդյունք, որը վերաբերում է համաշխարհային, ինտեգրացիոն, ազգային, տարածաշրջանային և ֆիրմային մակարդակներում:

«Առանձնացվածության» միտումները հաստատվում են նաև հետևյալում՝ ընդգրկելով ոչ միայն տնտեսությունը, այլև հասարակական կյանքի մյուս բոլոր ոլորտները, և վերջնական արդյունքում գլոբալացումն արտահայտվում է ազգերի համար միասնական կանոնների սահմանման մեջ: Ընդ որում՝ ոչ բոլորը կցանկանան և կարող են ապրել այդ կանոններով: Այստեղից բխում են ձգտումները դեպի մեկուսացում, ազգային և կրոնական հողի վրա բախումները, ազգերի ավելի կամ պակաս չափով եռանդուն փորձերն իրենց մշակույթի պահպանման համար, ինքնակայունությունը, անկախությունը և կենսակերպը:

**Գլոբալացման դրական ասպեկտները:** Այս կամ այն երկրի շահերը միջազգային առևտրում նրանց մասնակցությունից հիմնավորվել են Ա. Սմիթի, Դ. Ռիկարդոյի (1817 թ.), Հեքշերի և Օհլինի (1923 թ.) հայտնի տեսություններով, ինչպես նաև բավականաչափ ծավալուն կերպով ուսումնասիրված են այլ հեղինակաների կողմից [2, էջ 41-56, 4, էջ 140-181]:

Այս տեսությունները հաստատվում են համաշխարհային տնտեսության, մասնավորապես՝ զարգացած երկրների մեծ մասի և մի շարք զարգացող երկրների հաջողություններով: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո զգալիորեն բարձրացավ բնակչության կենսամակարդակը հատկապես Եվրամիության երկրներում: 20-րդ դարի վերջին քառորդում տնտեսության արագ աճ տեղի ունեցավ Հարավարևելյան Ասիայում, ձեռք բերվեց բարձր կենսամակարդակ և արագ տնտեսական աճ ԱՄՆ-ում ու Ճապոնիայում: 20-րդ դարի վերջին տասնամյակներում այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հոնկոնգը, Մալայզիան, Չինաստանը, Չիլին, Հարավային Կորեան, հասան միջին աշխատավարձի նշանակալի բարձրացման ու աղքատության մակարդակի նվազեցման:

Վերջին տարիներին գլոբալացման արդյունքում ամբողջ աշխարհում ստեղծվել են միլիոնավոր աշխատատեղեր, էականորեն ընդլայնվել է սպառողական ապրանքների տեսականին: Զարգացող երկրներում հեռախոսային ծառայություններից օգտվում է շուրջ 1,5 մլրդ մարդ, արագորեն աճում է նաև ինտերնետային ծառայություններից օգտվողների թիվը: Եվ դա զարմանալի չէ՝ հաշվի առնելով, որ շուկայական տնտեսություն ունեցող երկրում 1960-2000 թթ. ընթացքում հեռախոսագրույցի թուղթավաճարն իրական հաշվարկներով էժանացել է 150 անգամ, իսկ անհատական համակարգչի գինը՝ գրեթե 2000 անգամ: Ամենակարևորն այն է, որ ստեղծված են պայմաններ նախկինում փակ միջավայրերում տեղեկատվության ազատ տարածման համար, որն անհրաժեշտ է դրանցից շատերում ժողովրդավարության և դրա կառավարման համար: Նվազել է մանկամահացությունը, և ավելացել է բնակչության կյանքի տևողությունը, ընդ որում՝ զարգացող երկրներում նույնիսկ ավելի մեծ չափերով, քան զարգացած երկրներում:

Զարգացող և նախկին սոցիալիստական երկրներից արտահանումը մեծացել է մի քանի անգամ: Միջազգային առևտրում զարգացող երկրների բաժինը վերջին 30 տարում ավելացել է շուրջ 1,8 անգամ: Համաշխարհային բանկի կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ գլոբալացումից ավելի շատ շահում են այն զարգացող երկրները, որոնք նշանակալի չափով իջեցնում են ներմուծման սակագները: Բանկը սահմանում է նոր հասկացություն՝ «նոր գլոբալիզատորներ», որին վերաբերում են այն երկրները, որտեղ միջազգային առևտրի ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ ավելացել է առավել մեծ չափերով: «Նոր գլոբալիզատորները» նվազեցրել են ներմուծման սակագները 1980–2000 թթ. ընթացքում միջին հաշվով 34 %-ով, այստեղ միջազգային առևտրի ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ ավելացել է 104%-ով: Բնակչության մեկ շնչին ընկնող եկամտի միջին տարեկան աճի տեմպը 1980–ական թվականների նկատմամբ 1990–ական թվականներին կազմել է 3,5% և 5%: Միևնույն ժամանակ, մնացած զարգացող երկրները 1980–2000 թթ. սակագները կրճատել են ընդամենը միջին հաշվով 11%-ով: «Նոր գլոբալիզատորները» ապահովեցին աճի ավելի մեծ տեմպեր, քան զարգացող երկրները (ՀՆԱ-ի ամենամյա 2% աճի փոխարեն 5% աճ): Ըստ գնահատման՝ սակագների և ոչ սակագնային սահմանափակումների կրճատումը բերում է ՀՆԱ-ի ամենամյա աճի՝ 100 մլրդ-ից 300 մլրդ ԱՄՆ դոլարի, ինչը 1,5–5 անգամ գերազանցում է զարգացող երկրներին ցուցաբերվող օգնությանը: Առավել խոշոր է եղել զարգացող երկրների խմբի ստացած օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) աճն ըստ 1980, 2005 և 2010 թվականների (տե՛ս աղյուսակ 1.1.):

**Աղյուսակ 1.1.** *ՕՈՒՆ-ի աճը զարգացող և նախկին սոցիալիստական երկրներում (մլրդ դոլար) [2, 3, էջ 187–190]*

Տարածաշրջաններ	1980	2005	2010
Արևելյան Ասիա	13	44,5	58,2
Լատինական Ամերիկա	10	78,1	159,2
Հարավային Ասիա	–	14,4	32,0
Աֆրիկա	–	38,2	55,0
Հարավարևելյան Եվրոպա և ԱՊՀ	1	31,1	68,2

Ընդ որում՝ առավել կայուն աճով բնութագրվում են հատկապես ուղղակի, այլ ոչ թե պորտֆելային ներդրումներն ու բանկային ավանդները: Դա կարևոր է ընդգծել, քանի որ ՕՈՒՆ-ներն անմիջականորեն կապված են ռեցիպիենտ (ստացող) երկրներում իրական կապիտալի աճի և նրանց կողմից յուրացված նորագույն տեխնոլոգիաների հետ:

Համաշխարհային մասշտաբով միաձուլման և կլանման ակտիվ գործընթացը տանում է ռեսուրսների առավել ռացիոնալ տեղաբաշխման, վերազգային ընկերություններում ծախսերի կրճատման: Միջազգային կազմակերպություն-

ներում մասնակցությունն ապահովում է ներդրողների, արտահանողների և հեղինակային իրավունքների պաշտպանությունը:

**Գլոբալացման «մարտահրավերները»:** Վերջին ժամանակներում առավել սուր է դրված այն հարցը, թե ինչ է ժամանակակից գլոբալացումը, արդյոք այն կառուցվածքը, որտեղ այն տեղի է ունենում, ձևականորեն անխուսափելի է, թե գոյություն ունի այլընտրանք [1, էջ 160–168], որտեղ են գլոբալացման գործընթացը կազմող օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի միջև սահմանները: Պատասխանը հիմնավորվում է նրանով, որ այդ գործընթացը գծային չէ, նրա ակտիվ սուբյեկտների գործունեությունը, որը հետապնդում է սեփական, երբեմն նաև հակադիր կողմի շահերը, բերում է աննկարագրելի հետևանքների՝ էականորեն փոխելով իրական աշխարհը և հարկադրելով այդ սուբյեկտներին հարմարվել գոյության նոր պայմաններին ու «խաղի նոր կանոններին»:

Այդ գործընթացում գլխավոր դերը պատկանում է ՎԱԿ–երին և վերազգային բանկերին, պետություններին ու դրանց տարածաշրջանային խմբավորումներին, ԱՄՀ–ին, Համաշխարհային բանկին և ԱՀԿ–ին: Սակայն ճիշտ չէր լինի դրանցից առանձնացնել այլ սուբյեկտների՝ մանր ու միջին ֆիրմաները միավորող ցանցային կառուցվածքները, տեղական ինքնակառավարումը, ազգային, կրոնական, բնապահպանական շարժումները և մյուս ոչ կառավարական կազմակերպությունները, որոնք դուրս են գալիս պետական սահմանների շրջանակից ու, օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, սկսում են փոխներգործել գլոբալ մասշտաբներով: Չպետք է մոռանալ նաև հանցագործության գլոբալացման, թմրաբիզնեսի միջազգային ցանցի ստեղծման, միջազգային ֆինանսական ինստիտուտների՝ որպես «կեղտոտ» փողերի «լվացման» միջոցի օգտագործման մասին: Այդ սպառնալիքների շարքում հատուկ տեղ է գրավում միջազգային ահաբեկչությունը, որը նույնպես ձևավորել է իր գլոբալ ցանցը:

Իրա վառ ապացույցն է 2001 թ. սեպտեմբերի 11–ի ահաբեկչությունը ԱՄՆ–ում: Բնականաբար, այդ ահաբեկչությունը հարվածեց ԱՄՆ տնտեսությանը, որի ուղղակի և անուղղակի կորուստները ԱՄՀ–ի նախնական հաշվարկներով կազմել է 350 մլրդ ԱՄՆ դոլար: Իրադարձություններին անմիջապես արձագանքեցին ֆոնդային բորսաները և նավթի համաշխարհային շուկան: Ահաբեկչությունից հետո ԱՄՆ բոլոր ֆոնդային բորսաների աշխատանքի դադարեցման հետևանքով աշխարհի խոշոր բորսաներում խուճապ սկսվեց: Իրարանցումն ահազնացավ, երբ հայտնի դարձան խոշորագույն՝ հիմնականում ավիա– և բարձրտեխնոլոգիական ընկերությունների կրած վնասի նախնական չափերը:

Գլոբալացումը ներքուստ հանդես է գալիս հակասական գործընթացներով: Մասնավորապես՝ այն տալիս է նոր հնարավորություններ տնտեսության զարգացման, ազգերի և պետությունների փոխներգործության համար, բայց միևնույն ժամանակ սրում է գոյություն ունեցող հիմնախնդիրները կամ ծնում է նորերը, որոնք կարելի է սահմանել որպես «մարտահրավեր» (challenges): Վերջինիս նկատմամբ, ինչպես կարգն է, հնարավոր են հակազդեցության այլընտրանքային տեսակներ.



1. Որևէ գործողության բացակայություն. ցանկացած հասարակական հարաբերությունների կայուն համակարգ, ինչպես նաև համաշխարհային կարգուկանոնն ամբողջությամբ օժտված է կայունության որոշակի աստիճանով: Գործունեության տրամաբանությունը թույլ է տալիս համակարգին որոշակի ժամանակում (թերևս բավականաչափ երկար ժամկետում) սահմանափակել ապակայունացնող գործոնները կամ «համագործակցել» դրանց հետ: Սակայն եթե խոսքը խորքային պատճառներ ունեցող «սպառնալիքների» մասին է, ապա պետք է ասել, որ ծնունդ են առել այդ համակարգից վերջինիս ինքնավերատադրության գործընթացում, նոր իրականության անտեսումը վաղ թե ուշ կրե-րի համաշխարհային կարգուկանոնի անկման:

2. Հնարավոր է համակարգի արդիականացում՝ կապված գործունեության բնույթի փոփոխության, դրա մասերի ոչնչացման կամ ձևափոխության, համակարգի ներսում նոր, կառուցվածքային կապերի հաստատման հետ: Ամենից առաջ դա գիտակցված միջոցառումների արդյունքն է (ուղղակի կամ անուղղակի), որոնք կոչված են գտնելու առաջացած «սպառնալիքների» պատասխանները: Սակայն հաճախ դրանց բնույթը և աղբյուրները սխալ են սահմանվում: Արդյունքում անցկացվող վերափոխումները կարող են արագացնել համակարգի գործունեության անկման գործընթացը կամ դժվարացնել վերջինիս արդիականացումը:

**Հակագլոբալիստական շարժումները:** Գլոբալացման հետևանքները միա-նշանակ չեն բոլոր երկրների համար: Այսպես՝ ազատ առևտուրը խթան հանդիսացավ Արևելյան Ասիայի երկրներում տնտեսական զարգացման տեմպերի արագացման համար: Նույն ժամանակահատվածում Լատինական Ամերիկայի երկրների մեծ մասում ՀՆԱ-ի աճի տեմպերը բարձր չէին, իսկ Արևելյան Եվրոպայի և Աֆրիկայի մի շարք երկրներում այդ ցուցանիշները կրճատվել են կամ եղել բացասական: Բավական է նշել, որ եթե 2000–2012 թթ. համաշխարհային ՀՆԱ-ն ավելացել է 221,1%-ով, ապա ցածր եկամուտ ունեցող երկրներում այդ ցուցանիշը կազմել է 310,1%, միջին եկամուտ ունեցող երկրներում՝ 407,5%, բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 183,0%: Հատկանշական է նաև, որ եթե 2012 թ. համաշխարհային ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսության բաժինը կազմել է 3%, ապա ցածր եկամուտ ունեցող երկրներում՝ 28%, միջին եկամուտ ունեցող երկրներում՝ 10%, իսկ բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 1%: Այդուհանդերձ, ցածր և միջին եկամտով երկրներում ստեղծված ՀՆԱ-ն 2012 թ. կազմել է բարձր եկամտով երկրների ՀՆԱ-ի 46,2%-ը 2000 թ. 20,9%-ի փոխարեն (տես աղյուսակ 1.2):

Հարուստ երկրները միջին հաշվով զարգանում էին ավելի արագ, քան աղքատները, մեծացավ հարուստ և աղքատ բնակչության եկամուտների միջև խզումը ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: 20-րդ դարի ընթացքում աշխարհի բնակչության ամենահարուստ քառորդ մասի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն աճեց 6 անգամ, իսկ աղքատ բնակչության քառորդ մասինը կրճատվեց ավելի քան 3 անգամ:

**Աղյուսակ 1.2. Աշխարհի ՀՆԱ-ի թողարկումը և կառուցվածքը՝ ըստ երկրների եկամտային խմբերի**

1	ՀՆԱ, մլրդ ԱՄՆ դոլար		Գյուղատնտեսություն		Արդյունաբերություն		Վերամշակող արդյունաբերություն		Ծառայություններ	
	2	3	4	5	6	7	8	9	10	11
	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012
<b>Աշխարհը</b>	<b>32,873.10</b>	<b>72,682.00</b>	<b>4</b>	<b>3</b>	<b>29</b>	<b>27</b>	<b>19</b>	<b>15</b>	<b>67</b>	<b>70</b>
Ցածր եկամուտներով երկրներ	163.1	505.8	34	28	21	24	12	12	45	48
Միջին եկամուտներով երկրներ	5,510.70	22,457.20	13	10	37	36	23	22	50	54
Միջինից ցածր եկամուտներով	1,239.30	5,037.90	21	17	32	31	17	16	47	52
Միջինից բարձր եկամուտներով	4,271.90	17,416.00	10	8	39	38	24	23	51	54
<b>Ցածր և միջին եկամուտներով երկրներ</b>	<b>5,673.60</b>	<b>22,978.00</b>	<b>13</b>	<b>10</b>	<b>37</b>	<b>36</b>	<b>22</b>	<b>21</b>	<b>50</b>	<b>54</b>
Արևելյան Ասիա և Խաղաղ օվկ. տարած.	1,723.30	10,329.70	15	11	45	44	31	31	40	45
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	477.6	1,865.30	12	9	33	31	21	17	55	60
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	2,070.20	5,344.00	5	5	32	32	18	16	62	63
Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	436.1	1,662.70	13	-	38	-	14		49	-
Հարավային Ասիա	623	2,303.10	24	18	26	26	15	14	51	56
Աֆրիկա՝ Սահարայից հարավ	341.6	1,485.00	17	14	34	29	13	10	49	57
<b>Բարձր եկամուտներով երկրներ</b>	<b>27,197.70</b>	<b>49,762.80</b>	<b>2</b>	<b>1</b>	<b>28</b>	<b>25</b>	<b>18</b>	<b>15</b>	<b>70</b>	<b>74</b>
Եվրագոտի	6,263.50	12,213.30	2	2	28	25	19	16	70	73

Կապիտալի բաց շուկաների ձևավորումը ոչ մեծ երկրներում ծնում է լուրջ խնդիրներ: Նրանք ստիպված են փոխառություններ վերցնել բարձր տոկոսներով, և թույլ բանկային համակարգերը ընդունակ չեն «մարսելու» հսկայական ծավալի միջոցներ, ուստի ուժեղանում է կախվածությունը մեծ տնտեսությունների ֆինանսական շուկաների տատանումներից: Այսօր, երբ «համակարգչի մկնիկի մեկ հարվածով» հսկայական գումարներ կարող են տեղափոխվել աշխարհի մի մասից մյուսը, ավելի խոցելի են դառնում հասկապես փոքր տնտեսության ֆինանսական շուկաները: Առաջին հերթին օտարերկրյա կազմակերպությունները փակում են իրենց դուստր ընկերությունները թույլ զարգացած երկրներում, ինչն առաջ է բերում սոցիալական հիմնախնդիրներ:

Գլոբալացումը չի վերացնում բնակչության աղքատությունը, թեև աշխարհում աղքատների թիվը 1992–2012 թթ. միջին հաշվով տարեկան կրճատվել է 0,2%-ով, սակայն զարգացող երկրների շարքում միայն Արևելյան Ասիայի երկրներում է զգալիորեն կրճատվել ցածր եկամուտներ ունեցող անձանց թիվը: Մյուս տարածաշրջաններում այդ թիվը կրճատվել է աննշան, իսկ շատերում, այդ թվում նաև Նախկին սոցիալիստական երկրներում նույնիսկ աճել է [53]: Զարգացած երկրները զարգացող երկրների նկատմամբ վարում են «կրկնակի ստանդարտների» քաղաքականություն՝ հաճախ սահմանելով արգելքներ այդ երկրներից ստացվող ապրանքների նկատմամբ և ներգաղթողների նկատմամբ: Առանձին հետազոտողների հաշվարկներով՝ զարգացող երկրները տարեկան ունենում են մինչև 50 մլրդ ԱՄՆ դոլարի հասնող կորուստներ զարգացած երկրների կողմից վարվող սակագնային քաղաքականության պատճառով: Նրանք վճարում են 4 անգամ ավելի բարձր սակագներ, քան զարգացած երկրները: Ընդ որում՝ ավելի կոշտ ներմուծման սակագներ սահմանում են այն ապրանքների աշխատատար ճյուղերի արդյունաբերական և գյուղատնտեսական բարիքների նկատմամբ, որոնց առևտրից զարգացող երկրները կարող են ունենալ համեմատական առավելություններ:

Հաճախ զարգացող երկրների տնտեսությունն ավելի բաց է, քան զարգացած երկրներինը: ԱՄՀ-ն մշակել է առևտրային սահմանափակումների հատուկ ինդեքս, որը փոխվում է 1-ից (լրիվ բաց երկիր) մինչև 10 (լրիվ փակ երկիր): Այդ ինդեքսը Եվրամիության երկրներում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում 4 է, իսկ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ուգանդան, Պերուն և Բոլիվիան, 1–2 է: Եվ դա միայն մեկն է այն պատճառներից, որ շուկաների ազատականացումից ստացվող շահույթի «առյուծի բաժինը» պատկանում է զարգացած երկրներին:

Վերազգային կորպորացիաները իրենց կազմակերպությունների աշխատողների վարձատրությունը այլ երկրներում ոչ միշտ են իրականացնում համապատասխան ձևով և չեն պաշտպանում նրանց իրավունքները նույն ծավալներով, ինչպես իրենց երկրներում: Դրան պետք է ավելացնել շատ երկրների կառավարությունների անուշադրությունը կրթությանն առնչվող հարցերի, օտարերկրյա ներդրումներով արտադրական կազմակերպություններում աշխատող քաղաքացիների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև անկախ արհմիությունների ստեղծման արգելքների նկատմամբ: Տնտեսության բացությունը կարող է բերել տեղական բնապահպանական և սոցիալական

համակարգի ու սովորույթների խախտման: Հաճախ նավթային կազմակերպությունները փորձում են տեղի գյուղական բնակչությանը արտաբնակեցնել այն տարածքներից, որտեղ հայտնաբերվել են նոր հանքավայրեր:

Գլոբալացման և հետամնացության համակցումը հանգեցնում է նոր բախումների: Համաշխարհային բանկի գնահատականների համաձայն՝ աշխարհի երկրների 1/5-ը, որոնց տնտեսությունները նվազագույնը 1/4-ով կախված են հումքի արտահանումից, ներգրավված են ռազմական բախումների մեջ: Զարգացած երկրները մշակել են մարդու (այդ թվում՝ վարձու աշխատողների, սպառողների) իրավունքների և շրջակա միջավայրի պաշտպանության մեխանիզմներ: Զարգացող երկրները, չունենալով պաշտպանության այդպիսի միջոցներ, իրենց տնտեսությունների բացության պատճառով հաճախ դառնում են ազատ «կողոպուտի» օբյեկտ: Այդ իսկ պատճառով էլ թույլ իրավական համակարգ ունեցող երկրներում ավելի են սրվում սոցիալական հիմնախնդիրները:

Գլոբալացման հակառակորդները ոչ միայն չեն «ննջում», այլև նրանց ծամբարը ներկայանում է բավականին խայտաբղետ բազմազանությամբ՝ զարգացող երկրներից, պահպանողական, ազգային դրոշի տակ հանդես եկող ուժերից մինչև բնապահպանները և ծայրահեղ ձախերը: Հետաքրքիր է, որ եթե 20-րդ դարի 30–70-ական թվականներին աշխարհի բոլոր «մեղքերի» համար մեղավոր էր «համաշխարհային կապիտալիզմը», այնուհետև 1980–1990-ական թվականներին՝ «կոմունիզմը», ապա ներկայումս «համաշխարհային հրեշի» դերում հանդես է գալիս գլոբալացումը:

Հատկանշական է, որ, մերժելով գլոբալ զարգացման հայեցակարգը, իրենց այդ հակառակորդներն այլընտրանք չեն առաջարկում:

**Հայաստանի Հանրապետությունը գլոբալացման գործընթացում:** Աշխարհում կատարվող տարբեր տեսակի հարաբերություններին համաքայլ ընթանալով և այդ համագործակցությունից ոչ թե վնասներ, այլ օգուտներ ստանալու հրամայականն էլ անփոխարինելի են դարձնում միջազգային մասշտաբով տեղի ունեցող գործընթացների խորքերի վերլուծությունը և դրանցում մեր երկրի տեղի ու դերի հիմնահարցերի ուսումնասիրությունը [1, 52]:

Վերջին տարիներին հրապարակում հայտնված՝ միջազգային տնտեսական հարաբերություններին (ՄՏՀ-ին) նվիրված աշխատությունների մեծ մասում բավականաչափ մանրամասն շարադրված են շուկայական տնտեսության գործունեության հիմքերը, կոնկրետ գործիքակազմերն ու կառավարման նրբությունները [14]: Սակայն նյութի նման շարադրանքն ավելի շատ պիտանի է այն երկրներին, որտեղ շուկայական միջավայրը և հարաբերությունները ձևավորվել ու արմատավորվել են վաղուց և այն դարձել է նրանց ամենօրյա իրականության անբաժանելի մասը: Սկզբունքորեն այլ է իրավիճակն այն երկրներում, որտեղ անցում է կատարվում տնտեսության կենտրոնացված կառավարումից շուկայական մեխանիզմներին (ՄԱԿ-ի տնտեսական համակարգի մարմիններում ընդունված տերմինների սահմանմամբ՝ «անցումային տնտեսությամբ երկրներում»): Ասվածն ամբողջությամբ վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը: Մեզ նման փոքր պետության տեղն ու դերն աշխարհում մեծապես պայմանավորված է վերջինիս քաղաքատնտեսական կառուցվածքով: Ուստի

գլոբալացման գործընթացներին Հայաստանի մասնակցությունը չի կարող ակտիվ և արդյունավետ լինել այնքան ժամանակ, քանի դեռ դրան չի նախորդել Հայաստանի՝ որպես ինքնիշխան պետության սոցիալ-տնտեսական կայացումը:

Ելնելով վերոնշյալից՝ կարևոր խնդիր է դարձել միջազգային տնտեսական հարաբերություններում ինքնուրույն ազգային տնտեսությունների, մասնավորապես Հայաստանի Հանրապետության տեղը պարզելը: Ասվածը վերաբերում է ինչպես ապրանքների ու ծառայությունների ավանդական շրջանառությանը, այնպես էլ միջազգային հաշվարկների համակարգին (վճարային հաշվեկշռին և դրա հավասարակշռության ապահովմանը), արժույթավարկային մեխանիզմներին ու տնտեսական ինտեգրմանը:

Հայաստանը, աստիճանաբար ընդլայնելով իր արտաքին առևտրաշրջանառությունը տարբեր երկրների հետ, ըստ էության դառնում է համաշխարհային տնտեսության մասնիկը, որը, սակայն, ուղեկցվում է բազմաթիվ դժվարություններով և խոչընդոտներով:

Ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության միայն 1/4-ն է բաժին ընկնում ԱՊՀ երկրներին: Իսկ եթե նկատենք, որ ԱՊՀ երկրները նախկին Խորհրդային Միության հանրապետություններ են, ապա պարզ կդառնա, որ վերջին տասնամյակի ընթացքում մեր հանրապետության առևտրաշրջանառության մեջ տեղի են ունեցել իրոք արմատական փոփոխություններ: Ըստ էության՝ ՀՀ-ն, լինելով նախկին Միության գրեթե փակ համակարգի սուբյեկտներից մեկը, իր առևտրային կապերով և ապրանքաշրջանառության ծավալով կարողացել է դուրս գալ այդ միջավայրից ու աստիճանաբար ինտեգրվել համաշխարհային տնտեսությանը: Սա նաև տնտեսական անկախության իրական ձեռքբերում է: Ուստի այս առումով հատկանշական է նաև, որ ԱՊՀ երկրների շրջանակում ՀՀ արտաքին առևտրաշրջանառության շուրջ 4/5-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, իսկ ոչ ԱՊՀ երկրներից զգալի է եվրամիության երկրներինը՝ ավելի քան 40%:

Այս պարագայում արժանահիշատակ է նաև գլոբալացման քննարկումը և այդ գործընթացում Հայաստանի մասնակցության հարցերի դիտարկումը, քանի որ, ինչպես ցույց է տալիս փորձը, փոքր երկրներն իրավամբ կարող են շահել գլոբալացումից, եթե հնարավոր լինի դրանցում իրականացնել նպատակամետ ու հիմնավոր արտաքին քաղաքականություն:

Հայաստանի համար հատկապես հետաքրքրություն է ներկայացնում գլոբալացման երևույթի դիտարկումն *ազգային պետություն—արտաքին աշխարհ* կտրվածքով: Այս առումով գլոբալացումը միջազգային հարաբերությունների զարգացման՝ միջազգային ինտեգրման այնպիսի աստիճան է, երբ յուրաքանչյուր երկրի ոչ միայն արտաքին, այլև ներքին քաղաքականությունը հայտնվում է միջազգային նորմերի ու սկզբունքների աճող ազդեցության տակ: Ժամանակակից գլոբալացումը հիմնված է բնապատմական գործընթացի, կամավորության սկզբունքի, արժեքային ընդհանրության վրա:

Տնտեսական գլոբալացման հիմնական կողմնորոշիչներն են միջազգային տնտեսական կառույցները, համաշխարհային ֆինանսական կապիտալը և վերազգային ընկերությունները: Համաշխարհային տնտեսական համակարգում

կենտրոնական տեղ է զբաղեցնում «մեծ յոթնյակը»՝ ԱՄՆ-ը, Ճապոնիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Կանադան և Իտալիան: ԱՄՆ-ի գլխավորությամբ «մեծ յոթնյակը», տիրապետելով ճայների 45%-ին, իրականացնում է փաստացի հսկողություն Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի նկատմամբ, որոնք Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո արմատական դերակատարում են ստանձնել գլոբալ ֆինանսատնտեսական համակարգի ձևավորման գործում: 20-րդ դարի 1970-ական թվականներից հենց Համաշխարհային բանկը և ԱՄՀ-ն, այլ ոչ թե ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը, իրենց վրա են վերցրել միջազգային տնտեսական անվտանգության գլխավոր երաշխավորների դերը: Միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի փոխհարաբերություններն ընդհանուր առմամբ պետք է գնահատել դրական՝ հատկապես նկատի ունենալով ֆինանսական այլընտրանքային աղբյուրների բացակայությունը: Միայն Համաշխարհային բանկը Հայաստանում արդեն իրականացրել է մոտ 900 մլն ԱՄՆ դոլար արժույթամբ 29 ծրագիր: Ընթացիկ տարում ևս Համաշխարհային բանկից ակնկալվում է ֆինանսական ներարկումներ, այդ թվում՝ հանրապետությունում աղքատության կրճատման ծրագրի շրջանակներում:

Գլոբալացման դարաշրջանում Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովումն առաջին հերթին զարգացման բևեռի ճիշտ ընտրությունն է՝ որպես չափանիշ ունենալով արժեքային ընդհանրությունը, ինքնավարության պահպանումը և առաջադիմության հնարավորությունը: Այս չափանիշից ելնելով՝ մեզ համար մինչև 2013 թ. սեպտեմբերի 3-ը թերևս ավելի նախընտրելի էր զարգացման արևմտյան ուղղությունը: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, դեռևս հարց է՝ այն կդառնա՞ բևեռաստեղծ պետություն, թե՞, հրաժարվելով գլոբալ հավակնություններից, կանդամակցի Եվրոպային՝ նախընտրելով սոցիալ-տնտեսական բարեկեցությունը: Տպավորությունն այն է, որ Ռուսաստանի կառավարող վերնախավը դեռևս վերջնականապես չի կողմնորոշվել այդ հարցում:

Ինչ վերաբերում է Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշիչներին, պետք է նշել, որ մեր երկրի արտաքին քաղաքականության մեջ ներկայումս առկա են երկու հիմնական տարրեր, որոնք պերժախոս են հենց ռազմավարական առաջնահերթությունների տեսակետից: Առաջին հերթին դա Ռուսաստանի հետ ռազմավարական դաշնակցությունն է և համագործակցությունը:

2001 թ-ից Հայաստանը ԵԽ-ի լիիրավ անդամ է, իսկ 2002 թ. ԵԽ-ի անդամակցության պայմանագիրը վավերացվել է ԵՄ Խորհրդարանական վեհաժողովում և ՀՀ Ազգային ժողովում: Երկու կազմակերպություններն էլ Հայաստանի հետ իրենց կապերի ակտիվացման պահից սկսած բազմիցս իրենց ծառայություններն են առաջարկել:

Սկզբունքորեն հայ հասարակությունը հիմնականում բարյացակամ է տրամադրված Եվրոպական արժեքների նկատմամբ և արտահայտվում է միասնական Եվրոպային ինտեգրվելու օգտին՝ ընդհուպ մինչև անդամակցություն Եվրամիությանը:

Եվ քանի որ համաշխարհային տնտեսությունը, նրա առանձին ոլորտներն ու հատվածները խիստ շարժունակ են, և իրավիճակն անընդհատ փոխվում է,

համաշխարհային տնտեսության մեջ շատ երկրների տեղն ու դերը մշտական չեն և կախված են ոչ միայն, իսկ ավելի հաճախ՝ ոչ այնքան դրանցից: Այս տեսակետից աներկբա է մեր հանրապետության ներքաշումը համաշխարհային գլոբալացման գործընթացի մեջ, քանի որ այն, այլընտրանք չունենալով, միաժամանակ հզոր «հարթակ» է համաշխարհային տնտեսության «հորձանուտում» կողմնորոշվելու և հոգուտ ազգային շահերի առաջ շարժվելու համար:

## 1.2. Քաղաքական համակարգերը և տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները

Կասկածից վեր է, որ տնտեսության և քաղաքականության համադրումն ու «խաչաձևումը» կարող են իրականացվել պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության միջոցով, որի օգնությամբ պետությունը փորձում է կարգավորել և անհրաժեշտ ուղու վրա դնել տնտեսության զարգացումը:

Ո՞րն է տնտեսության պետական կարգավորման էությունը:

Ամենից առաջ անհրաժեշտ է նշել, որ տնտեսական և քաղաքական ոլորտի կարգավորումները, լինելով պետական գործունեության ձևեր, ունեն ընդհանուր տիրույթ, այսինքն՝ փոխմիահյուսված են և այդ առումով՝ նույնական: Այսպես՝ տնտեսության պետական կարգավորումը որոշակի քաղաքականություն է, իսկ վերջինս միաժամանակ ունի կարգավորիչ ուժ և ուղղվածություն: Բացի այդ՝ դիտարկվող երևույթները փոխադարձաբար «միջոց-նպատակ» կապի մեջ են, և տնտեսական քաղաքականության համակարգում նպատակների տեղն ու դերն առանցքային են: Տնտեսության կարգավորումը տնտեսական քաղաքականության միջոցով դառնում է դրա համար միջոց: Համենայն դեպս, և՛ պետական կարգավորումը, և՛ թե տնտեսական քաղաքականությունը միջոց են երկրի տնտեսության բնականոն զարգացման ու ազգաբնակչության բարեկեցության աճի նպատակներին հասնելու համար:

Ընդհանուր առմամբ, տնտեսական քաղաքականությունն ավելի տարողունակ է, քան տնտեսության պետական կարգավորումը: Թեև վերջինիս մեթոդները և միջոցները մտնում են քաղաքականության լծակների «գործիքակազմի» մեջ, այնուհանդերձ, ենթակա չեն մշտական, պարտադիր կամ նույն ինտենսիվությամբ օգտագործման: Դա հատկապես ցայտուն արտահայտվում է այն դեպքերում, երբ որպես տնտեսական քաղաքականության ընդհանուր ուղղվածություն շեշտադրվում է ապակարգավորման կուրսը (իմիջիայլոց, այս հանգամանքը 1980-ական թվականներից բնորոշ էր մի շարք առաջատար երկրների՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ճապոնիա, Գերմանիա և այլն): Ապակարգավորման քաղաքական շրջանակներում տնտեսական կյանքին պետական միջամտության մասշտաբները նեղացվում են, կարգավորման եղանակների կիրառումը սահմանափակվում է, և, առհասարակ, թուլացվում է պետական վերահսկողությունը: Այդ քաղաքականությունը կարևորում է շուկայական ուժերի ու մեխանիզմների դերը և ուղղված է դրանց ակտիվացմանը:

Տստեսության պետական կարգավորման համեմատությամբ տնտեսական քաղաքականությունը որոշակի առաջնություն ունի ելակետային և որոշիչ դերի իմաստով, ինչը պայմանավորված է նրանով, որ տնտեսական քաղաքականության այս կամ այն կուրսի որդեգրումը բավականին կոշտ ձևով կանխորոշում է կարգավորման միջոցների շրջանակը, նախընտրությունը և կիրառումը [12, էջ 435]: Պետությունը հաստատում է տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի անբաժան մասը համարվող որոշակի ամրագրված կանոններ (մասնավորապես՝ օրենքներ), որոնք հասարակության մեջ գոյություն ունեցող, սակայն չգրված (չամրագրված) սկզբունքներին (կանոններին) զուգահեռ հասարակության անդամների վարքագծի կառավարման միջոցներն են: Սակայն պետությունը միայն այդ կանոնների պահպանման ու իրագործման դատավորը չէ, այլ միաժամանակ հանդես է գալիս որպես տնտեսական միջավայրը ձևավորող առաջատար մասնակից: Պետական մարմիններն իրենց ամենօրյա աշխատանքում անընդհատ կատարում են ռեսուրսների ներդրում, տրամադրում վարկեր, ձեռք բերում ապրանքներ ու ծառայություններ, վարում բանակցություններ և այլն: Այս ամենը զգալի ազդեցություն է թողնում տնտեսվարող սուբյեկտների գործունեության և դրա արդյունքների վրա:

Տստեսության զարգացման համար կարևոր է ճիշտ իրագործել պետության կողմից հաստատված կանոնները, քանի որ նույնիսկ դրանց մի մասի ոչ ճիշտ իրագործումը հանգեցնում է տնտեսական ու սոցիալական ճգնաժամերի: Հետևապես, պետության դերը հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման գործում առանձնահատուկ է<sup>1</sup>: Պետությունը ոչ միայն պետք է հաստատի և հետևի ամրագրված կանոնների իրագործմանը, այլև ինքը ենթարկվի դրանց (պետական ձեռնարկատիրության մասով և բոլոր այն դեպքերում, երբ առաջանում են փոխհարաբերություններ պետության հետ (տես գծանկար 1.1)):

Ըստ այդմ՝ պետությունը տնտեսական աճի արդյունքները բարելավում է՝


- ա) տնտեսության մակրո- և միկրոմակարդակներում կայունության պահպանմամբ,
- բ) ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ապահովմամբ և հատկապես սեփականության իրավունքի ամրագրմամբ, ինչպես նաև երկարաժամկետ արդյունավետ ներդրումների դաշտն ընդլայնող նորմերի ընդունմամբ և կիրառմամբ,
- գ) կրթության, գիտության, առողջապահության ենթակառուցվածքների ապահովմամբ, որոնք անհրաժեշտ են տնտեսական գործունեության համար,
- դ) շրջակա միջավայրի պահպանությամբ:

Հասարակության զարգացման որոշակի փուլում պետությունը բախվում է առանձնահատուկ (բացառիկ) խնդիրների հետ, որոնք պայմանավորված են պետական ծառայողների կողմից իրենց գործունեության նպատակների ոչ ճիշտ

<sup>1</sup> Ցանկացած պետության առաքելությունը հիմնված է հինգ հիմնարար խնդիրների լուծման վրա և ներկայիս դասակարգմամբ դրանք հետևյալներն են. օրինականության հիմքերի հաստատում, քաղաքական հավասարակշռված իրադրության աջակցում, ներառյալ մակրոտնտեսական կայունության ապահովում, սոցիալական ապահովության և ենթակառուցվածքային ոլորտներում ներդրումների իրագործում, բնակչության անպաշտպան խմբերի օժանդակում, շրջակա միջավայրի պահպանություն [18, էջ 4]:



«ընկալմամբ» ու այդ նպատակների կատարման ապահովմամբ: Այդ խնդիրներն առաջին հերթին առնչվում են այն բանի հետ, որ չնայած ընտրություններն ու մյուս քաղաքական մեխանիզմները մեծ դեր են խաղում քաղաքացիների և պետության միջև կապի ու փոխհարաբերությունների ստեղծման գործում, սակայն առանձին դեպքերում քաղաքացիների հարցադրումները կարող են մնալ չհստակեցված, որն էլ նպաստում է այն բանին, որ որևէ ազդեցիկ խմբավորում, ելնելով իր հետաքրքրություններից ու հնարավորություններից, իր շահերի իրացման նպատակով աշխատում է անընդհատ ներգործել կառավարության գործունեության վրա:



**Գծանկար 1.1.** Պետությունը, ինստիտուցիոնալ կառույցը և տնտեսական արդյունքները [18, էջ 36]

Մեկ այլ դեպքում, տնտեսության մի շարք ոլորտներում՝ կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության և այլն, պետության գործունեության արդյունավետության վերահսկումը բարդ է (կապված ստանդարտների և մյուս մեխանիզմների իրագործման դժվարությունների հետ): Վերը նշված երկու խնդիրների գոյությունը կարող է հանգեցնել այն բանին, որ պետական բյուրոկրատիայի ներկայացուցիչները կստանան գործունեության լրացուցիչ ազատություն: Նման դեպքում պետական ծառայողներն ավելի շուտ կհետապնդեն անձնական նպատակներ՝ անտեսելով հասարակության հիմնական մասի շահերը: Սա է պատճառը, որ պետության առջև խնդիր է դրված օգտագործելու շուկայի «ուժեղ» կողմերն ու տնտեսական միավորումների ներուժը՝ միաժամանակ զգալի ուշադրություն դարձնելով և ուժեղացնելով պետական կառույցների հնարավորությունները: Վերը շարադրվածից հետևում է, որ պետության առաջնա-

հերթ խնդիրներից մեկն ինստիտուցիոնալ կանոնների և նորմերի մշակումն է, ինչն իրական կդարձնի պետական գործառնություններն իր հնարավորություններին համապատասխանեցնելու խնդիրը: Երկրորդ խնդրի լուծումը նպատակ է հետապնդում ամրացնելու պետության ներուժը կանոնների, պայմանագրային հարաբերությունների, ինչպես նաև ներքին և արտաքին մրցակցության ուժեղացման հաշվին: Պետության հնարավորությունները և կառավարման գործառնությունները նրա ներուժի հետ համապատասխանեցման ժամանակ պետք է հաշվի առնել ոչ թե ինչ է անում պետությունը, այլ ինչպես է դա կատարում:

Պետության դերի վերահիմնավորումը նույնպես ենթադրում է արդեն գոյություն ունեցող կամ նոր այլընտրանքային կառավարման գործիքակազմերի կիրառություն, որոնք կարող են բարձրացնել նրա գործառնությունների արդյունավետությունը: Այսպես՝ ժամանակակից տնտեսությունների մեծ մասում պետական կարգավորման դերն այսօր առավել ընդլայնված և համեմատաբար բարդ է, քան նախկին ժամանակահատվածներում, քանի որ պետական կարգավորման դաշտում ներգրավված են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են շրջակա միջավայրի ֆինանսական կառույցները և մենաշնորհների (այդ թվում՝ բնական) գործունեությունները: Պետական կարգավորման մեխանիզմների մշակման ընթացքում անհրաժեշտ է, որպեսզի պետական կարգավորման մարմինների հնարավորությունները թույլ տան լուծելու շուկայական խնդիրները և հաղթահարեն այդ ոլորտում ստեղծված դժվարությունները՝ միաժամանակ մեծ նշանակություն տալով կառավարչական ապարատի անձնական պատասխանատվությանը:

Ազատ շուկան, չնայած իր տարերային բնույթին, լավ կազմակերպված մեխանիզմ է, որն ընդունակ է լուծելու հասարակության առջև կանգնած սոցիալ-տնտեսական խնդիրները: Սակայն հասարակության տարբեր հիմնախնդիրների լուծման համար տնտեսական կառուցվածքի իդեալական մոդելը նախատեսում է պետական կարգավորման լծակների օգտագործում, որոնք կատարվում են մի շարք գործառնությունների միջոցով:

Պետության առաջին գործառնությամբ հիմնարար կամ այլ կերպ հիմքային խնդիրների ճիշտ լուծումն է: Յուրաքանչյուր պետության հիմնական առաքելությունը հիմնարար խնդիրների իրագործումն է, առանց որոնց հնարավոր չէ հասարակության բազմակողմանի զարգացումը և կայունությունը: Այդ խնդիրների լուծումը կբերի կայուն տնտեսական զարգացման և կնպաստի երկրի բնակչության բարեկեցության բարձրացմանը:

Հասարակության զարգացմանը համընթաց պետության կողմից իրականացվել են ավելի բարդ գործառնություններ, ինչպիսիք են, օրինակ՝ տնտեսության կարգավորումը և արդյունաբերական քաղաքականությունը: Այդ պատճառով էլ պետության ներուժի և նրա դերի միջև ճիշտ համամասնության որոշումը կենսականորեն անհրաժեշտ է պետության գործառնությունների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու համար: Գծանկար 1.2-ը պատկերացում է տալիս պետության այն գործառնությունների մասին, որոնք անհրաժեշտ են հիմնարար խնդիրների լուծման համար:

Պետության ազդեցությունը երկրի զարգացման վրա ցույց տալու նպատակով իմաստ ունի այն ակնառու դարձնելու Աֆրիկայի և Արևելյան Ասիայի

զարգացող երկրների տնտեսական արդյունքների համեմատությամբ: Այսպես՝ 1960 թ. Արևելյան Ասիայի երկրների մեծ մասում բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտի մեծությունը շատ չնչին չափով էր ավելի, քան Աֆրիկայի երկրներում գրանցված նույն ցուցանիշը: Այդ տարածաշրջանների կառավարությունները թեև իրենց մասշտաբներով համադրելի էին, սակայն կառուցվածքով տարբերվում էին: Դեռևս այն ժամանակ աֆրիկյան երկրների կառավարություններն ավելի շատ էին ծախսում սպառման, հիմնականում՝ պետական ծառայողների պահպանության համար: Սակայն արդեն 1990-ական թվականների կեսին և հետագա տարիներին Արևելյան Ասիայի երկրներում 1 շնչին ընկնող եկամուտը 5 անգամ գերազանցում էր աֆրիկյան երկրների նույն ցուցանիշը: Իսկ աֆրիկյան երկրների պետական ուռճացված ծախսումները 50%-ով ավելի բարձր էին, քան Արևելյան Ասիայի երկրների համապատասխան ցուցանիշը:

Պետության գործառույթները	Այնտեղ, որտեղ շուկայական համակարգը չի գործում	Արդարության ապահովման ոլորտում
Նվազագույն գործառույթներ	<p><b>Տարրական հասարակական բարիքների տրամադրում.</b></p> <p>Պաշտպանություն Օրինականություն և կարգուկանոն Սեփականության իրավունք Մակրոտնտեսական կառավարում Առողջապահության պետական համակարգ</p>	<p><b>Աղքատների պաշտպանություն.</b></p> <p>Աղքատության դեմ պայքարի ծրագիր Տարբեր աղետներից տուժածներին օգնություն</p>
Միջին աստիճանի բարդության գործառույթներ	<p><b>Արտաքին գործոնների հաղթահարում.</b></p> <p>Նախնական կրթություն Շրջակա միջավայրի պահպանություն</p> <p><b>Մենաշնորհների կարգավորում.</b></p> <p>Կոմունալ ոլորտների կարգավորում Հակամենաշնորհային քաղաքականություն</p> <p><b>Անկատար տեղեկատվության հաղթահարում.</b></p> <p>Ապահովագրում (առողջության, կյանքի, կենսաթոշակային ապահովվածություն) Ֆինանսական կարգավորում Սպառողների իրավունքների պաշտպանություն</p>	<p><b>Սոցիալական ապահովագրության ապահովում.</b></p> <p>Աղքատների թոշակների ապահովագրում Ընտանեկան նպաստների համակարգ Գործազրկության ապահովագրում</p>
Ակտիվ միջամտության գործառույթներ	<p><b>Մասնավոր կառույցների գործունեության համակարգում.</b></p> <p>Շուկաների օժանդակում Նախաձեռնությունների համակարգում</p>	<p><b>Վերաբաշխում.</b></p> <p>Ակտիվների վերաբաշխում</p>

Գծանկար 1.2. Պետության գործառույթները [18, էջ 33]

Կառավարության գործունեության ազդեցությունը տնտեսական աճի վրա մեծապես կախված է պետական ծախսերից և ներդրումներից: Այն երկրներում, որտեղ պետական ծախսերը մեծ են, տեղի է ունենում տնտեսական աճի արգելակում, իսկ այնտեղ, որտեղ տարբեր ոլորտներում (և հատկապես ենթակառուցվածքներում) պետական ներդրումներն են մեծ, ապա որպես կանոն՝ դրական ազդեցություն է նկատվում տնտեսական աճի վրա [20]: Սակայն անհրաժեշտ է

հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ պետական առանձին ծախսեր, ինչպես, օրինակ՝ ուսուցիչների, բժիշկների աշխատավարձի ավելացումը, դեղերի գնումը, բարձրացնում են մարդկանց կենսամակարդակը և դրան զուգահեռ նաև ներդրումների արդյունավետությունը: Հետևաբար, չի կարելի միանշանակ հանգել այն համոզման, որ կառավարության ծախսերի կրճատումը միշտ դրական արդյունք է ապահովում: Տնտեսական արդյունքների բարելավմանը նպաստում է ճիշտ տնտեսական քաղաքականությունը, և ըստ այդմ՝ դրանից ստացվող եկամուտներն ավելի կմեծանան, եթե ինստիտուցիոնալ հնարավորությունները նույնպես բարձր լինեն: Այն երկրներում, որտեղ պետության կողմից վարվող քաղաքականությունը և իրականացվող ծրագրերը արդյունավետ են (հասարակական արդյունք են ապահովում), ապա քաղաքացիները և ներդրողները վստահ են կառավարության հետագա գործողությունների համար [5]:

Այսպիսով՝ արդյունավետ քաղաքականությունը թույլ է տալիս արագացնել տնտեսական աճի տեմպերը և բարձրացնել մեկ շնչին ընկնող եկամուտը: Այստեղից հետևում է, որ բարեփոխիչները չպետք է իրենց ուշադրությունը սևեռեն միայն տնտեսական քաղաքականության կատարելագործման վրա, այլ պետք է ուղիներ փնտրեն ամրապնդելու այն ինստիտուցիոնալ միջավայրը (ենթակառուցվածքը), որտեղ իրականացվում է այդ քաղաքականությունը:

Տնտեսական քաղաքականության արդյունքները հաճախ կախված են ոչ միայն կարգավորման տարբեր գործիքների ընտրությունից, այլև տվյալ կարգավորիչի կիրառման չափից: Այսպես՝ որոշակի հարկային քաղաքականություն վարում են բոլոր երկրները, սակայն զգալի տարբերություններ կան հարկատեսակների, դրույքաչափերի, հարկային բեռի և այլ բնութագրերի առումով, հետևաբար տարբեր են դրանց ներգործության հետևանքները:

Բոլոր դեպքերում, տնտեսության պետական կարգավորման միջոցներն ինքնին հանրահայտ են, ստանդարտ և չեզոք բնույթ ունեն, այսինքն՝ դրանք ընդամենը գործիքներ են: Հետևաբար, էական է այն հարցը, թե կոնկրետ պայմաններում ում կողմից, ինչ նպատակով և չափով են դրանք գործադրվում: Ասվածից բխում է, որ տնտեսական քաղաքականության ողջ բարդությունը և ճկունությունը կապված է գերակայությունների ճիշտ և հիմնավորված առանձնացման, քաղաքականության համապատասխան ուղղությունների համադրման, կարգավորման նպատակների ու միջոցների համարժեքության ապահովման դժվարությունների հաղթահարման հետ: Դրա համար պահանջվում են մի շարք նախադրյալներ՝ պետական մտածելակերպ, մասնագիտական հմտություն, պատասխանատվություն, կազմակերպվածություն, հետևողականություն, բարոյականություն և այլն: Տնտեսական քաղաքականության արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե որքանով է դրանց համատեղ առկայությունը բնորոշ պետության տնտեսական գործառույթներն իրականացնող սուբյեկտների, ինստիտուցիոնալ կառույցների գործունեությանը [12, էջ 435]:

Հայտնի է, որ տնտեսական քաղաքականությունը ձևավորելիս սովորաբար հիմնվում են այս կամ այն հայտնի տեսական հայեցակարգի վրա՝ կարծելով, որ առանց որևէ հանրահայտ տեսության «հովանավորության» անհնար է կառավարել երկրի արդյունավետ տնտեսական աճը: Սակայն կյանքը ցույց է տալիս,

որ տեսությունը ոչ միշտ է համընկնում իրականության հետ և երբեմն հանգեցնում է անկանխատեսելի հետևանքների:

Փորձենք առավել մանրամասն դիտարկել տնտեսական քաղաքականության և տնտեսագիտական հայտնի տեսությունների միջև կապն ու հեռանկարները:

Առհասարակ, երկրի տնտեսական քաղաքականության մասին խոսելիս անպայման քննարկվում է քեյնսականության կամ մոնետարիզմի դրույթների ճշմարիտ լինելու հանգամանքը: Երկու-երեք տասնամյակ առաջ այս մոտեցումն, ընդհանուր առմամբ, պիտանի էր: Այսօր դա մի շարք պատճառներով կարող է հանգեցնել կասկածելի արդյունքների. համաշխարհային տնտեսության քանակական և որակական աճը, աշխարհի քաղաքական կառուցվածքում արմատական տեղաշարժերը, տնտեսական գործընթացները կարգավորելու նոր հնարավորությունները և վերջին տարիների մյուս երևույթները ծնեցին արմատական փոփոխություններ տնտեսագիտական ուղղությունների և տնտեսական քաղաքականության մեջ: Այսպիսով՝ ինչպիսի տեսություններ են ընկած ներկայիս զարգացած երկրների տնտեսական քաղաքականության հիմքում:

Պարտադիր չէ, որ խոսքը վերաբերի հատուկ տեսական հիմնադրույթներին, քանի որ երկրների ղեկավարները բնավ գիտնական տեսաբաններ չեն: Այնուհանդերձ, գերակշռող մոտեցումների համաձայն՝ ցանկացած երկրի շուկայական տնտեսության գործունեությունը այսպես թե այնպես հարում է տնտեսագիտական մտքի ներկայումս ընդունված տեսական ուղղություններից մեկին, թեև հազիվ թե տեսությունն ամբողջությամբ համընկնի գործնական կյանքին: Օրինակ՝ անցած դարի վերջին քառորդում ԱՄՆ-ի տնտեսության վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ իրական տնտեսական քաղաքականությունը որևէ պահանջարկվող (կամ, առավել ևս, որևէ մեկին ձեռնտու) տեսության մեջ «տեղավորելը» ոչ միայն օգտակար չէ, այլև կարող է ապակողմնորոշել գիտական հասարակությանն ու ոչ ճիշտ ուղու վրա դնել երկրի ղեկավարությանը, և բացի այդ՝ իրական տնտեսական քաղաքականության արդյունավետությունն ապահովելու համար այն չի կարող պարփակվել առանձին տեսական սխեմայի շրջանակներում: Նմանօրինակ փորձերի անհեռանկար լինելը ցույց տվեց հետխորհրդային մի շարք երկրների, այդ թվում՝ մեր հանրապետության անցած տարիների փորձը: Վերոգրյալից հետևում է, որ չի կարելի տնտեսական քաղաքականությունը կառուցել միայն մեկ տեսության դրույթների վրա և հակառակը, նպատակահարմար չէ տնտեսական քաղաքականության և գործնական միջոցառումների համակարգի «տեղավորումը» զուտ տեսական սխեմաներում:

Այսպես՝ որոշակի ժամանակահատվածի համար և կոնկրետ նախագահի իշխանության օրոք ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականությունը որոշակի տեսական ուղղության «կապակցելը» խիստ տարածված էր 20-րդ դարի 60-80-ական թվականներին, և այն բնութագրական էր ոչ միայն հայրենական, այլև խորհրդային հետազոտողներին: Սակայն և ԽՍՀՄ-ում, և հետխորհրդային երկրներում վերլուծությունը մշտապես կենտրոնացվում էր գաղափարախոսական կապերով՝ խոչընդոտելով հետազոտությունների օբյեկտիվությունը:

Ջոն Մեյնարդ Բեյնսի նկատմամբ հանդուրժողական-քննադատական վերաբերմունքը սովորական երևույթ էր խորհրդային ժամանակներում, իսկ

1990 թվականից հետո այդ քննադատությունը վերաճեց ուղղակի անհանդուրժողականության: Հայացքների այս վերափոխումը ոչ վաղ անցյալում գերակշռող դիրք ունեցող տեսության նկատմամբ ինքնին մտորումների տեղիք է տալիս: Խոսքը չի վերաբերում այն դրդապատճառներին, ինչը ստիպում է հայրենական «բարեփոխիչներին» տնտեսության վերակառուցումը տանել մոնետարիզմի ուղիով, որը դարձավ տնտեսության ձախողումների պատճառը: Առավել կարևոր է գնահատել հայեցակարգային կոնֆլիկտի տեսական կողմը՝ ֆինանսների, գույքի և իշխանության գռեհիկ բաժանմամբ երկար ժամանակ պատնեշված, սակայն իր գոյությունն առ այսօր պահպանած համակարգը: Ձևավորվել է այնպիսի պատկեր, ըստ որի՝ քեյնսական տեսությունը առաջին հերթին որոշակի ժամանակահատվածում փորձելով զուգակցել կոնկրետ երկրի տնտեսական քաղաքականության հետ, որոշակի արդյունք չստացավ: Փոխանակ խորանալու դրա պատճառների մեջ՝ սկսվեց անհասկանալի քննադատություններ և «աջից», և «ձախից» (այսինքն՝ ինչպես պլանային տնտեսության կողմնակիցների, այնպես էլ մոնետարիստների կողմից):

Սակայն տնտեսական զարգացման ընթացքն իր արդյունքներով, որպես կանոն, չէր բավարարում երկու կողմերին, որոնցից յուրաքանչյուրը դրա պատճառը համարում էր «ճշմարիտ» տնտեսագիտական հիմնադրույթների չպահպանումը: Քանի որ այդ հիմնադրույթները սովորաբար ունենում էին հակասական ուղղություններ, ստացվում էր, որ քննադատության է արժանանում ոչ այնքան որոշակի ժամանակահատվածի տնտեսական քաղաքականությունը, որքան այս կամ այն տեսության կողմնակիցների ոչ խորքային և ամբողջական պատկերացումներն այդ քաղաքականության, նրա զարգացումների ու հետևանքների մասին:

Ամենաբարեխիղճ ուսումնասիրությունների թույլ կողմն այն է, որ այդ աշխատություններում, որպես կանոն, իրենց ազդեցությունն են թողնում սկզբնաղբյուրի հստակ ներկայացմանը խոչընդոտող բազմաթիվ գործոններ. օրինակ՝ հանուն սեփական հայեցակարգի ապացուցման հետազոտվող տեսությունը միակողմանի ուսումնասիրելու ցանկությունը, ինչպես նաև ստեղծված իրավիճակում դրա կիրառության անհնարինության հանգամանքի հաշվի չառնելը: Առաջին հերթին դա վերաբերում է Ջ. Մ. Քեյնսի տեսության անկյունաքարը հանդիսացող հարկաբյուջետային կարգավորումները: Երբեմն քեյնսականության ուսումնասիրության մեջ կարևորվում է պետական ծախսերի պակասությունը ֆինանսավորման անհրաժեշտությունը, և որոշ դեպքերում հիշատակվում է տնտեսական վերելքի ժամանակաշրջանի փոխհատուցող ավելցուկների մասին, որը թույլ է տալիս ժամանակի մեջ հավասարակշռել ձգնաժամային տարիների պակասությունները: Չի կարելի չնշել Ջ. Մ. Քեյնսի այս դիտարկումներից յուրաքանչյուրի միջև բավականին մեծ տարբերությունները, որոնք այժմ գոյություն ունեն որպես ինքնուրույն ուղղություն, ընդ որում՝ նշված տարբերությունները թույլ են տալիս այդ տարբերակներից յուրաքանչյուրի վերաբերյալ կատարել բավականին տարաբնույթ և միմյանց հետ չհամընկնող եզրակացություններ: Սակայն կարևորն այդ չէ: Գլխավորը, ինչպես կարելի է համոզվել՝ ուսումնասիրելով Քեյնսի առավել հայտնի աշխատությունը, այն է, որ բոլոր այդ տարբերակները բանավեճային

են և արտացոլում են միայն նրա տեսության առանձին տարրերը, իսկ տնտեսության վրա ներգործության կենտրոնական միջոցը անգլիացի գիտնականը համարում էր ներդրումները և որոնց կարգավորմանն էլ ուղղված է նրա հիմնական աշխատությունը: Ինչ վերաբերում է բյուջեին և պակասորդային ֆինանսավորմանը, ապա դրանք միայն ընդհանուր և լրիվ դատողությունների միջանկյալ փուլերն են՝ չնայած քեյնսական հայեցակարգի համար դրանց կարևորությանը [11, էջ 33, 265–272, 359]: Սակայն քեյնսականությանն անդրադառնալիս ներկայումս հիմնականում «մոռանում են» ներդրումային բաղադրիչի մասին: Նույն կերպ, որպես հիմնական թերություն, մատնանշվում է Ջ. Մ. Քեյնսի անուշադրությունը դրամավարկային քաղաքականության նկատմամբ: Սակայն հարկ է նշել, որ նա կարևորել է նաև դրամավարկային քաղաքականությունը, սակայն առաջնությունը տվել է հակաբյուջետայինին: Արդյո՞ք քեյնսականությունը պարզեցված կամ ոչ բավարար մշակված տեսություն է, քննարկման ենթակա հարց չէ, սակայն Ջ. Մ. Քեյնսի տեսության աղավաղման կամ, մեղմ ասած, խոր «աղքատացման» փաստն ակնհայտ է:

ԱՄՆ–ի նախագահ Ռ. Ռեյգանը, որին հաճախ անվանում էին լիբերալ (ազատական), իր գործունեությունը սկսեց տնտեսության մեջ պետության դերի կրճատման զուտ մոնետարիստական դիրքերից ելնելով. ապակարգավորմանն ուղղված մի քանի օրենքների ընդունումը և հարկերի իջեցումը կարծես թե համապատասխանում էին նախնական մտահղացմանը: Սակայն այդ «ազատական պահպանողականը» իր գործունեությունն ավարտեց վառ արտահայտված բյուջետային էքսպանսիայով, որը բնութագրվում էր հետպատերազմյան ժամանակաշրջանում դաշնային բյուջեի ամենախոշոր պակասորդով, և այն ապագայում՝ արդեն քլինթոնյան ժամանակահատվածում, նպաստեց երկարաժամկետ տնտեսական աճին ու արտադրողականության բարձրացմանը: Հետևաբար, «ռեյգանոմիկան» բնավ պահպանողական լիբերալիզմի հաղթարշավը չէր, ինչպես ներկայացվում էր մինչև վերջին ժամանակները. այն կարելի էր համարել բացարձակ քեյնսական քաղաքականություն: Արդյունաբերության վերակառուցման ռեյգանյան եղանակների նման հետևանքը «չէր տեղավորվում» քեյնսական տեսության մեջ, թեև նախատեսվող արդյունքները զուտ քեյնսական էին: Այստեղ ակնհայտ է դառնում իրականության ու տեսական մտքի միջև խոր հակասությունը և տվյալ դեպքում խիստ դժվար է որոշել առանձին խմբերի և շրջանակների համար քաղաքական ու տնտեսական օգուտները:

Վերջին տարիներին արդեն ավանդույթ է դարձել հայրենական «բարեփոխիչների» համար Ադամ Սմիթին ներկայացնել որպես իրական տնտեսական քաղաքականության «հոգևոր հայր» և նրա գաղափարներն ընդունել որպես բացարձակ ճշմարտություն: Եվ միայն նրա աշխատություններն ուսումնասիրած մասնագետներին է հայտնի, որ Ա. Սմիթի որոշ գաղափարներ ամբողջապես հակասում են, այսպես կոչված, «ազատականացման» մտքերին: Բավական է նշել, որ Ա. Սմիթը աշխատանքային հարաբերությունների հարցերում ընդունում էր մենաշնորհի ձեռնարկատերերի դեմ աշխատավորների կազմակերպված պայքարի իրավունքը՝ չխոսելով արդեն շուկայական համակարգում բարոյական սկզբունքներ ներդնելու նրա համառ փորձերի մասին (որը, բնա-

կան է, չստացվեց) [33, էջ 88, 89]: Շուկայական հարաբերությունների սմիթյան տեսության ճիշտ ընկալման համար խիստ կարևոր այս խնդիրները հանիրավի անտեսվում են, և տեսության իմաստը ներկայացվում է աղավաղված տեսքով:

Ընդունված է, որ մեր հանրապետությունում տնտեսական բարեփոխումները սկսեցին ժամանակակից մոնետարիզմի կնքահայր Միլտոն Ֆրիդմենի գաղափարների կիրառմամբ և նրանք ընկած էին 1990-ական թվականներին Հայաստանում իրականացված տնտեսական քաղաքականության հիմքում: Ու թեև Մ. Ֆրիդմենն իր աշխատություններում երբեմն արտահայտում էր ծայրահեղական մտքեր, սակայն դրանք չէր հասցնում արքայազնի աստիճանի, ինչն արեցին նրա հայկական հետևորդները: Բավական է հիշատակել «հեղինակային» մտքի աղավաղման միայն մեկ բնորոշ օրինակ. հայրենական «բարեփոխիչները» հավաստում են, որ Մ. Ֆրիդմենն է առաջադրել ազատականների հիմնարար կարգախոսը՝ «որքան փոքր է պետական միջամտությունը տնտեսությունում, այնքան լավ է»: Սակայն Մ. Ֆրիդմենի աշխատություններում բազմաթիվ անգամ ընդգծված է, որ «պետական միջամտությունը պետք է լինի այնքան, որքան պետք է», և դրա հետ մեկտեղ, հեղինակն ընդգծում է, որ «գործնական կյանքում դրան հասնելը խիստ դժվար է» [19, էջ 8]:

Վերջապես չի կարելի չհիշատակել մարքսիզմի տնտեսական հայեցակարգը: Նախորդ 20 տարիների ընթացքում ընդունված էր մարքսիզմը մերժել՝ այն համարելով անիմաստ, երկրորդային, հակազիտական և այլն: Սակայն ոչ ոք չի կարող ժխտել, որ Կ. Մարքսի տնտեսագիտական ուսմունքը, ի հեճուկս քննադատների, խիստ ամուր է, աչքի է ընկնում կառուցվածքայնությամբ և համակարգային մոտեցմամբ ու այդ չափանիշներով անհատական տնտեսագետ-տեսաբանների աշխատությունների մեջ լավագույնն է համարվում: Միևնույն ժամանակ, մյուս տեսություններն ու հայեցակարգերը, այդ թվում՝ Նոբելյան մրցանակների արժանացած բազմաթիվ աշխատություններ կամ խիստ իրավիճակային ու մակերեսային են, կամ աչքի են ընկնում տվյալ պահին Արևմուտքին անհրաժեշտ կամ պահանջարկված տեսություն դառնալու «ընդունակությամբ» [9]:

Մարքս տնտեսագետի ժամանակակից քննադատությունը հաճախ «հեռու չի անցնում» Գ. Ուելլի դիրքորոշումից, որի կարծիքով «Կապիտալը» կարդալու իր բոլոր փորձերի միակ արդյունքը գրքում պատկերված հեղինակի մորուքից քաշելն էր [19, էջ 8]:

Բնական է, որ մարքսիզմը նույնպես զերծ չէ թերություններից, որոնց մասին բավականին հետաքրքիր ուսումնասիրություններ են կատարվել Յ. Պևզնեթի կողմից վերջին աշխատություններում: Դրանք անհրաժեշտ է վերլուծել, հերքել, հաշվի առնել և այլն, դրանով իսկ Կ. Մարքսի ուսմունքը գնահատել մյուս կարևոր տեսությունների շարքում:

Ինչպես տեսնում ենք, տնտեսագիտության տեսական հայեցակարգերի, նրանց մեկնաբանումների ու գործնական միջոցառումների, ինչպես նաև տնտեսական ռազմավարության ուղիների միջև փաստացի խզումը տարբեր երկրներում խիստ բազմերանգ է, և դրանց բազմաբնույթ լինելը ծնել է տնտեսագիտական մտքի հիմնական ուղղությունների նոր «մասնաճյուղեր»՝ նեոքեյնսականություն, նեոինստիտուցիոնալիզմ, հետլիբերալիզմ և այլն: Տնտեսական



իրավիճակային և տնտեսական քաղաքականության անվերջ բազմազանությունն այս կամ այն տեսության հիմնադրույթների հետ ճշգրտորեն կապելու ձգտումը հանգեցրել է այդ տեսությունների մասնատմանը, սինթեզմանն ու վերափոխումներին: Վերջիններս երբեմն այնքան խոր բնույթ են կրում, որ սկզբնական տեսական հայեցակարգի գլխավոր իմաստը զրկվում է բազմաթիվ բաղադրատարրերից (երբեմն նաև անհրաժեշտ) և արդյունքում վերջին մի քանի տասնամյակներում դիտարկվում է պահպանողական, քեյնսական ու տնտեսագիտական մտքի այլ ուղղությունների ակնհայտ մերձեցման գործընթաց: Նման փոփոխությունների ոչ պատահական բնույթը, ավելին՝ դրա դրսևորման ուշացած օրինաչափությունը, ըստ երևույթին, կարելի է բացատրել երկու հանգամանքներով: Առաջինը՝ տեսությունների և ուսմունքների հետագա մասնատման հետզհետե աճող անիմաստությունը: Այս մոտեցման համեմատաբար պարզությունը տեսությունն էլ ավելի է հեռացնում իրականությունից՝ դրանով իսկ կորցնելով կապը հասարակական պահանջմունքների և տնտեսական զարգացման միջև: Երկրորդ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ մեծանում է տնտեսագիտական տեսության և գործնական միջոցառումների փոխհարաբերությունների վերաբերյալ նոր հայեցակարգային մոտեցումների մշակման անհրաժեշտությունը:

Հատկապես ԱՄՆ-ի պարագայում տնտեսական քաղաքականության մշակման և վարչակազմի ամենօրյա գործնական միջոցառումների ընթացքում տնտեսագիտության տեսական հիմքերի ու գործնական կյանքի հարաբերակցության հիմնախնդիրը խիստ հետաքրքիր է: Այստեղ բացահայտվում են բազմաթիվ զուգահեռություններ և հակասություններ: Նույնիսկ հարաբերական տնտեսական հաջողությունների ժամանակաշրջանների տեսական եզրահանգումները երբեմն խիստ հակասական են: 1960-ական թվականներին ԱՄՆ-ում երկարաժամկետ տնտեսական աճի գլխավոր հեղինակներից մեկին՝ Ջ. Քենեդու խորհրդական Ու. Հելլերին, կոչում էին և՛ նեոպահպանողական, և՛ քեյնսական՝ գովաբանելով ու քննադատելով բացառապես միևնույն տնտեսական միջոցառումների իրականացման համար: Նախագահ Լ. Ջոնսոնը պատմության մեջ մտավ որպես ամերիկյան պետության «հումանիզացիայի» կողմնակից, «Մեծ հասարակության» խոշորագույն սոցիալ-տնտեսական ծրագրի հեղինակ, միևնույն ժամանակ, նրա քննադատների կարծիքով, այդ ծրագիրը սկիզբ դրեց ԱՄՆ-ի տնտեսության արդյունավետության անկմանը: Ռ. Նիքսոնը երկիրը ներքաշեց 1970-ական թվականների ճգնաժամի մեջ, սակայն այդ ճգնաժամը հիմնականում պայմանավորված էր ոչ այնքան տնտեսության պետական կարգավորման «ուժեղացմամբ», որքան էներգահումքային ոլորտում իրավիճակի արմատական փոփոխությամբ, և մեծմասամբ պարունակում էր քաղաքական արմատներ, թեև նույնիսկ այդ պայմաններում 1971-1973 թթ. նշանավոր են իրական ՀՆԱ-ի 5% տարեկան միջին աճի, իսկ 1976-1978 թթ.՝ ավելի քան 5% աճի տեմպերով:

Քարտեր-Ֆորդի նախագահության ժամանակաշրջանը ընդունված է համարել «կործանարար» այն դեպքում, երբ որպես տնտեսական հաջողությունների ժամանակաշրջան մատուցվում է ռեյգանյան ժամանակահատվածը,

երբ իրական ՀՆԱ-ի աճի տեմպը չէր գերազանցում 4%-ը<sup>1</sup>: «Ռեյգանոմիկան» ներկայացվում է նեոպահպանողականության արդյունավետության գրեթե էտալոնային օրինակ, այնինչ նրա իրականացումն ամբողջությամբ համապատասխանում է քեյնսական հիմնադրույթներին: Բ. Քլինթոնի տնտեսական ռազմավարությունը հազվադեպ են կապում որևէ տեսական հայեցակարգի դրույթների հետ, քանի որ տնտեսության բնագավառում նրա հիմնական գործողությունները կարելի է համարել «ազատական քեյնսականություն», որը զուրկ է ներքին իմաստից: Միևնույն ժամանակ, Քլինթոնի իշխանության օրոք վառ արտահայտվեցին այն ուրվագծերը, որոնք առաջին անգամ երևան էին եկել 1930-ական թթ. ճգնաժամի հետևանքների վերացման ժամանակահատվածում, երբ կործանվեց դասական պահպանողական գաղափարախոսությունը. Ֆ. Ռուզվելտի հակաճգնաժամային բոլոր քայլերը հիմնված էին ծառայած խնդիրների լուծման իրավիճակային մոտեցումների վրա: Որպես տեսություն և հայեցակարգ՝ քեյնսականությունը ճանաչում ստացավ Ֆ. Ռուզվելտի՝ իշխանության գալուց մի քանի տարի անց: Բ. Քլինթոնը նույնպես հետապնդում էր նմանատիպ պրագմատիկ նպատակներ՝ ծագող տնտեսական խնդիրները լուծում էր պետական կարգավորման առկա «գործիքակազմից» օգտվելով՝ առանց տեսական հիմնադրույթների վրա «հետադարձ հայացք նետելու»: Այս մոտեցումը Բ. Քլինթոնին ապահովեց հաջողություն, ինչպես ժամանակին հաջողություն էր ապահովել Ֆ. Ռուզվելտին: Հարավոր է, որ վերը նշվածը վկայում է գործնականորեն մակրոտնտեսագիտական տեսությունների հետ մնալու մասին, սակայն գոյություն ունեն նաև այլ տեսակետներ (տե՛ս աղյուսակ 1.3-ը):

Աղյուսակ 1.3. ԱՄՆ տարբեր նախագահների օրոք տնտեսական քաղաքականության նպատակները [14, էջ 122]

Ընտրությունների տարին	Նախագահը	Գործազրկությունը, %	Ինֆլյացիան, %	Հիմնական խոստումը
1	2	3	4	5
1932	Ֆրանկլին Ռուզվելտ (դեմոկրատ)	24,9	-10,7	Ճգնաժամի հաղթահարում
1948	Հարրի Թրումեն (դեմոկրատ)	3,8	6,5	Հետպատերազմյան կարգավորում, աշխատանքի շուկայի լավացում
1952	Դուայթ Էյզենհաուեր (հանրապետական)	3,1	2,3	Գների հսկողություն կորեական պատերազմի ժամանակ
1960	Ջոն Բեննեդի (դեմոկրատ)	5,5	1,0	Տնտեսության անկման և գործազրկության մակարդակի նվազեցում

<sup>1</sup> Հաշվարկված է ըստ Economic Report the President. Transmitted to the Congress January 2001. Washington, 2001 [40]:

1964	Լինդոն Ջոնսոն (ղեմոկրատ)	5,1	1,3	«Հզոր» հասարակության ստեղծում
1968	Ռիչարդ Նիքսոն (հանրապետական)	3,4	4,5	Քաղաքացիական անկարգությունների կարգավորում
1976	Ջիմի Քարտեր (ղեմոկրատ)	7,6	5,5	Գործազրկության, էներգակիրների գների մակարդակի նվազեցում
1980	Ռոնալդ Ռեյգան (հանրապետական)	7,5	12,6	Ինֆլյացիայի, էներգակիրների գների մակարդակի նվազեցում
1988	Ջորջ Բուշ-ավագ (հանրապետական)	5,4	4,2	Առևտրական և բյուջետային պակասուրդի, հարկերի նվազեցում, միջին խավի «քանում»
1992	Բիլ Բլինթոն (ղեմոկրատ)	7,5	3,0	Բյուջեի պակասուրդի նվազեցում, հարկերի ավելացում
2000	Ջորջ Բուշ-կրտսեր (հանրապետական)	3,9	3,5	Բյուջետային հավելուրդի ապահովում և պակասուրդ, սոցիալական ոլորտի բարեփոխում
2008	Բարաք Օբամա (ղեմոկրատ)	6,3	4,9	Ֆինանսական ճգնաժամի հետևանքների հաղթահարում, լծացումից դուրս գալ

Մեր հանրապետությունում իրականացվող և իրականացվելիք տնտեսական քաղաքականության տեսակետից առավել կարևոր է ամրագրել, որ բարենպաստ տնտեսական զարգացման քիչ թե շատ երկարատև ժամանակաշրջանը չի կարելի վերագրել մոնետարիստական գաղափարներին: Գործնական հաջողություններն ավելի հաճախ վերագրում էին պատրաստի հայեցակարգերին, որպեսզի հմտորեն ընդգծեն վերջիններիս նշանակությունը և կարևորությունը: Այստեղ տեղին է մեր հանրապետության համար անհրաժեշտ ևս մեկ եզրահանգման կատարումը. տնտեսական ռազմավարության և նրա շրջանակներում առանձին միջոցառումների սերտ փոխկապվածությունն առավել տարածված տնտեսագիտական տեսությունների հետ, ինչը հաճախ հանգեցնում է անկանխատեսելի հետևանքների, և այդ պատճառով էլ, ծայրահեղ դեպքում, չի կարող արդյունավետ լինել:

Վերջապես՝ բազմաթիվ տնտեսագիտական տեսությունների առկայությունը մեծապես նպաստում է «քննարկումներ» անցկացնել ոչ թե տնտեսական գործընթացների օրինաչափությունների, այլ տարբեր հեղինակների կողմից այդ գործընթացների տարբերությունների մասին: Տեսությունների մասնատումը ստիպում է իրավիճակային մշակումներն ընդունել որպես լիարժեք ու խոշորամասշտաբ համակարգեր և դրան զուգընթաց՝ Ա. Սմիթի և Մ. Ֆրիդմենի մոնետարիզմի տեսության համադրման ու համեմատության սկզբունքորեն անընդունելի փորձերը: Այս համատեքստում նոր ուղղությունների ձևավորումը ունի շարունակական բնույթ, որովհետև տնտեսական իրավիճակը և գործընթացները անընդհատ փոփոխվում են խիստ արագ և չկրկնելով նախորդին՝ առաջացնում նոր խնդիրներ: Հեշտությամբ կարելի է պատկերացնել «պահպանողական քեյնսականության»,

«մարքսիստական լիբերալիզմի», «նեոնոնետարիզմի» և տարաբնույթ այլ հոսանքների գոյությունը: Առավել կարևոր է, սակայն, այն փաստը, որ տնտեսական ռազմավարության և քաղաքականության գործնական մշակումն առաջին հայացքից ընթանում է էկլեկտիկ սկզբունքներով և հնարքներով: Դրանք առավել ակնհայտ դրսևորվեցին Բ. Քլինթոնի վարչակազմի, նաև Ջ. Բուշ–կրտսերի գործունեության ժամանակ: Նշենք նաև, որ ո՛չ Բ. Քլինթոնի, ո՛չ Ջ. Բուշ–կրտսերի գործունեության հիմքում չի դրվել որևէ տեսական ուղղություն:

Վերը նշված մոտեցումները մեզ հանգեցնում են «նոր տնտեսության» գաղափարին: Առավել հայտնի տնտեսագետները բավականին զգույշ են իրենց եզրակացություններում, սակայն «նոր տնտեսությունը» միանշանակորեն համարում են զարգացած երկրների գործունեության հաջորդ փուլը: Դեռևս ամբողջությամբ հստակեցված չէ, սակայն խոսքը վերաբերում է «հետինդուստրիալ» հասարակության նոր մակարդակին, զարգացման միանգամայն նոր, այսպես կոչված «գերհետինդուստրիալ» փուլին: Թվային և փաստացի տվյալները տպավորիչ են, սակայն անալիտիկ կողմն առայժմ թույլ է, ընդհանրացումները ճշգրտված չեն, եզրահանգումները «տառապում են» միակողմանիությունից: Առավել ևս բավարար չեն ազդարարող փաստերը շուկայական գաղափարների «հաղթարշավի» մասին համաշխարհային տնտեսության մասշտաբով: Օրինակ՝ ԱՄՆ–ում վերջին մի քանի տարիների ընթացքում տեղի ունեցող փոփոխություններն անվանվեցին «հիմնարար», միևնույն ժամանակ նաև «անկանխատեսելի»: Սակայն ուշադրություն է գրավում նաև «նոր տնտեսության» անցնելու ուղիների անկախությունը տեսական դրույթներից: Եվ արդյունքում հեղինակները չեն փնտրում հաջողությունների (անհաջողությունների) գաղտնիքն առանձին տեսական հայեցակարգերում և չեն ձգտում դրանք կապելու որոշակի տնտեսագետների հետ, սակայն փորձում են իրենց երկրի ոչ վաղ անցյալի տնտեսության պատմության իրադարձությունները «դասակարգել» այդպես, որը նրանց տրամաբանական է թվում ուսումնասիրվող ժամանակաշրջանի տնտեսական քաղաքականության ձևավորման գործընթացը «ներսից» դիտարկելու պարագայում և չի հակասում հանրահայտ փաստերի տրամաբանությանն ու նրանց փոխներգործության արդյունքներին:

«Նոր տնտեսության» դարաշրջանի գալստյան գլխավոր վկայությունն ընդունված է համարել տնտեսության զարգացման ներկա վիճակն ու միտումները բնորոշող բարձր ցուցանիշների նվաճումը, ներառյալ աշխատանքի արտադրողականության արագ աճը, բնակչության եկամուտների ավելացումը, գործազրկության մակարդակի նվազումը և ինֆլյացիայի չափավոր տեմպերը: Նշված պարամետրերի միաժամանակյա քանակական փոփոխությունները համարվում են միմյանց փոխլրացնող երկու գործոնների արդյունավետ և համալիր գործողությունների արդյունքը՝ նոր տեխնոլոգիաների ու կազմակերպակառավարչական մեթոդների ներդրումը մասնավոր ձեռնարկատիրության մեջ և խելամիտ տնտեսական քաղաքականությունը [2]:

Ուշագրավ են «նոր տնտեսության» այս կիսապաշտոնական սահմանման երկու առանձնահատուկ կողմերը.

**Առաջին՝** բացակայում է որակական դոմինանտը: Մինչ այժմ խոսքը վերաբերում էր տնտեսական իրավիճակի կարևորագույն ցուցանիշների հաջող համադրմանը, որի միջոցով արձանագրվել է զարգացած երկրների տնտեսությունների, իսկ նոր ժամանակաշրջանի սպասվող «փուլում» են զարգացման որակական հնարավորությունները:

**Երկրորդ՝** «նոր տնտեսության» ստեղծման գործում առավել չափավոր տեղ է հատկացվում տեղեկատվական տեխնոլոգիաներին, ընդ որում՝ փորձ է արվում սթափ գնահատելու դրանց մասնակցությունը վերջին տարիների տնտեսական արդյունքներին: Բացի այդ՝ քննարկման առարկա է դարձել նաև աշխատանքի արտադրողականության խթանման գործում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հարցը: Տնտեսագետների մեծ մասի կարծիքով՝ հենց այդ ցուցանիշն է ի վիճակի արտահայտելու վերարտադրության գործընթացի իրական, արմատական վերափոխման գլխավոր նախանշանը, որն իրավունք կտա խոսելու տնտեսության զարգացման իրապես նոր փուլի մասին:

Եթե Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռոբերտ Սոլովոն 1998 թ. կտրակա՝ նապես հերքեց ժամանակակից կապիտալիզմի նոր փուլի հավանականությունը՝ հիմնվելով արտադրողականության վրա համակարգիչների ազդեցությունն ապացուցող փաստերի բացակայությամբ, ապա արդեն 2000 թ. «նոր տնտեսության» հայեցակարգի քննադատների թիվը խիստ աճեց, որոնք մշակեցին այդ գաղափարի հերքման ամբողջական համակարգ՝ վերլուծելով և գնահատելով արտադրողականության աճի վրա տարբեր գործոնների, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը: Օրինակ՝ ամերիկյան տնտեսագետ Ռ. Գորդոնի հաշվարկներով՝ 1995 թ. հետո ԱՄՆ-ի տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության ընդհանուր հավելածը կազմել է 1,33%, որից ընդամենը 0,07%-ը պայմանավորված է եղել համակարգչայնացմամբ: Ռ. Գորդոնի հաշվարկներով՝ սահմանված ժամկետում համակարգչայնացման ոլորտում իրականացվող փաստացի ներդրումները պետք է ապահովելին տնտեսության հիմնական ճյուղերի (ընդհանուրի 88%-ը) աշխատանքի արտադրողականության 0,33% հավելած: Այլ կերպ ասած՝ ներդրված տեղեկատվական տեխնոլոգիաներից սպասվող ներուժը բավականաչափ գերացանցեց ստացված արդյունքները [41, էջ 1-3]:

Բնական է, որ խոսքը չի վերաբերում համակարգչային տեխնիկայի այլ առավելությունների բացառմանը (աշխատանքի հարմարավետություն, հաշվարկների արագագործություն, խմբագրում և այլն), քանի որ դրանք ակնհայտ են: Սակայն Ռ. Գորդոնի կարծիքով՝ արտադրողականության բարձրացման գործում համակարգիչները կատարել են այն, ինչին ընդունակ են եղել:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆ ԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1. Հասարակական ընտրության տեսությունը

Հասարակական ընտրության տեսության սկունքները կարելի է գտնել 18–19-րդ դդ. քվեարկության հիմնախնդիրներով հետաքրքրվող մաթեմատիկոսների աշխատություններում: Սակայն որպես տնտեսագիտության առանձին ուղղություն՝ այն ձևավորվեց միայն 1950–1966 թթ.՝ Կ. Էրոուի, Է. Դաուլայսի, Դ. Բլեկի, Ջ. Բյուկենենի, Գ. Տալլոկի, Մ. Օլսոնի և այլոց աշխատությունների հրապարակումից հետո:

Հասարակական ընտրության տեսությունը երբեմն անվանում են նաև նոր քաղաքատնտեսություն, քանի որ այն ուսումնասիրում է մակրոտնտեսական որոշումների ընդունման քաղաքական մեխանիզմը: Քննադատելով քեյնսականներին՝ այս տեսության ներկայացուցիչները հարցականի տակ դրեցին տնտեսության մեջ պետական միջամտության արդյունավետությունը: Հետևողականորեն զարգացնելով դասական լիբերալիզմի սկզբունքները և օգտագործելով մակրոտնտեսագիտական վերլուծության մեթոդները՝ նրանք ակտիվորեն «ներխուժում էին» ավանդաբար քաղաքագետների, իրավագետների և սոցիոլոգների գործունեության դաշտը համարվող ոլորտները: Այս միջամտությունը ստացել է «տնտեսագիտական իմպերիալիզմ» անվանումը:

Քննադատելով պետական կարգավորումը՝ հասարակական ընտրության տեսության ներկայացուցիչները հետազոտության օբյեկտ ընդունեցին ոչ թե տնտեսության վրա դրամավարկային կամ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը, այլ հենց կառավարչական որոշումների ընդունման գործընթացը:

Հարավորինս սեղմ բնութագրենք տնտեսագիտական մտքի այս ուղղության հիմնական դրույթները:

**Ինստիտուցիոնալ տնտեսագիտական տեսություն:** Չնայած ինստիտուցիոնալիզմը որպես առանձին հոսանք ձևավորվել է դեռևս 20-րդ դարի սկզբում, սակայն երկար ժամանակ այն տնտեսագիտական մտքի ստվերում էր: Նման հանգամանքը կապված էր առաջին հերթին «ինստիտուտ» հասկացության բնորոշման անորոշ լինելու հետ, մյուս կողմից՝ ինստիտուցիոնալիստները փորձում էին տնտեսագիտության մեջ օգտագործել հասարակական այլ գիտությունների (իրավունքի, սոցիոլոգիայի, հոգեբանության, քաղաքագիտության և այլն) մեթոդները, որի արդյունքում նրանք կորցնում էին տնտեսագիտության մյուս հետազոտողների հետ «միևնույն լեզվով խոսելու» հնարավորությունը:

Իրավիճակը կտրականապես փոխվեց 1960–1970-ական թթ.: Սակայն առանձին չանդրադառնալով, այսպես կոչված, հին և նոր ինստիտուցիոնալիզմի դպրոցներին՝ նշենք, որ 20-րդ դարի վերջին ձևավորվում է նոր ինստիտու-

ցիոնալ տեսություն (Դ. Նորթ և ուրիշներ), որոնց ուշադրության կենտրոնում արդեն սոցիալական ինստիտուտների հիմքում ընկած «խաղի կանոններն» են: Վերջիններս դիտարկվում են ինչպես տնտեսական գործակալներից, այնպես էլ կազմակերպություններից առանձին:

Եթե նախկինում ինստիտուտները դիտարկվում էին որպես տնտեսության նկատմամբ արտաքին գործոն, ընդ որում՝ տնտեսական ինստիտուտներն ուսումնասիրվում էին քաղաքական ինստիտուտներից առանձին, ապա ժամանակակից քաղաքատնտեսության մեջ նրանք վերլուծվում են որպես միասնական համակարգի տարրեր, որի շրջանակներում և միջոցով իրականացվում են մարդկանց միջև փոխհարաբերությունները:

Տնտեսությունը և քաղաքականությունը հասարակական ընտրության տեսության մեջ հանդես են գալիս որպես փոխկապակցված համակարգեր: Նոր տնտեսաքաղաքական մոտեցումը հետազոտում է ոչ միայն վարքագծի տնտեսական հիմքերը, այլև շուկայական տնտեսության մեջ քաղաքական միջամտության մեթոդները:

Վերջին տասնամյակներում նկատվում է ինստիտուցիոնալ հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության աճ: Մի կողմից՝ այն կապված է օրթոդոքսալ տնտեսությանը բնութագրական մի շարք նախապայմանների (լրիվ ռացիոնալության, բացարձակ տեղեկացվածության, կատարյալ մրցակցության, միայն գնային մեխանիզմի միջոցով հավասարակաշռության ապահովման մասին աքսիոմները) սահմանափակվածության հաղթահարման հետ, իսկ մյուս կողմից՝ այն փորձում է վերլուծել նոր տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում առաջացած երևույթները, որոնց բացատրման համար հետազոտության ավանդական մեթոդներն առայժմ ցանկալի արդյունք չեն տալիս:

Ցավոք սրտի, մեր հանրապետության մասնագետների կողմից ինստիտուցիոնալիզմի նոր դրսևորումներն առայժմ բավարար ուշադրության չեն արժանացել, իսկ հետխորհրդային տարածքից այն առավել ուսումնասիրված կարելի է համարել Ռուսաստանում [20]: Ամերիկյան և արևմտաեվրոպական ինստիտուցիոնալիզմի միջև գոյություն ունեն խոր տարբերություններ: Տնտեսագիտության ամերիկյան ավանդույթները խիստ առաջ են անցել եվրոպականից, սակայն ինստիտուցիոնալ հետազոտությունների ոլորտում եվրոպական գիտական միտքն անվիճելիորեն գերազանցում է: Հիմնական տարբերությունը եվրոպայում դարերի ընթացքում ձևավորված մշակույթը, ազգային ավանդույթներն են, որոնք երբեմն հակասության մեջ են ամերիկյան շուկայական վարքագծի հետ:

**Տնտեսական ինստիտուտներ:** Ինստիտուտ ասելով՝ մենք հասկանում ենք հասարակությունում ձևավորված «խաղի կանոններ» կամ մարդու ստեղծած սահմանափակող շրջանակներ, որոնք կազմակերպում են մարդկային փոխհարաբերությունները, ինչպես նաև մարդկանց որոշումների կատարումն ապահովող մեխանիզմների համակարգը [26, էջ 17; 15, էջ 97-98]: Նրանք ստեղծում են մարդկային փոխազդեցության շահադրդիչների կառուցվածքը, նվազեցնում են անորոշությունը՝ կազմակերպելով առօրյա կյանքը (տես գծանկար 2.1):


Հասարակություն  $\longleftrightarrow$  Ինստիտուտներ  $\longleftrightarrow$  Տնտեսություն

Գծանկար 2.1. Ինստիտուտների դերը հասարակության զարգացման մեջ

Ինստիտուտները լինում են ձևակարգված (ֆորմալացված) և չձևակարգված (ոչ ֆորմալացված): Որպես ոչ ինստիտուտներ սովորաբար սահմանվում են համընդհանուր պայմանականությունները և մարդկանց վարքագծի էթիկական պահվածքի օրենսգրքերը: Դրանք սովորույթներն են, ավանդույթներն ու չգրված օրենքները, որոնք մարդկանց համատեղ սերտ գոյատևման արդյունք են: Այդ օրենսգրքերի աղբյուրը մշակույթն է, իսկ ֆորմալ ինստիտուտները դրանք հատուկ լիազորված անձանց (պետական պաշտոնյաների) և կազմակերպությունների կողմից ստեղծված և պաշտպանվող կանոններն են [20]:

**Ինստիտուցիոնալ փոփոխություններ:** Սրանք հասարակության զարգացմանը զուգընթաց ձևական և ոչ ձևական կանոնների իրագործումը հարկադրող եղանակների ու արդյունավետության փոփոխություններն են: Ձևական կանոնների փոփոխությունը (կամ այդ կանոնների պահպանումն ապահովող մեխանիզմների փոփոխությունը) սովորաբար պահանջում են ռեսուրսների զգալի ծախսեր:

Տնտեսվարող սուբյեկտներն իրենց տաղանդն ու գիտելիքները կարող են դրսևորել վերջնական կամ միջանկյալ կազմակերպությունների ստեղծման միջոցով շահավետ հնարավորությունների որոնման վրա, որոնք կարող են գործել և՛ տնտեսական, և՛ քաղաքական ոլորտում: Կարևոր է, որ նրանք ապահովեն ձևական կանոններին համահունչ պահանջվող փոփոխությունները: Ընդ որում՝ տնտեսական փոփոխությունները կարող են իրականացվել բավականին արագ (հեղափոխությունների և բռնազավթումների ժամանակ): Ինչ վերաբերում է ոչ ձևական կանոնների փոփոխություններին, նրանք իրականացվում են աստիճանաբար, այստեղ փոփոխությունների տեմպը բոլորովին այլ է և այս բնագավառում էական դեր են խաղում մշակույթը, պատահարն ու բնական ընտրությունը (տես գծանկար 2.2):



Գծանկար 2.2. Նոր ինստիտուտների առաջացումը նոր և հին կանոնների բախման արդյունքում



Հին և նոր ձևական և ոչ ձևական կանոնների բախման արդյունքում հնարավոր են ինստիտուտների առաջացման բազմաթիվ տարբերակներ:

Ինստիտուցիոնալ փոփոխությունների ընթացքում կարևոր դեր են խաղում կազմակերպությունները: Այդ փոփոխությունների գործընթացը ներառում է կազմակերպչական փորձարկումներն ու սխալների ուղղումը և խնդիրն այն է, թե հասարակությունը ինչ աստիճանի է թույլ տալիս այդ կազմակերպչական փոփոխություններն ու որքանով է շահագրգռված կազմակերպչական սխալների ուղղման գործում:

Արդյունավետ են համարվում, անկասկած, նրանք, որոնք խոչընդոտում են անհաջող գործողություններին և աջակցում հաջողվածներին: Հենց վերջիններս էլ իրենց վրա են կրում տնտեսական աճի ծանրությունը, մինչև չեն սպառում իրենց հնարավորությունները:

Նույնիսկ եթե խաղի կանոնները միևնույնն են երկու երկրներում, ապա տարբեր կարող են լինել այդ երկրների քաղաքացիների վարքագծի արմատավորված նորմերը, ինչպես նաև տվյալ կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության եղանակներն ու մեթոդները: Դրա հետ մեկտեղ, ցանկացած տնտեսության ինստիտուցիոնալ համակարգը կազմակերպության համար ծնում է ինչպես արդյունավետ, այնպես էլ անարդյունավետ խթաններ, քանի որ երկրի տնտեսական պատմությունը միավորում է զարգացման տարբեր միտումներ: Եթե հակադարձ կապը հատվածական է, իսկ տրանսակցիոն (գործարքային) ծախսերը մեծ են, ապա զարգացման ուղղությունը կձևավորվի խաղընկերների սուբյեկտիվ մոդելներով: Այստեղ առաջանում են զանազան ինստիտուցիոնալ սահմանափակումներ և յուրօրինակ ինստիտուցիոնալ թակարդներ [30]:

Երկարաժամկետ տնտեսական փոփոխությունները, որպես կանոն, քաղաքական և տնտեսական գործակալների բազմաթիվ կարճաժամկետ որոշումների կուտակման արդյունք են: Գործակալների կողմից կատարված ընտրությունն արտացոլում է շրջապատող աշխարհի մասին նրանց սուբյեկտիվ պատկերացումները: Այդ իսկ պատճառով էլ մտադրությունների և արդյունքների համապատասխանության աստիճանը կախված է նրանց պատկերացումների հավաստիությունից, քանի որ մտածողության մոդելներն արտացոլում են գաղափարները, գաղափարախոսությունն ու համոզմունքները, իսկ հետևանքները հաճախ ոչ միայն անորոշ են, այլև անկանխատեսելի:

Նախքան վերը նշված կարճաժամկետ և երկարաժամկետ փոփոխություններին անդրադառնալն, ուսումնասիրենք տնտեսական գործակալներին առաջնորդող պայմանները և պարզենք նրանց վարքագծի ռացիոնալությունը:

### ***2.1.1. Ռացիոնալ ընտրության տեսությունը***

Հասարակական ընտրության տեսությունը ռացիոնալ ընտրության տեսության մասնավոր դեպքն է, այդ պատճառով հակիրճ անդրադառնալնք ռացիոնալության հասկացության նախապայմաններին և առանձնահատկություններին, ինչպես նաև ռացիոնալ ընտրության տեսության մեջ գոյություն ունեցող դպրոցներին:

**Ռացիոնալություն:** Նեոդասական տեսության մեջ ռացիոնալ է համարվում գործակալների տրամադրության տակ եղած ռեսուրսների շրջանկաներում ան-

հատների գործունեության և գիտելիքների օգտակարության, գործընկերների նկատմամբ սպասելիքների մաքսիմալացումը: Ենթադրվում է, որ ռացիոնալ անհատները ոչ միայն ընդունակ են հարաբերակցելու իրենց գործողությունների հետևանքով ստացված եկամուտներն ու պատճառված վնասները, այլև հասկանալու իրենց գործողությունների հետևանքները: Համընդհանուր նորմերը, ավանդույթները և սովորույթները նեոդասականների աշխատություններում խաղում են բավականին համեստ դեր: Անորոշության մակարդակի իջեցման ձգտումը ստիպում է տնտեսական գործակալներին հենվել ավանդույթների վրա: Այնտեղ, որտեղ գերակշռում են ավանդույթները, նեոդասականների նախապայմանները կորցնում են իրենց համընդհանուր ուժը, իսկ մաքսիմալացումը կարող է դառնալ անիմաստ, իսկ ռացիոնալ անհատը ստիպված է կողմնորոշվել ոչ թե դեպի օպտիմալ, այլ սոցիալապես ընդունելի արդյունքները: Բացի այդ՝ այն, ինչ երեկ եղել է ռացիոնալ, այսօր կարող է դառնալ ոչ ռացիոնալ: Ռացիոնալ ընտրություն ձևավորվել է ներքոհիշյալ ուղղությունների ազդեցության ներքո.

- բարոյականության շոտլանդական փիլիսոփայություն (Ֆ. Հատչետոպ, Ա. Ֆերգյուսոն, Դ. Յում, Ա. Սմիթ), որի շրջանակներում ձևավորվել է հասարակության մեջ ռացիոնալ վարքագծի անհատական հայեցակարգը,
- ունիվերսալիզմ (Ի. Բենտամ), որը մատնանշում էր բարոյական մտորումների և գնահատականների նշանակությունը (երբ անհատը հասկանում է, թե ինչ է նշանակում լավ, և ինչ է նշանակում վատ),
- նեոդասական տեսությունը (Ա. Մարշալ), որն առանձնացնում էր մարդկանց միջև փոխադարձ փոխանակության դերը:

Ռացիոնալության աքսիոմը նախատեսված չէ իրականության բազմակողմանի պատկերման համար, և այն ներկայացնում է այդ իրականության իդեալական տեսակը, որն օգնում է ձևավորելու անհատների վարքագծի հիմնական կանխադրույթները՝ անկախ նրանց գործունեության ոլորտից: Ռացիոնալ ընտրության տեսությունը համընդհանուր է և ֆորմալացնում է անհատի վարքագծի տրամաբանությունը տարբեր իրավիճակներում: Քաղաքականության մեջ այն ստացել է «հասարակական ընտրության տեսություն» անվանումը, սոցիոլոգիայում՝ «սոցիալական ընտրության տեսություն», պատմության մեջ՝ «կլիմետորիկա», իսկ իրավագիտության մեջ՝ «տնտեսական իրավունք» անվանումները:

Չնայած ռացիոնալության հասկացությունը բավականին քննարկումների և վեճերի տեղիք է տալիս, սակայն այն առավել ընդհանուր տեսքով ռացիոնալությունը կարելի է սահմանել հետևյալ կերպ. «(1) սուբյեկտը երբեք չի ընտրի X այլընտրանքը, եթե միևնույն ժամանակ (2)–ին հասանելի է Y այլընտրանքը, որը (3)–ի տեսակետից նախընտրելի է X–ից» [36, էջ 37–46]: Թվերով նշված են ռացիոնալության երեք կարևորագույն բնութագրերը. նրա անհատական բնույթը, սահմանափակվածությունը և սուբյեկտիվությունը:

Ռացիոնալ ընտրության տեսության մեջ անհատների նպատակները դիտարկվում են որպես կանխորոշված և անձամբ անհատներից կախված: Այդ իսկ պատճառով էլ սահմանային իմաստով ռացիոնալությունների ձևերը կարող են լինել ավելի շատ, քան երկրագնդի բնակչության թիվը (հաշվի է առնվում ժամանակի ընթացքում նրանց նախասիրությունների փոփոխությունները):

Ռացիոնալության ընտրության տեսությունը հաղթահարում է նեոդասական տեսության սահմանափակվածությունը, քանի որ հաշվի է առնում առօրյա որոշումներում ժամանակի, տրանսակցիոն (գործարքային) ծախսերի և տեղեկատվության կարևորությունը, որոնք նեոդասական տեսության մեջ վերացարկվում էին: Այդ պատճառով ռացիոնալ ընտրության տեսությունը ռացիոնալությունը ձևակերպում է ոչ միայն խիստ (որպես մաքսիմալացման սկզբունք), այլև առավել ազատական տեսքով, հաշվի առնելով ժամանակային սահմանափակվածությունը, երբ մարդիկ առավելագույնին չեն հասնում, այլ ձգտում են ապահովելու իրենց պահանջունքների բավարարման որոշակի մակարդակ: Տեսությունը «գինվում է» Ռ. Քոուզի (տրանսակցիոն կամ գործարքային ծախսեր), Գ. Սայմոնի (սահմանափակ ռացիոնալություն), Ջ. Ստիգլերի (տեղեկատվության ոչ լրիվություն նեոդասական վերլուծությունների մեջ), Գ. Բեկկերի (անորոշություն ընտանեկան հարաբերություններում) և այլոց կողմից մշակված տնտեսագիտական նորագույն գործիքակազմով: Դա նշանակում է, որ հասարակական կառույցները դիտարկվում են որպես իրենց նպատակները հետապնդող անհատների ամբողջություն: Սակայն այս մոտեցումը չի բացարձակացնում էգոիզմը, քանի որ իր ընտրությունը կատարած անձը կարող է գործել նաև «հակակշիռների» սկզբունքով: Այսինքն՝ անհատի շահերը սահմանափակվում են որոշակի հասարակական պարտավորություններով (Ա. Սեն):

**Ռացիոնալ ընտրության դպրոցները:** Ռացիոնալ ընտրության տեսության շրջանակներում ի սկզբանե ձևավորվել էին երկու ուղղություններ՝ հասարակական և սոցիալական ընտրություն, իսկ առաջինի ներսում առկա էին երկու դպրոցներ՝ Վիրջինիայի և Չիկագոյի: Չնայած նրանց միջև առկա տարբերություններն աստիճանաբար վերացվում են, այդ դպրոցների սեղմ բնութագրերը ներկայացված են աղյուսակ 2.1-ում:

Աղյուսակ 2.1. Ռացիոնալ ընտրության տեսության դպրոցները [27, էջ 137]

Դպրոցներ	Ռացիոնալ ընտրության տեսություն		
	Հասարակական ընտրության տեսություն		Սոցիալական ընտրության տեսություն
	Չիկագոյի	Վիրջինիայի	
<b>Հիմնական պոստուլատներ</b>	Ինքնակարգավորվող շուկա և տրված սահմանափակումների շրջանակներում օպտիմալ ընտրություն	Սահմանափակումների օպտիմալ ընտրություն (խաղի կանոններ)	Հասարակական բարեկեցության ֆունկցիայի կառուցում անհատական նախընտրությունների հետևողականության միավորման նպատակով
<b>Շեշտը</b>	Շուկայական հաջողություն	Քաղաքականության անկարողություն	Քաղաքական հաջողություն և (կամ) շուկայի անկարողություն
<b>Առավել հայտնի ներկայացուցիչները</b>	Մ. Ֆրիդմեն, Ռ. Քոուզ, Ջ. Ստիգլեր, Գ. Բեկկեր, Ռ. Պոզներ, Գ. Լյուխս	Ջ. Բյուկենեն, Ու. Նատտեր, Ռ. Վայնինգ, Ու. Բուշ, Գ. Տալլոկ, Դ. Սյուլլեր	Ա. Բերգսոն, Կ. Էրոու, Ա. Սեն, Կ. Մոեն և այլն

Քննարկենք հասարակական ընտրության տեսության մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ Զ. Բյուկենենի մոտեցումները հասարակական ընտրության տեսության համատեքստում:

### 2.1.2. Նոր քաղաքատնտեսության ձևավորումը

Նոր քաղաքատնտեսության ձևավորման նախապայմաններին անդրադառնալիս նախ պետք է նշել, որ յուրաքանչյուր տեսություն բաղկացած է «միջուկից» և «պաշտպանիչ գոտուց» (Ի. Լակատոշ), և այդ իմաստով բացառություն չէ նաև հասարակական ընտրության տեսությունը: Որպես հիմնական նախապայմաններ պետք է նշել՝

- մեթոդաբանական անհատապաշտությունը,
- տնտեսական մարդու հայեցակարգը,
- քաղաքականությունը որպես փոխանակություն:

**Մեթոդաբանական անհատապաշտությունը:** Ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում յուրաքանչյուր անհատ կանգնած է առկա այլընտրանքներից որևէ մեկի ընտրության առջև: Անհատի շուկայական վարքագծի վերլուծության մեթոդները բազմաթիվ են և կարող են հաջողությամբ կիրառվել ցանկացած այլ բնագավառում, որտեղ մարդը պետք է ընտրություն կատարի:

Հասարակական ընտրության տեսության հիմնական նախապայմանն այն է, որ մարդիկ քաղաքական դաշտում գործում են իրենց անձնական շահերին հետամուտ լինելով, և քաղաքականության ու ձեռնարկատիրության միջև չկա անհաղթահարելի պատմեշ: Այս տեսությունը հետևողականորեն մերկացնում է այն առեղծվածը, ըստ որի՝ պետությունը, բացի հասարակական շահերի պաշտպանությունից և իրականացումից, այլ նպատակներ չունի:

«Ռացիոնալ» քաղաքական գործիչներն աջակցում են, առաջին հերթին, այն ծրագրերը, որոնք նպաստում են նրանց վարկանիշի աճին և մեծացնում են հաջորդ ընտրություններում հաղթելու հավանականությունը: Այսպիսով՝ հասարակական ընտրության տեսությունը ձգտում է հետևողականորեն ամրագրելու անհատապաշտության սկզբունքները՝ դրանք տարածելով գործունեության բոլոր տեսակների, այդ թվում՝ պետական ծառայության վրա:

**Տնտեսական մարդու հայեցակարգը:** Շուկայական տնտեսության պայմաններում մարդը ձգտում է ընդունելու այնպիսի որոշումներ, որոնք առավելազույնի են հասցնում օգտակարության ֆունկցիան և նրա վարքագիծը: Այս տեսության մեջ անհատի ռացիոնալությունն ունի համընդհանուր նշանակություն, ինչը նշանակում է, որ բոլորը՝ ընտրողներից մինչև նախագահը, առաջին հերթին ղեկավարվում են տնտեսական սկզբունքով, այսինքն՝ հակակշռում են սահմանային եկամուտներն ու սահմանային ծախսերը (առաջին հերթին՝ որոշումների ընդունման հետ կապված եկամուտներն ու ծախսերը):

**Քաղաքականությունը որպես փոխանակություն:** Քաղաքականության՝ որպես փոխանակության գործընթացի ձևակերպումը, որն ընկած է Ջ. Բյուկենենի աշխատությունների հիմքում, վերցված է Կ. Վիկսելի մոտեցումներից: Քաղաքական և տնտեսական շուկաների միջև հիմնական տարբերությունը նա տեսնում էր մարդկանց շահերի դրսևորման պայմանների մեջ: Ըստ Ջ. Բյուկենենի՝ «Քաղաքականությունը անհատների միջև փոխանակման բարդ համակարգ է, որտեղ անհատները կոլեկտիվ կերպով ջանում են հասնել իրենց անձնական նպատակներին, քանի որ վերջիններիս նրանք չեն կարող հասնել սովորական շուկայական փոխանակության միջոցով: Այստեղ չկան այլ շահեր, բացի անձնականից: Շուկայում մարդիկ խնձորը փոխանակում են նարինջի հետ, իսկ քաղաքականության մեջ համաձայնվում են վճարել հարկեր բոլորին և յուրաքանչյուրին՝ տեղական հրշեջ ծառայությունից մինչև դատարանը, անհրաժեշտ բարեկեցություն ձեռք բերելու դիմաց» [45]: Հասարակական ընտրության կողմնակիցները քաղաքական շուկան դիտարկում են ապրանքային շուկային համանման: Պետությունը մարդկանց միջև մրցակցության ասպարեզ է՝ որոշումների վրա ազդեցության, ռեսուրսների տեղաբաշխմանը մոտ լինելու, պետական աստիճանակարգման համակարգում տեղ զբաղեցնելու համար: Սակայն պետությունը հատուկ տեսակի շուկա է: Նրա մասնակիցները տիրապետում են սեփականության անսովոր իրավունքների. ընտրողները կարող են ընտրել պետության բարձրագույն ատյանների ղեկավարներին, պատգամավորները՝ ընդունել օրենքներ, պետական պաշտոնյաները՝ ապահովել այդ օրենքների կատարումը: Ընտրողները և քաղաքական գործիչները ձևակերպում են որպես ընտրական ձայներով ու նախընտրական խոստումներով փոխանակություն կատարող անհատներ:

Բյուկենենի մոտեցումը կարող է լրացվել կոլեկտիվ գործողության վերլուծությամբ [46], որը երևույթները և գործընթացները դիտարկում է ոչ թե առանձին անհատի փոխգործողության, այլ ամբողջ խմբի տեսանկյունից: Մարդիկ կարող են խմբերի մեջ միավորվել՝ սոցիալական և գույքային նախանշաններից ելնելով, ըստ կուսակցական ու կրոնական պատկանելության: Հետագա վերլուծության համար առավել կարևոր են հատուկ շահերով օժտված խմբերի փոխներգործության գործընթացները, որոնց կոլեկտիվ գործողությունների հիմքը կազմում է որոշակի միասնական նպատակի նվաճումը [39]: Ընդ որում՝ կարելի է նույնիսկ որոշ չափով հեռանալ մեթոդաբանական անհատապաշտության սկզբունքից ենթադրելով, որ խումբը դիտարկվում է որպես վերլուծության վերջնական անբաժանելի օբյեկտ, իր առանձնահատուկ օգտակարության ֆունկցիայով, սահմանափակումներով և այլն: Սակայն առավել հետևողական է ներկայացվում խմբի՝ որպես իրենց սեփական օգտակարության ֆունկցիաներով և շահերով մի շարք անհատների միավորման վերլուծությունը [29]: Այս տեսանկյունից քաղաքական մեխանիզմի գործունեությունը դիտարկվում է որպես շահերի բախման գործընթաց, որը դարձավ Ռ. Հարդինի հատուկ վերլուծության առարկա [49]: Կոնկրետ խմբային շահերի իրացումն էլ հենց համարվում է փոխհամաձայնության արդյունքը քաղաքական գործընթացի շրջանակներում: Այս մոտեցման դեպքում

հնարավոր է քաղաքական գործընթացի օգտագործումը միջխմբային համաձայնության ձեռքբերման համար՝ լրացուցիչ օգուտներ քաղելու նպատակով:

Քաղաքական ընտրության հիմքում ընկած գործընթացների դիտարկումն ավանդաբար համարվում է քաղաքագիտության «մենաշնորհը»: Տնտեսագիտության տեսությունն այս բնագավառում մշակել է իր սեփական մոտեցումները:

**Նախադրյալների զարգացումը:** Նոր ինստիտուցիոնալիզմի հետազոտական ծրագիրը վերափոխում է դասական միկրոտնտեսագիտական ծրագիրը՝ հրաժարվելով որոշ նախադրյալներից («պաշտպանիչ գոտուց») [37]: Սակայն, դրա հետ մեկտեղ, պահանջվում են բազային նախադրյալները՝ հետազոտական ծրագրի «միջուկը» (որոնցից հրաժարումը կհանգեցնի տվյալ համակարգի շրջանակներից դուրս գալուն): Որպես բազային նախադրյալներ՝ մենք առաջին հերթին կդիտարկենք անհատի նախընտրությունների կայունությունը, որի հիմնական հետևանքը կլինի հավասարակշռված վերլուծությունը: Բազային մյուս նախադրյալը գործակալների վարքագծի ռացիոնալությունն է [13, էջ 12–19]:

Ինստիտուցիոնալիստները ներդնում են սեփականության իրավունքի հասկացությունը և հրաժարվում են շուկայի իդեալականության նախադրյալից՝ հավաստելով, որ գոյություն ունեն տրանսակցիոն (գործարքային) ծախսեր: Մյուս նախադրյալները (տեղեկատվության ամբողջականությունը և շուկայում գործող գործակալների ռացիոնալությունը) նույնպես փոփոխությունների են ենթարկվում: Նոր ինստիտուցիոնալիստական մոտեցումը շեշտը դնում է այն փաստի վրա, որ ձեռքբերվող արդյունքը կախված կլինի մարդու վարքագծի մոդելից և նրա գործունեության պայմաններից:

Նեոդասական մոտեցման իդեալականացված մոդելներից հրաժարումը բերում է նոր որոշումների և արդյունքների՝ հաշվի առնելով տեղեկատվության ոչ լրիվությունը, սահմանափակ ռացիոնալությունն ու մասնակիցների հարմարվողական վարքագիծը:

**Տեղեկատվության ոչ լրիվությունը:** Տեղեկատվության ամբողջականության մասին նախադրյալը թվում է անիրական և զգալիորեն նեղացնում է տնտեսագիտական հետազոտությունների կիրառական ոլորտը: Տնտեսագիտության զարգացումը 20–րդ դարում մեծապես պայմանավորված էր տեղեկատվության անորոշության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ և դրա հետ կապված տեղեկատվության որոնման ու նրա հետագա վերամշակման հիմնախնդիրներով:

**Սահմանափակ ռացիոնալությունը:** Գ. Սայմոնի սահմանափակ ռացիոնալության տեսության շրջանակներում մշակված են ընտրության այլընտրանքային տարբերակներ ոչ լրիվ տեղեկատվության պայմաններում: Որոշման ընդունման գործընթացը ներառում է երկու փուլ՝ բավարար տարբերակի որոնում և ընդունում:

Սայմոնի հայեցակարգը համանման է Ջ. Ստիգլերի կողմից առաջարկված՝ տեղեկատվության որոնման տեսությանը այն մասով, որ այնտեղ նույնպես պատրաստի այլընտրանքներ չկան, սակայն ենթադրվում է, որ մենք ի վիճակի չենք առավելագույնի հասցնելու օգտակարության որևէ գործառույթ [43, էջ 285]:

**Մասնակիցների հարմարվողական վարքագիծը:** Հարմարվողական վարքագծի հասկացությունն ուղղակիորեն կապված է տնտեսական գործակալի շահադրդման հետ, որը ձեռք է բերում նոր նշանակություն: Եթե սկզբում սեփական շահը ձևակերպվում էր բացառապես որպես «էգոիզմ», ապա ներկայումս այդ զգացմունքային երանգից տեսության ներկայացուցիչները ջանում են հնարավորինս զերծ մնալ [48, էջ 132]: Նոր ինստիտուցիոնալիզմի շրջանակներում դրա տեղը մեծ մասամբ գրավել է «հարմարվողական վարքագիծ» հասկացությունը, որը բացատրվում է որպես «սեփական շահին հետամուտ լինելը, օգտագործելով խարդավանքը, որն իր մեջ ներառում է ճիշտ ուղից շեղելը, ստախոսությունը, տեղեկատվության թաքցնումը, ինչպես նաև կազմակերպության շահերի իրականացմանը խանգարող՝ հատուկ հաշվարկված այլ ջանքերը: Հարմարվողական վարքագիծն անհրաժեշտ է տարբերել հասարակ էգոիզմից, երբ անհատները «իրենց խաղը խաղում են» նախապես հաստատված կանոններով, որոնց անվերապահորեն ենթարկվում են [34, էջ 132]: Ընդ որում՝ անմիջականորեն օգտագործվում է սեփական շահի հայեցակարգը [35, էջ 43]:

Ոչ լրիվ տեղեկատվության, սահմանափակ ռացիոնալության և հարմարվողական վարքագծի հաշվառումը կարևոր է քաղաքական գործընթացը հասկանալու համար, հատկապես, երբ խոսքը վերաբերում է քվեարկության զանազան ընթացակարգերին:

### ***2.1.3. Հասարակական ընտրության տեսության կարևորագույն հիմնախնդիրները և կառուցվածքը***

**Հիմնական խնդիրները:** Հասարակական ընտրության տեսությունն այն մեթոդներն ու եղանակներն ուսումնասիրող տեսությունն է, որոնց միջոցով մարդիկ օգտագործում են կառավարական հիմնարկությունները՝ ելնելով սեփական շահերից: Հետազոտվող տեսության վերլուծության օբյեկտ է ընտրությունը, ինչպես ուղղակի, այնպես էլ ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում: Այդ պատճառով քննարկվող տեսության վերլուծության հիմնական ոլորտներն են ընտրական գործընթացը, պատգամավորների գործունեությունը, բյուրոկրատիայի վարքագիծը, կարգավորման քաղաքականությունը և սահմանադրական կարգը: Կատարյալ մրցակցային շուկային համանման՝ մեր վերլուծությունը սկսենք ուղղակի ժողովրդավարությունից՝ աստիճանաբար անցում կատարելով ներկայացուցչական ժողովրդավարությանը՝ որպես սահմանափակող գործոնի:

Հասարակական ընտրության տեսության գլխավոր հիմնախնդիրները ներկայացված են 2.2 աղյուսակում, որտեղ ակնհայտ ցույց է տրվում, թե ինչպես մենք պետք է շարժվենք պարզից դեպի բարդը՝ որոշակի մեթոդներով վերլուծելով ժամանակակից քաղաքական կառուցվածքի տարբեր ասպեկտները [51]:

**Աղյուսակ 2.2. Հասարակական ընտրության տեսության հիմնախնդիրները և բաժինները [27, էջ 138]**

Հիմնախնդիրները	Հասարակական ընտրության տեսության բաժինները
1	2
Կարելի է արդյոք կայացնել կոլեկտիվ արդար որոշում	Կոլեկտիվ գործողությունների տրամաբանությունը
Ինչպե՞ս պետք է «չափել» առանձին ընտրողների կարծիքը	Ընտրության ընթացակարգ
Ինչո՞ւ մեծամասնության սկզբունքով իրականացվող քվեարկությունը չի բացահայտում հասարակության իրական նախընտրությունները	Քվեարկության պարադոքս
Ինչպե՞ս ազդել քաղաքացիների վրա, որպեսզի ընդունվի ցանկալի որոշում	Մանիպուլյացիա քվեարկության ժամանակ
Ինչո՞ւ սպառողների շահերը խոսակցական վեճերում միշտ նախընտրելի են, իսկ քաղաքականությունը վերահսկում է արտադրողների շահերը	Հատուկ շահերով խմբեր, լոբբիզմ
Ինչպե՞ս ստեղծել կոալիցիոն կառավարություն, և որո՞նք են կոալիցիաների ամրության պատճառները	Բազմակուսակցական համակարգեր
Որո՞նք են հասարակական բարեկեցության նպատակները (ո՞ւմ շահերից ելնելով, առաջին հերթին, պետք է զարգանա հասարակությունը)	Հասարակական բարեկեցության գործառույթը
Ինչպե՞ս են մարդիկ քաղաքական գործընթացի օգնությամբ օգուտներ ստանում	Բյուրոկրատիայի տնտեսագիտությունը, քաղաքական ռենտայի որոնում
Ինչո՞ւ է տեղի ունենում ժողովրդավարական իդեալի այլասերում, իսկ օրենքը վերաճվում է ամենաթողության: Ինչպե՞ս կանխել ժողովրդավարության վերածումը ավտորիտար ռեժիմի	Սահմանադրական տնտեսագիտություն

Ամփոփելով հասարակական ընտրության տեսության առարկայի ուսումնասիրության արդյունքները՝ նշենք, որ եթե նախկինում քաղաքատնտեսությունը և տնտեսագիտությունն ընդունվում էին որպես հավասարազոր գիտական ուղղություններ (որը հատկանշական էր նաև «տնտեսագիտություն» հասկացությունն առաջարկած Ալֆրեդ Մարշալի համար), ապա 20-րդ դարում քաղաքատնտեսությունը սկսեց դիտարկվել որպես տնտեսագիտության բաժին:

Սակայն 20-րդ դարի վերջում քաղաքատնտեսությունը լրացվեց նոր բովանդակությամբ: Նոր քաղաքատնտեսությունը սկսեց դիտարկվել կառավարության տնտեսական հիմնախնդիրները, այն եղանակներն ու մեթոդները, որոնց միջոցով մարդիկ ի շահ անձնական նպատակների օգտագործում են կառավարման գործընթացով զբաղվող հիմնարկությունները [27, էջ 138]:

**Պետությունը, հասարակական պահանջումները, ռեսուրսները և ընտրությունը:** Շուկայական տնտեսության պայմաններում պետությունը հանդես է գալիս որպես տնտեսական սուբյեկտ: Իսկ բոլոր տնտեսական սուբյեկտները տնօրինում են որոշակի ռեսուրսների, նրանցից յուրաքանչյուրի առջև ծառա-



ցած է պոտենցիալ արտադրողական և սպառողական հնարավորությունների միջև ընտրություն կատարելու հիմնախնդիրը: Տնտեսական գործակալները մասնակցում են որոշակի տնտեսական շրջապտույտի, որը մարդկության զարգացման տարբեր աստիճաններում բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել: Նման մասնակցությունը բնութագրական է նաև պետության համար: Այդ պատճառով փորձենք առանձնացնել նրա առանձնահատուկ պահանջունքները, ռեսուրսները և հնարավորությունները, որոնք օգտակար կլինեն հասարակական ընտրության բնույթն առավել խորությամբ ուսումնասիրելու համար:

Ի տարբերություն մասնավոր անձանց՝ պետության գործունեության վերլուծության ժամանակ առաջին հերթին բախվում ենք հասարակական պահանջունքների և ռեսուրսների հետ, որոնք և կանխորոշում են հասարակական ընտրությունը:

**Հասարակական պահանջունքներ:** Հասարակական պահանջունքների ձևավորումը պայմանավորված է շուկայի ձախողմամբ, երբ այն ի վիճակի չի լինում ապահովելու ռեսուրսների արդյունավետ բաշխումը:

Սովորաբար առանձնացվում են շուկայի ձախողումները բնութագրող հետևյալ պատճառները.

1. բացասական մենաշնորհների ձևավորումը,
2. տեղեկատվության անբավարարվածությունը կամ անհամաչափությունը,
3. արտաքին էֆեկտների առկայությունը,
4. հասարակական բարիքների արտադրության անհրաժեշտությունը:

Պետությունը փորձում է լուծել այդ հիմնախնդիրները՝ իրականացնելով հակամենաշնորհային քաղաքականություն, սոցիալական ապահովագրություն, սահմանափակելով արտաքին բացասական էֆեկտների և խթանելով արտաքին դրական էֆեկտների ազդեցությունը:

Այս հիմնախնդիրների լուծման համար պետությունը կարող է օգտագործել ինչպես դրական, այնպես էլ բացասական խթաններ: Պետությունը օգտագործում է նույն մեթոդը՝ տիրապետելով չափահաս բնակչության նկատմամբ բոլորի կողմից ընդունված հարկադրանքի իրավունքը: Սակայն հարկ է ճշտել, թե տնտեսագիտության իմաստով ինչ է նշանակում «հարկադրանքը»:

Հարկադրել նշանակում է մարդկանց հնազանդեցնել և ստիպել համատեղ գործունեության՝ սահմանափակելով կամ ընդլայնելով նրանց ընտրության ազատությունը: Պետությունը տիրապետում է հարկադրանքի օրինական ինստիտուցիոնալ իշխանության, և նա ընդունակ է սահմանել, պաշտպանել կամ փոփոխել սեփականության իրավունքներն ու վերջին հաշվով ազդել հասարակության «խաղի կանոններ» վրա:

Զարմանալի չէ, որ այդ ընթացքում ծագում են բնականոն հարցադրումներ. իսկ պարտադիր է արդյոք դիմել հարկադրանքի մեթոդին: Հնարավոր չէ արդյոք համնել բարձր արդյունքների՝ հենվելով միայն կամավոր համատեղ գործունեության վրա: Ինչո՞ւ շուկայական փոխանակությունը չի կարող մնալ համատեղ գործունեության միակ խթանը:

Այս հարցերին պատասխանելու համար սկզբում ուսումնասիրենք պետության կողմից մարդկանց համար «արտադրվող» բարիքները:

**Հասարակական բարիքներ:** Պետությունն արտադրում է հասարակական բարիքներ, իսկ զուտ հասարակական բարիքն այն է, որը կոլեկտիվ կերպով սպառվում է բոլոր քաղաքացիների կողմից, անկախ այն հանգամանքից՝ նրանք վճարում են, թե՛ ոչ: Զուտ հասարակական բարիքը բնութագրվում է սպառման ոչ մրցակցային և ոչ բացառելիության հատկանիշներով: Այդպիսի առանձնահատկությունները բնութագրական են, օրինակ, շրջակա միջավայրի պահպանությանը և ազգային անվտանգությանը:

Ոչ մրցակցային լինելու հանգամանքը սպառման մեջ նշանակում է, որ զուտ հասարակական բարիքի սպառումը մեկ մարդու կողմից չի փոքրացնում դրա մատչելիությունը մյուսների համար: Նման բարիքները ոչ մրցակցային են, քանի որ լրացուցիչ սպառողի համար սահմանային ծախսերը գրոյական են: Այդ պատճառով չի կարելի այդ բարիքների համար սահմանել վճար:

Ոչ բացառելիության բնութագիրը սպառման մեջ նշանակում է, որ ոչ մի մարդ չի կարող դուրս մնալ բարիքի սպառումից, նույնիսկ դրա համար վճարումից հրաժարվելու դեպքում: Զուտ հասարակական բարիքը տիրապետում է առանձնահատուկ դրական էֆեկտի. բարիքը սպառելու առաջին պահից սկսած՝ այն մատչելի է դառնում բոլորի համար: Զուտ մասնավոր բարիքի առանձնահատկությունները ձիշտ ըմբռնելու համար այն համեմատենք զուտ հասարակական բարիքի հետ: Զուտ մասնավոր բարիքը յուրաքանչյուր միավորը կարող է վաճառվել որոշակի վճարով: Ի տարբերություն զուտ մասնավոր բարիքի՝ զուտ հասարակական բարիքը չի կարող բաժանվել սպառման առանձին միավորների (այն հնարավոր չէ արտադրել «մանր» խմբաքանակներով):

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ և՛ հասարակական, և՛ մասնավոր ընտրությունը բացահայտում ու հաշվի է առնում և միաժամանակ իրացնում է անհատների նախընտրությունները նրանց տնտեսական փոխգործողությունների ընթացքում: Ե՛վ մեկը, և՛ մյուսը թույլ են տալիս քայլ կատարել Պարետո-օպտիմալության հասնելու համար: Սակայն նրանց միջև կան նաև էական տարբերություններ (տես աղյուսակ 2.3):

**Աղյուսակ 2.3.** Հասարակական ընտրության համեմատումը շուկայականի հետ [27, էջ 138]

Չափանիշներ	Շուկայական ընտրություն	Քաղաքական (հասարակական) ընտրություն
Նախնական պայմաններ	Գներ	Քվեարկության ընթացակարգ
Ազդեցություն այլ գործակալների վրա	Անկախ	Կախյալ
Վերաբերմունքը պահանջարկի նկատմամբ	Հակադարձ (որքան քիչ, այնքան լավ)	Ուղիղ (որքան շատ, այնքան լավ)
Փոխգործողության բնույթը	Առուվաճառք	Ձայների փոխանակում քաղաքական գործիչների խոստումների հետ
Փոխանակության սկզբունքները	Համարժեքություն	Հատուցելիություն
Արդյունքներ	Մասնավոր բարիքների յուրացում/օտարում	Հասարակական բարիքների և հակաբարիքների (հարկերի) յուրացում/օտարում


Հարկ է նաև նկատել, որ ոչ բոլոր հասարակական բարիքներն են ոչ ընտրովի և ոչ բացառելի: Եթե վերը նշված բնութագրերից գոնե մեկը թույլ է զարգացած, ապա մենք կարող ենք խոսել խառը բարիքների մասին, իսկ եթե ազգային անվտանգությունն ու պետական առողջապահությունն անհնար է դուրս մղել հասարակական սպառումից, ապա, կարող ենք հավաստել, որ նավագնացության (փարոս) հետ կապված ծառայությունները, ինչպես ցույց են տալիս Ռ. Քոուզի հետազոտությունները, հնարավոր է: Նրանք կարող են վճարվել «մասնավոր» կերպով, առաջին հերթին՝ այն նավերի կողմից, որոնց այդ ծառայություններն անհրաժեշտ են [21, էջ 169–192]:

Զուտ հասարակական բարիքների արտադրությունը կապված է դրական արտաքին էֆեկտների հետ: Եթե չինտերնալացվեն դրական արտաքին էֆեկտները (այսինքն՝ դրանք արտաքին էֆեկտներից չվերափոխվեին ներքինի), ապա շուկայական տնտեսության մեջ կարող էր տեղի ունենալ նման բարիքների թերարտադրություն:

Արտադրության արդյունավետ ծավալը հաստատվում է սահմանային հասարակական եկամուտների և սահմանային հասարակական ծախսերի հավասարության կետում:

Զուտ հասարակական բարիքների սպառումը տեղի է ունենում կոլեկտիվ կերպով, սակայն այդ սպառումից ստացված անհատական եկամուտները տարբեր են: Բացի այդ, եթե զուտ հասարակական բարիքների սպառման համար վճարումն իրականացվի նրանց օգտագործումից սահմանային եկամուտներին համապատասխան, ապա կառաջանան հզոր խթաններ իրական տեղեկատվության բացահայտման և ստացվող եկամուտների իրական նվազեցման համար:

Իսկապես, քանի որ սպառողները զուտ հասարակական բարիքի սպառումից եկամուտներ են ստանում անկախ վճարման փաստից, ապա առաջանում է առանց լրացուցիչ ծախսերի այդ բարիքը անվճար ստանալու ցանկություն (տես գծանկար 2.3):



Գծանկար 2.3. «Անարմա ուղևորի հիմնասխնայի» ծագումը

Այս իրավիճակը ստացել է «անտոմս ուղևորի հիմնախնդիր» անվանումը: Որպեսզի այն տեղի չունենա, անհրաժեշտ է օգտագործել հարկադրանքը: Վերջինս նվազագույնի է հասնում ոչ մեծ, կուռ կոլեկտիվում, սակայն «անտոմս ուղևորի հիմնախնդիրը» առավել հաճախ ծագում է սպառողների մեծ խմբերում, որտեղ դժվար է ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն հասարակական բարիքի օգտագործումից սպառողների իրական եկամուտների մասին: Անհասցեականությունը ուժեղացնում է «անտոմս ուղևոր» դառնալու ցանկությունը: «Անտոմս ուղևորի հիմնախնդիրի» պատճառով զուտ հասարակական բարիքների արտադրությունը դառնում է նվազ արդյունավետ: Շուկան անկարող է լինում հարթել այս հիմնախնդիրը և ձախողվում է: Շուկայի նմանօրինակ ձախողումները փորձում է շտկել պետությունը:

**Պետության ռեսուրսները՝ հարկեր:** Հասարակական բարիքների թերարտադրության իրական վտանգի առաջացման պայմաններում հիմնախնդիր լուծման միակ ռացիոնալ ուղին այնպիսի ընթացակարգի մշակումն է, որը կարտադրի քաղաքացիներին արտադրության ֆինանսավորմանը մասնակցել ոչ թե կամավոր, այլ պարտադիր հիմունքներով: Այսինքն՝ պետությունը ոչ միայն բավարարում է առանձնահատուկ պահանջումներ և արտադրում հատուկ բարիքներ, այլ դրանց արտադրության համար տիրապետում է հատուկ ռեսուրսների: Ներդնելով հարկման մեխանիզմը՝ պետությունը սահմանափակում է եկամուտներ ստանալու քաղաքացիների իրավունքը: Ըստ էության, յուրացնելով այդ եկամուտների մի մասը՝ պետությունը հանդես է գալիս որպես սեփականատեր:

Հարկերը ձևավորում են պետական ֆինանսները, որոնց մի մասը ամրագրվում է պետությանը ենթակա սեփականության տեսքով: Պետությանը ենթակա ռեսուրսների հանրագումարն էլ հենց կազմում է տնտեսության հասարակական հատվածը: Ընդ որում՝ պետական սեփականությունը կարելի է սահմանել որպես կուտակված պահուստներ, իսկ պետական ֆինանսները (եկամուտներ և ծախսեր)՝ որպես հավաքագրվող և ծախսվող դրամական միջոցների հոսքեր:

Շուկայական տնտեսության գործունեության և հաջող զարգացման համար անհրաժեշտ է հասարակական հատված: Վերջինիս բացակայությունը կարող է հանգեցնել մասնավոր հատվածի անարդյունավետությանը և տնտեսության լճացմանը, ինչպես դա կատարվեց հետխորհրդային մի շարք երկրներում: Եթե տնտեսության մասնավոր հատվածում ֆինանսական ռեսուրսների հիմնական աղբյուր են ծառայում արտադրության գործոնների սեփականությունից ստացվող եկամուտները, իսկ անհատուկ հատկացումները համարվում են հազվադեպ, ապա հասարակական հատվածում ամեն ինչ հակառակն է: Եկամուտների գլխավոր աղբյուր են համարվում հարկերը, այսինքն՝ քաղաքացիների և կազմակերպությունների պարտադիր վճարումները, իսկ երկրորդային՝ ոչ հարկային մուտքերը (պետությանը պատկանող արտադրական գործոններից ստացվող եկամուտները): Զարգացած երկրներում բյուջեի եկամուտների 80-90%-ը կազմում են հարկային մուտքերը, իսկ ոչ հարկային մուտքերը՝ ընդամենը 10-20%-ը:

1980-ական թվականներին հարկերի զգալի իջեցումից հետո 20-րդ դարի վերջում նկատվեց հարկերի բարձրացման նոր միտում: Եկամուտներից և գույքից գանձվող հարկերը 1990 թ. երկրորդ կեսին բարձրացան ԵՄ բոլոր երկրներում:

րում, բացառությամբ Նիդերլանդների և Լյուքսեմբուրգի: Հատկապես մեծ աճ է նկատվում Ֆրանսիայում, Հունաստանում, Ավստրիայում, Մեծ Բրիտանիայում և Ֆինլանդիայում (տես աղյուսակ 2.4):

**Աղյուսակ 2.4.** *Եկամուտներից և գույքից գանձվող հարկերի տեսակարար կշռի դինամիկան ԵՄ երկրներում (%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ)*

Երկրները	1995	1999	Բացարձակ շեղում (+,-) 1995-1999
Ավստրիա	12,0	13,4	+1,4
Բելգիա	16,7	17,2	+0,5
Մեծ Բրիտանիա	15,0	16,3	+1,3
Գերմանիա	11,1	12,0	+0,9
Հունաստան	7,4	10,5	+3,1
Դանիա	30,4	30,2	+0,2
Իռլանդիա	13,6	13,8	+0,2
Իսպանիա	10,1	10,3	+0,2
Իտալիա	14,8	15,2	+0,4
Լյուքսեմբուրգ	17,5	16,4	+1,1
Նիդերլանդներ	12,4	12,2	-0,4
Պորտուգալիա	9,3	10,5	+1,2
Շվեդիա	20,2	22,4	+0,2
Ֆինլանդիա	17,4	18,6	+1,2
Ֆրանսիա	8,5	12,2	+1,7
<b>Ընդամենը՝ ԵՄ երկրներում</b>	<b>12,6</b>	<b>14,0</b>	<b>+1,4</b>

Աղյուսակ 2.5-ի տվյալներից հետևում է, որ աշխարհում կենտրոնական կառավարությունների կողմից հավաքագրված հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ 2005 թ. կազմել են 14,6%, 2012 թ.՝ 14,5%, ըստ որում՝ ցածր եկամուտներով երկրներում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 10,7% և 12,8% (աճը՝ 2,1 տոկոսային կետ), միջին եկամուտներով երկրներում՝ 12,5% և 13,1% (աճը՝ 0,6 տոկոսային կետ), բարձր եկամուտներով երկրներում՝ 15,0% և 14,4% (սվազումը՝ 0,6 տոկոսային կետ), Եվրոյի գոտում՝ 18,0% և 17,7% (սվազումը՝ 0,3 տոկոսային կետ): Գործարարների կողմից վճարվող հարկերը (%-ով առևտրային շահույթի նկատմամբ) ամենաբարձրը (2013 թ. տվյալներով) ցածր եկամուտներով երկրներում է (60,7%), ապա՝ միջին եկամուտներով երկրներում (40,5%) և հետո՝ բարձր եկամուտներով երկրներում (37,0%): Աշխարհի ցուցանիշը կազմել է 43,1%:

Եվրամիության կազմի մեջ մտնող երկրներում (աղյուսակ 2.6) գործարարների կողմից վճարվող հարկերը (%-ով առևտրային շահույթի նկատմամբ) ամենացածրը Լյուքսեմբուրգում է (20,7%), իսկ ամենաբարձրը՝ Իտալիայում (65,8%):

Աղյուսակներ 2.7-ում և 2.8-ում բերված են տարբեր սկզբունքներով խմբավորված երկրներում հարկային քաղաքականությանը վերաբերող հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 2.5. Հարկային քաղաքականությունը բնութագրող ցուցանիշները՝ ըստ եկամուտների դասակարգված երկրների խմբերի համար [53]

Երկրները	Կենտրանական կառավարության կողմից հավաքագրված հարկային եկամուտները, %-ով՝ ՀՆԱ-ում		Գործարարների կողմից վճարվող հարկերը					
			վճարումների քանակը	Հարկային փաստաթղթերը Նախկին խապառուստերու և հարկերը վճարելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը, փ	Շահութահարկ	Աշխատուժից գանձվող հարկեր և վճարումներ	Այլ հարկեր	Հարկերի ընդհանուր մակարդակը
1	2005	2012	2013	2013	2013	2013	2013	2013
<b>Աշխարհը</b>	14,6	14,5	27	268	16,1	16,3	10,6	43,1
Ցածր եկամուտներով երկրներ	10,7	12,8	39	266	19,1	13,4	28,2	60,7
<b>Միջին եկամուտներով երկրներ</b>	12,5	13,1	29	326	16,5	15,3	8,7	40,5
Միջինից ցածր եկամուտներով	11,3	10,8	34	324	15,4	14,1	9,6	39,1
Միջինից բարձր եկամուտներով	13	14	24	327	17,5	16,4	7,8	41,7
<b>Ցածր և միջին եկամուտներով երկրներ</b>	12,4	13,1	32	310	17,1	14,8	13,7	45,6
Արևելյան Ասիա և Խաղաղ օվկ. տարածքներ	10	11,2	28	224	17,4	10,4	8,4	36,2

Եվրոպա և Կենտրոնական Ասիա	-	19,7	29	270	9,7	21,5	8,4	39,5
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	-	-	29	414	20,4	15,8	12,2	48,5
Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	18,5	-	23	302	15,9	18,4	5,4	39,7
Հարավային Ասիա	9,9	10,6	33	328	16,8	9	14,8	40,6
Աֆրիկա՝ Սահարայից հարավ	18,7	14,4	38	311	18,8	13,4	21,3	53,6
<b>Բարձր եկամուտներով երկրներ</b>	<b>15</b>	<b>14,4</b>	<b>15</b>	<b>166</b>	<b>13,7</b>	<b>19,9</b>	<b>3,4</b>	<b>37</b>
Եվրոգոտի	18	17,7	12	168	13,6	28,6	1,6	43,8

Աղյուսակ 2.6. Եվրամիության երկրներում հարկային քաղաքականությունը բնութագրող ցուցանիշները [53]

Հ/Հ	Երկրները	Գործարարների կողմից վճարվող հարկերը							
		Կենտրոնական կառավարության կողմից հավաքագրված հարկային եկամուտները, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Վճարումների բանալի	Հարկային փաստաթղթերը նախապատրաստելու և հարկերը վճարելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը, օ	Շահութահարկ	Աշխատուժից գանձվող հարկեր և վճարումներ	Այլ հարկեր	Հարկերի ընդհանուր մակարդակ
		2005	2012						
		2005	2012	2013	2013	2013	2013	2013	2013
1	Ավստրիա	20,1	18,9	12	166	15,3	34,7	2,4	52,4
2	Բելգիա	26,0	25,7	11	160	6,4	50,3	0,7	57,5
3	Բուլղարիա	21,6	19,6	13	454	4,9	20,2	2,6	27,7
4	Կիպրոս	45,4	25,5	30	147	9,1	12,0	1,4	22,5
5	Չեխիայի Հանրապետություն	14,9	14,2	8	413	7,7	38,4	2,0	48,1

6	Դանիա	32,6	34,1	10	130	20,3	3,6	3,1	27,0
7	Էստոնիա	16,1	16,5	7	81	8,1	39,4	2,0	49,4
8	Ֆինլանդիա	22,6	20,7	8	93	14,1	24,5	1,2	39,8
9	Ֆրանսիա	22,4	22,0	7	132	8,7	51,7	4,3	64,7
10	Գերմանիա	10,8	11,9	9	218	23,0	21,8	4,6	49,4
11	Հունաստան	20,3	22,5	8	193	11,2	32,0	0,7	44,0
12	Հունգարիա	20,3	23,3	12	277	11,6	34,6	3,5	49,7
13	Իռլանդիա	25,0	23,2	9	80	12,3	12,1	1,3	25,7
14	Իտալիա	21,1	23,2	15	269	20,3	43,4	2,0	65,8
15	Լատվիա	15,1	13,8	7	264	4,9	27,3	3,7	35,9
16	Լիտվա	17,3	13,4	11	175	6,0	35,2	1,9	43,1
17	Լյուքսեմբուրգ	25,3	26,1	23	55	4,1	16,0	0,5	20,7
18	Մալթա	60,8	27,5	7	139	29,7	10,7	0,5	41,0
19	Նիդերլանդներ	22,6	21,1	9	123	20,8	18,2	0,3	39,3
20	Լեհաստան	16,7	16,2	18	286	14,1	26,0	1,5	41,6
21	Պորտուգալիա	20,6	20,9	8	275	15,1	26,7	0,5	42,3
22	Ռումինիա	12,2	18,8	39	200	10,3	31,5	1,1	42,9
23	Սլովակիայի Հանրապետու- թյուն	14,9	12,4	20	207	7,0	39,6	0,6	47,2
24	Սլովենիա	20,5	17,9	11	260	12,9	18,2	1,4	32,5
25	Իսպանիա	12,9	7,3	8	167	21,2	36,8	0,6	58,6
26	Շվեդիա	22,6	21,5	4	122	16,0	35,5	0,6	52,0
27	Միացյալ Թագավորություն	26,8	26,7	8	110	21,6	10,6	1,7	34,0
	<b>Միջինը</b>	<b>22,5</b>	<b>20,2</b>	<b>12,3</b>	<b>192,4</b>	<b>13,2</b>	<b>27,8</b>	<b>1,7</b>	<b>42,8</b>




**Աղյուսակ 2.7. Նախկին Խորհրդային Միության հանրապետություններում հարկային քաղաքականությունը բնութագրող ցուցանիշները [53]**

Հ/Հ	Երկրները	Կենտրանական կառավարության կողմից հավաքագրված հարկային եկամուտները, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Գործարարների կողմից վճարվող հարկերը					
				վճարումները թանուսվր	Հարկային փաստաթղթերը նախապատրաստելու և հարկերը վճարելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը, օ	Շահութահարկ	Աշխատուժից գանձվող հարկեր և վճարումներ	Այլ հարկեր	Հարկերի ընդհանուր մակարդակը
		2005	2012	2013	2013	2013	2013	2013	2013
	1	2	3	4	5	6	7	8	9
1	Հայաստան	14,3	18,7	10	380	15,0	23,0	0,9	38,8
2	Ադրբեջան	-	13,0	18	214	12,9	24,8	2,2	40,0
3	Բելառուս	20,1	15,2	10	319	13,4	39,0	1,5	54,0
4	Էստոնիա	16,1	16,5	7	81	8,1	39,4	2,0	49,4
5	Վրաստան	12,1	24,1	5	280	14,3	0,0	2,2	16,4
6	Ղազախստան	13,9	-	7	188	15,9	11,2	1,6	28,6
7	Ղրղզստան	14,2	18,5	51	210	6,2	19,5	7,7	33,4
8	Լատվիա	15,1	13,8	7	264	4,9	27,3	3,7	35,9
9	Լիտվա	17,3	13,4	11	175	6,0	35,2	1,9	43,1
10	Մոլդովա	18,5	18,7	31	181	9,6	30,6	0,2	40,4
11	Ռուսաստանի Դաշնություն	16,6	15,0	7	177	8,0	36,7	6,1	50,7
12	Տաջիկստան	9,8	-	69	224	0,0	28,5	57,5	86,0
13	Թուրքմենստան	-	-	-	-	-	-	-	-
14	Ուկրաինա	17,1	18,3	28	390	11,2	43,1	0,7	54,9
15	Ուզբեկստան	-	-	41	205	0,8	28,2	70,3	99,3
	<b>Միջինը</b>	<b>15,4</b>	<b>16,8</b>	<b>21,6</b>	<b>234,9</b>	<b>9,0</b>	<b>27,6</b>	<b>11,3</b>	<b>47,9</b>



**Հասարակական բարիքների արտադրության այլընտրանքային ծախսերը:** Որոշ հասարակական բարիքների արտադրության այլընտրանքային ծախսերի դերում կարող են հանդես գալ մասնավոր հատվածում արտադրության ծախսերը: Հասարակության տնտեսական զարգացման այլընտրանքային տարբերակներն են՝ ա) մասնավոր և հասարակական արդյունքների հավասարաչափ զարգացում, բ) անհավասարաչափ զարգացում (տես գծանկար 2.4):



**Գծանկար 2.4.** *Տնտեսական զարգացման այլընտրանքային տարբերակները*

Երկրորդ տարբերակը հնարավոր է տարբեր արտացոլումներով: Այսպես՝ գծանկար 2.4-ում շտրիխային գիծը ցույց է տալիս այն իրավիճակը, երբ հասարակական բարիքների կայուն արտադրությունը ուղեկցվում է ապրանքների աճով, իսկ կետագծայինը՝ երբ հասարակական բարիքների արտադրությունը տեղի է ունենում մասնավոր ապրանքների կրճատման հաշվին (ինչպես այն տեղի ունեցավ ԽՍՀՄ-ում նեֆի և կոլեկտիվացման ժամանակաշրջանում՝ 1930-ական թվականներին): Սակայն հնարավոր է նաև այլ տարբերակ, երբ հասարակական բարիքների մի մասը փոխանցվի խառը բարիքների շարքին ու արտադրվի մասնավոր հատվածի կողմից (ամբողջությամբ կամ մասամբ): Հնարավոր են հասարակական հատվածում արտադրության և ֆինանսավորման պայմանների չորս տարբեր համակցություններ, որոնք արտացոլված են աղյուսակ 2.9-ում:

**Աղյուսակ 2.9.** *Պետական ֆինանսավորման և արտադրության տեսակները հասարակական հարվածում*

		Ֆինանսավորում	
		Մասնավոր	Պետական
Արտադրություն	Մասնավոր	Սպառողական ապրանքներ և ծառայություններ (բացի բանակի և հիվանդանոցների համար գնվող)	Պետական հաստատությունների սարքավորումներ, սպառազինության առանձին տեսակներ
	Պետական	Կոմունալ ծառայություններ, պետական համալսարանների առևտրային ստորաբաժանումներ	Ծառայություններ պաշտպանության, հասարակական կարգի, առաջնային (պետական) առողջապահության ապահովման ուղղությամբ

Ծանրաբեռնված է համարվում այն հասարակական բարիքը, որը ոչ մրցակցային է միայն մինչև սպառման որոշակի մակարդակը (ճանապարհ, թունել, կամուրջ և այլն): Այդ մակարդակն անվանվում է ծանրաբեռնվածության կետ և որոշվում է այն սպառողների թվով, որի դեպքում լրացուցիչ մեկ սպառողի պահանջարկը հավասարվում է 0-ի:

Սահմանափակ մատչելիությամբ հասարակական բարիքների թվին են դասվում՝

- գիտելիքները (պատենտները),
- դպրոցական կրթությունը, պետական բուհերը,
- պետական հիվանդանոցները,
- ակումբները և այլն:

Վերոգրյալ հասարակական բարիքների թերարտադրությունը կանխելու համար անհրաժեշտ է կիրառել սուբսիդավորման համակարգը: Գոյություն ունեն նաև այնպիսի հասարակական բարիքներ, որոնց սպառման (օգտագործման) համար կարելի է հեշտությամբ նախատեսել վճար: Դրանց թվին են դասվում լողավազանները, թենիսի, ֆուտբոլի կամ գոլֆի խաղահրապարակները և այլն: Սակայն նման որոշումը չի կարող տարածվել զուտ հասարակական բարիքների վրա, որոնց արտադրությունը կարող է իրականացվել միայն ոչ շուկայական հիմունքներով:

Այսպիսով՝ հասարակական ընտրությունը հասարակական բարիքների արտադրության, բաշխման, փոխանակության և սպառման վերաբերյալ որոշումների կոլեկտիվ մշակումն ու ընդունումն է: Կոլեկտիվ որոշումը ենթադրում է հասարակությունում առկա նախընտրությունների համաձայնեցում քաղաքական գործընթացի միջոցով: Այդ պատճառով, քաղաքական որոշումը, կարևոր է հասարակական բարիքի արտադրական գործում:

«Անտոնս ուղևորի հիմնախնդիրը» պահանջում է որոշումներն ընդունել կենտրոնացված մեխանիզմների միջոցով: Ժողովրդավարության հիմքում ընկած են բազմաթիվ ինստիտուտներ՝ հատկապես ընտրությունների կազմակերպումը, ներկայացուցչական մարմինները, հանրաքվեները և այլն: Սրանց միջոցով հաշվի են առնվում մարդկանց նախընտրությունները և պատասխան են տրվում հետևյալ հարցերին.

- Ո՞ր բարիքները պետք է դիտարկել որպես հասարակական, և ո՞ր բարիքները՝ մասնավոր:
- Ինչպե՞ս բաշխել այդ բարիքները հասարակության մեջ:
- Ինչպիսի՞ միջոցներ կիրառել «անտոնս ուղևորի» նկատմամբ:

#### ***2.1.4. Հասարակական ընտրության հիմնական փուլերը***

Դասական լիբերալիզմի բոլոր կողմնակիցներն իրենց հայեցակարգերը կառուցում են մարդու բնության, հասարակության, կառավարության և այլնի մասին միասնական պատկերացումների հիման վրա: Համաձայն այդ տեսակետի՝ մարդն ունի իր սեփական շահերը և ի վիճակի է ինքնուրույն պաշտպանելու դրանք, ընդ որում՝ առավել արդյունավետ: Այս մոտեցման դեպքում հասարա-

կությունը դիտարկվում է որպես անհատների ամբողջություն, հասարակական շահերը՝ որպես անձնական շահերից կախյալ. լավագույնն է համարվում այն հասարակությունը, որը թույլ է տալիս անհատներին առավելագույնս իրացնել իրենց անձնական շահերը: Կառավարությունը, դասական ազատականների կարծիքով, ստեղծվում է ազատ մարդկանց կողմից սահմանադրորեն ամրագրված իրենց իրավունքների պաշտպանության համար, և հենց այդ գործառույթով էլ պետությունը պետք է սահմանափակվի: Քանի որ գոյություն չունեն անհատների փոխարեն իրենց նախընտրությունները որոշող օբյեկտիվ մեթոդներ, հենց անհատները պետք է որոշեն՝ ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ՝ առավելագույնի հասցնելով օգտակարության իրենց գործառույթը:

Ազատությունը լիբերալ դոկտրինայի հանգուցային կատեգորիան է և սահմանվում է որպես ինքնավարության ու անկախության հոմանիշ: Հասարակական իշխանությունը ծագում է միայն անհատների համաձայնության արդյունքում, և միայն անհատներն են իրավասու որոշելու այդ իշխանության խելամիտ սահմանները: Հավասարությունը հավասար հնարավորությունների ստեղծումն է (այլ ոչ թե արդյունքների հավասարությունը): Ընդ որում՝ ուշադրությունը կենտրոնացվում է սահմանադրությամբ ամրագրված իրավունքների պաշտպանության վրա, իսկ դատարանը պետական մակարդակով իրականացնում է այդ պաշտպանությունը և պատժում օրինախախտներին: Տնտեսական արդյունավետությունն ապահովվում է այն դեպքում, երբ ռեսուրսները տրամադրվում են դրանք ամենարդյունավետ օգտագործողին:

Բյուկենենի վաստակը համարվում է տնտեսագիտության տեսության ուսումնասիրության առարկայի նոր սահմանումը պայմանագրային հայեցակարգի շրջանակներում: Նա տնտեսագիտությունը համարում է «գիտություն ինստիտուտների և շուկաների մասին», որը «սկսվում է անհատների իրավունքների հստակ սահմանումից կամ հավաքագրումից և ենթադրում է արդյունքների բնութագրերը կանխատեսող ու բացատրող հավաստումների ամբողջությունը, ինչպես նաև այդ արդյունքների վրա կառուցվածքային փոփոխությունների ազդեցության պայմանական ենթադրությունները» [45, էջ 213–214]:

Անհատների իրավունքների հստակ սահմանումը նախադրյալներ է ստեղծում շուկայական տնտեսության գործունեության համար, բացահայտում է նրա արմատական առավելությունները տնտեսական մյուս համակարգերի համեմատությամբ: Բյուկենենի կարծիքով՝ «շուկայական տնտեսությունը համեմատաբար արդյունավետ է երեք պատճառով. այն տնտեսական սուբյեկտների գործունեության խթանները համատեղում է նյութական բարիքների արտադրության հետ, ամբողջությամբ օգտագործում է սուբյեկտներին տեղայնացված տեղեկատվությունն ու պոտենցիալ ձեռնարկատերերին համանման գործող բոլոր սուբյեկտներին տրամադրում է ստեղծագործական ընդունակությունների բացահայտման լիիրավ հնարավորություն» [15, էջ 105]:

Պետության և իրավունքի՝ որպես անհատների միջև պայմանագրի արդյունքի ծագման ու առաջացման սահմանումը տանում է տարածված տեսությունից դեպի «հասարակական պայմանագրի» (սոցիալական կոնտակտների) տեսությունը: Այս հայեցակարգն ի սկզբանե առանձնահատուկ պատրանք էր,

դեպի անցյալի գիրկն անցած ժամանակակից տեսություն: Պայմանագրային (կոնտակտային) տեսության հիմնադիրներից մեկը Ջոն Լոկն է (1632–1704), որին Բյուկենենը համարում է իր գաղափարական նախնին: Հենց Լոկի աշխատանքներում ենք հանդիպում մասնավոր սեփականության հասկացության հիմնավորմանը՝ որպես քաղաքացիական հասարակության անհրաժեշտ նախադրյալ և պետական իշխանության պայմանագրային մեկնաբանություն [22, էջ 256–262]:

Պայմանագրային տեսությունն ազատությունը դիտարկում է որպես «բնական վիճակ», որի հիմքը կազմում են կյանքի, ազատության և սեփականության նկատմամբ իրավունքները: Այս իրավունքներից յուրաքանչյուրը նախադրյալներ է ստեղծում մյուսի իրացման համար, փոխակերպվում է մյուսին, կարող է ինքնին ստեղծվել մյուսի համար:

Այս հայեցակարգն աբստրակտ է և համարվում է շուկայական տնտեսության իդեալական կերպարը, որտեղ բոլոր մարդիկ կատարյալ մրցակցության պայմաններում գործող հասարակ ապրանք արտադրողներ են: Բյուկենենը, օգտվելով պայմանագրային տեսությունից, կարողանում է ցույց տալ քաղաքական հարաբերությունների ոլորտում գործող այդ իդեալական շուկայական մեխանիզմի դրական հնարավորությունները:


**Սահմանադրական ընտրություն:** Բյուկենենը առանձնացնում էր հասարակական ընտրության երկու մակարդակ՝ սկզբնական՝ սահմանադրական, և հետսահմանադրական: Սկզբնական փուլում ձևավորվում են անհատների իրավունքները, սահմանվում են նրանց միջև փոխհարաբերությունների կանոնները: Հետսահմանադրական փուլում ձևավորվում է անհատների վարքագծի ռազմավարությունը՝ սահմանված կանոնների շրջանակներում:

Իրավական համակարգը հանդես է գալիս որպես յուրահատուկ հասարակական կապիտալ: Օրենքի՝ որպես կապիտալ բարիքի բնութագրումը բազմակողմանի զարգացում ստացավ Բյուկենենի կողմից, ըստ որի՝ «Օրենքների համակարգը, անկախ գործնական կյանքի հետ դրանց համակցված լինելու հանգամանքից, իրենից ներկայացնում է հասարակական կապիտալ, որի հատույցը բարձրանում է ժամանակի ընթացքում» [16, էջ 366]:

Իրավական համակարգի ներկայացումը ոչ միայն որպես հասարակական բարիք է, այլև որպես հասարակական կապիտալ, կազմում է Ջ. Բյուկենենի անվիճելի վաստակը: Ի տարբերություն սովորական կապիտալի, որի հատուցումը կարելի է ստանալ միանգամից, հուսալի իրավական համակարգից սպասվելիք եկամուտները (որոնք ամփոփվում են միջանձնային փոխհարաբերությունների մեջ) բացահայտվում են ոչ միանգամից: Ավելին՝ իրավական համակարգի աստիճանական խախտումն իրավական հիմքերի «վաճումը» կարող է հանգեցնել հասարակական կապիտալի մեկընդմիջտ կորստյան:

**Հետսահմանադրական ընտրություն,** որն առաջին հերթին իրավական հիմնադրույթների և «աշխատանքային օրենքների խաղի կանոններն են», որի հիման վրա որոշվում են տնտեսական քաղաքականության կոնկրետ քայլերը՝ ուղղված հասարակական բարիքների արտադրությանն ու տեղաբաշխմանը (տես գծանկար 2.5):

Շուկայի «տապալումների» հիմնախնդիրը պետությունը ջանում է լուծել հետևյալ ուղղություններով՝ ապահովել շուկայի բնականոն աշխատանքը և հաղթահարել (վատագույն դեպքում՝ մեղմել) սոցիալ-տնտեսական սուր հիմնախնդիրները: Դրան են ուղղված հակամենաշնորհային (տնտեսական մրցակցության պաշտպանության) քաղաքականությունը, սոցիալական ապահովագրությունը, արտաքին դրական էֆեկտներով ապրանքների արտադրության ընդլայնումը և բացասականների կրճատումը:



Գծանկար 2.5. Հասարակական ընտրության աստիճանները

Շուկայական տնտեսությանը պետական միջամտության ուղղությունները համարվում են, այսպես կոչված, ստորին սահմանը: Սակայն ժամանակակից աշխարհում պետության տնտեսական գործառնություններն ավելի լայն են և դրանք ներառում են ենթակառուցվածքների զարգացումը, դպրոցական կրթության դոտացիաները, գործազրկության նպաստները, թոշակների և նպաստների տարաբնույթ ձևերը տրվող հասարակության անապահով խավերին և այլն: Այս ծառայությունների միայն փոքր մասն է զուտ հասարակական բարիք: Դրանց մեծամասնությունը սպառվում է ոչ թե կոլեկտիվ, այլ անհատական կերպով: Այնուհանդերձ, 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին զարգացած երկրներում ՀՆԱ-ի մեջ պետական ծախսերը դրսևորում են աճի միտումներ: Դրա հետ մեկտեղ պետությունը սովորաբար իրականացնում է նաև հակամենաշնորհային քաղաքականություն՝ ձգտելով կրճատել գործազրկությունը: Վերջին տասնամյակներում (հատկապես 2009 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ընկած ժամանակահատվածում) պետությունն առավել ակտիվորեն է մասնակցում կառուցվածքային փոփոխությունների կարգավորմանը, խթանում է ԳՏԱ-ն, ձգտում է պահպանել ազգային տնտեսության զարգացման բարձր տեմպերը: Եթե դրան ավելացնենք նաև տարածաշրջանային և արտաքին տնտեսական քաղաքականությունը, ապա ակնհայտ կդառնա, թե ինչու է 20-րդ դարի ընթացքում պետության դերն աճել:

Ընդ որում՝ շուկայական տնտեսության պայմաններում պետական հատվածի սրընթաց աճը և պետական կարգավորման ուժեղացումը չի կարող ան-

սահման լինել: Շուկայական տնտեսությունը պետության գործառույթների վրա դնում է որոշակի սահմանափակումներ:

Առաջին հերթին անթույլատրելի են շուկայական մեխանիզմը քայքայող պետական միջամտության մեթոդները, որոնք այդ մեխանիզմը փոխարինում են ուղղակի վարչարարությամբ: Առավել արդյունավետ են անուղղակի կարգավորիչները (հարկեր, սուբսիդիաներ և այլն), հատկապես շուկայական տնտեսությանն օրգանապես համակցվող լծակները: Այդ իսկ պատճառով էլ պետական կարգավորումը պետք է ոչ թե փոխարինի շուկայական ուժերին, այլ ուժեղացնի կամ թուլացնի շուկայական մեխանիզմների ազդեցությունը [7, էջ 145–153]: Անհրաժեշտ է հիշել, որ բոլոր տնտեսական կարգավորիչների ազդեցությունը հակասական է: Կարճաժամկետ եկամուտները կարող են «փոխհատուցվել» երկարաժամկետ կորուստներով: Ավելին՝ կիրառելով մի շարք տնտեսական միջոցներ՝ չպետք է մոռանալ, որ նրանցից շատերը գործում են տարբեր, հաճախ հակադարձ ուղղություններով: Ընդհանրապես, ուղղակի և անուղղակի վարչական մեթոդների գործունեության շրջանակը պետք է հստակ որոշված լինի: Տնտեսության պետականացման միտումը չպետք է միակը և գերակշռողը լինի, քանի որ ժամանակ առ ժամանակ պետք է քայլեր ձեռնարկել տնտեսության ապապետականացման ուղղությամբ: Ապապետականացման եղանակները կարող են տարբեր լինել, որոնցից առաջինը մրցակցության խրախուսումն է և շուկաների ազատականացումը, ոլորտ մտնելու խոչընդոտների նվազեցումն ու վերացումը, հակամենաշնորհային քաղաքականությունը: Արդյունավետ կարող է լինել խառը ձեռնարկատիրության խրախուսումը [4]:

Վերջապես՝ կարող է իրականացվել պետական սեփականության մասնավորեցում: Եվ միջազգային փորձը վկայում է, որ մասնավորեցումը կարող է հաջողված համարվել միայն որոշակի պայմանների առկայության դեպքում: Դրանց, առաջին հերթին, վերաբերում են՝

- մասնավորեցման հուսալի իրավական դաշտի առկայությունը,
- զարգացած շուկայական ենթակառուցվածքների (առաջին հերթին՝ արժեթղթերի շուկայի) ստեղծումը,
- պետական կազմակերպությունների վաճառքի լավ մտածված ընթացակարգ(եր)ը,
- տնտեսության մասնավորեցվող հատվածի (կամ ոլորտի) նկատմամբ պահանջարկի մեծության նախնական գնահատումը [5, էջ 375–424]:

Միայն այս նախապայմանների առկայության դեպքում տնտեսության ապապետականացումը կարող է արդյունավետ լինել: Կարծում ենք, որ վերը նշված պայմանների պահպանումն էլ ավելի արդյունավետ կդարձներ մեր հանրապետությունում իրականացված մասնավորեցումը: Դրա հետ մեկտեղ պետք է նկատել, որ բյուրոկրատական ապարատի ընդլայնումը բարդացնում է որոշումների ընդունումը: Այդ պատճառով շուկայի ձախողումները լրացվում են և երբեմն ուժեղացվում պետության ձախողումներով:



### 2.1.5. Քաղաքատնտեսական շրջապտույտ

**Քաղաքական գործընթացի մասնակիցները:** Հասարակական ընտրության տեսության մեջ հիմնական գործող անձինք են ընտրողները, քաղաքական գործիչները (օրենսդիրները) և պետական ծառայողները (վարչական աշխատողներ, բյուրոկրատիա): Որպես մասնավոր բարիքների արտադրողներ և սպառողներ՝ մարդիկ առաջին հերթին հարաբերություններ են հաստատում շուկայական և պետական ինստիտուտների հետ միաժամանակ և՛ որպես հասարակական բարիքների արտադրողներ, և՛ սպառողներ: Եթե առաջին դեպքում գերակշռում են ազատ հարաբերությունները, ապա երկրորդ դեպքում՝ հարկադրականը:

Մարդիկ քաղաքական գործընթացի մասնակիցներ են դառնում այնքանով, որքանով նրանք տիրապետում, տնօրինում և օգտագործում են պետության հարկադրանքի ուժը: Իհարկե, ակնհայտ է, որ հարկադրանքի իրավունքը պետք է նվազագույնի հասցնել՝ սահմանափակվելով միայն օրենքով նախատեսված անձանցով (որոնք ժողովրդի կողմից ընտրվել են այդ հարկադրանքն իրացնելու համար): Ի դեպ՝ քաղաքական գործընթացի մասնակիցներն այդ իրավունքից օգտվում են տարբեր չափերով [10, էջ 242–248]:


**Ընտրողներ:** Ի տարբերություն մասնավոր ընտրության՝ հասարակական ընտրությունն իրականացվում է որոշակի ժամանակահատվածի միջոցով, սահմանափակված է հավակնորդների շրջանակներով, որոնցից յուրաքանչյուրն առաջարկում է ծրագրերի իր փաթեթը: Վերջինս իր էությամբ նշանակում է, որ ընտրողը զրկված է մի քանի պատգամավոր ընտրելու հնարավորությունից. մեկին՝ զբաղվածության հիմնախնդրի լուծման, մյուսին՝ ինֆլյացիայի դեմ պայքարի, երրորդին՝ արտաքին քաղաքականության խնդրի լուծման համար և այլն: Ընտրողը ստիպված է ընտրել մեկ պատգամավոր, որի դիրքորոշումները ոչ ամբողջությամբ են համընկնում նրա նախընտրությունների հետ:

Այսպիսով՝ ընտրողներն ավելի սահմանափակ ընտրություն ունեն, քան գնորդները ապրանքային շուկայում, ընդ որում՝ ոչ միայն բարիքների հավաքագրման, այլև նրանց կողմից տնօրինվող տեղեկատվության տեսանկյունից:

Քաղաքական գործիչները, որոնք որոշում են զարգացման նպատակներն ու դրանց հասնելու միջոցները, ջանում են հասնել իրենց կողմից մշակված ծրագրերի հավանությանը և ընտրողների աջակցության դեպքում ուղիներ են փնտրում դրանց իրականացման համար: Ընդ որում՝ սկզբնական մտահղացումը հետագայում զգալիորեն ճշգրտվում և կոնկրետացվում է: Դրա հետ մեկտեղ ծրագրի իրականացումը մեծապես կախված է իրագործողներից, որոնց գործողությունների նկատմամբ մշտական վերահսկողությունը խիստ անհրաժեշտ է:


Բացի այդ՝ քաղաքական գործիչները ստիպված են դառնալ նաև յուրօրինակ ձեռնարկատերեր: Սակայն ի տարբերություն նրանց՝ քաղաքական գործիչները շահագրգռված են իրենց «ապրանքի» նկատմամբ ոչ թե գնորդների, այլ ընտրողների կողմից պահանջարկի առկայության մեջ: Նրանց գործունեության մեջ ամրագրվում է ոչ թե ինքնաձախսաձածակման, այլ վերընտրության սկզբունքը, և նրանք առավելագույնի են հասցնում ոչ թե շահույթը, այլ վար-

կանիշը [10, էջ 290–295]: Այդ պատճառով քաղաքական գործիչները մշտապես հետաքրքրվածություն են ցուցաբերում իրենց ընտրարշավը ֆինանսավորող անձանց նկատմամբ: Նրանց կազմում առավել կարևոր դեր են խաղում հատուկ շահերով խմբերը (տես գծանկար 2.6):



Գծանկար 2.6. Քաղաքական գործընթացի հիմնական գործող անձանց փոխգործողությունները

**Բյուրոկրատներ:** Օրենսդիր մարմինները ձևավորում են գործադիր մարմիններ, իսկ նրանք էլ իրենց հերթին՝ ընտրողների շահերը շոշափող պետական բազմաբնույթ գործառույթների իրականացումն ապահովող ընդգրկուն աշխատակազմ: Քաղաքական գործիչների օգտին քվեարկած ընտրողներն ընկնում են բյուրոկրատների անմիջական ենթակայության ներքո (տես գծանկար 2.7):



Գծանկար 2.7. Բյուրոկրատիայի դերը


Բյուրոկրատների վարքագիծը որոշակիացվում է ոչ միայն օրենսդիր, այլև պաշտոնական հրահանգներով, որոնք սահմանում են նրանց իրավունքներն ու պարտականությունները: Նրանց նվազագույն նպատակն է պաշտոնի պահպանումը, իսկ առավելագույնը՝ կարգավիճակի բարձրացումը [23, էջ 271]:

Բյուրոկրատիան զարգանում է որպես պետության ներսում հիերարխիկ կառուցվածք, որն անհրաժեշտ է որպես երկարաժամկետ ծրագրեր իրականացնող, արտաքին փոփոխություններին արագորեն հարմարվող կազմակերպություն: Քաղաքական գործընթացն իրենից ներկայացնում է ընդհատության և անընդհատության միասնություն: Օրենսդիր մարմինների պարբերաբար թարմացումը համակցվում է գործադիր մարմինների հիմնական օղակների հարաբերական կայունությամբ: Բյուրոկրատիան օգնում է պահպանել ղեկավարման ժառանգականությունը՝ միաժամանակ վերահսկողություն իրականացնելով հարմարվողական պահվածքի նկատմամբ: Իրացնելով իրենց սեփական նպատակները և հատուկ խմբերի շահերը՝ բյուրոկրատները ջանում են ընդունել այնպիսի որոշումներ, որոնք նրանց համար առավել մատչելի կդարձնեն բազմազան ռեսուրսների ինքնուրույն օգտագործումը:

Հասարակական բարիքների տնտեսման միջոցով նրանք դժվար թե կարողանան հարստանալ, իսկ երկարաժամկետ ծրագրերի ընդունումը լայն հնարավորություններ է ընձեռում նրանց հարստացման, ազդեցության մեծացման, աջակցող խմբերի հետ կապերի ամրապնդման և, վերջին հաշվով, որևէ «տաքուկ» տեղ «հեռանալու» ուղիների նախապատրաստման: Պատահական չէ, որ խոշոր ընկերությունների ծառայողները, աշխատելով պետական մարմիններում, իրենց ընկերություններն են վերադառնում պաշտոնի զգալի առաջխաղացմամբ: Այս պրակտիկան ստացել է «բացվող դռների համակարգեր» անվանումը:


Բյուրոկրատիային բնորոշ է վարչական մեթոդներով կառավարումը, ձևի բացարձակեցումը՝ ի վնաս բովանդակության, մարտավարության առաջխաղացումը՝ ի վնաս ռազմավարության, կազմակերպության նպատակի (նպատակների) ստորադասումը՝ կազմակերպության պահպանման խնդիրներից: Կ. Մարքսի բնորոշմամբ՝ «բյուրոկրատիան իրեն համարում է պետության վերջնական նպատակը, քանի որ բյուրոկրատիան իր «ձևական» նպատակները դարձնում է իր բովանդակությունը, բյուրոկրատիան ամենուրեք կոնֆլիկտի մեջ է մտնում «իրական» նպատակների հետ: Բյուրոկրատիան ստիպված է ձևականը ներկայացնել որպես բովանդակություն, իսկ ոչ ձևականը՝ որպես ձևականություն: Պետական խնդիրները վերածվում են գրասենյակային խնդիրների, իսկ գրասենյակային խնդիրները՝ պետականի» [23, էջ 271]:

**Քաղաքատնտեսական շրջապտույտ:** Գոյություն ունի յուրօրինակ քաղաքատնտեսական շրջապտույտ, որը մեծապես նմանվում է տնտեսական բարիքների շրջապտույտին: Միայն տնային տնտեսությունների և կազմակերպությունների փոխարեն այստեղ մասնակցում են ընտրողներն ու քաղաքական գործիչները, իսկ սպառողական ապրանքների և ծառայությունների փոխարեն գործում են քաղաքական ու հասարակական բարիքների շուկաները (տես գծանկար 2.8):



Գծանկար 2.8. Պահանջարկի և առաջարկի քաղաքապրնտեսական մոդելը

Քաղաքատնտեսական շրջանառության պարզագույն մոդելը կարելի է նկարագրել հետևյալ կերպ. ընտրողները ձևավորում են հասարակական նախընտրությունները: Քաղաքական շուկայում ընդգրկվում են առավել հեղինակավոր գործիչները, որոնց ընտրողները քվեարկության ճանապարհով պատվիրակում են իրենց իրավասությունները (տես գծանկար 2.9): Քաղաքական գործիչներն իրենց հերթին ընդունում են օրենքներ և կազմակերպում են հասարակական բարիքների մատակարարումը:




Գծանկար 2.9. Քաղաքապրնտեսական շրջապտույտի պարզագույն մոդելը

Միջակցելով ընտրողների ձայների համար՝ քաղաքական գործիչներն իրականացնում են քաղաքական գովազդ, որն ընտրողներին մատուցում է քաղաքական տեղեկատվություն: Ընդ որում՝ հեռատես գործիչները ձգտում են հաշվի առնելու ընտրողների առավել արդիական հասարակական պահանջմունքները:

Այս պարզագույն մոդելը կարող է բարդացվել՝ նրա մեջ ընդգրկելով բյուրոկրատիան: Ընտրողները քվեարկում են քաղաքական գործչի օգտին, վերջիններս նշանակում են բյուրոկրատներին, որոնք անմիջական ազդեցություն են ունենում ընտրողների վրա: Արդեն իսկ իր դիրքից ելնելով՝ բյուրոկրատիան անմիջականորեն կապված չէ ընտրողների շահերի հետ: Նա առաջին հերթին սպասարկում է օրենսդիր և գործադիր մարմինների տարբեր օղակների շահերը: Պետական ծառայողները ոչ միայն իրագործում են արդեն ընդունված օրենքները, այլև ակտիվորեն մասնակցում են դրանց մշակմանը՝ քաղաքական գործիչներին տրամադրելով տեղեկատվություն և կարգադրությունների համակարգի միջոցով կենսագործելով քաղաքական գործիչների կողմից ընդունված օրինագծերը (տես գծանկար 2.10):

Բյուրոկրատների միջոցով հատուկ շահերով խմբերը «մշակում են» քաղաքական գործիչներին՝ տեղեկատվություն տրամադրելով իրենց շահավետ «լույսի ներքո»:

Քաղաքատնտեսական շրջապտույտի սուբյեկտները միմյանց հետ խիստ փոխկապակցված են: Սակայն դա չի նշանակում, որ այդ սուբյեկտներից յուրաքանչյուրը չի պահպանում իր անկախությունն ու հարաբերական մեկուսացվածությունը: Դա վկայում է այն մասին, որ քաղաքական գործընթացի մասնակիցների ցանկացած գործողություն վաղ թե ուշ կշրջվի դեպի իրենց, սակայն այլ՝ բավականին վերափոխված տեսքով:



Գծանկար 2.10. Քաղաքատնտեսական շրջապտույտի մոդելը բյուրոկրատիայի մասնակցությամբ

**Քաղաքական գործընթաց. փոփոխություններ և զարգացում:** Ընտրողների, քաղաքական գործիչների և պետական ծառայողների փոխգործողությունները ձևավորում են քաղաքական գործընթացները: Հենց վերջինս է հիմք ստեղծում ժամանակի և տարածության մեջ քաղաքականության իրագործման համար՝ գործողությունների կանոնակարգված հաջորդականության տեսքով:

**Քաղաքական գործընթացն** իրենց իշխանական շահերը հետապնդող և իրենց նպատակներին հասնելու համար քաղաքական ինստիտուտներ ստեղծող քաղաքական սուբյեկտների կանոնակարգված գործողությունների հաջորդականությունն է: Քաղաքական գործընթացը կարող է իրականացվել ինչպես միկրո-, այնպես էլ մակրոմակարդակներում: Առաջին դեպքում խոսքը վերաբերում է առանձին անհատների փոխգործողություններին, երկրորդ դեպքում՝ որոշակի քաղաքական համակարգի շրջանակներում կատարվող փոփոխությունների պարբերաշրջանին: Քաղաքական գործընթացները կարող են դասակարգվել ըստ փոխգործողությունների մասշտաբների, մասնակիցների, տևողության և բնույթի: Օրինակ՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման ընտրությունները կատարվում են երեք տարին մեկ անգամ և շոշափում են միայն տվյալ համայնքի շահերը, իսկ, օրինակ՝ ԽՍՀՄ-ի կազմալուծումը տևեց մի քանի տարի և այս կամ այն կերպ շոշափեց երկրագնդի ամբողջ բնակչության շահերը:

**Քաղաքական փոփոխությունները** քաղաքական գործընթացի մասնակիցների փոխգործողությունների արդյունքում քաղաքական կյանքում նոր տարրերի և բնութագրերի ի հայտ գալն է: Դրանք շոշափում են քաղաքական սուբյեկտների միջև փոխգործողությունների եղանակն ու բնույթը: Առանձին քաղաքական փոփոխություններ փոխկապակցված են և հանգեցնում են նոր քաղաքական ինստիտուտների ստեղծմանն ինչպես էվոյուցիոն, այնպես էլ հեղափոխական ճանապարհով: Քաղաքական ոլորտի խոշոր որակական փոփոխությունները բերում են քաղաքական զարգացման: Թեև քաղաքական փոփոխության և քաղաքական զարգացման միջև տարբերությունը բավականին պայմանական է, այդուհանդերձ, ակնհայտ է, որ երկրորդ դեպքում տեղի են ունենում խոշոր որակական փոփոխություններ՝ քանակական փոփոխությունների կուտակումը տալիս է նոր որակ: Քաղաքական փոփոխությունների բնույթը զգալիորեն կանխորոշվում է քաղաքատնտեսական պարբերաշրջանով (ցիկլով), որի սահմանը ընտրություններն են:

### **2.1.6. Քաղաքատնտեսություն. հին ու նոր**

Մասնավոր և հասարակական բարիքների արտադրության, շուկայի և պետության դերի առանձնահատկությունների համեմատությունը թույլ է տալիս խորությամբ հասկանալ հին ու նոր քաղաքատնտեսությունների միջև տարբերությունները: Եթե հին քաղաքատնտեսության հիմքում ընկած էր նյութական հարստության արտադրությունը, ապա նոր քաղաքատնտեսության ուշադրության կենտրոնում ոչ նյութական բարիքների արտադրությունն է: Եթե հինը առաջին հերթին ուսումնասիրում էր տնտեսական գործընթացները, ապա նորը՝ քաղաքական գործընթացները: Ի դեպ՝ դա չի նշանակում, որ պետական քաղաքականության հարցերն ավանդական քաղաքատնտեսությանն օտար են եղել, սակայն դրանց վերաբերյալ դիրքորոշումները փոքր-ինչ այլ բնույթի են: Դրանում համոզվելու համար հակիրճ կերպով անդրադառնանք քաղաքատնտեսության զարգացման փուլերին: Բնական է՝ մեզ պետք է հետաքրքրի

«քաղաքական» հիմնախնդիրները, այն է՝ պետության դերի և գործառույթների հասկացություններն ավանդական քաղաքատնտեսության մեջ:

**Պետության տնտեսական գործառույթների սահմանումն ավանդական քաղաքատնտեսության մեջ:** Կապիտալիզմի ձևավորումը կանխորոշեց ինքնուրույն գիտության՝ քաղաքատնտեսության ծագումը: Ի սկզբանե վերլուծության օբյեկտ էր ոչ թե արտադրության, այլ շրջանառության ոլորտը: Համաշխարհային առևտրի զարգացումը նպաստում էր վաճառականության դերի բարձրացմանը: Վաճառականության շահերի արտացոլումը քաղաքատնտեսության առաջին դպրոցի՝ մերկանտիլիզմի հիմնադրումն էր, որոնց ուշադրության կենտրոնում առևտրային և վճարային հաշվեկշիռների հիմնախնդիրներն էին: Ընդ որում՝ առևտրային բուրժուազիան փորձում էր իր տեսակետը ներկայացնել որպես համազգային շահեր: Հասարակական արտադրության զարգացմանը զուգընթաց նույնիսկ դասական քաղաքատնտեսության լավագույն ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում ոչ թե բուն արտադրության գործընթացն էր, այլ նրա արտաքին արդյունքը՝ հարստությունը: Ի տարբերություն մերկանտիլիստների՝ Ադամ Սմիթը (1723–1790) մատնանշում էր պետության նշանակությունը ինչպես մասնավոր սեփականության պահպանման, այնպես էլ տնտեսապես ոչ շահավետ ապրանքների արտադրության համար: Դավիթ Ռիկարդոն (1772–1823) հիմնականում անդրադառնում էր հարկահավաքման հիմքերին, իսկ Ջոն Ստյուարտ Միլը (1806–1873) անմիջականորեն մոտեցավ շուկայի ծախողումների գաղափարին: Դասական տնտեսագետների առավել պահպանողական ձևի՝ ժամանակակից լիբերալ հայեցակարգի կողմնակիցները, չիրաժարվելով իրենց նախորդների գաղափարներից, այնուամենայնիվ, շեշտում էին պետության ակտիվ դերը: Համաձայն այս տեսակետի՝ շահերի ներդաշնակությունը հնարավոր է միայն խելամիտ օրենսդրության դեպքում: Ուստի այդ պատճառով էլ նրանք հանդես էին գալիս օրենսդրության մեջ ազատական բարեփոխումների հետևողական կողմնակիցների դերում: Հենց ազատական բարեփոխումների տեսության շրջանակներում է դրվել տնտեսության մեջ պետության ակտիվ միջամտության խնդիրը՝ որպես առաջընթաց զարգացման գործոնի: Ճիշտ է՝ այդ ժամանակ տնտեսության մեջ պետության միջամտությունը չէր դիտարկվում բառիս ներկայիս իմաստով (հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականություններ և այլն), այլ օրենսդրական գործունեության իմաստով, որն ուղղված կլինի աշխատաժամանակի, աշխատանքային պայմանների, նվազագույն աշխատավարձի կարգավորմանը, ինչպես նաև սոցիալական բարեփոխումների իրականացմանը:

**Պետության դերի տարբեր գնահատականներ:** Ֆեոդալական գաղափարախոսության համար պայքարի խանդավառության անկմանը զուգահեռ տնտեսության փիլիսոփայությունը սկսում էր տեղի տալ գործնական մոտեցումներին: Ալֆրեդ Մարշալը (1842–1924) պետությանը հատկացնում էր առավել քան համեստ տեղ՝ անդրադառնալով միայն հարկային խնդիրներին: Վերը նշվածն իր պաշտպանությունն էր գտնում նաև Լեոն Վալրասի (1834–1910) աշխատանքներում, ըստ որոնց՝ պետության գործառույթները պետք է սահմանափակվեն միայն հասարակական բարիքների արտադրությամբ և մե-

Նաշնորհների վերահսկմամբ: Սակայն տնտեսության մեջ պետության դերի և գործունեության ուսումնասիրման իմաստով բեկումնային եղավ Ջոն Մեյնարդ Քեյնսի (1883–1946) հետազոտությունները: Նրա անվան հետ է կապված արևմտյան տնտեսագիտական մտքի նոր ուղղության՝ քեյնսականության ծագումը, որն ուշադրության կենտրոնում է դնում պետության տնտեսական քաղաքականության հիմնախնդիրները: Քեյնսը հրաժարվեց նեոդասական տեսության որոշ կանխադրյալներից, մասնավորապես՝ շուկայի՝ որպես իդեալականորեն ինքնակարգավորվող մեխանիզմի գաղափարից: Շուկան, Քեյնսի կարծիքով, չի կարող ապահովել «արդյունավետ պահանջարկ», այդ պատճառով վերջինիս խթանման համար պետությունը պետք է իրականացնի դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություն: Այդ քաղաքականությունը պետք է խթանի մասնավոր ներդրումներն ու սպառողական ծախսերն այնպես, որ ապահովվի ազգային եկամտի աննախադեպ աճը: Ջ. Մ. Քեյնսի տեսության գործնական ուղղվածությունը նրան ապահովեց մեծ հեղինակություն, իսկ նրա «դեղատոմսերը» դարձան խառը տնտեսության և «համընդհանուր բարեկեցության պետության» տեսության գաղափարախոսական ծրագրերը: Ունենալով բազմաթիվ հետևորդներ և ենթաուղղություններ՝ այնուամենայնիվ, 1970–ական թվականներին քեյնսականության դրույթների վերանայման անհրաժեշտություն առաջացավ: Առաջարկվող մեթոդները բավարար չէին ինֆլյացիայի աճի, արտադրության անկման և գործազրկության աճի միաժամանակյա խոչընդոտները հաղթահարելու համար: Քեյնսական տեսությունը չկարողացավ ամբողջությամբ դուրս մղել նեոդասականությունը, իսկ այս երկու մոդելները, նեոդասական սինթեզի մեջ «տեղավորելու» փորձերը հաջողություն չունեցան, քանի որ մոդելն աչքի չէր ընկնում ամբողջությամբ, մակրոտնտեսական գործընթացների վերլուծության ժամանակ այն հերքում էր միկրոտնտեսագիտական վերլուծության ժամանակ որպես հիմք ընդունված նախապայմանները: Ավելին՝ 1970–1980 թթ. նեոդասականության նոր ուղղությունները (մոնետարիզմ, նոր դասական տնտեսագիտություն, հասարակական ընտրության տեսություն) զգալիորեն դուրս մղեցին քեյնսականությունը:

**Պետության դերի վերահիմաստավորումը նոր քաղաքատնտեսությունում:** Նոր ինստիտուցիոնալիզմի զարգացումը նպաստեց պետության դերի վերահիմաստավորմանը: Ընդհանուր առմամբ, նոր ինստիտուցիոնալիստները խիստ քննադատաբար էին վերաբերվում պետության միջամտությանը՝ համոզված, որ պետության միջամտության ուժեղացումը հանգեցնում է շուկայական մեխանիզմների տնտեսական արդյունավետության նվազմանը: Հենց տնտեսության մեջ պետության միջամտության անհրաժեշտությունն էլ հերքում էր Ռոնալդ Բոուզի (1910) հայտնի թեորեմը: Սակայն նորինստիտուցիոնալիստները հասկանում են, որ փոխանակության բարդ ձևերն անհնար է առանց պետության ակտիվ միջամտության, որն ամրագրում է սեփականության իրավունքը և ապահովում է պայմանագրերի կատարումը: Տիրապետելով հասարակության նկատմամբ հարկադրանք կիրառելու մենաշնորհին՝ պետությունը հնարավորություն է ստանում սեփականության իրավունքը վերաբաշխելու իր օգտին: Ավելին՝ պետությունը կարող է ստեղծել արդյունավետ ինստիտուտներ,



ինչը թույլ է տալիս յուրացնել հասարակության եկամուտների զգալի մասը: Այդ պատճառով ի հայտ են գալիս հատուկ շահերով խմբեր, որոնք շահագրգռված են «խաղի կանոնները» իրենց օգտին փոփոխելու մեջ և զբաղվում են քաղաքական ռենտայի որոնմամբ [38, էջ 291–303]:

Դրա հետ մեկտեղ, հին ինստիտուտների փոփոխությունը, ինչպես նաև նորերի ստեղծումը պահանջում է սկզբնական ներդրումներ: Սակայն քեյնսականներին քննադատող ոչ մոնետարիստները, ոչ նեոդասականները կասկածի տակ չեն դրել քաղաքական որոշումների ընդունման մեխանիզմի հուսալիությունը: Այդ թերությունը փորձեցին հաղթահարել 1950–1960–ական թվականներին ձևավորված հասարակական ընտրության տեսության կողմնակիցները (Ջ. Բյուկենեն, Գ. Տայլոկ, Մ. Մյուլլեր, Ռ. Տոլլսոն և այլք): Այս տեսության կողմնակիցները կասկածի տակ դրեցին տնտեսության մեջ պետության միջամտության արդյունավետությունը:

Լինելով մեթոդաբանական անհատապաշտության կողմնակիցներ՝ նրանք ապացուցում են, որ քաղաքականության և բիզնեսի միջև չկա անհաղթահարելի անջրպետ, և հետևողականորեն մերկացնում են պատերնալիստական պետության մասին առեղծվածը: Նրանց կարծիքով «ռացիոնալ քաղաքական գործիչներն» առաջին հերթին աջակցում են այն ծրագրերը, որոնք նպաստում են իրենց վարկանիշի բարձրացմանը և ավելացնում են հերթական ընտրություններում հաղթելու հնարավորությունները: Այսպիսով՝ հասարակական ընտրության տեսությունը փորձում է առավել հետևողական կառուցել անհատապաշտության սկզբունքները՝ դրանք տարածելով ոչ միայն առևտրային գործունեության, այլև պետության վրա: Մարդկային կապիտալի հիմնախնդրի վերաբերյալ Գ. Բեկկերի, ինչպես նաև հասարակական ընտրության տեսության կողմնակիցների մոտեցումները ելնում են նրանից, որ մարդկային վարքագիծը ենթարկվում է միևնույն հիմնարար սկզբունքներին: Մարդիկ առավելագույնի են հասցնում օգտակարությունը (ջանում են ստանալ հնարավորինս առավելագույն արդյունքներ), ձգտում են տնտեսական հավասարակշռության՝ հաշվի առնելով ակնհայտ և ոչ ակնհայտ ծախսերը (ինչպես դա տեղի է ունենում ապրանքների և ծառայությունների շուկայում), իրենց բազային նախընտրություններում խիստ անդրդվելի են (իրենց հիմնարար պահանջումներին վերաբերող նախընտրություններ):

Ինչպես և ամենուր, «տնտեսագիտական իմպերիալիզմի» զարգացումն անցնում է 3 փուլ: Առաջին փուլում մենք տեսնում ենք «թշնամական ճամբարի» սրընթաց գրավում: Քաղաքագիտության ավանդական հասկացություններն արագ ստանում են տնտեսագիտական «գրանցում»: Եվ թվում է, որ խնդիրը կայանում է միայն ընդհանուր տնտեսագիտական սկզբունքների մասնավոր հավելումների մեջ (մաքսիմալացման վարքագիծ, շուկայական հավասարակշռություն, ճաշակների և նախասիրությունների ամրություն, սահմանային օգուտների և ծախսերի փոխհարաբերակցություն և այլն):

Երկրորդ փուլում «գրավված նյութը» սկսում է ընդդիմանալ: Խնդիրն այն է, որ մաթեմատիկական գործիքակազմն ունի զարգացման սեփական տրամաբանությունը և հաճախ ներդրվում է՝ առանց հաշվի առնելու այդ գիտության

առանձնահատկությունները: Նրա համարժեք կիրառման համար պահանջվում է տնտեսագիտության հասկացությունների խորացված և համակողմանի վերլուծություն, և արդյունքում առաջանում է խստության ու ճշմարտության միջև ընտրության խնդիրը:

Երրորդ փուլում իրականացվում է առաջին երկու մոտեցումների սինթեզը: Ծնվում է նոր որակ, որը ցույց է տալիս տնտեսագիտության՝ որպես համընդհանուր գիտության մասին տեսակետների չափազանցված լինելը: Այդուհանդերձ, «ներխուժումը» հանգեցրեց նոր գիտելիքների ստեղծմանը և երկու գիտությունների հարստացմանը:

Այս էքսպանսիան ունի ևս մեկ առավելություն. «տնտեսագիտական իմպերիալիզմը» աչքի է ընկնում ոչ միայն իր խորությամբ, այլև շարադրման առավելություններով: Նրա մեթոդաբանությունը հեշտ է սովորել և քարոզել: Ավելին՝ այն օգնում է ստանդարտ իրավիճակներում ճիշտ ընտրություն կատարելու, սակայն նրա կիրառումը ենթադրում է նախադրյալների խորացում: Այս ուղղությամբ զգալի հաջողությունների է հասել սահմանադրական տնտեսագիտությունը:

**«Կարգուկանոնի տեսությունը» և սահմանադրական տնտեսագիտությունը:** Հայաստանում շուկայական տնտեսության ձևավորման համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալ միջավայրի առկայություն՝ Գերմանիայում «սոցիալական շուկայական տնտեսության» նախադրյալներին համանման: Այդ տնտեսության մեթոդաբանական հիմքերը ստեղծվել են լիբերալ «կարգուկանոնի տեսության» (Վ. Օյկեն, Ֆ. Բեմ, Վ. Ռենկե և այլք) կողմից, և չնայած թվացյալ տարբերություններին՝ գերմանական «կարգուկանոնի տեսության» ու ամերիկյան սահմանադրական տնտեսագիտության մեջ բավականին ընդհանուր գծեր կան:

Գերմանիայի «կարգուկանոնի տեսությունը», որը ձևավորվել էր 1930–1940 թթ., իր կիրառական նշանակությունն ապացուցեց հետպատերազմյան քաոսի պայմաններում և ծառայեց որպես ԳՖՀ–ի սոցիալական շուկայական տնտեսության մեթոդաբանական հիմք:

ԱՄՆ–ում սահմանադրական տնտեսագիտության հայեցակարգը ծագել է 1960–ական թվականներին ծաղկող «համընդհանուր բարօրության սպառման հասարակության» շրջանակներում և ներառում էր շուկայական տնտեսությունը կարգավորող հիմնարար կանոնների ամբողջությունը (շուկայական խաղի կանոններ) և պահանջում էր այդ կանոնների սահմանադրական ամրագրում: Համաձայն նշված տեսության հեղինակների՝ այդ կանոնների իրացումը կօգնի հանրությանը ձերբազատվելու ուռճացած պետական ապարատի բյուրոկրատների և «քաղաքական ռենտա որոնողների» նկրտումներից:

Այս երկու տեսությունների՝ առաջին հայացքից պարադոքսային համեմատումն ունի խոր իմաստ: Նրանք երկուսն էլ ուղղված են շուկայական տնտեսության կատարելագործմանը ոչ թե պետության ուղղակի միջամտության, այլև հասարակության ինստիտուցիոնալ կառուցի վրա անուղղակի ազդեցության միջոցով: Երկու տեսության ազատական բնույթն էլ ակնհայտ է, սակայն այն ոչ թե ավանդական, այլ նոր ձևի լիբերալիզմ է, և ի տարբերություն նեոդասականների՝ նեոլիբերալների ուշադրության կենտրոնում ոչ թե սահմանային մե-

ծությունները ներառող օպտիմալացման, այլ հավասարակշռված մոդելներն են: Նոր տեսությունները շարունակում են դասական լիբերալիզմի ավանդույթները՝ պաշտպանելով անհատի ազատության և մասնավոր սեփականության սկզբունքները, սակայն ի տարբերություն 18–19-րդ դարերի դասական լիբերալիզմի՝ նոր ազատականները մատնանշում են տնտեսական կյանքում պետության ակտիվ մասնակցությունը, թեև այդ ակտիվությունը նրանք հասկանում են այլ կերպ, քան քեյնսականները:

Դրանցից գլխավորը ոչ թե «արդյունավետ պահանջարկի» խթանումն է պետության էքսպանսիոն քաղաքականության միջոցով, այլ մրցակցության խթանման և շահույթի ավելացման համար ինստիտուցիոնալ մեխանիզմի ստեղծումը: Դրան առաջին հերթին կարելի է հասնել կոշտ իրավական շրջանակների սահմանման միջոցով, որը սահմանափակում է տնտեսության մենաշնորհացումը, անբարեխիղճ մրցակցությունը և այլն [17, էջ 86–95]:

«Կարգուկանոնի տեսությունը» և «սահմանադրական տնտեսագիտությունն» այս իմաստով ներկայացվում են որպես մարդուն, նրա ազատությամբ, սոցիալական պաշտպանությամբ, կրթությանն ուղղված դպրոցներ, որոնք ճանապարհ են հարթում դեպի ազատ, տնտեսապես արդյունավետ, կայուն ինքնազարգացող հասարակություն:

Տնտեսագիտության և քաղաքագիտության սինթեզին անդրադարձել են ոչ միայն տնտեսագետները, այլև քաղաքագետները:

### ***2.1.7. Քաղաքագիտության էվոլյուցիան և նրա ներդրումը հասարակական ընտրության տեսության ձևավորման մեջ***

Սեղմ ձևով քաղաքականությունը կարելի է սահմանել որպես սոցիալական իշխանության սահմանափակ կիրառում [31, էջ 33–36]: Այդ պատճառով քաղաքականության ուսումնասիրությունը սոցիալական իշխանության կիրառման բնույթի, պատճառների և գործիքների ուսումնասիրությունն է համապատասխան սահմանափակումների շրջանակներում: Հենց այդ սահմանափակումների, նրանց աղբյուրների և գործողության մեխանիզմի ուսումնասիրությունն է ընկած քաղաքականության ուսումնասիրության հիմքում: Քաղաքական միջոցները կարող են լինել ակտիվ և պասիվ, պոտենցիալ և իրացված, օրինական և անօրինական, որոնք մշակվել են քաղաքագիտության զարգացման դարավոր պատմության ընթացքում՝ սկսած Պլատոնից (մ. թ. ա. 428–348), Արիստոտել Ստագիրիտից (մ. թ. ա. 384–322), մինչև Շառլ Լուի Մոնտեսքյո (1689–1755), Կարլ Մարքս (1818–1883) և Մաքս Վեբեր (1864–1920): Ինչ վերաբերում է 20-րդ դարում քաղաքագիտության զարգացման միտումներին, նշենք որ հզոր կորպորացիաների և պետության դերի բարձրացման հետ կապված՝ լոբբինգի, որոշակի տնտեսական արտոնություններ տրամադրելու հարցերը հայտնվեցին քաղաքագիտության ուշադրության կենտրոնում: Քաղաքագետները սկսեցին ուսումնասիրել ճնշման խմբերի գործունեությունը, կաշառքի և կոռուպցիայի տարբեր ձևերը: Քաղաքական և տնտեսական շահերի փոխկապակցումը օբյեկտիվ նախադրյալներ ստեղծեց այդ երկու գիտությունների մերձեցման համար:

20-րդ դարում քաղաքագիտությունն ապրել է 3 վերելք, որոնցից առաջինը կապված է 1920–1930 թթ. Չիկագոյի քաղաքատնտեսության դպրոցի ծննդյան հետ: Քաղաքագիտության զարգացման համար ազդակ հանդիսացավ էմպիրիկ հետազոտությունների զարգացումը, որոնք հենվում են քաղաքականության հոգեբանական և սոցիոլոգիական կողմերի վրա: Վերլուծության հենքում դրվեց ուղղորդված քարոզչության ազդեցությունը քվեարկության ելքի վրա, քարոզչական և սոցիալական կառավարման տեխնոլոգիաների հարցերը և այլն: Երկրորդ վերելքը տեղի ունեցավ 1950–1960 թթ., և այն կարելի է բնութագրել որպես վարքագծային հեղափոխություն, երբ առաջին ավան մոդելին հասարակության վարքագծի ուսումնասիրության մեթոդները. առաջնային սոցիալականացման, շուկայում արտադրանքի տեղաշարժման հոգեբանական գործոններից մինչև ընտրողների հակումների և նախընտրությունների վերլուծությունը: Այդ ժամանակահատվածում սկսում են լայնորեն կիրառվել հասարակական կարծիքի հարցումները, խորացված հարցազրույցները, վիճակագրական վերլուծությունները, որոնք թույլ են տալիս ներկայացուցչական ընտրանքների հետազոտության հիման վրա կատարել օբյեկտիվ կանխատեսումներ:

Եվրոպայում քաղաքագիտության հաջողությունները կապված են համընդհանուր բարեկեցության՝ պետության կառուցման հետ, որը կարիք է զգում իշխանական կառույցների գործունեության մասին բազմաբնույթ և համակողմանի տեղեկատվության:

Քաղաքագիտության երրորդ վերելքը կապված է ռացիոնալ ընտրության տեսության և մեթոդաբանական անհատապաշտության ամրապնդման հետ, երբ երևան եկան մաթեմատիկական ճշգրտությամբ աչքի ընկնող մեթոդները: Քաղաքագիտությունն աստիճանաբար առավել մեծ չափերով է կառուցվում տնտեսագիտությունից փոխառված արսիոմների վրա:

Ընդ որում՝ ենթադրվում է, որ մարդիկ բնականորեն ռացիոնալ են, ձգտում են նյութական բարեկեցության մաքսիմալացմանը և մտահոգված են, առաջին հերթին, ընթացիկ խնդիրներով: Նյութական շահերի հետազոտությունը կտրուկ նվազեցրել է հոգևոր արժեքների, մշակութային ժառանգության, անձնական կապերի և սոցիալական ինստիտուտների ուսումնասիրությունը: Միայն 20-րդ դարի վերջում նկատվում է տարբեր մեթոդաբանական մոտեցումների միավորում նոր ինստիտուցիոնալիզմի «դրոշի ներքո»:

**Տվյալների հավաքագրման մեթոդները:** Քաղաքական գործընթացների հետազոտության էմպիրիկ մեթոդների զարգացումն անհրաժեշտ նախապայմաններ ստեղծեց հասարակական ընտրության տեսության համար: Քաղաքական գործընթացների ուսումնասիրության ժամանակ օգտագործվում են տեղեկատվության հավաքագրման զանազան մեթոդներ, այդ թվում՝ քվեարկությունների արդյունքները, անկետային հարցումները, հարցազրույցները, վերլուծությունները, լաբորատոր փորձարկումները և այլն:


Անկետային հարցումներն ու հարցազրույցները լայնորեն օգտագործվում են հասարակական կարծիքի «զարկերակը շոշափելու» համար: Նրանց նշանակությունը մեծանում է հատկապես ընտրարշավների ժամանակ և իր գագաթնակետին է հասնում ընտրությունների նախաշեմին: Դրանց լայն տարածման համար հզոր ազդակ հանդիսացավ Ջ. Գեյլապի հետազոտությունը, որը 1936 թ.

ընտրություններից 5 ամիս առաջ կանխատեսեց Ֆ. Ռուզվելտի հաղթանակը: Անկետային հարցումները երբեմն չեն ապահովում տվյալների հուսալիությունը, այդ պատճառով հաճախ օգտագործվում են հարցազրույցների տարբեր տեսակներ՝ ստանդարտ ընտրանքային, ուղղորդված և մասնագիտացված: Ուղղորդված հարցազրույցի առանձնահատկությունը նախապես մշակված խիստ անկետային թերթիկի բացակայությունն է, ըստ որի՝ հարցազրույցի օբյեկտներ են համարվում հատուկ խմբերի՝ վերնախավի ներկայացուցիչները: Նրանց կարծիքի բացահայտումը թույլ է տալիս կառուցել ճշմարտացի հիպոթեզներ այս կամ այն քաղաքական որոշման ընդունման շարժառիթների և նշանակության մասին: Ի տարբերություն ուղղորդված հարցազրույցի՝ մասնագիտացված հարցազրույցը հասցեագրված է, առաջին հերթին, որոշակի սոցիալական խմբի ներկայացուցիչներին (օրինակ՝ թոշակառուներին, բանտարկյալներին, ներգաղթածներին և այլն): Լսարանի բնույթը որոշում է ինչպես հարցադրումների առանձնահատուկ հավաքածուն, այնպես էլ դրանց տրման ձևը [28]:

Վերջին տասնամյակներում առավել մեծ նշանակություն են ձեռք բերում հետազոտության փորձագիտական մեթոդները: Փորձարկումը գործընթացի կամ երկույթի արհեստական վերարտադրումն է դրանք առավել բարենպաստ պայմաններում ուսումնասիրելու և հետագա կիրառական նշանակություն տալու նպատակով:

**Մոդելավորման հիմնական փուլերը:** Համակարգային մեթոդների տարածումն ուղեկցվում էր տնտեսամաթեմատիկական մոդելավորման բուռն զարգացմամբ և տնտեսագիտությունում ու քաղաքագիտությունում վերջիններիս կիրառմամբ: Տնտեսամաթեմատիկական մոդելները լայն տարածում են ստացել հատկապես հասարակական ընտրության տեսության մեջ:


**Տնտեսական մոդելը** տնտեսական գործընթացի կամ երկույթի ֆորմալ նկարագրությունն է, որի կառուցվածքը որոշվում է ինչպես նրա օբյեկտիվ առանձնահատկություններով, այնպես էլ սուբյեկտիվ նպատակային բնույթով (տես գծանկար 2.11):



Գծանկար 2.11. *Մոդելի և իրական աշխարհի փոխադարձ կապը*

Մոդելի ստեղծումը կապված է տեղեկատվության մի մասի կորստի հետ (տես գծանկար 1.13), ինչը թույլ է տալիս վերացարկվել (աբստրահվել) երկրորդական երևույթներից, ուշադրությունը կենտրոնացնել համակարգի գլխավոր տարրերի և նրանց փոխադարձ կապի վրա: Պատրաստի տեսքով մոդել ներ-

մուծվող հայտնի մեծությունները կոչվում են էկզոգեն, իսկ մոդելի շրջանակներում ստացվող մեծությունները՝ էնդոգեն: Օբյեկտիվ տնտեսական իրականության հետ մոդելի կապը երկակի է. մի կողմից՝ մոդելն արտացոլում է իրական աշխարհը, մյուս կողմից՝ ծառայում է նրա վերափոխմանը՝ դրված նպատակներին համապատասխան: Այդ պատճառով մոդելի ստուգման ժամանակ տեղի է ունենում կոնկրետացում և ձգգրտում: Մոդելի կառուցման գործընթացը բաղկացած է մի շարք փուլերից (տես գծանկար 2.12):



Գծանկար 2.12. Մոդելավորման գործընթացը

Քաղաքական վարքագծի վերլուծությունը, որպես կանոն, կրում է ընտրանքային բնույթ: Այդ պատճառով առաջին փուլում դիտարկվում է միայն մոդելավորման ենթակա գործընթացը: Հիմնախնդրի որոնման և ամրագրման հաջողությունը կախված է մի շարք հանգամանքներից, իսկ դրանց թվում կարևոր դեր են խաղում ինտուիցիան, հետազոտողի անձնական փորձը, ինչպես նաև հաջողությունը: Ձևավորված հիպոթեզը սկզբում ձևակերպվում է ոչ ֆորմալ մոդելի տեսքով:

Ոչ ֆորմալ մոդելն այն մոդելն է, որտեղ բացատրող և բացատրվող փոփոխականները որոշարկված են: Այս փուլում հետազոտողը դիտարկում է բազմազան նախապայմանները և փորձում է հասկանալ, թե դրանցից որոնք են բացարձակ անհրաժեշտ, որոնք են կրում վնասակար բնույթ: Սկսնակ հետազոտողը սովորաբար դիտարկում է արդեն հայտնի մոդելները և փորձում է դրանցից ընտրել տվյալ իրավիճակի համար առավել համապատասխանը: Չի կարելի, սակայն, մոռանալ, որ հիպոթեզի անկարողության դեպքում որևէ մաթեմատիկական մոդել չի կարող այն բարելավել:

**Ֆորմալ մոդելն** այն մոդելն է, որտեղ փոփոխականները որոշվում են մաթեմատիկական ճշտությամբ: Այն ենթադրում է ալգորիթմների ստանդարտ հավաքածու, և նրա հնարավոր եզրահանգումները կարելի է կանխատեսել: Դա չի նշանակում, որ կանխատեսումն անպայման կկատարվի, սակայն հետազոտության նպատակները, միջոցները և գործիքներն արդեն հստակ որոշված են: Հենց այս փուլում է հնարավոր կատարել բազմաթիվ սխալներ, քանի որ ոչ ֆորմալ մոդելի հիման վրա ֆորմալ մոդելի կառուցումը կապված է տեղեկատվության մի մասի կորստի և մաթեմատիկական ապարատում նրա բովանդակության ոչ համարժեքության որոշման հետ:

Մաթեմատիկական ապարատը թույլ է տալիս որոշակի վերապահումներ կատարել, որոնք կարող են համարժեք չլինել ոչ ֆորմալ մոդելի հետ (օրինակ՝ ընտրողի ռացիոնալությունը, նրա նախընտրությունների մշտական լինելը և այլն):

Ֆորմալ մոդելի մաթեմատիկական վերամշակման փուլը ներառում է մեթոդների լայն գործիքակազմ (տրամաբանական, խաղային հանրահաշվական, հավանականությունների և այլն): Այս փուլում քաղաքական և տնտեսական տարբեր իրավիճակներն արտացոլելու համար կարելի է օգտագործել միանման մաթեմատիկական մեթոդներ: Սակայն այն հաճախ թույլ է տալիս ստանդարտ մաթեմատիկական ապարատի հիման վրա կատարել ոչ ճիշտ եզրահանգումներ: Այստեղ առաջանում է մեկնաբանությունների խնդիրը, որը ստիպում է այդ եզրահանգումները համեմատել այն դիտարկումների հետ, որոնք հնարավորություն են ընձեռել ձևավորելու ոչ ֆորմալ մոդելը: Էմպիրիկ ստուգումը կարող է ավարտվել ինքնուրույն էկոնոմետրիկ մոդելի կառուցմամբ, սակայն էմպիրիկ ստուգումը ոչ միշտ է անհրաժեշտ: Հետազոտությունը կարող է ավարտվել որոշակի կանխատեսումային հնարավորություն ունեցող համընդհանուր տեսության ստեղծմամբ: Ցանկացած դեպքում, իրական կանխատեսումների հնարավորություն ընձեռող մոդելները քաղաքագետների և տնտեսագետների շրջանում մեծ տարածում են գտել: Ցավոք, դրանց թիվը մեծ չէ, և հարցն այն է, որ բազմաթիվ քաղաքական գործընթացներում մեծ դեր է խաղում պատահականությունը, որը կարող է ի չիք դարձնել լավ կառուցված բոլոր կանխատեսումները:

**Քաղաքական գործընթացների վերլուծության մեթոդները:** Քաղաքական գործընթացների վերլուծության մեթոդները կարելի է բաժանել երկու խմբի՝ քանակական և որակական: Առաջինն են վերաբերում վիճակագրական և էկոնոմետրիկ վերլուծությունները, երկրորդին՝ զանազան հումանիտար մեթոդները:

Հասարակական ընտրության տեսության շրջանակներում գերակշռում են վերլուծության առաջին խմբի մեթոդները:

Տարբերում են մոդելների միաչափ, երկչափ և բազմաչափ տեսակները: Մոդելի պարզագույն տեսակը մեկ փոփոխականով մոդելն է, որը թույլ է տալիս պատասխանել պարզագույն հարցերի: Օրինակ՝ ինչպիսիք է թեկնածուի ընտրականվածը, ինչքան ընտրողներ են քվեարկել այս կամ այն կուսակցության օգտին և այլն:


Առավել բարդ տեսակ է **երկչափ մոդելը**, որը թույլ է տալիս կապակցել մի քանի փոփոխականներ: Դրանց ուսումնասիրման համար օգտագործվում է կանխփոխադարձ զուգակցումների աղյուսակը, կանխ կոռելյացիոն վերլուծությունը:

Բազմաչափ վերլուծությունը հնարավորություն է տալիս կառուցելու ռեգրեսիոն, ինտերակտիվ, հավասարակշռված և բազմագործոն մոդելներ:

Հասարակական ընտրության տեսության զգալի հաջողությունները կապված են էկոնոմետրիկ մեթոդների կիրառման հետ [42, էջ 1–29]: **Էկոնոմետրիկ** տնտեսագիտության բաժին է, որը զբաղվում է վիճակագրական մեթոդների մշակմամբ և օգտագործմամբ՝ տնտեսական փոփոխությունների միջև փոխադարձ կապերը հաշվարկելու և չափելու համար: Քաղաքագիտության մեջ առավել զարգացում են ապրել այնպիսի էկոնոմետրիկ գործիքներ, ինչպիսիք են կառուցվածքային հավասարումների, ժամանակավոր շարքերի վերլուծության և ոչ գծային գնահատականների մոդելները:

Եզրափակելով հասարակական ընտրության տեսության մասին սեղմ նկարագրությունը՝ նշենք, որ ցանկացած գիտական գործունեություն իր մեջ ներառում է մի շարք հիմնական տեսակետներ: Էմպիրիկ հետազոտությունը թույլ է տալիս կոնկրետ տվյալների հիման վրա կառուցել աշխատանքային հիպոթեզ, որը հետազոտողի արժեքային համալիրի շնորհիվ դառնում է տեսություն, որը թույլ է տալիս ոչ միայն հասկանալ տվյալ էմպիրիկ աշխարհը, այլև նախատեսել նրա ապագա զարգացման հնարավորությունները: Այսպիսով՝ հետազոտողը դառնում է ոչ միայն ականատես, այլև ակտիվ մասնակից, որն ի վիճակի է ազդելու հասարակության զարգացման ուղղության վրա: Տեսության և պրակտիկայի այս փոխադարձ կապը հիմնավոր կերպով ներկայացված է Զ. Գալտունգի սոցիալական գիտությունների ինտեգրալային սխեմայում (տես գծանկար 2.13):

Զ. Գալտունգը դիտարկում է գիտական գործունեության երեք ուղղություններ՝ էմպիրիզմ, կրիտիցիզմ և պահպանողականություն: Հենց սրանց փոխազդեցությունն էլ ապահովում է գիտության զարգացումը: Այն թույլ է տալիս ոչ միայն նկարագրել առկա գործընթացներն ու երևույթները, այլև ստեղծել նախադրյալներ իրականության ուղղորդման և բարելավման համար՝ իրենց մեջ ներառելով նաև քաղաքական երևույթներն ու գործընթացները:



Գծանկար 2.13. Զ. Գալտունգի սոցիալական գիտությունների ինտեգրալային հայեցակարգը



## 2.2. Քաղաքատնտեսությունը և հասարակական քաղաքականությունը

Այժմ, երբ արդեն ներկայացվել են տնտեսական քաղաքականության հիմնական ուղիներն ու այդ համատեքստում պետության դերը, անհրաժեշտ է դիտարկել, թե ինչպես են այդ գործոնները փոխգործողության մեջ դրվում, այսինքն՝ ինչպես են քաղաքական գործընթացի սուբյեկտներն իրականացնում տնտեսական և հասարակական քաղաքականությունը, այն է՝ ինչպես են քաղաքականությունը կիրառում գործնական կյանքում: Պետական գործընթացների գծով ծախսումների աճը, բյուրոկրատական ապարատի մեծացումը կանխորոշում են պետական հատվածի ուռճացումը: Այդ միտումը Ջ.Բյուկենենն անվանեց «Լևիաֆանի սպառնալիք» [16, էջ 396–418]: Այս հիմնախնդիրը առավել հրատապ է ոչ միայն պետական, այլև տարածքային մակարդակով:

Դիտարկենք այն առավել մանրամասն:

Ինչպես հայտնի է, գոյություն ունեն չորս տիպի իրավիճակներ, որոնց դեպքում շուկան ցուցադրում է իր անարդյունավետությունը (շուկայի «ծախողումներ»)՝ մենաշնորհը, ոչ կատարյալ (ոչ համարժեք) տեղեկատվությունը, արտաքին էֆեկտները և հասարակական բարիքների արտադրությունը: Այս հիմնախնդիրները փորձում է լուծել պետությունը՝ տնտեսության մեջ ձևավորելով պետական (հասարակական) հատվածը [5]: Բնականաբար, տնտեսության զարգացման տարբեր փուլերում և տարբեր երկրներում պետական հատվածի չափերը խիստ տատանվում են: Առկա վիճակագրական տվյալների հիման վրա որոշենք 21-րդ դարի սկզբին ձևավորված հասարակական հատվածի առավելագույն և նվազագույն չափերը: Հասարակական հատվածի ուսումնասիրման նման մոտեցումը դրական բնույթ է կրում, քանի որ վերլուծում է իրական, շոշափելի երևույթները:

**Լևիաֆանի սպառնալիքը:** Պետությունը պայքարում է շուկայի «ծախողումների» դեմ՝ իրականացնելով հակամենաշնորհային քաղաքականություն [6, էջ 3–6], սոցիալական ապահովագրություն՝ սահմանափակելով արտաքին բացասական էֆեկտներով ապրանքների արտադրությունը և խթանելով արտաքին դրական էֆեկտներով տնտեսական բարիքների արտադրությունն ու սպառումը: Պետության գործունեության այս ուղղությունները կազմում են շուկայական տնտեսությանը պետության միջամտության՝ այսպես կոչված ստորին սահմանը: Սակայն, ինչպես արդեն նշվել է, պետության տնտեսական գործառույթներն անհամեմատ լայն են: Դրանց թվին են դասվում ենթակառուցվածքների զարգացումը, դպրոցական կրթությանը տրվող դոտացիաները, գործազրկության նպաստները, հասարակության անապահով խմբերին տրվող տարբեր տեսակի թոշակներն ու նպաստները և այլն: Այս ծառայությունների միայն փոքր մասն է օժտված զուտ հասարակական բարիքի բնութագրով, այսինքն՝ այդ ծառայությունների մեծամասնությունը սպառվում է ոչ թե կոլեկտիվ կերպով, այլ անհատապես:

Այնուհանդերձ, ՀՆԱ-ում պետական ծախսերի տեսակարար կշիռը բոլոր զարգացած երկրներում 20-րդ դարում դրսևորել է աճի միտում, որը պայմանավորված է նրանով, որ պետությունը վարում է հակահիմնադրամիջոցառման քաղաքականություն, ձգտում է կրճատելու գործազրկությունը, ավելի ու ավելի ակտիվորեն է մասնակցում կառուցվածքային փոփոխությունների կարգավորմանը, խթանում է ԳՏԱ-ն, ջանում է պահպանել ազգային տնտեսության զարգացման բարձր տեմպերը: Եթե դրան ավելացնենք նաև տարածքային և արտաքին տնտեսական քաղաքականությունը, ապա ակնհայտ կդառնա, թե ինչու է 20-րդ դարի ընթացքում պետության դերն անշեղորեն աճել (տե՛ս աղյուսակ 2.10):

Աղյուսակ 2.10. Պետական օգնության համար կատարվող ծախսերը ԱՄՆ-ում 1890-1990 թթ. [44]

Տարիներ	Պետական ծախսեր			
	Սոցիալական բարեկեցության աջակցության համար (%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ) *	Սոցիալական ապահովագրության համար (%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ)	Առողջապահության համար (%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ)	Բարձրագույն կրթության համար (%-ով՝ ընդհանուր ծախսերի նկատմամբ)
1890	2,4	-	-	-
1900	-	-	-	-
1920	-	-	-	38,0
1929	3,9	0,2	10,0	-
1955	8,6	2,6	5,3**	64,0
1970	14,8	5,7	7,4	67,5
1980	18,6	8,0	9,2	66,3
1985	18,4	10,1	10,5	65,0
1987	18,4	10,8	-	-
1990	19,1	9,3	13,2***	64,0

\* Սոցիալական բարեկեցության համար նախատեսվող ծախսումները ներառում են սոցիալական ապահովագրությունը և պետական օգնությունը, կրթությունը, կենսաթոշակառուների համար նախատեսվող ծրագրերը, մանկական սնունդը, վերականգնողական զանազան ծրագրեր:

\*\* 1960 թ., \*\*\* 1991 թ.:

Եթե 1890 թվականին սոցիալական բարեկեցության պահպանման համար ԱՄՆ կառավարության պետական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի ընդամենը 2,4%-ը, իսկ սոցիալական ապահովագրության և առողջապահության համար պետական ծախսումներն ընդհանրապես բացակայում էին, ապա 1990 թվականին այդ ցուցանիշները կազմեցին ՀՆԱ-ի համապատասխանաբար 19,1%-ը, 9,3%-ը և 13,2%-ը: Պետական ապարատը ձգտում էր լուծելու երկու փոխկապակցված խնդիր՝ ապահովել շուկայի բնականոն աշխատանքը և լուծել (ծայրահեղ դեպքում՝ մեղմել) սոցիալ-տնտեսական սուր հիմնախնդիրները: Այդ պատճառով պետական ծախսերը փաստացի աճել են բոլոր զարգացած երկրներում. 1990 թվականին պետական ծախսերի միջին տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 45,2%, 2000 թ.՝ 32,7%, 2012 թ.՝ շուրջ 35%:

Առաջատար 7 երկրների պետական ծախսերի կառուցվածքում գերակշռում են սուբսիդիաները և այլ տրանսֆերտները: Պետական ծախսերի մոտ 5-22%-ը ուղղվում է տոկոսների վճարմանը, իսկ աշխատուժի վարձատրության համար կատարված ծախսերը կազմել են 6-23% (տե՛ս աղյուսակ 2.11):

Եվրամիության երկրներում կենտրոնական կառավարությունների ծախսերի 61,4%-ը (2012 թ.) կատարվել է սուբսիդիաներ և այլ տրանսֆերտներ տրամադրելու նպատակով: Աշխատուժի վարձատրության ծախսերն իրենց մեծությամբ զբաղեցնում են երկրորդ տեղը (15,1%), ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի բաժինը կազմել է 8,5% (տե՛ս աղյուսակ 2.12): Գրեթե նույն օրինաչափություններն են պահպանվել նաև նախկին Խորհրդային Միության հանրապետություններում (աղյուսակ 2.13):

Եվրամիության երկրների եկամուտների ձևավորման գործում զգալի են սոցիալական վճարումների (2012 թ.՝ ընդհանուր եկամուտների 32,9%-ը), ապրանքների և ծառայությունների հարկերի (31,2%), ինչպես նաև եկամտից, շահույթից և կապիտալից ստացված հարկերի չափերը (20,9%) (տե՛ս աղյուսակ 2.18): Ի տարբերություն ԵՄ երկրների՝ նախկին Խորհրդային Միության հանրապետություններում կառավարությունների եկամուտներում զգալի են ապրանքների և ծառայությունների հարկերը (35,8%), սոցիալական վճարները (26,8%), ինչպես նաև դրամաշնորհները և այլ եկամուտներ (տե՛ս աղյուսակ 2.14):

Աղյուսակ 2.11. Աշխարհի առաջադարձ 7 երկրների կենտրոնական կառավարությունների պետական ծախսերի կառուցվածքը (%) [50]

Ծախսերի հոդվածները	ԱՄՆ		Ճապոնիա		Գերմանիա		Ֆրանսիա		Մեծ Բրիտանիա		Իտալիա		Կանադա								
	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012							
Ապրանքներ և ծառայություններ	7	9	128,6	D*	7	-	4	5	125,0	7	6	85,7	17	17	100,0	4	4	100,0	7	7	100,0
Աշխատուժի վարձատրություն	10	10	100,0	6	-	6	6	100,0	23	20	87,0	14	14	100,0	16	15	93,8	11	12	109,1	
Տոկոսների վճարում	16	11	68,8	9	-	7	5	71,4	6	5	83,3	7	7	100,0	16	12	75,0	22	8	36,4	
Սուբսիդիաներ և այլ տրանսֆերտներ	67	69	103,0	-	71	-	81	82	101,2	52	55	105,8	55	55	100,0	61	65	106,6	58	70	120,7
Այլ ծախսեր	8	7	87,5	-	10	-	4	4	100,0	1	2	200,0	9	9	100,0	5	5	100,0	5	5	100,0

\* D-ն ծախսերի փոփոխությունն է %-ներով:

**Աղյուսակ 2.12.** Կենտրոնական կառավարության ծախսերը Եվրամիության երկրներում, %-ով՝ ընդամենը ծախսերի նկատմամբ [53]

Հ/Հ	Երկրները	Ապրանքներ և ծառայություններ		Աշխատուժի վարձատրություն		Տոկոսների վճարում		Սուբսիդիաներ և այլ տրանսֆերտներ		Այլ ծախսեր	
		2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012
1	Ավստրիա	5	5	13	13	9	6	70	69	5	7
2	Բելգիա	3	2	7	6	14	7	74	54	3	0
3	Բուլղարիա	24	8	9	16	12	2	53	68	2	5
4	Կիպրոս	11	10	36	34	15	7	30	37	1	1
5	Չեխիայի Հանրապետ.	7	4	10	7	3	3	74	76	7	9
6	Դանիա	9	8	14	12	10	4	24	17	2	2
7	Էստոնիա	19	14	26	21	0	0	55	46	3	5
8	Ֆինլանդիա	10	10	11	9	8	3	67	73	8	7
9	Ֆրանսիա	7	6	23	20	6	5	52	55	1	2
10	Գերմանիա	4	5	6	6	7	5	81	82	4	4
11	Հունաստան	13	8	22	21	17	9	42	53	10	14
12	Հունգարիա	8	12	13	14	13	10	57	59	13	9
13	Իռլանդիա	6	9	14	25	7	9	30	55	2	3
14	Իտալիա	4	4	16	15	16	12	61	66	5	5
15	Լատվիա	13	9	12	13	3	5	67	69	4	4
16	Լիտվա	14	10	19	17	6	6	55	65	10	5
17	Լյուքսեմբուրգ	6	6	17	16	1	1	68	71	13	8
18	Մալթա	10	14	32	31	8	7	40	42	14	10
19	Նիդերլանդներ	7	7	8	7	8	4	76	81	4	4
20	Լեհաստան	7	7	11	11	8	7	70	70	8	7
21	Պորտուգալիա	9	7	32	18	8	10	46	58	7	9
22	Ռումինիա	22	16	16	14	8	5	43	61	12	8
23	Սլովակիայի Հանրապետ.	11	6	12	12	6	5	64	72	12	9
24	Սլովենիա	16	12	18	19	4	5	59	61	3	3
25	Իսպանիա	4	3	11	7	9	7	73	69	5	15
26	Շվեդիա	10	10	10	11	9	2	68	73	6	8
27	Միացյալ Թագավորույթ.	17	17	14	14	7	7	55	55	9	8
<b>Միջինը</b>		<b>10,2</b>	<b>8,5</b>	<b>16,0</b>	<b>15,1</b>	<b>8,2</b>	<b>5,7</b>	<b>57,6</b>	<b>61,4</b>	<b>6,4</b>	<b>6,3</b>

Աղյուսակ 2.13. Կենտրոնական կառավարության ծախսերը նախկին Խորհրդային Միության հանրապետություններում (%-ով՝ ընդամենը ծախսերի նկատմամբ [53])

Հ/Հ	Երկրները	Ապրանքներ և ծառայություններ		Աշխատուժի վարձատրություն		Տոկոսների վճարում		Սուբսիդիաներ և այլ տրանսֆերտներ		Այլ ծախսեր	
		2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012
1	Հայաստան	53	16	5	22	4	4	34	37	4	20
2	Ադրբեջան	28	11	12	14	2	1	59	35	2	40
3	Բելառուս	14	12	11	11	3	4	68	69	4	4
4	Էստոնիա	19	14	26	21	0	0	55	46	3	5
5	Վրաստան	17	16	11	16	24	4	48	49	-	16
6	Ղազախստան	25	-	9	-	10	-	55	-	1	-
7	Ղրղզստան	40	23	37	26	9	4	14	45	-	1
8	Լատվիա	13	9	12	13	3	5	67	69	4	4
9	Լիտվա	14	10	19	17	6	6	55	65	10	5
10	Մոլդովա	10	21	10	13	22	2	55	54	3	9
11	Ռուսաստանի Դաշնություն	19	11	17	17	9	2	54	66	1	10
12	Տաջիկստան	31	-	22	-	4	-	43	-	0	-
13	Թուրքմենստան	-	-	-	-	-	-	-	-	-	-
14	Ուկրաինա	19	12	15	11	9	4	56	69	1	4
15	Ուզբեկստան	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>Միջինը</b>		<b>23,2</b>	<b>14,1</b>	<b>15,8</b>	<b>16,5</b>	<b>8,1</b>	<b>3,3</b>	<b>51,0</b>	<b>54,9</b>	<b>3,0</b>	<b>10,7</b>

**Աղյուսակ 2.14.** *Կենտրոնական կառավարության եկամուտները Եվրամիության երկրներում, %-ով՝ ընդհանուր եկամուտների նկատմամբ [53]*

Հ/Հ	Երկրները	Հարկեր եկամտի, շահույթի և կապիտալի հավելածի նկատմամբ		Ապրանքների և ծառայությունների հարկեր		Միջազգային առևտրի հարկեր		Այլ հարկեր		Սոցիալական վճարներ		Դրամաշնորհներ և այլ եկամուտներ	
		2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012
1	Ավստրիա	24	24	24	22	0	0	4	5	41	42	7	7
2	Բելգիա	37	35	24	24	-	-	2	1	34	36	2	4
3	Բուլղարիա	11	15	38	44	2	0	1	0	27	22	20	19
4	Կիպրոս	-	26	-	34	-	0	-	4	-	23	-	-
5	Չեխիայի Հանրապետ.	13	14	34	28	2	0	1	1	47	43	3	14
6	Դանիա	37	40	42	36	-	-	6	9	6	3	9	-
7	Էստոնիա	13	9	38	40	0	-	-	-	35	35	14	-
8	Ֆինլանդիա	25	15	32	36	0	-	2	1	29	34	12	14
9	Ֆրանսիա	26	25	25	22	0	0	3	4	41	44	-	-
10	Գերմանիա	17	16	20	24	-	-	-	0	58	55	4	5
11	Հունաստան	22	19	29	29	0	0	4	4	30	32	15	16
12	Հունգարիա	20	16	35	36	3	0	1	3	34	32	8	13
13	Իռլանդիա	39	38	-	31	0	0	4	3	15	18	-	10
14	Իտալիա	35	33	23	22	-	-	5	5	33	36	5	4
15	Լատվիա	12	9	40	35	1	0	0	0	34	28	13	28
16	Լիտվա	11	9	44	36	1	-	0	0	36	38	7	17
17	Լյուքսեմբուրգ	30	30	31	30	-	-	5	3	27	30	7	7
18	Մալթա	29	33	31	33	3	0	3	3	21	19	13	12
19	Նիդերլանդներ	25	24	26	26	-	-	4	1	39	39	6	10
20	Լեհաստան	15	13	33	37	2	0	0	1	36	39	14	10
21	Պորտուգալիա	25	22	32	33	0	0	2	2	30	31	-	12
22	Ռումինիա	9	18	33	40	3	0	1	0	42	28	13	13
23	Սլովակիայի Հանրապետ.	17	10	31	31	1	0	1	1	39	43	13	15
24	Սլովենիա	13	10	34	33	2	0	3	0	39	40	9	16
25	Իսպանիա	27	20	25	10	0	-	0	0	41	53	7	17
26	Շվեդիա	18	10	31	40	0	-	11	17	32	23	9	10
27	Միացյալ Թագավորութ.	38	32	30	30	-	-	8	6	20	21	4	11
<b>Միջինը</b>		<b>22,6</b>	<b>20,9</b>	<b>31,4</b>	<b>31,2</b>	<b>1,1</b>	<b>0,0</b>	<b>3,0</b>	<b>2,8</b>	<b>33,3</b>	<b>32,9</b>	<b>9,3</b>	<b>12,3</b>

**Աղյուսակ 2.15.** Կենտրոնական կառավարության եկամուտները նախկին Խորհրդային Միության հանրապետություններում, %-ով՝ ընդհանուր եկամուտների նկատմամբ [53]

Հ/Հ	Երկրները	Հարկեր եկամտի, շահույթի և կապիտալի հավելաձի նկատմամբ		Ապրանքների և ծառայությունների հարկեր		Միջազգային առևտրի հարկեր		Այլ հարկեր		Սոցիալական վճարներ		Դրամաշնորհներ և այլ եկամուտներ	
		2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012
1	Հայաստան	10	21	43	42	3	4	10	8	13	13	20	11
2	Ադրբեջան	21	14	39	14	8	3	2	1	22	6	7	63
3	Բելառուս	11	3	39	29	5	16	3	2	35	35	7	15
4	Էստոնիա	13	9	38	40	0	-	-	-	35	35	14	-
5	Վրաստան	8	35	57	52	7	1	-	0	21	-	7	11
6	Ղազախստան	24	-	40	-	5	-	7	-	0	-	24	-
7	Ղրղզստան	14	19	61	41	3	12	0	-	-	-	22	27
8	Լատվիա	12	9	40	35	1	0	0	0	34	28	13	28
9	Լիտվա	11	9	44	36	1	-	0	0	36	38	7	17
10	Միլդովա	3	3	45	50	5	4	0	0	23	31	23	13
11	Ռուսաստանի Դաշնություն	5	2	28	21	9	26	0	0	37	21	20	30
12	Տաջիկստան	3	-	55	-	14	-	1	-	20	-	7	-
13	Թուրքմենստան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14	Ուկրաինա	12	12	33	34	4	3	2	0	30	34	19	17
15	Ուզբեկստան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>Միջինը</b>		<b>11,3</b>	<b>12,4</b>	<b>43,2</b>	<b>35,8</b>	<b>5,0</b>	<b>7,7</b>	<b>2,3</b>	<b>1,2</b>	<b>25,5</b>	<b>26,8</b>	<b>14,6</b>	<b>23,2</b>

Եվրամիության երկրներում եկամուտների հարաբերությունը ՀՆԱ-ին 2012 թ. կազմել է 35,0% (աղյուսակ 2.16), այն դեպքում, երբ նախկին Խորհրդային Միության երկրների միջինում այդ ցուցանիշը կազմել է շուրջ 30% (այդ ցուցանիշը ամենացածրը Ղրղզստանում է՝ 23,6%, իսկ Հայաստանում՝ 24,0%) (տե՛ս աղյուսակ 2.17):



**Աղյուսակ 2.16. Կենտրոնական կառավարության ֆինանսները բնութագրող ցուցանիշները Եվրամիության երկրներում [53]**

Ը/Հ	Երկրները	Եկամուտները, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Ծախսերը, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Կանխիկ փողի հավելուրդը կամ պակասուրդը, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Զուտ պարտավորումները, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ				Պարտքի մարումը և տոկոսների վճարումը			
								Ներքին		Արտաքին		Ընդհանուր պարտքը, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Տոկոսները, %-ով՝ Եկամուտների նկատմամբ	
		2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2012	2012		
1	Ավստրիա	37,7	36,9	40,4	39,6	-2	-2,4	-	-	-	-	81,1	6,6		
2	Բելգիա	42,8	42,7	42,9	46,3	0	-3,6	-8,2	2,2	8,9	1,4	92,4	7,4		
3	Բուլղարիա	32,9	29,9	31,6	32,3	-0,4	-0,8	0	-0,3	-1,6	2,5	18,1	2,1		
4	Կիպրոս	-	39,1	61,7	44,2	-	-6,4	-	-	-	-	131	7,8		
5	Չեխիայի Հանրապետ.	29,4	29,7	32,2	34,9	-3,5	-2,5	2,4	3,5	0	1,5	42,9	3,3		
6	Դանիա	35,3	40,3	34,8	44,1	1,6	-3,8	-	-	-	-	48,3	4,1		
7	Էստոնիա	29,4	33,3	29,5	31,3	0,2	-0,1	-	-	-	-	10,5	0,3		
8	Ֆինլանդիա	41,1	38,6	35	40,6	6,8	-1,1	-5,4	0,3	0,9	4,5	52,7	3,4		
9	Ֆրանսիա	43,2	43,6	44,6	48,3	-1,6	-4,7	-	-	-	-	103,8	5,5		
10	Գերմանիա	30,3	29,1	31,8	29,1	1,4	0,1	0	-	0	-	56,9	4,9		
11	Հունաստան	41,9	42,8	44,7	53,9	-3,8	-9,4	-	-	-	-	163,9	11,5		
12	Հունգարիա	38,5	40,8	42	44,3	-2,8	-2,6	-1,7	3,4	2,8	-1,9	86,2	10,1		
13	Իռլանդիա	33,1	32	27,8	39,7	4,9	-8	-	-	-	-	126,9	11,2		
14	Իտալիա	36,9	38,5	38,9	42	-0,8	-3,1	-	-	-	-	131,1	13,4		
15	Լատվիա	26,1	25,5	28,1	28,8	-2,2	0,5	1,5	-1,3	-0,2	2,1	41,1	4,5		
16	Լիտվա	25,9	26,8	29,3	32,1	-3,9	-3,1	1,8	0,1	2	4,2	49,4	6,4		
17	Լյուքսեմբուրգ	39,8	41	33,8	41	5,5	-0,6	0,1	3,5	0	0	20,5	1,1		
18	Մալթա	84,7	37,7	102,1	42,7	-22,3	-3,3	25,6	1,9	2,1	2,7	87,3	7,9		
19	Նիդերլանդներ	40,7	41,6	39,3	45,1	2	-3,6	-	-	-	-	72,6	3,8		
20	Լեհաստան	31,5	30,7	35,6	34,1	-2,8	-3,6	4,9	-1,1	-1,7	4,1	-	7,9		
21	Պորտուգալիա	34,6	35,6	36,7	43,8	-2,6	-7	-0,2	1,8	2	9,3	126,2	11,6		
22	Ռումինիա	25,7	30,7	25,8	33,6	-2	-2,5	0,4	1,7	1,7	3,2	-	5,3		
23	Սլովակիայի Հանրապետ.	35,3	28,2	39,4	34,9	-3,2	-4,6	2,9	6,4	-0,2	4,1	54,3	6,2		

24	Սլովենիա	38,9	38,7	38,8	43,1	-1,1	-3,6	-0,4	-0,3	1,6	4,9	-	4,9
25	Իսպանիա	30,3	21,1	31,4	33,4	-0,5	-9	-3,6	3,5	5,3	6,2	67,6	9,7
26	Շվեդիա	39,6	31,9	35,9	32,1	3,5	-0,4	-	-2,2	-	0,9	36,6	2,1
27	Միացյալ Թագավորույթ.	36,6	38,1	35,8	44,5	3,9	-5,8	-	-	-	-	102,6	7,6
<b>Միջինը</b>		<b>37,01</b>	<b>35,00</b>	<b>38,89</b>	<b>39,25</b>	<b>-0,99</b>	<b>-3,52</b>	<b>1,26</b>	<b>1,44</b>	<b>1,48</b>	<b>3,11</b>	<b>75,17</b>	<b>6,32</b>

**Աղյուսակ 2.17.** Կենտրոնական կառավարության ֆինանսները բնութագրող ցուցանիշները նախկին Խորհրդային Միության հանրապետություններում [53]

Հ/Հ	Երկրները	Եկամուտները, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Ծախսերը, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Կանխիկ փողի հավելուրդը կամ պակասուրդը, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Զուտ պարտավորումները, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ				Պարտքի մարումը և ներքի վճարումը	
		2000	2012	2000	2012	2000	2012	Ներքին	Արտաքին	Ընդհանուր պարտքը, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	Տոկոսները, %-ով՝ եկամուտների նկատմամբ		
		2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2000	2012	2012	2012
1	Հայաստան	17,7	24,1	16,4	22,8	-0,7	-1,4	0,1	0,8	2,4	2,2	-	4,1
2	Ադրբեջան	17,6	41,8	19	22,5	-4,7	6,1	-	0,1	-	-0,2	6,4	0,4
3	Բելառուս	28,7	30,2	25,3	28,7	0,1	0,1	0,3	1,5	-0,5	-0,7	25,4	3,8
4	Էստոնիա	29,4	33,3	29,5	31,3	0,2	-0,1	-	-	-	-	10,5	0,3
5	Վրաստան	10,4	25,8	11,6	25,4	-1,6	-0,5	1,9	0,1	-0,8	2,3	32,6	3,5
6	Ղազախստան	11,3	-	13,7	-	0,1	-	-0,7	-	1,2	-	-	-
7	Ղրղզստան	14,2	23,6	15,8	23,4	-2,9	-6,6	-	0,1	-	5,1	-	3,7
8	Լատվիա	26,1	25,5	28,1	28,8	-2,2	0,5	1,5	-1,3	-0,2	2,1	41,1	4,5
9	Լիտվա	25,9	26,8	29,3	32,1	-3,9	-3,1	1,8	0,1	2	4,2	49,4	6,4
10	Մոլդովա	24,5	31,4	28,9	33,4	-1,5	-2,1	1,5	0,4	-0,2	1,3	24,4	2,3
11	Ռուսաստանի Դաշնություն	31,8	29,6	22,6	26,2	7	2,7	-4,1	0,9	-1,9	0,1	9,4	1,8
12	Տաջիկստան	10,6	-	9	-	-0,8	-	-0,5	-	0,5	-	-	-
13	Թուրքմենստան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14	Ուկրաինա	26,8	37,4	26,9	40,9	-0,6	-4,1	1,5	2,9	-0,3	0,9	33,6	4,9
15	Ուզբեկստան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>Միջինը</b>		<b>21,15</b>	<b>29,95</b>	<b>21,24</b>	<b>28,68</b>	<b>-0,88</b>	<b>-0,77</b>	<b>0,33</b>	<b>0,56</b>	<b>0,22</b>	<b>1,73</b>	<b>25,87</b>	<b>3,25</b>

20-րդ դարի ընթացքում մի շարք երկրներում դաշնային սուբյեկտների և տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների համեմատությամբ աճեցին համապետական ծախսերը:

Եթե 1902 թվականին ԱՄՆ-ում տեղական եկամուտները նահանգների եկամուտներին գերազանցում էին 4,69 անգամ, ապա 1990 թվականին դրանք կազմեցին նահանգների եկամուտների միայն 2/3-ը: Իրենց հերթին աճեցին նաև դաշնային ծախսերը: Եթե 1902 թվականին դրանք կազմում էին նահանգների և տեղական եկամուտների միայն 2/3-ը, ապա դարավերջին դաշնային եկամուտները նահանգային ու տեղական եկամուտները գերազանցում էին շուրջ 1,25 անգամ (տես աղյուսակ 2.18):


**Աղյուսակ 2.18.** *Եկամուտները կառավարման փարքեր մակարդակներում (ԱՄՆ-ի օրինակով) [44]*

Տարիներ	Դաշնային եկամուտների հարաբերակցությունը նահանգների և տեղական եկամուտների հանրագումարին	Տեղական եկամուտների հարաբերակցությունը նահանգների եկամուտներին
1902	0,63	4,69
1913	0,48	4,61
1927	0,58	3,10
1932	0,34	2,37
1940	0,65	1,16
1944	3,83	1,00
1950	1,89	1,09
1960	1,88	1,05
1970	1,52	0,80
1980	1,50	0,61
1990	1,25	0,64

**Հասարակական հատվածի սահմանները:** Վերլուծելով պետական հատվածի գործունեությունը՝ քննարկենք նորմատիվ տեսությունները: Պետական ապարատի ընդլայնման հակառակորդները հանդես են գալիս հոգուտ տնտեսության մեջ պետության նվազագույն ներկայության: Ռ. Նոզիկը իր «Անիշխանություն. պետություն և ուտոպիա» աշխատությունում մատնանշում է, որ պետության գործառույթները պետք է հանգեն միայն բռնությունից, գողությունից և խարդախությունից պաշտպանությանը, իսկ հարկադրանքը պետք է կիրառվի միայն պայմանագրերը խախտած անձանց նկատմամբ: Ըստ Ռ. Նոզիկի՝ մնացած բոլոր գործառույթները վաղ թե ուշ դառնում են անհատի իրավունքների ոտնահարում, այդ պատճառով դրանց կատարումն արդարացված չէ [50]:

Սակայն ոչ բոլոր տնտեսագետներն են կիսում «նվազագույն պետության» այս տեսակետը: Ջ. Բյուկենենը և Գ. Տալլոկը ընդունում են, որ պետությունը կարող է իրականացնել որոշակի միջոցներ (օգտագործելով հարկումը և պետական ծախսերը) Պարետո-արդյունավետության տեսանկյունից առկա վիճակը

բարելավելու նպատակով: Դա ենթադրում է, որ հասարակության ոչ մի անդամի իրավունքները չեն ոտնահարվի, որը հնարավոր է միայն մի դեպքում. գործում է միաձայնության կանոնը, այսինքն՝ կառավարության բոլոր որոշումները միահամուռ կերպով հավանության են արժանանում քաղաքացիների կողմից: Ջ. Բյուկենենը պետության գործունեության արդյունավետության գնահատման համար ներկայացնում էր հետևյալ մոդելը [47, էջ 5–25]:



Գծանկար 2.14. Կառավարության նպատակներին վերաբերող այլ-ընտրանքային մոտեցումները

Երկու մոտեցումների օգտակարությունը ներկայացնենք առանցքներով: Ընդունենք, որ «նվազագույն պետության» պայմաններում (Նոզիկի տեսակետով) անհատների օգտակարության մեծությունը ցույց է տալիս N կետը (տես գծանկար 2.14): Ենթադրենք՝ պետության տրամադրության տակ գտնվող քաղաքական հնարավորությունները կարող են արտացոլվել PT կորի միջոցով, որտեղ NC աղեղի ցանկացած կետ, ըստ Պարետոյի, իրենից ներկայացնում է բարելավում: Տվյալ դեպքում այս ուղղությամբ շարժը նշանակում է և՛ առաջին, և՛ երկրորդ անհատի օգտակարության միաժամանակյա բարելավում: Նկատենք, որ դա անհնար կլիներ, եթե մենք գտնվեինք N' կետում, որից դեպի C կետ շարժը կնշանակեր երկրորդ անհատի օգտակարության նվազում (իսկ դեպի N կետը շարժը կոտնահարեր երկուսի շահերը միաժամանակ):

Սակայն 2.16 գծանկարը թույլ է տալիս վերձանել նաև հասարակության բարեկեցության այլ գործառնություններ՝ ռոուլսյան (տես R կետը) և էգալիտար (տես E կետը): Նշենք, որ էգալիտարիզմը ելնում է այն կանխադրույթից, որ հասարակության բոլոր անդամները պետք է ունենան ոչ միայն այս կամ այն չափով հավասար հնարավորություններ, այլև հավասար արդյունքներ: Դա կարելի է ցույց տալ 45° անկյան տակ կառուցվող ճառագայթի միջոցով: Այդ ճառագայթի հա-

տումը պետության հնարավորությունների հետ տեղի է ունենում E կետում: Այս կետից դեպի ներքև շարժը ցույց է տալիս երկու անհատների օգտակարության նվազումը, իսկ դեպի վերև շարժը, թեև ենթադրում է Պարետո բարելավում, սակայն ձեռք է բերվում այնպիսի ձևով, որ երկրորդ անհատի օգտակարությունն աճում է ավելի բարձր տեմպերով, քան առաջին անհատինը: R կետը ցույց է տալիս Զ. Ռոուլսի աշխատություններում զարգացրած մոտեցումը [32], ըստ որի՝ առաջին հերթին պետք է մաքսիմալացվեն հասարակության առավել անապահով խավերի օգտակարությունը, որից շահում է նաև ամբողջ հասարակությունը: Եթե առաջին անհատը հարուստ է, իսկ երկրորդը՝ աղքատ, ապա ակնհայտ է, որ առավելագույն օգտակարության կհասնեն առավել քիչ ապահովված անհատները՝ վատացնելով հարուստների վիճակը (R կետ): Տվյալ կետում ամբողջությամբ սպառվում են պետության տրամադրության տակ եղած քաղաքական հնարավորությունները: Անկասկած, ռոուլսյան մոտեցումը կարող է հիմք ծառայել պետության էքսպանսիայի համար: Սակայն շուկայական տնտեսության պայմաններում պետական հատվածի սրընթաց աճն ու պետական կարգավորման ուժեղացումը չի կարող անսահման լինել [32]: Շուկայական տնտեսությունը պետության գործառույթների վրա որոշակի սահմանափակումներ է դնում: Պետական հատվածի աճը բերում է տնտեսության արդյունավետության նվազեցմանը, որի մասին գրում էր Վիլֆրեդո Պարետոն:

Անհրաժեշտ է, սակայն, հիշել, որ բյուրոկրատական ապարատի ուռճացումը դժվարացնում է որոշումների ընդունման գործընթացը: Այդ պատճառով շուկայի «ձախողումները» երբեմն կարող են լրացվել նաև պետության «ձախողումներով»: Այդ երևույթը բացատրվում է տնտեսական և քաղաքական մենաշնորհի փոխկապակցվածությամբ, որը հանգեցնում է վարչական ռեսուրսի ի հայտ գալուն:


### ***2.2.1. Տնտեսական և քաղաքական մենաշնորհի փոխադարձ կապը. վարչական ռեսուրս***

«Վարչական ռեսուրս» հասկացությունը աստիճանաբար փոխանցվում է գիտական գրականություն: Այս հայեցակարգն արտացոլում է տնտեսության և քաղաքականության սերտ փոխկապակցվածությունը, այն է՝ տնտեսական գործոնների ազդեցությունը քաղաքական ընտրության վրա և քաղաքական գործոնի հակադարձ ազդեցությունը տնտեսության վրա: Դժբախտաբար, նշված հիմնահարցերն ուսումնասիրված են անբավարար չափով, և աշխատության այս մասում մենք ավելի շատ կներկայացնենք ապագա հետազոտությունների ուղղվածությունը, քան գոյություն ունեցող աշխատանքների ընդհանուր պատկերը:

Վերջին ժամանակներում ամրանում է տնտեսական և քաղաքական մենաշնորհների փոխադարձ կապը (այս հանգամանքը ակնհայտորեն առկա է նաև ՀՀ-ում): 1990-ական թվականներին հետխորհրդային երկրներում ստեղծվեց յուրօրինակ արատավոր շրջան. ժամանակակից շուկան թերզարգացած ժողովրդավարության արդյունք է, իսկ թերզարգացած ժողովրդավարությունն էլ, իր հերթին, ոչ մրցունակ շուկայի հետևանք է:

Մասնագիտական գրականության մեջ վարչական ռեսուրսը մի կողմից՝ կուտակված քաղաքական ռեսուրս է (քաղաքական ռեսուրսի յուրացման հետևանք), իսկ մյուս կողմից՝ քաղաքական գործչի ներուժն է, որը թույլ է տալիս նրան քաղաքական ռեսուրս ստանալ ապագայում (քաղաքական ռեսուրսի ստացման նախադրյալ): Այդ պատճառով կարելի է տարբերակել պոտենցիալ և իրացված վարչական ռեսուրսները [24, էջ 143]:

Վարչական ռեսուրսը ձևավորող գործոնները, որոշակի պայմանականությամբ կարելի է բաժանել տնտեսականի և քաղաքականի (տես գծանկար 2.15):



Գծանկար 2.15. Վարչական ռեսուրս ձևավորող գործոնները


Քաղաքական գործոնները կարող են դիտարկվել որպես արգելք քաղաքական շուկա մտնելու համար, որը սահմանափակում է քաղաքական մրցակցությունը: Իսկ անմրցունակ շուկան իր հերթին դառնում է վարչական ռեսուրսի ձևավորման գործոն [25]:

Վարչական ռեսուրսը, արգելք հանդիսանալով քաղաքական շուկա մտնելու համար, քաղաքական շուկայում մենաշնորհի յուրօրինակ արտացոլում է: Քաղաքական շուկայում մենաշնորհի մասին կարող են վկայել զանազան ազդանշաններ, ասենք, ոչ միայն առաջադրված թեկնածուների քանակը, այլև առաջին հերթին մրցակցային պայքարից առավել նշանակալի թեկնածուին հանելու (չգրանցելու), ինչպես նաև գործադիր իշխանության ղեկավարին հարմար ժամանակ ընտրությունները տեղափոխելու հնարավորությունը:

Օրինակ՝ տարածքային քաղաքական շուկայում մարզպետի (կամ իշխանության կողմից աջակցվող թեկնածուի) մենաշնորհային տիրապետման աստիճանը սահմանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել տարածաշրջանի քաղաքական կողմնորոշումը, քանի որ այս կամ այն թեկնածուի մենաշնորհը ոչ միայն գործադիր իշխանության, այլև տվյալ տարածաշրջանում որևէ կուսակցության ազդեցության արդյունք է: Այդ պատճառով անհրաժեշտ է համակարգել գործադիր իշխանության ղեկավարի օգտին քվեարկածների տեսակարար կշիռը տարածաշրջանի քաղաքական կողմնորոշվածության հետ:

Վարչական ռեսուրսը ոչ միայն հանդես է գալիս որպես քաղաքական շուկայի անկատարության դրսևորում, այլ իր հերթին ծառայում է որպես տնտեսական

մենաշնորհի ամրացման գործոն: Հարկերից ազատելը և այլ արտոնությունների առկայությունը նշանակում է, որ նորմերի դուալիզմը (բաժանումն «օտարների և յուրայինների») տնտեսական և քաղաքական մենաշնորհն արտացոլող ֆենոմենն է: Այն ակնհայտ ցույց է տալիս վարչական ռեսուրսի ազդեցությունը տարածաշրջանի տնտեսական մրցակցության վրա (տե՛ս գծանկար 2.16):



Գծանկար 2.16. Վարչական մենաշնորհ

Վարչական ռեսուրսը կանխորոշող կարևոր տնտեսական գործոններ են համարվում տարածաշրջանի ֆինանսական բարեկեցությունը, պետական հատվածի մակարդակը, ինչպես նաև տեղական օլիգարխների հետ կապը: Որքան բարձր է ֆինանսական բարեկեցության մակարդակը, և միաժամանակ որքան լավ են ապահովված բյուջետային ծախսերը սեփական հարկային ներուժով, ու ինչքան բարձր են սոցիալական վճարները, այնքան մեծ են իշխանության հնարավորությունները վերընտրվելու համար: Վարչական ռեսուրսի մեծությունը սահմանող առավել էական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2.19-ում: Միավորելով նրանց ցուցանիշները՝ կարելի է ստանալ վարչական ռեսուրսի մեծության գնահատականը:

Տեղական օլիգարխների հետ կապը կարող է արտահայտվել նրանց հարկերից ազատելու կամ այլ արտոնություններ տալու միջոցով: Իսկապես, բազմաթիվ են այն երկրները, որտեղ պետական մարմինների աջակցությունն ու հովանավորությունը վայելող ընկերությունները հաճախ ստանում են խոշորամասշտաբ հարկային արտոնություններ, արտոնյալ պատվերներ և ֆինանսական օգնության այլ ձևեր: Նորմերի նմանօրինակ դուալիզմը ոչ միայն «սնում է» վարչական ռեսուրսը, այլև նպաստում է տնտեսական մրցակցության սահմանափակմանը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության գործադիր իշխանության ղեկավարների 1995–1999 թվականների ընտրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանների կեսից ավելիում վարչական ռեսուրսի հնարավորությունների օգտագործման միջոցով գործադիր իշխանության ղեկավարների մոտ կեսը վերընտրվում է իր պաշտոնում [24, էջ 148]:

**Աղյուսակ 2.19. Վարչական ռեսուրսը ձևավորող տնտեսական գործոնները**

<b>1. Բյուջետային ցուցանիշներ</b>	
Համայնքի (մարզի) բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը համայնքի (մարզի) համախառն արդյունքի մեջ	
Բյուջետային ծախսերի ապահովվածությունը սեփական բյուջետային ներուժով	
Մեկ անձին բաժին ընկնող սոցիալական հատկացումների հարաբերակցությունը համայնքի (մարզի) կենսապահովման նվազագույն մակարդակին	
<b>2. Համայնքի (մարզի) ֆինանսական բարեկեցությունը</b>	
Համայնքում (մարզում) գրանցված ավտոմեքենաների քանակի փոփոխությունը (1000 բնակչի հաշվով) նախորդ ընտրությունների համեմատությամբ	
Մեկ շնչի հաշվով համայնքի (մարզի) համախառն արդյունքի հարաբերակցությունը կենսապահովման նվազագույն զամբյուղին	
<b>3. Համայնքի (մարզի) «պերականացման» մակարդակը</b>	
«Արտաքին» տերերի համար աշխատող աշխատակիցներ	1 – Եթե արտաքին (տվյալ (համայնքի) մարզի նկատմամբ) սեփականատերերին պատկանող ձեռնարկություններում զբաղվածների տեսակարար կշիռը մեծ է 10%-ից: 0 – Փոքր է 10%-ից:
Ոչ պետական թերթերի, հեռուստաալիքների առկայությունը	1 – Եթե առկա են ԶԼՄ այնպիսի միջոցներ (բացի կոմունիստական կողմնորոշում ունեցողներից), որոնց միջոցով ազատորեն քննադատվում է տեղական իշխանությունը: 0 – Այլ:
<b>4. Կապը տեղական «օլիգարխների» հետ</b>	
Հարկային և այլ արտոնությունների գոյության փաստերը	2 – Հարկային արտոնություններից օգտվում են միայն որոշ ընկերություններ (համայնքում (մարզում) գոյություն ունի նորմերի դուալիզմ՝ բաժանումն «օտարների և յուրայինների»): 1 – Հարկային արտոնություններից օգտվում է մեծամասնությունը: 0 – Այլ:

Այսպիսով՝ վարչական ռեսուրսների ուսումնասիրությունն ունի կարևոր գործնական նշանակություն: Քաղաքական մենաշնորհի վերլուծությունը դնում է պետության բարեփոխումների խնդիրը՝ քաղաքական շուկայում իրապես մրցակցային պայմաններ ստեղծելու նպատակով: Քաղաքական մենաշնորհի փաստի սահմանումը, նրանց հիմնական պատճառների բացատրությունը նախադրյալներ են ստեղծում մենաշնորհի հաղթահարման և քաղաքական մրցակցության խթանման համար:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### *Առաջին բաժնի վերաբերյալ*

1. Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Երևան, ԱՌՏ 2002:
2. Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան Կորպորատիվ կառավարում. ակնկալիքներ և իրականություն, Եր., «Տիգրան Մեծ», 2003:
3. Ա. Մարկոսյան, Գ. Նազարյան, Դ. Հախվերդյան, Միջազգային տնտեսական հարաբերություններ, Եր., ԵՃՇՊՀ, 2012, Մաս 1:
4. Ա. Մարկոսյան, Է. Մաթևոսյան, Պետությունը և ձեռնարկատիրությունը, Եր., «Ջանգակ-97», 2005:
5. Ա. Մարկոսյան, Պետությունը և շուկան, Գիրք առաջին, Երևան, «Տիգրան Մեծ», 2000:
6. Ա. Մարկոսյան, Տնտեսական մրցակցության պաշտպանությունը որպես ձեռնարկատիրության խթանման հիմք, Аналитический журнал “Рынок капитала в Армении”, N 23-24 (129,130), 2003:
7. Դ. Ջեյմս Գորթնի, Լ. Ռիչարդ Սթրուսի, Դվայթ Ռ. Լի, Թաունի Հ. Ֆերարինի, Ընդհանուր տնտեսագիտություն: Նվազագույն գիտելիքներ հարստության և բարեկեցության մասին, Թարգմ. անգլերենից, Եր., «Տիգրան Մեծ», 2013:
8. Կապիտալիզմի բարոյախոսությունը. Ինչի մասին ձեզ չեն ասի ձեր պրոֆեսորները, Թոմ Գ. Պալմերի խմբագրությամբ, Թարգմանություն անգլերենից, Եր., Էդիթ Պրինստ, 2012:
9. Հ. Մինոյան, Գ. Ղարիբյան, Ա. Մարկոսյան, Կ. Մարքսի, «Կապիտալ»-ը համաշխարհային ֆինանսատնտեսական ձգնաժամի լույսի ներքո, Տարեգիրք 2011, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 89-101:
10. Պոլ Հեյնե, Պիլեր Բոկլեր, Դեյվիդ Պրիչիպոկո, Տնտեսագիտական մտածելակերպ, Գիրք երկրորդ, Եր., Էդիթ Պրինստ, 2011:
11. Ջ. Մ. Քեյնս, Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն, Խմբ. Ա. Մարկոսյան, Ս. Դավոյան, Եր., Տիգրան Մեծ, 2006:
12. Տնտեսագիտության տեսություն, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՏԻ, Տնտեսագետ, Եր., 2000:
13. Автономов В., Модель человека в экономической науке, СПб., Экономическая школа, 1998.
14. Багратян Г. А., Мегээкономика и глобальные экономические проблемы, Учебно-методическое пособие, Ер., Издательство РАУ, 2013.
15. Бьюкенен Дж., Минимальная политизация рыночного порядка. В кн.: От плана к рынку: будущее постсоветских республик, М., Catallaxy, 1993.
16. Бьюкенен Дж., Границы свободы. Между анархией и Левиафаном, В кн.: Бьюкенен Дж., Сочинения.
17. Ванберг В., Теория порядка и конституционная экономика, Вопросы экономики, 1995, N 1.
18. “Государство в меняющемся мире. Отчет о мировом развитии”, М., Прайм-ТАСС, 1997.
19. Дейкич А., “Новая экономика” Клинтона и “профицитные планы” Буша, “США и Канада”, 2001, N10.
20. Илларионов А., Размеры государства и экономический рост, Вопросы экономики, N 9, 2002.
21. Коуз Р., Маяк в экономической теории. В кн.: Коуз Р., Фирма, рынок и право, М., Дело.
22. Локк Дж., Два трактата о правлении, кн. 2. В кн.: Дж. Локк, Сочинения. 3 т., М., Мысль, 1988, ст. 3.
23. Маркс К., Энгельс Ф., Полное собрание сочинений, ст. 1.

24. *Нуреев Р.*, Теория общественного выбора, “Вопросы экономики”, 2003, N5.
25. *Нуреев Р.*, Экономические субъекты постсоветской России, Мир России, 2001.
26. *Норт Д.*, Институты, институциональные изменения функционирования экономики. М., 1997.
27. *Нуреев Р.*, Теория общественного выбора, “Вопросы экономики”, 2002, N8.
28. *Олейник А.*, Тюремная субкультура России: От повседневной жизни до государственной власти, М., ИНФРА, М, 2001.
29. *Олсон М.*, Логика коллективных действий. Общественные блага и теория групп., Фонд экономической инициативы, 1995.
30. *Полтерович В.*, Институциональные ловушки и экономические реформы, М., Российская экономическая школа, 1998.
31. Политическая наука: новые направления, Перев. с англ., М., 1999.
32. *Роулз Дж.*, Теория справедливости, Новосибирск, Издательство Новосибирского университета, 1995.
33. *Смит А.*, Исследование о природе и причинах богатства народов, М., т. 1, 1989, с. 88, 89.
34. *Уильямсон О.*, Экономические институты капитализма: фирмы, рынки, “отношенческая контрактация”, СПб, 1996.
35. *Уильямсон О.*, Поведенческие предпосылки современного экономического анализа, THESIS, 1993, вып. 3.
36. *Швери Р.*, Теория рационального выбора: универсальное средство или экономический империализм?, Вопросы экономики, 1997, N 1.
37. *Эггерстон Т.*, Экономическое поведение и институты, М., 2000.
38. *A. Krueger*, The political Economy of the Rent-Seeking Society, American Economic Review, 1974, vol. 64, N 3.
39. *D. Reisman*, Theories of Collective Action. Downs, Olson and Hirsch, N.Y., St Martin’s Press, 1990.
40. Economic Report the President. Transmitted to the Congress January 2001, Wash., 2001.
41. Federal Reserve Bank of San Francisco Economic Letter, N 2000–34, 10.11.2000.
42. *G. King*, On Political Methodology, Political Analysis, 1991, vol. 2.
43. *H. Simon*, Rational Decision-making in Business Organizations, Les Prix Nobel 1998, Stockholm, 285.
44. Historical statistics of the United States. A.S. Department of Commerce, Bureau of the Census, 1975, 1992.
45. *J. Buchanan*, What Should Economists Do?, Southern Economic Journal, 1964, N 30.
46. *J. Stevens*, The Economics of Collective Choice. Boulder, San Francisco, Westview Press, 1993.
47. *J. Buchanan*, A Hobbesian Interpretation of the Rawlsian Difference Principle, Kyklos, 1976.
48. *K. Boulding*, Economics of Science. N.Y., 1970.
49. *R. Hardin*, Collective Action, The Johns Hopkins University Press, 1991.
50. *R. Nozick*, Anarchy, State and Utopia, Oxford, Basic Books, 1974.
51. Theory of Public Choice: Political Applications of Economics, Ann Arbor: University of Michigan Press, 1972. Theory of Public Choice: Political Applications of Economics. II – Ann Arbor: University of Michigan Press, 1984.
52. World Investment Report 2012, UNCTAD, New York and Geneva, 2012.
53. World Development indicators 2014, WB.

## ԲԱԺԻՆ II. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ

### ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ

### ԷՎՈԼՅՈՒՑԻԱ

#### ԳԼՈՒԽ 3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը 1990 թ. անկախություն ձեռք բերելուց ի վեր նպատակամղվել է ազատական տնտեսության կայացմանը: Հայ ժողովրդի կենսական խնդիրների լուծման առաքելությունը ստանձնած իշխանությունները, արդարացիորեն, որդեգրել են այդ տնտեսակարգին անցումը: Հարցն այն է, թե որքանով է դա հաջողվել:

Տնտեսական հարաբերությունների բնագավառում արմատական վերափոխումների արդյունքների վերլուծման, դրսևորվող միտումների բացահայտման ու գնահատման համար անցած ավելի քան քսանամյա ժամանակահատվածը բավարար է: Անկասկած, ընդհանրական գնահատումներն ու եզրահանգումները կլինեին առավել ընդգրկուն և հիմնավոր, եթե պաշտոնական վիճակագրական տվյալները չլինեին աղճատված: Արմատական վերափոխումներին վերաբերող գնահատականները եթե պայմանականորեն առանձնացնենք նախկին տնտեսական կապերի խզման, պատերազմի, շրջափակման գործոնները, ապա առավել զգայուն են հետևյալ պայմանների նկատմամբ.

- Որքան է մեծացել արտադրողի տնտեսական ինքնուրույնությունը.
- Որքանով է կողմնորոշող եղել պետական կարգավորումը:

Այլ կերպ՝ գնահատումների հարցում կարևորվում են վերափոխումների բուն ռազմավարությունը և այդ համատեքստում՝ կառավարման մեթոդների, գործիքակազմի ընտրությունը և այլն: Այստեղ ամենաէականն այն է, թե ինչպես ենք ձանաչում և կենսագործում տնտեսական օրենքները՝ տնտեսական համակարգի վարքի սահմանափակումները:

Ժամանակակից տնտեսագիտությունը անընդունելի է համարում ռացիոնալ տնտեսվարման ծայրահեղ տեսակետները, երբ մի կողմից՝ առաջարկվում է տնտեսվարող սուբյեկտներին օժտել անսահմանափակ տնտեսական ազատություններով (անխուսափելի են դառնում սոցիալական բևեռացումը և ձգնաժամերը), իսկ մյուս կողմից՝ այդ սուբյեկտների նկատմամբ պետությունը, օգտվելով կարգավորելու արտատնտեսական պարտադրանքի իր բացառիկ իրավունքից, կիրառում է կոշտ քաղաքականություն, ու արդյունքում անխուսափելի են դառնում սոցիալ-տնտեսական կորուստները և դեֆիցիտը:

Տնտեսական օրենքների իմացությամբ ու գործադրմամբ անցումային տնտեսությունները հավասարապես մերժելի են դարձնում այդ ծայրահեղ դրսևորումները՝ դեպի կատարյալ ազատ շուկա և կենտրոնացված պլանավոր-

րում: Ոսկե միջինի որոշումը այս բևեռների միջակայքում լուրջ տնտեսագիտական հիմնախնդիր է: Այս իմաստով խիստ ուսուցողական է հայտնի տնտեսագետ Ա. Մարշալի համեմատությունը, ըստ որի՝ եթե օդապարիկը վեր է բարձրանում, դա չի նշանակում, որ չկա երկրի ձգողականության օրենքը:

Պետության տնտեսական դերի քննարկման շրջանակներում ցույց է տրվելու, որ պետության կարգավորող գործառույթները որոշակի պայմաններում են միայն նպաստելու ազգային տնտեսության արդյունավետության բարձրացմանը՝ ելնելով հայտնի իրողությունից, որ մենաշնորհը, արտաքին ազդակները, հանրային բարիքները, տնտեսական օրգանիզմի ներքին և արտաքին ոչ հավասարակշիռ վիճակներն են այն ուժերը, որոնք տանում են շուկայի «թերացումների», «բացերի», «ձախողումների» առավել արտահայտված դրսևորման:

ՀՀ տնտեսական իրողությունների շրջանակներում համադրվելու են սոցիալական գործընթացների համար նախատեսված եկամուտներն ու ծախսերը: Արդյունքում ցույց կտրվի, որ ՀՀ տնտեսությունում երկարաժամկետ զարգացման ծրագրերի բացակայությունը, տարեկան կտրվածքով դրանց անհաշվելի վաճառությունը, մրցակցության պակասը (մենաշնորհ, պլանային դրսևորումներ), արտաժին ազդակները, հանրային բարիքների արտադրությունը այնպիսի պայմաններ են ստեղծում, որ տնտեսական գործընթացների արդյունավետությունն առավել զիջող դիրքերում է հայտնվում, որի հաղթահարումը պահանջում է տնտեսության պետական կարգավորում:

### 3.1. Պետության տնտեսական գործառույթների էությունը

Տնտեսությունում պետական գործառույթների դասակարգումը հենվում է պետության՝ որպես առանձնակի հասարակական համակարգի հայեցակարգային պատկերացումների վրա: Պետությունը առաջացել և պահպանում է իր գոյությունը նախ և առաջ որոշակի տարածքում բնակվող մարդկանց հասարակական ամբողջականությունը՝ իր քաղաքացիների անօտարելի իրավունքներն ու շահերը պահպանելու համար: Հիերարխիկ կառուցվածքով բնութագրվող հասարակական բարդ համակարգի վերին շերտում պետությունն է՝ ի թիվս այլ հասարակական համակարգերի (բարոյական, իրավական, տնտեսական, մշակութային և այլն): Այդ համատեքստում կարևոր է պարզել պետության գործունեության հիմնական ուղղությունները տնտեսության ոլորտում:

**Առաջին ուղղությունը** տնտեսության գործունեության իրավական շրջանակների ձևավորումն է ու տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի անբաժան մասը կազմող հաստատված կանոնների ապահովումը՝ կապված սեփականության իրավունքի, պայմանագրերի պայմանների պահպանման հետ և այլն: Միաժամանակ պետությունը ստեղծում է հաղորդակցության միջոցներ, նպաստում է դրանց գործունեությանը և տնտեսության գործունեության մասին տեղեկատվությունը հասանելի է դարձնում տնտեսվարող սուբյեկտներին, որով փոքրացվում է անորոշությունը, տնտեսական գործընթացների անկանխատեսելիությունը: Արդի պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ստա-

Նում պետության՝ արտադրական գործունեության շարժունակության ապահովմանն ուղղված գործունեությունը (գբաղվածության ծառայություններ, աշխատանքի ու ֆինդային բորսաներ, ապահովագրության, տեղեկատվական կենտրոններ, լիզինգ և այլն): Ընդ որում՝ պետությունը, ինչպես նշվեց, կամ ինքն է հանդես գալիս այս ամենը նախաձեռնողի դերում, կամ էլ իրագործում է տնտեսության մասնավոր հատվածի կողմից այդ նախաձեռնությունների կողողինացումը, խթանումը, վերահսկումը: Անցյալ դարավերջի երկու տասնամյակներին բնորոշ էր պետության հիմնական գործառույթների ուղղորդումը պայմանների ստեղծման, այլ ոչ թե ծառայությունների իրականացման գործում:

**Երկրորդ ուղղությունը** ձևավորված տնտեսական հարաբերություններին և շուկայի գործունեությանը նպաստելն է: Շուկայի գլխավոր մեխանիզմը մրցակցությունն է, և գործնականում մրցակցության պաշտպանությունը դրսևորվում է շուկայում արտադրողների ու սպառողների ազատ գործունեության ապահովմամբ՝ մենաշնորհի ծայրահեղ դրսևորումների սահմանափակումներով՝ իրավական կարգավորմամբ: Մենաշնորհների գոյությունը խախտում է շուկայական համակարգի ինքնակարգավորումը, մենաշնորհ գների սահմանման արդյունքում հանգեցնում գերշահույթի ստացման: Այս պարագաներում անխուսափելի է դառնում մրցակցության կարգավորումը: Պետության՝ մրցակցային գործընթացների պաշտպանության ձգտումը, տնտեսական համակարգերի էվոլյուցիայի տվյալ փուլում (երբ առկա է այնպիսի տեղեկատվություն, որը հայտնի է միայն առանձին արտադրական կազմակերպություններին, նորամուծությունների դժվար կանխատեսելիությանը և այլն) արդարացված է մրցակցային հավասարակշռության պահպանման տեսանկյունից, քանի որ միայն մրցակցային միջավայրն է հնարավորություն ընձեռում կազմակերպություններին ինքնուրույն ընտրելու օպտիմալ վարքագիծ և դրանով իսկ նպաստելու ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործմանը:

Այս ամենը մեկ անգամ ևս ընդգծում է պետության ներուժի (ինչ խնդիրներ կարող են լուծվել) և կառավարության գործառույթների (ինչ բնագծեր են հաղթահարվելու) համապատասխանեցման գերխնդիրը, որոնց կիրառման ոլորտները բազմազան են: Այսպես՝ մենաշնորհային կազմակերպությունների, այդ թվում՝ բնական մենաշնորհի դիրքով օժտված ընկերությունների գործունեությունը կարող է իրականանալ կառավարման այլընտրանքային մեխանիզմներով: Երբ տվյալ ոլորտի արտադրությունն (իրացումը) ապահովող մենաշնորհների կարգավորումը չի արձագանքում շուկայական համակարգի ինքնակարգավորմանը (թելադրելով իրենց ձեռնտու գինը), ապա անհրաժեշտ է դառնում հակամենաշնորհային պահանջների կանոնակարգումը այն հաշվով, որ խոչընդոտվի անբարեխիղճ գնային քաղաքականությունը, պաշտպանվեն սպառողների շահերը: Հայաստանում այս խնդիրը արդիական է մնում այնպիսի մենաշնորհների համար, ինչպիսիք են գազի փոխադրումները, էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրությունն ու մատակարարումը, էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերը, երկաթուղային, օդանավակայանների, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման և այլ ծառայություններ

ապահովող կազմակերպությունները: Խնդիրն այն է, թե որքանով է պետության մասնակցությունը հիմնավորված, իսկ միջամտության պարագայում ինչ մեթոդներ ու մեխանիզմներ են օգտագործվում: Նկատենք, որ սոցիալ-տնտեսական համակարգերում կառավարումը, ի վերջո, որոշումների կայացման գործընթաց է, որն ընթանում է ֆորմալ և ոչ ֆորմալ կարգավորման կառուցակարգերով: Համապատասխան կառուցվածքային կարգավորումների պակասը անխուսափելիորեն հանգեցնում է հասարակությունում անհավասարության խորացման:

Միաժամանակ, մրցակցության պաշտպանությունը, շուկայական կապերի աջակցումը պետք է զուգորդվի կազմակերպությունների գործունեության արտաքին էֆեկտների (էքստերնալների) չեզոքացմամբ: Դրանում առանձնակի դեր ունի շրջակա միջավայրի աղտոտման կանխմանն ուղղված պետական միջամտությունը (վնասակար արտանետումների սահմանների հաստատում, աղտոտման դիմաց վճարի գանձում և այլն):

Շուկայի արտաքին էֆեկտները ընդգրկում են սոցիալ-տնտեսական երևույթների առավել լայն ներկայակնությունը: Շուկայական տնտեսությունը ներառում է արտադրության բոլոր տարրերը, այդ թվում՝ աշխատանքը, կապիտալը, հողը, փողը, որոնց գործադրմամբ շուկայական տնտեսվարման պայմաններում ձևավորվում են վերոնշյալներին համահունչ շուկաները: Վերջիններիս տարերային գործունեությունը (զուտ շուկայական մեխանիզմների տարերքին ենթարկվելը) կարող են ունենալ հասարակության համար կործանարար հետևանքներ, այդ թվում՝ սոցիալական անպաշտպանվածության, բնական ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման, գործարարությանը բնավ չնպաստող դրամական զանգվածի կտրուկ տատանումների և այլն: Այդ իսկ պատճառով պետությունը ստեղծում է սոցիալական պաշտպանության և ապահովման համապատասխան ինստիտուտներ, գործադրում դրամավարկային քաղաքականության ներազդման գործիքներ և այլն:

### ***3.1.1. Հասարակական հատվածի գործառնությունները***

Զուտ շուկայական տնտեսություն գրեթե գոյություն չունի: Նույնիսկ շուկայական տնտեսության զարգացման սկզբնական փուլերում զգացվել է պետական միջամտության կարիքը: Ժամանակի ընթացքում փոխվել են միջամտության սոսկ նպատակները, մասշտաբները, ձևերն ու մեթոդները: Զարգացած երկրներում պետական և շուկայական կարգավորումը արտաքին և ներքին փոփոխություններին հարմարվող միասնական օրգանիզմ է, որտեղ վճռորոշ է տնտեսության հասարակական հատվածի դերը: Վերջինիս հետ առնչությունները պայմանավորվում են նախ և առաջ նրանով, որ մարդկային զարգացման հիմնական տարրերը ձևավորվում են շուկայի անկատարության, ավանդական «բացերի» տիրույթում: Դրանք զուտ և խառը հասարակական բարիքներն ու ծառայություններն են (օրինապահություն, կրթություն, առողջապահություն և այլն), արտաքին էֆեկտները (սոցիալական, էկոլոգիական, քաղաքական), ոչ լրիվ շուկաները (կապիտալի, աշխատանքի, ապահովագրական և այլն), մար-

դուն սպասարկելուն ուղղված տեղեկատվական անհավասարաչափ բաշխվածության բնագավառները:

Դրանով է պայմանավորված մարդկային ներուժի զարգացման ազգային ռազմավարության և սոցիալական ծրագրերի խրախուսումը պետության և նրա հասարակական հատվածի կողմից: Այն միայն մասամբ է հենվում շուկայի և գործարար նախաձեռնությունների վրա: Հասարակական հատվածի տնտեսագիտության տեսության համաձայն՝ նրա հիմնական գործառույթները ներառում են հետևյալ բաղադրիչները [53].

- իրավական՝ տնտեսության իրավական հիմքերի զարգացում, իրավասությունների բաշխում կառավարության տարբեր մակարդակներում, աջակցություն կառավարմանը քաղաքացիների մասնակցությամբ.
- կայունացման՝ աջակցում դրամաշրջանառությանը, զբաղվածությանը և արտադրության կարգավորում.
- վերաբաշխման՝ շուկայի ազդեցությամբ ձևավորված եկամուտների և հասարակության հարստության անհավասար բաշխվածության մեղմացում:

Մարդկային ներուժի զարգացմանն ուղղված հասարակական հատվածի այդ գործառույթները կարող են իրականացվել պետության ու նրա ինստիտուտների կողմից և որոշ չափով նաև հասարակական հատվածի գործունեության միջոցով: Զարգացած երկրներում իրականացվում են մարդկային զարգացման բազմապրոֆիլ գործառույթներ (օգնություն և բարեգործություն, աջակցում զարգացմանն ու բարեփոխումներին): Ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսավորման աղբյուրներն են դրամաշնորհները, բարեգործական միջոցները և անդամակցության վճարները և այլն: Այդ ինստիտուտները ներկայանում են հետևյալ հիմնական կազմակերպությունների տեսքերով՝

- հասարակական և կրոնական կազմակերպություններ,
- հիմնադրամներ (սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական և այլն),
- ինքնավար ոչ առևտրային կազմակերպություններ,
- սպառողական կոոպերատիվներ,
- հասարակական ինքնագործունեության մարմիններ,
- տեղական հանրության կազմակերպություններ,
- զարգացման գործակալություններ (կազմակերպություններ) և այլն:

Հասարակական բարիքների արտադրության հարցում կառավարությունների գործելակերպին բնորոշ են դառնում նաև առավել սերտ գործընկերային հարաբերությունները տնտեսության մասնավոր հատվածի հետ:

### 3.2. Մարդկային զարգացմանն ուղղված տնտեսական քաղաքականությունը

Մարդկային զարգացումը սերտ փոխկախվածության մեջ է պետության, մասնավորապես՝ հանրային հատվածի գործունեության հետ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդկային ներուժի զարգացման հիմնական տարրերը ձևավորվում են շուկայական տնտեսության այսպես կոչված «ձախողումներ» շուկայի անկատարության տիրույթում: Շուկայի անկատարությունը հիմքեր է ստեղծում պետական (կամ հասարակական) ներգործության համար:

Մարդկային զարգացման վերը նախանշված նպատակները պահանջում են համապատասխան հանրային կազմակերպվածություն և կառավարում: Այս ոլորտում առաջանում են հանրային հատվածի ընդլայնման և ապակենտրոնացման մակարդակի, «մարդկային դեմքով» բյուրոկրատական ապարատի ստեղծման, ինչպես նաև մարդկային զարգացման խնդիրների քննարկման ու դրանց կառավարման ոլորտում ոչ պետական հասարակական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցության հետ կապի խորացման անհրաժեշտություն:

Մարդկային զարգացման խնդիրների առումով հանրային հատվածի արդյունավետ կառավարումը պետք է ապահովի հանրության բոլոր շերտերի քաղաքական, տնտեսական և սոցիալական նախապատվությունները՝ հաշվի առնելով բնակչության ամենամասնապահով, ուստի և ամենախոցելի խմբերի կարծիքը: Արդյունավետ հանրային կառավարմանը բնութագրական է հասարակական գործընթացներին մասնակցությունը, տեղեկատվության հասու լինելը, հանրության առջև հաշվետու լինելը, մարդկային զարգացման խնդիրների գերակայությունը:

Տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ նախ և առաջ պետք է հստակեցնել, թե այդ քաղաքականության միջոցով ինչ նպատակների են ցանկանում հասնել, դրանց հասնելու համար ինչ գործիքներ կան:

Նոբելյան մրցանակակիր, հոլանդացի տնտեսագետ Յան Թինբերգենի «Տնտեսական քաղաքականության տեսությունը» աշխատության մեջ առաջին անգամ կատարվեց պետության տնտեսական քաղաքականության համակողմանի վերլուծություն: Ըստ այդ տեսության՝ պետական մարմիններն առաջին հերթին պետք է ընտրեն տնտեսական քաղաքականության վերջնական նպատակները և ձևակերպեն դրանք, ինչը սովորաբար արվում է հասարակության բարեկեցությունը առավելագույնի հասցնելու տեսանկյունից: Ընտրված նպատակների հիման վրա սահմանվում են նպատակային ցուցանիշներ (օրինակ՝ համընդհանուր զբաղվածության ապահովում, գրոյական սղաճ և այլն): Երկրորդ՝ կառավարությունը գնահատում է, թե ինչ քաղաքական գործիքակազմ ունի իր ձեռքում, և երրորդ՝ պետական գործիչները պետք է ընդունեն տնտեսության որևէ մոդել, որը թույլ կտա շաղկապել նպատակներն ու առկա գործիքակազմը [46, էջ 351]:

Կարևորագույն խնդիր է տնտեսական քաղաքականության իրականացման ժամանակ ընտրված նպատակների և դրանց հասնելու համար կիրառվող գործիքակազմի թվաքանակի միջև համապատասխանությունը: Դիցուք, եթե նպա-



տակները երկուսն են (զբաղվածության մակարդակի բարձրացումը և սղաձի կարգավորումը), ապա գործիքներն էլ պետք է ընտրվեն երկու՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններից:

Տարբեր երկրների կառավարությունների ձեռքում գտնվող գործիքակազմում կան տնտեսության կարգավորման այնպիսի լծակներ, որոնց կիրառումը այս կամ այն ժամանակաշրջանում կախված է երկրի զարգացման մակարդակից, տնտեսական իրավիճակից և իրականացվող քաղաքականությունից: Անգամ շուկայական տնտեսության պայմաններում պետության դերը չի կարող սահմանափակվել միայն կարգավորման գործառնություններով: Պետությունը միշտ էլ հանդես է եկել որպես առանձնահատուկ տնտեսվարող սուբյեկտ՝ այս կամ այն չափով ու ձևերով մասնակցելով հասարակության տնտեսական կյանքին: Տնտեսական կյանքում պետության միջամտության չափին և դրա հետևանքներին գնահատականներ տալու խնդիրը մշտապես եղել և այժմ էլ մնում է խիստ վիճահարույց հարց:

Տնտեսվարողների՝ առավելագույն շահույթ ստանալու անզուսպ ցանկությունները կարող են հաշվի չառնել հանրության պահանջունքները և շահերը, կործանարար ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի համար: Սա է պատճառներից մեկը, որ ստիպում է պետության կարգավորիչ դերի կիրառմամբ «ուղղել» շուկային բնորոշ ծայրահեղությունները՝ դրանք կողմնորոշելով դեպի մարդկանց գոնե նվազագույն պահանջունքների բավարարմանը:

Կարգավորող օղակի դերը կարող է ստանձնել միայն պետությունը (ի դեմս կառավարության), որը հանդես է գալիս որպես ինստիտուտ (համակարգ) և ներկայացնում է ամբողջ հասարակության շահերը՝ իրավունք ունենալով ոչ տնտեսական մեթոդներով միջամտելու տնտեսական հարաբերություններին: Խնդիրն այն է, որ գտնվեն տնտեսության պետական կարգավորման առավել ընդունելի (օպտիմալ) և արդյունավետ չափերն ու ձևերը (մեթոդները), որոնք, չխաթարելով տնտեսության շուկայական բնույթը, միևնույն ժամանակ կապահովեն շուկայական տնտեսության առավելագույն սոցիալական ուղղվածություն:

Շուկայական տնտեսության պայմաններում մարդկային զարգացմանն ուղղված տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներն են՝

- մարդկանց բարեկեցության, կյանքի պայմանների և առողջության վրա շուկայական գործընթացների բացասական ու անխուսափելի հետևանքների ազդեցության նվազեցումը,
- սոցիալական արդարության նախադրյալների, պայմանների ստեղծումը և ապահովումը՝ ներառյալ սոցիալական բարիքներից օգտվելու հնարավորությունների ստեղծումը,
- հանրության այն սոցիալական խմբերի պաշտպանությունը (կամ դրա համար պայմանների ստեղծումը), որոնց դրությունը կոնկրետ տնտեսական միջավայրում կարող է խոցելի դառնալ, մարդկային ստեղծագործական ներուժի զարգացման համար այնպիսի պայմանների ստեղծումը, ինչպիսիք են գիտութամբ զբաղվելը, կրթական, մշակութային, սպորտային ծրագրերը և այլն,
- տնտեսական զարգացման գերակայություններում մարդկային գործոնի հաշվի առնումը:

Տնտեսության պետական կարգավորման ընդհանուր ռազմավարական սկզբունքները հետևյալն են.

- Հավասար պայմաններում նախապատվությունը պետք է տրվի տնտեսվարման շուկայական սկզբունքներին: Գործնականում դա նշանակում է, որ պետությունը պետք է ֆինանսավորի միայն սոցիալական նշանակություն ունեցող այն ոլորտները, որոնք հրապուրիչ չեն մասնավոր գործարարության համար:
- Պետական ձեռնարկատիրությունը ոչ թե մրցակցության մեջ է մտնում մասնավոր ձեռնարկատիրության հետ, այլ միայն օժանդակում է դրա զարգացմանը: Այս սկզբունքը չպահպանելու դեպքում կարող է ստեղծվել իրավիճակ, երբ պետական կազմակերպությունները արհեստականորեն կգերակայեն մասնավորների նկատմամբ:
- Պետության ֆինանսական, վարկավորման և հարկային քաղաքականությունները պետք է նպաստեն տնտեսական աճին և սոցիալական կայունությանը (համերաշխությանը):
- Շուկայական գործընթացներում պետության միջամտությունը առավել արդյունավետ է այն դեպքում, երբ պետությունը շուկայական մեթոդներով է իրականացնում նման միջամտությունը:
- Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը առավելապես կարևորվում է համատնտեսական ձգնաժամերի ժամանակաշրջանում և միջպետական տնտեսական հարաբերությունների կարգավորման ոլորտում (արտահանման-ներմուծման գործարքներում, արտադրության միջազգային մասնագիտացման, տարադրամային քաղաքականության համաձայնեցման դեպքերում):

### ***3.2.1. Շուկայական տնտեսության սոցիալական կարգավորումը***

Սոցիալական ոլորտում պետության կողմից անհրաժեշտ նվազագույն միջոցառումներն են հասարակական բարիքներով բնակչությանը ապահովելը և կարիքավորներին օգնելը:

**Հասարակական բարիքների արտադրությունը:** Դրանք այն բարիքներն են, որոնց արտադրությամբ մասնավոր ընկերությունները չեն կարող կամ չեն ցանկանում զբաղվել, և արդյունքում բնակչությանը դրանցով ապահովելու պարտականությունը ստիպված է կատարել պետությունը: Այդպես է ծագել հասարակական օգտագործման բարիքների և ծառայությունների հատվածը (պաշտպանություն, փոխադրման ենթակառուցյուններ, բնապահպանություն և այլն):

**Կարիքավորների օգնությունը:** Կառավարությունը խրախուսում է հասարակության թույլ պաշտպանված խավերի եկամուտների բարձրացման ծրագրերը և նրանց ապահովում է նոր տնտեսական հնարավորություններով:

Շուկայական տնտեսության պետական կարգավորման հատուկ ուղղություն է առանձին սոցիալական խմբերի պաշտպանությունը: Նման պաշտպանության կարիք ունեն գործնականում բոլոր շուկայական սուբյեկտները,

Ներառյալ ձեռնարկատերերը, որոնց համար պետք է երաշխավորել նրանց սեփականության անձեռնմխելիությունը, եկամուտների ազատ տնօրինման իրավունքը և շուկայական տնտեսության ցանկացած ոլորտում ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորությունը:

Զարգացած շուկայական տնտեսություններում գերապատվելի են համարվում սոցիալական պաշտպանության հետևյալ ուղղությունները.

**Նվազագույն աշխատավարձի երաշխիքը:** Նման երաշխիքն ունի բացառիկ սոցիալական կարևորություն, քանի որ ձևավորում է տնտեսության բոլոր ոլորտներում աշխատավարձի, թոշակների և կենսաթոշակների պարտադիր բազան: Նվազագույն աշխատավարձի չափերի կանոնավոր վերանայումները կազմում են պետական «եկամուտների քաղաքականության» հիմնական տարրը:

**Զբաղվածության ապահովումը:** Շուկայական տնտեսության պայմաններում պետության կարևորագույն գործառույթ է աշխատանքի նկատմամբ ընդունակությունների իրացումը աշխատանքային և ձեռնարկատիրական եկամուտների ստացման նպատակով:

Զբաղվածության ոլորտում կառավարության գլխավոր նպատակը գործազրկության «բնական մակարդակի» պահպանումն է (տնտեսապես ակտիվ բնակչության թվի 3–6%-ից ոչ ավելի): Դրա համար մասնավորապես օգտագործվում են կազմակերպությունների հարկային արտոնությունները, որոնք ավելացնում են աշխատատեղերը, կարգավորվում են օտարերկրյա աշխատողների մուտքը, կազմակերպվում են աշխատանքի բորսաներ և այլն:

**Հաստատուն եկամուտների ինդեքսավորումը:** Խոսքը պետության կողմից սպառողական ապրանքների գների ինֆլյացիայի աճի հետևանքով բնակչության դրամական միջոցների կորստի փոխհատուցման մասին է: Այդպիսի փոխհատուցումը ձեռք է բերվում՝ հաշվարկելով հաստատուն եկամուտները մանրածախ գների ինդեքսին համապատասխան: Սակայն պետք է նշել, որ գների ինդեքսի հաշվարկն իր մեջ չի ընդգրկում բոլոր ապրանքներն ու ծառայությունները, այլ միայն նրանք, որոնք մտնում են նվազագույն սպառողական «զամբյուղի» («նվազագույն կենսամակարդակի») մեջ: Պետական հատվածում հաստատուն եկամուտների անվանական փոխհատուցումը կատարվում է պետական բյուջեի միջոցների, իսկ մասնավոր գործարարության մեջ՝ ձեռնարկատիրական շահույթի հաշվին: Ինդեքսավորման են ենթակա նաև բանկերում բնակչության խնայողությունները, ինչպես նաև պետական պարտատոմսերը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ մինչև 20–րդ դարի 70–ական թվականները, հատկապես եվրոպական երկրներում պետական միջամտությունը կրում էր բավականին համընդհանուր բնույթ: Անհրաժեշտ էր վերականգնել պատերազմի պատճառով քայքայված տնտեսությունը, օգտագործել տնտեսական ներուժը, ուժեղացնել երկրների մրցունակությունը միջազգային ասպարեզում: Հենց այդ ժամանակահատվածում ձևավորվեց զգալի պետական հատված՝ կան տնտեսության առանձին ճյուղերի ազգայնացման (օրինակ՝ Ֆրանսիայում), կան տնտեսության առաջատար ճյուղերում պետական արտադրական կազմակերպությունների ստեղծման միջոցով: Անընդհատ ավելանում էր պետական ծախսերի բաժինը, այդ թվում նաև հարկերը: 20–րդ դարի 70–ական թվական-

ների վերջում այդ ծախսերը Արևմտյան Եվրոպայի երկրներում գերազանցում էին ՀՆԱ-ի կեսը, իսկ ԱՄՆ-ում և Ճապոնիայում հասան շուրջ 35%-ի: Ծախսերի նման ածի պատճառն ամենից առաջ սոցիալական ծախսերի ավելացումն էր (սոցիալական ապահովագրության և կարիքավորների օգնության ժամանակակից համակարգերի ստեղծումը): Ընդունվեցին կարևորագույն օրենքներ, որոնք վերաբերում էին նվազագույն աշխատավարձին, աշխատողների աշխատանքի ընդունմանը և աշխատանքից ազատմանը, կազմակերպություններում տեխնիկայի անվտանգությանը և այլն: Այդ ամբողջը միասին հիմք հանդիսացավ, որպեսզի սոցիալական աջակցության նմանատիպ համակարգեր ունեցող պետությունը կոչվի «բարեկեցության պետություն», իսկ շուկայական տնտեսությունը՝ «սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսություն»:

Զարգացման նշված առանձնահատկությունների հետ միասին պետական միջամտության կարևոր դեր սկսեց խաղալ մակրոտնտեսական քաղաքականությունը, որը կոչված է կայունացնելու տնտեսությունը և հնարավորության սահմաններում այն հեռու պահելու ճգնաժամերից, ինչպես նաև խթանելու տնտեսական աճի և զբաղվածության բարձր տեմպերը:

Սակայն 20-րդ դարի 70-ական թվականների վերջում և 80-ական թվականների սկզբում տնտեսության պետական միջամտության գերապատվություններում և մեթոդներում նկատվեցին լուրջ փոփոխություններ: Այդ ժամանակահատվածում բազմաթիվ զարգացած երկրներում իշխանության եկան պահպանողական կուսակցությունները, որոնք մեծ տեղ էին հատկացնում տնտեսության շուկայական ուժերին (դրանք ի վիճակի էին բարձրացնելու շուկայի մրցակցությունը): Իսկ ինչ պատճառներ էին ընկած տնտեսության պետական միջամտության ռազմավարության փոփոխության հիմքում: Դրանցից հիմնականներն էին՝

- գիտատեխնիկական հեղափոխության նոր փուլը,
- հասարակության սոցիալական կառուցվածքում տեղաշարժերը,
- պետական ապարատի անընդհատ աճող չափերի պատճառով ուժեղացող հակասությունները, որոնք անխուսափելի էին նախորդ ժամանակահատվածում տնտեսության վրա դրանց աճող ազդեցության պատճառով:

Բացի այդ՝ պետական կարգավորման համակարգում նույնպես նկատվեցին թերություններ: Այսպես՝ եթե աճում է տնտեսության վրա դրանց ազդեցությունը, ապա մեծանում է հարկային բեռը, որը բացասաբար է ազդում արտադրական և աշխատանքային խթանների վրա: Եթե ավելանում են պետական ծախսերը, ապա ակտիվանում է շահագրգիռ խմբերի պայքարը սեփական եկամուտների, այսպես կոչված «քաղաքական ռենտայի» համար: Եթե ընդլայնվում է տնտեսության հաճախ վնասաբեր և պակաս արդյունավետ պետական հատվածը, ապա նվազում է երկրի մրցունակությունը:

Սակայն տնտեսական քաղաքականության նոր ռազմավարության ընտրության գլխավոր և իրոք վճռական գործոն դարձավ տնտեսական համակարգի գլոբալացումը ողջ աշխարհում: Հենց գլոբալացումը պահանջեց նոր մոտեցումներ ցուցաբերել տնտեսության կարգավորմանը: Հատկապես արևմտյան երկրների մեծ մասը հայտարարեց «երրորդ ուղու նոր ռազմավարության» մասին, ինչը ենթադրում էր, որ նրանք հրաժարվել են խոշորամասշտաբ ազգայնաց-

ման սոցիալիստական կուռքից, պետական ծախսերի հետագա ավելացումից՝ որպես տնտեսական աճի խթանման հիմնական գործիքի:

Տնտեսության մեջ պետական միջամտության ձևերի և մեթոդների վրա գլոբալացման ազդեցությունը դրսևորվում է երկու հիմնական ուղղություններով: Առաջինը կապված է տնտեսության մրցունակությանը ներկայացվող անընդհատ աճող պահանջների հետ, որի արդյունքում տնտեսական քաղաքականության գերապատվությունը դառնում է երկրի տնտեսության մրցունակության աճի համար համապատասխան պայմանների ստեղծումը: Երկրորդ հիմնական ուղղությունը երկրների փոխկախվածության կտրուկ ուժեղացումն է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ այս կամ այն պետության կառավարության գործողությունները ներկայումս կախված են ոչ միայն ներքին իրադրությունից, այլև համագործակցող և մրցակիցներ համարվող երկրների՝ մրցակիցների կառավարությունների կոնկրետ քայլերից, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների վարքագծից: Ասվածից հետևում է, որ երկրների կառավարությունների ազատության աստիճանը տնտեսության կառավարման գործում նկատելիորեն նվազել և նույն չափով էլ աճել է երկրների միջև տնտեսական քաղաքականության ունիֆիկացման ու համաձայնեցման միջոցառումների անհրաժեշտությունը: Ավելին՝ տեղի են ունենում պետության ինքնիշխան գործառույթների որոշակի սահմանափակումներ, և դրանց համահունչ էլ իշխանության առանձին լիազորություններ փոխանցվում են վերազգային կարգավորման մարմիններին: Օրինակ՝ այդպես է Եվրամիության երկրներում, որն իր մեջ ներկայումս ներառում է Եվրոպայի 28 պետություն:

Եթե ընդհանրացնելու լինենք 20-րդ դարի վերջին երկու տասնամյակում զարգացած երկրներում տեղի ունեցող հիմնական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում նոր հազարամյակի սկզբում, ապա կարող ենք նշել, որ դրանք իրականացվում են չորս հիմնական ոլորտներում:

Օրենսդրության ոլորտում իրականացվում են տարբեր երկրների օրենսդրական համակարգերի աստիճանական մերձեցում. ֆինանսական համակարգերում և արտաքին տնտեսական հարաբերություններում կիրառվում են միասնական կանոններ, կատարվում են հարկերի ունիֆիկացում, սահմանվում են միասնական նորմեր էկոլոգիայի (բնապահպանության), ինչպես նաև աշխատողների՝ աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման ոլորտներում, և միաժամանակ երևան են եկել միասնական պահանջներ արտադրական գործընթացների անվտանգության ու սոցիալական ապահովագրության կանոններում և այլն:

Անցած դարի 70-ական թվականների վերջից զգալիորեն նվազել է պետական հատվածի բաժինը տնտեսության մեջ, և արդյունքում ապապետականացումը և մասնավորեցումը ընդգրկել են պետական սեփականություն հանդիսացող կամ էլ պետական հսկողության ներքո գտնվող ոչ միայն արդյունաբերական կազմակերպությունները, այլև ավանդաբար պետական համարվող այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են էներգետիկան, հեռահաղորդակցությունը, տրանսպորտը և բանկային համակարգը:

Հենց այդ ճյուղերի՝ «բնական մենաշնորհների» համար շուկայական միջամտությունը հատկապես կարևոր էր [2]: Այդ ոլորտների բարեփոխումներ-

րը սկսվեցին հեռահաղորդակցությունից, որը համարվել է ավանդական բնական մենաշնորհ՝ հսկայական նախնական կապիտալի և դրանց ընդլայնման դժվարությունների պատճառով: Գրեթե բոլոր երկրներում բարեփոխումների փաթեթը միատեսակ էր, որը ներառում էր փոստի և հեռահաղորդակցության ոլորտում ձեռնարկատիրության և կառավարման առանձնացումը, շուկաների ազատականացումը (լիբերալացումը), կոնցեսիաների ձևով մասնավորեցումը կամ քվազիմասնավորեցումը: Նման գործընթացի առաջամարտիկը Ճապոնիան էր: Վերջինիս հետևեց Անգլիան, որը 1984 թ. օրենքով մասնավորեցրեց «Բրիթիշ Տելեկոմ»-ը, իսկ 1996 թ. մասնավորեցրեց նաև «Դոյչե Տելեկոմ»-ը (թեև մինչ օրս այդ ընկերության բաժնետոմսերի մի մասը պետության ձեռքին է):

Մասնավորեցվեցին երկաթուղիները, և որպես օրինակ՝ Ճապոնիայում այդ գործընթացն իրականացվեց վարչական-ֆինանսական բարեփոխումների ընթացքում: Նոյնիսկ ԱՄՆ-ում, որտեղ պետական ոլորտի բաժինը երբեք մեծ չի եղել, մասնավորեցվեցին պետական երկաթուղիները, օդանավակայանները, որոշ էլեկտրակայաններ և նույնիսկ բանտերում առանձին ծառայություններ (շենքերի օգտագործում և պահպանություն, իրավաբանական ծառայությունների մատուցում, սննդի մատակարարում և կազմակերպում և այլն):

Բնական մենաշնորհների մասնավորեցումն ունի կարևոր նշանակություն այդ ոլորտների հետագա զարգացման համար: Մասնավորեցումը բացում է կապիտալի շուկաները և խրախուսում է մրցակցությունը էլեկտրաէներգիայի, գազի արտադրության և սպառման, ինչպես նաև տրանսպորտային փոխադրումների ոլորտներում: Ֆրանսիայում, օրինակ, այնպիսի մենաշնորհները, ինչպիսիք են «Էլեկտրիսիտե դե Ֆրանս»-ը և «Գազ դե Ֆրանս»-ը, ձևականորեն մնում են պետության սեփականությունը, սակայն դրանց առանձին կառուցվածքներ ստացել են լրիվ առևտրային ինքնուրույնություն: Այսպես, նոր օրենքի համաձայն, «Գազ դե Ֆրանս»-ը կորցրել է երկրի ներսում բնական գազի փոխադրման և իրացման մենաշնորհը: Ֆրանսիական շուկա կարող են մտնել գազի այլ ընկերություններ, որոնք սպառողին կառաջարկեն ավելի ցածր գներ: Դա արվում է այն նպատակով, որպեսզի հավասարեցվեն բոլորի հնարավորությունները, և որոնց արդյունքում շուկայում կարող է հաղթել նա, ով կլինի լավագույնն ու ուժեղը:

Գործընկերային հարաբերությունների ընդլայնման ոլորտում պետությունը, կրճատելով իր ուղղակի գործունեությունը, զարգացնում է ավելի սերտ հարաբերություններ մասնավոր հատվածի հետ՝ հիմնականում «հասարակական բարիքների» արտադրության հատվածում:

Բազմաթիվ մասնագետների կարծիքով պետական ծախսերի մակարդակը բարձր է, և դրանք պետք է նվազեցվեն, այսինքն՝ խոսքը բյուջետային համակարգերի բարեփոխումների մասին է: Մի շարք երկրներում սկսվել են այդ բարեփոխումները, որոնց հիմնական նպատակը պետական ծախսերի և հարկերի կրճատելն է (դրանք հասել են իրենց վերին սահմանին), որոնք միայն «խեղձացնում են» տնտեսական ակտիվությունը, իսկ կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մղում են դեպի սովետային տնտեսություն:

Սակայն եթե հարկային համակարգերի բարեփոխումների ոլորտում արդեն նշմարվում են որոշակի ձեռքբերումներ, ապա պետական ծախսերի էական իջեցման մասին (ՀՆԱ-ի մեջ) խոսելը դեռ վաղ է: Ասվածի ապացույցը աղյուսակ 3.1-ում բերված տվյալներն են, որոնք արտացոլում են պետական ծախսերը:

**Աղյուսակ 3.1. Զարգացած և բարձր, միջին, ցածր եկամուտներ ունեցող երկրներում պետական ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ՝ %-ներով\***

Երկիրը	1980	1990	1999	2000	2009	2010	2011	2012
Գերմանիա	21,0	19,2	19,2	19,0	20,0	19,5	19,1	19,2
Ֆրանսիա	21,4	21,7	23,1	22,9	24,8	24,9	24,5	24,7
Նորվեգիա	19,2	21,2	21,6	19,3	22,3	21,9	21,5	21,3
Միացյալ Թագավորություն	21,8	19,6	17,9	18,3	23,2	22,6	21,9	21,8
ԱՄՆ	15,9	15,8	14,0	14,0	16,9	16,8	16,2	15,7
Ռուսաստան	-	20,8	14,6	15,1	20,8	18,7	17,9	18,6
Չինաստան	14,9	14,1	15,3	15,8	12,7	12,3	11,9	12,1
Ճապոնիա	14,1	13,3	16,5	16,9	19,9	19,7	20,4	20,5
Սինգապուր	9,6	9,5	9,9	10,8	10,5	10,4	10,2	9,7
Կորեա	12,4	11,8	12,3	11,9	15,9	15,2	15,3	15,8
Ավստրալիա	17,1	17,1	17,8	17,6	17,5	18,0	17,9	17,8
Ավստրիա	18,2	18,6	-	-	-	-	18,9	19,0
Շվեդիա	28,7	26,5	26,7	25,8	27,7	26,6	26,5	26,9
Շվեյցարիա	9,8	11,3	11,1	11,1	11,2	10,9	11,0	11,1
Իտալիա	16,9	20,0	18,1	18,3	21,4	21,1	20,4	20,1
Բելգիա	22,8	19,7	21,4	21,3	24,7	24,2	24,4	24,9
Կանադա	21,3	22,3	18,9	18,6	22,1	21,8	21,4	21,4
Նոր Զելանդիա	20,3	18,8	18,0	17,2	20,3	20,0	20,1	20,0
Հոլանդիա	24,5	23,0	22,2	21,9	28,6	28,4	27,9	28,5
Բարձր եկամուտներ ունեցող երկրներ	17,3	17,4	16,8	16,8	19,5	19,2	18,9	18,7
Միջին եկամուտներ ունեցող երկրներ	12,8	13,1	14,2	14,1	14,4	14,1	13,9	14,2
Ցածր եկամուտներ ունեցող երկրներ	-	10,9	10,1	10,3	10,8	10,8	10,9	10,7

\* Կազմվել է [54] կայքի տվյալների հիման վրա:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում պետական ծախսերի բաժինը ՀՆԱ-ում իջեցնել դեռևս չի հաջողվել (հատկապես Շվեդիայում այն շարունակում է մնալ բարձր): Ներկայումս զարգացած երկրների բյուջետային ծախսերի 35–40 %-ը բաժին է ընկնում սոցիալական ապահովությանը: Ահա թե ինչու կարևորվում են սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության ոլորտներում բարեփոխումները, որոնք հնարավորություն կտան այդ ծախսերի մի մասը թողնելու բնակչությանը: Ավելին՝ նշված ոլորտներում բարեփոխումները համարվում են մի շարք երկրների կառավարությունների տնտեսական քաղաքականության կարևորագույն հիմնախնդիրը:

Ինչպես ցույց է տալիս վերջին երեք տասնամյակի և մեր օրերի աշխարհի երկրների փորձը, պետությունը հեռանում է անմիջական արտադրողի կամ կառավարչի դերից՝ այդ գործառույթները փոխանցելով մասնավորին՝ տնտեսության շուկայական հատվածին: Պետությունը զբաղվում է միայն այն գործունեության տեսակներով, որոնք կապված են երկրի պաշտպանության, անհատի սոցիալական վիճակի պահպանման և բարելավման, ֆինանսավորման ու հսկողության հետ (տես աղյուսակներ 3.2 և 3.3): Միևնույն ժամանակ ի հայտ են եկել պետական գործունեության այնպիսի նոր տեսակներ, որոնք ուղղված են «հայրենական» վերազգային կորպորացիաների առաջխաղացմանը, ուժեղանում են հովանավորչության այն ձևերը, ինչպիսիք են արտոնագրումը, մտավոր սեփականության պաշտպանությունը, սեփական մտավոր կապիտալի ներգրավումը և «աճը»:



Աղյուսակ 3.2. Կենտրոնական կառավարությունների ծախսերի բաժինը ՀՆԱ-ում, %-ներով\*

Ոլորտները	1983-1990				2010				2011				2012			
	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ
Սարերի թիվը	9,7	6	4,2	9	20,7	12,3	11,4	17,8	14,85	7,4	7,3	12,58	20,3	12,3	11,1	17,5
Ծախսերն՝ ըստ ոլորտների	4,4	2,0	2,8	4,0	2,9	1,9	1,8	2,6	2,8	1,8	1,9	2,5	2,9	1,8	1,7	2,4
Պաշտպանություն	1,6	2,8	1,0	1,7	5,5	4,8	4,1	4,9	-	-	-	-	5,2	4,8	4,1	4,9
Կրթություն	3,7	1,2	0,4	3,3	12,3	5,6	5,5	10,3	12,05	5,6	5,4	10,08	12,2	5,7	5,3	10,2
Առողջապահություն	26	36	18	80	225	225	225	225	225	225	225	225	225	225	225	225
Երկրների թիվը																

\* Կազմվել է [54] կայքի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 3.3. Կենտրոնական կառավարությունների ծախսերի բաժինը ընդհանուր ծախսերում %-ներով\*

Ոլորտները	1983-1990				2010				2011				2012			
	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ	Միջոցառումներ
Սարերի թիվը	31,2	24,6	22,9	30,3	26,6	0	19,4	9,3	26,5	0	10,06	9,2	38,9	15,6	16,1	22,6
Ծախսերն ըստ ոլորտների	14,2	8,2	15,3	13,6	9,5	-	10,2	9,3	9,3	-	10,06	9,2	9,2	-	-	9,1
Պաշտպանություն	5,0	11,4	5,4	5,7	-	-	-	-	-	-	-	-	12,5	15,6	16,1	13,5
Կրթություն	12,0	5,0	2,2	11,0	17,1	-	9,2	-	17,2	-	-	-	17,2	-	-	-
Առողջապահություն	26	36	18	80	225	225	225	225	225	225	225	225	225	225	225	225
Երկրների թիվը																

\* Աղբյուրը՝ կազմվել է [54] կայքի տվյալների հիման վրա:

Արդի հետինդուստրիալ տնտեսության պայմաններում վերջինիս տրվում է հատուկ նշանակություն: Կրթության, առողջապահության, կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսերի ավելացումը, ինչպես նաև փոքր և միջին գործարարության աջակցությունը դիտարկվում են ոչ միայն պարզապես պետության ավանդ սոցիալական ոլորտի զարգացման գործում, այլև, ամենից առաջ, որպես պայման՝ բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը հիմնականում բարձր տեխնոլոգիաների ճյուղերի զարգացման և ամբողջությամբ տնտեսական աճի խթանման միջոցով: Այդ մասին են վկայում աղյուսակ 3.3-ում բերված տվյալները:

Զարգացած երկրների համեմատությամբ հետհամայնավարական երկրների հնարավորությունները քաղաքացու սոցիալական պաշտպանվածության ապահովման տեսանկյունից ավելի սահմանափակ են (տե՛ս աղյուսակ 3.4-ը):

Թեև Հայաստանի Հանրապետության տնտեսությունն ունի իր առանձնահատկությունները, որոնցից հիմնականն այն է, որ նա «անցումային հասակում» է և կարևորագույն սոցիալ-տնտեսական ցուցանիշներով հետ է մնում զարգացած երկրներից, սակայն երկիրը դանդաղորեն ներքաշվում է արդի գլոբալացված աշխարհի մեջ: Սակայն հանրապետությունն այդ գործընթացից ավելի շատ դժվարություններ է ունեցել, քան ակնկալիքներ: Հենց այդ իրողությունը Հայաստանի Հանրապետությունից պահանջում է հաշվենկատորեն մասնակցել աշխարհի տնտեսական համակարգի հետագա ձևափոխմանը: Ուստի այդ առումով ամենից առաջ անհրաժեշտ է վերակառուցել պետական միջամտության մեխանիզմները՝ բարձրացնելով դրանց արդյունավետությունը. այսպիսին են արդի գլոբալ տնտեսության պահանջները: Այդ գործում զարգացած երկրների փորձը մեզ համար ունի որոշակի հետաքրքրություն:

Աղյուսակ 3.4. Մի շարք երկրներում առողջապահության և կրթության պետական ծախսերը 1990–2012 թթ. ՀՆԱ-ի նկատմամբ՝ %-ներով\*

Երկիրը	Առողջապահություն					Կրթություն				
	1990–1998	2009	2010	2011	2012	1990–1998	2009	2010	2011	2012
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Գերմանիա	10,7	11,7	11,5	11,3	11,3	4,6	5,05	5,08	-	-
Ֆրանսիա	11,0	11,7	11,7	11,6	11,7	5,6	5,9	5,8	-	-
Իտալիա	8,9	9,4	9,4	9,2	9,2	4,5	4,7	4,5	-	6,1
Միացյալ Թագավորություն	8,9	9,9	9,5	9,4	9,4	5,3	5,5	6,2	-	-
ԱՄՆ	6,5	17,7	17,6	17,7	17,9	5,4	5,2	5,4	-	-
Ռուսաստան	5,1	6,2	6,3	6,1	6,2	4,1	-	-	-	-
Բելառուս	5,9	6,1	8,8	8,9	8,1	-	4,5	5,4	4,8	5,1
Իրան	5,2	5,0	4,5	4,6	4,2	4,8	4,4	4,2	4,0	3,7

Կանադա	10,2	11,4	11,4	10,9	10,9	4,8	5,0	5,5	5,3	-
Նորվեգիա	9,0	10,0	10,2	10,3	10,3	6,4	7,2	6,9	-	-
Նոր Զելանդիա	9,3	10,0	10,2	10,3	10,3	5,6	6,4	7,1	7,08	7,4
Հոլանդիա	10,9	11,8	12,0	11,9	12,4	5,5	5,9	5,9	5,9	
Ռուանդա	10,1	9,9	10,8	10,9	10,7	3,5	-	4,7	4,7	4,8
Սվազիլենդ	8,2	8,4	8,4	8,3	8,5	7,5	7,05	6,9	8,2	-
Տիմուր-Լեստե	8,6	6,7	5,6	4,6	4,3	8,1	11,3	10,5	9,4	-
Թունիս	5,6	4,2	6,6	7,0	7,0	6,3	6,5	6,2	-	6,1
Ուգանդա	8,8	9,3	9,2	9,3	7,9	-	3,2	2,6	3,2	3,3
Արգենտինա	8,3	9,4	8,2	7,8	8,4	5,3	6,02	5,8	6,2	-
Բուրունդի	7,8	6,9	8,3	8,9	8,1	5,2	6,3	6,8	5,9	5,8
Կենտրոնական Աֆրիկայի Հանր.	4,3	3,6	3,8	3,9	3,8	1,3	1,3	1,2	1,2	-

\* Կազմվել է [54] կայքի տվյալների հիման վրա:

Ինչ պետք է ակնկալենք մեր պետությունից. ամենից առաջ՝ պետության հիմնական գործառնություն հետևողական կողմնորոշում, որը նա պետք է կատարի շուկայական տնտեսության մեջ՝ իրականացնելով կոշտ բյուջետային սահմանափակումների կուրս, հարկային բարեփոխումների շարունակում, կայուն աճի ապահովման նպատակով դրամավարկային մեխանիզմների օգտագործում: Եվս մեկ էական իրավական կողմ, ըստ որի՝ անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ ամրագրել և պաշտպանել սեփականության իրավունքը, ձեռներեցության ազատությունը, պայմանագրերի կատարումը և դրանց կատարման պատասխանատվության պահպանումը: Հատկապես կարևոր է երկրի ներքին օրենսդրության համապատասխանեցման ապահովումը՝ կապված համաշխարհային առևտրի և ֆինանսական հարաբերությունները կարգավորող օրենքների հետ:

Սոցիալական քաղաքականության ոլորտում անհրաժեշտ է բարեփոխել կենսաթոշակային համակարգը, ինչպես նաև հասնել «մարդկային կապիտալում» ներդրումների բոլոր ձևերով ավելացման (տե՛ս աղյուսակներ 3.5–3.7):

**Աղյուսակ 3.5.** Հարավկովկասյան երկրների պեղական բյուջեներում սոցիալական պաշարայնացման մասին տվյալները (ըստ 1995-2012 թթ.)

	1995		1997		1998		1999		2000		1995-2000 միջինը		
	մլն ԱՄՆ դոլար	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	մլն ԱՄՆ դոլար	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	մլն ԱՄՆ դոլար	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	մլն ԱՄՆ դոլար	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	մլն ԱՄՆ դոլար	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	մլն ԱՄՆ դոլար	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	
Ընդամենը պետական բյուջեի ծախսեր, որից՝	Հայաստան	309,3	24,0	311,0	19,1	463,2	24,4	503,2	27,3	471,5	24,6	411,6	23,9
	Ադրբեջան	484,9	20,0	863,4	22,4	682,8	15,3	791,0	17,2	853,7	16,2	735,2	18,2
	Վրաստան	364,2	12,7	716,3	14,5	732,1	20,2	501,7	17,7	575,0	19,0	577,9	16,8
Կրթություն	Հայաստան	33,4	2,6	32,3	2,0	39,5	2,1	43,9	2,4	57,4	3,0	41,3	2,4
	Ադրբեջան	85,1	3,5	142,7	3,7	150,3	3,4	193,1	4,2	203,2	3,9	154,9	3,7
	Վրաստան	26,5	0,9	87,0	1,8	82,6	2,3	59,9	2,1	65,9	2,2	64,4	1,9
Առողջապահություն	Հայաստան	23,8	1,8	19,4	1,2	27,1	1,4	25,2	1,4	18,3	1,0	22,8	1,4
	Ադրբեջան	33,6	1,4	48,9	1,3	40,2	0,9	45,2	1,0	45,8	0,9	42,7	1,1
	Վրաստան	13,1	0,5	30,4	0,6	30,4	0,8	16,4	0,6	19,3	0,6	21,9	0,6
Ընդամենը պետական բյուջեի ծախսեր, որից՝	Հայաստան	1192	10,2	1153	13,3	1210	13,1	1311	12,9	1289	12,9	1231	12,5
	Ադրբեջան	4150	8,5	4926	11,1	5756	10,9	6679	10,1	6883	10,3	5679	10,2
	Վրաստան	3312	2,9	2633	24,5	2452	21,1	2627	18,2	2790	17,7	2763	16,9
Կրթություն	Հայաստան	374	3,2	329	3,8	296	3,2	315	3,1	330	3,3	329	3,3
	Ադրբեջան	1171	2,4	1420	3,2	1479	2,8	1587	2,4	-	-	1131	2,2
	Վրաստան	3312	2,9	344	3,2	-	-	390	2,7	299	1,9	-	-
Առողջապահություն	Հայաստան	83*	3,8	77	4,5	84	4,6	97	3,7	101	4,5	88,4	4,22
		148		135		142		127		150		104,4	
	Ադրբեջան	127	4,4	223	5,8	242	5,3	244	5	266	5,4	220,4	5,18
Վրաստան		240		288		310		359		398		319	
		158	8,9	160	10,2	161	10	140	9,4	145	9,4	152,8	9,58
	260		249		266		309		333		283,4		

\* Համարիչում՝ մլն ԱՄՆ դոլար, հայտարարում՝ 1 շնչի հաշվով ԱՄՆ դոլար  
Կազմվել է ըստ [50 և 54] աղբյուրների:

**Աղյուսակ 3.6.** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերը սոցիալական պաշտպանվածության ապահովմանն ուղղված մի շարք ոլորտներում (տարեկան) [24, 12, էջ 158]

	մլն դրամ				
	1997	1998	1999	2000	2001
1. Կրթություն և գիտություն	15465,5	19730,9	22071,2	28596,3	27068,5
2. Առողջապահություն	9540,8	13687,2	13605,5	9846,4	15745,6
3. Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն	12614,4	19957,6	26100,8	21952,5	26108,5
4. Մշակույթ, սպորտ և կրոն	3194,0	4079,6	3702,8	3703,8	5322,6
<b>Ընդամենը՝ տվյալ ոլորտում</b>	<b>40814,7</b>	<b>57455,3</b>	<b>65480,3</b>	<b>64099,0</b>	<b>74245,2</b>
	<b>Ընդամենի նկատմամբ՝ %-ներով</b>				
	<b>1997</b>	<b>1998</b>	<b>1999</b>	<b>2000</b>	<b>2001</b>
1. Կրթություն և գիտություն	9,4	9,6	9,1	12,8	11,1
2. Առողջապահություն	5,8	6,7	5,6	4,4	6,4
3. Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն	7,7	9,8	10,8	9,8	10,7
4. Մշակույթ, սպորտ և կրոն	1,9	2,0	1,5	1,7	2,2
<b>Ընդամենը՝ տվյալ ոլորտներում</b>	<b>24,8</b>	<b>28,1</b>	<b>27,0</b>	<b>28,7</b>	<b>30,4</b>
	<b>ՀՆԱ-ի նկատմամբ՝ %-ներով</b>				
	<b>1997</b>	<b>1998</b>	<b>1999</b>	<b>2000</b>	<b>2001</b>
1. Կրթություն և գիտություն	1,9	2,1	2,2	2,8	2,9
2. Առողջապահություն	1,2	1,4	1,4	1,0	1,6
3. Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն	1,6	2,1	2,6	2,1	2,5
4. Մշակույթ, սպորտ և կրոն	0,4	0,4	0,4	0,4	0,5
<b>Ընդամենը՝ տվյալ ոլորտներում</b>	<b>5,1</b>	<b>6,0</b>	<b>6,6</b>	<b>6,3</b>	<b>7,5</b>

**Աղյուսակ 3.7. ՀՀ պեդագոգիկ բյուջեի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման (2008–2012) (մլն դրամ) [13, էջ 391–392]**

	2008	2009	2010	2011	2012
1	2	3	4	5	6
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>810574,5</b>	<b>929108,6</b>	<b>954316,5</b>	<b>986509,2</b>	<b>1006102,2</b>
<i>Այդ թվում՝</i>					
1. ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	104832,6	113006,6	143280,5	154107,9	160488,8
2. պաշտպանություն	121159,6	130211,5	147555,9	145491,0	152766,8
3. հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	61706,5	69463,8	67443,1	72517,1	76668,6
4. տնտեսական հարաբերություններ	89445,6	133835,1	112451,7	83955,7	71086,7
5. շրջակա միջավայրի պաշտպանություն	3011,5	3913,3	4926,1	6630,4	7032,2
6. բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	14039,4	21105,9	42817,9	43848,5	14303,5
7. առողջապահություն	49972,5	56168,8	56130,8	63312,4	64498,9
8. հանգիստ, մշակույթ և կրոն	16021,9	16297,7	16102,6	17581,4	22821,8
9. կրթություն	103530,8	107529,0	97790,1	106085,0	102783,5
10. սոցիալական պաշտպանություն	212559,1	243634,1	244168,5	256176,3	291731,6
11. հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	34295,1	33943,0	21649,4	36803,5	41919,8

**Ընդամենի նկատմամբ (%)**

	2008	2009	2010	2011	2012
1	2	3	4	5	6
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>Այդ թվում՝</i>					
1. ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	12,9	12,2	15,0	15,6	16,0
2. պաշտպանություն	14,9	14,0	15,5	14,7	15,2
3. հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	7,6	7,5	7,1	7,4	7,6
4. տնտեսական հարաբերություններ	11,0	14,4	11,8	8,5	7,1
5. շրջակա միջավայրի պաշտպանություն	0,4	0,4	0,5	0,7	0,7

6. բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	1,7	2,3	4,5	4,4	1,4
7. առողջապահություն	6,2	6,0	5,9	6,4	6,4
8. հանգիստ, մշակույթ և կրոն	2,0	1,8	1,7	1,8	2,3
9. կրթություն	12,8	11,6	10,2	10,8	10,2
10. սոցիալական պաշտպանություն	26,2	26,2	25,6	26,0	29,0
11. հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	4,2	3,7	2,3	3,7	4,2

**ՀՆԱ-ի նկատմամբ (%)**

	2008	2009	2010	2011	2012
1	2	3	4	5	6
<b>Ընդամենը ծախսեր</b>	<b>22,7</b>	<b>29,6</b>	<b>27,6</b>	<b>26,1</b>	<b>25,2</b>
<i>Այդ թվում՝</i>					
1. ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	2,9	3,6	4,1	4,1	4,0
2. պաշտպանություն	3,4	4,1	4,3	3,9	3,8
3. հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	1,7	2,2	1,9	1,9	1,9
4. տնտեսական հարաբերություններ	2,5	4,3	3,2	2,2	1,8
5. շրջակա միջավայրի պաշտպանություն	0,1	0,1	0,1	0,2	0,2
6. բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	0,4	0,7	1,2	1,2	0,4
7. առողջապահություն	1,4	1,8	1,6	1,7	1,6
8. հանգիստ, մշակույթ և կրոն	0,4	0,5	0,5	0,5	0,6
9. կրթություն	2,9	3,4	2,8	2,8	2,6
10. սոցիալական պաշտպանություն	6,0	7,8	7,1	6,8	7,3
11. հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	1,0	1,1	0,6	1,0	1,0

**Առողջապահություն:** Հայաստանի առողջապահական համակարգի բարեփոխումներն ընթանում են չորս ուղղություններով՝ համակարգի կազմակերպական կառուցվածք և կառավարում, ցանցի կառուցվածք, առողջապահության ֆինանսավորում և բժշկական կրթություն [36, էջ 78]: Համակարգի կառավարման բարեփոխումը իրականացվում է երկու ուղղություններով՝ ապակենտրոնացում և մի շարք գործառույթների կենտրոնացում պետության ձեռքում [21]: Առողջապահական համակարգի ապակենտրոնացումը ենթադրում է

տվյալ ոլորտում մասնավոր հատվածի ստեղծում, որը հնարավորություն կտա մեծացնելու բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպությունների տնտեսական և ֆինանսական ինքնուրույնությունը, սեփական ներդրումներ կատարելու, բարձրացնելու ներդրումային ակտիվությունը այս ոլորտում, իսկ պետական բյուջեի համար՝ թեթևացնելու համակարգի պահպանման բեռը, ավելացնելու մուտքերը վճարովի ծառայությունների մատուցման և հարկերի հաշվին, հստակեցնելու ստացվող վճարումները:

Առողջապահության ոլորտի կառավարման արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ներկայումս գոյություն ունեն առողջապահական համակարգի կազմակերպման կամ ծառայությունների իրականացման չորս հիմնական մոդելներ. «մոնոլիտ՝ ամբողջովին պետական», «մրցակցային-պետական», «ապահովագրական» և «մասնավոր»: Դրանք միմյանցից տարբերվում են ֆինանսավորման աղբյուրներով, ծառայություններ մատուցողներով, հաճախորդների (հիվանդների) ընտրության հնարավորություններով և քաղաքականության ազդեցության աստիճանով: Յուրաքանչյուր մոդել ունի իր առավելություններն ու թերությունները (տես աղյուսակ 3.8):

**Կրթություն:** Հայաստանի Հանրապետությունն ունի կրթության և կադրերի պատրաստման զարգացած ու ավանդույթներ ունեցող համակարգ (դպրոցներ, վարժարաններ, միջին-մասնագիտական ուսումնական հաստատություններ, բազմաթիվ պետական և ոչ պետական բուհեր)՝ բոլոր ընդունելի չափանիշներին համապատասխան որակավորում ունեցող սեփական մանկավարժական անձնակազմով [1]:

Կրթական համակարգի գործունեությունը Հայաստանի բնակչության համար ապահովում է համընդհանուր գրագիտություն, մասնագիտության ազատ ընտրություն, կատարելագործման հնարավորություն:

1990-ական թվականներին սկսվեց նաև կրթության ոլորտի ապապետականացման գործընթացը. պետությունը կրթության ոլորտից «հեռանալու» փորձ ձեռնարկեց՝ ուսումնական հաստատությունների հոգսերը թողնելով տեղական ինքնակառավարման մարմիններին և բնակչությանը: Հայաստանը չունե անհրաժեշտ բյուջետային ծախսեր կատարելու հնարավորություններ՝ բնակչությանը համայնավարական ժամանակաշրջանում տրամադրվող բոլոր կրթական ծառայություններն անվճար մատուցելու համար:

Ելնելով այս տեսանկյունից՝ բարեփոխումների սկզբնական փուլում գերակայում էր այն տեսակետը, որ կրթական համակարգի բարեփոխումները մյուս ոլորտների համեմատությամբ այնքան էլ առաջնային չեն (հատկապես ֆինանսական խիստ սահմանափակումների պայմաններում), այդ պատճառով հիշյալ ոլորտի վերափոխումները կարող են «սպասել»: Այս նկատառումներով կրճատվեցին կրթությանը տրամադրվող բյուջետային ծախսերը:



Ներկայումս կրթական համակարգի բարեփոխումները ներառում են կրթության կառուցվածքը, բովանդակությունն ու կառավարման մոտեցումները: Լիցենզավորման և հավատարմագրման կարգերի կիրառումը հնարավորություն կտա կանոնակարգելու ոչ պետական բուհերի գործունեությունը, ինչը կխթանի մրցակցությունը բարձրագույն կրթություն ստանալու ոլորտում [36, էջ 77–78]:

**Մշակույթ, ավանդույթներ և հնարավորություններ:** Հայաստանի երրորդ Հանրապետությունը ժառանգեց մշակութային դարավոր ավանդույթներ և պետական կառավարման տասնամյակների ընթացքում կուտակված պատկառելի փորձ, ինչպես նաև համամարդկային մշակութային արժեք ունեցող իրական նվաճումներ՝ մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման, կրթության նոր արժեքների ստեղծման ու տարածման հաստատությունների հզոր ցանցի բարենպաստ պայմաններ ու հնարավորություններ:

Պետության ֆինանսական միջոցների սղությունը ոչ միայն հնարավորություն չի տալիս մշակութային հաստատություններին մշակելու զարգացման ծրագրեր, այլև իրականացնելու որոշ գործառույթներ: Թատերարվեստի, կինոարտադրության և գրահրատարակչության ոլորտներում գոյություն ունի պետական պատվերի համակարգը, սակայն չափազանց սահմանափակ չափերով: Մշակույթի կառավարման համակարգում առայժմ գրեթե չեն օգտագործվում տեղեկատվական և հետազոտական հնարավորությունները:

Մշակութային քաղաքականության հայեցակարգի մշակման նախաձեռնություն արվեց դեռևս 1995 թվականից, իսկ այն վերջնականապես հաստատվեց միայն 2000 թվականին: Համաձայն հայեցակարգային հիմնադրույթների՝ պետական մշակութային քաղաքականության հիմնական նպատակը մշակութային ժառանգության պահպանումն ու անխաթար փոխանցումն է սերունդներին, աջակցումը՝ գեղարվեստական ստեղծագործական գործունեությանը, ինչպես նաև նպաստումը մշակութային արժեքների ընկալմանն ու տարածմանը [36, էջ 79–82]:

Աղյուսակ 3.8. Առողջապահական ծառայությունների մատուցման 4 հիմնական մոդելները

Ֆինանսավորումը	Միջակցային-պետական	Ապահովագրական	Մասնավոր
Ծառայություններ մատուցողը	Պետական կազմակերպությունները և մասնավոր	Պետությունը և մասնավոր	Մասնավոր
Հաճախորդների ընտրությունը	Պետական կազմակերպությունների միջև ընտրություն	Պայմանագրային հիմունքներով բուժժառայություններ մատուցողների միջև ընտրություն	Այն, ինչ կարող են վճարել
Քաղաքականությունները	Գործատուների ռեսուրսների տեղաբաշխում	Ծախսերի, որակի, մրցակցության, պայմանագրերի, գույքի նկատմամբ վերահսկում, ֆինանսաված գներ	Ազդեցություն չի ունենում
Հիմնախնդիրները	Խիստ տարածքային մոտեցում և այլն	Չափից շատ ուղեգրումներ առաջնային օղակից երկրորդային, երկրորդային օղակում հեշտ դեպքերի շրջանցում	Արտոնություններ չունեցող խմբեր
Առավելություններ	Լիարժեք պլանավորում, ցածր ծախսեր	Հաճախորդների նախաիրությունները դեր ունեն	Պահանջարկի սահմանափակում
Օրինակներ	Ավանդարար հյուսիսային երկրներում	Շվեդիա	ԱՄՆ

### 3.3. Ժամանակակից պետության տնտեսագիտությունը

Պետության և հասարակության միջև փոխհարաբերությունների հիմնախնդիրները, լինելով բազմաբովանդակ և բազմաշերտ, անհիշելի ժամանակներից սկսած, երբ ստեղծվեցին առաջին պետությունները, հայտնվեցին հասարակագետների ուշադրության կենտրոնում և դարձան առանձնահատուկ ուսումնասիրության առարկա: Հետաքրքիրն այն է, որ մարդկային հասարակության զարգացման ժամանակին համընթաց՝ պետության և նրա գործառույթների վերաբերյալ քննարկումները ոչ թե թուլացան և հասան որևէ հանգրվանի, այլ ճիշտ հակառակը: Խոսքն ամենևին էլ երկրագնդի վրա պետությունների աճող թվի մասին չէ (նկատենք, որ 20–րդ դարի սկզբում աշխարհն ունեցել է 53 պետություն, իսկ վերջին՝ 208), այլ ավելի շուտ՝ պետության որակների, որոնք, ընդհանրություններից բացի, ունեն իրենց խիստ յուրահատուկ առանձնահատկությունները: Դրանք են, որ փոխում են հասարակության և նրա առանձին անհատների վերաբերմունքները պետության նկատմամբ ոչ միայն երկրից երկիր, այլև անգամ նույն պետության գոյության տարբեր ժամանակահատվածներում: Իրերի նման վիճակը պայմանավորված է նախ և առաջ այս կամ այն երկրում սոցիալ–տնտեսական հիմնախնդիրների առկայությամբ ու դրանց լուծման կարևորությամբ և առաջնահերթություններով, համաշխարհային տնտեսության գլոբալացմամբ ու ինտեգրմամբ, երբ առանձին պետությունների միջև փոխհարաբերությունները և հատկապես տնտեսական կապերը այնքան են խորացել ու ամրացել, որ դրանց հետագա ընթացքը կարիք ունի վերազգային մարմինների (և առաջին հերթին՝ պետական) կողմից կանոնակարգման, սակայն վերջին (2008 թ. սկսված) համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ դրա հետևանքները չեն կարող հաղթահարվել՝ առանց պետության ակտիվ միջամտության և նրա կողմից կիրառվող գործիքների: Ի դեպ՝ այդ գործում զգալիորեն ուժեղացավ և հարստացավ տնտեսության վրա պետության ազդեցության գործիքակազմը, ինչը ևս մեկ անգամ ապացուցեց, որ անհիմն ու վաղաժամ են «պետությունը թաղելու» առանձին հեղինակների մոտեցումները:

Վերը շարադրվածի տեսանկյունից խիստ արդիական են դառնում ժամանակակից պետության տնտեսագիտությանը վերաբերող հիմնահարցերի նորովի իմաստավորման և, առավել ևս, ապագայի պետության տեսլականի կառուցման պատկերացումներն ու մոտեցումները: Ասվածն, անկասկած, ենթադրում է, որ լավագույնս պետք է տիրապետել ժամանակակից պետության պատմությանը՝ մասնավորապես նաև իմանալով, թե ինչպես են կառավարվում ժամանակակից պետությունները, կամ ինչպես և հիմնականում ինչ գործոնների պատճառով են մենաշնորհացվում պետության այս կամ այն ոլորտները՝ դրանք ծառայեցնելով ոչ թե հասարակության մեծամասնությանը, այլ նրա առանձին անհատներին կամ նրանց խմբերին:

Ժամանակակից աշխարհը հատկապես վերջին 20–25 տարիների ընթացքում (ինչը մարդկային քաղաքակրթության անցած ժամանակահատվածի համեմատությամբ մի ակնթարթ է) առնչվեց մի շարք նոր երևույթների և հանգամանքների, որոնք եթե ոչ սկզբունքորեն, ապա գոնե մի քանի սերնդի մարդկանց

պատկերացումներից դուրս էր: Խոսքն ամենից առաջ անցած դարի 90-ական թվականների սկզբին նախկին համայնավարական հասարակարգի կազմալուծումն էր և աշխարհի քարտեզից սոցիալիստական համակարգի և նրա միջնաբերդը հանդիսացող նախկին Խորհրդային Միության անհայտացումն էր, ինչի պատճառով աշխարհը երկբևեռ լինելուց դարձավ միաբևեռ՝ դրանից բխող քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ հետևանքներով ու դրանց կառավարման դժվարություններով: Մյուս կողմից՝ համաշխարհային ասպարեզում Չինաստանի դիրքերի ամրապնդումն ու աշխարհում երկրորդ տնտեսությունը դառնալու փաստը, ինչպես նաև արդեն 21-րդ դարի 30-ական թվականների սկզբին համաշխարհային առաջին գերտերություն դառնալու հանգամանքը սկզբունքորեն կարող է փոխել ներկայումս գործող աշխարհակարգը և այդ գործում առանձին գերտերությունների գործառույթներն ու ազդեցության ոլորտները: Ռուսաստանի տարեցտարի աճող տնտեսական հզորությունը (նկատենք նաև, որ այդ երկրի նախագահը ճանաչվել է 2013 թ. աշխարհի ամենաազդեցիկ անձը) և միջազգային իրադարձությունների (մասնավորապես՝ 2013 թ. Սիրիայում ընթացող զարգացումների և դրանց լուծումներ տալու հարցում) վրա աճող հեղինակությունը փոխում են նաև Մերձավոր և Միջին Արևելքում, ինչպես նաև Հարավային Կովկասում գերտերությունների կամ տնտեսական միությունների (առաջին հերթին նկատի ունենք Եվրոպական միությունը) միջև ազդեցության ոլորտների բաժանման կամ վերաբաժանման հիմնահարցերը:

Այսինքն՝ ժամանակակից աշխարհը ոչ միայն խաղաղության, այլև ժողովրդական հուզումների (սարնջագույն, վարդերի, արաբական գարնան կամ զարթոնքի և այլն) և վայրիվերումների բարդ ու հակասական ժամանակահատված է ապրում, ինչն էլ ենթադրում է լինել հարափոփոխ իրավիճակում՝ պարտադրելով, որ պետություն կառավարողները միշտ լինեն զգոն, որպեսզի ստեղծված ցանկացած իրավիճակում կարողանան ցույց տալ համարժեք արձագանք ու գործողություններ: Այլ կերպ ասած՝ ներկայումս այնքան են սրվել հարաբերությունները ոչ միայն առանձին տնտեսական ու ռազմաքաղաքական միությունների և բլոկների, այլև պետությունների միջև, որ խաղաղությունն ու զինված ընդհարումները հաջորդում են միմյանց: Այս հանգամանքն էլ պարտադրում է աշխարհի պետությունների մեծ մասին հսկայական ծախսեր կատարել խաղաղության պահպանության համար, որոնք ինչ-որ պահ զսպում են հակամարտող կողմերին, բայց միաժամանակ կարող են դառնալ ոչ միայն երկու պետությունների, այլև տարածաշրջանային ընդհարումների պատճառ՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Մեծ կամ փոքր բանակները երբևէ խաղաղություն չեն բերում, իսկ խաղաղությունը հատկապես հարևանների հետ համագործակցության ամենահիմնական պայմանն ու նախադրյալն է: Եթե կողմերը ցանկանում և պահպանում են խաղաղությունը, ապա դրանից շահում են բոլորը: Ազատական տնտեսագիտության հիմնադիր, ֆրանսիացի տնտեսագետ Ֆ. Բաստիան (1801-1849 թթ.) ասել է, որ «եթե ապրանքներին չի հաջողվում անցնել սահմանը, ապա դա անում են զինվորները»: Պետության նպատակը մարդու գործունեության համար բարենպաստ պայմաններ ստեղծելն է և ոչ թե միջամտելը կամ խանգարելը: Այս հա-

մատեքստում կարևոր է հատկապես մասնավոր սեփականության իրավունքի ինստիտուտի դերը, քանի որ շուկայական հարաբերությունները խարսխվում են հենց դրա վրա, այն է՝ լինել շուկայի երաշխավորը և երաշխիքը: Այս տեսանկյունից կարևորվում է նաև այն հարցը, թե ինչպես են կիրարկում ազատական գաղափարները: Օրինակ՝ Իսրայելը, լինելով մշտական պատերազմի պայմաններում և շրջապատված լինելով, ըստ էության, թշնամական պետություններով, ազատական տնտեսություն է ստեղծել: Հրեական պետությունը, սկսելով որպես սոցիալիստական համայնավարություն, ամենագործուն շուկայական տնտեսություն է ստեղծել:

Մենք՝ մահկանացուներս, ապրում ենք մեր հասարակություններում՝ առաջնորդվելով այն բարքերով և իրավական նորմերով, որոնք բնորոշ են ու գործում են տվյալ ժամանակահատվածում: Յուրաքանչյուր հասարակություն ապրում և զարգանում է որոշակի օրենքներով ու կանոններով, որոնք սահմանում են հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի կամ նրանց խմբերի իրավունքներն ու պարտականությունները: Սա հասարակության ներսում կարգ ու կանոն հաստատելու և քառսից խուսափելու ելակետային տեսակետն է: Ինչպես հայտնի է, Ադամ Սմիթը կարևորել է նաև բարոյական վարքագիծը: Նա գրել է «Բարոյական զգացմունքների տեսություն» գիրքը, որտեղ խոսվում է բարոյականության կանոնների մասին: Տարբեր երկրներ, անցնելով պետության կառուցման իրենց ճանապարհը, ունեն բարոյականության իրենց կանոնները: Այս համատեքստում գոյություն ունեն այնպիսի կանոններ, որոնք կանոնակարգում են մասնավոր հատվածի և իշխանության փոխհարաբերությունները: Դրանք այն կանոններն են, որոնք այդ հարաբերություններում կարգավորում են մասնավոր սեփականության իրավունքը: Մասնավոր սեփականության գաղափարը և դրանից օգուտներ ստանալու սպասելիքները կամ ակնկալիքները յուրաքանչյուր անհատի տալիս են յուրահատուկ խթան ու գործունեության ոլորտ: Մարդկային քաղաքակրթության սկզբնական փուլերում եղել են հասարակարգեր, որոնցում մարդիկ ամբողջությամբ եղել են իրավազուրկ (հատկապես ստրկատիրական հասարակարգում, երբ մարդ-ստրուկը դարձել է առքովաճառքի առարկա՝ որպես ամենաստվորական ապրանք): Մարդկության անցած ուղին այսօր բերել է մի հանգրվանի, երբ հաստատվել են մարդկանց անօտարելի իրավունքները, որոնց հիմքը ազատ կամքի դրսևորումն է հասարակական փոխհարաբերությունների բոլոր մակարդակներում: Այս գործում առանցքային դերը պատկանում է սեփականության իրավունքի հաստատմանը և իրագործմանը: Օրինակ՝ խոսքը որևէ մեկի սեփականության (օրինակ՝ խնձորի այգու) մասին է, որի օգտագործման և արդյունքների վերաբերյալ որոշումը կայացնում է դրա տերը: Նա կարող է նաև այդ սեփականության որևէ մասի կամ դրա ամբողջի (մեր օրինակում՝ խնձորի այգու սեփականության) տնօրինման բացարձակ իրավունքը փոխանցել ուրիշի: Դա կարող է արվել գնորդի և վաճառողի միջև կնքվող պայմանագրով, որտեղ սահմանվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նրանցից յուրաքանչյուրի պատասխանատվության աստիճանը և դրա իրականացման կոնկրետ ժամկետներն ու պայմանները՝ ստանձնած պարտավորությունների խախտման կամ չկատարման դեպքերում:

Խոսելով շուկայի՝ որպես արտադրության կազմակերպման նպատակով ռեսուրսների ձեռքբերման և ստացված արդյունքների բաշխման եղանակի կամ մեխանիզմների ամբողջական համակարգի մասին՝ հարկ է ընդգծել, որ այն պահանջարկի ու առաջարկի փոխհարաբերության բարդ հանգույց է: Այդ տեսանկյունից շուկան բնորոշվում է որպես գործընթաց, որտեղ կատարվում են միլիոնավոր և ամենատարբեր չափերի ու մեծությունների գործարքներ: Այսինքն՝ եթե հասարակությունում պահպանվում են սեփականության իրավունքները, և կատարվում են առք ու վաճառքի գործարքներ, իսկ ապրանքների ու ծառայությունների գները ձևավորվում են առաջարկի ու պահանջարկի փոխհարաբերությամբ, ապա տվյալ երկրում գործում են ազատ շուկայական հարաբերություններ: Շուկան գործում է իր կանոններով, այն չի կարող լինել անկազմակերպ: Շուկայական կարգավորման հիմքում ընկած է այն սկզբունքը, ըստ որի՝ անհատն իր գործողություններում ազատ է այն չափով, որքանով կամ որչափ չի սահմանափակում մյուսների ազատությունը: Եթե, օրինակ, որևէ կազմակերպություն չի ցանկանում իր գույքը վաճառել, սակայն դրա սեփականատիրոջը տնտեսական կամ արտատնտեսական միջոցներով ստիպում են դա անել, այդ դեպքում շուկայի մասին խոսք լինել չի կարող: Խոշոր հաշվով, երբ պետությունը հարկադրում և հանրային կարիքների համար մասնավոր սեփականատերերից ձեռք է բերում հիմնականում իր որոշմամբ գույք (հասկանանք նաև հողամաս՝ ասենք բազմաբնակարան շենք կառուցելու համար), ապա սա ևս շուկայականի հետ որևէ առնչություն չունի, քանի որ խախտվում է կողմի կամավորության սկզբունքը: Այս տեսանկյունից, օրինակ, հասարակական կազմակերպությունները, որպես կամավոր ստեղծված կազմակերպություններ, իրենց գործունեության բնույթով ավելի մոտ են շուկայականին:

Ինչ է տեղի ունենում, երբ հասարակության անդամները կամ կառավարման մարմինները «հարգում» են մասնավոր սեփականությունը և պահպանում շուկայի կանոնները: Մասնավոր սեփականության իրավունքի իրագործման դեպքում յուրաքանչյուր ոք իր բոլոր գիտելիքները և ջանքերը ներ է դնում՝ իրեն պատկանող հարստությունը ավելացնելու և բազմապատկելու համար: Միայն սեփականության իրավունքի կայունության պայմաններում է ապահովվում տնտեսության մասնագիտացումը, ինչը աշխատանքի հասարակական բաժանման դրսևորման ձևերից մեկն է, և որը հանգեցնում է հանրության կողմից օգտագործվող ռեսուրսների արդյունավետության բարձրացման և, վերջին հաշվով, ստեղծվող յուրաքանչյուր միավոր սպառողական արժեքի նվազեցման, ինչից շահում է շարքային սպառողը և քաղաքացին: Սա այնքան կարևոր է, որ դասական տնտեսագիտության հիմնադիր, անգլիացի տնտեսագետ Ադամ Սմիթն իր «Ազգերի հարստությունը» գիրքը (1776 թ.) սկսել է գնդաստեղների պատրաստման օրինակով: Նա հիմնավորում է, որ եթե դրանց արտադրության ժամանակ աշխատանքը չբաժանվեր ըստ տեխնոլոգիական առանձին գործընթացների անհատական աշխատողների կողմից, ապա շատ քիչ քանակի գնդաստեղներ կպատրաստվեին: Սակայն այս կամ այն ապրանքը շատ կարելի է արտադրել միայն մի դեպքում, երբ այն ունի պահանջարկ: Լայն իմաստով՝ առևտրի ժամանակ փոխանակվում են մարդկային գործունեության արդյունքները (բարիք-

ները), երբ մեկ սեփականատիրոջից դրանք անցնում են մյուս սեփականատիրոջը կամ սեփականատերերին, ինչը հնարավոր էր պետական համատարած (100%) սեփականության պայմաններում, երբ գոյություն ուներ մեկ սեփականատեր՝ հանձինս պետության և նրա կողմից լիազորված պետական կառավարման մարմինների: Ահա թե ինչու կարևոր է դառնում մասնավոր սեփականությունը, որն ըստ էության այն նյութական և իրավական հիմքն է ստեղծում, որի պայմաններում կարող է գործել շուկան: Մասնավոր սեփականությունը այն իրական ինստիտուտն է կամ լակմուսի թուղթը, որը լավագույնս է բնութագրում հասարակության իրավիճակը: Մասնավորապես՝ օրենքների պահպանության և կիրարկման ու ընդհանրապես իրավական պետության գնահատման գործում զգալի է մասնավոր սեփականության գործունը, քանի որ դանոժ պայմանավորված ինստիտուտի հետ կապված հարաբերությունները խտացված ձևով արտահայտում են կառավարության վերաբերմունքը դրա նկատմամբ: Քանի որ եթե խախտվում է մասնավոր սեփականության ինստիտուտը, ապա շղթայական ռեակցիայի օրինակով խախտվում են նաև դրան առնչվող տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, կամ, այլ կերպ ասած, մասնավոր սեփականությունը հուշում է, թե ինչ չպետք է կատարվի, որպեսզի չխախտվեն դիմացինի իրավունքները: Շուկան, պատկերավոր ասած, բաց աշխարհ է, որտեղ գոյանում է գործարքների խիտ ցանց, որոնք կապված են միմյանց հետ և դրանով իսկ հավասարակշռվում են միևնույն ժամանակ: Արժեքավորում է մարդկային գործունեության արդյունքները, ինչն էլ դառնում է տարբեր ապրանքների և ծառայությունների փոխանակության հիմքը և դրանց համարժեքության ապահովման գործիքը: Շուկան գործում է իր կանոններով, այն բարդ համակարգ է, որն ունի ոչ միայն արտաքին, այլև ավելի շատ ներքին շարժման և կառավարման խթաններ և օրենքներ: Նա նշում է, որ շուկան ինքնակարգավորվող համակարգ է, որը գործում է Ա. Սմիթի «անտեսանելի ձեռքի» սկզբունքով, որի հիմքը պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությունն է: Այդ ճանապարհով է ձևավորվում այս կամ այն բարիքի իրական արժեքը և միևնույն ժամանակ ապահովվում ռեսուրսների արդյունավետ բաշխվածությանը տարբեր ոլորտների միջև: Շուկայի կարգավորման առումով թագավորը չպետք է անի մի բան, որի վերաբերյալ չունի բավարար գիտելիքներ, և խաղա ներդրումների և դրանց իրականացման հետ: Այսինքն՝ դասական տնտեսագիտության հիմնադիրը ցանկացել է ընդգծել, որ ոչ թե մտադրությունն է սխալ, այլ այն, որ չունեն բավարար գիտելիքներ և հմտություններ և չես էլ կարող ունենալ, ավելի ձիշտ է՝ չխառնվես կամ չմիջամտես երևույթների ու մարդկանց գործողություններին, քանի որ դրանք կարող են վնասակար հետևանքներ ունենալ նրանց վրա: Ըստ որում՝ հանձարեղ շոտլանդացուն են պատկանում ազատական տնտեսագիտության համար ելակետ հանդիսացող հետևյալ անմահ բառերը. «Աշխարհում երկու բան անհամատեղելի է՝ առևտուրը և թագավորելը»: Շուկայում յուրաքանչյուր ոք հետապնդում է իր անձնական շահը: Սպառողը ցանկանում է ապահովել առավելագույն օգտակարություն, իսկ արտադրողը՝ շահույթ: Ա. Սմիթին է պատկանում հետևյալ միտքը. «Յուրաքանչյուր ոք, հետապնդելով իր անձնական շահը, ավելի գործուն ձևով է ծառայում հասարա-

կական շահին, քան երբ դա փորձում է անել գիտակցաբար» [21, էջ 332]: Շուկան արդյունավետորեն գործում է տնտեսավարող սուբյեկտների ազատ գործունեության և գնագոյացման պայմաններում:

Ընդհանրապես, քաղաքակրթության զարգացման հիմնական աղբյուրը և շարժիչ ուժը մարդու միտքն է, որի դրսևորման ձևերից մեկը անհատի ձեռնարկատիրական տաղանդն (շնորհք, ջիղ) է: Շահը հիմնականում ծնվում է մասնավոր սեփականության իրավունքի համակարգում, քանի որ պետական սեփականության իրավունքի պայմաններում մարդու «ես»-ը, խառնվելով բոլորի «ես»-ի (էգոյի) մեջ, տարրալուծվելով ոչնչանում կամ «գրոյանում» են, «թացն ու չորը», «լավն ու վատը», «ծույլն ու աշխատասերը», «խելոքն ու անխելոքը», «տկարն ու ուժեղը», «հիվանդն ու առողջը» միախառնվելով ոչնչացնում են մարդ անհատի, մարդ քաղաքացու «դեմքն» ու արժանիքները՝ նրան դարձնելով «անհայտ անհատ», ինչի հետևանքով նա կորցնում է լիարժեք աշխատելու և արարելու ձգտումը և ցանկությունը (եղել են նաև այս կանոնից չնչին բացառություններ): Տնտեսության մեջ հարաբերությունների կառուցման «համահարթեցման» կամ «ընդհանուր կաթսայի» սկզբունքը դրսևորվում էր նրանում, որ շահութաբեր աշխատող կազմակերպություններից ստացված շահույթով ծածկվում էր վատ աշխատող կազմակերպությունների վնասները: Արդյունքում՝ նախկին Խորհրդային Միության վերջին տարիներին վնասով աշխատող արտադրական կազմակերպությունների թիվը կազմում էր դրանց ընդհանուր թվի 40-45%-ը, իսկ առանձին ժյուդերում այդ ցուցանիշը հասնում էր մինչև 60-70%-ի: Շահույթով աշխատող կազմակերպությունների աշխատողները դրանով իսկ կորցնում էին արդյունավետ աշխատանքի դրդապատճառները, քանի որ նրանց աշխատանքի արդյունքները տրվում էին ոչ թե նրանց, այլ վնասով աշխատող կազմակերպություններին: Նախկին խորհրդային, առավել ևս համայնավարական հասարակարգն ու համակարգը չկարողացան ստեղծել աշխատող մարդուն խթանելու համապատասխան միջոցներ, ինչն էլ հատկապես քաղաքական և միջազգային պատճառների համատեքստում հանդիսացավ այն տնտեսական հիմնական ուղեցույցը, որով մի ողջ համակարգ պարզապես հեռացավ պատմական ասպարեզից՝ իր տեղը գիջելով կապիտալիզմին: Մարքսիստական գաղափարախոսության ստեղծած կարևորագույն օրենքներից մեկը (ի դեպ՝ այն ընդունվում էր որպես համընդհանուր օրենք, ըստ որի՝ այն գործել է բոլոր հասարակական-տնտեսական ֆորմացիաներում) վերաբերում էր «արտադրողական ուժերի բնույթին արտադրական հարաբերությունների համապատասխանությանը», կամ ավելի պարզ ասած՝ ինչ պետք է անենք, որ յուրաքանչյուր աշխատող իր աշխատատեղում աշխատի բարձր արտադրողականությամբ և չգողանա պետությունից: Առաջին հայացքից այս պարզ խնդիրը սոցիալիզմին չկարողացավ լուծել, քանի որ աշխատողի համար չստեղծվեցին նյութական և բարոյական այն խթանները, որոնք մարդուն կշահագրգռեին աշխատելու: Ճիշտ հակառակը՝ արդարության դեմ չմեղանչելու համար նշենք, որ թեև հատկապես 1960-ական թվականներից սկսած բազմաթիվ փորձեր արվեցին սոցիալիստական տնտեսական համակարգը և դրա գործունեության մեխանիզմները բարելավելու ու կատարելագործելու ուղղությամբ, սակայն դրանց ոչ



արմատականության և ո՛չ էլ խորքայնության պատճառով, ինչպես ցույց տվեց անցյալի պատմական փորձը, դրանք հաջողություն չունեցան: Նշված բարեփոխումների հիմնական թերությունն այն էր, որ դրանք չէին վերաբերում սոցիալիզմի «սրբության սրբոցին»՝ պետական սեփականությանը, ինչն էլ ի չիք էր դարձնում կատարված բոլոր քայլերը կամ դրանց մեծամասնությունը: Չստեղծելով համապատասխան շահերի խթանման համակարգ, խորհրդային սոցիալիզմը դատապարտվեց, քանի որ անհրաժեշտ խթանն է թույլ տալիս օգտագործել անհատի ստեղծագործական ուժը և ձեռնարկատիրական տաղանդը կամ ջիղը (նկատենք նաև, որ թեև Չինաստանում գործում է կոմունիստական կուսակցություն, սակայն դա չի խանգարում, որ այն լինի աշխարհի ամենադինամիկ զարգացող երկրներից մեկը, իսկ մոտակա 10 տարիների ընթացքում ունենա ամենամեծ ծավալով ՀՆԱ-ն): Այսինքն՝ մասնավոր սեփականության իրավունքի համակարգը խթանում է անհատին օգտագործելու իր միտքը, ֆիզիկական և մտավոր կարողությունները, որի հիմքում ընկած է համագործակցության սկզբունքը:

Հայաստանի երրորդ Հանրապետությունը, կառուցելով շուկայական տնտեսություն, նախկին խորհրդային տնտեսությունից որպես ժառանգություն ստացավ պլանային տնտեսությունը և գրեթե համատարած պետական սեփականությունը: Այդ ժամանակահատվածում նախկին խորհրդային երկրների (և ոչ միայն Հայաստանի) խանութների ցուցափեղկերից անհետացել էր ամեն ինչ (տոյնիսկ աղը), և մարդիկ իրենց ժամանակի մեծ մասը անցկացնում էին հերթերում: Սոցիալիզմից ազատ շուկայական հարաբերությունների անցման հիմնական արդյունքն էր, որ փոխվեց մարդկանց մտածելակերպը, ինչն այնքան կարևոր էր նոր տնտեսակարգի կառուցման ճանապարհին: Մասնավոր սեփականության և դրա իրավունքի անհրաժեշտությունը դարձավ օրակարգային հարց յուրաքանչյուր մարդու համար, և նախկին խորհրդային և համայնավարական բոլոր հանրապետությունները իրենց երկրներում ձեռնամուխ եղան կյանքի ամենատարբեր բնագավառներում ապապետականացման խոշորամասշտաբ ծրագրերի կազմմանը և դրանց իրագործմանը:

Կարևոր է ընդգծել մեկ հանգամանք ևս, որ խորհրդային իշխանության տարիներին (ավելի քան 70 տարի) այնքան սահմանափակվեցին անհատների (քաղաքացիների) իրավունքներն ու ազատությունները, իսկ դրա փոխարեն այնքան մեծացան և ուռճացվեցին պետության իրավունքներն ու գործառույթները, որ մարդը պարզապես դարձավ հասարակական հարաբերությունների «պտուտակ» կամ ոչինչ (դժբախտաբար, այս միտումը շարունակվում է մինչ օրս): Հասարակական գիտակցության մեջ արմատացավ այն միտքը, որ մարդը ոչինչ է, իսկ պետությունը՝ ամեն ինչ, և նա է տնօրինում մարդկանց ճակատագրերը: Այս առիթով տեղին է հիշել Ֆ. Բաստիայի այն միտքը, ըստ որի՝ պետությունը մի խաբկանք է, որի պատճառով կամ օգնությամբ մենք կարող ենք ապրել մյուսների հաշվին: Մի անհանգստացեք, մենք ձեզ համար աշխատում ենք, ձեր մասին մտածում ենք, և դա արվում է յուրաքանչյուրի հետ:

### 3.4. Քաղաքական ընտրությունը և դրա տնտեսական հիմնավորվածությունը

*Ամենից շար մարդիկ սիրում են պատերազմի ժամանակ,  
որսից հետո և ընտրություններից առաջ:  
Օտրտո ֆոն Բիսմարկ*

Տարբեր մակարդակի ընտրությունների (նախագահի, տեղական ինքնակառավարման մարմինների, խորհրդարանական ընտրությունների) ժամանակ մեզանից յուրաքանչյուրի քաղաքացիական պարտքն է մասնակցել այդ համապետական կարևոր միջոցառումներին: Ինչից ելնելով և ինչո՞ւ ձայն տալ այս կամ այն քաղաքական կուսակցությանը կամ քաղաքական գործչին:

#### 3.4.1. Ի՞նչ ենք մենք ընտրում

Հին հույների այն միտքը, որ «Ամեն ինչ շարժվում է, ամեն ինչ՝ փոփոխվում» մեր հարափոփոխ ժամանակներում, այլևս ոչ ոքի ոչ զարմացնում է և ոչ էլ կասկած հարուցում: Իրոք որ աշխարհը փոփոխվում է շատ արագ, և ինչ–որ առումով այդ արագությունը հանգիստ չի տալիս սովորական քաղաքացիներին: Եվ ոչ միայն նրանց, այլև այն քաղաքացիներին, որոնց համար կարևոր է ոչ միայն ներկան, այլև ապագան, որի հիմքերը դրվում են ներկա մարդկանց կողմից, և շատ բան, ինչ կապված է առաջիկա ծրագրերի հետ, ձևավորվում է մեր սուբյեկտիվ մոտեցումների արդյունքում: Եվ կախված այն բանից, թե ինչպես ենք մենք ընկալում աշխարհը, պատկերացնում մեր առջև ծառայած խնդիրները առաջիկա կամ մոտակա ժամանակահատվածում լուծելու կամ լուծված տեսնելու առումով:

Ժամանակակից զարգացումը աշխարհի գրեթե բոլոր երկրներում, ընդունված կարգի համաձայն, իրականացվում է ծրագրերի (նախկին համայնավարական երկրներում դրանք կոչվում էին սոցիալ–տնտեսական զարգացման պլաններ) միջոցով, և կախված իրենց առջև դրված նպատակներից ու դրանց հասնելու ճանապարհին լուծվելիք խնդիրների քանակից և հնարավորություններից՝ դրանք կարող են լինել կարճաժամկետ (մինչև 1 տարի), միջնաժամկետ (մինչև 3 տարի) և երկարաժամկետ (3 տարուց ավելի): Ընդունված է նաև, որ, որպես կանոն, ելնելով երկարաժամկետ ծրագրերից՝ կազմվում ու իրագործվում են նախ միջնաժամկետ, ապա նաև կարճաժամկետ կամ ընթացիկ ծրագրեր: Այդպիսով՝ ապահովվում է կապը և շարունակականությունը վերը նշված ծրագրերի միջև:

Հատկապես երկարաժամկետ ծրագրերի ընդունումը և դրանց հիման վրա զարգացման քաղաքականության կառուցումը ենթադրում է ինչպես երկրի ներքին, այնպես էլ արտաքին միջավայրի խոր վերլուծություն, դրա արդյունքում հասարակության առջև կանգնած քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, ժողովրդագրական և բազմաթիվ այլ, այդ թվում նաև, ինչու չէ, պատմական առաջնահերթ հիմնախնդիրների վերհանում և բացահայտում, դրանց լուծման նպատակով երկրի ներքին և արտաքին հնարավորությունների ու ռեսուրսների հաշվառում և ի մի բերում, այնուհետև հավասարակշռված քաղաքականության մշակում և կենսագործում: Ցանկալի է, որ երկիրն ունենա իր

զարգացման վերաբերյալ մեկ կամ միասնական ծրագիր, քանի որ միայն այդ կերպ, առանձնապես փոքր ազգերի կամ երկրների պարագայում, հնարավոր կդառնա համախմբելու և նպատակադրելու հասարակության առողջ ուժերը: Պակաս կարևոր չէ նախ թույլ չտալ այդ սահմանափակ ռեսուրսների փոշիացումը և, հետևաբար, դրանց անարդյունավետ օգտագործումը: Զարգացման մեկ նպատակ կամ նպատակների խումբ (երբեմն մասնագետները դրանք անվանում են նպատակների ծառ) ունենալը չի պարտադրում լուծումների մեկ ճանապարհ, այլ ճիշտ հակառակը: Այստեղ է, որ հասարակության այն ուժերը, որոնք հանդես են գալիս քաղաքական ասպարեզում, պետք է մրցակցեն միմյանց հետ, և հանրությանը ցույց տալով իրենց մոտեցումների (ծրագրերի) նախընտրելիությունը կամ առավելությունները և, իրենց դաշնակից կամ համակիր դարձնելով երկրի քաղաքացիների մեծամասնությանը՝ ստեղծում են ամուր սոցիալական բազա առաջիկա ծրագրերի իրագործման համար: Միայն այդ միջոցով կարելի է հասնել հասարակության մեջ վստահության ձեռքբերման, ինչն ամենակարևոր գրավականը և երաշխիքն է հաջողության համնելու համար: Հասարակության անդամների մեծ մասի վստահությունը շահելու մնացած ձևերն ունեն ժամանակավոր բնույթ, դրանք կայուն չեն և ցանկացած, նույնիսկ փոքր ցնցման պարագայում հասարակությունը կարող են հետ շրջել և դրանով իսկ ոչնչացնել արդեն ծախսված ռեսուրսներն ու միջոցները: Եվ եթե դրանք ինչ–որ կերպ, նույնիսկ մեծ ջանքերի գնով կարելի է հետ բերել, ապա վստահության կորուստը գրեթե անհնար է կամ համարյա անհնար է վերականգնել: Այդ է պատճառը, որ որքան քաղաքականացվում է հասարակությունը, այդ թվում նաև մեր հանրապետությունում, այնքան ավելանում է վստահության պակասը: Խոսքը ոչ միայն ազգային նշանակության տարբեր ծրագրերի պակասի, այլև ընդհակառակը՝ ավելի շատ դրանց առատության մասին է, որոնց մեծ մասը ոչ թե ծրագրեր են, այլ պարզապես բարի ցանկություններ:

Մարդկային հասարակության զարգացումը հասել է մի իրավիճակի, երբ վերացել են ազգային պետական սահմանները, և արտադրության գործոնները (կապիտալը, աշխատուժը, տեխնոլոգիաներն ու ձեռնարկատիրական հմտությունները և շնորհքը), ազատորեն մուտք գործելով համաշխարհային շուկա, ենթարկվում են դրա կանոններին և օրինաչափություններին: Համաշխարհային շուկայում ձևավորվում է այս կամ այն ապրանքի կամ ծառայության արժեքը, տվյալ երկրի վարկանիշը: Այլ կերպ ասած՝ համաշխարհային շուկան այն ասպարեզն է, որտեղ յուրաքանչյուր երկիր ստանում է իր օբյեկտիվ գնահատականը: Ընթանում է կատաղի մրցակցություն, նույնիսկ փոքր ժամանակահատվածում ուշադրության թուլացումը կարող է ճակատագրական լինել երկրի համար: Համաշխարհային տնտեսության ձևավորումն ունի նաև այն առավելությունը, որ եթե որևէ ազգ աշխարհին առաջարկելու ապրանք ու ծառայություն ունի, ապա նրա առջև բացվում է ավելի քան 7 մլրդ սպառող ունեցող շուկան: Ստեղծված իրավիճակում բոլոր երկրների համար դրվում է զարգացման մեկ նպատակ. ստեղծել այնպիսի ապրանք կամ ծառայություն, որոնք մրցունակ են համաշխարհային շուկայում: Այդպես պետք է լինի Հայաստանի Հանրապետության համար, եթե մենք ցանկանում ենք մասնակիցը լինել ժամանակակից

քաղաքակրթական զարգացումների: Ցանկացած այլ մոտեցում տանում է ինքնամեկուսացման և ավտարկիայի: Իսկ նման դեպքերում բավականաչափ օրինակներ կան, թե ինչով է այդ ամենն ավարտվում: Երկրի քաղաքացիները հեռանում են և բնակություն հաստատում այն ազգերի տարածքում, որոնք հասկացել են վերը ասվածը և իրենց զարգացումը տանում են հենց այդ ճանապարհով: Սրա արդյունքում սեփական հայրենիքը լավագույն դեպքում կարող է վերածվել զբոսաշրջական մի վայրի, որտեղ կցանկանան մի քանի օրով լինել այդ երկրի նախկին քաղաքացիները: Ասվածից հետևում է, որ համաշխարհային շուկան, հավասար հնարավորություններ և պայմաններ ստեղծելով դրանց մասնակիցների համար, դառնում է այն արժեչափը, որը ձգբոսորեն գնահատում է, թե ով ինչ արժեք և նշաձող ունի: Այնպես որ, բոլոր ազգերի համար ստեղծված է լավ հնարավորություն՝ փորձելու իրենց ուժերն ու հնարավորությունները:

Հայտնի է նաև, որ երկրի զարգացման ծրագրերը մշակվում և առաջ են քաշվում քաղաքական կուսակցությունների կամ դրանց միությունների (դաշինքների) կողմից: Եվ կախված այն հանգամանքից, թե ովքեր են այդ ծրագրերի հեղինակները, և ինչպես են նրանք ընկալում ու հասկանում իրենց ժամանակը, երկրի առջև կանգնած բազմապիսի խնդիրները և տեսնում դրանց լուծման հնարավորություններն ու ուղիները. մեծ մասամբ պայմանավորվում է ծրագրի հաջողությունը կամ անհաջողությունը: Ըստ էության, ինչպես խորհրդարանական, այնպես էլ նախագահական ընտրություններն այն ասպարեզն ու հնարավորությունն են, որոնք տրվում են երկրի քաղաքացիներին ընտրելու այս կամ այն ուժին առաջնորդելու երկիրը: Անկասկած, հրապարակում հայտնված քաղաքական պայքարի մեջ մտած ծրագրերի գնահատման և ձիշտ կողմնորոշման համար քաղաքացին պետք է ունենա պատրաստվածության որոշակի մակարդակ կամ աստիճան: Եվ եթե նա չունի այդպիսի հատկանիշներ, այսինքն՝ ի վիճակի չէ գնահատելու առաջադրված ծրագրերը, ապա նրա համար միևնույնն է, թե ինչ է գրված այդ ծրագրերում, և որ ուժը կդառնա առաջնորդող:

«Սոցիոմետր» սոցիալական անկախ կենտրոնի տվյալներով՝ հարցվածների միայն 60%-ն է հետևում քաղաքական անցուդարձին, 15%-ը դեռ չի հետևում, 25%-ն ընդհանրապես չի հետաքրքրվում:

Հարցվածների 40%-ն է վստահ, որ առաջիկա ընտրությունները կանցկացվեն լուրջ խախտումներով: Հարցվածների 36,6%-ը կարծում է, որ կլինեն թեթև խախտումներ, 17%-ն էլ կարծում է, որ ընտրությունները կանցկացվեն համեմատաբար արդար:

Այս առումով է քաղաքական ուժերի, նրանց առաջնորդների և նպատակների ճանաչված լինելը կարևոր հետագայում ընտրողների ձայներին տիրելու համար:

«Փաստացի, քաղաքական ուժերը տարբերակվում են ավելի շատ իրենց առաջնորդներով, քան գաղափարախոսությամբ կամ նպատակներով»,— ասել է նա [6, էջ 4]:

Տարբեր կազմակերպությունների կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ մեր իրականությունում, ինչպես նաև նախկինում քաղաքացիների համար ընտրություն կատարելու

կողմնորոշիչը ոչ թե կուսակցության գաղափարախոսությունն ու ծրագիրն է, այլ տվյալ կուսակցության առաջնորդը կամ առաջնորդները: Եվ եթե դա այդպես է, ապա անհասկանալի է դառնում մյուս երկրներից (մասնավանդ որ այդ երկրների սոցիալ-տնտեսական վիճակը ևս անմխիթար վիճակում է) հրավիրված պրոֆեսորների և ԳԱԱ թղթակից անդամների մասնակցությունը այդ ծրագրերի մշակմանը և խորհրդատվությանը: Ստացվում է, որ առանձին կուսակցությունների կողմից իրենց ծրագրերի համար հրավիրված օտարերկրյա մասնագետների մասնակցությունը ավելի շատ PR է, քան գործին օգնելու և ծրագրերի որակը բարձրացնելու միջոցառում: Մասնավանդ որ դեռևս լրամշակման փուլում գտնվող ծրագրերին, որոնք չեն գնահատվել դրանք ընտրողների կողմից, տրվում են հիփոթետիկ գնահատականներ և տեղեր: Կարծես թե ստացվում է, որ ամենևին էլ ոչ մի նշանակություն չունի, թե ինչ է գրված այդ ծրագրերում, քանի որ դրանք դեռևս ոչ ոք չի կարդացել և կողմնորոշվել:

Անկասկած է, որ կուսակցությունների ծրագրերի առկայության, դրանց քննարկումների ու համեմատությունների միջոցով միայն կարող ենք կատարել ճիշտ ընտրություն և մեր ձայնը տալ այս կամ այն կուսակցությանը և ոչ թե նրա առաջնորդին (անձին): Ժամանակն է նաև, որ մեր հասարակությունն անձերի ընտրության փոխարեն ընտրի լավագույն զարգացումն ապահովող ծրագիրը: Ահա թե ինչու առանց ծրագրերին ծանոթանալու խիստ անտրամաբանական են դառնում կատարված հարցումները և դրանց հիման վրա կատարված եզրակացությունները, երբ քաղաքացին չգիտե, թե ինչու է իր ձայնը տալիս այս կամ այն անձին կամ առաջնորդին: «Առաջնորդների» հետևից գնալը, ինչպես ցույց է տվել անցած ժամանակահատվածը, եթե չկան համապատասխան ծրագրեր, լավ վերջաբան չի ունենում:

Ավելին՝ այն հանրության ներսում բերում է խոր հիասթափության, որը կարճ ժամանակահատվածում հանգեցնում է հուսալքության, ինչը հանգեցնում է ներսից հասարակական հարաբերությունների կազմալուծման և ի վերջո սպանում մարդկանց հավատը իշխանությունների և երկրի նկատմամբ: Այս ամենի արդյունքում առաջանում է բարոյալքում և արտագաղթ: Ուստի այս ամենից խուսափելու համար անհրաժեշտ է ընտրությունների ժամանակ ձայնը տալ ոչ թե ում (ինչ-որ մեկին), այլ նրան, ով ունի ծրագրեր, և հստակ է, թե նա ինչ է անելու և ինչպես:

### 3.4.2. *Տնտեսագիտության տեսության դերը*

Ականավոր տնտեսագետ Ջոն Մեյնարդ Բեյնսի կարծիքով՝ «Տնտեսագիտության տեսությունն» անմիջապես տնտեսական քաղաքականության մեջ կիրառվող արդեն պատրաստի առաջարկությունների հավաքածու չէ: Այն ավելի շուտ մեթոդ է, քան ուսմունք, ինտելեկտուալ գործիք, տեխնիկա՝ օգնելու նրան, ով տիրապետում է դրան՝ հանգելու ճիշտ եզրակացության» [47, էջ 5]: Կամ՝ «Տնտեսագետների և քաղաքական մտածողների գաղափարները, երբ նրանք ճիշտ են կամ սխալվում են, ունեն անհամեմատ ավելի մեծ նշանակություն, քան ընդունված է կարծել կամ մտածել: Իրականում հենց միայն նրանք էլ կառավա-

րում են աշխարհը»: Տնտեսագիտության մեկ այլ հսկայի՝ Լյուդվիգ ֆոն Միզեսի դիպուկ բնորոշմամբ՝ «Դուր է գալիս թե ոչ, սակայն արդի քաղաքականության հիմնախնդիրները իրականում զուտ տնտեսական են և չեն կարող ընկալվել առանց տնտեսագիտության տեսության: Միայն այն անձը, ով գլուխ է հանում տնտեսագիտության տեսության հարցերից, ի վիճակի է մշակելու անկախ տեսակետ քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ» [40, էջ 11]:


Եթե նշված խոսքերի ճշմարտացիությունը կարևորվել է տասնյակ տարիներ առաջ, ապա ներկայումս համաշխարհային տնտեսության ծավալման և զարգացման արդյունքում, տնտեսական ինտեգրման ու գլոբալացման պայմաններում կայացվող տնտեսական որոշումների ազդեցությունը ստացել է ավելի մեծ կարևորություն, իսկ հետևանքները դարձել են ավելի նշանակալից: Ասվածի լավագույն ապացույցն է ժամանակակից համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը, սկսվելով ԱՄՆ-ի տնտեսությունից (2008 թ. կեսերից), կարճ ժամանակահատվածում արագորեն տարածվեց ողջ աշխարհում և ձեռք բերեց համաճորակային բնույթ: Արժույթի միջազգային հիմնադրամի մասնագետների գնահատականներով՝ համաշխարհային տնտեսությանը ճգնաժամի հասցված վնասը անընդհատ աճում է և ներկայումս գնահատվում է շուրջ 25 տրիլիոն դոլար, որը համարժեք է աշխարհի ամենահզոր տնտեսություն ունեցող երկրի՝ ԱՄՆ-ի երկու տարվա ՀՆԱ-ի մեծությանը: Հիշեցնենք նաև, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը զգալի վնաս հասցրեց նաև ՀՀ տնտեսությանը, որի հետևանքով ՀՆԱ-ի նվազումը 2009 թ. կազմեց 14,1%: Այլ կերպ ասած՝ բաց և փոքր տնտեսությունների ինչպես առկա վիճակը, այնպես էլ զարգացման հնարավորությունները մեծապես կախված են ոչ միայն տվյալ երկրի միկրո- և մակրոքաղաքականությունից, այլև արտաքին շուկաներից: Ավելին՝ վերջիններիս դերը ժամանակի ընթացքում ավելանում է: Այլ կերպ ասած՝ ներկայումս ինչպես համաշխարհային, այնպես էլ առանձին երկրների ազգային տնտեսությունները արտակարգ իրավիճակում են, և զարգացման թիվ մեկ խնդիրն է դարձել ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարումը և հակաճգնաժամային ծրագրերի մշակումը և միջոցառումների իրականացումը:

### ***3.4.3. Հայաստանի տնտեսական իրավիճակի ընկալումները***

Ներկայումս հրապարակում եղած հետազոտություններից մեկում ներկայացված են Հայաստանի քաղաքացիների կողմից տնտեսական իրավիճակի մասին իրենց պատկերացումները [11]: Կատարված հետազոտության համաձայն՝ Հայաստանի տնտեսական իրավիճակի վերաբերյալ բացասական ընկալումներ ունեցող մարդկանց թիվը 2008–2010 թվականներին զգալիորեն աճել է, և նրանք մեծամասնություն են կազմել:

Ինչպես երևում է գծանկար 3.1-ից, 2010 թ-ին հարցվածների շուրջ 59%-ը երկրի տնտեսական իրավիճակը գնահատել է որպես որոշ չափով կամ շատ վատ, ընդ որում՝ շատ վատ է գնահատել նրանց 35%-ը: 2008 թ-ից մինչև 2010 թ. ընկած ժամանակամիջոցում տնտեսական իրավիճակի բացասական ընկա-


լումներ ունեցող հարցվածների բաժինն ավելացել է 16 տոկոսային կետով: Տնտեսական իրավիճակը որոշ չափով լավ կամ շատ լավ գնահատածների բաժինը շարունակում է մնալ ցածր. 2008 թ. այն կազմում էր 7%, իսկ 2009 թ.՝ 6%: Այս ցուցանիշը նվազելով՝ 2010 թ-ին հասել է 4%-ի: 2010 թ-ին հարցվածներն ավելի բացասական վերաբերմունք են հանդես բերել տնտեսական իրավիճակը գնահատելիս, իսկ այն հարցվածների բաժինը, ովքեր տնտեսական իրավիճակը գնահատել են որպես ոչ լավ, ոչ վատ, նշված ժամանակահատվածում նվազել է 14 տոկոսային կետով:



Գծանկար 3.1. Հայաստանի ընթացիկ տնտեսական իրավիճակի ընկալումը 2008-2010 թթ. [11]

2010 թվականի հետազոտությամբ բացահայտվել են Հայաստանում առկա տնտեսական իրավիճակով բավարարվածության մակարդակի զգալի տարբերություններն՝ ըստ տարածաշրջանների: 2010 թ. երկրի տնտեսական իրավիճակով հատկապես մտահոգված են եղել երևանաբնակները (տես գծանկար 3.2): Երևանում հարցվածների 67%-ը երկրի տնտեսական իրավիճակը գնահատել է որպես որոշ չափով վատ և շատ վատ, իսկ այլ քաղաքներում և գյուղական վայրերում նույն կարծիքին են եղել հարցվածների համապատասխանաբար 58%-ը և 54%-ը: Մինևույն ժամանակ, տնտեսական իրավիճակը որպես որոշ չափով լավ կամ շատ լավ գնահատողները գրեթե հավասարապես փոքրաթիվ են եղել (4-5%) Երևանում, այլ քաղաքներում և գյուղական վայրերում:

Տնտեսական իրավիճակի մասին մտահոգությունները տարբեր են եղել նաև ըստ սեռատարիքային խմբերի: 2010 թ. հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ այն տղամարդկանց ավելի շատ է մտահոգում, քան կանանց: Հարցված տղամարդկանց մոտ 64%-ը երկրի տնտեսական իրավիճակը գնահատել է որպես որոշ չափով վատ, մինչդեռ նույն կարծիքին է եղել կանանց 57%-ը:



Գծանկար 3.2. Հայաստանի ընթացիկ տնտեսական իրավիճակի ընկալումը Երևանում, այլ քաղաքներում և գյուղական վայրերում 2010 թ. [11]

Աղյուսակ 3.9-ի տվյալներից ակնհայտ է, որ 2010 թ. տնտեսական խնդիրները համեմատաբար քիչ են մտահոգել երիտասարդներին. հարցված երիտասարդների միայն 47%-ն է տնտեսական իրավիճակը որոշ չափով վատ կամ շատ վատ որակել: Տնտեսական իրավիճակը որոշ չափով լավ կամ շատ լավ համարողների բաժինն ըստ տարիքային խմբերի քիչ է տարբերվում և շատ ցածր է (3-6%, աղյուսակ 3.9):


Աղյուսակ 3.9. Հայաստանի ընթացիկ տնտեսական իրավիճակի ընկալումն ըստ տարիքային խմբերի 2010 թ. (բաժինը յուրաքանչյուր տարիքային խմբում, %) [11]

Տարիքային խմբերը, տարի	Շատ լավ և որոշ չափով լավ	Շատ վատ կամ որոշ չափով վատ	Ոչ լավ, ոչ վատ
1	2	3	4
18-29	6	47	47
30-39	5	57	38
40-49	3	59	38
50-59	3	67	30
60 և ավելի տարեկան	4	67	29
<b>Ընդամենը</b>	<b>4</b>	<b>59</b>	<b>36</b>

Կատարված հետազոտության հիմնական բաժիններից է Հայաստանի Հանրապետության առջև ծառայած հիմնական խնդիրների բացահայտումը: Ըստ որում՝ յուրաքանչյուր հարցման ենթարկված անձ կարող էր տալ մինչև



երեք պատասխան (տոկոսներով արտահայտված): Ընդամենը տրվել է 17 հարց [26, էջ 17]: Հարցման պատասխաններում առաջին տեղը՝ ըստ 2008, 2009, 2010 թվականների, զբաղեցրել է գործազրկությունը՝ համապատասխանաբար 66%, 65% և 69%, երկրորդ տեղը՝ գնաճը (բարձր գները)՝ 33%, 20% և 43%, երրորդ տեղը՝ աղքատությունը՝ 39%, 30%, 34%, չորրորդ տեղը՝ ընդհանուր տնտեսական խնդիրները՝ 21%, 23%, 22% (տե՛ս գծանկար 3.3):



Գծանկար 3.3. Հայաստանի առջև ծառայած հիմնական խնդիրները (% , յուրաքանչյուր հարցված կարող էր տրվել մինչև երեք պատասխան) [11]

Ծանոթություն: 2008 և 2009 թթ. «ցածր եկամուտ/աշխատավարձ» տողի վերաբերյալ տվյալներ չկան:

Աղբյուրը՝ Կոռուպցիան Հայաստանում, Տաային փնտրությունների 2010 թ. հետազոտություն, Եր., Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն, 2011, էջ 17:

Հարկ է նշել նաև, որ 2010 թ. գնաճը համարվել է ավելի կարևոր խնդիր, քան 2008 թ. և 2009 թ.: Գնաճը, որպես Հայաստանում կարևոր հիմնախնդիր, 2010 թ. շատ ավելի սուր է ընկալվել, քան 2009 թ.: Եթե 2009 թ. հարցվածների միայն 20%-ն է գնաճը համարել հիմնախնդիր, ապա 2010 թ.՝ 43%-ը (կամ 23 տոկոսային կետով ավելի): Այս տեղաշարժի արդյունքում գնաճը, որ 2009 թ. համարվել էր Հայաստանում չորրորդ ամենակարևոր հիմնախնդիրը, 2010 թ. նշվել էր որպես երկրորդ հիմնախնդիր: Հարցման արդյունքներից հետևում է, որ 2008–2010 թթ. ՀՀ առջև ծառայած հիմնական առաջին չորս խնդիրներն ունեն տնտեսական պատճառներ և դրանց լուծումները տնտեսական քաղաքականության տիրույթում կամ սահմաններում են:

#### ***3.4.4. Ինչ է տնտեսական քաղաքականությունը, և ինչպես է այն օգտագործվում որպես հասարակության առջև ծառայած հիմնախնդիրների լուծման միջոց***

Ամենաընդհանուր ձևով պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը կարող է բնորոշվել որպես միջոցառումների համալիր, որն ուղղված է քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների (սպառողների և արտադրողների) վարքի, կամ էլ այդ սուբյեկտների գործունեության հետևանքների կարգավորմանը՝ առաջադրված տնտեսական նպատակներին հասնելու համար: Այդպիսի նպատակներ կարող են լինել տնտեսական աճը, գիտատեխնիկական առաջադիմության նվաճումներից օգտվելը և դրանց ներդրումը արտադրության մեջ, եկամուտների առավել արդարացի բաշխումը, լրիվ զբաղվածության ապահովումը, գնաճի կայունության ապահովումը<sup>1</sup> և այլն: Նշենք նաև, որ ՀՀ Սահմանադրության 85–րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը, իսկ ՀՀ արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է ՀՀ նախագահի հետ համատեղ: ՀՀ կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հիմնահարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից [3, էջ 68]: Իր առջև դրված նպատակներին հասնելու համար պետությունը օգտագործում է միջոցների հարուստ գինանոց՝ սկսած մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի սահմանափակման վարչական արգելքներից մինչև տնտեսական արգելքներ:

Կարևոր է նշել, որ տնտեսության կառավարման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է պետական կառավարման մարմինների և պետական պաշտոնյաների մասնագիտական գիտելիքներով, հմտություններով ու իրազեկությամբ, ձեռնարկվող գործողությունների մոտակա և հեռակա արդ-

<sup>1</sup> Ի դեպ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (փոփոխություններով) 83.3–րդ հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովելն է: Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրեր» [22]:

յունքները և դրանց ցանկալի ու անցանկալի հետևանքները կանխատեսելու ընդունակությամբ: Այսպես, եթե պետությունը հնարավորություն է տալու «փող տպագրող» մեքենայի աշխատանքին, որպեսզի ֆինանսավորի սոցիալական ծրագրերը, ապա այդպիսի մոտեցման արդյունքը կլինի ապրանքների և ծառայությունների գնաճը, որը կարժեզրկի բնակչության դրամական եկամուտները:

Ձևավորված տնտեսական իրավիճակը ճիշտ հասկանալու ու, տնտեսական գործընթացների վրա ազդելու համարժեք պետական միջոցառումներ ընտրելու և դրանք կիրառելու, ընդունված որոշումների սոցիալ-տնտեսական հետևանքները հաշվի առնելու, եկամուտներն առավելագույնի, իսկ հնարավոր ծախսերը նվազագույնի հասցնելու ընդունակությունը ուղղակիորեն կախված են այն բանից, թե որքան ճիշտ և ամբողջությամբ է օգտագործվում պետական տնտեսական քաղաքականության մշակման ու իրացման ժամանակ տնտեսագիտական հիմնադրույթներն ու մեխանիզմները: Արդյոք հաշվի են առնվում պետական և մասնավոր համագործակցության սկզբունքները և դրանք ծառայեցվում են բնակչության մեծ մասի շահերին՝ դրանով իսկ ծառայելով մարդկանց նյութական և հոգևոր պահանջումների լավագույնս բավարարմանը:

Խելամիտ տնտեսական քաղաքականություն մշակելու համար նախ և առաջ անհրաժեշտ է պարզել, թե ինչ նպատակներ են հետապնդում, և երկրորդ՝ դրանք իրագործելու համար հասարակությունը ինչ գործիքներ ունի: Այլ կերպ ասած՝ պետության տնտեսական քաղաքականությունը շուկայական տնտեսության պայմաններում հանգում է տնտեսության պետական կարգավորման, իսկ վերջինիս առումով կարևորվում է սոցիալ-տնտեսական իրատեսական նպատակների սահմանումը և դրանց հասնելու գործիքների (կամ մեխանիզմների) ձևավորումը:

Մակրոտնտեսական քաղաքականության նպատակները միմյանց նկատմամբ կարող են լինել փոխադարձ փոխարինելի, փոխադարձ լրացնող և չեզոք: Նպատակների փոխադարձ փոխարինելիությունը նշանակում է, որ անհնար է միաժամանակ հասնել քննարկվող նպատակներին: Բնորոշ օրինակ է գնաճի և գործազրկության տեմպերի հսկողությունը, իսկ Ֆիլիպսի կորն իր հերթին ակնառու ձևով ցույց է տալիս այդ իրավիճակը:

Մակրոտնտեսական քաղաքականության փոխադարձ լրացնող նպատակները զուգակցվում են միմյանց հետ: Այդպիսի նպատակներ են, օրինակ՝ ազգային եկամտի կամ ՀՆԱ-ի աճը և զբաղվածության աճը:

Չեզոք, այսինքն՝ մեկը մյուսին հասնելու վրա չազդող նպատակները հանդիպում են խիստ հազվադեպ: Օրինակ՝ գործազրկության նվազեցումը մինչև որոշակի մակարդակի հասնելը կարող է և չազդել գնաճի տեմպերի վրա:

Զարգացած երկրներում պետական կարգավորման փորձի կուտակմանը զուգահեռ տեղի է ունենում նպատակների բազմազանության չափելիության կրճատում:

Ցան Թինբերգենը կարծում էր, որ նպատակային ֆունկցիայի մեջ պետք է ներառել 8 տարր, այդ թվում՝

1. պետական ծախսերի ծավալը,
2. իրական աշխատավարձի փոփոխությունների աճման միտումները,

3. զբաղվածության մակարդակը,
4. եկամուտների բաշխման ցուցանիշը,
5. ներդրումների չափերը,
6. ամբողջական պահանջարկը,
7. արտադրության մակարդակը,
8. վճարային հաշվեկշռի մնացորդը:

Ավելի ուշ՝ 1970–ական թվականներին, տնտեսագետներն արդեն քննարկում էին 4 նպատակ՝

1. լրիվ զբաղվածությունը,
2. գների կայունությունը,
3. վճարային հաշվեկշռի չկառավարվող պակասուրդների բացակայությունը,
4. տնտեսական զարգացման կայուն մակարդակը:

1980–ական թվականների վերջերին և 1990–ական թվականների կեսերին բազմաթիվ կառավարություններ կարգավորում էին միայն 2 հարց՝

1. լրիվ զբաղվածությունը,
2. գնաճի դեմ պայքարը [40, էջ 377–378]:

Առանձին տնտեսագետների կարծիքով՝ ավելի ճիշտ է ընտրել կարգավորման մեկ նպատակ և դրա վրա կենտրոնացնել հիմնական ջանքերը: Անցումային տնտեսությամբ երկրների համար պետական քաղաքականության այդպիսի ռազմավարական ուղղություն կարող է լինել, ինչպես ցույց տվեց 1990–ական թվականների պրակտիկան, դա պայքար էր բարձր գնաճի դեմ:

Այսպիսով՝ կարող ենք ամրագրել, որ ներկայումս տնտեսական քաղաքականության բովանդակությունը հանգում է լրիվ զբաղվածության ապահովմանը կայուն գնաճի պայմաններում: Թերևս նման մոտեցումը ընդունելի է նաև այն տեսանկյունից, որ միարժեքորեն կարելի է գնահատական տալ այս կամ այն կառավարության վարած տնտեսական քաղաքականությանը՝ ելնելով այդ նպատակներից, քանի որ դրանք ենթակա են քանակական չափման: Այսպես, եթե որևէ երկրի կառավարությանը հաջողվել է, օրինակ՝ 4 կամ 5 տարվա ընթացքում ապահովել 200 հազար նոր աշխատատեղեր, իսկ մյուսին՝ այդ ընթացքում ապահովել 300 հազար աշխատատեղ, ապա այլ հավասար պայմաններում (տվյալ դեպքում նկատի ունենք գնաճի միևնույն չափը) երկրորդ կառավարության գործունեությունը միարժեքորեն պետք է գնահատվի ավելի բարձր, քան առաջինը:

Ընդգծենք նաև, որ մակրոտնտեսական քաղաքականության նպատակները իրացվում են տնտեսության պետական կարգավորման միջոցով: Այս տեսանկյունից առանձնացնենք տնտեսության վրա պետության ազդեցության հիմնական ձևերը և մեթոդները: Այսպես՝ ամենից առաջ կարևոր է տարբերել երկու հիմնական պետական կարգավորման վարչական (սյուսական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների, պետական ձեռնարկությունների կառավարման միջոցով մակրոտնտեսական քաղաքականության տարբեր գործիքների կիրառումը):

**Պետական կարգավորման ուղղակի մասնակցություն:** Բոլոր արդյունաբերական զարգացած երկրներում առկա է իր որոշակի մասշտաբներով տնտեսության պետական հատված, որի չափերը կարող են ծառայել որպես չափանիշ պետության տնտեսական դերի գնահատման համար, թեև այն չի կարող լինել բացարձակ: Պետությունը կարող է տնօրինել կապիտալի տարբեր ձևերի, տրամադրել վարկեր, ունենալ բաժնեմասային մասնակցություն, լինել ձեռնարկությունների սեփականատեր: Այդ ամենը պետությունը դարձնում է հասարակական կապիտալի մի մասի համասեփականատեր:

Բոլոր արդյունաբերական զարգացած երկրներում պետական հատվածի կայացումը և զարգացումը գործնականում տեղի է ունեցել միևնույն ճյուղերում (արդյունաբերություն, էլեկտրաէներգետիկա, ծովային, երկաթուղային և օդային տրանսպորտ, ավիացիա և տիեզերագնացություն, ատոմային էներգետիկա և այլն): Խոսքը, որպես կանոն, այն ճյուղերի մասին է, որտեղ ոչ ընթացիկ ակտիվների արժեքը, այսինքն՝ շենքերի, սարքավորումների և մեքենաների ամբողջությունը, որը զգալիորեն մեծ է և պարբերաբար կրկնվող ձգնաժամերի պատճառներից է:

Պետության ուղղակի միջամտությունը վերաբերում է նաև իրավական ակտերի ընդունմանը, որոնք կոչված են կանոնակարգելու և զարգացնելու շուկայական սուբյեկտների միջև փոխհարաբերությունները: Տնտեսության պետական կարգավորման օրինակները իրավական ակտերի մշակման եղանակով բավականին տարբեր են: Օրինակ՝ քաղաքացիական, մաքսային, հողային օրենսգրքի և այլ օրենքների ընդունումը ընդդեմ գործարար ակտիվության սահմանափակմանը (հակամենաշնորհային օրենքներ) և այլն:

Պետական կարգավորման անուղղակի միջամտությունը իրականացվում է հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքների օգտագործման միջոցով: Պետական քաղաքականության այդ երկու ուղղությունները սերտորեն կապված են միմյանց հետ:

Շուկան չի կարող բնականոն գործել առանց պետության, որը սահմանում և պահպանում է շուկայական տնտեսության «խաղի կանոնները»: Սակայն միաժամանակ գործում են նաև պետական միջամտության օբյեկտիվ սահմաններ:

Այս առնչությամբ տեղին է մեջբերել համաշխարհային հռչակ ունեցող հունգարացի տնտեսագետ Յանոշ Կորնայի խոսքերը. «Կարիք չկա շուկայի և պետության միջև կառուցելու բեռլինյան պատ»: Պետությունը և շուկան երկու հզոր ուժեր են, որոնք չեն հակադրվում միմյանց, այլ տնտեսական զարգացման ընթացքում լրացնում են մեկը մյուսին [3]:

Հարկ է նշել, որ ներկայումս աշխարհի երկրների մեծ մասը կառուցել է կամ կառուցում է (այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը) շուկայական տնտեսություն, որը գործնականում ապացուցել է իր բարձր արդյունավետությունը հետևյալ խնդիրների լուծման ժամանակ.

- արտադրության և սպառման փոխկապվածության ապահովումը,
- արտադրողների աշխատանքի արդյունքների հասարակական գնահատումը,

- գների ազատ շարժը,
- տնտեսության «առողջացումը»,
- մրցակցության համընդհանուր բնույթը:

Գոյություն ունեն կենսագործունեության ոլորտներ, որոնք արդյունավետորեն չեն կարող կարգավորվել շուկայական մեխանիզմների միջոցով: Դրանք են՝

- մակրոտնտեսական համամասնությունների ապահովումը,
- գիտատեխնիկական առաջընթացի արդյունքների ներդրումը,
- ռազմավարական ներդրումների իրականացումը,
- ոչ շուկայական հատվածների աջակցությունը,
- սոցիալական պաշտպանության ամուր համակարգի կառուցումը:

Նշված թերությունները վերացվում են պետության աջակցության կամ միջամտության միջոցով [44]:

Պետության միջամտությունը տնտեսությանն առաջացնում է անհավասարություն, որի մասին գրել է դեռևս դասական տնտեսագիտության հիմնադիր Ա. Սմիթը. «Եվրոպայի կառավարությունների միջամտության քաղաքականությունը, թույլ չտալով լրիվ ազատություն, ծնում է այլ անհավասարություններ, որոնք ունեն կարևոր նշանակություն: Միջամտության քաղաքականությունը գործում է հետևյալ երեք եղանակներով. նախ՝ սահմանափակելով միջամտությունը մի քանի գործունեության տեսակներում ավելի սակավաթիվ մարդկանցով, երկրորդ՝ ուժեղացնելով մրցակցությունը այլ գործունեության տեսակներում այն բանի համեմատ, ինչը եղել է բնական պայմանների ժամանակ, երրորդ՝ նեղելով մի տնտեսական գործունեության տեսակից մեկ այլ գործունեության տեսակին և մի տեղից մեկ այլ տեղ աշխատանքի և կապիտալի ազատ տեղաշարժին»:

Ինչպես երևում է բերված մեջբերումից, տնտեսագիտության հիմնադիրը, պետության միջամտությունը և դրա ազդեցությունը տնտեսական գործունեության վրա ի վերջո տեսել է մրցակցության սահմանափակման մեջ:

Այսպիսով՝ քաղաքական կուսակցությունների տնտեսական ծրագրերում ներկայացված դրույթները տնտեսական մասով պետք է լինեն հստակ և հիմնավոր, որպեսզի ինչ-որ ժամանակ անց (մեզանում՝ հինգ տարի հետո) հնարավոր դառնա պարզելու՝ կատարվել են նախընտրական խոստումները, թե ոչ: Իսկ Հայաստանի Հանրապետության ներկա սոցիալ-տնտեսական և առաջիկա զարգացումների համար կարևոր չափանիշ է ստեղծված աշխատատեղերի թիվը: Այլ կերպ ասած՝ այն քաղաքական ուժը, որը կառաջարկի ստեղծել առավելագույն աշխատատեղեր և կհիմնավորի, թե դա ինչպես անել, նախապատվությունը նրան էլ պետք է տալ:

## ԳԼՈՒԽ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «-ՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 4.1. Նախամեկնարկային դիրքեր

Հայաստանի Հանրապետությունում 1991–1994 թվականների սոցիալ–տնտեսական իրադրության դիտարկումն ու գնահատումը իրականացվում է տնտեսության մեկնարկային մակրոցուցանիշների, բնորոշ միտումների և այս իրողություններով թելադրված՝ լուծման ենթակա խնդիրների համատեքստում:

Սկսած նախաերկրաչարժյան՝ 1986–1987 թվականներից, հանրապետության տնտեսությունում նշմարվում էին անկման որոշ դրսևորումներ, որոնք հիմնականում պայմանավորված էին արտադրության ոչ ձկուն կառուցվածքով, ներքին կոոպերացման ցածր աստիճանով՝ 5–7%, և այլ անհամամասնություններով: 1987 թվականին արդյունաբերական արտադրության միջին տարեկան աճն ընդամենը 0,15% էր:

Խորհրդային Միության շրջանակներում առկա էին տնտեսության զարգացումն արգելակող դրսևորումներ, որոնք իրենց զգացնել էին տալիս նաև բյուրոկրատական տնտեսվարման չափանիշներով (1989 թվականին արդյունաբերական 78 կարևոր արտադրատեսակներից տարեկան պլանը կատարվել էր միայն 25–ի գծով):

Տնտեսությանը զգալի վնաս պատճառեց 1988–ի ավերիչ երկրաշարժը, որն իր ընդգրկումով մասշտաբային էր, և որի հետևանքների սոսկ վերացումը դեռևս կլանելու է զգալի ֆինանսական միջոցներ առաջիկա տարիներին:

1988 թվականից կտրուկ փոխվեցին արտադրանքի արտահանման և ներմուծման, արտադրված և օգտագործված ազգային եկամտի հարաբերակցությունները (ներմուծման 1,1 մլրդ ռուբլու գերազանցում արտահանման նկատմամբ և օգտագործված ազգային եկամտի 0,7 մլրդ ռուբլու գերազանցում արտադրվածի նկատմամբ): 1989 թվականին չբավարարված պահանջարկը ավելին էր 1,5 մլրդ ռուբլուց: Անմխիթար էր տարբեր արտադրական կազմակերպությունների ֆինանսական դրությունը: Այդ տարում ամեն երրորդ (նախկին Միությունում՝ ամեն հինգերորդ) արդյունաբերական և շինարարական կազմակերպությունների ֆինանսական արդյունքներով ձախողել էր պլանավորած ցուցանիշները, իսկ 14%–ը (նախկին Միությունում՝ 6%) վնասներով էր աշխատում: Հանրապետության ռեսուրսները բնութագրող հիմնական մակրոցուցանիշները ներկայացվում են աղյուսակ 4.1–ում:

Աղյուսակ 4.1. Հիմնական մակրոցուցանիշների դինամիկան՝ ըստ 1987–1990 թթ. փաստացի գներով, մլրդ ռուբլիներով

Եկամտի տեսակը	1987	1988	1989	1990
Արտադրված ազգային եկամուտ	6,1	5,8	6,7	7,0
Օգտագործված ազգային եկամուտ, այդ թվում՝	5,8	5,0	7,5	8,2
Սպառման համար	4,3	4,5	4,8	5,6
Կուտակման և այլ ծախսերի համար	1,5	0,5	2,7	2,6

Տվյալների աղբյուրները՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկրթությունները, Tacis «Հայաստան. տնտեսական միություններ» թողարկումները:

Օգտագործված ազգային եկամտի նկատելի աճը 1989–1990 թթ. պայմանավորված էր ամենից առաջ կուտակման ֆոնդի կազմում նյութական շրջանառու միջոցների ավելացմամբ, որոնք աճեցին անավարտ շինարարության զգալի հավելածի հաշվին (եթե 1988 թ. այն կազմել է 470 մլն ռուբլի, ապա 1989 թ.՝ 1,3 մլրդ ռուբլի, իսկ 1990 թ.՝ 1230 մլն ռուբլի):

1989–1990 թթ. նախկին Միության շրջանակներում տնտեսական կապերի թուլացումը, թերարտադրությունն ու առանձին արտադրությունների փակումը սկիզբ դրեցին հանրապետությունում պետական պատվերների կրճատմանը, առաջ բերեցին անվստահ գործընկերոջ համբավ: Այդ գործընթացն առավել բացասաբար անդրադարձավ հատկապես նախկին Միության ռազմարդյունաբերական համալիրի արտադրությունների ու գիտահետազոտական, փորձարարական, կոնստրուկտորական կազմակերպությունների գործունեության արդյունքների վրա, որոնց առանձին արտադրությունների ու մշակումների մասնաբաժինները նախկին ԽՍՀՄ ռազմարդյունաբերական համալիրում կազմել են մինչև 12%: Այդ համալիրում օրգանապես սերտաձած արդյունաբերության այս ենթաձյուղերի գործունեությունը, ըստ էության, կաթվածահարվեց կոնվերսիայի ծրագրի բացակայության պայմաններում: Այն, ըստ մեր գնահատումների, հետագայում իր վճռորոշ դերն ունեցավ ՀՀ տնտեսության կազմալուծման գործում:

Հանրապետական արտադրությունը շաղկապված է եղել միութենական համալիրին: Այսպես՝ 1989–1990 թթ. արտահանման և ներմուծման ծավալները՝ գերակշռող մասով բաժին են ընկել Ռուսաստանին (արտահանում՝ շուրջ 62%, ներմուծում՝ 52%), այնուհետև Ուկրաինային (13–14%, 12–15%), Բելառուսին (2–3%, 5–7%), Վրաստանին (3,5–3,7%, 1,3–1,6%), Ղազախստանին (6–7%, 1–3%):

Արտերկրներ արտահանման տեսակարար կշիռը նշված տարիներին կազմել է ընդամենը 1,2% և 0,7% և այդ երկրներից ներմուծումը՝ 15,8% և 16,6%: Արդյունաբերական արտադրանքի միայն 1,6% է կազմել արտահանումը (շինանյութեր, էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանք, մետաղահատ հաստոցներ, արհեստական այլմաստ և այլն): Արտերկրներ արտահանման ցուցանիշով հանրապետությունը զիջել է իր մերձակա հարևաններին, մերձբալթյան հանրապետություններին:



Այսպիսով՝ տնտեսական դինամիկայի հետազոտման համար ընտրված ժամանակահատվածի նախաշեմին արդեն ակնառու են եղել անկումային միտումներ ինչպես արտադրական հնարավորությունների արդյունավետ գործադրման, այնպես էլ բնակչության կենսամակարդակի բարձրացման բնագավառներում: Նախամեկնարկային տարում կրճատվել է աշխատանքի արտադրողականությունը՝ 8,4%, ինվեստիցիաները և հիմնական ֆոնդերի գործարկումը 1991 թ. կազմել են 1990 թ. միայն 1/3-ը: Նվազել է օգտագործված ազգային եկամտում կուտակման ֆոնդը (հետագա՝ 1992-1993 թվականներին՝ ավելի կտրուկ), դրանով իսկ խաթարվել է վերարտադրական գործընթացը: Արդյունաբերական հիմնական ֆոնդերի նորացման գործակիցը 1991 թ-ին կազմել է ընդամենը 3,2%՝ 1986 թվականի 9,7%-ի դիմաց: Ֆիզիկապես ու բարոյապես մաշված են եղել մեքենասարքավորումները (40-60%-ը ունեցել են 10 և ավելի տարիք):

Նվազել է պետական մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, աճել են ապրանքների գներն ու ծառայությունների սակագները (1991 թ.՝ նախորդ տարվա համեմատ 274,1%-ով, երբ միջին աշխատավարձը աճել էր 43,4%-ով):

Նախամեկնարկային տնտեսական իրավիճակի անկումային միտումների կանխման և զարգացման կայուն նախադրյալներ ապահովելու համար անհրաժեշտ էր համակողմանի վերլուծություն և իրավիճակին համարժեք գործողությունների համապարփակ ծրագրի մշակում և իրագործում, որը, սակայն, չապահովվեց:

## 4.2. Պետության մասնակցությունը տնտեսության վերափոխումներին

Հասարակական կյանքի բնականոն զարգացումն ապահովելու գործընթացում պետության առանձնահատուկ դերը բազմանշանակ է.

- օրինականության հիմքերի ստեղծում և ապահովում,
- աջակցություն քաղաքական հավասարակշռված իրադրությանը,
- սոցիալական ապահովում և ներդրումներ համապատասխան ենթակառուցվածքներում,
- օժանդակում բնակչության անպաշտպան շերտերին,
- շրջակա միջավայրի պաշտպանություն [44, էջ 4]:

Թվարկված և սրանցից ածանցվող այլ խնդիրների իրագործման գործառույթը պետությունը հիմնականում դնում է իր կառավարության վրա՝ ստեղծելով համապատասխան ինստիտուտներ: Այսպիսով՝ պետությունը հանդես է գալիս իրեն առաջադրած խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների հայթաթման և հավաքագրման դերակատարմամբ: Այս պարագաներում խիստ կարևոր է դառնում, թե ինչ արդյունավետությամբ է կառավարությունը կատարում իր այդ առաքելությունը:

Կառավարությունների գործունեության արդյունավետության հիմնախնդիրներն արծարծվել են ամենատարբեր գիտաժողովներում: Մասնավորապես՝ այն դարձել է Համաշխարհային բանկի զեկուցման թեման 1997 թ. համաշխարհային զարգացման մասին, որում նշվում է, որ կառավարության արդյունավետությունը

չի բնորոշվում սուսկ պետական հատվածի կամ պետական ծախսերում ՀՆԱ-ի մասնաբաժնի չափերով: Դրանք բազմաչափանիշային են, և գոյություն ունեն չորս հիմնական հարցեր [49].

- Ինչպե՞ս է կառավարությունը կարողանում առավել արդյունավետ օգտագործել պետական ծախսերը՝ պետական ծառայությունների որակի բարձրացման համար:
- Ի՞նչ խթաններ է կարողանում օգտագործել կառավարությունը, որպեսզի մասնավոր և պետական մասնաբաժին ունեցող ընկերություններն ավելի ակտիվորեն մատուցեն սոցիալական համախմբմանն ուղղված ծառայությունները:
- Ինչպիսի՞ արդյունավետ միջոցառումներ է կարողանում իրագործել կառավարությունը սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերի տեսանկյունից, որը միաժամանակ կնպաստի տնտեսական աճին և արդարության ապահովմանը:
- Ինչպիսի՞ արդյունավետ և արդարացի միջոցներ կարող է օգտագործել կառավարությունը եկամուտների ավելացման համար:

Այս ամենը մեկ անգամ ևս ընդգծում է պետության ներուժի (ինչ խնդիրների լուծմանն է ի զորու) և կառավարության գործառնությունների (ինչ բնագծեր են հաղթահարվելու) համապատասխանեցման գերխնդիրը: Կիրառման ոլորտները բազմազան են: Այսպես, օրինակ՝ մենաշնորհային տնտեսությունների, այդ թվում՝ բնական մենաշնորհի դիրքով օժտված ընկերությունների գործունեությունը կարող է իրականանալ կառավարման այլընտրանքային մեխանիզմներով: Երբ տվյալ ոլորտի արտադրությունն (իրացումը) ապահովող մենատերերը, կարգավորելով առաջարկը, չեն արձագանքում շուկայական համակարգի ինքնակարգավորմանը (թելադրելով իրենց ձեռնառու գինը), անհրաժեշտ է դառնում հակամենաշնորհային պահանջների կանոնակարգումը այն հաշվով, որ խոչընդոտվի անբարեխիղճ գնային քաղաքականությունը, պաշտպանվեն սպառողների շահերը: Հայաստանում այս խնդիրը արդիական է մնում այնպիսի մենաշնորհների համար, ինչպիսիք են գազի փոխադրումները, էլեկտրական և ջերմային էներգիաների արտադրությունն ու մատակարարումը, բաշխիչ էլեկտրացանցերը, օդանավակայանների, հեռահաղորդակցության, ջրնուղ-կոյուղու և այլ ծառայություններն ապահովող ընկերությունները: Ամբողջ խնդիրն այն է, թե որքանով է պետության մասնակցությունը հիմնավորված, իսկ միջամտության պարագայում՝ ինչ մեթոդներ ու մեխանիզմներ են ընդգրկվում: Նկատենք, որ սոցիալ-տնտեսական համակարգերում կառավարումը, ի վերջո, որոշումների կայացման գործընթաց է, որն ընթանում է ֆորմալ և ոչ ֆորմալ կարգավորման կառուցակարգերով: Համապատասխան կառուցվածքային կարգավորումների պակասը, բնականորեն, հանգեցնում է հասարակությունում մեծացող անհավասարությանը:

Կարգավորման հիմնախնդիրը իրավամբ դարձել է տնտեսագիտության առանցքային հետազոտման առարկան, որն այսօր ունի իր երաշխավորությունները պետության նորմատիվային տեսությունների ասպարեզում [43]:

Տեսական դրույթները, բնական է, ներառում են առավել իրատեսական միջանկյալ իրավիճակներով պայմանավորված մոտեցումներ, որոնց քննարկումները միշտ օգտակար են տնտեսական քաղաքականության ընտրության հարցում, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվում հիմնավորելու զարգացման տվյալ փուլում պետության զգալի կամ նվազ միջամտության անհրաժեշտությունը: Ինչպես նկատում է Լեհաստանի նախկին փոխվարչապետ և ֆինանսների նախարար Ռիչարդ Հիրշերը, «Կառավարության դերը պետք է դրվի ճիշտ իր տեղում... Հարցը կառավարության մեծ կամ փոքր լինելու մեջ չէ, այլ արդյոք կառավարությունը ի վիճակի է ապահովել ղեկավարում, վարել ճիշտ քաղաքականություն, թե՛ ոչ: Այսպիսով՝ պետությունը պետք է ակտիվ մնա երկրի քաղաքական-տնտեսական քաղաքականության ձևավորման գործում ոչ որպես ակտիվների սեփականատեր կամ պետական ձեռնարկությունների կառավարիչ, այլ որպես ինստիտուցիոնալ կարգավորումների ճարտարապետ, ֆինանսական հիմնախնդիրների պահպան, մարդկային կապիտալում ներդրող, ենթակառուցվածքների զարգացման ֆինանսավորող և գորբալ ինտեգրման կառավարիչ» [41]: Այնուհետև հեղինակը ընդգծում է երեք բնագավառներ, որոնց պետք է անդրադառնալ.

- ֆինանսական և տնտեսական հիմնախնդիրների մասին հոգալը,
- ինստիտուտների ստեղծումը և պահպանումը, ինչպիսիք են հակամենատիրության գործակալություններն ու օրենքները, առևտրային և ներդրումային բանկային գործը, սոցիալական ապահովության ցանցերը, արժեթղթերի փոխանակման հանձնաժողովները, կապիտալի շուկաների վերակարգավորումը,
- ներդրումները մարդկային կապիտալի մեջ:

Վերը շարադրվածը նպատակ ունի տեսնելու և իմաստավորելու այն դաշտը, որի գոյության պարագաներում իրականացվեցին ՀՀ տնտեսական վերափոխումները:

### 4.3. Տնտեսական վերափոխումները ՀՀ-ում. առաջին արդյունքները

«Նախամեկնարկային դիրքեր» բաժնում նկարագրված իրավիճակը հանրապետության տնտեսության անկման կանխատեսման լուրջ ազդակ էր: Այն ողջ թափով զգացնել տվեց նախկին Միության քաղաքական-տնտեսական կառույցների փլուզումից հետո: Ընդ որում, եթե վարչահրամայական համակարգի փլուզումը ենթադրում էր նորի ստեղծումը նորանկախ հանրապետություններում, ապա ավանդական կապերի ձախողումը պարտադրում էր անհետաձգելիորեն իմաստավորել հանրապետությունում կառուցվածքային բարեփոխումների նախապատվելի ուղղությունները, կողմնորոշվել արտադրանքի իրացման շուկաների հարցում, ձեռնամուխ լինել արտադրությունների վերամասնագիտացման ոչ դյուրին և երկարատև խնդրին՝ այն դնելով տնտեսական վերափոխումների բուն հիմքում:

Հանրապետությունում ընտրվեց շուկայական տնտեսությանն անցման արմատական ուղին: Ընդդիմախոսների այն տեսակետը, որով շեշտադրվում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարեփոխումների ազատականացման ու մոնետարիզմի մոդելների միակ ձիշտ ընտրությունը և Ռուսաստանի Դաշնությունում իրականացված գայդարյան նույնանուն մոդելների մանրակերտի՝ մեր հանրապետությունում տեղայնացման անխուսափելիությունն ու պարտադրվածությունը, այսօր դեռևս միանշանակ չի կարող գնահատվել: Ազատականացման ձիշտ ուղու ընտրությունը մեզանում պահանջում էր առավելագույնս հաշվի նստել հանրապետության առանձնահատուկ պայմանների հետ: Պետք է տարբերել տնտեսությունը վարելու, կառավարելու անկախությունը իր իսկ՝ տնտեսության անկախությունից: Քաղաքական անկախություն ձեռք բերած պետությունը ազատ է նախ և առաջ տնտեսական նպաստավոր քաղաքականության ընտրության հարցում, որի հիմքը սկզբունքորեն տնտեսության ինքնուրույն կառավարման հնարավորությունն է, բավարար մեխանիզմների գործադրումը՝ ընդհուպ խորացող ինտեգրացիայի պայմաններում: Ինչ վերաբերում է այլընտրանքներին, ինչպես հուշում է միջազգային փորձը, դրանք բազմազան են՝ պետական կարգավորման «վարչական դեկավարման» (Ճապոնիա), «սոցիալական շուկայական տնտեսության» (Գերմանիա), «դիրիժիստական կարգավորման» (Ֆրանսիա) տնտեսական քաղաքականություններ, որոնք առավել դյուրին կարող էին հարմարեցվել ՀՀ երկրաքաղաքական ու տնտեսական պայմաններին:

Անկախ պետությունների համագործակցության բոլոր նորանկախ պետություններում տնտեսական բարեփոխումների բնույթը պայմանավորող հիմնական գործոններն էին տնտեսության կառուցվածքը, ռեսուրսապահովվածությունը: Բնական է, որ դրանց վրա էական ազդեցություն էին թողնում քաղաքական գործոնը, ազգային ավանդույթները: Սակայն բոլորի համար ընդհանրականը՝ պլանային տնտեսվարումից անցումն էր շուկայականին, որը ենթադրում է տնտեսական գործունեության (այդ թվում՝ արտաքին) ազատականացումը, բազմակացությամբ տնտեսության կազմակերպությունների և մրցակցային միջավայրի ստեղծումը, հողի, կապիտալի, աշխատուժի նկատմամբ մասնավոր սեփականության հաստատումը: Երկրները, ըստ բարեփոխությունների բնույթի և նպատակին հասնելու մարտավարության, պայմանակաՆորեն կարելի է դասակարգել.

- Ռուսաստան, Ղրղզստան—արմատական ուղի, որի ընթացքում ենթադրվում էր մոնետարիստական լծակներով և միջազգային ֆինանսական հաստատությունների օգնությամբ հասնել արտադրության անկման կրճատման և մակրոտնտեսական կայունացման: Այդ երկրները արագորեն ձեռնամուխ եղան հին կառույցների (պետական կարգավորման) արագ քանդմանը ու նորերի ստեղծմանը՝ ազատականացման ու մասնավորեցման ուղիով, էական ինստիտուցիոնալ ձևափոխումներով:
- Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան—չափավոր արմատական ուղի, որի ընթացքում պետական կարգավորման տարբեր տարատեսակներից աստիճանական անցում էր կատարվում շուկայական համակար-

գին: Գերակայում է տնտեսության կառուցվածքային վերակառուցումը ինստիտուցիոնալ բարեփոխությունների նկատմամբ, ֆինանսական քաղաքականությունը կողմնորոշվում է դեպի սոցիալական կայունություն, արտադրության վերականգնում (գյուղատնտեսական և սպառողական ապրանքների արտադրության հաշվին, ինչպես նաև պաշտպանական համալիրի կոնվերսիայի միջոցով):

- Ադրբեջան, Վրաստան, Տաջիկստան — ըստ էության, բարեփոխումների ընթացքը, հիմնականում ներքաղաքական իրավիճակով պայմանավորված, կասեցված է եղել սկզբնական շրջանում: Հետագա ձեռնարկումները առավել մոտ են եղել երկրորդ խմբին (Տաջիկստանում՝ կոնսերվատիվ մոդելի կիրառմամբ):

Հայաստանը սկզբնական շրջանում՝ մինչև 1993 թվականը, ընթանում էր առաջին խումբ երկրների ուղիով, իսկ հետագայում բարեփոխումներն, ըստ էության, դանդաղեցին: Սկզբնական փուլը չունեցավ իր տրամաբանական զարգացումը, որի հիմնական պատճառը ակնհայտ է: Տնտեսական կարգավորման կառույցների կազմալուծումից հետո առաջացած վակուումը չլցվեց նորաստեղծ հարաբերություններին համապատասխան տնտեսական կառույցներով և չամրագրվեց իրատեսական ծրագրերով: Այդ պայմաններում կառավարման բնորոշ գիծը դարձավ ինքնանպատակ իրավիճակային գործելակերպը:

Երկրաքաղաքական, սոցիալ-տնտեսական կորդինատների այն համակարգում, որում գտնվում էր հանրապետությունը, ընտրված մոդելի նպատակահարմարության հարցը մասամբ արդեն քննարկվել է շարադրանքում:

Տնտեսական բարեփոխումների նախանշած ուղու հետևողական կենսագործումը թերևս չէր ունենա այն ծանր հետևանքները (խոր, համատարած ճգնաժամ), որից դուրս գալը ներկայումս մեծ ջանքեր է պահանջում իշխանություններից: Հստակ է, որ հայաստանյան 1992 թ. իրողություններում նորին անցումը և հնից հրաժարվելը պետք է իրականացվեր միայն ի հաշիվ բյուջեի սղաճի ու նոր պարտքերի: Սակայն չգործադրվեցին ո՛չ վարկային էմիսիայի հնարավորությունները և ո՛չ էլ արտաքին խոշոր ներդրումները և վարկերը (դրանք պետք է ստեղծվեին խոշորամասշտաբ ներդրումային նախագծերի միջոցով՝ առավելագույնս օգտագործելով սփյուռքի հնարավորությունները): Հանրապետությունում ազգային ինվեստիցիոն ապահովագրական հիմնադրամի ստեղծումը (գուցեն ներառելով «Հայաստան» հիմնադրամը) կկարողանար կատարել Հայաստանում օտարերկրյա ներդրումների քաղաքական ռիսկի կրճատման կանխարգելիչ գործառնայթ, կարծում ենք՝ ինվեստիցիաների ներհոսքի, վարկերի տրամադրման համար բարենպաստ պայմաններ կապահովել:

Առաջ անցնելով՝ նկատենք, որ ներկայումս գործադրվող ֆինանսական կայունացման կոշտ քաղաքականությունը դեռևս չի նպաստում տնտեսության արտահանումների մասշտաբների մեծացմանը: Բերենք սիմպտոմատիկ մեկ օրինակ. վերջին տարում դրամական բազայի ոչ քիչ մեծացումը գրեթե ազդեցություն չի ունեցել ինֆլյացիայի վրա:

Հայաստանի Հանրապետությունում անցումը շուկայական տնտեսությանը իրագործվեց ազատականացման արտաքին հանձնարարականների պարզու-

Նակ տեղայնացման և (կամ) զուտ քաղաքական նպատակներ հետապնդող մոտեցումների ներդրման միջոցով: Հավուր պատշաժի չգնահատվեցին մեկնարկային տնտեսական իրողությունները (ձեռնարկությունների ծայրաստիճան վատ ֆինանսական դրությունն ու արտադրության նկատվող անկումը, աղետի գոտու առկա հիմնահարցերը, արտադրության գերակշռող մասով ցածր տեխնոլոգիական մակարդակն ու ճյուղային կառուցվածքի ձևախեղումը, ռուբլու շրջանառության անվերահսկելիությունը, տրանսպորտային հաղորդակցությունների անհուսալիությունն ու վառելիքաէներգետիկ սովը և այլն), կառավարման ու կառուցվածքային ձևափոխումների ասպարեզում դրսևորվեց անիրագրելիությունն ու ծայրահեղականությունը, որոնք չէին կարող իրենց զգացնել չտալ և, որպես հետևանք՝ նպաստել հանրապետության տնտեսության փլուզմանը: Վերջինիս դրսևորման ձևերից մեկն էլ իշխանության ձգնաժամն էր, որը շուկայական կարգավորման կառուցակարգերի անկատարելիության պարագաներում առավել ցայտուն դրսևորվեց տնտեսության վարչական վերահսկման համակարգի փլուզմամբ:

1980-ականների վերջերից տնտեսական իրադրության կանխորոշողը դարձավ արտադրության անկումը: Այն սկսեց խորանալ: 1991 թվականին 1990 թ. համեմատ հանրապետության համախառն ազգային արդյունքը նվազեց 9,8%-ով, իսկ 1989 թվականի համեմատ՝ 16%-ով, ազգային եկամուտը՝ համապատասխանաբար 11,4% և 18,9%, արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 7,3% և 15,6%-ով:

Տնտեսական անկման թափը առավել տագնապալի չափերի է հասնում արդեն 1992 թ-ին: Արտադրված ազգային եկամուտը 1992 թ-ին 1991 թ-ի համեմատ նվազեց 42,6%-ով: Առաջանցիկ անկում դրսևորվեց արդյունաբերությունում, կտրուկ կրճատվեց սպառողական, կարևորագույն պարենային ապրանքների արտադրությունը (50-90%): Տնտեսական անկման մակարդակով Հայաստանը 1992 թ. գերազանցել է նախկին Միության բոլոր հանրապետություններին: Այսպես՝ 1992 թ., նախորդ տարվա համեմատությամբ, արտադրված ազգային եկամտի ծավալը ԱՊՀ երկրներում կազմել է 80,1%, Հայաստանում՝ 54%, արդյունաբերական արտադրանքը՝ համապատասխանաբար 82% և 51,8%, մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը՝ 65,5% և 29,2%: Բնակչության դրամական եկամուտների նկատմամբ գների աճի գործակիցը ամենաբարձրն է եղել ԱՊՀ երկրների շարքում՝ 4,7 անգամ: Այդ ցուցանիշով Հայաստանը զիջել է ԱՊՀ երկրներին նաև 1993 թ.:

Արտադրության չափերի կրճատումն անխուսափելիորեն իր ազդեցությունն է թողել հանրապետության ֆինանսական վիճակի վրա: Պետության եկամուտների ձևավորման ու վերաբաշխման գործում էականորեն թուլացավ պետական միջամտությունը, և 1992 թ. շարունակվեց ՀՀ պետբյուջեի դեբի նվազման միտումը: Այսպես, եթե 1991 թ. պետական բյուջեի միջոցով բաշխվում և վերաբաշխվում էր օգտագործված ազգային եկամտի 35,5%-ը և համախառն ազգային արդյունքի 30,7%-ը (1990 թ.՝ 47,7%-ը և 38%-ը), ապա 1992 թ.՝ արդեն 22%-ը և 1993 թ.՝ 26%-ը: Աստիճանաբար նվազել է բյուջեից տնտեսության ֆինանսավորմանն ուղղվող միջոցների բաժինը (եթե 1991 թ. այն կազմել է 54,3%, ապա

1993 թ.՝ 13,5%): ՀՀ պետությունից դեֆիցիտի (ծախսերի և համախառն ազգային արդյունքի նկատմամբ դեֆիցիտը համապատասխանաբար 1992 թ. կազմել է շուրջ 50% և 16%, 1993 թ.՝ մոտ 45% և 18%) և գների աճի պայմաններում խիստ նվազել են ներդրումային ռեսուրսները: Կուտակման ֆոնդում հիմնական և շրջանառու միջոցների անհամամասն հավելաժը (շրջանառու միջոցների շուրջ հարյուրապատիկ գերազանցում), աննշան ամորտիզացիոն հատկացումները (հիմնական միջոցների չվերազնահատման պատճառով) ըստ էության «շրջափակել» էին ներդրումային ռեսուրսների համալրումը: Կապիտալ ներդրումների նպատակով օգտագործվել է արտադրական կազմակերպությունների շահույթի միայն 10–12%–ը: Վարկային հատկացումները զուրկ են եղել ներդրումային ուղղվածությունից: (Եթե 1990 թվականին վարկային ներդրումների ընդհանուր ծավալում երկարատև վարկերի բաժինը կազմել է 35,9%, 1991 թ.՝ 21,3%, ապա 1992 թ.՝ ընդամենը 0,15%, ՌԴ–ում՝ 5%):

Հանրապետության տնտեսության կառուցվածքում արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը գերակշիռ բաժին են ունեցել (1991 թ. համախառն ազգային արդյունքի ձյուղային կառուցվածքում արդյունաբերությունը՝ 56,2%, գյուղատնտեսությունը՝ 25,1%, արտադրված ազգային եկամտի կառուցվածքում՝ համապատասխանաբար 42,8% և 32%): Արդյունաբերական արտադրության անկման մակարդակը բնութագրվել է աղյուսակ 4.2–ում բերված ցուցանիշներով:

**Աղյուսակ 4.2.** *Արդյունաբերական արտադրանքի և անձնակազմի բնութագրերը՝ ըստ 1990–1993 թթ.*

	1990	1991	1992	1993
Արդյունաբերական արտադրանքի ծավալը %-ներով նախորդ տարվա համեմատ (1989 թ.՝ 7,8 մլրդ ռ.)	91,1	85,4	47,6	90,3
Արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը (հազար մարդ)	397,3	362,3	317,1	276

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

Բերված տվյալները վկայում են արդյունաբերական արտադրության կրճատման աննախընթաց թափի մասին: 1993 թ. արդյունաբերական արտադրանքի արտադրության մակարդակը 1990 թ. նկատմամբ կազմել է 36,7%: Ավելի քան 30%–ով կրճատվել է արդյունաբերաարտադրական անձնակազմը: Ընդ որում՝ կրճատումը հիմնականում բաժին է ընկել մեքենաշինական, սարքաշինական կազմակերպություններին:

#### 4.4. Հաշվեկշռվածությունը սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում

Մակրոտնտեսական անհավասարակշռվածության պարագայում (դրանում կհամոզվենք ստորև) կառավարության գործնական տնտեսական քաղաքականությունը կրում է օպերատիվ իրավիճակային բնույթ, և գլխավորը՝ չի երաշխավորվում տնտեսության կայուն զարգացումը:

ՀՀ կառավարության սոցիալական ու տնտեսական զարգացման ամենամյա ծրագրերը, բնականաբար, պետք է ներառվեն հեռանկարային, երկարաժամկետ նպատակադրումների համատեքստում մշակված ծրագրերում<sup>1</sup>: Հեռանկարային՝ 5–10–15 տարվա կտրվածքով սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի բացակայությունը կառավարության ամենամյա ծրագրերից բխող մինչև հազար և ավելի որոշումները գերակշիռ մասով դառնում են «շուտ փչացող բարիք» երկու պատճառներով. նախ՝ երբ չեն ընդունվում տնտեսության երկարաժամկետ զարգացման վրա ազդեցություն ունեցող որոշումներ, և երկրորդ՝ երբ խիստ ցածրանում է դրանց կատարման աստիճանը:

Ակնհայտ է, որ ամենամյա ծրագիրը, հանդիսանալով առավել երկարաժամկետ ծրագրի մի հատվածը, կամ այլ կերպ՝ մի հանգրվանը, չէր կարող շրջանցել վերջինում առաջադրված բազմաչափանիշային գերխնդիրները: Իսկ ռազմավարական ծրագրերում առկա են այդ գերխնդիրները՝ ձևակերպված ազգային շահի և ծրագրում դրված նպատակների զուգամիտության պահանջներով: Որքան էլ ռեսուրսները սահմանափակ լինեն, միշտ կան դրանց լավ կամ վատ օգտագործման չափանիշներն ու հնարավոր լուծումները:

Ազգային շահի համատեքստում (առողջ սերունդ, երկրի պաշտպանունակություն, տնտեսական անվտանգություն և այլն) առաջադրվող նպատակների ու բնագծերի կոնկրետացումը կատարվում են ամենամյա ծրագրերում: Այս պայմաններում «Պարեն», «Էներգետիկա», «Մետաղագործություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Արտահանում», «Առողջապահություն», «Կրթություն», «Մշակույթ» և այլ նպատակային ենթածրագրերի ցանկի նախ հիմնավորումը, ապա և դրանց մանրակրկիտ մշակումը, իրագործումը կդառնան միջոց դրված նպատակային բնագծերին հասնելու համար:

Այս տեսանկյունից, մշակվող ու գործադրվող ծրագրերը մակրոտնտեսական հաշվեկշռվածության անհրաժեշտ պայման են: Դրանց բացակայությունը չի երաշխավորում՝

- կառուցվածքային ու ներդրումային արդյունավետ քաղաքականության իրագործումը,
- շուկային անցնելու կառուցակարգերի արդյունավետ գործադրումը:

<sup>1</sup> 1992 թվականին ՀՀ կառավարության կողմից ՀՀ Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացվեցին (սակայն, ցավոք, չհաստատվեցին) սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրույթները, որոնց թերևս ընդունելի նախապայմանների հետ հաշվի նստելը էապես կսահմանափակեր կառավարության հախուռն գործունեությունը՝ առանց այդ նախապայմանների (օր.՝ շուկայական անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորում, նոր արտադրատնտեսական հարաբերություններում պետական ձեռնարկության կարգավիճակի հստակեցում և այլն):



Մյուս կողմից՝ մշակվող ամենամյա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը անցած ժամանակահատվածում չեն ունեցել գիտական պատշաճ մակարդակ, զուրկ են եղել հիմնավոր մեթոդաբանական մոտեցումներից, կանխատեսումները՝ անհուսալի, հայեցողական, չեն պարունակել ակտիվ տնտեսական քաղաքականության լծակներն ու տարրերը, չի ապահովվել դրանց տարբերակայնությունը և հաշվեկշռվածությունը նույնիսկ տարվա կտրվածքով:

Տնտեսական կայուն աճը, ֆինանսական շուկաներում կայունության երաշխիքները առկա են այնքանով, որքանով արդյունավետ են գործադրվում ու կոորդինացվում ինստիտուցիոնալ կառույցները և փոխգործակցում իրականացվող դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականությունների հետ: Իր հերթին՝ տնտեսական երկարաժամկետ աճի հնարավորինս ճշգրիտ կանխատեսումները պայմանավորված են նրանով, թե ինչ որակի մոդելներով են նկարագրվում այդ ոլորտներում ընթացող գործընթացները: Խնդիրն այն է, որ կիրառվող մոդելները պետք է կարողանան ներառել պատճառական կապերը, որոնք վերաբերում են տնտեսական նպատակային ցուցանիշների ծրագրած և փաստացի մակարդակներում առկա շեղումներին: Թերևս այս հանգամանքն է էական նշանակություն ստացել, որ չի հաջողվել հաղթահարել տնտեսական ազատականացման առաջին տարիներից սկիզբ առած ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի անհավասարակշռվածությունը, որի ճեղքվածքը շարունակում է ծածկվել միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի, մասնավոր դրամական փոխանցումների և հումանիտար օգնության միջոցների հաշվին:

Ծրագրված և փաստացի մակարդակների էական խզվածության ակնառու օրինակ են նաև ՀՀ-ում իրականացվող դրամավարկային քաղաքականության նպատակային ցուցանիշների վերաբերյալ աղյուսակ 4.3-ում բերված տվյալները:

Ի դեպ՝ այսպիսի շեղումները բնութագրական չեն միայն ՀՀ տնտեսությանը: Ռուսաստանի Դաշնության տնտեսական ծրագրի նախագծի առթիվ Ա. Իլարիոնովը [45] վկայակոչում է, որ «1999 թ. Միջազգային արժութային հիմնադրամը կանխատեսում էր ՀՆԱ-ի 7,5-7,8% անկում Ռուսաստանի Դաշնությունում, մինչդեռ այն աճեց 3,2%-ով»: Ոչ եզակի նման իրավիճակները պատկերացում են տալիս այդպիսի կանխատեսումների որակի մասին: Ռուսաստանի օրինակը միակը չէ, ԱՄՆ-ի տնտեսագետները սխալվեցին նաև ասիական երկրներում 1998 թ. ձգնաժամից հետո աճի տեմպերի կտրուկ անկման իրենց կանխատեսումներում: Նշվում էր 2-3% աճի մասին, մինչդեռ ասիական շատ երկրների տնտեսություններում հաղթահարվում է 10% տնտեսական աճը:

Ինչ վերաբերում է սոցիալական և տնտեսական զարգացման ՀՀ ծրագրային և փաստացի մեծություններում եղած տարբերություններին՝ պատճառները բազմազան են: Այդուհանդերձ, որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնական պատճառը նորից հնարավոր զարգացումների վատ կանխատեսումն է: Այն հաճախ ուղեկցվում է կառավարական մարմինների կողմից ստանձնած պարտավորությունների վատ կատարմամբ, երբեմն նաև արտաքին ոչ բարենպաստ ազդեցություններով (ֆինանսական ձգնաժամեր, արտաքին շուկաներ և այլն):

**Աղյուսակ 4.3. Իրական ՀՆԱ-ի, ինֆլյացիայի միջին տարեկան հավելածի և դրամ/դրոյար միջին տարեկան փոխարժեքի փաստացի և ծրագրված ցուցանիշները ՀՀ-ում 1991–2013 թթ.**

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002
<b>Ցուցանիշները</b>	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված
	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված	Ֆաստացի/ծրագրված
	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված
Տեսական հավելած՝ իրական ՀՆԱ-ի միջին տարեկան հավելումը, %-ով	-11,7/ ...	-41,8/ ...	-8,8/ ...	5,4/ ...	6,9/ ...	5,9/ ...	3,3/ ...	7,3/ 5,2	3,3/ 4,6	5,9/ 5,0	9,6/ 7,5	13,2/ 6,0
Ինֆլյացիա՝ սպառողական գների միջին տարեկան հավելումը, %-ով	174,1/ ...	728,7/ ...	1822,9/ ...	4962,3/ ...	176,0/ ...	18,7/ ...	14,0/ 8,0-10,5	8,7/ 9,0	0,6/ 9,9	-0,8/ 5,0	3,1/ 3,4	1,1/ 3,0
Դրամ/դրոյար միջին տարեկան փոխարժեքը	-	-	-	405,51/ ...	402,66/ ...	438,00/ ...	498,83	504,89/ 521	535,06/ 543	539,53/ 547	555,8/ 550	573,35/ 573,4
<b>Ցուցանիշները</b>	2003 թ.	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	-
	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված	Փաստացի/ծրագրված
	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված	ված
Տեսական հավելած՝ իրական ՀՆԱ-ի միջին տարեկան հավելումը, %-ով	14,0/ 6,0	10,5/ 7,0	13,9/8,0	13,2/ 7,5	13,8/ 9,0	6,9/ 10	-14,1/ 9,2	2,1/ 1,2	4,7/ 4,6	7,2/ 4,2	3,5/ 6,2	-
Ինֆլյացիա՝ սպառողական գների միջին տարեկան հավելումը, %-ով	4,7/ 2,5	7,0/ 3,0	0,6/ 3,0	2,9/ 3,0	4,4/ 4±1,5	9,0/4± 1,5	3,4/ 4±1,5	8,2/ 4±1,5	7,7/ 4±1,5	2,6/ 4±1,5	5,8/ 4±1,5	-
Դրամ/դրոյար միջին տարեկան փոխարժեքը	578,77/ 586,4	533,45/ 589,3	457,69/ 500,05	496,04/ 420	342,08/ 357,0	305,97/ 325,16	363,28/ 303,69	373,66/ 386,41	372,50/ 357,98	401,76/ 378,96	409,63/ 405,52	-

\* Դեկտեմբերի վերջի դրությամբ, «-» — երևույթը բացակայում է, «...» — վիճակագրական տվյալներ չկան:  
**Աղբյուրը՝** ՀՀ ԱՎԾ, ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ ֆինանսների նախարարություն, համապատասխան տարիների պետական բյուջեների մասին ուղերձները, [36, էջ 19–23]:

#### 4.5. Սոցիալ-ժողովրդագրական քաղաքականությունը

Կառավարության տնտեսական բարեփոխումների ձեռնարկումներում հատկապես 1990–ական թվականներին անտեսվեցին սոցիալական կողմնորոշումների հիմնախնդիրները: Արմատավորվող նոր տնտեսական հարաբերություններում անհրաժեշտ սոցիալական մեղմիչների չգործադրումը հանգեցրեց այս ոլորտի որոշ ցուցանիշների անկմանը: Ծայրաստիճան սրվեց սոցիալ-ժողովրդագրական իրադրությունը, տեղի ունեցավ մարդկային կապիտալի փոշիացում, որն իսկ «բարեփոխումներ» հասկացության գործածման հակացույցն է այս ոլորտում: «Սկզբնական բարեփոխումներն ուղեկցվեցին կենսամակարդակի կտրուկ անկմամբ, զանգվածային գործազրկությամբ, բնակչության մեծամասնության աղքատացմամբ, սոցիալական բևեռացմամբ, ժողովրդագրական ցուցանիշների վատթարացմամբ և արտագաղթով: Գերսղաճի հետևանքով արժեզրկվեցին բնակչության դրամական խնայողությունները, ապրանքների և ծառայությունների սպառումը կրճատվեց 10 անգամ, մեկ շնչին ընկնող ամսական եկամուտը հասավ 5 դոլարի: 1993 թ–ին կյանքի ծանր պայմանների պատճառով բնակչության արտագաղթը հասավ իր գագաթնակետին» [36, էջ 32]:

Ելնելով ընդունելի դատողությունից, ըստ որի՝ «երկիրը, որում յուրաքանչյուրի եկամուտն աճում է դանդաղ, կարող է երջանիկ համարվել, իսկ այն երկիրը, որում միջին եկամուտը աճում է բավականին արագ, սակայն միաժամանակ մեծանում է եկամուտների անհավասարությունը, ապա գնում է դեպի կործանում»:

1993 թվականին 1990 թ. համեմատ Հայաստանում ազգային եկամուտը նվազել է 55–60%–ով և կազմել է 1987 թ. մակարդակի 10–15%–ը: Ազգային դրամին անցման տարում տեղի ունեցավ սպառողական գների կտրուկ աճ (54 անգամ), որի հետևանքով 1993 թվականի դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ սպառողական գներն աճեցին 110 անգամ, իսկ միջին աշխատավարձը զիջեց առնվազն մեկ կարգով: Եթե 1990 թ. Հայաստանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ–ն կազմում էր 1590 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ապա 1994–ին այն կազմեց ընդամենը 173 ԱՄՆ դոլար: Բնակչության գնողունակությունը 1990 թ. համեմատ 2000 թ. դրությամբ ընկավ մոտավորապես 9 անգամ [58, էջ 1]:

Հայաստանում իրագործված վերափոխումների սոցիալական հետքը դրսևորվեց ողջ հասարակության մասշտաբով, որն անդրադարձավ ընտանիքների եկամուտների և սպառման մակարդակի վրա:

Տարբեր ընտրանքային հետազոտությունները փաստում են, որ հանրապետությունում դեռևս առկա է սոցիալական բարդ իրավիճակ, որը բնութագրվում է բարձր աղքատությամբ (ընդ որում՝ աղքատների մի ստվար մասն էլ աշխատողներ են):

Համաձայն երևանաբնակ ընտանիքների եկամուտների, ծախսերի և սպառման կառուցվածքի մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքների (ընտանիքների մոնիտորինգը իրականացվել է 1995 թ. օգոստոս – 1996 թ. սեպտեմբեր ամիսներին) [25]՝ Երևան քաղաքում մեկ շնչին ընկնող 20 դոլար և

պակաս եկամուտներ ունեցողները կազմել են բնակչության մինչև 38%-ը: Եթե որպես աղքատության շեմ ընդունենք ՄԱԿ-ի կողմից գործածվող մեկ շնչին ընկնող օրական մեկ դոլար չափանիշը, ապա աղքատության գծից ներքև գտնվողների թվաքանակը գերազանցում է 50%-ը: Բնակչության շերտակազմավորումը դիտարկվող ժամանակահատվածում ունեցել է հետևյալ պատկերը՝ ըստ մեկ շնչին ընկնող եկամուտների (աղյուսակ 4.4).

**Աղյուսակ 4.4.** *Երևան քաղաքում 1 շնչին ընկնող եկամտային խմբերը [25]*

Եկամտային շերտերը	Մինչև 20\$	20\$–40\$	40\$–60\$	60\$–80\$	80 \$ և ավելի
Բնակչության բաշխումը, %	37,9	25,8	13,7	8,5	14,1

Հետազոտության արդյունքները ցույց տվին, որ զբաղվածությունը տնտեսության պետական հատվածում ապահովում է երևանցիների ընդհանուր եկամուտների սոսկ քառորդ մասը: Սոցիալական վճարումներին բաժին է ընկնում եկամուտների 5%-ը, տրանսֆերտներին՝ 15%-ը, 20%-ը՝ ձեռնարկատիրական գործունեությունից և մոտ 10%-ը՝ սեփականությունից և կապիտալից (վարձակալական, տոկոսային և կապիտալացված եկամուտներ), ինչպես նաև անձնական գույքի վաճառքից ստացվող եկամուտներին: Չպարզաբանված է մնում մնացած 15% եկամուտների ծագումը (ամենայն հավանականությամբ դրանք ձևավորվում են ստվերային բիզնեսի ոլորտում):

Առաջին և ամենաակնբախ եզրակացությունն այս փաստերից այն է, որ աշխատանքը պետական հատվածում լավագույն դեպքում կերակրում է չորս օրը մեկ: Ամեն տեսակի անհատական ձեռնարկատիրությունից ստացվող (30%) եկամուտները գերազանցում են պետական հատվածում վճարվող վարձատրության չափաբաժինը: Չի հաստատվում գոյություն ունեցող այն կարծիքը, թե մենք ապրում ենք հիմնականում օտարների կամ հարազատների օգնության հաշվին, քանի որ դրամական եկամուտների հանրագումարում դրանց տեսակարար կշիռը չի գերազանցում 16 %-ը: Հաստատվեց նաև հետևյալ պատկերը, որը պետական հատվածում աշխատողների ընտանիքներում եկամուտները մեկ անձի հաշվով հավասար են ամսական 19 դոլարի, իսկ մասնավորում նույնաման աշխատանքով զբաղվածներինը՝ 100 դոլարի, ձեռներեցիների ընտանիքներում՝ 170 դոլարի: Պարզվում է, որ մոտավորապես 50 դոլար եկամուտի դեպքում երևանյան ընտանիքները կարողանում են ամսական ծախսել 65 դոլար: Ըստ վարկածներից մեկի՝ այդ մնացորդը առաջանում է խնայողությունների, տոնական գնումների համար բնակչության կուտակած գումարների հաշվին: Մյուս վարկածի համաձայն՝ դա բնակչության գույքի վերափոխումն է իրացվելի ապրանքի:

Ընտանիքների սպառողական վարքի բազմաթիվ մոնիտորինգների արդյունքները վկայում են, որ ներկայումս դեռևս առկա են աղքատության կայուն դրսևորումները, սակայն առավել անհանգստացնողը եկամուտների համա-

կենտրոնացման գործակցի (Ջինի գործակից) գերբարձր մակարդակն է, որը 2000 թ. դրությամբ հաշվարկվում է 0,59, այն դեպքում, երբ անցումային շրջանում գտնվող երկրների համար այդ ցուցանիշը միջին հաշվով կազմում է 0,34: Երևանաքնակ ընտանիքների վերոհիշյալ հետազոտությամբ հաստատվում է եկամուտների խիստ բևեռացումը՝ բնակչության ամենաապահով 20%-ին բաժին է ընկել եկամուտների շուրջ 60%-ը, իսկ ամենաանապահով 20%-ին՝ 3%-ը: Եկամուտների բաշխման անհավասարաչափությունը բնութագրող Ջինի գործակիցը կազմել է 0,57: Պետք է նկատի ունենալ, որ նման փոփոխությունը տեղի է ունեցել եկամուտների կտրուկ նվազման պայմաններում:

Աղյուսակ 4.5–4.6–ում բերված են ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումն ըստ դեցիլային և քվանտիլային խմբերի, ինչպես նաև աղքատության ցուցանիշները:

Աղյուսակ 4.5. Բնակչության եկամուտների և ծախսերի բաշխումը՝ ըստ դեցիլային խմբերի (1996–2012 թթ.), %-ով [12, 13, 15]

	1996	1999	2001	2002	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Ամենաաղքատ I	2,1X	3	3,4	-	3	2,9	3,1	3,1	3,2	3,2	3,3	3,3	3,3
	0,3	0,4	1,5	-	1,6	1,6	2,0	1,9	1,9	1,9	2,1	1,9	1,9
II	3,4	4	5,3	-	4,4	4,4	4,7	4,5	4,7	4,7	4,7	4,7	4,7
	1,3	1,5	3,0	-	3,0	3,0	3,7	3,7	3,7	3,5	3,5	3,6	3,5
III	4,3	5	6,5	-	5,4	5,5	5,7	5,5	5,7	5,8	5,7	5,7	5,7
	2,3	2,5	3,4	-	4,2	4,2	5,0	4,9	5,0	4,8	4,9	4,9	4,7
IV	5,2	6	7,2	-	6,4	6,4	6,6	6,4	6,7	6,7	6,6	6,5	6,6
	3,3	3,5	5,1	-	5,5	5,5	6,3	6,3	6,2	6,3	6,1	6,2	6,0
V	6,2	7	7,8	-	7,4	7,3	7,5	7,4	7,8	7,8	7,6	7,5	7,7
	4,4	4,9	5,9	-	6,8	6,8	7,8	7,2	7,5	7,7	7,6	7,4	7,2
VI	7,5	8	9,2	-	8,5	8,5	8,6	8,6	8,9	8,9	8,7	8,5	8,7
	5,9	6,2	6,5	-	8,2	8,2	8,5	8,7	8,9	8,9	8,3	8,8	8,6
VII	9,1	10	10,3	-	9,8	9,9	10,0	9,9	10,2	10,3	9,9	9,8	10,0
	8,0	8,1	9,0	-	9,8	9,8	10,5	10,3	10,4	10,7	10,2	10,7	10,1
VIII	11,5	12	11,0	-	11,8	11,8	11,8	11,9	12,2	12,1	11,7	11,5	11,8
	11,3	10,7	10,6	-	12,3	12,3	12,5	12,4	12,3	13,1	12,3	12,9	12,2
IX	15,7	16	13,8	-	14,9	14,8	14,7	15,3	15,3	14,9	14,7	14,6	14,7
	17,4	16,0	15,6	-	16,3	16,3	15,8	15,7	16,7	16,0	15,8	16,0	15,8
Ամենահարուստ X	35,0	29	25,5	-	28,4	28,5	27,3	27,4	25,3	25,6	27,1	27,9	26,8
	45,8	46,2	39,4	-	32,3	32,3	27,9	28,9	27,4	27,1	29,1	27,1	30,0

**Աղյուսակ 4.6.** *ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխումը՝ ըստ քվանտիլային խմբերի (1996–2012 թթ.), %-ով [12, 13, 15]*

Ցուցանիշները	1996	1999	2001	2002	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Դրամական եկամուտները	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
այդ թվում՝ ըստ 20% խմբի բնակչության													
առաջին (առավել քիչ եկամուտներով)	1,6	1,9	4	9	7	6	8	7	7	7	5	7	7
երկրորդ	5,6	6,0	9	14	12	13	12	13	14	13	11	14	13
երրորդ	10,3	11,1	12	17	16,3	17	16	17	17	18	16	18	17
չորրորդ	19,3	18,8	20	23	22	23	22	24	24	25	23	24	23
հինգերորդ (առավել շատ եկամուտներով)	63,2	62,2	55	37	43	41	42	39	38	37	45	37	40
Համակենտրոնացված եկամուտների գործակիցը (Ջինիի ինդեքսը)	0,602	0,593	0,535	-	0395	0,359	0,364	0,371	0,339	0,355	0,362	0,371	0,372

**Աղյուսակ 4.7.** *ՀՀ աղքատության ցուցանիշը (1996–2012 թթ.), %-ով [12, 13, 15]*

	1996	1999	2001	2002	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
<b>Ընդամենը</b>													
Ծայրահեղ աղքատ	27,7	-	16,0	-	6,4	4,6	4,1	3,8	1,6	3,6	3,0	3,7	2,8
Աղքատ	27,1	-	34,9	-	34,6	29,8	26,5	25,0	27,6	34,1	35,8	35,0	32,4
Աղքատության խորություն	21,5	19,0	15,1	-	7,4	5,4	3,8	4,9	5,1	7,8	8,1	7,9	5,6
Աղքատության սրություն	11,1	9,0	6,1	-	2,4	1,6	1,1	1,5	1,4	2,4	2,5	2,4	1,6
Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծ, դրամ	-	-	-	-	12467	13266	14300	15753	-	17483	19126	21306	21732
Աղքատության ընդհանուր գիծ, դրամ	-	-	-	-	19373	20289	2155,5	23168	-	30920	33517	36158	37044
<b>Քաղաքային բնակավայրեր</b>													
Ծայրահեղ աղքատ	29,6	23,2	18,3	-	7,5	5,3	5,0	4,6	1,9	4,6	4,1	4,6	3,2
Աղքատ	29,2	35,1	33,6	-	36,4	28,3	28,2	24,7	27,6	33,7	35,7	35,2	32,5
Աղքատության խորություն	-	-	-	-	8,4	5,9	4,4	5,0	5,3	8,0	8,4	8,4	5,9
Աղքատության սրություն	-	-	-	-	-	-	-	-	1,5	2,6	2,7	2,7	1,7

Գյուղական բնակավայր													
Ծայրահեղ աղքատ	24,4	22,6	11,3	-	4,4	3,2	2,4	2,3	1,2	1,7	1,1	2,2	2,1
Աղքատ	23,6	28,2	37,4	-	31,7	28,3	23,4	25,5	27,5	34,9	36,0	34,5	32,1
Աղքատության խորություն	-	-	-	-	5,7	4,6	3,0	4,6	4,7	7,3	7,6	6,9	5,1
Աղքատության սրություն	-	-	-	-	1,6	1,2	0,7	1,2	1,2	2,0	2,1	2,0	1,4

Գերլարված սոցիալական իրավիճակը խորանում է նաև նրանով, որ այս ոլորտում պետության երեքուն ձեռնարկումները չեն կարգավորում սոցիալական պաշտպանության և երաշխիքների համակարգը: Պաշտպանված չեն վարձու աշխատողների շահերը, աշխատանքային օրենսգրքում անբավարար է պաշտպանված աշխատողը, չեն ձևավորվել անկախ արհմիությունները, չեն գործում պարտադիր բժշկական, կենսաթոշակային ապահովագրության մեխանիզմները, առողջապահությունը և կրթությունը հասանելի չեն բնակչության բոլոր շերտերին: Թվարկված և այս ոլորտում բազում այլ հիմնախնդիրների չլուծված լինելը անհնար կդարձնի աղքատության մեղմացման համակարգային կառավարումը, եթե այն չընթանա տնտեսական գործունեության ակտիվացմամբ:

Ժողովրդագրական իրավիճակի՝ բնակչության թվաքանակի, սեռատարիքային կառուցվածքի, վերարտադրական գործընթացների մասին աղճատված պաշտոնական տեղեկատվությունը լուրջ խզում է առաջացրել սոցիալական իրավիճակի իրական և պաշտոնական գնահատումների հարցում: Դրա պատճառները երկուսն են. նախ՝ 1989 թ. մարդահամարը Հայաստանում անցկացվեց բնակչության հարկադիր տեղաշարժերի պայմաններում, և երկրորդ՝ հետագայում այն ուղեկցվեց սրընթաց միգրացիոն գործընթացներով, որը էապես խախտեց բնակչության սեռատարիքային, կրթամասնագիտական կազմի իրական պատկերը: 2011 թ. անցկացված մարդահամարը նույնպես ճշգրտումներ չմտցրեց ժողովրդագրական միտումների կանխատեսումների հարցում, որն այսօր ավելի քան անհանգստացնող է: Վերջին հաշվով, իրատեսական սոցիալական ու տնտեսական ինդիկատորները (եկամուտներ, ներդրումներ, ծախսեր և այլն) բնորոշվում են բնակչության ճշգրիտ հաշվարկված ու կանխատեսված թվաքանակով:

Բնակչության ծնելիությունն ունի հետևյալ պատկերը. 1960 թ. ՀՀ-ում ծնվել է 74825 մարդ, 1970 թ.՝ 55694, 1980 թ.՝ 70682, 1985 թ.՝ 80306, 1990 թ.՝ 79882, 2000 թ.՝ 34276, 2005 թ.՝ 37499, 2010 թ.՝ 44825, 2012 թ.՝ 42480: Արտագաղթի ժողովրդագրական հետևանքների ցայտուն դրսևորումն է անցած տարիներին ծնելիության ցուցանիշի (հազար շնչի հաշվով) կրճատումը (1960 թ.՝ 40,1%, 1970 թ.՝ 22,1%, 1980 թ.՝ 22,7%, 1985 թ.՝ 24,1%, 1990 թ.՝ 22,5%, 2000 թ.՝ 10,6%, 2005 թ.՝ 11,7%, 2010 թ.՝ 13,8%, 2012 թ.՝ 14,0%): Նույն ժամանակահատվածում մահացությունը կազմել է համապատասխանաբար 6,8%, 5,1%, 5,5%, 5,9%, 6,2%, 7,5%, 8,2%, 8,6%, 9,1%, իսկ բնական հավելաձր՝ 33,3%, 17,0%, 17,2%, 18,2%, 16,3%, 3,1%, 3,5%, 5,2%, 4,9%: Բնական աճի հիմնական բնութագրիչը (մահացածների ու ծնվածների տարբերությունը) 1998 թ. կազմել է 16156 մարդ, 1999 թ.՝ 12415, 2000 թ.՝

10321: Բնակչության տեղաշարժի՝ միգրացիայի հաշվառմամբ, թեև 2012 թ-ին 2000 թ. համեմատ արձանագրվել է բնակչության բնական հավելածի ավելացում՝ 1,8 պրոմիլային կետով, սակայն այն (4,9%-ը) 3,3 անգամ ցածր է, քան 1990 թ. ցուցանիշը [26, էջ 27]:

Աշխատանքային շուկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ոլորտում տեղի են ունեցել ինչպես անցման փուլին բնորոշ օրինաչափություններով ուղեգծվող, այնպես էլ նկարագրված ժողովրդագրական բացասական միտումներով պայմանավորված կառուցվածքային լուրջ տեղաշարժեր:

Պաշտոնական վիճակագրության տվյալներով՝ զբաղված բնակչության տեսակարար կշիռը աշխատանքային ռեսուրսներում դրսևորել է կայուն նվազման միտում. 1995 թ. 69,2%-ից 1999 թ-ին հասել է 56,7%-ի, 2008 թ-ին՝ 49,8%-ի, 2010 թ-ին՝ 49,6%-ի, իսկ 2012 թ.՝ 51,9%-ի: Ընդ որում՝ այդ միտումը ուղեկցվել է տնտեսապես ոչ ակտիվ բնակչության տեսակարար կշռի մեծացմամբ. 1995 թ.՝ 20,6%, 1999 թ.՝ 29,8%, 2008 թ.՝ 40,5%, 2012 թ.՝ 37,5% [9, էջ 16]:

Սոցիալ-ժողովրդագրական, ինստիտուցիոնալ ու կառուցվածքային արմատական փոփոխությունների արդյունքում 1990-1997 թթ. Հայաստանում բնակչության և աշխատուժի միջին տարեկան աճի տեմպերը գրեթե երկու անգամ ցածր են եղել համաշխարհային միջին ցուցանիշի համեմատ [16]:

Աշխատաշուկայում զբաղվածության կառուցվածքի էական փոփոխությունների ամփոփ բնութագիրը՝ տնտեսության պետական և մասնավոր հատվածներում զբաղվածության հարաբերակցությունը բնութագրող ցուցանիշներն են: Եթե այդ հարաբերակցությունը 1991 թ. կազմում էր համապատասխանաբար 30,0% և 67,2%, այն գրեթե հավասար մակարդակներ ունեցավ 1995 թ., իսկ 1999 թ. աշխատուժի վերաբաշխման էական տեղաշարժեր արձանագրվեցին հօգուտ տնտեսության մասնավոր հատվածի՝ 27,3% և 71,7%, 2012 թ.՝ 20,0% և 77,0% [36, էջ 16]:

Այս ֆոնի վրա նկատելի են նաև զբաղվածության ճյուղային կառուցվածքի էական փոփոխությունները, որոնք հանգեցրել են զբաղվածության կրճատմանը արդյունաբերությունում (1995 թ.՝ 21%-ից մինչև 1999 թ.՝ 15-16% և 2012 թ.՝ 12%) և ավելացմանը՝ գյուղատնտեսությունում (1999 թ.՝ 42%, 1995 թ.՝ 37,4%, իսկ 2012 թ.՝ 37,0%) [62, էջ 17], ինչպես նաև առևտրի և հասարակական սննդի ոլորտներում:

Գործազրկությունը տարեցտարի ունեցել է անընդմեջ աճ՝ 2012 թ.՝ 17,3% (245,5 հազար մարդ), 2008 թ.՝ 16,4% (231,6 հազ. մարդ) [36, էջ 16], 2000 թ.՝ 10,4%, 1994 թ. 6,6%-ի դիմաց: Այս ցուցանիշներն առաջին հայացքից չպետք է անհանգստացնեն, քանի որ մեծ չեն շեղումները գործազրկության բնական մակարդակից: Սակայն ըստ նույն՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների, գործազրկության իրական մակարդակը (34%) շուրջ 3 անգամ ավելի բարձր է, քան պաշտոնապես գրանցված ցուցանիշը:

Անցումային շրջան ապրող երկրներին բնորոշ դրսևորումներից է քողարկված զբաղվածությունը (ինքնազբաղվածություն, հարկադիր պարապուրդում գտնվողներ, անլեգալ գործատուներ և այլն) և թաքնված գործազրկությունը: 2012 թ. տվյալներով տնտեսապես ակտիվ բնակչության 29,0%-ը գործատուներ և ինքնազբաղվածներ են, որոնցից 14,0%-ը՝ առանց վարձատրություն աշ-



խատող ընտանիքի անդամներ են: Ասվածից հետևում է, որ ՀՀ տնտեսապես ակտիվ բնակչության միայն 57%-ն է վարձու աշխատող: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության (այն 2012 թ. կազմել է աշխատանքային ռեսուրսների 15-75 տարեկանների 37%-ը կամ 842,5 հազ. մարդ) 21%-ը սովորողներ և ուսանողներ են, 29%-ը՝ տնային տնտեսություններ վարողներ, 24%-ը՝ կենսաթոշակառուներ, 26%-ը՝ աշխատանք չունեցող այլ անձինք [9]: Հատկապես ուշադրության է արժանի վերջին ցուցանիշը, քանի որ բացարձակ արտահայտությամբ այն կազմում է 219,05 հազար մարդ, ինչն, ըստ էության, թաքնված կամ չգրանցված գործազրկության ձևերից մեկն է:

Աշխատաշուկայի կառուցվածքի ու ցուցանիշների նկատելի վատթարացումը բնականորեն առաջ է բերելու աշխատուժի առաջարկի հետագա նվազման միտում: Ըստ գնահատումների՝ առաջիկա տարիներին աշխատանքային տարիք պետք է մուտք գործեին մինչև 55 հազար պատանիներ և աղջիկներ, մինչդեռ եթե չլիներ արտագաղթի գործոնը, այդ թիվը կհասներ մինչև 80 հազարի [52, էջ 16]:

Աշխատաշուկան որակյալ կադրերով համալրելու գործում պետական հոգածության խնդիրը անառարկելի է, սակայն այն ոչ մի կերպ չի հիմնավորվում իրական գործընթացներով: Մասնավորապես՝ կրթության ոլորտում ՀՀ պետքուջեի ծախսերը 2011 թ. կազմել են համախառն ներքին արդյունքի 3,1%-ը (մեկ շնչի հաշվով միջինը 34 դոլար), մինչդեռ ըստ Համաաշխարհային բանկի՝ այդ ծախսերը միջին հաշվով աշխարհում կազմել են ՀՆԱ-ի 4,7%-ից ավելին [54]: Խնամատուական մոտեցումների վրա խարսխված տնտեսական քաղաքականությունը, ինչպես կրթության ու գիտության, այնպես էլ մշակույթի, առողջապահության ու սոցիալական այլ ոլորտներում բացասաբար է ներագրում որակավորված աշխատանքի առաջարկի աճին և, ընդհանրապես, աշխատանքային շուկայի գլխավոր բաղադրիչի՝ աշխատանքային ռեսուրսների արդյունավետ վերարտադրությանը:

Վերափոխումային գործընթացը չշրջանցեց հանրապետության գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող մոտ 200 կազմակերպությունները, որտեղ 1991 թվականին զբաղված էր շուրջ 36 հազար մարդ (650 գիտության դոկտորներ և մոտ 4400 թեկնածուներ): Գիտահետազոտական և փորձարարական-նախագծային մշակումների թեմատիկ ֆինանսավորման անցնելը կատարվեց ոչ բավարար նախապատրաստական աշխատանքներով, և, որ կարևոր է, առանց գիտատեխնիկական ուղղությունների գերակայությունների որոշման, խոշոր ծրագրերի մշակման: Արդյունքում՝ գիտատեխնիկական հետազոտությունների նախընտրելի ուղղությունների ու ֆինանսավորման ծավալների որոշումը չէր կարող համապատասխանել տնտեսության ու հիմնարար հետազոտությունների պահանջներին: Մինչև վերափոխումային շրջանը (1990 թ.) գիտությանը հատկացված ծախսումները կազմում էին շուրջ 250 մլն ռուբլի, որից մոտ 20%-ն էր հատկացվում ՀՀ պետական բյուջեից: Ներկայումս այդ ծախսերը ավելի քան 10 անգամ նվազել են, որը հանգեցրել է շատ գիտական կոլեկտիվների կազմալուծման: Գործող կոլեկտիվներում և ընդհանրապես գիտատեխնիկական բնագավառում դեռևս խիստ ցածր է տեղեկատվության ապահովումը:

Շուկայական հարաբերություններին անցումն էլ ավելի է սրում բնակչության զբաղվածության խնդիրը՝ կապված արտադրության ֆիզիկական ծավալների կրճատման, մեծ թվով արտադրական կազմակերպությունների մասնկացման ու լուծարման հետ: Պետության միջամտությունը այս հարցում ենթադրում է ակտիվ լծակների կիրառում, քանի որ դրանք են նոր աշխատատեղեր ստեղծելու գործում ամենատարբեր աղբյուրներից ներդրումների խթանումը, աշխատուժի տեղաշարժերը (այդ թվում նաև արտերկրները), կարգավորող ծառայությունների ստեղծումը և այլն:

Անհետևողականությունը պետական կարգավորման, թեկուզև երերուն քայլերի իրականացման գործում ձևախեղել են բնակչության վերարտադրության ողջ գործընթացը, հանգեցրել աննախադեպ մասշտաբներով արտագաղթի, որի հիմքը բնակչության սոցիալ-տնտեսական վատթարացող վիճակն է, ձեռնարկատերերի համար՝ աննպաստ, իսկ առանձին դեպքերում՝ անհավասար պայմանները:

#### 4.6. Դրամական քաղաքականությունը և ֆինանսական կայունացումը

Ինչպես զարգացած, այնպես էլ կենտրոնացված պլանավորում ունեցող երկրների ֆինանսական այլընտրանքային համակարգերից մեկի ընտրությամբ ըստ էության կանխորոշվում է տվյալ երկրի տնտեսական քաղաքականությունը դրամավարկային ոլորտում, որը վերաբերում է հատկապես անցումային ոլորտում գտնվող երկրներին: Միևնույն ժամանակ, կախված դրամավարկային քաղաքականության նպատակներից՝ ընտրություն կարող է կատարվել նաև դրամավարկային քաղաքականության ներազդման գործիքների հարցում՝ ընտրել ազատ ֆինանսական շուկա զարգացնող անուղղակի և միմյանցից զգալիորեն տարբերվող ազդեցության գործիքները (բաց շուկայական գործառնությունները, պարտադիր պահուստավորման նորման և հաշվարկային կամ վերաֆինանսավորման դրույքը)<sup>1</sup>, թե՛ ընտրել կարճ ժամկետում արդյունավետ համարվող ուղղակի գործիքները:

<sup>1</sup> Բաց շուկայական գործառնությունները դրամական բազայի վրա ազդեցության տեսանկյունից ամենատարածվածներից են և ենթադրում են Կենտրոնական բանկի կողմից արժեթղթերի առք և վաճառք երկրորդային շուկայում՝ ավելացնելով կամ կրճատելով շրջանառությունում փողը, ակտիվացնելով մրցակցությունը ֆինանսական շուկայում:

Պարտադիր պահուստավորման (ներգրավված միջոցների դիմաց պահվող գումարը) նորմայի կարգավորման միջոցով Կենտրոնական բանկը կարող է սահմանափակել կամ ընդլայնել բանկային համակարգի փող ստեղծելու հնարավորությունը:

Կարգավորելով հաշվարկային դրույքը՝ Կենտրոնական բանկը ազդում է բանկերի ռեզերվների մակարդակի, հետևաբար նաև դրամական զանգվածի վրա: 1999 թ-ից գործում է բանկային տոկոսի հաշվարկային դրույք՝ ՀՀ ԿԲ-ն ամեն ամիս սահմանում է դրվարով և դրամով վարկերի և պալանդների միջին կշռված մեծություն: Ներազդման երկրորդ միջոցը ռեպոյի տոկոսն է:

Ի տարբերություն անուղղակի գործիքների դրամավարկային քաղաքականության՝ ուղղակի վերահսկողության դեպքում Կենտրոնական բանկը օգտագործում է վերահսկիչ, կարգավորիչ լիազորություններ՝ ուղղակի սահմանափակումներ դնելով որոշ ցուցանիշների վրա (սահմանում է տոկոսադրույքներ, վարկերի ծավալների առավելագույն սահման և այլն):

Անցումային տնտեսություններում, ինչպես վկայում է միջազգային փորձը, անհրաժեշտ է զարգացնել անուղղակի գործիքները՝ թերևս սկզբնական փուլում չխուսափելով ուղղակի ազդեցության գործիքների կիրառումից, քանի որ վերջիններս են, որ հնարավորություն են տալիս կանխելու դրամական զանգվածի արագ աճը և ապահովելու տնտեսության ֆինանսական հատվածում իրակա-նացվող կառուցվածքային փոփոխություններ: Նկատենք, որ դրամավարկային քաղաքականության գործիքների արդյունավետությունը մեծապես կախված է նպատակային ցուցանիշների հետ դրանց կապի բնույթից:

Անցումային տնտեսություններում երբեմն դրամավարկային կարգավորման ուղղակի և անուղղակի կարգավորման մեխանիզմները գործադրվում են դրանց համակցությամբ՝ ելնելով իրադրությունից բխող անհրաժեշտությունից, նպատակ ունենալով ստեղծելու կայուն ֆինանսական համակարգ, որն իր հերթին կխթանի տնտեսության իրական հատվածի գործունեությունը:

Դրամավարկային քաղաքականության իրականացման հիմնարար սկզբունքներն ընտրելիս հենվում են հետևյալ նպատակների վրա [48].

- զբաղվածության բարձր մակարդակ,
- կայուն տնտեսական աճ,
- գների կայուն մակարդակ,
- տոկոսադրույքների կայունություն,
- կայունություն ֆինանսական շուկայում,
- կայուն արտարժույթային շուկա:

Հայաստանում ինքնուրույն դրամավարկային քաղաքականությունը սկսվեց իրագործվել 1993 թ. տարեվերջից, երբ շրջանառության մեջ դրվեց ազգային արժույթը՝ դրամը: Նկատենք, որ դա պարտադրված քայլ էր, երկիրը դրան նախապատրաստված չէր համապատասխան կառույցների ձևավորվածության, անհրաժեշտ պահուստային միջոցների բացակայության պատճառով: Ազգային արժույթը որպես դրամ շրջանառության մեջ մտնելուց կարճ ժամանակ անց գների ազատականացման և այլ գործոնների (էմիսիոն ճանապարհով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորում և այլն) ազդեցությամբ ձևավորված գերբարձր ինֆլյացիայի պայմաններում (1994 թ. սպառողական գների ինդեքսը կազմեց մոտ 1800%) այն ենթարկվեց կտրուկ արժեզրկման: Հետագայում ՀՀ ԿԲ-ին հաջողվեց ստանձնել ազգային արժույթի էմիսիոն կենտրոնի իրեն վերապահված գործառույթը, ապահովել ազգային արժույթի փոխարժեքի կառավարելիությունը, որի արդյունքում վերջին հինգ տարիների ընթացքում հայկական դրամի անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ ցուցաբերել է նշանակալի կայունություն<sup>1</sup>: 1996 թ. ընդունված Կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքով սահմանվեց ԿԲ-ի հիմնական ինստիտուցիոնալ խնդիրը՝ գների կայուն մակարդակի ապահովումը: Հետագայում 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության 83.3 հոդվածում ամրագրվեց. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի

<sup>1</sup> Փոխարժեքի ներկա մակարդակով հաստատված կայունությունը ՀՀ տնտեսության ներկա պայմաններում չի կարելի համարել դրական տեղաշարժ՝ երկարաժամկետ առումով:

Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է: Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը» [22, էջ 64]:

«Հ ԿԲ-ի առջև դրված հիմնական խնդրի լուծումը բնականորեն պետք է համահունչ լինի այն տեսական մոտեցումներին, որով բացատրվում է ինֆլյացիայի երևույթը՝ կապակցելով դրամական բաղադրատարրերի փոփոխությունները տնտեսական աճի հետ: ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացրած դրամավարկային քաղաքականության արդյունքում ստեղծվեցին նախադրյալներ ֆինանսական և մակրոտնտեսական կայունության առումով. ձևավորվեց արտաքին պահուստների որոշակի մակարդակ, աստիճանաբար կրճատվեց ԿԲ-ի կողմից բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը, կանխվեցին դրամի փոխարժեքի փոփոխությունները, սանձվեց ինֆլյացիան, ըստ էության կայացավ երկաստիճան բանկային համակարգը:

Վերջին տարիների վերափոխումների ու տնտեսական կառավարման կարևոր ձեռքբերումը, ցածր սղաճով բնութագրվող մակրոտնտեսական կայունությունն արդյունք է դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների որոշակի փոխհամաձայնեցվածության ու կոշտ վարքագծի:

Միաժամանակ պետք է նկատել, որ տնտեսության վրա ազդեցության առումով ոչ միանշանակ են նման մակրոտնտեսական կայունությանն ուղղված գնահատումները: Հարցը վերաբերում է ինֆլյացիայի կտրուկ զսպմանն ուղղված ԿԲ-ի կոշտ դրամավարկային քաղաքականությանը, որը կարող է, երկարաժամկետ տնտեսական աճով պայմանավորված, վտանգել ֆինանսական կայունությունը: Այն կարծես թե դարձել է ինքնանպատակ, որի արդյունքում արձանագրվում են գնանկումային միտումներ: Այսպես՝ 2010 թ. միջին ինֆլյացիան կազմեց 8,2%, կրճատման միտումը 2011–2013 թթ. ընթացքում հիմնականում պահպանվեց, և արդյունքում արձանագրվեց միջին ինֆլյացիայի համապատասխանաբար 7,7%, -2,6% և 5,8%, որն, ըստ մեր գնահատման, ցածր մակարդակ է: Այս դեպքում փոխարժեքի ներկա մակարդակը բնավ նպաստավոր չէ վճարային հաշվեկշռի, ընթացիկ հաշվի դեռևս զգալի ձեղքվածք ունեցող Հայաստանի տնտեսության համար:

Ինֆլյացիայի զսպմանն է ուղղված նաև ՀՀ Կենտրոնական բանկի կողմից կիրառվող մոդելը, ըստ որի՝ գերակայությունը տրվում է դրամական զանգվածի սահմանված միջակայքի կառավարմանը, տնտեսության վրա ունենում է երկակի ազդեցություն: Նախ՝ այդ սահմանափակումներով պայմանավորված իրական աշխատավարձը և բնակչության գնողունակությունը չեն խթանում արտադրությունն ու սպառումը ներքին շուկայում: Ըստ մեր գնահատումների՝ մինչև 10–15% ինֆլյացիայի պայմաններում, ի թիվս այլ գործոնների, մենք հնարավորություն կունենանք առաջիկա տարիներին բավարարելու մինչև 5,5 մլրդ ԱՄՆ դոլարի ապրանքների, ծառայությունների պահանջարկը, որը զգալիորեն կընդլայնի սպառման տարողությունը ներքին շուկայում: Ակնհայտ է նաև

<sup>1</sup> Նկատենք, որ ՀՀ մանրածախ առևտրի շրջանառությունը 2010 թ. կազմել է 1165,8 մլրդ դրամ [13, 16], կամ տվյալ տարվա դրամ (դոլար փոխարժեքով (373,66 դրամ)) 3,1 մլրդ դոլար:

չափավոր ինֆլյացիայի դրական ներգործությունը արտահանման խթանման հարցում, որը դեռևս շոշափելի չէ, հատկապես՝ վերանշակող արդյունաբերության որոշ ճյուղերում:

ՀՀ տնտեսությանը հատկանշական է ինֆլյացիայի, տնտեսական աճի և դրամական զանգվածի միջև քիչ թե շատ օրինաչափ կապերի բացակայությունը, որն ակներև է դառնում ստորև բերված ցուցանիշների համադրումից (ՀՆԱ-ի, ինչպես նաև ինֆլյացիայի աճը չունի կայուն վարքագիծ դրամական զանգվածի 1% ընդլայնման դեպքում, աղյուսակ 4.8).

**Աղյուսակ 4.8.** ՀՀ իրական ՀՆԱ-ի, սպառողական գների, փողի զանգվածի միջին տարեկան հավելումները 1995–2013 թթ. [13, էջ 18; 28, էջ 113; 17, էջ 17; 15, էջ 17; 14, էջ 16; 34, էջ 13] (նախորդ տարվա համեմատ, %)

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Իրական ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպը	6.9	5.9	.3	7.3	3.3	6.0	9.6	13.2	14.0
Սպառողական գների միջին տարեկան հավելումը	176.0	18.7	14.0	8.7	0.6	-0.8	3.1	1.1	4.7
Փողի զանգվածի միջին տարեկան հավելումը	62.2	41.5	29.2	36.0	13.6	38.8	4.4	31.3	12.9
	2004/ 2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Իրական ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպը	10.5/13.9	13.2	13.8	6.9	-14.1	2.1	4.7	7.2	3.5
Սպառողական գների միջին տարեկան հավելումը	7.0/0.6	2.9	4.4	9.0	3.4	8.2	7.7	2.6	5.8
Փողի զանգվածի միջին տարեկան հավելումը	22.3/27.8	32.9	42.3	2.1	15.0	11.8	23.6	19.4	15.6*

\* Ըստ ՀՀ ԿԲ նախնական տվյալների 2013 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ փողի զանգվածը կազմել է 1545372 մլն դրամ:

Իհարկե, ֆինանսական կայունությունը նախընտրելի է ցածր ինֆլյացիայի պայմաններում, երբ այն չի ուղեկցվում վճարային միջոցների պակասով, որը բնութագրական է Հայաստանին:

ՀՀ տնտեսության դրամայնացման ցածր մակարդակը (դրամական զանգվածի հարաբերությունը ՀՆԱ-ին 2008 թ. կազմել է 19,7, 2012 թ.՝ 33,4% [13], որը չի համարում 10%-ի, մինչդեռ անգամ զարգացող երկրներում այն կազմում է 60–80%), համախառն պահանջարկի կրճատումն ավելի է սրում տնտեսությունում չվճա-

րումների (տնտեսվարող սուբյեկտների կրեդիտորական պարտքերի գերազանցումը դեբիտորական պարտքերին, եթե 2010 թ. կազմել է շուրջ 19,4 մլրդ դրամ (եթե ժամկետանց կրեդիտորական պարտքերի գերազանցումը ժամկետանց դեբիտորականին՝ -2,4 մլրդ դրամ, ապա 2012 թ-ին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար -4,5 մլրդ դրամ և -12,6 մլրդ դրամ [13]) գերազանցում են մեկ մլրդ դոլարը՝ ՀՆԱ-ի կեսից ավելին) հիմնախնդիրը: Մինչդեռ կառավարվող ինֆլյացիան կարող է.

- խթանել արտահանողներին,
- բարձրացնել երկրի տնտեսության դրամայնացման մակարդակը,
- կանխել փոխադարձ չվճարումները,
- խթանող պայմաններ ստեղծել երկարաժամկետ տնտեսական աճի համար:

Միևնույն ժամանակ, չպետք է թերազնահատվեն այն գործոնների վճռորոշ ազդեցությունը բարձր և կայուն մակրոտնտեսական հաշվեկշռվածություն ապահովելու գործընթացում, որոնք չեն ընդգրկվում ՀՀ ԿԲ գործառույթներում: Այդ առումով «կարևորվում է տնտեսական քաղաքականություն իրականացնողների կողմից հետևյալ հիմնախնդիրները և դրանց լուծումները.

- տնտեսվարող սուբյեկտների միջև չվճարումների և ապառքների, այդ թվում՝ ՀՀ պետական բյուջեի ապառքների կուտակման խորացումը,
- ստվերային տնտեսության առկայությունը, որը նպաստում է շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշռի աճին և արգելակում առևտրային բանկերի կողմից տնտեսական գործարքների սպասարկման ընդլայնմանը,
- փոքր բիզնեսի թերզարգացածությունը և դրան խոչընդոտող հանգամանքների առկայությունը,
- արդյունքի թողարկման բարձր ծախսատարությունը՝ պայմանավորված հիմնականում մաշված տեխնիկայի և տեխնոլոգիաների օգտագործմամբ, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ տրանսպորտային կապերի դժվարությունների պահպանմամբ,
- արտասահմանում Հայաստանի աշխատուժի մրցունակության և գործազրկության բարձր մակարդակի պայմաններում բնակչության հատկապես որակյալ աշխատուժի շարունակական արտահոսքը, տնտեսության ճյուղերում ներգրավված աշխատողների որակավորման բարձրացման անհրաժեշտությունը:

Վերը թվարկված հիմնախնդիրների արդյունավետ լուծումների արմատավորումը (այլ խնդիր է, թե այդ լուծումների որոնման հարցում ինչպիսի հայեցակարգային մոտեցումներով ու ծրագրերով է առաջնորդվելու պետական կառավարման համակարգը) այն երաշխիքն է, որով հնարավոր կդառնա պահպանել դեռևս փխրուն, այդուհանդերձ, ներկայիս լուրջ ձեռքբերումներից մեկը՝ ֆինանսական կայունությունը: Այլապես շարունակական անհավասարակշռությունը ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի միջև,

որը ծածկվում է մասնավոր տրանսֆերտների, հումանիտար օգնության և արտասահմանյան վարկերի հաշվին (որի մեծությունը, ըստ մեր գնահատումների, ՀՀ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ կազմում է ավելի քան երկու երրորդը), ինչպես նաև պետական բյուջեի ծախսերի կախվածությունը օտարերկրյա աղբյուրներից (վերջին տարիներին օտարերկրյա աղբյուրների հաշվին է իրականացվել բյուջետային ծախսերի և բյուջեի պակասուրդի ավելի քան մեկ երրորդը) կարող է հանգեցնել բյուջետային համակարգի աստիճանական և քրոնիկական ծանր վիճակի:

Ֆինանսական շուկայի կառուցվածքային մասնակիցների (բանկեր, ֆոնդային բորսաներ, ապահովագրական համակարգեր, վարկային միություններ և այլն) ոչ համարժեք զարգացումը դեռևս չի նպաստում երկրի բյուջետային գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ բանկային համակարգի զարգացման աստիճանը դեռևս չի համարվում բավարար: Այստեղ նկատի է առնվում, որ այն չի համապատասխանում տնտեսական աճի պահանջներին: Ըստ որոշակի գնահատումների՝ երկրում առկա խնայողությունների միայն փոքր մասն է մտնում բանկային ոլորտ: Ընդհանուր բանկային ակտիվները ՀՀ-ում 2013 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել են ՀՆԱ-ի 36,7%-ը [28, էջ 114], իսկ բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին 2007 թ. կազմել են 13,4%, 2008 թ.՝ 17,6%, 2009 թ.՝ 23,1%, 2010 թ.՝ 25,8%, 2011 թ.՝ 33,1%, 2012 թ.՝ 38,2% [13, էջ 17-18]:

ՀՀ բանկային համակարգը բնութագրվում է արտասահմանյան կապիտալի համեմատաբար մեծ տեսակարար կշռով՝ շուրջ 80%: Բնակչության ավանդներ/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում 2007 թ. կազմել է 5,5%, 2008 թ.՝ 5,7%, 2009 թ.՝ 9,3%, 2010 թ.՝ 10,3%, 2011 թ.՝ 12,8%, 2012 թ.՝ 16,0% [13, էջ 101]:

ՀՀ բանկային համակարգի զարգացման վերը բերված ցուցանիշները համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծել հանրապետության համար, սակայն տնօրինած ռեսուրսներով դրանք դեռևս չեն ապահովում տնտեսության իրական հատվածի անհրաժեշտ չափով վարկավորումը և զարգացումը:

Երկրի համախմբված բյուջեի հարկային եկամուտների տեսակարար կշիռը 1994-ից սկսած ՀՆԱ-ի նկատմամբ շարունակել է նվազել մինչև 1996 թ. ներառյալ՝ 1994 թ.՝ 11,5%, 1995 թ.՝ 10,7%, 1996 թ.՝ 10,6% (երբ գրեթե չի փոխվել ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը և տեղի է ունեցել հարկային բազայի ընդլայնում) և հետագայում՝ մինչև 2001 թ., աստիճանաբար բարձրացել 3-6 տոկոսային կետով<sup>1</sup>: Սակայն մտահոգիչ է, որ այդ տարիներին անընդհատ նվազել է շահութահարկը 1995 թ. 4,6%-ից մինչև 2000 թ.՝ 2,0% (բացառություն է 1999 թ.՝ 2,2%), իսկ եկամտահարկը 1995 թ. 1,3%-ից հաջորդ տարիներին չի հասել 2%-ի:

<sup>1</sup> Համախմբված բյուջեի հարկային եկամուտների տատանումները՝ ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով արտահայտված, ավելի շուտ կարելի է բացատրել վիճակագրության անհարթություններով: Այլապես իրական ՀՆԱ-ի տարեկան աճի տեմպերը համադրելով ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով արտահայտված հարկային եկամուտների հետ՝ կարող ենք փաստել, որ այն տարիներին, երբ բարձր է եղել տնտեսական աճի տեմպը, նվազել են հարկային եկամուտների՝ ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային գնահատականները:

2008–2012 թթ. ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի եկամուտների կազմում հարկային եկամուտների բաժինը 2008 թ. 16,8%-ից 2012 թ-ին հասել է 18,1%-ի (աճը կազմել է 1,3 տոկոսային կետ): Ավելացված արժեքի հարկի բաժինը նշված տարիներին ավելացել է 0,3 տոկոսային կետով (8,9%-ից հասել է 9,2%-ի), շահութահարկինը՝ 0,6 տոկոսային կետով (2,4%-ից հասել է 3,0%-ի) [13, էջ 389]:

Անցած ժամանակաշրջանի հարկաբյուջետային քաղաքականությանը բնորոշ է եղել անուղղակի հարկերի բարձր տեսակարար կշիռը, որը չի նպաստում հարկային բեռի համարժեք բաշխմանը հարկատուների միջև: Այդ քաղաքականության հետագա հստակեցումը ու կատարելագործումը պահանջում է միջոցառումների ողջ համալիրի մշակում և արմատավորում, որոնց թվում կարևորում ենք հարկային բեռի տեղափոխումը անուղղակի հարկերից դեպի տնտեսվարող սուբյեկտներ և ֆիզիկական անձինք, շահութահարկի և եկամտահարկի գանձումը միասնական եկամտից (գուցե սկզբնական փուլում առավելագույնս մոտեցնելով տոկոսադրույքները), ինչպես նաև հայտարարագրման միջոցով՝ եկամուտների աղբյուրների ու չափերի առավել ամբողջական հաշվառումը:

Հարկային քաղաքականության ու բյուջետային գործընթացների ավելի ընդգրկուն վերլուծության արդյունքում հետազոտողները արդարացիորեն հիմնականում շեշտադրում են հարկային քաղաքականության չափազանց ֆիսկալ ուղղվածությունը ճիշտ նկատելով, որ «գերբարձր հարկային եկամուտները ճնշում են գործունակ, ինչպես նաև նոր կայացող տնտեսվարող սուբյեկտների վերարտադրության հնարավորությունները՝ առաջացնելով շրջանառու միջոցների մշտական պահանջարկ: Նշված ճնշումը ուժեղանում է նաև կիրառվող հարկային վարչարարության գործոնի ազդեցության հաշվին»: Ի դեպ՝ հղված աշխատանքը պարունակում է հարկային քաղաքականության ու բյուջետային գործընթացների բարելավմանն ուղղված մի շարք առաջարկություններ:

Ֆինանսական շուկայի հատվածային և թերի լինելու հանգամանքը էականորեն պայմանավորված է ՀՀ արժեթղթերի երկրորդային շուկայի թերզարգացվածության վիճակով (աղյուսակ 4.9): Թեև լայնամասշտաբ վաուչերային սեփականաշնորհումը, որի ընթացքում բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ գրանցվեցին 1000-ից ավելի միջին և խոշոր ընկերություններ (բավական է նշել, որ միայն 2000 թ. դրությամբ գրանցվել է թվով 1740 ազդագիր, որի արդյունքում հրապարակայնորեն առաջարկված բաժնետոմսերի ընդհանուր գումարը կազմել է շուրջ 162 մլրդ դրամ), սակայն հետագայում այդ ընկերությունները չդարձան ներդրումային գրավիչ օբյեկտներ:

ՀՀ արժեթղթերի շուկան ներկայումս կայացման փուլում է, որը կոչված է իրագործելու՝

- ներդրումային միջոցների ներգրավում,
- պետական պարտքի ֆինանսավորում,
- ռիսկերի ապահովագրում:



Նշված գործառույթների լիարժեք իրագործման համար անհրաժեշտ է ներդնել բաժնետիրային կառավարման հիմնարար սկզբունքներ, որոնք միտված են կոլեկտիվ ձեռնարկատիրական ծրագրերի իրականացմանը: Ներկայումս երկրորդային շուկայում դեռևս աննշան է բաժնետոմսերով գործարքների ծավալը. արժեթղթերով կատարված գործարքների շուրջ 96%-ը բաժին է ընկնում պետական պարտատոմսերին:

Հուսադրող պետք է համարել ռազմավարությունը պետական արժեթղթերի շուկայում, որով կառավարությունը նվազեցնում է պետական կարճաժամկետ պարտատոմսերի թողարկումների ծավալները՝ մեծացնելով առավել երկարաժամկետ պարտքային գործիքների տեսակարար կշիռը, որով ներքին պարտքի կառուցվածքը կկրի որակական փոփոխություններ: Բացի այդ՝ նախատեսում է այսուհետ միջին ժամկետայնության պարտատոմսերի թողարկման միջոցով լուծել պետբյուջեի պակասուրդի ֆինանսավորման խնդիրը:

Ցանկալի կլիներ, իհարկե, արժեթղթերի շրջանառությունը իրականացնել բորսայական մեխանիզմներով՝ չսահմանափակվելով ներփակված շրջանակով՝ բանկեր, ինվեստիցիոն ընկերություններ, գանձապետական պահառու:

Այսպիսով՝ ֆինանսական կայունացման հիմնախնդիրների արդյունավետ լուծումների որոնման ու որոշումների կայացման գործընթացը պետք է սկսել երկմիասնական այնպիսի տնտեսական քաղաքականության իրականացումից, որը կնպատակամղվի մի կողմից՝ պետական ծախսերի, պետական բյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) կրճատմանն ու երկրի վճարային հաշվեկշռի բարելավմանը, մյուս կողմից՝ երկարաժամկետ տնտեսական աճի բարձր և կայուն մակարդակ ապահովելուն միտված պատշաճ պայմանների ստեղծմանը: Այլապես կայունացումը զուտ ֆինանսական առումով կարող է վտանգել իր իսկ կենսունակությունը, եթե այն չի զուգորդվում ազատ շուկայական հարաբերություններին համապատասխան պետության կարգավորիչ դերի հստակեցմամբ ու ակտիվացմամբ: Դրանք առաջին հերթին վերաբերում են տնտեսական զարգացման գերակայությունների հարցում ոչ իրավիճակային, հստակ կողմնորոշումներով համակողմանիորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանն ու գործադրմանը, տնտեսական դատարանների ստեղծմանը, տնտեսվարող սուբյեկտների սնանկացման ու բռնազանձման գործընթացների նորմատիվային-իրավական բազայի կատարելագործմանը, հարկային բեռի ռացիոնալ տեղաբաշխմանը և, վերջապես, պետական կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը:

**Աղյուսակ 4.9. Աշխարհի մի շարք երկրների արժեթղթերի շուկաների հիմնական ցուցանիշները [54]**

Հ/Հ	Երկրները	Շուկայի կապիտալացումը				Շուկայի իրացվելիությունը. վաճառվող բաժնետոմսերի արժեքը, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		Շրջանառության գործակիցը. վաճառվող բաժնետոմսերի արժեքը, %-ով՝ շուկայի կապիտալացման նկատմամբ		Բորսայում գնանշվող տեղական ընկերությունների քանակը	
		մլն ԱՄՆ դոլար		%–ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ							
		2	3	4	5	6	7	8	9	10	11
	1	2005	2012	2005	2012	2005	2012	2005	2012	2005	2012
1	Հայաստան	43	132	0,9	1,3	0	0	3,7	0,8	198	12
2	Ադրբեջան	-	-	-	-	-	-	-	-	-	-
3	Բելառուս	-	-	-	-	-	-	-	-	-	-
4	Էստոնիա	3,495	2,332	25,1	10,4	17,8	0,8	51,1	9,1	15	16
5	Վրաստան	355	943	5,5	6	0,6	0	13,6	0,2	257	133
6	Ղազախստան	10,521	23,496	18,4	11,5	1,9	0,5	14,9	3,3	62	74
7	Ղրղզստան	42	165	1,7	2,5	0,5	0,1	34,1	3,4	8	18
8	Լատվիա	2,527	1,115	15,8	3,9	0,6	0,1	4,6	2,9	45	31
9	Լիտվա	8,183	3,964	31,5	9,4	2,9	0,4	10,1	4,2	43	33
10	Միդդլվա	-	-	-	-	0.6	-	-	-	-	-
11	Ռուսաստանի Դաշնություն	548,579	874,659	71,8	43,4	20,9	36,3	39	87,6	296	276
12	Թուրքմենստան	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	Ուկրաինա	24,976	20,711	29	11,7	0,8	0,7	3,6	5,2	221	198
14	Ուզբեկստան	37	-	0,3	-	0,3	0,2	184,7	-	114	132
15	Տաջիկստան	-	-	-	-	-	-	-	-	-	-
16	Ավստրիա	124390	106037	40,8	26,9	15,1	12	43,6	50,1	92	70
17	Բուլղարիա	5086	6666	17,6	13,1	4,8	0,7	35,2	4,9	331	387
18	Խորվաթիա	12918	21560	28,8	36,4	1,8	0,8	6,7	2,3	145	184
19	Չեխիա	38345	37163	29,5	18,9	31,6	5,2	118,6	27	36	17
20	Դանիա	178038	224856	69,1	71,3	59	33,5	92,3	52,2	179	174
21	Գերմանիա	1221250	1486315	44,1	43,4	63,7	35,8	146	91,8	648	665
22	Հունգարիա	32576	21080	29,5	16,9	21,7	8,7	78	54,6	44	51
23	Իսրայել	120114	148436	89,7	57,6	44,7	26,1	55,5	45,9	572	532
24	Իտալիա	798167	480453	44,7	23,9	62,4	37,7	140,5	166,6	275	279
25	Նորվեգիա	190952	252950	62,8	50,6	64,1	26,6	117,2	56,3	191	184
26	Լեհաստան	93873	177730	30,9	36,3	9,9	13,7	36,3	42,6	248	844
27	Սլովակիա	4393	4611	7,2	5	0,1	0,2	1,6	3,6	209	69
28	Սլովենիա	7899	6475	22,1	14,3	2,2	0,9	9	6,2	116	61
29	Իսպանիա	960024	995095	84,9	75,3	137,7	81,5	163,9	106,3	3300	3167

30	Շվեյցարիա	938624	1079022	244	171	229,6	101,6	100,1	63,7	263	238
31	Թուրքիա	161537	308775	33,4	39,1	41,7	44,2	154,9	136,5	302	405
32	Ռումինիա	20,588	15,925	20,8	9,4	3,4	1,3	21	11,5	3,747	77
33	Իրան	38,724	140,843	20,2	25,5	4,3	4	19,1	17,8	420	284
34	Ֆրանսիա	1,758,721	1,823,339	82,3	69,8	71,4	43,1	92	66,4	885	862

### 4.7. Արտաքին առևտրային քաղաքականությունը

Շուկային անցումը ենթադրում է «տնտեսության բացություն», որն իրականացվում է ազատական առևտրային քաղաքականության միջոցով:

Տնտեսական ինքնուրույնությունը բոլորովին չի նշանակում դրա ինքնամեկուսացումը: Ավելին՝ ինքնիշխանությունը կարող է իրականացվել խորը և լայնածավալ ինտեգրման պայմաններում և ամբողջ խնդիրն այն է, թե այն որքանով է արդյունավետ, մասնավորապես՝ ներմուծման կառուցվածքը որքանով է թուլացնում կախվածությունն արտաքին շուկաներից, իսկ արտարժույթի ներհոսք ապահովող արտահանման ծավալում որքանով է մեծ գիտատար, տեխնոլոգիատար ապրանքների ու ծառայությունների բաժինը:

Ցանկալի տնտեսական նպատակների իրականացումը ենթադրում է արտաքին և ներքին հավասարակշռության ապահովում: Այդ առումով լավագույն սցենարն այն է, երբ հավասարակշռված վիճակները համատեղ են հանդես գալիս: Ցանկալի հավասարակշռի վիճակներին հասնելը մեր տնտեսական քաղաքականության գերխնդիրներից կարևորագույնն է: Ինչպես ներքին հավասարակշռությունը (տնտեսական կայուն աճ՝ գործազրկության ցածր մակարդակի պայմաններում), այնպես էլ արտաքին հավասարակշռությունը (առևտրի ցանկալի հաշվեկշիռ կամ արտարժույթի ցանկալի ներհոսքի ապահովում) հասանելի կդառնան, եթե այդ գերխնդրի լուծմանն է միտված տնտեսական քաղաքականությունը: Վերջինիս արդյունավետությունը, հասկանալի է, չի կարող որոշվել միայն արտաքին առևտրային քաղաքականությամբ, իսկ արդյունավետության ընդհանրական ցուցանիշն էլ պետք է ինտեգրվի դրա բաղադրատարրերի համակցումով: Մասնավորապես՝ պետք է կարևորվեն գործազրկության և ինֆլյացիայի մակարդակների այնպիսի փոփոխությունները, որոնք կազդեն առևտրի հաշվեկշռի բարելավման և փոխարժեքի իրատեսական դրույքաչափերի ձևավորման վրա:

Եթե հետևենք ընթացիկ հաշվի դեֆիցիտի դինամիկային, ապա այլ ցուցանիշների հետ դրա համադրությունը դեռևս սփոփիչ համարել չի կարելի, ինչը ակնառու երևում է ստորև բերված տվյալներից (աղյուսակ 4.10):

Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 1995 թ. կազմել է 944,8 մլն դոլար (որից 270,9 մլն դոլարը կազմել է ապրանքների արտահանումը կամ 28,7%–ը, իսկ 673,9 մլն դոլարը՝ ապրանքների ներմուծումը, առևտրական մնացորդը (սալդոն) կազմել է –403,0 մլն դոլար), իսկ

2013 թ.՝ այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 5956,8 մլն դոլար, 1480,0 մլն դոլար, 4476,8 մլն դոլար, 1480,0 մլն դոլար [34, էջ 178; 13, էջ 120–122], այսինքն՝ արտաքին առևտրաշրջանառությունը 2013 թ. 1995 թ–ի համեմատ ավելացել է 6,3 անգամ, որն ուղեկցվել է ներմուծման ոչ նպաստավոր առաջանցիկ աճով՝ արտահանման համեմատ ներմուծումն ավելացել է 6,6 անգամ, արտահանումը՝ 5,5 անգամ:

2000 թ. արտահանման մակարդակը (297,5 մլն ԱՄՆ դոլար) մոտ 13 անգամ ցածր է 1988 թ–ից (երբ այդ տարում 1 ռուբլին հավասարեցվում է 1 դոլարին) և կազմում է ՀՆԱ–ի 15,5%–ը: Ինչ վերաբերում է արտահանման և ներմուծման կառուցվածքներին, ապա դրանք արդյունավետ համարել չի կարելի, քանի որ արտահանման հիմնական մասը կազմում են ավելացված փոքր արժեք ունեցող ապրանքները (2000 թվականին արտահանվող ապրանքների երկու երրորդը կազմել են թանկարժեք քարերը և մետաղները (40,8%), ոչ թանկարժեք մետաղները (14,9%), հանքահումքային արտադրանքը (11,5%): 2013 թ. ՀՀ արտահանման կառուցվածքում առաջին տեղը զբաղեցրել է հանքահումքային արտադրանքը (407,9 մլն դոլար կամ ամբողջ արտահանման 27,6%–ը), երկրորդ տեղը՝ պատրաստի մնդի արտադրանքը (309,6 մլն դոլար կամ 20,9%), երրորդ տեղը՝ ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (308,9 մլն դոլար կամ 20,9%), չորրորդ տեղը՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (188,1 մլն դոլար կամ 12,7%), հինգերորդ տեղը՝ կենդանի կենդանիները և կենդանական ծագման արտադրանքը (54,5 մլն դոլար կամ 3,7%) [28, էջ 154]:

Կարևոր հիմնախնդիր է արտահանման հիմքերի ստեղծումը արտաքին ազդեցություններից հնարավորինս զերծ, ոչ փխրուն արտադրությունների վրա: Այս տեսանկյունից ձևավորված արտահանման կառուցվածքում առկա են նախատրամադիր ենթաճյուղեր: Ներմուծվում են էներգակիրներ, մանդամթերք, կիսաֆաբրիկատներ և այլն: Արտադրությունների դրական միտումները զգացվում են ներմուծմանը փոխարինող գյուղատնտեսական մթերքներ վերամշակող որոշ արտադրություններում:

Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության պատկերն ավելի է պարզորոշվում, երբ այն դիտարկվում է մի շարք, այդ թվում՝ մեզ սահմանակից երկրների առումով: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության և մեկ շնչի հաշվով ՀՆԱ–ի ինտեգրալ ցուցանիշով մենք դեռևս զիջող դիրքերում ենք (աղյուսակ 4.11):

**Աղյուսակ 4.10.** ՀՀ արդարաբին հարվածի մակրոդերևասական առանձին ցուցանիշների շարքը՝ [30, էջ 13; 19, էջ 9; 27, էջ 23; 28, էջ 91-98; 13, էջ 395; 10, էջ 389; 17, էջ 366; 15, էջ 366; 14, էջ 400; 20, էջ 402; 63, էջ 354]

Ցուցանիշները	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	Հնարանները 1995-2013 թթ.
1. Հրթիռային հարվածի, մլն դոլար, այդ թվում	-218,4	-290,7	-306,5	-403,0	-306,9	-278,4	-199,6	-147,9	-189,4	-19,6	-51,7	-117,1	-589,3	-1381,8	-1368,9	-1373,2	-1108,2	-1115,1	-1098,7	-10564,4
Ապրանքներ	-463,1	-469,2	-559,5	-577,5	-474,0	-463,5	-420,2	-368,8	-434,1	-458,0	-587,9	-895,9	-1600,3	-2663,5	-2081,3	-2032,6	-2077,7	-2118,9	-2352,9	-21098,7
Ծառայություններ	-23,7	-50,8	-62,8	-63,3	-62,0	-55,8	-17,8	-40,7	-68,3	-98,9	-120,0	-130,4	-212,5	-327,1	-268,1	-242,2	-312,1	-348,0	-112,1	-2616,6
Եկամուտներ	40,0	44,7	98,5	60,4	54,9	52,9	64,1	88,2	94,5	107,4	132,5	215,2	278,8	471,2	166,6	338,7	558,5	628,6	540,8	4036,4
Հրթիռային տրանսֆերտներ	168,3	184,6	217,2	177,4	174,1	188,1	174,0	173,4	218,5	429,8	523,7	694,0	944,8	1137,6	813,9	562,9	723,1	723,3	1717,41	9945,9
2. ՀՆԱ, մլն դոլար	1287,0	1599,0	1639,0	1892,0	1845,0	1912,0	2118,0	2376,0	2807,0	3577,0	4900,0	6384,0	9206,0	11662,0	8648,0	9260,0	10142,0	9950,0	10416,0	101620,0
3. Հրթիռային հարվածի/ՀՆԱ, % (1 : 2)	-17,0	-18,2	-18,7	-21,3	-16,6	-14,6	-9,4	-6,2	-6,7	-0,5	-1,1	-1,8	-6,4	-11,8	-15,8	-14,8	-10,9	-11,2	-10,5	-10,4
4. Արտաբին պետական պարտք, մլն դոլար	463,1	536,3	682,5	775,3	870,3	859,5	905,5	1025,5	1097,7	1182,9	1099,2	1205,6	1448,9	1577,1	2966,7	3300,5	3569,3	3739,1	3899,1	31204,1
5. Արտաբին պետական պարտք/ՀՆԱ, % (4 : 2)	36,0	33,5	41,6	41,0	47,2	45,0	42,8	43,2	39,1	33,1	22,4	18,9	15,7	13,5	34,3	35,6	35,2	37,6	37,4	30,7

1 Հնարանները որոնական փոխանցումներ և տրանսֆերտներ Տնային տնտեսությունները սպասարկող առևտրային կազմակերպությունների համար:

**Աղյուսակ 4.11. Առանձին երկրների արդահանման և ներմուծման հակվածությունները և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունները 2005–2012 թթ.\***

Հ/Հ	Երկրներ	Արտահանման միջին հակվածությունը, %				Ներմուծման միջին հակվածությունը, %				ՀՆԱ-ի ծավալը մեկ շնչի հաշվով ԱՄՆ դոլար			
		2005	2008	2010	2012	2005	2008	2010	2012	2005	2008	2010	2012
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.	Հայաստան	35,6	20,5	21,1	25,1	64,4	79,5	78,9	74,9	1625	3917	3125	3351
2.	Ադրբեջան	50,8	87,0	76,3	71,2	49,2	13,0	23,7	28,8	1578	5575	5843	7165
3.	Բելառուս	48,9	45,3	42,0	49,8	51,1	54,7	58,0	50,2	3126	6377	5819	6685
4.	Վրաստան	25,8	19,8	23,7	23,3	74,2	80,2	76,3	76,7	1470	2920	2614	3507
5.	Ղազախստան	61,6	65,3	70,4	67,4	38,4	34,7	29,6	32,6	3771	8514	9071	12121
6.	Ղրղզստան	37,8	28,4	31,6	23,9	62,2	71,6	68,4	76,1	476	966	880	1155
7.	Տաջիկստան	43,1	23,8	28,1	20,9	56,9	76,2	71,9	79,1	340	709	740	953
8.	Թուրքմենստան	69,7	68,7	36,0	57,6	30,3	31,3	64,0	42,4	1707	3919	4393	6798
9.	Ուկրաինա	48,7	43,9	45,9	44,8	51,3	56,1	54,1	55,2	1829	3891	2974	3867
10.	Ռուսաստան	85,6	84,9	86,5	88,2	14,4	15,1	13,5	11,8	5337	11700	10710	14037
11.	Միլդովա	1,1	0,8	0,9	1,1	98,9	99,2	99,1	98,9	831	1696	1632	2038
12.	Ուզբեկստան	54,5	46,5	44,1	31,7	45,5	53,5	55,9	68,3	547	1023	1377	1717
13.	Լիտվա	43,5	43,2	47,1	47,9	56,5	56,8	52,9	52,1	7814	14775	11722	14172
14.	Լատվիա	37,7	37,0	44,3	44,1	62,3	63,0	55,7	55,9	7165	15464	11447	13947
15.	Էստոնիա	42,8	44,2	49,3	47,9	57,2	55,8	50,7	52,1	10289	17723	14246	16833
16.	Բուլղարիա	39,3	37,8	44,7	44,9	60,7	62,2	55,3	55,1	3733	6917	6453	6977
17.	Չեխիա	50,5	50,7	51,3	52,8	49,5	49,3	48,7	47,2	12736	21710	18949	18690
18.	Հունգարիա	48,6	49,9	52,0	52,2	51,4	50,1	48,0	47,8	10937	15365	12750	12560
19.	Լեհաստան	61,7	65,5	67,0	67,3	38,3	34,5	33,0	32,7	7963	13886	12302	12710
20.	Սլովակիա	75,3	75,4	79,3	80,8	24,7	24,6	20,7	19,2	11415	18201	16151	16893
21.	Սլովենիա	34,3	28,7	27,5	26,1	65,7	71,3	72,5	73,9	17855	27015	22898	22059
22.	Ռումինիա	92,4	91,0	92,8	91,7	7,6	9,0	7,2	8,3	4652	9949	8139	8437
23.	Խորվաթիա	32,1	31,5	37,0	37,3	67,9	68,5	63,0	62,7	10090	15696	13327	13879
24.	Ավստրիա	49,5	49,6	49,0	48,3	50,5	50,4	51,0	51,7	37067	49679	45017	46792
25.	Գերմանիա	55,6	54,9	54,4	54,7	44,4	45,1	45,6	45,3	33543	44132	40408	42597
26.	Շվեյցարիա	50,8	52,2	52,6	53,3	49,2	47,8	47,4	46,7	51734	68555	70370	78928
27.	Ֆրանսիա	47,7	46,1	46,1	45,6	52,3	53,9	53,9	54,4	33819	43992	39443	39746
28.	Իսպանիա	90,8	89,1	90,3	91,0	9,2	10,9	9,7	9,0	25904	34674	29732	28274
29.	Դանիա	52,9	51,5	53,7	53,4	47,1	48,5	46,3	46,6	47547	62596	56452	56364
30.	Իտալիա	49,2	49,1	47,9	50,6	50,8	50,9	52,1	49,4	30479	38563	33982	33816
31.	Նորվեգիա	25,0	25,9	20,2	21,4	75,0	74,1	79,8	78,6	65767	95190	86156	99636
32.	Իրան	60,8	0,0	60,5	61,2	39,2	–	39,5	38,8	2737	4899	5675	7228
33.	Թուրքիա	38,6	39,5	38,1	39,2	61,4	60,5	61,9	60,8	7130	10379	10135	10666
34.	Իսրայել	48,7	48,5	49,7	46,3	51,3	51,5	50,3	53,7	19330	29160	30389	32567

\* Հաշվարկվել և կազմվել է <http://data.worldbank.org> և [www.trademap.org](http://www.trademap.org) կայքի տվյալների հիման վրա:

Արտահանման բարձր տեմպերի հասնելու համար մասնավոր ներդրումների դերը վճռորոշ է: Հայաստանում ներկայումս փոքր են ներքին աղբյուրներից ներդրումներ կատարելու և արտաքին շուկա դուրս գալու հնարավորությունները գրավչության, անձնական և արտադրական կուտակման խիստ սահմանափակվածության պատճառով: Այս պայմաններում չի կարելի թերագնահատել օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) դերը արտահանման խթանման հարցում: Արտերկրներից կատարվող մասնավոր ներդրումները մինչև 1996 թ. շատ փոքր են եղել՝ մոտ 28 մլն ԱՄՆ դոլար: Դրանք աճել են վերջին տարիներին. հատկապես «նախորդ 10 տարիների ընթացքում կատարված ավելի քան 556 մլն ԱՄՆ դոլարի ներդրումների մոտ 82%-ը բաժին է ընկնում այդ տարիներին՝ 1998 թ.՝ 229 մլն դոլար, 1999 թ.՝ 122 մլն դոլար և 2000 թ.՝ 104 մլն դոլար, ինչը պայմանավորված է հիմնականում միջազգային մրցույթով մասնավորեցված արտադրական կազմակերպությունների վաճառքից ստացված գումարներով և ներդրումային պարտավորություններով նախատեսված օտարերկրյա ներդրումներով [36, էջ 30]: Հատկանշական է, որ այդ ներդրումները ունեն արտահանման ուղղվածություն, որին համահունչ ոլորտներն են հանքարդյունաբերությունը, հեռահաղորդակցությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, թանկարժեք քարերի մշակման արդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ 2011–2013 թթ. ՀՀ-ում կատարված ուղղակի ներդրումներն ունեցել են նվազման միտում: Այսպես՝ 2011 թ. ընդամենը ներդրումները կազմել են 1735,9 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 906,3 մլն դոլար, 2012 թ. համապատասխանաբար 1633,71 մլն և 725,18 մլն դոլար, 2013 թ.՝ 1941,04 մլն և 469,23 մլն դոլար [28, էջ 77]: Իսկ ՀՀ-ի արտերկրում կատարած ներդրումները (ակտիվները) նշված տարիներին կազմել են համապատասխանաբար 115,3 մլն, 18,78 մլն և 48,58 մլն դոլար [28, էջ 83; 36, էջ 77]:

Արտահանման խթանման ինստիտուցիոնալ բնույթի միջոցառումների արդյունքում (արտահանման ֆինանսավորում, ապահովագրում և այլն) զարգացող շատ երկրներ հասել են տպավորիչ արդյունքների:

Տնտեսվարման այլընտրանքային առավել նպաստավոր լուծումները առաջադրում են ՀՀ արտահանման ընդլայնման ու զարգացման ծրագրային խնդիրը:

Գործուն աջակցությունն արտահանման գործընթացին՝ սկսած ծրագրի մշակումից մինչև դրա հետևողական կենսագործումը, պետք է դասվի առաջնահերթ ծրագրային խնդիրների շարքին: Տնտեսական և կառուցվածքային քաղաքականության հարցերով ՀՀ կառավարության ու Կենտրոնական բանկի փոխհամաձայնությունների մեմորանդումները Արժույթային միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի հետ դեռևս չեն ապահովում այն գործուն նախադրյալները, որպեսզի ընդլայնվի և խթանվի արտահանումը: Ավելին՝ փոխպայմանավորվածությունները դեռևս միտված չեն արտահանման ողջ ներուժի խթանմանն ու արդյունավետ գործադրմանը:

Արտահանման ընդլայնման ու խթանման ծրագրային խնդիրը պետք է նպատակամղվի մեղմելու տնտեսության, ըստ էության, ընդամենը իռացիոնալ կայունության տանող քաղաքականությունը:

Առաջադրվելիք ծրագրային խնդիրը պետք է պարունակի արտահանման ուղղվածություն ունեցող արտադրությունների ու ծառայությունների զարգացումը խթանող միջոցառումների ամբողջական համալիր, և այս իմաստով արտահանման կտրուկ աճի ապահովումն առաջիկա տարիներին հրամայական է: Իհարկե, առկա է նաև հանրապետությունում ներմուծման ռացիոնալացման, փոխարինիչների ինքնին կարևոր հիմնախնդիրը:

Պնդումը, որ քիչ թե շատ շոշափելի առաջընթաց ունենալու իմաստով, բացի արտահանման կտրուկ մեծացումից, չկան այլընտրանքներ, ձևավորված է մեր զարգացման ծրագրերում նախանշված տնտեսական աճի 7–8% տեմպերի անհեռանկարայնության հիմքի վրա: Այս դեպքում, դեռևս երկար տարիներ ՀՀ տնտեսությունում չի դիտարկվի սոցիալական առաջընթացի իրական տեղաշարժ, որովհետև լավագույնս 10 տարի հետո կարող է միայն կրկնապատկվել այսօրվա մեկ շնչի հաշվով ՀՆԱ–ի մակարդակը և հասցվել ՌԴ–ի համանուն ցուցանիշի (ավելի քան 14000 դոլար) ներկայիս մակարդակի ընդամենը կեսին: Համեմատության համար նկատենք, որ, օրինակ, Իսրայելում այդ նույն ցուցանիշը ավելի քան 40 անգամ գերազանցում է այսօրվա մեր ունեցած մակարդակը: Ի դեպ՝ ՀՀ նախագահի տնտեսական հարցերով խորհրդական Վ. Ներսիսյանցը դեռևս 1998 թ. իրավացիորեն նկատում է, որ «միայն մեր պաշարներով նույնիսկ ամենալավ տեմպերով մենք ի վիճակի չենք ապահովել 5–7% բարձր տնտեսական աճ: Ավելի արդյունավետ տնտեսական աճի համար պետք է ապահովել համախառն ներքին արդյունքի աճ՝ նվազագույնը 10–12%, և այս ցուցանիշի կայուն պահպանումը կլինի միայն մի քանի տարի: Անկասկած, այդպիսի աճ կարող է ձեռք բերվել բացառապես մասնավոր կապիտալի զարգացման հաշվին, այլ ոչ թե ի հաշիվ միջազգային ֆինանսական կազմակերպությունների: Եվ շատ կարևոր է դիվերսիֆիկացնել ֆինանսական ռեսուրսները, ինչպես մենք դիվերսիֆիկացրել ենք առևտուրը»:

Այսպիսով՝ դեպի զարգացում անցումն ապահովելու, ստեղծված իրավիճակում բեկում մտցնելու նպատակով ՀՀ կառավարության ծրագրային խնդիրների շարքում արտահանման ընդլայնումն ու խթանումը դիտվեն որպես մեր հասարակության սոցիալական առաջընթացի իրական երաշխիք, մակրոտնտեսական կայունացման և զարգացման բազային պարամետր:

Արտահանման ընդլայնման ու խթանման ծրագրի մշակումն ու գործադրումը պահանջում է հետևյալ հիմնախնդիրների լուծումը.

**1. ՀՀ արտահանման ներուժի բացահայտումը:** Արտահանման ներուժը պետք է ներառի ապրանքների և ծառայությունների այն ցանկը, որը հիմնավորվելու է ՀՀ բացարձակ և համեմատական առավելությունների գերակայություններով, դրանք իրացնելու հնարավորությունների և ուղիների նախանշումով (ըստ տեսականու, ծավալների, ժամկետների, իրացման շուկաների, սուբյեկտների, առկա և հնարավոր խոչընդոտների և այլ գնահատումներով): Նշենք, որ հանրապետությունում այս ուղղությամբ որոշ աշխատանքներ են տարվում, մասնավորապես՝ Զարգացման հայկական գործակալությունը իրականացնում է «Արտահանման և զարգացման» ծրագիրը:



**2. ՀՀ արտահանման ներուժի գործադրման խթանումը:** Արտահանման գործընթացին ՀՀ կառավարության աջակցությունը պետք է ներառի ինստիտուցիոնալ բարեփոխումներ և ռեսուրսային վերահսկում (ըստ ներագրման բոլոր հնարավոր լծակների ու մեխանիզմների մատնանշման՝ վարկային, հարկային, բանկային, արտոնագրային, ապահովագրական, լիզինգային և սպասարկող այլ ենթակառուցյունների կայացման առումով):

Ծրագրի մշակումից հետո անհրաժեշտ է ապահովել ծրագրի իրականացման նախադրյալները ստորև բերված խնդիրների ու միջոցառումների տեսքով:

Նկատենք, որ արտահանման խթանմանն ուղղված մի շարք միջոցառումներ ամրագրված են Զարգացման հայկական գործակալության, Առևտրաարդյունաբերական պալատի և այլ կառույցների գործառնությունում (արտաքին շուկաների ուսումնասիրություն, առևտրային պայմանագրերի նախագծերի մշակում, տեղեկատվական և գովազդային ծառայությունների տրամադրում, էլեկտրոնային առևտրի հայտերի կազմում, միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների, գործարար համաժողովների կազմակերպում և այլն): Խնդիրն այն է, որ պետք է բարձրացվի թվարկված աշխատանքների արդյունավետությունը:

Ծրագրի իրագործման վերջնանպատակը բարենպաստ մթնոլորտի ստեղծումն է բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար՝ անկախ սեփականության ձևից ու գործունեության ոլորտից, միակ պայմանը արտահանմանն ուղղվածություն ունեցող արտադրությունների ու ծառայությունների առկայությունն է:

#### 4.8. Սեփականության իրավունքի պաշտպանությունը

Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից է պետության կողմից սեփականության իրավունքի հաշվառման, գրանցման, պաշտպանության համակարգի ստեղծումն ու դրա հետագա զարգացումը: Հանրապետությունում շուկայական հարաբերությունների ձևավորմանը «արագ անցման» քաղաքականության արդյունքում մի քանի ամիսների ընթացքում հանրապետության բնակչության շուրջ 550 հազար ընտանիքներ դարձան հողի սեփականատերեր, սակայն տարիներով երկարաձգվեց հիմնականատրիբուտներով հագեցված «սեփականության ինստիտուտի» ստեղծումը, որը հնարավորություն կտար սեփականատիրոջ հայեցողությամբ իրականացնելու տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքները: Եթե սրան էլ հավելենք, որ մինչև 1995 թ. առկա էին հողի առք ու վաճառքի նկատմամբ կիրառվող սահմանափակումները, ապա պարզ կդառնա, որ ըստ էության աղճատված էր և գործուն չէր սեփականության իրավական ինստիտուտը: Գերակշռում էր այն հնամենի տեսակետը, որ մասնավոր սեփականության և շուկայական տնտեսության կայացումն անհատ սեփականատերերի ու ոչ էլ պետության գործն է, և միաժամանակ այն, որ այդ սեփականությունը հաշվառված, գրանցված և, հետևաբար, պատշաճ ձևով ձանաչված չէր պետության կողմից:

Բացակայում էին հաշվառման կադաստրային քարտեզները, հատակագծերը, սահմանային նիշերը (թե՛ փաստաթղթերում և թե՛ բնության մեջ), և չկար սե-

փականության իրավունքը հաստատող փաստաթուղթը: Այս իրավիճակը հիմնականում շտկվեց միայն գործընթացի սկզբնավորումից 9 տարի հետո, երբ ընդունվեցին 2 հիմնարար օրենքները՝ «ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը» և «ՀՀ Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման» մասին օրենքը, որոնք սկսեցին աստիճանաբար կանոնակարգել սեփականության և այլ գույքային իրավունքները: Մեծ էր հապաղումը ինստիտուցիոնալ փոփոխություններում՝ կադաստրի պետական կոմիտեի ստեղծում և դատաիրավական բարեփոխումներ, որոնք աստիճանաբար պետք է ապահովեին այդ օրենքների կիրարկումը:

Իրավիճակն այս ոլորտում համարժեք արտացոլում է շուկան, որը կրում է ուշացած որոշումների ծանրացած բեռը: Մասնավորապես, եթե 1991-1996 թթ. հողի առք ու վաճառքը կամ վարձակալության գործարքների քանակը հանրապետությունում հաշվելի էր տասնյակներով, ապա 1997 թ. անշարժ գույքի նկատմամբ արդեն իրականացվել էր 17 հազար գործարք, իսկ 1999 թ. դրանց թիվը հասավ 42 հազարի (ներառյալ նաև բնակարանների նկատմամբ գործարքները), և այդ միտումը ընդհանուր առմամբ պահպանվեց նաև հետագա տարիներին: Գործարքների որոշ անկում գրանցվեց 1999 թ. վերջին և 2000 թ. սկզբին՝ կապված հոկտեմբերի 27-ի ողբերգական իրադարձությունների հետ:

Ըստ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ամփոփ տեղեկատվության՝ 2013 թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 18285 գործարք (2013 թ. II կիսամյակում՝ 102991 գործարք) [28, էջ 215, 217]:

Հանրապետությունում կայացավ նաև շուկային սպասարկող մասնավոր սեկտորը. բազմաթիվ ռիելթորական, շուկայական գնահատման, հաշվառող-քարտեզագրող մասնավոր ընկերություններ, որոնք պաշտոնապես գրանցվել և գործում են շուկայում: Սեփականության իրավունքի գրանցման համակարգի աստիճանական կայացմանը զուգընթաց իրականացվում են տարաբնույթ սեփականատերերի ներդրումների համակենտրոնացման ծրագրեր (Երևանի Հյուսիսային պողոտա, Կասկադ և այլն):

Շուկայի զարգացմանն ուղղված արմատական քայլ է նաև 2001 թ. ընդունված Հողային օրենսգիրքը, որը հնարավորություն է ստեղծում կառավարելու և շրջանառության մեջ դնելու հանրապետությունում շուկայական առուծախի ենթակա հողատարածքները: Նկատենք, որ գործող օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին տրված էր հողի կառավարման գործառույթների հնարավորություն՝ իրենց վարչական տարածքների սահմաններում, սակայն դրանք լիարժեք չէին կարող իրականացվել: Սեփականության իրավունքի այդ նորմը ամրագրվեց նոր Հողային օրենսգրքով, հստակեցվեցին կառավարման տարբեր օղակների գործառույթները՝ հողերի օգտագործման, տնօրինման և տիրապետման ոլորտներում, հեշտացվեցին հողերի սեփականաշնորհման մեխանիզմները տարբեր տնտեսավարող սուբյեկտների համար: Նոր օրենսգրքի կիրառումն իր հետ բերեց բազմաթիվ օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունման, որոնք կարգավորում են նոր հողային, հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու, իրավաբանա-

կան անձի, ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների ու պետության միջև հարաբերությունները:

Սեփականության իրավունքի պաշտպանության կարևոր գրավականներից մեկն էլ գնահատման ինստիտուտի կայացումն է (աղյուսակներ 4.12 և 4.13): Գնահատման կարիք է առաջանում գույքի շուկայում բազմաթիվ տնտեսական գործառույթներ իրականացնելիս՝ գույքի առուվաճառք, վարձակալություն, հիփոթեքային վարկավորում, գրավադրում, ապահովագրում, դատական վեճեր և այլն: Գնահատման գործառույթները, որպես բիզնեսի յուրօրինակ տարատեսակ, մասսայական են, բազմազան և դրանց օբյեկտիվությունը, գիտական մակարդակը, հավաստելիությունը ապահովելիս պետք է մշակվեն և կիրառվեն սեփականատիրության արդյունավետ համակարգի ձևավորման միջոցներ: Գնահատման ոչ արդյունավետ համակարգի բացասական ազդեցությունը ավելի է ուժեղանում, եթե նկատի ունենանք, որ ՀՀ տնտեսությունում ահռելի չափերի են հասել կուտակված ապառքներն ու փոխպարտավորությունները, բացակայում են մասնկացման ու ֆինանսական առողջացման բազմաթիվ հիմնահարցերի պատշաճորեն լուծելու հնարավորությունները: Դիպուկ է նկատել ՀՀ ԱԺ իրավաբանական վարչության նախկին պետ Ս. Մամիկոնյանը, որ «մասնկացման և գույքի բռնագանձման ներկա գործընթացի տարօրինակություններից մեկն էլ պետական մարմինների կողմից պետության սեփականություն հանդիսացող գույքի բռնագանձման գործընթացն է: Պետությունը, ունենալով գերակշիռ բաժնեմաս և բաժնետիրական ընկերությունների խորհուրդներում համապատասխան ձայներ, կարող է տնտեսվարող սուբյեկտների գույքը (մասնակիորեն կամ ամբողջությամբ) առանց դժվարության օտարել և ամբողջ հասույթը փոխանցել ՀՀ պետբյուջե: Մինչդեռ իրականացվում է քայքայիչ գործընթաց՝ դատական երկարատև քաջքշուկներով, գույքի և հաշիվների կալանքով, ֆինանսատնտեսական վիճակի վատթարացմամբ և այլն: Արդյունքում պետությունը կորցնում է արտադրական աշխատունակ կազմակերպությունները, դրանց զարգացման հեռանկարները և շահավետ մասնավորեցման հնարավորությունները, ինչի հետևանքով վտանգվում են տնտեսական ենթակառուցվածքներն ընդհանրապես»[5, էջ 30]:

Գնահատման համակարգի կայացման համար անհրաժեշտ է՝

- կատարել գիտատեսական ու մեթոդական ուսումնասիրություններ (պետական պատվերի շրջանակներում), ինչպես նաև պատրաստել գույքի գնահատման ու կառավարման մասնագետներ,
- ստեղծել անշարժ գույքի գործառույթների վերաբերյալ տեղեկատվության ցանց, ապահովել շուկայի վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն,
- ապահովել գնահատման համար անհրաժեշտ տնտեսական ցուցանիշների եռամսյակային և տարեկան պաշտոնական հավաստում (բանկային տոկոսադրույք, միջին գներ և այլն):

Աղյուսակ 4.12. 2013 թ. գործարար միջավայրը բնութագրող ցուցանիշները երկրների խաբասիրումների համար [54]

Երկրների խաբասիրումները	Գործարարություն սկսելը			Մեկականություն գրանցելը		Ընթացողության ստանալը		Էլ. էներգիայի աղբյուրին միանալը	Պայանևագիր կնքելը		Ներդրողների պաշտպանվածությունը	Անվանում-կապության հարցի լուծումը
	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1												
Աշխարհ	7	24,9	31,7	6	51,3	15	172,7	109	38	622	5	2,7
Ճածր եկամուտներով երկրներ	8	28,9	92,6	6	78,5	15	217,7	162	40	677	5	3,6
Միջին եկամուտներով երկրներ	7	28	25,2	6	48,8	16	163,1	106	39	644	5	2,8
Միջինից ցածր եկամուտներով	7	26,4	33,5	6	58,6	16	160,8	109	40	666	5	3
Միջինից բարձր եկամուտներով	7	29,5	17,3	6	39,6	15	165,4	103	38	623	5	2,6
Ճածր և միջին եկամուտներով երկրներ	7	28,2	42,4	6	56,6	15	177,1	120	39	652	5	3
Արևելյան Ասիա և Խաղաղ օվկ. տարածք	8	39,5	34,9	5	80	17	160,2	109	38	581	5	3,1
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	5	12,2	6,9	6	23,6	18	163,8	150	38	428	7	2,4
Լատինական Ամերիկա և Կարիբյան այլազան	9	40,9	39,9	7	54,4	12	211,8	70	39	724	4	3
Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	8	20,8	42	7	40,9	17	166	93	42	702	5	3,2
Հարավային Ասիա	7	16,2	19,8	6	99,4	16	193,3	145	43	1,075	5	3
Աֆրիկա՝ Սահարայից հարավ	8	27,4	66,7	6	59,7	15	171,2	142	39	656	5	3,1
Բարձր եկամուտներով երկրներ	6	16,8	6,3	5	39	14	162,6	83	35	549	6	2
Եվրոպայի երկրներ	6	12,9	4,3	5	28,2	13	197,9	103	32	613	6	1,9

Աղյուսակ 4.13. Աշխարհի մի շարք երկրներում գործարար միջավայրը բնութագրող ցուցանիշները 2013 թ. [54]

Հ/Հ	Երկրները	Գործարարություն սկսելը			Մեֆականություն գրանցելը		Չինարարության թույլտվություն ստանալը		Էլ. էներգիայի աղբյուրին միանալը		Պայմանագիր կնքելը		Ներդրողների պաշտպանվածությունը	Անվանումն ունեցող ընկերությունների քանակը
		Գործարարություն սկսելը	Մի օրում	Մի օրում	Մի օրում	Մի օրում	Մի օրում	Մի օրում	Մի օրում	Մի օրում	Մի օրում	Մի օրում	Մի օրում	Մի օրում
1	Հայաստան	2	4	1,1	3	7	21	84	242	49	570	6	1,9	
2	Ադրբեջան	3	7	1	4	11	28	212	241	40	237	7	2,3	
3	Բելառուս	5	9	0,8	2	4	12	128	161	29	275	7	3	
4	Էստոնիա	5	6,5	1,5	3	17,5	13	148	111	35	425	8	3	
5	Վրաստան	2	2	3,5	1	2	9	73,5	71	33	285	9	2	
6	Ղազախստան	6	12	0,6	4	23	29	157	88	37	370	7	1,5	
7	Ղրղզստան	2	8	2,7	4	6	12	142	159	38	260	7	4	
8	Լատվիա	4	12,5	1,9	5	18	18	152	108	27	469	5	1,5	
9	Լիտվա	4	6,5	0,9	3	2,5	16	105	148	32	300	7	1,9	
10	Մոլդովա	6	7	5,4	5	6	26	291	140	31	337	7	2,8	
11	Ռուսաստանի Դաշնություն	7	15	1,3	4	22	36	297	162	36	270	6	2	
12	Թուրքմենստան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
13	Ուկրաինա	6	21	1,3	8	45	10	73	277	30	378	5	2,9	
14	Ուզբեկստան	4	8,5	3,5	14	77	25	243	108	41	195	4	2	
15	Տաջիկստան	5	33	25,6	6	37	24	228	185	35	430	8	1,7	
16	Ավստրիա	8	25	4,8	3	20,5	13	194	23	25	397	5	1,1	

17	Բուլղարիա	4	18	1	7	14	18	104	130	38	564	10	3,3
18	Խորվաթիա	6	8	9,3	5	102,5	12	317	70	38	572	1	3,1
19	Չեխիա	9	19,5	8,2	3	24	33	120	279	27	611	2	2,1
20	Դանիա	4	5,5	0,2	3	4	8	67	38	35	410	7	1
21	Գերմանիա	9	14,5	4,7	5	40	9	97	17	30	394	5	1,2
22	Հունգարիա	4	5	8,6	4	16,5	24	79	252	35	395	2	2
23	Իսրայել	5	14	4,1	6	81	17	210	132	35	890	7	2
24	Իտալիա	6	6	14,2	4	16	11	233,5	124	37	1,185	7	1,8
25	Նորվեգիա	5	7	1,6	1	3	10	136	66	34	280	7	0,9
26	Լեհաստան	4	30	14,3	6	35	18	161	161	33	685	7	3
27	Սլովակիա	7	18,5	1,5	3	16,5	11	286	158	32	545	3	4
28	Սլովենիա	2	6	0	5	109,5	10	182	38	32	1,270	5	2
29	Իսպանիա	10	23	4,7	5	12,5	9	230	85	40	510	5	1,5
30	Ըվեյցարիա	6	18	2	4	16	13	154	39	32	390	0	3
31	Թուրքիա	6	6	12,7	6	6	20	164	70	36	420	9	3,3
32	Ռումինիա	5	8,5	2,4	8	20	15	287	223	32	512	9	3,3
33	Իրան	8	16	3,1	9	36	16	319,5	140	40	505	7	4,5
34	Ֆրանսիա	5	6,5	0,9	8	49	9	184	79	29	395	10	1,9

**Անշարժ գույքի շուկայի զարգացման խնդիրները:** Կարևորվում է անշարժ գույքի համակարգում առավել մրցակցային միջավայրի ստեղծումը և դրա տնօրինումը առավել արդյունավետ օգտագործողի կողմից: Այս դրույթը պաշտոնապես կարևորվեց 2001 թ., երբ ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Անշարժ գույքի շուկայի զարգացման հայեցակարգը», որում կարևորվեց՝

- անշարժ գույքի, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերի բնակարանների, առանձնատների, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների, հողամասերի, այգետնակների և ավտոտնակների օտարում,
- անշարժ գույքի գրավադրման, վարձակալության, ժառանգության, անհատույց սեփականաշնորհման, ապապետականացման գործարքներ:

Գործարքների տարեկան ծավալի կեսից ավելին բաժին է ընկնում Երևան քաղաքին: Բարձր դինամիկ աճման միտում ունեն օտարման, գրավադրման, վարձակալության, գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի գործարքները: Այս բոլորի հետ մեկտեղ դեռևս չի զգացվում անհրաժեշտ պետական կարգավորումը, որի նշանակությունը անշարժ գույքի շուկայում կարող է արտահայտվել հետևյալում՝

- անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պարզեցում, թափանցիկ համակարգի ստեղծում՝ տնտեսական շրջանառության մեջ ընդգրկելով հանրապետության ամբողջ անշարժ գույքը,
- անշարժ գույքի գնահատման համակարգի համալիր կայացում, հիփոթեքային վարկի, ապահովագրական համակարգերի գործունեության խթանում,
- պետության, ոչ միայն որպես խաղի կանոնները մշակող, այլև իբրև խոշոր սեփականատիրոջ ակտիվ մասնակցության ապահովում անշարժ գույքի շուկայում,
- արդյունավետ տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման նպատակով շուկայի լայնածավալ մոնիտորինգի գործադրում, անշարժ գույքի տեղեկատվական բանկի ստեղծում ու տվյալների մատչելիության ապահովում:

#### 4.9. Հեռանկարին միտված հանձնարարականներ

Հայաստանի տնտեսության անցած տարիների վերափոխումային գործընթացի քննական վերլուծությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ իրականացված տնտեսական քաղաքականության հանրագումարային արդյունքները լիարժեքորեն չեն նպաստել կայուն տնտեսության ձևավորմանը: Այն հիմնականում բացատրվում է վերափոխումների ընտրված ոչ ճիշտ ռազմավարությամբ, որն էլ, իր հերթին, երկրի ապագայի հայեցակարգային առանձին հիմնախնդիրների չլուծվածության հետևանքն է:

Անցած ժամանակահատվածի կարևորագույն դասերից մեկն ապագայի տնտեսական մոդելի մշակման հրամայականն է:

Առաջավոր մարդկությունը նոր հազարամյակ է մտել՝ հետինդուստրիալ համակարգ, որը համարվում է նոր կարգ<sup>1</sup>: Մեր կողմից նոր կանոնակարգի մատնանշումը նպատակ չունի կանխորոշելու ապագայի տնտեսական մոդելի բնութագիրը, բայց, միաժամանակ, չենք կարող խուսափել նշված մոդելի՝ «նոր կարգերի» տարբերակի հնարավոր ընտրության գայթակղությունից: Անհրաժեշտ է հաշվի առնել այն նպատակադրումները, որոնք առաջադրում է հետինդուստրիալ համակարգը՝ պահպանել ձեռնարկատիրությունը, մրցակցությունը և շուկան, ներմուծել կարգավորման, պլանավորման, ծրագրման, կազմակերպման սկզբունքները և, վերջապես, կարգավորվող շուկայական տնտեսությանը հաղորդել սոցիալական կողմնորոշում:

Չունենալով զարգացման երկարաժամկետ (10–15 տարվա) ռազմավարություն և որպես հետևանք տնտեսական մոդելի հատուկ ուղղվածություն՝ պետությունն, ի դեմս իր կառավարման համակարգի, ըստ էության, խուսանավեց, հետքաշվեց տնտեսության զարգացման նոր ուղիների ու նոր շուկաների որոնման աշխատանքներից: Անցած տարիների տնտեսական քաղաքականությունը մեծապես հրամցվել է միջազգային կազմակերպությունների կողմից՝ իրականացվող ծրագրերի տրամաբանությամբ: Երկարաժամկետ զարգացման հայեցակարգի ու ռազմավարության բացակայության պայմաններում, բնականաբար, դժվար էր դիմակայել և առաջարկվող քաղաքականությունը քննարկել ազգային տնտեսության զարգացման համատեքստում և հնարավորինս չեզոքացնել ստանդարտ մոտեցումների անհամապատասխանությունը մեր իրականությանը:

Հիմնախնդրի խոր գիտակցումն իշխանության համակարգում և, ընդհանրապես, հասարակությունում կատեղծեն այն անհրաժեշտ նախադրյալներն ու երաշխիքները, որոնք կապահովեն իրական առաջընթաց և որդեգրած կուրսի անշրջելիություն:

Շուկայական տնտեսությունը հասարակական, տնտեսական, քաղաքական հարաբերությունների համակարգ է, որում անխուսափելի է պլանավորման ու ծրագրման հիմքի վրա իրականացվող կառավարումը, և արդյունքում, տնտեսվարման նոր պայմաններին համընթաց, պահպանված կամ փլուզված կառավարման նախկին համակարգերը դեռևս չեն փոխարինվել կառավարման նորերով: Իսկ եթե անգամ դրանք ստեղծվել են ուշացումով, ապա չեն հստակեցվել դրանց լիազորություններն ու պատասխանատվությունները: Կառավարման համակարգում տնտեսվարող սուբյեկտները եղել են անհավասար պայմաններում, տարբեր վերադասավորումներում: Արդյունքում առկա է անկման մեծ խորությունը (բնութագրերը՝ նախորդ բաժիններում) տնտեսության իրական հատվածում, ինչպես նաև սոցիալական ոլորտում:

<sup>1</sup> Նոր կարգը ծնունդն է Ռուզվելտի «նոր կուրսի»՝ հարստացված Մարշալի միջոցառումների պլանով և սոցիալ-դեմոկրատական բարեփոխումներով: Այդպիսի տնտեսությունները կազմակերպվում են սեփականության ինստիտուտների հետևյալ եռյակով՝ պետական և մունիցիպալ, կոլեկտիվ-բաժնետիրային, կոոպերատիվ և, վերջապես, դասական մասնավոր սեփականություն: Գործում են շահույթի նպատակ չհետապնդող բազմաթիվ կազմակերպություններ: Այդպիսի հասարակություններին բնորոշ են սոցիալական ոլորտում՝ երաշխիքները, իսկ գործունեության կառուցակարգերում՝ պետական կարգավորման և շուկայի ու մրցակցության զուգորդումը: Անցած ժամանակահատվածին բնորոշ է նաև պետության հիմնական գործառույթների ուղղորդումը պայմաններ ստեղծելուն և ոչ թե ծառայություններ իրականացնելուն:



Դրականորեն գնահատելով տնտեսության շուկայացումը սկզբնավորող ձեռնարկումները՝ իրավական դաշտի սաղմնավորման, հողի մասնավորեցման առումով, հետագայում վերափոխումների ոչ ճիշտ մոդելի կիրառումը (Ձ. Սաքսի վիրահատությունն՝ առանց հայկական առանձնահատկության) տնտեսական բարեփոխումների առաջին տարիներին հանգեցրեց ըստ էության տնտեսության կազմալուծման: Այն հետևանք էր նաև ընտրված, թեկուզ և շուկային թերապիայի մոտեցումների ու առանձին սկզբունքային լուծումների անհետևողականության: Շուկային թերապիայի կիրառումը, որի նպատակը վճարունակ պահանջարկի ընդարձակումն էր և ֆինանսական կայունության ապահովումը, իր հիմքում ունենալով մոնետարիզմի դրույթները, արդյունք կարող էր տալ միայն համապատասխան կառուցվածքների ու միջավայրի (մրցակցություն, սնանկացում և այլն) առկայության պայմաններում, որոնք իսպառ բացակայում էին:

Բարեփոխումների սկզբնական բացասական արդյունքները, բնական է, պայմանավորվել են ոչ միայն իրագործվող տնտեսական քաղաքականության անկատարելիությամբ ու անարդյունավետությամբ, այլև արտատնտեսական արտաքին գործոններով (չհայտարարված պատերազմ, տնտեսական շրջափակում): Ըստ մեր գնահատումների՝ այդ գործոնների պատճառական ազդեցությունը կարող էր պայմանավորել անկման միայն մեկ երրորդը: Ճգնաժամը գերակշռող մասով եղել է տնտեսական քաղաքականության, տնտեսական համակարգի անկառավարելիության հետևանք: «Վերափոխումային անկման» բնույթը, դրա պատճառահետևանքային կապերի բացահայտումը տնտեսական բարեփոխումների անցած տարիներին թելադրում են վերանայել և ձևավորել նոր տնտեսական քաղաքականությունը, որի կիրառումը հնարավորություն կտա երաշխավորելու բարձր տեմպերով կայուն տնտեսական աճ երկարատև ժամանակահատվածում:

Սոցիալ-տնտեսական համակարգի բարեփոխումները պետք է միտված լինեն երկրի տնտեսական անվտանգության հիմնախնդիրների լուծմանը: Դրանց բացահայտումը և արդյունավետ լուծումների որոնումը խիստ կարևոր նշանակություն ունի գլոբալացման պայմաններում ազգային ինքնության պահպանման ու ներդաշնակման հարցում:

ՀՀ սոցիալ-տնտեսական իրողությունները գնահատելիս չի կարելի հաշվի չնստել սրընթաց վերափոխվող աշխարհի մարտահրավերներին: Դրանք նախ պետք է իմաստավորվեն իրենց ամբողջության մեջ: Առաջին հերթին մասնավոր սեփականության, իրավական պետության սկզբունքների և մարդու իրավունքների ողջ համալիրի կենսագործման երաշխիքների առավելագույնս ապահովումն է՝ դրան համապատասխան գործուն կառուցակարգերի ստեղծման ճանապարհով: Սա է զարգացման հիմնական մայրուղին:

Տնտեսական անվտանգությունն ապահովող գործնական բավարար պայմաններն էապես կախված են լինելու անվտանգության սկզբունքային դրույթները երկրի օրենքներում ամրագրելուց: Անհատի, հասարակության և պետության կենսական կարևոր շահերի պաշտպանվածությունը, որով ըստ էության բնու-

թագրվում է տնտեսական անվտանգությունը, պետք է բխի ՀՀ սոցիալական, տնտեսական, աշխարհաքաղաքական, ռազմավարական խնդիրներից: Այսօր կարելի է տեսնել, որ ներքին և արտաքին սպառնալիքների նկատմամբ ՀՀ տնտեսական օրգանիզմի «հիմունդեֆիցիտի» վերականգնումն էականորեն պայմանավորվում է տնտեսության իրական հատվածի զարգացումն ապահովող տնտեսական քաղաքականությամբ:

Ներկայումս առկա են տնտեսական ինքնիշխանության անհրաժեշտ պայմաններ՝ հարկային, առևտրային և դրամական քաղաքականության ոլորտներում: Սակայն որդեգրած և ինտեգրացվող գործադրվող տնտեսական քաղաքականությունը դուրս չի լուծում տնտեսական անվտանգության հիմնախնդիրները: Տնտեսվարման այլընտրանքային նպաստավոր լուծումները, պետք է խարսխվեն երկարաժամկետ առաջարկը խթանող քաղաքականության վրա՝ հրաժարվելով բոլոր տարիների իրականացվող կարճաժամկետ պահանջարկային կարգավորման (այն էլ՝ ոչ համալիր) ծրագրերից:

Գործադրվող տնտեսական քաղաքականության արդյունքում ՀՀ բավարար տնտեսական աճը և սոցիալական առաջընթացը հետաձգվել են անորոշ ժամանակով ու հանգեցրել մակրոտնտեսական իռացիոնալ կայունության: Դեռևս չեն ապահովվում տնտեսական կայուն աճը գործազրկության ցածր մակարդակում (ներքին հավասարակշռություն) և դրամական միջոցների ցանկալի ներհոսքը հատկապես ներդրումների (արտաքին հավասարակշռություն):

Առաջընթացին, ինչպես նաև տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված տնտեսական քաղաքականությունը կարող է արդյունք տալ ինստիտուցիոնալ բավարար պայմանների (կատարյալ օրենքներ ու գործուն շուկայական ենթակառուցվածքներ) ստեղծման դեպքում: Նման տնտեսական քաղաքականությունը՝ զարգացման երկարաժամկետ ծրագրերի ու վստահության մթնոլորտի առկայության պայմաններում կկարողանա արդյունավետ գործադրել մեր ազգային հարստության կարևոր բաղադրատարրերը, գիտական ներուժը և ձեռնարկատիրական ունակությունները:

Հայաստանի նման փոքր և բաց երկրի հզորանալու հիմնական աղբյուրներն են ներդրումները և ինստիտուցիոնալ բարեփոխումները: Սրանց առկայության պայմաններում պետք է կարողանալ մինչև 2020 թ. ստեղծել առնվազն հարյուր հիսուն հազար նոր աշխատատեղ (գնահատումը ելնում է գործազրկության մակարդակը բնականին մոտեցնելու պահանջից): Նոր աշխատատեղեր գործարկելու համար պահանջվելիք ներդրումները (1 մլն դոլարը՝ 22–25 աշխատատեղ ստեղծելու հաշվարկով) կարող են կատարվել վստահության մթնոլորտի պայմաններում ներքին պոտենցիալ ներդրողների և դրսի մասնավոր կապիտալի ներհոսքի միջոցով: Նկատենք, որ իշխանությունների կողմից բազմիցս հավաստվել է մինչև 1 մլրդ և ավելի դոլար ներդրումային պայմանագրերի ու մտադրությունների մասին:

Ներդրումների պայմաններում միայն հնարավոր կդառնա առաջադրել համակարգային խնդիրներ, տնտեսական ակտիվության մեծացման և զբաղվա-

ծության առավելագույնս ապահովման դիրքերից: Այլապես ինքնանպատակ են դառնում պահանջարկի սահմանափակումներով դրամի փոխարժեքի պահպանումը և ինֆլյացիայի զսպումը, երբ ազգային դրամը շրջանառվում է առնվազն մեկ երրորդով արհեստականորեն կրճատված տնտեսական տարածքում: Ներկայիս ավելի քան 10 մլրդ դոլար ՀՆԱ-ի և այդ մակարդակը փոքր-ինչ գերազանցող սպառման պայմաններում ինֆլյացիայի «սեղմումը» սուկ դրամի առաջարկով տնտեսության իրական հատվածում հանգեցնում է նեղացող զսպանակային (պարոյրի) էֆեկտի: Կոշտ ֆինանսական քաղաքականությունը, վերջին հաշվով, հակասում է բնակչության կենսական կարևոր շահերի պաշտպանվածությանը և ակտիվ գործարարության ծավալմանը: Տնտեսական աճի զարգացման ներկայիս տեմպերը պահպանելով՝ հեռանկարում պարտադրված մշտապես մնալու ենք զարգացող երկրների շարքում:

Ազգային տնտեսության զարգացման քաղաքականության հիմքում պետք է դրվի որոշակի տնտեսական մոդել՝ իր հստակ նպատակադրումներով և միջոցներով: Այդպիսիք կարող են հանդիսանալ առաջիկա 5 տարիների համար 7 և ավելի տոկոս տնտեսական աճը, տարեկան միջինը 1 մլրդ դոլար օտարերկրյա ուղղակի ներդրումները, տնտեսության ստվերայնության կրճատումը 25–30 կետով, առնվազն նույն չափով դոլարացման մակարդակի նվազեցումը, առաջիկա 6 տարիներին տարեկան առնվազն 22–25 հազար նոր աշխատատեղերի գործարկումը և այլն: Տնտեսության աշխուժացումը 7 և ավելի տոկոս աճի տեմպերի դեպքում հնարավոր է տարածաշրջանային բարենպաստ պայմանների, էներգետիկայի ֆինանսական առողջացման, կառավարման ողջ համակարգի էական բարեփոխումների հիմքի վրա: Առաջադրվող նպատակադրումները և իրականացվելիք միջոցառումները կանխորոշելու են մեր զարգացումը մինչև 2020 թվականը:

Այս սկզբունքներով ու պարամետրերով տնտեսական մոդելի մշակումն ու գործադրումն անցումային փուլում կապահովի արտադրության ընդլայնման անհրաժեշտ նախադրյալներ: Այս ուղիով կառավարությունը կկարողանա հեռանկարում բավարարել բնակչության կենսական առաջնահերթ պահանջմունքները, սպասարկել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքը: Նախանշված տնտեսական մոդելի ու ծրագրերի գործադրումից զատ ՀՀ կառավարությունը պետք է շարունակի տնտեսությունը դեպի շուկան կողմնորոշելու և այն անշրջելի դարձնելու գործունեությունը հետևյալ ուղղություններով.

- մասնավոր գործարարության բարենպաստ պայմանների ապահովում,
- ֆինանսական կարգապահություն,
- պետություն — մասնավոր հատված արդյունավետ համագործակցություն:

ՀՀ կառավարությունը պետք է իրագործի մակրոտնտեսական կառուցվածքային և ինստիտուցիոնալ քաղաքականություն՝ հետամուտ լինելով ժամանակի պահանջներին, համապատասխան տնտեսական քաղաքականության նպատակներին: Դրանք են թողարկվող արտադրանքի մրցունակության բարձրացումը, գների կայունությունը, վճարային հաշվեկշռի բարելավումը, զբաղ-

վաճության մակարդակի բարձրացումը և այլն: Ընդ որում՝ այս ամենը պետք է դիտարկվեն որպես համալիր խնդրի ենթանպատակներ:

Բնական է, որ վերն ասվածի շրջանակներում ենթադրվում է մշակել սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր ու առաջնահերթ միջոցառումներ, որոնք կերաշխավորեն բարենպաստ պայմաններ ստեղծագործ աշխատանքի, գործարարության զարգացման և այդ հիմքի վրա՝ սոցիալական առաջընթացի համար:

Սոցիալ-տնտեսական զարգացման իրատեսական ծրագրերը պետք է մշակվեն ու գործադրվեն երկմիասնական՝ քաղաքական ու տնտեսական լուծումներ պարունակող տարբերակային սցենարների զուգորդման միջոցով:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### Երկրորդ բաժնի վերաբերյալ

1. Ա. Խ. Մարկոսյան, Հ. Լ. Սարգսյան, Ս. Հ. Թոքմաջյան, Դ. Ա. Իվանյան, Որակի ապահովման համակարգը ճարտարապետաշինարարական բարձրագույն ուսումնական հաստատություններում, Եր., ԵՃՇԴՀ, 2013:
2. Ա. Մարկոսյան, Մ. Մկրտումյան, Բնական մենաշնորհների պետական կարգավորումը, Եր., ԱՌՏ, 2002:
3. Ա. Խ. Մարկոսյան, Պետությունը և շուկան, Գիրք առաջին, Եր., Տիգրան Մեծ, 2000, 560 էջ:
4. Ա. Խ. Մարկոսյան, Տնտեսագիտություն բոլորի համար, Երկրորդ՝ բարեփոխված և լրացված հրատարակություն, Եր., Տիգրան Մեծ, 2006, 460 էջ:
5. Ա. Մարկոսյան, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, Եր., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2005:
6. Ա. Գալոյան, Գրում են կրկին, 168 ժամ, N17 (905), փետրվար 23-24, 2012:
7. Ա. Գասպարյան, 75%՝ երեք քաղաքական ուժերի, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 23.02.2012:
8. Ա. Դարբինյան, ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրացման ռազմավարությունը գլոբալացման պայմաններում, Տնտ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2001:
9. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2008-2012, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013:
10. Է. Սանդրյան, Ա. Քառյան Բարեփոխումների արդյունքները և դրանց հետագա համակարգման հիմնական խնդիրները, Ե., Էկոնոմիկա, 3, 2000:
11. Կոռուպցիան Հայաստանում. տնային տնտեսությունների 2010 թ. հետազոտություն, Եր., Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ, 2011 թ.:
12. Հայաստան. տնտեսական միտումներ, հուլիս-սեպտեմբեր, 2001:
13. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013:
14. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003, Եր., ՀՀ ԱՎԾ, 2003:
15. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008, Եր., ՀՀ ԱՎԾ, 2008:
16. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011, Եր., ՀՀ ԱՎԾ, 2011:
17. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009:
18. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ԱՎԾ, 2012:
19. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2002, Եր., ՀՀ ԱՎԾ, 2002:
20. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Եր., ՀՀ ԱՎԾ, 2001:
21. Հայաստանի Հանրապետությունում առողջապահական հաստատությունների մասնավորեցման ռազմավարության հայեցակարգ:
22. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Եր., «Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչություն:
23. Transition-. <http://www.ebrd.com>
24. ՀՀ 2011 թ. պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն:
25. Հ. Սարգսյան, Բնակչության եկամուտների և սպառման կառուցվածքը անցումային շրջանում, Էկոնոմիկա, 1997 թ., N 1-3:
26. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013:
27. ՀՀ ազգային հաշիվները 2013 թ., Եր., ՀՀ ԱՎԾ, 2013:
28. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014:
29. Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվներ, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013:
30. Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռ, Եր., ՀՀ ԱՎԾ, 2006:
31. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվար-փետրվարին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014:

32. Հայաստանը պետք է դառնա զարգացած արդյունաբերական երկիր՝ հզոր տնտեսությամբ: Հայաստանի Հանրապետություն, 2 դեկտեմբերի, 1998:
33. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995, 1996, Եր., Զանգակ-97, 1998:
34. ՀՀ 2001 թ. դրամավարկային քաղաքականության ծրագիր:
35. ՀՀ ԱՎԾ, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ֆինանսների նախարարության, համապատասխան տարիների պետական բյուջեների մասին ուղերձները:
36. Մարդկային զարգացման զեկույց: Հայաստան 2001, Երևան, UNDP:
37. Մ. Եսայան, Իսկ ընտրողները կարդում են ծրագիրը, «Առավոտ» օրաթերթ, 22.02.2012.
38. Ն. Գրիգորյան, Բազրատյանը պատրաստ է կոալիցիային անվճար սպասարկելու, «Առավոտ», 23.02.2012.
39. Պոլ Հեյնե, «Տնտեսական մտածելակերպ», թարգմանություն անգլերենից, Եր., Էդիթ Պրինտ, 2008:
40. Պոլ Հեյնե, Պիտեր Բոկլոե, Դեյվիդ Պրիչիպկո, «Տնտեսական մտածելակերպ», թարգմանություն անգլերենից, Գիրք երրորդ, Եր., Էդիթ Պրինտ, 2011:
41. Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Հ. Սարգսյան, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Եր., Տիգրան Մեծ, 2003:
42. «Ֆինանսներ և էկոնոմիկա», Հայաստան, N 2, 2001:
43. Аткинсон Э., Стиглиц Дж., Лекции по экономической теории государственного сектора, М., 1995.
44. “Государство в меняющемся мире. Отчет о мировом развитии”, Всемирный Банк, М., Прайм-ТАСС, 1997.
45. “Известия”, 24 мая, 2000.
46. Курс экономической теории. Учебник под общей редакцией проф. Чепурина М. Н., Киселевой Е. А., Киров, “АСА”, 2001.
47. Курс экономической теории, Учебник, 5–е исправленное, дополненное и переработанное издание, Киров, “АСА”, 2005.
48. Мишкин. Ф., Экономическая теория денег, банковского дела и финансовых рынков, М., 1996.
49. Сокращение роли государства, UNDP, июль, 1997.
50. Статистический ежегодник южно–кавказских стран: Армения, Азербайджан, Грузия, 2000, ст. 396–399. Статистический ежегодник южно–кавказских стран: Армения, Азербайджан, Грузия.
51. Смит А., Исследование о природе и причинах богатства народов/А. Смит; [пер. с англ.; предисл. В. С. Афанасьева], М., Эксмо, 2007, с. 960 (Антология экономической мысли).
52. Ходжабекян В., Республика Армения: Формирование рыночных отношений и роль государства. “Проблемы теории и практики управления”, 1, 2000.
53. Человеческое развитие: новое измерение социально–экономического прогресса, Учебное пособие под редакцией проф. В. П. Колосева (экономический факультет МГУ) и Т. Маккинли (ПТООН, Нью–Йорк), М., Права человека, 2000.
54. <http://www.worldbank.org/html/prddr/trans/june1998/Kolodko.htm>.  
<http://data.worldbank.org>.  
 Oxford Analitica Brief. September 18, 2001.  
 Privatization of Public Sector Activities. with a special focus on telecommunications, energy, health and community services. Unated Nations, New York, 1999.  
 “Republic of Armenia: Interim poverty reduction strategy paper”. Yerevan, March 2001.  
 Tacis, Изд.–во “САДА”, 2002.  
 Transition–. <http://www.worldbank.org/html/prddr/trans/june1998/Kolodko.htm>.  
 World Development Report, 1998/1999. The 1998 World Report.  
 World Development indicators 2013, WB.  
 World Development Indicators 2014, World Bank.

# ԲԱԺԻՆ III. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ 5. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### 5.1. Անցումային շրջանը Հայաստանի Հանրապետությունում. Իրողություններ և մարտահրավերներ

Քաղաքական անկայության ձեռքբերումից ի վեր ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան համակարգային վերափոխումների, և այսօր ակներև են հետևյալ իրողությունները.

- հաստատվել է տնտեսական ինքնիշխանություն (շրջանառության մեջ է ազգային դրամը, գործառնում են սեփական հարկային և արտաքին առևտուրը կարգավորող համակարգերը),
- մասնավորեցվել ու ապապետականացվել է պետական սեփականությունը ավելի քան երեք քառորդի չափով, որն անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծել տնտեսության արդյունավետ գործունեության համար,
- շարունակվում է անդամակցությունը միջազգային կառույցներին և խորացվում է տնտեսության ինտեգրումը արտերկրների հետ,
- շարունակվում է տնտեսվարող սուբյեկտներում շուկայական կարգապահության հաստատումը այն հաշվով, որ արտադրողականության բարձրացումն ու մրցունակությունը աստիճանաբար վերաճեն առաջընթացի երաշխիքի:

Եթե պայմանականորեն վերացարկվենք նախկին տնտեսական կապերի համընդգրկուն խզման, պատերազմի, տևական շրջափակման գործոններից (որոնց միաժամանակյա ազդեցությունների բեռից զերծ են մնացել, գրեթե առանց բացառությունների, բոլոր անցումային երկրները), կարող ենք հաստատել, որ սոցիալ-տնտեսական վերափոխումների ինդիկատորները, զարգացման նշաձողը մեր երկրում առավել զգայուն են այնպիսի հարցադրումների առումով, ինչպիսիք են.

- Որքանով է մեծացել ապրանքարտադրողի ու ծառայությունների մատուցողի տնտեսական ինքնուրույնությունը և դրանով պայմանավորված՝ տնտեսական արդյունավետությունը:
- Տնտեսության կառուցվածքային փոփոխությունները արդյոք հանգեցրել են այնպիսի մակրոարդյունքների, որոնց միջոցով, ի վերջո, բնութագրվում է բարեփոխումների սոցիալական գինը:

Անցումային տնտեսությունները տնտեսական օրենքների իմացությամբ ու գործադրմամբ հավասարապես մերժելի են դարձնում այդ ծայրահեղ դրսևորումները՝ կատարելապես ազատ շուկա, կենտրոնացված պլանավորում: Տնտեսական օպտիմումի որոշումը այս բևեռների միջակայքում տնտեսագիտական լուրջ հիմնախնդիր է<sup>1</sup>:


«Տնտեսական իրողությունների շրջանակներում շատ կարևոր է սոցիալական ոլորտում եկամուտների ու ծախսերի համադրումը: «Տնտեսությունում երկարաժամկետ զարգացման համընդգրկուն ծրագրերի բացակայությունը, դրանց անհաշվեկշռվածությունը, մրցակցության պակասը, արտաձին ազդակները, հանրային բարիքների արտադրությունն այնպիսի պայմաններ են ստեղծում, որոնց հետևանքով տնտեսության արդյունավետությունը նվազող դիրքերում է հայտնվում, և դրա հաղթահարումը պահանջում է կողմնորոշող պետական կարգավորում: Վերջինիս միջոցով միայն գոյություն ունեցող կառուցվածքային, տեխնոլոգիական ձևափոխությունները կարող են հանգեցնել ճյուղային նոր համալիրների ձևավորման, գործոնային ազդեցությամբ պայմանավորված աշխատանքի արտադրողականության բարձրացման և դեպի արտաքին շուկա կողմնորոշման լուրջ տեղաշարժերի:

«Տնտեսությունը բնութագրվում է արտադրողականության և մրցունակության հայտանիշներով որոշարկված ոչ օպտիմալ կառուցվածքով: Կարող ենք արձանագրել, որ առանձին դեպքերում արտադրողականությունը մեկ և ավելի անգամ զիջում է զարգացած անցումային երկրների համապատասխան ցուցանիշներին [21]: Մրցունակության ցածր մակարդակի բնորոշիչներ են հանդիսանում տնտեսության իրական հատվածում, հատկապես գյուղատնտեսության, առանձին ծառայությունների, ինչպես նաև ընդհանուր արտահանման ծավալի և դրա կառուցվածքի բնութագրերը (հավելված 1):

Երկու տասնամյակի կտրվածքով «Տնտեսության ճյուղային կառուցվածքը բերված է ստորև.

<sup>1</sup> Տնտեսագիտությունը դեռևս չունի պետության կողմից համախառն ներքին արդյունքի վերաբաշխման լավագույն չափի վերաբերյալ ընդհանրական, հստակ երաշխավորություններ: Քաղաքական իշխանության կողմնորոշումները այս հարցում վճռորոշ են: Օրինակ՝ Շվեդիայում, Դանիայում և մի շարք այլ երկրներում վերաբաշխվում է ստեղծված արդյունքի կեսից ավելին: Մեր կարծիքով՝ Հայաստանում պետական ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ չպետք է ցածր լինեն 30–40%-ից: Անցման ներկա փուլում պետության կամովին ձերբազատումը կարգավորման և վերաբաշխման անհրաժեշտությունն ունեցող կուտակված խնդիրներից չի կարող հիմնավոր համարվել:





Գծանկար 5.1 ՀՀ տնտեսության ձյուղային կառուցվածքը 1990–2013 թթ., %

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվար-մարտին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 12; Հայաստանի ազգային հաշիվներ 2013, Եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 37; Հայաստանի ազգային հաշիվներ 2011, Եր., ՀՀ ԱՎԾ, 2011, էջ 35; Հայաստանի ազգային հաշիվներ 2007, ՀՀ ԱՎԾ, 2007, էջ 36; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001, Եր., ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 201–206; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004, Եր., ՀՀ ԱՎԾ, 2004, էջ 221–233; Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006, ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 226–228; Հայաստանի վիճակագրական տարեգիրք: Վիճակագր. Ժողով, Եր., «Զանգակ-97», 1998, էջ 120:

Մեր գնահատումներով, ներկայումս խիստ անբարենպաստ կառուցվածքով հանդերձ, վերջին տարիների (մինչև 2009 թ.) աննախադեպ տնտեսական աճի տեմպերը թույլ տվեցին Հայաստանին դուրս գալ ՀՆԱ-ի համեմատաբար բարձր ցուցանիշի: Սակայն ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, մասնավորաբար 1998–1999 թթ. գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը, ՀՀ տնտեսությունը չափազանց զգայուն էր արտաքին ու ներքին ազդեցությունների նկատմամբ և պատահական չէր նման կառուցվածքով 14,1% անկման խորությամբ անցումային երկրների շարքում երրորդ հորիզոնականում հայտնվելը՝ զիջելով միայն Լիտվային (–18,4%) և Լատվիային (–16,0%) [39]: 2008 թ. վերջին եռամսյակից սկզբնավորված և մեկուկես տարի տևած ճգնաժամի հետևանքն էր, որ 2010 թ. արդյունքներով երկիրը հետ մղվեց 2006-ի մակարդակին:

**Զարգացման առանձնահատուկ պայմանները և արտահանման գերխնդիրները:** Անցումային գործընթացները տարբեր երկրներում ունեն բազմաթիվ ընդհանուր միտումներ: Գոյություն ունեն անցումային երկրների խմբեր, որտեղ այդ թրեհներն ավելի մոտ են միմյանց: Այդպիսիք են նավթ արտահանող «փոքր» անցումային տնտեսություն վարող՝ Եվրամիությանը միացած երկրները և այլն: Հայաստանը փոքր անցումային տնտեսություն վարող երկիր է, և այդ խմբին

պատկանող երկրների օրինաչափությունները տարածվում են նաև Հայաստանի տնտեսության վրա, չնայած այն բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով (հավելված 2,3): Մեր կարծիքով՝ հենց այս առանձնահատկություններով է որոշվում ՀՀ տնտեսության իմունային դեֆիցիտը՝ ձգնաժամային իրավիճակներին դիմակայելու առումով:

Այդ առանձնահատկություններն են.

- Դեռևս պահպանվում է ներքին պահանջարկի ցածր մակարդակը, իսկ մոնետար լծակներով պահանջարկի վրա էապես ազդելու մեխանիզմներն էլ անարդյունավետ են: ՀՀ ներքին պահանջարկը զգալիորեն ձևավորվում է արտաքին աղբյուրներից, մասնավորապես՝ տրանսֆերտների հաշվին: Այս առումով Հայաստանն առանձնանում է անցումային այլ երկրներից՝ ունենալով ոչ փոքր սփյուռք, որը ձևավորվել է 19-րդ դարավերջից, կազմակերպված է և ունի ավանդույթներ: Մյուս առանձնահատկությունը բնորոշ է շատ երկրների, երբ անցումային շրջանի ընթացքում աշխատանքային միգրացիայի հաշվին ձևավորվում է «նոր» սփյուռք, իսկ այս ամենը բերում է արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող պահանջարկի բարձր մակարդակի:
- Արտաքին պահանջարկով պայմանավորված կապիտալ ու բնակչինարարության աննախադեպ աճը, որը բնորոշում է ՀՆԱ-ի աճի կախվածության բարձր աստիճանն ընդամենը մեկ ճյուղից՝ շինարարությունից:
- Հայաստանի տնտեսությունում իր պահանջարկն է գտնում արտերկրի նյութական և ֆինանսական ռեսուրսներով ձևավորված առաջարկը: Արտաքին աղբյուրներով պայմանավորված պահանջարկը բավարարվում է ներմուծման հաշվին ձևավորված առաջարկով: Ներմուծումը երեք և ավելի անգամ գերազանցում է արտահանմանը: Նման դեպքերում տնտեսության զարգացման կարևորագույն գործոն է դառնում փոխանակային կուրսը:
- Տնտեսությունում փոքր է պետական միջամտության չափը թե՛ հավաքագրվող հարկերի, թե՛ պետական ծախսերի իմաստով: Ֆինանսական միջնորդության ծավալները և որակը զիջում են անցումային երկրների ճնշող մեծամասնությանը: Այսպիսով՝ տնտեսության ֆինանսավորման և պետական, և մասնավոր ինստիտուտները համեմատաբար ցածր դերակատարում են ունենում:

Նշված և մի շարք այլ առանձնահատկություններ վկայում են, որ թե՛ ամբողջական առաջարկն ու պահանջարկը և թե՛ ֆինանսական հոսքերը Հայաստանում պայմանավորված են առանձնահատուկ արտաքին ազդակներով: Դրանք կրում են ժամանակավոր բնույթ և անկայուն են: Սակայն այդ հանգամանքը թույլ է տալիս Հայաստանի տնտեսական տարածքում տեսնել զգալի չափերի հասնող ֆինանսատնտեսական ռեսուրսների «հյուրընկալման» երևույթը, որի մնացորդային ազդեցությունն առանձին հետազոտության առարկա է:

Վերը բերված առանձնահատկությունների շարքում առանձնանում է արտահանման հիմնախնդիրը, որն ինչպես ծավալներով, այնպես էլ կառուցվածքային հատկանիշներով էական բարելավումների անհրաժեշտություն ունի:

Արտահանման ծավալներում հանքանյութի և մետաղների մասնաբաժնի ցուցանիշով Հայաստանն ամենաբարձր դիրքերում է (2007 թ. զիջում է միայն Մոնղոլիային): Իրավիճակը խիստ փխրուն է դարձնում այս կտրվածքով արտահանման ընդլայնման հնարավորությունը՝ նկատի ունենալով համաշխարհային շուկայում չվերամշակված հանքանյութի և մետաղների գների հնարավոր փոփոխությունները:

Արտահանման առաջանցիկ աճի հնարավորությունները կարելի է տեսնել նաև ստորև բերված աղյուսակ 5-ում: Գյուղատնտեսական արտադրանքի, պատրաստի սննդամթերքի և շինանյութերի արտադրությունները աճի մեծ ներուժ են պարունակում:

**Աղյուսակ 5.1. Արտահանման տեսակարար կշիռը համապատասխան ճյուղերի համախառն թողարկման մեջ 2006–2013 թթ.**

Արտադրանքի տեսակը	2006	2007	2008	2009	2010	2013
Գյուղատնտեսական արտադրանք	2,0	1,5	1,5	2,3	2,3	4,7
Պատրաստի սննդամթերք	19,4	22,3	20,4	5,5	17,6	28,7
Հանքահումքային արտադրանք	50,1	51,8	50,1	57,0	71,0	76,4
Շինանյութ	12,5	18,0	9,0	12,6	12,1	11,9
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	97,9	97,5	85,7	79,7	87,8	94,6

Աղբյուրը՝ Republic of Armenia–Poverty Reduction Strategy Paper–Progress Report [19]  
IMF Country Report N° 11/191, July 2011 [15, էջ 258–260]

Դեռևս գոյություն չունի բարձր տեխնոլոգիաների ոլորտը ներկայացնող միասնական մեթոդիկա [85]:

Ընդունվում է, որ բարձր տեխնոլոգիաների ոլորտը տարբերակվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և սպառողական էլեկտրոնիկայի արտադրանքի թողարկմամբ: Այս մոտեցումն ունենալով մի շարք սահմանափակումներ՝ այդուհանդերձ թույլ է տալիս մոտավոր պատկերացում կազմել ՀՀ բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասին<sup>1</sup>:

ՀՀ արտաքին առևտրի հաշվեկշիռը տեղեկատվական տեխնոլոգիաների և սպառողական էլեկտրոնիկայի գծով 2005–2010 թթ. բացասական է: Ավելին՝ բարձր տեխնոլոգիաների ներմուծումն ավելի քան քսան անգամ գերազանցում է արտահանմանը, իսկ բաժինը ընդհանուր արտահանման մեջ չի գերազանցում 1%-ը: Սա այն դեպքում, երբ բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը տնտեսության գերակա ուղղություններից մեկն է:

<sup>1</sup> Հստ Միջազգային առևտրի վիճակագրության՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և սպառողական էլեկտրոնիկայի ոլորտի մեջ մտնում են հետևյալ ապրանքախմբերը՝ համակարգչային տեխնիկա, տվյալների մշակման ավտոմատացված սարքավորումներ և հեռահաղորդակցման սարքեր ու ապարատներ և այլն [87]:

Աղյուսակ 5.2. Արտահանման հակվածությունը ՀՀ-ում և սահմանակից հարևան երկրներում

Երկիրը	Արտահանման հակվածությունը, %				ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով՝ ըստ գնողունակության համարժեքության, \$	
	1998	2008	2010	2012	2010	2012
Հայաստան	19,6	9,1	11,2	16,8	5,800	6,860
Ադրբեջան	5,7	69,5	76,3	71,2	11,000	9,310
Վրաստան	3,9	28,7	23,7	23,3	4,800	5,790
Թուրքիա	21,1	23,9	28,1	39,2	12,300	18,390
Իրան	3,7	32,2	60,5	61,4	11,200	–

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2001 թվականին, եր., ՀՀ ԱՎԾ, 2002, էջ 13: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը 2009 թ. հունվար-դեկտեմբերին, եր., ՀՀ ԱՎԾ, 2010, էջ 123: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը 2010 թ. հունվար-դեկտեմբերին, եր., ՀՀ ԱՎԾ, 2011, էջ 125: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը 2013 թ. հունվար-դեկտեմբերին, եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 120: International Trade Statistics, Trade Performance Index (14 sectors) <http://intracen.org/menus/countries.htm>

ՀՀ արտահանման միջին հակվածության մակարդակը սոսկ ձևավորված շուկային կառուցվածքի հետևանք չէ: Ի վերջո՝ հավելյալ տնտեսական աճի պայմաններ պետք է ստեղծվեն ավանդաբար արտահանելի հատվածը ներկայացնող հանքահումքային, վերամշակող, գյուղատնտեսական արտադրությունների, այդ թվում՝ խոշորամասշտաբ ջերմոցային տնտեսությունների, ֆինանսական, ծրագրավորման ծառայությունների ու այլ ոլորտներում՝ նկատի ունենալով, որ համաձայն Բալասա-Սամուելսոնի տեսության՝ արտադրողականության միջազգային տարբերությունները արտացոլվում են հենց արտահանելի հատվածում:

Արտաքին առևտրաշրջանառության ծավալների ավելացման ու կառուցվածքի բարելավմանն ուղղված հիմնարար լուծումները, ինստիտուցիոնալ խնդիրների հետ համատեղ պահանջում են երաշխավորությունների մշակում այնպիսի համալուծ հիմնախնդիրների շրջանակում, որոնց շարքում են՝

- ֆինանսական միջնորդման ավելացմամբ տոկոսադրույքի և փոխարժեքի լծակների արդյունավետ փոխգործակցումը այն հաշվով, որ հնարավորինս թուլացվի փոխարժեքի ազդեցությունը,
- «անհնարինության երրորդության» խնդրի լուծումը, երբ անհրաժեշտ է դառնում ընտրություն կատարել կապիտալի սահմանափակումների, փոխարժեքի կայունության և գնաճի կայունության միջև<sup>1</sup>:

<sup>1</sup> Նշված հիմնախնդիրների մատնանշումը, ներառյալ ՀՀ դրամավարկային քաղաքականությունում դրանց արտացոլումը մանրակրկիտ արծարծվել են՝ Ս. Սարգսյան, Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ, եր., Ֆենոմեն հրատարակչություն, 2008 թ. [66]:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դասերը նաև նրանում են, որ վերհանվում են տնտեսական առաջընթացի «նեղ տեղերը», որի ակնառու վկայություններից է գծանկար 5.1-ում բերված կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվությունը: Դրանով հաստատվում է միջնաժամկետ հեռանկարում ձևավորված կառուցվածքի անհեռանկարայնությունը, տնտեսության բազմատեսականացման (դիվերսիֆիկացման) հրամայականը՝ արտահանման խթանման ու խրախուսման, բարձր արտադրողականությամբ աշխատատեղերի ստեղծման միջոցով:

Տնտեսության բազմատեսակայնացումն այն նախապայմանն է, որը կապահովի արտահանելի հատվածի մեծացումը մարդկային կապիտալի հնարավորությունների, արտահանման ներուժի «հող», «ջուր» և համեմատական այլ առավելությունների բաղադրիչների առավելագույն գործադրմամբ:

ՀՀ արտահանման ներուժի բացահայտման ու ձգգրիտ գնահատման և դրա առավելագույն գործառնման պայմանների ապահովման պարագայում հնարավոր է դառնում առաջիկա 15–20 տարիների հեռանկարում կանխատեսել ներկայիս արտահանման ծավալի մինչև 10 անգամ մեծացում, որի համար կպահանջվի արտահանման միջինը 13–15% աճի տեմպ: Կանխատեսման հաշվարկի հիմքում բազմապատկման պարզ արտահայտությունն է՝ բարդ տոկոսի բանաձևի միջոցով: Համաձայն հաշվարկի՝ օրինակ, եթե ապահովվում է ցուցանիշի 6% տարեկան աճի տեմպ, ապա այն կկրկնապատկվի 12 տարի հետո<sup>1</sup>, 7%-ի դեպքում կրկնապատկումը կատարվում է 10,5 տարի անց, 8%-ի դեպքում՝ 9 տարի անց և այսպես շարունակ: Արտահանման ցուցանիշի 15% տարեկան աճի դեպքում 15 տարի անց ներկայիս արտահանման ծավալը կգերազանցվի 8 անգամ, 20 տարի անց՝ 16,5 անգամ (հավելված 4):

Այժմ փորձենք պատասխանել հետևյալ հարցադրմանը՝ արտահանումը ինչ տեմպով պետք է մեծանա, որպեսզի տրված ժամանակահատվածում կազմի ՀՆԱ-ի նախօրոք ֆիքսված մասնաբաժինը: Ի դեպ՝ այդ մասնաբաժինը կարող է դիտարկվել որպես արտահանման հակվածության նպատակային բնագիծ: Օրինակ՝ ՀՆԱ-ի տարեկան 7% աճի դեպքում, որպեսզի, դիցուք, 8 տարի հետո արտահանման հակվածությունը լինի 35%, անհրաժեշտ է ունենալ արտահանման 25% աճի տեմպ, նույն կերպ՝ 40% հակվածությունը հասանելի կլինի 27,2%-ի պարագայում: Մեկ այլ սցենարում՝ ՀՆԱ-ի 5% աճի դեպքում, 8 տարի հետո 40% արտահանման հակվածության համար կպահանջվի միջինը 24,8% արտահանման տարեկան աճ և այսպես շարունակ:

Խնդիրը, բնականաբար, այս բազմապատկման աղյուսակի թվաբանությունից անցումն է տնտեսական բազմապատկման աղյուսակին, որում գործողությունները վերաբերում են արտահանման ներուժի (աղյուսների) բացահայտմանը և արտաքին ապրանքաշրջանառությունում դրանց առավելագույն գործառնմանը:

<sup>1</sup> ՀՀ ՀՆԱ-ի միջին աճի տեմպը 1994–2001 թվականներին կազմել է տարեկան 6%:

Արտահանման ընդլայնման ու խթանման ծրագրային խնդիրների առաջադրումից զատ՝ անհրաժեշտ է ապահովել իրականացման նախադրյալները ներքոշարադրյալ միջոցառումների տեսքով.

- Արտաքին առևտրի կարգավորում, արտաքին առևտրային պայմանների բարելավում այն հաշվով, որ մեծանա արտաքին շուկաների հասանելիությունը:
- Արտահանմանը խոչընդոտող վարչարարական և տեխնիկական արգելքների վերացում: Արտաքին առևտրի ֆինանսավորման և ապահովագրման համակարգի ձևավորում:
- Արտահանումը սպասարկող ենթակառուցյունների աշխատանքի ձևավորում, արտերկրում ՀՀ առևտրային ներկայացուցչության համակարգի ձևավորում:
- Հետմասնավորեցման խնդիրների լուծում՝ կապված պրոֆեսիոնալ կորպորատիվ կառավարման, կառավարիչների ներգրավման և անձնակազմի վերապատրաստման հետ:

Նկատենք, որ արտահանման խթանման մի շարք միջոցառումներ ամրագրված են Զարգացման հայկական գործակալության, Առևտրաարդյունաբերական պալատի և այլ կառույցների գործառնություններում (արտաքին շուկաների ուսումնասիրություն, առևտրային պայմանագրերի նախագծերի մշակում, տեղեկատվական և գովազդային ծառայությունների տրամադրում, էլեկտրոնային առևտրի հայտերի կազմում, միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների, գործարար համաժողովների կազմակերպում և այլն): Խնդիրը թվարկված աշխատանքների արդյունավետության բարձրացումն է, որի իրագործման վերջնանպատակը բարենպաստ մթնոլորտի ստեղծումն է բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար՝ անկախ սեփականության ձևից և գործունեության ոլորտից, իսկ միակ պայմանը արտահանման ուղղվածությունն ունեցող արտադրությունների ու ծառայությունների առկայությունն է:

Գլոբալացման համատեքստում տնտեսությունների ինտեգրման արդի գործընթացներն ուղեկցվում են ապրանքների, մարդկանց, կապիտալի և տեղեկատվական հոսքերի ինտենսիվ տեղաշարժերով: Այդ ընթացքում աստիճանաբար վերացվում են հնարավոր այդ տեղաշարժերի արգելքներն, ու իրավասությունների կամովին ենթաստորադասելու միջոցով, սահմանափակելով տնտեսական ինքնուրույնությունը, կառավարման ու կարգավորման որոշ իրավասություններ տրամադրվում են վերազգային կառույցներին՝ ԱՄՀ, ՀԲ, ԱՀԿ, ՏՀԶԿ և այլն, ինչպես նաև մասնավոր կապիտալով ստեղծված վերազգային կորպորացիաներին: Արդյունավետ մասնակցությունը գլոբալացման գործընթացներին կանխորոշում է նաև երկրի տնտեսական զարգացման սցենարների ընտրությունը՝ ինչպիսի համակցություններով ինտեգրվել ԵՄ-ին և նրանից դուրս գտնվող ՌԴ-ի և Իրանի հետ: Մյուս հնարավորությունը պայմանավորվում է վերազգային կորպորացիաների՝ ՀՀ ներթափանցման համար պայմանների ստեղծմամբ:

**Տնտեսության կառուցվածքային վերափոխումները որպես գերակա մարտահրավեր:** Նախանշված գերխնդիրը մրցունակ տնտեսություն ունենալն է աշխատանքի արտադրողականության բարձրացման ու տնտեսության ար-

տահանելի հատվածի մեծացման հենքի վրա, որն ի վերջո հասանելի է դառնում կառուցվածքային քաղաքականության իրագործմամբ՝ միտված լինելով խթանելու ամբողջական առաջարկը: Առավել լայն իմաստով՝ կառուցվածքային քաղաքականությունը երկրի կառավարության կողմից իրականացվող արտադրատնտեսական, ճյուղային, տարածքային, ինչպես նաև եկամուտների ու ծախսերի, սպառման ու կուտակման, ներմուծման ու արտահանման կառուցվածքների ու համամասնությունների վերափոխմանը նպատակաուղղված քաղաքականություն է: Կառուցվածքի վերափոխումային քաղաքականությունն իրականացվում է սեփականատիրական հարաբերությունների փոխակերպման, արտադրական գործոնների շուկաների համակարգաստեղծման, ինովացիայի խթանմանն ուղղված կառուցակարգերի գործադրման, տարածքային զարգացման անհամաչափությունների համահարթեցման և այլ ուղիներով:

Կառուցվածքի վերափոխումային քաղաքականությունն առանձնակի դրսևորում է ունենում թվարկված բոլոր ուղղություններում ինչպես ներազդման կառուցակարգերի, այնպես էլ կիրառվող գործիքակազմի ընտրության առումներով: Այսպես, օրինակ՝ ակտիվ արդյունաբերություն ունենալու քաղաքականության իրագործումը կարող է խթանվել ու արագացվել ազգային տնտեսության մրցակցային բացարձակ և համեմատական առավելությունների հաշվառմամբ ու գործադրմամբ, մինչդեռ տարածքային անհամաչափությունների համահարթեցումը ենթադրում է արտադրողական ուժերի ապատեղաբաշխման վարչատնտեսական միջոցների գործադրում այն հաշվով, որ կապիտալի հոսքը չդադարի համեմատաբար նվազ գրավչություն ունեցող տարածքներ:

Նկատենք, որ արտադրության արդյունավետության բարձրացմանը միտված, շուկայական չափանիշներով գնահատված կառուցվածքային վերափոխումները կարող են չհամընկնել հանրային շահերի չափանիշներով կազմորոշված արդյունավետության հետ՝ տնտեսական անվտանգության, էկոլոգիապես մաքուր տնտեսության ձգտման, զբաղվածության մակարդակի բարձրացման ու սոցիալական կայունության ապահովման առումներով:

Անցումը տնտեսության գոյություն ունեցող կառուցվածքից, որը գործում էր հարաբերականորեն էժան աշխատուժի և քիչ ներդրումների գործադրմամբ, առավել ցանկալի կառուցվածքին՝ բարդ և բազմաֆունկցիոնալ գործընթաց է, որի իրագործման ընթացքը (ալգորիթմը) պարունակում է հետևյալ երկու եզրային դեպքերը.

- բնականոն ընթացք, երբ նվազագույն պետական միջամտությամբ աստիճանաբար ձևավորվում է բարձրարդյունավետ տնտեսություն՝ կատարյալ մրցակցային շուկայական մոդելին բնորոշ պայմանների բավարարումով,
- նախահարձակ ընթացք, ակտիվ պետական միջամտության գործիքակազմի գործադրմամբ՝ ձևակերպված ցանկալի մրցունակ կառուցվածքը (թե ինչպես է այն որոշվում՝ ինքնուրույն խնդիր է) ուղղորդելու, հասանելի դարձնելու պայմանների ապահովումով:

Կառուցվածքափոխակերպման ալգորիթմը, իհարկե, պարունակում է նշված եզրային դեպքերով ներփակված միջանկյալ տարբերակներ, որոնցում բնականոն-իներցիոն ընթացքը զուգորդվում է ակտիվ պետական միջամտության մոտեցումներով:

Հայաստանում անկախացումը սկզբնավորվեց տնտեսությունում արմատական ազատականացման դրսևորումներով, որոնց պետական միջամտությունն էապես սահմանափակվում էր շուկայական ինստիտուտների ներդրմամբ: Երբ կառուցվածքային տեղաշարժերի հիմնախնդիրը քննության է առնվում ճյուղային կառուցվածքի օրինակով, ապա ակներև է դառնում, որ ցանկալի ճյուղային կառուցվածքի հիմնախնդրի որոշարկման համար կպահանջվի առաջադրել լուծումներ հետևյալ հիմնահարցերի վերաբերյալ.

- Ո՞րն է կառուցվածքային տեղաշարժերի տեսանելի հորիզոնը, ինչպիսին է դրա փոփոխությունը, բնութագրիչ տարրերի հարաբերակցությունը, որոնք են կառուցվածքային տարրերի, օրինակ՝ գյուղատնտեսության, արդյունաբերության, ծառայությունների կամ դրանց առանձին ենթաճյուղերի թողարկման ծավալների ստորին և վերին շեմային սահմանափակումները և այլն:
- Ի՞նչ հայտանիշով կամ հայտանիշների համախմբով է ներկայացվում առավել ցանկալի կառուցվածքը (արտադրողականություն, մրցունակություն և այլն):
- Որո՞նք են ներազդման գործիքներն ու գործառնման կառուցակարգերը ցանկալի մրցունակ, արդյունավետ կառուցվածքին հասնելու համար, մասնավորապես՝ տնտեսության ապամենաշնորհայնացմանն ուղղված միջոցների գործադրումը, արտահանման խթանումը և այլն:

Արդյունավետ ճյուղային կառուցվածքի ձևավորման գործընթացը կարող է ուղղորդվել թվարկված հիմնահարցերի համակցություններով ամբողջացող արդյունավետ կառավարմամբ (հավելված 5, 6):

Հիմնախնդրի հետազոտման միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տվել բացահայտել տնտեսությունների ճյուղային կառուցվածքների փոփոխությունների թրենդները՝ կիրառելով հաստատուն շուկայական մասնաբաժինների (CMS) վերլուծություն, գնահատվել է տարբեր տարածաշրջանների տնտեսությունների կառուցվածքների փոփոխությունների ազդեցության չափը համաշխարհային տնտեսության վրա: Օգտագործելով UNIDO INDSTAT 2, 2009 տվյալների բազան՝ 1970–2008 թթ. համար կատարվել է 30 զարգացող և զարգացած երկրների արդյունաբերությունների կառուցվածքային փոփոխությունների ինտենսիվության և համակենտրոնացման վերլուծություն, որի արդյունքում ցույց է տրվել, որ նախորդ տասնամյակում նվազել է ծառայությունների ոլորտում ստեղծված արդյունքի մասնաբաժինը, որը երկարաժամկետ հատվածում աճում էր, Հյուսիսային Ամերիկայում և Ասիայում ստեղծված արդյունքի մասնաբաժինները ևս նվազել են՝ ի հաշիվ մյուս տարածաշրջանների: 1980–ականների դադարից հետո կառուցվածքային տեղաշարժերը նորից սկսել են ակտիվանալ<sup>1</sup>: Հետազոտողների կողմից տնտեսական աճի տեմպերի վրա կառուցվածքային տեղաշարժերի ազդեցությունը գնահատելու համար կիրառվել է Ֆինգեր–Կրեյնի տարբերակվածության ինդեքսը [74]:


<sup>1</sup> Հետազոտությունը կատարված է Օ. Մանդոլիչի և Լ. Իպպադրեի կողմից UNIDO «Համաշխարհային տնտեսության կառուցվածքային փոփոխությունները» գիտահետազոտական նախագծի շրջանակներում [80]:



Երկրների տնտեսություններում կառուցվածքային տեղաշարժերը ի վերջո հանգեցնում են դրանց մրցունակության հայտանիշով որոշարկվող արդյունավետության այս կամ այն մակարդակին:

Մինչձգնաժամային փուլի Հայաստանի մասով տնտեսական հետազոտությունները վկայում են, որ հավելյալ տնտեսական աճի հիմնական արգելքներից մեկը ազատ մրցակցության պաշտպանության անկատար համակարգն է [81]: Միջազգային փորձի վրա հենվելով՝ ԿԶԾ-ում շարադրված են «երկրորդ» սերնդի բարեփոխումների հիմնական ուղղությունները՝ միտված մենաշնորհների կարգավորման բազմատարր, բարդ գործընթացներին, մրցակցության հավասար պայմանների ապահովմանը, որոնք դեռևս խնդրահարույց են [48]: Յուրօրինակ նէպը, եթե մեկնենք այլ վերտառությամբ՝ наведение элементарного порядка, այն կարևորագույն ազդակն է, որը կստեղծի մրցունակ, բարեխիղճ գործարար միջավայր, կապահովի ֆինանսատնտեսական կարգապահությունը և կխթանի ներդրումային գործընթացը:

Երկրների մրցունակության չափման առավել գործածական բնութագրիչը մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀԶ) ներկայացված ցուցիչն է [84]: Հայաստանի համեմատական դիրքը զարգացման I-ից II փուլ անցման ենթախմբում բերված է ստորև.



Գծանկար 5.2. ՀՀ տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվությունը

Համաշխարհային մրցունակության ցուցիչը (ՀԱՄ ցուցիչ) հաշվարկվում է ավելի քան 110 գործոններով, որոնք 12 հենաայուններով բնութագրում են մակրոտնտեսական կայունությունը, մարդկային զարգացումը, բիզնես միջավայրը, նորարարությունները և այլն: Ըստ ՄՀԶ-ի՝ տնտեսական զարգացումը ներկայացվում է փուլերի հետևյալ հաջորդականությամբ.

1. Ռեսուրսակախված տնտեսություն, մեկ շնչի հաշվով մինչև 2000 դոլար ՀՆԱ, արտահանման ռեսուրսաինտենսիվություն.

2. Արդյունավետության վրա հիմնված տնտեսություն, մեկ շնչի հաշվով 3000–ից 9000 դոլար ՀՆԱ.
3. Նորարարությունների վրա հիմնված տնտեսություն, մեկ շնչի հաշվով 17000 դոլարը գերազանցող ՀՆԱ:

Միջփուլային անցումային ժամանակահատվածները բնութագրվում են մեկ շնչին ընկնող ՀՆԱ–ի համապատասխան մեծություններով: ՀՀ տնտեսությունը այս չափանիշերով դասվում է զարգացման 2–րդ փուլին՝ 92–րդն է 142 երկրների շարքում (աշխարհի ամենամրցունակ երկրների տասնյակն է՝ Շվեյցարիա, Սինգապուր, Շվեդիա, Ֆինլանդիա, ԱՄՆ, Գերմանիա, Նիդերլանդներ, Դանիա, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա), ՀՀ տնտեսության երկարաժամկետ զարգացման նպատակադրումներից ելնելով՝ պահանջվում է, որ ընթացիկ տասնամյակի բնագիծը լինի մուտքը զարգացման 3–րդ փուլ: Այն կպահանջի մինչև 2020 թվականը ՀՆԱ–ի միջին տարեկան 7–8% աճ՝ բնակչության շատ փոքր աճի պայմաններում (հավելված 8):

## 5.2. Հարցման որոշ արդյունքներ ՀՀ–ում

Մեր կողմից իրականացված հետազոտության<sup>1</sup> հիմնական նպատակն է հնարավորինս պարզաբանել հանրապետության, մարզերի (քաղաքների) բնակչության սոցիալ–տնտեսական զարգացման իրավիճակը, հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիների վերաբերյալ կատարել եզրակացություններ և ներկայացնել առաջարկություններ առանձին ոլորտներում տեղ գտած թերությունները ժամանակին շտկելու համար:

Հետազոտությունն անցկացվել է 2012 թ. հոկտեմբերի 30–ից դեկտեմբերի 10–ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 5 մարզերի 5 քաղաքներում (քաղաքներից 3–ը հանրապետության ամենախոշոր 3 քաղաքներն են, որոնք միաժամանակ արդյունաբերական, մշակութային և վարչական կենտրոններ են)՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Եղեգնաձորում և Տաշիրում՝ ընդգրկելով բնակչության 18–ից բարձր բոլոր տարիքային խմբերը՝ 18–30, 31–40, 41–50, 51–60, 61 և ավելի:

Հարցման մասնակիցների մեջ որոշակի (հարցաթերթիկ լրացրածների 18,4%–ը) թիվ է կազմում երիտասարդությունը (ուսանողությունը), այսինքն՝ 18–30 տարեկանները: Դա արվել է այն հիմնավորմամբ, որ մեր երկրի ապագան կերտելու են այսօրվա երիտասարդները, և նրանց կարծիքները հաշվի առնելը, նրանց հուզող կարևորագույն հիմնախնդիրներին լուծումներ տալը պետք է գերազանահատվեն: Նշված նկատառումով էլ հարցման արդյունքների վերլուծության ժամանակ շատ հաճախ այդ խումբն առանձնացվել է:

### Հարցաշարի նկարագրությունը

Հետազոտության իրականացման համար կազմվել է հարցաշար, որը բաղկացած է երկրի հասարակական–քաղաքական կյանքի գրեթե բոլոր բնագա-

<sup>1</sup> «Ձուտ սոցիոլոգիական» հետազոտությունների «նպատակն է մարդկանց դիրքորոշումների, կողմնորոշումների և պատկերացումների ուսումնասիրությունը» այս կամ այն որոշակի կարևորություն ունեցող և ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող երևույթի վերաբերյալ [56, էջ 521]:

վառները (քաղաքական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական) շոշափող չորս տասնյակից ավելի հարցերից, որոնք ուղղված են հետևյալ հիմնախնդիրների պարզաբանմանը՝

- ընդհանրական տեղեկատվություն հարցվողների անձնական նկարագրի վերաբերյալ (հարցվողի տարիքը, կրթամակարդակը, մասնագիտությունը, ազատ ժամանակի տնօրինումը և այլն),
- հարցվողների սոցիալական, ընտանեկան-կենցաղային, բարոյահոգեբանական վիճակի նկարագիրը (բնակարանի, առաջին անհրաժեշտության առարկաների գոյության, ընտանիքում վեճերի առկայության, մշակույթի և սպորտի նկատմամբ հակումների բացահայտման, առաջին անհրաժեշտության պարենային ապրանքներով բավարարվածության վերաբերյալ և այլն),
- մատակարարվող ծառայություններից օգտվելու հնարավորությունը և բավարարվածության աստիճանը որոշելը (բուժօգնությունների ծառայություններից, բնակարանում գազի առկայությունից, էլեկտրաէներգիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարումներից, տրանսպորտային ծառայություններից և այլն),
- հանրապետությունում առկա քաղաքական իրավիճակի գնահատումը ՀՀ-ում տիրող իրավիճակի բարելավման գործում որ կուսակցության դերակատարումն է կարևորվում,
- բնակչության վերաբերմունքը կառավարության վարած արտաքին քաղաքականությանը, հատկապես՝ ղարաբաղյան հիմնախնդրին, Հայաստան-Թուրքիա սահմանի բացմանը վերաբերող հարցերին,
- իշխանական կառուցվածքների և ընդդիմության, ՀՀ կառավարության առանձին ծրագրերի նկատմամբ վերաբերմունքը,
- արտաբաժնային փոփոխություններից կախված՝ բնակչության գործողությունների ուսումնասիրությունը,
- խնայբանկերում ավանդների ինդեքսավորման առավել ընդունելի մոտեցումների բացահայտումը և այլն:

Հարցման ընթացքում բաշխվել է 1300 և վերադարձվել 1139 հարցաթերթիկ: Ըստ որում՝ վերադարձված հարցաթերթիկներից 889-ը կամ 78%-ը ստացվել է Երևանի, 95-ը կամ 8,3%-ը՝ Գյումրու, 20-ը կամ 1,7%-ը՝ Եղեգնաձորի, 48-ը կամ 4,2%-ը՝ Վանաձորի, 87-ը կամ 7,6%-ը՝ Տաշիրի հարցման ենթարկվածներից: Առանձին հարցաթերթիկներ լրացված են եղել թերի, որոշ հարցերի ընդհանրապես պատասխաններ չեն տրվել: Չնայած նշված թերություններին՝ այնուհանդերձ պահպանվել է հարցման ենթարկվածների կարծիքի ինքնուրույնությունը և հետազոտության ամբողջականությունը:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված քաղաքների բնակչության թիվը ՀՀ համապատասխան մարզերի մշտական և քաղաքային բնակչության համեմատությամբ բերված է ստորև:

Հ/հ	Քաղաքները	Մշտական բնակչությունը՝ ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի հիմքով ընթացիկ հաշվարկմամբ, հազ. մարդ.	Քաղաքային մշտական բնակչությունը ըստ համապատասխան մարզերի, մարդ.	Մարզերի քաղաքային բնակչության կազմում նշված քաղաքների բաժինը, %
1	ՀՀ	3026,9	1917,5	63,3
2	Երևան	1066,3	1066,3	100,0
3	Գյումրի	121,3	146,3	82,9
4	Վանաձոր	85,7	137,21	62,5
5	Եղեգնաձոր	7,9	18,4	42,9
6	Տաշիր	7,7	137,2*	5,6
7	ԸՆԴԱՄԵՆԸ (2+3+4+5+6)	1288,9	1368,2	94,2
8	Ընդամենի բաժինը ընդհանուրի մեջ, % (7:1)	42,6	71,4	–

\* Վանաձորը և Տաշիրը մտնում են Լոռու մարզի մեջ: Կրկնահաշվարկից խուսափելու համար Լոռու մարզի բնակչությունը ընդամենի մեջ հաշվարկվել է մեկ անգամ:

Կազմվել է՝ [27]

Ինչպես երևում է բերված տվյալներից, ընտրանքում ներառված քաղաքների բնակչության թիվը կազմում է հանրապետության բնակչության թվի 42,6%–ը, համապատասխան մարզերի քաղաքային մշտական բնակչության թվաքանակի 71,4%–ը և մարզերի քաղաքային բնակչության թվի 94,2%–ը:

Հարցմանը մասնակցել են (այսուհետ՝ մասնակիցներ) արական սեռի 467 և իգական սեռի 672 ներկայացուցիչներ:

**Տվյալների վերամշակման փուլերը**

Հետազոտության տվյալների վերամշակման հիմնական փուլերն են՝

- *տվյալների մուտքագրում.* նախնական տվյալները մուտքագրվել են հատուկ կազմված աղյուսակների մեջ (յուրաքանչյուր հարցի համար՝ մեկ աղյուսակ),
- *տվյալների վերստուգում.* իրականացվել է մի քանի փուլով՝ 1) լրացված հարցաթերթիկների վիզուալ վերստուգում, 2) տվյալների թվաքանակային և տրամաբանական վերստուգում, 3) ցուցանիշների հաշվարկման արդյունքների վերստուգում,
- *տվյալների զտում:*

**Հետազոտության արդյունքների վերլուծությունը**

Այժմ մանրամասն ներկայացնենք հարցաթերթիկներում առաջ քաշված խնդիրների վերաբերյալ մասնակիցների դիրքորոշումների պարզաբանումները և վերլուծությունը:

**1. Ընդհանրական տեղեկատվություն հարցվողների անձնական նկարագրի վերաբերյալ:** Մասնակիցներից 610–ը 18–30 տարեկան են, 166–ը՝ 31–40, 154–ը՝ 41–50,


119-ը՝ 51-60, 90-ը՝ 61 և ավելի: Ընդհանուր հարցման համախմբի մեջ տարիքային խմբերի տեսակարար կշիռների մասին պատկերացում է տալիս գծանկար 5.1-ը:

Գծանկար 5.1-ի հարցմանը մասնակցել են հիմնականում բնակչության երիտասարդ զանգվածի մոտ 54%-ը: Իսկ մասնակիցների 81,7%-ը մինչև 50 տարեկան է, ինչը հատկապես առաջիկա զարգացումների վերաբերյալ կարծիք ձևավորելու համար առավել կարևոր է:

Մասնակիցների կրթական մակարդակի մասին ըստ բնակավայրերի տեղեկություն է տալիս աղյուսակ 5.3-ը, իսկ ընդհանրական պատկերը ներկայացված է գծանկար 5.2-ում:

**Աղյուսակ 5.3. Հարցման մասնակիցների կրթական մակարդակի նկարագիրը բնակավայրերում և հանրապետությունում, %**


N	Կրթությունը	Պատասխանների քանակը և տեսակարար կշիռը/(%)					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Տարրական	1 (0,1)	-	-	-	3 (3,5)	4 (0,4)
2	Միջնակարգ	156 (17,5)	17 (17,9)	4 (20)	3 (6,3)	38 (43,7)	218 (19,1)
3	Միջնակարգ-մասնագիտական	114 (12,8)	22 (23,2)	4 (20)	5 (10,4)	21 (24,1)	166 (14,6)
4	Բարձրագույն	489 (55,0)	55 (57,9)	11 (55)	33 (68,7)	25 (28,7)	613 (53,8)
5	Գիտական աստիճան, կոչում ունեցողներ	109 (12,3)	1 (1,0)	1 (5)	7 (14,6)	-	118 (10,4)




**Գծանկար 5.3. Մասնակիցների կրթական մակարդակի նկարագիրը (%)**

«Դուք աշխատո՞ւմ եք, թե՞ ոչ» հարցին պատասխանել են մասնակիցներից 1110-ը, որից 592-ը կամ պատասխանողների 53,3%-ը (այսուհետ կներկայացվեն միայն տոկոսները) պատասխանել են «այո», ընդ որում՝ աշխատողներից 494-ը Երևանից են, այսինքն՝ Երևանից հարցվածների 55,6%-ը, 27-ը՝ Գյումրիից

(28,4%), 8-ը՝ Եղեգնաձորից (40%), 27-ը՝ Վանաձորից (56,2%), 36-ը՝ Տաշիրից (41,4%): Պատասխանների արդյունքներն ըստ պատճառների ներկայացված են գծանկար 5.4-ում:



Գծանկար 5.4. Դուք աշխատում եք, թե՞ ոչ



Գծանկար 5.5. «Դուք աշխատում եք, թե՞ ոչ» հարցի պատասխանների տրոկուսային նկարագիրը առանձին բնակավայրերում և հանրապետությունում

Գծանկարից երևում է, որ մասնակիցների գրեթե կեսը՝ ընդհանուր թվի 45,5%-ը կամ հարցին պատասխանողների 46,7%-ը, աշխատանք չունի (նման բարձր ցուցանիշը կարելի է բացատրել միայն ընտրանքում ուսանողների չափից մեծ ներգրավվածությամբ):

«Դուք աշխատո՞ւմ եք Ձեր մասնագիտությամբ» հարցին պատասխանել են մասնակիցներից 1102-ը: «Այո» են պատասխանել 435-ը կամ մասնակիցների ընդհանուր թվի 38,2%-ը, 667-ը կամ մասնակիցների 58,6%-ը պատասխանել են «Ոչ», ընդ որում՝ ոմանք նշել են 1-ից ավելի պատճառներ: Հարցի պատասխանների ընդհանրական պատկերը բնակավայրերում և հանրապետությունում բերված է աղյուսակ 5.5-ում:

**Աղյուսակ 5.4.** «Դուք աշխատո՞ւմ եք Ձեր մասնագիտությամբ» հարցի քանակական նկարագիրն առանձին բնակավայրերում և հանրապետությունում, %

Քաղաքները	Պատասխանների քանակը և տեսակարար կշիռը (%)						
	Այո	Ոչ					
		ուսանող լինելը	աշխատանք չլինելը	ցածր աշխատավարձը	այլ պատճառ	ոչ մի պատճառ	ընդամենը
1	2	3	4	5	6	7	8
Երևան	364 (44,0)	259 (29,1)	106 (11,9)	29 (3,3)	62 (7,0)	45 (5,1)	501 (56,3)
Գյումրի	18 (18,9)	36 (37,9)	11 (11,6)	1 (1,1)	22 (23,2)	7 (7,4)	77 (81,1)
Եղեգնաձոր	4 (20)	1 (5,0)	8 (40,0)	1 (5,0)	6 (30)	-	16 (80)
Վանաձոր	22 (45,8)	11 (22,9)	8 (16,7)	1 (2,1)	-	3 (6,2)	23 (48)
Տաշիր	27 (31,0)	1 (1,1)	32 (36,8)	1 (1,1)	11 (12,6)	13 (14,9)	58 (66)
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>435 (38,2)</b>	<b>261 (23,0)</b>	<b>165 (14,5)</b>	<b>33 (2,9)</b>	<b>101 (8,9)</b>	<b>68 (6,0)</b>	<b>675 (59,3)</b>

Վերը նշված աղյուսակում նշված պատճառներից որպես այլ պատճառներ շեշտվել են ընտանեկան վիճակը, աշխատանքային շուկայում իրենց մասնագիտության նկատմամբ պահանջարկ չլինելը, ծանոթ չունենալը, դեռ մասնագետ չլինելը և այլն:

Հարցման արդյունքներից երևում է, որ մասնակիցների զգալի մասը՝ հարցին պատասխանողների 60,5%-ը, իր մասնագիտությամբ չի աշխատում:

«Ձեր ընտանիքում կա՞ն անդամներ, ովքեր ցանկանում են աշխատել, բայց չեն աշխատում» հարցին պատասխանել են մասնակիցներից 1099-ը, ընդ որում՝ «այո» են պատասխանել 568-ը՝ պատասխանողների 51,7%-ը կամ մասնակիցներ

րի ընդհանուր թվի 49,9%-ը, ընդ որում՝ ոմանք նշել են 1-ից ավելի պատճառներ: «Այո» պատասխանողները որպես չաշխատելու պատճառ նշել են.

1. աշխատատեղերի բացակայությունը՝ 271 հոգի (23,8%),
2. ցանկության բացակայությունը՝ 17 հոգի (1,5%),
3. ցածր աշխատավարձը՝ 82 հոգի (7,2%),
4. աշխատաշուկայում տվյալ մասնագիտության պահանջարկ չլինելը՝ 46 հոգի (4,0%),
5. երեխաներ են խնամում՝ 36 հոգի (3,2%),
6. ոչ մի պատճառ չեն նշել՝ 28 հոգի (2,5%),
7. թոշակառու են՝ 36 հոգի (3,2%),
8. այլ՝ 72 հոգի (6,3%):

«Ոչ» պատասխանել են 531-ը, այսինքն՝ հարցին պատասխանածների 48,3%-ը: Կարելի է եզրակացնել, որ աշխատելու ցանկություն ունեցող, բայց չաշխատողների թիվը գերազանցում է աշխատանք ունեցողների կամ աշխատելու ցանկություն չունեցողների թվին:

**«Ձեր ընտանիքում կան մինչև 16 տարեկան երեխաներ, որոնք սովորում են հանրակրթական դպրոցում»** հարցին «այո» են պատասխանել մասնակիցներից 367-ը, իսկ «ոչ»՝ 743-ը, ընդ որում՝ «ոչ» պատասխանողները հիմնականում որպես պատճառ նշել են այդ տարիքի երեխաներ չունենալը: Հարցման արդյունքներն ըստ շրջանների բերված են աղյուսակ 5.5-ում:

**Աղյուսակ 5.5.** Հանրակրթական դպրոցներում սովորող երեխաների առկայության քանակական նկարագիրն առանձին քնակավայրերում և հանրապետությունում

Քաղաքները	Պատասխանները՝ ըստ քանակի և %-ի	
	Այո	Ոչ
Երևան	280 (31,5)	582 (65,5)
Գյումրի	43 (45,3)	52 (54,7)
Եղեգնաձոր	8 (40)	12 (60)
Վանաձոր	13 (27,1)	34 (70,8)
Տաշիր	23 (26,4)	63 (72,4)
Ընդամենը	367 (32,2)	743 (65,2)




Աղյուսակից երևում է, որ բոլոր քաղաքներում հանրակրթական դպրոցում սովորող չունեցողների թիվը զգալիորեն գերազանցում է ունեցողների թվին:

«Ձեր ընտանիքում կան 17–25 տարեկաններ, որոնք սովորում են տեղի միջնակարգ–մասնագիտական հաստատություններում» հարցն ակնկալում է 2 պատասխան՝ «այո» և «ոչ», ընդ որում՝ «ոչ»-ի դեպքում առաջարկվում է նշել պատճառները, որի համար նախատեսված են 5 տարբերակներ՝

1. ուսումնական հաստատության բացակայությունը,
2. ուսման վարձը,
3. ցանկալի մասնագիտության բացակայությունը,
4. տրանսպորտային միջոցների բացակայությունը,
5. այլ պատճառներ:

Այս հարցին պատասխանել են մասնակիցներից 1026–ը: Հարցման արդյունքներն առավել տեսանելի են դառնում գծանկար 5.6–ից:




Գծանկար 5.6. Տեղի միջնակարգ–մասնագիտական հաստատություններում 17–25 տարեկան սովորողների առկայության քանակական նկարագիրը՝ ըստ նշված պատճառների

Գծանկարից պարզ երևում է, որ մասնագիտական հաստատություններում սովորողների թիվը զգալիորեն քիչ է: Ընդ որում՝ միջնակարգ-մասնագիտական հաստատություններում սովորողներ ունեցող ընտանիքների թիվը երևանում հարցվածների թվի 23,5%-ն է, Գյումրիում՝ 30,5%-ը, Եղեգնաձորում՝ 30%-ը, Վանաձորում՝ 16,7%-ը և Տաշիրում՝ 6,9%-ը:

Հարցաշարի հաջորդ հարցը նույնպես վերաբերում է ընտանիքներում կրթության համակարգում սովորողների առկայությանը: Հարցը հետևյալն է.

**«Ձեր ընտանիքում կա՞ն 17-25 տարեկաններ, ովքեր սովորում են տեղի բարձրագույն ուսումնական հաստատություններում»:**

Այս հարցը նույնպես «ոչ» պատասխանի դեպքում ակնկալում է բացատրություն: Այդ տարբերակները և դրանց համապատասխան պատասխանների ընդհանուր քանակական նկարագիրը բերված է գծանկար 5.7-ում: Ընդ որում՝ «ոչ» պատասխանողներից 24-ը չեն նշել ոչ մի պատճառ:



Գծանկար 5.7. Տեղի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների առկայության քանակական նկարագիրը՝ ըստ պատճառների

**Աղյուսակ 5.6.** *Տեղի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների առկայության քանակական և տոկոսային նկարագիրը՝ ըստ բնակավայրերի և հանրապետությունում (%)*

Քաղաքները	Պատասխանները (%)							
	Այո	Ոչ						
		ուսումնական հաստատության բացակայությունը	ուսման վարձը	ուսման որակը չբավարարելը	ցանկալի մասնագիտության բացակայությունը	տրանսպորտային միջոցների բացակայությունը	այլ տարբերակ	ընդամենը
Երևան	388 (43,6)	16 (1,8)	27 (3,0)	4 (0,4)	13 (1,5)	9 (1,0)	371 (41,7)	440 (22,8)
Գյումրի	80 (84,2)	2 (2,1)	-	-	-	1 (1,1)	12 (12,6)	15 (34,4)
Եղեգնաձոր	13 (65)	2 (10)	-	-	1 (5)	-	4 (20)	7 (23,4)
Վանաձոր	19 (39,6)	1 (2,1)	1 (2,1)	1 (2,1)	-	-	21 (43,8)	24 (44,6)
Տաշիր	11 (12,6)	7 (8,0)	2 (2,3)	1 (1,1)	7 (8,0)	1 (1,1)	43 (49,4)	61 (25,9)
<b>Ընդամենը</b>	<b>511 (44,9)</b>	<b>28 (2,5)</b>	<b>30 (2,6)</b>	<b>6 (1,2)</b>	<b>21 (1,9)</b>	<b>11 (1,0)</b>	<b>451 (39,6)</b>	<b>547 (48,0)</b>

Քանի որ հարցմանը մասնակցել է հիմնականում ուսանողները և նրանց ընտանիքի անդամները, ապա բնական է, որ բուհերում սովորողների թիվը մասնակիցների ընդհանուր թվում մեծամասնություն է կազմել: «Ոչ» պատասխանողները հիմնականում այդ տարիքի երեխաներ չունեն, իսկ որպես բուհում չսովորելու պատճառ հարցվածները հիմնականում նշել են **ուսումնական հաստատության բացակայությունը և ուսման վարձը**: Երևանում ուսման վարձը բուհում չսովորելու ամենակարևոր պատճառն է:

Հարցաշարի հաջորդ հարցը նպատակ ունի պարզելու, թե աշխատանքից հետո հարցվածները ինչպես են տնօրինում իրենց ազատ ժամանակը:

«Դուք ինչպես եք անցկացնում աշխատանքից հետո Ձեր ազատ ժամանակը» հարցը առաջարկում է 10 տարբերակ: Ըստ տրված տարբերակների՝ պատասխանների տեղաբաշխումը ներկայացված է աղյուսակ 5.7-ում:


**Աղյուսակ 5.7. Ազգայ ժամանակի փնտրիչները՝ համաձայն նշված տարրերակների, %**

N	Տարրերակները	Պատասխանների քանակը (%)					Ընդամենը (%)
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Կրթությունս շարունակելու եմ	141 (15,9)	9 (9,5)	1 (5,0)	12 (25)	3 (3,4)	166 (14,6)
2	Զբաղվում եմ տնային տնտեսությամբ	178 (20,0)	23 (24,2)	8 (40)	7 (14,6)	38 (43,7)	254 (22,3)
3	Աշխատում եմ տնամերձ հողամասում	66 (7,4)	10 (10,5)	4 (20)	3 (6,3)	20 (23,0)	103 (9,0)
4	Զբաղվում եմ սիրած արվեստով	58 (6,5)	1 (1,1)	1 (5,0)	3 (6,3)	4 (4,6)	67 (5,9)
5	Զբաղվում եմ որևէ սպորտաձևով	54 (6,1)	2 (2,1)	-	2 (4,2)	2 (2,3)	60 (5,3)
6	Դիտում եմ հեռուստահաղորդումներ	116 (13,0)	16 (16,8)	2 (10)	7 (14,6)	13 (15,0)	154 (13,5)
7	Ժամանակս անցկացնում եմ ընտանիքիս անդամների հետ	198 (22,3)	23 (24,2)	3 (15)	10 (20,8)	19 (21,9)	253 (22,2)
8	Փորձում եմ պարզապես անջատվել ամեն ինչից և հանգստանալ	80 (9,0)	5 (5,3)	3 (15)	2 (4,2)	3 (3,4)	93 (8,2)
9	Փորձում եմ լինել ընկերներիս մոտ, նարդիկան շախմատ խաղալ	70 (7,9)	5 (5,3)	1 (5)	-	5 (5,7)	81 (7,1)
10	Գնում եմ սրճարան	56 (6,3)	2 (2,1)	-	2 (4,2)	8 (9,2)	68 (6,0)
11	Զբաղվում եմ որսորդությամբ կամ ձկնորսությամբ	28 (3,1)	-	-	1 (2,1)	-	29 (2,5)
12	Այլ զբաղմունքներ	203 (22,8)	43 (45,3)	7 (35)	19 (39,6)	10 (11,5)	282 (24,8)

**2. Բնակչության սոցիալական, ընտանեկան-կենցաղային, բարոյահոգեբանական վիճակի նկարագիրը:** Բնակչության ընտանեկան-կենցաղային վիճակի մասին պատկերացում կազմելու համար հարցաշարում ընդգրկված են ընտանիքում երկարատև օգտագործման առարկաների գոյությունը փաստող հարցեր: Արդյունքների ամփոփումից պարզվեց, որ հարցվածներից գրեթե բոլորն ունեն կենցաղային նվազագույն պայմանները բավարարող հիմնական առարկաները (տեխնիկան):

«Ձեր բնակարանը» հարցը նպատակ ունի ճշտելու բնակչության՝ բնակարաններով ապահովվածության աստիճանը: Ըստ հարցման արդյունքների՝ մասնակիցների 88,1%-ը ապահովված է բնակարանով, ընդ որում՝ 60,2%-ը սեփական բնակարան ունի, բնակարան չունեն մասնակիցների ընդամենը 7%-ը,

իսկ 4,8%-ը ապրում է ժամանակավորապես իրենց տրամադրված բնակարաններում: Այդ փաստը արտացոլված է գծանկար 5.9-ում:



**Գծանկար 5.8.** Բնակչության՝ բնակարանով ապահովվածության տեսակարար կշիռները հարցման համախմբում

Այս հարցի պատասխաններն առանձին բնակավայրերում և հանրապետությունում առավել մանրամասն տրված են աղյուսակ 5.9-ում:

**Աղյուսակ 5.9.** Բնակչության՝ բնակարանով ապահովվածության քանակական ցուցանիշները առանձին բնակավայրերում և հանրապետությունում, %

N	Բնակարանը	Պատասխանների քանակը, %					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Պետական	269 (30,3)	9 (9,5)	1 (5,0)	23 (47,9)	16 (18,4)	318 (27,9)
2	Սեփական	505 (56,8)	81 (85,3)	18 (90,0)	24 (50,0)	58 (66,7)	686 (60,3)
3	Բնակարան չունեն	64 (7,2)	2 (2,1)	1 (5,0)	1 (2,1)	12 (13,8)	80 (7,0)
4	Ժամանակավորապես տրամադրել են բարեկամներս, ընկերներս կամ ծանոթներս	51 (5,7)	3 (3,2)	-	-	1 (1,1)	55 (4,8)

«Ըստ Ձեզ՝ ինչ պայմաններում է ձեր ընտանիքի տնտեսությունը» հարցը առաջարկում է պատասխանների հետևյալ համախմբը.

1. գերազանց վիճակում,
2. լավ վիճակում,

- 3. միջին վիճակում,
- 4. վատ վիճակում,
- 5. շատ վատ վիճակում:

Հարցման արդյունքների մասին՝ ըստ բնակավայրերի և հանրապետությունում, մանրամասն տեղեկատվություն է տալիս աղյուսակ 5.10-ը, իսկ ընդհանրական պատկերը բերված է գծանկար 5.10-ում:

**Աղյուսակ 5.10. Ընտանիքների տնտեսության վիճակի նկարագիրը առանձին բնակավայրերում և հանրապետությունում, %**

N	Տնտեսության վիճակը	Պատասխանների քանակը, %					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Գերազանց	68 (7,6)	-	-	1 (2,1)	-	69 (6,1)
2	Լավ	194 (21,8)	25 (26,3)	6 (30)	9 (18,8)	11 (12,6)	245 (21,5)
3	Միջին	474 (53,3)	64 (67,4)	13 (65)	37 (77,1)	50 (57,5)	638 (56,0)
4	Վատ	111 (12,5)	5 (5,3)	1 (5)	1 (2,1)	25 (28,7)	143 (12,6)
5	Շատ վատ	42 (4,7)	1 (1,1)	-	-	1 (1,1)	44 (3,9)


Գծանկարից երևում է, որ մասնակիցների մեծ մասի՝ ընդհանուր թվի 56,0%-ը, տնտեսությունները միջին վիճակում են, և զգալի տոկոսը՝ շուրջ 12,6%-ը՝ վատ և 3,9%-ը շատ վատ վիճակում է, ինչը մտահոգիչ է:

Ընտանիքներում երիտասարդների հակումները սպորտի նկատմամբ պարզելու համար առաջարկվել է հարցաշարի հաջորդ հարցը:

«Ձեր ընտանիքում կան երիտասարդներ, ովքեր զբաղվում են սպորտով» հարցին «այո» են պատասխանել մասնակիցներից 409-ը, «ոչ» են պատասխանել 703-ը, ընդ որում՝ 72-ը՝ առանց պատճառի, մնացածները նշել են հետևյալ պատճառները.

- սպորտի ցանկալի ձևի բացակայությունը՝ 52 հոգի,
- մարզիչ չլինելը՝ 21 հոգի,
- ազատ ժամանակի բացակայությունը՝ 222 հոգի,
- ոչ նպատակահարմար լինելը՝ 336 հոգի:

Մասնակիցներից 72-ը հարցին պատասխանել են «ոչ», սակայն պատճառների առաջարկված տարբերակներից ոչ մեկը չեն նշել: Կարելի է ենթադրել, որ նրանց ընտանիքներում երիտասարդներ չկան: Եղել են նաև 1-ից ավելի պատճառ նշողներ: Առավել պատկերավոր դարձնելու նպատակով հարցման ընդհանուր պատկերը բերված է գծանկար 5.12-ում, իսկ ըստ բնակավայրերի և հանրապետությունում պատասխանների բաշխման մասին տեղեկություններ է պարունակում աղյուսակ 5.9-ը:



**Գծանկար 5.9.** *Ընկերակիցների փնտրության վիճակի փոփոխության նկարագիրը*

Գծանկարից երևում է, որ մասնակիցների մեծ մասը՝ մասնակիցների ընդհանուր թվի 61,7%-ը, սպորտով չի զբաղվում և հիմնական պատճառը «ոչ նպատակահարմար լինելը» ու «ազատ ժամանակի բացակայությունն է»:

**Աղյուսակ 5.11.** *Ընկերակիցներում սպորտի նկատմամբ երիտասարդների հակումների քանակական ցուցանիշները, %*

Քաղաքները	Պատասխանները, %							
	Այո	Ոչ (պատճառները)						Ընդամենը
		սպորտի ցանկալի ձևի բացակայությունը	սպորտային զգեստի բացակայությունը	մարզիչ չլինելը	ազատ ժամանակի բացակայությունը	ոչ նպատակահարմար լինելը	առանց պատճառի	
Երևան	329 (37,0)	35 (3,9)	23 (2,6)	17 (1,9)	180 (20,2)	225 (25,3)	56 (6,3)	536 (60,3)
Գյումրի	31 (32,6)	6 (6,3)	-	3 (3,2)	20 (21,1)	35 (36,8)	-	64 (67,3)
Եղեգնաձոր	4 (20)	4 (20)	-	1 (0,5)	6 (30)	8 (40)	-	19 (95)
Վանաձոր	15 (31,2)	1 (2,1)	-	-	9 (18,8)	11 (22,9)	10 (20,8)	31 (64,6)
Տաշիր	30 (34,5)	6 (6,9)	-	-	7 (8,0)	34 (39,1)	9 (10,3)	56 (64,4)
<b>Ընդամենը</b>	<b>409 (35,9)</b>	<b>52 (4,3)</b>	<b>23 (2,4)</b>	<b>21 (1,8)</b>	<b>222 (23,5)</b>	<b>313 (15,8)</b>	<b>72 (6,6)</b>	<b>703 (62,2)</b>

Մշակույթի բնագավառի նկատմամբ հարցվածների ընտանիքներում երեխաների հակումները պարզաբանելուն է նվիրված հարցաշարի հաջորդ հարցը:

**«Ձեր ընտանիքում երեխաները հակում ունեն մշակույթի բնագավառի նկատմամբ, թե՞ ոչ»** հարցը «ոչ» պատասխանի դեպքում ակնկալում է պատճառը: Որպես պատճառ առաջարկվել են հետևյալ տարբերակները.

1. Երաժշտական դպրոցի բացակայությունը,
2. Նկարչական դպրոցի բացակայությունը,
3. այդ դպրոցներում վարձավճարի բարձր լինելը,
4. մասնագետների բացակայությունը,
5. այլ պատճառներ:


Հարցին պատասխանել են մասնակիցներից 1133-ը: Հարցին «ոչ» պատասխանողներից ոմանք չեն նշել ոչ մի պատճառ: Եղել են նաև 1-ից ավել պատճառ նշողներ:

Այս հարցը իր բոլոր հնարավոր տարբերակներով քանակական տեսանկյունից ներկայացված է գծանկար 5.13-ում, իսկ ըստ բնակավայրերի և հանրապետությունում հարցման արդյունքներն ամփոփված են աղյուսակ 5.12-ում:

**Աղյուսակ 5.12.** *Մշակույթի որևէ բնագավառի նկատմամբ երեխաների հակումների վերաբերյալ քանակական ցուցանիշներ առանձին բնակավայրերում և հանրապետությունում, %*

Քաղաքները	Պատասխանները, %						
	Այո	Ոչ (պատճառները)					
		երաժշտական դպրոցի բացակայությունը	նկարչական դպրոցի բացակայությունը	այդ դպրոցներում վարձավճարի բարձր լինելը	մասնագետների բացակայությունը	այլ պատճառներ	Ընդամենը
Երևան	498 (51,9)	29 (3,3)	16 (1,8)	54 (6,1)	8 (0,9)	252 (28,3)	359 (40,4)
Գյումրի	47 (52,1)	1 (1,1)	-	-	4 (4,2)	43 (45,3)	48 (50,5)
Եղեգնաձոր	7 (66)	1 (5,0)	-	-	-	12 (60)	13 (65,0)
Վանաձոր	29 (52,7)	-	1 (2,1)	-	-	13 (27,1)	14 (29,2)
Տաշիր	38 (62,9)	5 (5,7)	2 (2,3)	6 (6,9)	1 (1,1)	34 (39,1)	48 (55,2)
<b>Ընդամենը</b>	<b>619 (54,3)</b>	<b>36 (3,2)</b>	<b>19 (1,7)</b>	<b>60 (5,3)</b>	<b>13 (1,1)</b>	<b>354 (31,1)</b>	<b>482 (42,3)</b>





**Գծանկար 5.10.** *Ընտանիքում երեխաների մշակութային հակվածությունը մշակույթի բնագավառի նկատմամբ*

Աղյուսակից և գծանկարից երևում է, որ մասնակիցների ընտանիքներում երեխաների մեծ մասը հակումներ ունի մշակույթի տարբեր բնագավառների նկատմամբ: Հարցի պատասխանների 54,6%-ը «այո» է: «Ոչ» պատասխանողները հիմնականում այդ տարիքի երեխաներ չունեն կամ որպես պատճառ նշել են դպրոցների վարձավճարների բարձր լինելը, այսինքն՝ հիմնական պատճառը սոցիալական բնույթի է:

**3. Մատակարարվող ծառայություններից օգտվելու հնարավորությունը, բավարարվածության աստիճանը որոշելը:** Հարցաշարի հարցերի այս խումբը նախատեսված է բուժհիմնարկների ծառայություններից, բնական գազից, էլեկտրաէներգիայից, խմելու և ոռոգման ջրից, տրանսպորտային ծառայություններից բնակչության օգտվելու հնարավորությունները պարզելու, ինչպես նաև այդ ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության աստիճանը որոշելու համար:

Հարցաշարի 18-րդ հարցը վերաբերում է բուժհիմնարկների մատուցած ծառայություններին: Հարցն այսպիսին է.

**«Ձեր ընտանիքի անդամները բավարարված են սպասարկող բուժհիմնարկների ծառայություններից»:**

Բացասական պատասխանի դեպքում պահանջվում է նշել պատճառը: Հարցում առաջարկված են պատճառների հետևյալ տարբերակները.

- համապատասխան մասնագետ-բժիշկների բացակայությունը,
- դեղորայքի բարձր գները,
- բուժաշխատողների անպատասխանատու վերաբերմունքը հիվանդի նկատմամբ,
- բուժաշխատողների ծառայության դիմաց (ստվերային) վճարումները,
- բուժհիմնարկների ոչ պատշաճ սանիտարական վիճակը,
- շտապօգնության ուշանալը:

Հարցին պատասխանողներից գրեթե բոլորը նշել են 1-ից ավելի պատճառներ: Ըստ նշված պատճառների՝ հարցվածների պատասխանները մանրամասն ներկայացված են աղյուսակ 5.13-ում:

**Աղյուսակ 5.13. Բուժհիմնարկների ծառայություններից բնակչության բավարարվածության աստիճանի քանակական նկարագիրը՝ ըստ նշված պատճառների, %**

Քաղաքները	Պատասխանները, %							
	Այո	Ոչ						
		մասնագետ-բժիշկների բացակայությունը	դեղորայքի բարձր գները	բուժաշխատողների անպատասխանատու վերաբերմունքը	բուժաշխատողների ծառայության դիմաց վճարումները	բուժհիմնարկների ոչ պատշաճ սանիտարական վիճակը	շտապօգնության ուշանալը	Ընդամենը
Երևան	347 (39,0)	202 (22,7)	191 (21,5)	174 (19,6)	156 (17,5)	79 (8,9)	72 (8,1)	874 (98,3)
Գյումրի	28 (29,5)	36 (37,9)	16 (16,8)	32 (33,7)	25 (26,3)	23 (24,2)	22 (23,2)	154 (162,1)
Եղեգնաձոր	5 (25,0)	5 (25)	7 (35)	8 (40)	7 (35)	2 (10)	1 (5)	30 (150)
Վանաձոր	14 (29,2)	11 (22,9)	8 (16,7)	19 (39,6)	6 (12,5)	6 (12,5)	5 (10,4)	55 (114,6)
Տաշիր	37 (42,5)	10 (11,5)	21 (24,1)	9 (10,3)	13 (14,9)	6 (6,9)	10 (11,5)	69 (79,3)
<b>Ընդամենը</b>	<b>431 (37,8)</b>	<b>264 (23,2)</b>	<b>243 (21,3)</b>	<b>242 (21,2)</b>	<b>207 (18,2)</b>	<b>116 (10,2)</b>	<b>110 (9,7)</b>	<b>1182 (103,8)</b>

Աղյուսակից երևում է, որ բուժառայություններից գոհ են հարցվածներից 431-ը կամ 37,8%-ը, մնացածը նշել են բավարարված չլինելու տարբեր պատճառներ:

19-րդ հարցի նպատակն է հաշմանդամ թոշակառուներ, Հայրենական պատերազմից, Աֆղանստանի և Ղարաբաղի դեպքերից վիրավորված և տուժած մասնակիցներ ունեցող ընտանիքների նկատմամբ ՀՀ կառավարության կողմից նրանց ցուցաբերվող վերաբերմունքից բավարարվածությունը պարզելը: Համաձայն հարցման արդյունքների՝ այդ քաղաքականությունից գոհ են հարցին պա-

տասխանած 1130 մասնակիցներից ընդամենը 294–ը: Դժգոհության հիմնական պատճառներն են.

1. Ժամանակին չեն տրվում նրանց հասանելիք կենսաթոշակներն ու նպաստները,
2. կենսաթոշակներն ու նպաստները այնքան չնչին են, որ չեն բավարարում նրանց գոնե սննդի համար,
3. հաշմանդամ երիտասարդներին չի տրվում շարժական միջոցներ,
4. այլ պատճառներ:

Հարցին «ոչ» պատասխանողներից ոմանք չեն նշել ոչ մի պատճառ: Եղել են նաև 1–ից ավելի պատճառ նշողներ:


Հարցին պատասխանողների պատասխանների քանակական ցուցանիշներն՝ ըստ բնակավայրերի և հանրապետությունում, բերված են աղյուսակ 5.14–ում:

**Աղյուսակ 5.14.** *Հնարանիքներում հաշմանդամ թոշակատուների առկայության և նրանց նկատմամբ կառավարության կողմից տրվող վերաբերմունքի գնահատման ցուցանիշներն՝ ըստ բնակավայրերի և հանրապետությունում, %*

Քաղաքները	Պատասխանները, %					
	Այո	Ոչ				
		Ժամանակին չեն տրվում նրանց հասանելիք կենսաթոշակներն ու նպաստները	կենսաթոշակներն ու նպաստները չեն բավարարում գոնե սննդի համար	հաշմանդամ դարձած երիտասարդներին չեն տրվում շարժական միջոցներ	այլ պատճառ	Ընդամենը
Երևան	236 (26,5)	46 (5,2)	341 (38,4)	52 (5,8)	265 (29,8)	704 (79,2)
Գյումրի	14 (14,7)	3 (3,2)	52 (54,7)	4 (4,2)	25 (26,3)	84 (88,4)
Եղեգնաձոր	3 (15)	1 (5,0)	13 (65,0)	2 (10,0)	6 (30)	22 (110)
Վանաձոր	16 (33,3)	-	14 (29,2)	2 (4,2)	10 (20,8)	26 (54,2)
Տաշիր	25 (28,7)	-	25 (28,7)	3 (3,4)	35 (40,2)	63 (72,4)
<b>Ընդամենը</b>	<b>294 (11,4)</b>	<b>50 (4,4)</b>	<b>445 (39,1)</b>	<b>63 (5,5)</b>	<b>341 (29,9)</b>	<b>899 (78,9)</b>

«Այլ պատճառներ» տարբերակում հարցվածներից շատերը նշել են, որ հաշմանդամներ և պատերազմի մասնակիցներ չունեն, իսկ ոմանք գտնում են, որ չեն գնահատվում, շուտ մոռացվում են, իսկ ոմանք էլ պատճառ չեն նշել: Զգալի տոկոս է կազմում երկրորդ տարբերակը, այն է՝ տրված կենսաթոշակներն ու նպաստները այնքան չնչին են, որ չեն բավարարում նրանց գոնե սննդի համար:

«Ձեր ընտանիքի անդամների պահանջներն արդյունաբերական և առաջին անհրաժեշտության պարենային ապրանքներով բավարարվում են, թե՛ ոչ» հարցին պատասխանել են մասնակիցներից 1123-ը, որոնցից 595-ը պատասխանել են «այո», ընդ որում՝ Երևանում 889 մասնակիցներից «այո» են պատասխանել 478-ը կամ մոտ 56,8%-ը, Գյումրիում՝ 95-ից 57-ը կամ 60%-ը, Եղեգնաձորում՝ 20-ից 11-ը կամ 55%-ը, Վանաձորում՝ 48-ից 28-ը կամ 58,3%-ը, Տաշիրում՝ 87-ից 21-ը կամ 24,1%-ը: Հարցի պատասխանների ընդհանուր պատկերը՝ ըստ բնակավայրերի և հանրապետությունում, բերված է գծանկար 5.15-ում:




Գծանկար 5.11. Արդյունաբերական և առաջին անհրաժեշտության պարենային ապրանքներով բնակչության բավարարվածության մակարդակներն առանձին բնակավայրերում և հանրապետությունում, %

«Ոչ» պատասխանը առաջարկում է նշել բավարարված չլինելու պատճառները՝ ըստ հարցում նշված տարբերակների: Դրանք են.

1. հացի բարձր գները,
2. երեխաների հագուստների բարձր գները,
3. ընդհանրապես ապրանքների նկատմամբ պետության կողմից տարվող մանրածախ գների քաղաքականությունը,
4. այլ պատճառներ:

Հարցին «ոչ» պատասխանողներից ոմանք նշել են 1-ից ավելի պատճառներ:

Հարցման արդյունքներն ըստ նշված տարբերակների բերված են գծանկար 5.12-ում:



Գծանկար 5.12. Ընտանիքի անդամների պահանջները արդյունաբերության և առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների բավարարվածության վերաբերյալ

Այլ պատասխաններում մասնակիցներից շատերը նշել են, որ աշխատանք չունեն, ոմանք՝ աշխատավարձի ցածր լինելը, ոմանք էլ՝ գների բարձր լինելը և այլն:

Տրված հարցի ամփոփման արդյունքներից երևում է, որ արդյունաբերական և առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների նկատմամբ մասնակիցների 52,2%-ի պահանջները բավարարվում են, իսկ անբավարարվածությունը հիմնականում պայմանավորված է պետության կողմից տարվող մանրածախ գների քաղաքականությամբ:

21-րդ հարցով փորձ է արվում ճշտելու բնական գազի առկայությունը բնակարաններում և նրա բացակայության պատճառները: Որպես գազի բացակայության պատճառ առաջարկվել են հետևյալ տարբերակները.


- բնակարանում գազի անցկացման և նրա օգտագործման բարձր սակագները,
- բնակավայրում բնական գազի բացակայությունը,
- վտանգավոր է բնական գազ ունենալը բնակարանում,
- այլ պատճառներ:

Հարցի ամփոփման արդյունքներն ըստ բնակավայրերի և հանրապետությունում զետեղված են աղյուսակ 5.15-ում, իսկ ընդհանրական պատկերը՝ գծանկար 5.13-ում:

**Աղյուսակ 5.15.** *Բնակարաններում բնական գազի առկայության և բացակայության (ըստ նշված պատճառների) ցուցանիշները, %*

Քաղաքները	Պատասխանները / (%)					
	Այո	Ոչ				
		բնակարանում գազի անցկացման և նրա օգտագործման բարձր գները	շրջանում բնական գազի բացակայությունը	վտանգավոր է բնական գազ ունենալը բնակարանում	այլ պատճառ	Ընդամենը
Երևան	732 (82,3)	56 (6,3)	30 (3,4)	23 (2,6)	47 (5,3)	156 (17,5)
Գյումրի	71 (74,7)	8 (8,4)	9 (9,5)	-	7 (7,4)	24 (25,3)
Եղեգնաձոր	17 (85)	1 (5,0)	2 (10,0)	-	1 (5,0)	4 (20,0)
Վանաձոր	39 (81,3)	3 (6,3)	-	1 (2,1)	3 (6,3)	7 (14,6)
Տաշիր	51 (58,6)	17 (19,5)	5 (5,7)	3 (3,4)	9 (10,3)	34 (39,1)
<b>Ընդամենը</b>	<b>910 (79,9)</b>	<b>85 (7,5)</b>	<b>46 (4,0)</b>	<b>27 (2,4)</b>	<b>67 (5,9)</b>	<b>225 (19,8)</b>

«Այլ պատճառներ» պատասխանողներից շատերը նշել են, որ շենքը գազաֆիկացված չէ, որ կան գազաֆիկացման ծրագրեր:



**Գծանկար 5.13.** *Բնակարաններում բնական գազի առկայության փոկոսային ցուցանիշները՝ ըստ «այո» կամ «ոչ» պատասխանների քանակի*

Այսպիսով՝ բնակարաններում բնական գազի բացակայության հիմնական պատճառը, հատկապես՝ Երևանում, բնակարանում գազի անցկացման և նրա օգտագործման բարձր գներն են, այնուհետև՝ շրջանում բնական գազի բացակայությունը, ինչը մոտ ապագայում լուծելի խնդիր է:

Հաջորդ հարցը՝ 22-րդը, նախատեսված է բացահայտելու էլեկտրաէներգիայի մատակարարումների և նրա սպառման գների վերաբերյալ բնակչության վերաբերմունքը:

Հարցին պատասխանած 1132 մասնակիցներից 630-ը (մասնակիցների ընդհանուր թվի 55,3%-ը) գոհ են էլեկտրաէներգիայի մատակարարումից և նրա սպառման գներից, ընդ որում՝ 504-ը (56,7%)՝ Երևանում, 39-ը (41,1%)՝ Գյումրիում, 9-ը (45%)՝ Եղեգնաձորում, 28-ը (58,3%)՝ Վանաձորում, 50-ը (57,5%)՝ Տաշիրում: Դժգոհները՝ 502-ը, նշել են հետևյալ պատճառները.

1. էլեկտրաէներգիայի բարձր գները (319),
2. շատ հաճախ էլեկտրաէներգիա չունենալը (69),
3. այլ պատճառներ (146):


Ընդ որում՝ այլ պատճառներ նշողները հիմնականում բողոքում են էլեկտրաէներգիայի հաշվիչի կեղծումից, թույլ լարումից, մատակարարող ընկերության աշխատակիցների վերաբերմունքից, էլեկտրաէներգիայի անջատումներից, տատանումներից և այլն:

Հարցման արդյունքներն ըստ բնակավայրերի և հանրապետությունում բերված են աղյուսակ 5.16-ում:

**Աղյուսակ 5.16.** «Գոհ եք Ձեր բնակարանում էլեկտրաէներգիայի մատակարարումից և նրա սպառման գներից» հարցման արդյունքներն առանձին բնակավայրերում և հանրապետությունում, %

Քաղաքները	Պատասխանները / (%)				
	Այո	Ոչ			
		էլեկտրաէներգիայի բարձր գները	շատ հաճախ էլեկտրաէներգիա չունենալը	այլ պատճառներ	Ընդամենը
Երևան	504 (56,7%)	253 (28,4)	57 (6,4)	104 (11,7)	414 (46,6)
Գյումրի	39 (41,1%)	28 (29,5)	6 (6,3)	25 (26,3)	59 (62,1)
Եղեգնաձոր	9 (45%)	6 (30,0)	-	7 (35,0)	13 (65,0)
Վանաձոր	28 (58,3%)	12 (25,0)	1 (2,1)	5 (10,4)	18 (37,5)
Տաշիր	50 (57,5%)	20 (23,0)	5 (5,7)	5 (5,7)	30 (34,5)
<b>Ընդամենը</b>	<b>630 (55,3)</b>	<b>319 (28,0)</b>	<b>69 (6,1)</b>	<b>146 (12,8)</b>	<b>534 (46,9)</b>


Աղյուսակից երևում է, որ դժգոհության հիմնական պատճառը էլեկտրաէներգիայի բարձր գներն են:



Գծանկար 5.14. *Էլեկտրաէներգիայի մատակարարումներից և նրա սպառման գներից գոհ բնակչության բավարարվածության ցուցանիշներն առանձին բնակավայրերում և հանրապետությունում, %*

Խմելու և ոռոգման ջրի մատակարարումներից բնակչության բավարարվածության մակարդակը ձշտելու համար նախատեսված է հարցաշարի հաջորդ՝ 23-րդ հարցը:

«Բավարարված եք արդյոք խմելու և ոռոգման ջրի մատակարարումից» հարցին մասնակիցներից 652-ը (մասնակիցների ընդհանուր թվի 57,2%-ը) պատասխանել են «այո», ընդ որում՝ 523-ը Երևանից: Խմելու և ոռոգման ջրի մատակարարումներից բնակչության բավարարվածության մակարդակն առանձին բնակավայրերում և հանրապետությունում բերված է գծանկար 5.15-ում:




Գծանկար 5.15. *Խմելու և ոռոգման ջրի մատակարարումներից բնակչության բավարարվածությունն առանձին բնակավայրերում և հանրապետությունում, %*



Գծանկարից երևում է, որ առավել բավարարված է Երևանի բնակչությունը, և առավել պակաս բավարարված են տաշիրցիները:

Հարցին «Ոչ» պատասխանողների ճայների բաժանումն ըստ առաջարկված տարբերակների արտացոլված է գծանկար 5.16-ում: Հարցին «ոչ» պատասխանողներից ոմանք նշել են 1-ից ավելի պատճառներ:




Գծանկար 5.16. Խմելու և ոռոգման ջրի մատակարարման վերաբերյալ բավարարվածությունը

Գծանկարից երևում է, որ ջրից դժգոհությունների հիմնական պատճառը **խմելու ջրի հաճախակի կտրվելն է**, իսկ դա մոտ ապագայում լուծելի խնդիր է, քանի որ արդեն կատարվել և կատարվում են որոշակի աշխատանքներ (գոնե Երևանում) 24-ժամյա ջրամատակարարում ապահովելու համար:

24-րդ հարցով վեր է հանված տրանսպորտային հիմնախնդիրը:

«Դուք բավարարված եք մարդատար տրանսպորտի ծառայություններից» հարցը նպատակ ունի պարզելու այս ոլորտում տեղ գտած թերությունները: Համաձայն հարցման արդյունքների՝ մարդատար տրանսպորտի ծառայություններից գոհ են 1139 մասնակիցներից ընդամենը 304-ը (մասնակիցների ընդհանուր թվի 26,7%-ը), ընդ որում՝ Երևանում՝ 220-ը (24,7%), Գյումրիում՝ 13-ը (13,7%), Եղեգնաձորում՝ 13-ը (65%), Վանաձորում՝ 17-ը (35,4%), Տաշիրում՝ 41-ը (47,1%) (տե՛ս գծանկար 5.21):




**Գծանկար 5.17.** *Տրանսպորտային ծառայություններից բնակչության բավարարվածությունն առանձին բնակավայրերում և հանրապետությունում, %*

Գծանկարից հետևում է, որ տրանսպորտային ծառայություններից ամենաքիչը բավարարված են Գյումրիի բնակիչները (13,7%-ը), այնուհետև՝ Երևանի բնակիչները (24,7%):

Տրանսպորտային ծառայություններից դժգոհողները՝ հարցին «ոչ» պատասխանողները, նշել են առաջարկված պատճառները հետևյալ համամասնությամբ.

1. տրանսպորտի անսարք վիճակը՝ 234-ը (մասնակիցների ընդհանուր թվի 20,5%-ը), որից 195-ը՝ Երևանից,
2. վարորդների կոպիտ վերաբերմունքը՝ 205-ը (մասնակիցների ընդհանուր թվի 18%-ը), որից 158-ը՝ Երևանից,
3. տրանսպորտի միջոցների աննպատակահարմարությունը՝ 104-ը (9,1%), որից 78-ը՝ Երևանից,
4. տրանսպորտի միջոցների բարձր գները՝ 75-ը (6,6%), որից 48-ը՝ Երևանից,
5. տրանսպորտի աշխատանքի գրաֆիկը՝ 268-ը (23,5%), որից 236-ը՝ Երևանից,
6. այլ պատճառներ՝ 438-ը (38,5%), որից 341-ը՝ Երևանից:

Տրանսպորտային միջոցներից դժգոհումները առանձին բնակավայրերում և հանրապետությունում առավել պատկերավոր երևում է գծանկար 5.18-ում:



**Գծանկար 5.18.** *Տրանսպորտային ծառայություններից բնակչության անբավարարվածության տոկոսային ցուցանիշները՝ ըստ առաջարկված տարբերակների*

Գծանկարից երևում է, որ տրանսպորտային ծառայություններից հիմնական դժգոհությունների պատճառը **տրանսպորտի անսարք վիճակն է և աշխատանքային գրաֆիկը:**

«Այլ պատճառներ»-ում, որոնք կազմել են պատասխանների գերակշիռ մասը, մասնակիցները նշել են հիմնականում **մեքենաների բավարար քանակության բացակայությունը և մեքենաների գերծանրաբեռնվածությունը:**


**4. Հանրապետությունում առկա քաղաքական մթնոլորտի գնահատումը** (դրա ազդեցությունը ընտանիքների հետագա ճակատագրի վրա): Ներկայումս Հանրապետությունում առկա գերխնդիրներից մեկը հսկայական չափերի հասնող արտագաղթն է: Այդ նպատակով հարցաշարում նախատեսվել է 25-րդ հարցը՝ «**Ինչը կարող է մոտակա ժամանակներում Հանրապետությունից հեռանալու պատճառ դառնալ**», որով փորձ է արվել պարզել այն հիմնական դրդապատճառները, որոնք արտագաղթի տեղիք են տալիս:

Հարցման արդյունքներն ըստ հարցմանը մասնակցած քաղաքների, նշված պատճառներին համապատասխան, բերված են աղյուսակ 5.16-ում, իսկ ընդհանրական պատկերը՝ գծանկար 5.23-ում:

**Աղյուսակ 5.17.** Հանրապետությունից մուտրակա ժամանակաշրջանում հեռանալու պատճառների քանակական ցուցանիշներն առանձին քաղաքներում և հանրապետությունում, %

N	Պատճառները	Պատասխանների քանակը, %					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Համայնքի ղեկավարը	29 (3,3)	-	-	1 (2,1)	3 (3,4)	33 (2,9%)
2	Հարևանները	20 (2,2)	-	-	-	2 (2,3)	22 (1,9)
3	Բարեկամները	32 (3,6)	-	-	1 (2,1)	1 (1,1)	34 (3,0)
4	Երկրի իշխանավորները	175 (19,7)	23 (24,2)	4 (20)	4 (8,3)	11 (12,6)	217 (19,1)
5	Աշխատանքի բացակայությունը	253 (28,5)	46 (48,4)	10 (50)	18 (37,5)	37 (42,5)	364 (32,0)
6	Ցածր աշխատավարձը	311 (35,0)	28 (29,5)	10 (50)	20 (41,7)	31 (35,6)	400 (35,1)
7	Բնակարանի բացակայությունը	62 (7,0)	2 (2,1)	-	3 (6,3)	3 (3,4)	70 (6,1)
8	Դժվարանում են պատասխանել	88 (9,9)	9 (9,5)	2 (10)	7 (14,6)	11 (12,6)	117 (10,3)
9	Այլ պատասխան	233 (26,2)	33 (34,7)	5 (25)	7 (14,6)	31 (35,6)	309 (27,1)

Այլ պատասխաններում նշվել են «երկրի վատ վիճակը», «բարձր գները», «երեխաների բացակայությունը երկրից», «ամուսնությունը» և այլն:



**Փժանկար 5.19.** Հարցման արդյունքների ընդհանրական պատկերը (%)

Աղյուսակից և գժանկարից երևում է, որ Հանրապետությունից հեռանալու հիմնական պատճառները ցածր աշխատավարձն է (35,1%) և աշխատանքի բացակայությունը (32,0%):

**Իրոք, աշխատատեղերի ստեղծումն այսօր մեր հանրապետության ամենացավալի և ամենահրատապ խնդիրներից մեկն է և մտահոգվելու առիթ է տալիս, որը, սակայն, շուտափույթ լուծում չի կարող ստանալ:**

Ընտանիքում բարոյահոգեբանական մթնոլորտը փչացնող գործոնները ճշտելու համար նախատեսվել է 26-րդ հարցը:

«Ըստ Ձեզ՝ ինչ գործոններ կարող են ազդել Ձեր ընտանիքում բարոյահոգեբանական մթնոլորտը փչացնելու համար» հարցում որպես այդպիսի գործոններ առաջարկվել են՝

1. Իշխանությունների լիբերալ վերաբերմունքը,
2. Երկրի նախագահի պասիվ դերը կոռուպցիայի դեմ,
3. Երկրի վարչապետի գործունեությունը,
4. Ազգային ժողովի կողմից ընդունած օրենքները,
5. հարազատների բացակայությունը Հայաստանից,
6. մանրաձախ գների քաղաքականությունը,
7. դժվարանում են պատասխանել,
8. այլ տարբերակ:

Հարցման արդյունքների մասին՝ ըստ քաղաքների և հանրապետության, մանրամասն տեղեկություններ է տալիս աղյուսակ 5.18-ը:


**Աղյուսակ 5.18.** *Ընտանիքում բարոյահոգեբանական մթնոլորտի վրա ազդող գործոնների քանակական ցուցանիշները՝ ըստ բնակավայրերի և հանրապետության, %*

N	Պատճառները	Պատասխանների քանակը, %					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Իշխանությունների լիբերալ վերաբերմունքը	108 (12,1)	1 (1,1)	-	2 (4,2)	9 (10,3)	120 (10,5)
2	Երկրի նախագահի պասիվ դերը կոռուպցիայի դեմ	171 (19,2)	8 (8,4)	-	9 (18,8)	19 (21,8)	207 (18,2)
3	Երկրի վարչապետի գործունեությունը	88 (9,9)	7 (7,4)	1 (5)	4 (8,3)	12 (13,8)	112 (9,8)
4	Ազգային ժողովի կողմից ընդունած օրենքները	84 (9,4)	8 (8,4)	-	4 (8,3)	16 (18,4)	112 (9,8)
5	Հարազատների բացակայությունը Հայաստանից	134 (15,1)	15 (15,8)	3 (15)	11 (22,9)	27 (31,0)	190 (16,7)
6	Մանրաձախ գների քաղաքականությունը	165 (18,6)	18 (18,9)	4 (20)	10 (20,8)	13 (14,9)	210 (18,4)
7	Դժվարանում են պատասխանել	130 (14,6)	16 (16,8)	9 (45)	8 (16,7)	17 (19,5)	180 (15,8)
8	Այլ տարբերակ	313 (35,2)	50 (52,6)	6 (30)	15 (31,3)	29 (33,3)	413 (36,6)

«Այլ տարբերակ» պատասխանն ընտրել են մասնակիցներից 413-ը, որոնք հիմնականում նշել են հետևյալ պատասխանները.

- գործազրկությունը,
- ֆինանսի բացակայությունը,
- սոցիալական վիճակը,
- բարոյական արժեքների բացակայությունը և այլն:

Հարցման արդյունքների ընդհանրական պատկերը տրված է գծանկար 5.24-ում:



**Գծանկար 5.20.** *Ընտրանիքի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա ազդող գործոնների ընդհանրական պատկերը (%)*

Ամփոփելով արդյունքները՝ տեսնում ենք, որ մեծ թիվ են կազմում նաև այն մասնակիցները, ովքեր որպես պատճառ նշել են հարազատների բացակայությունը հանրապետությունից:

Հարցաշարի կարևորագույն հարցերից է 28-րդ հարցը, որը շոշափում է երկրում կենսասամակարդակի բարձրացման հիմնախնդիրը: Այն նպատակ ունի ձգբրտելու հանրապետությունում կենսասամակարդակի բարձրացման համար կարևոր հիմնական գործոնները:

Հարցը շարադրված է հետևյալ կերպ.

**«Ձեր կարծիքով ինչից է կախված մեր երկրում կենսասամակարդակի բարձրացումը» (նշել նվազագույնը 3 տարբերակ «առավելագույնը՝ 6):**

Պատասխանների ամփոփման արդյունքում պարզվեց, որ կենսամակարդակի բարձրացումը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով.


- աշխատատեղերի ստեղծում,
- կոռուպցիայի դեմ պայքար,
- հարկային ճիշտ քաղաքականություն,
- իշխանության վարած քաղաքականություն,
- գործազրկության կրճատում, աշխատավարձերի բարձրացում,
- գնային ճիշտ քաղաքականություն, գների իջեցում,
- տնտեսական աճ,
- կրթամակարդակի փոփոխություն,
- և այլն:

Ըստ նշված գործոնների՝ հարցվածների ձայների բաշխումը պատկերված է աղյուսակ 5.19-ում:

**Աղյուսակ 5.19.** Երկրում կենսամակարդակի բարձրացման կախվածությունը նշված գործոններից (փարբերակներից)՝ ըստ բնակավայրերի և հանրապետության

Քաղաքներ	Տարբերակներ								
	աշխատատեղերի ստեղծում	կոռուպցիայի դեմ պայքար	հարկային ճիշտ քաղաքականություն	նախագահի, իշխանության վարած քաղաքականություն	գործազրկության կրճատում, աշխատավարձերի բարձրացում	գնային ճիշտ քաղաքականություն, գների իջեցում	տնտեսական աճ	կրթամակարդակի փոփոխություն	և այլ
Երևան	628	382	341	285	447	320	271	279	146
Գյումրի	79	43	42	27	62	40	28	50	39
Եղեգնաձոր	18	8	9	4	14	8	3	4	9
Վանաձոր	40	28	18	19	25	20	18	18	6
Տաշիր	67	56	32	31	57	23	25	16	12
Ընդամենը	832	517	442	366	605	411	345	367	212

Եթե փորձենք հարցման ընդհանուր արդյունքները պատկերել գծանկարով, ապա այն կունենա հետևյալ տեսքը.



**Գծանկար 5.21.** *Երկրում կենսամակարդակի բարձրացման կախվածությունը նշված գործոններից, %*

Հարցման արդյունքների համաձայն՝ դարձյալ առաջին տեղում է **աշխատատեղերի ստեղծումը**, մասնակիցների ընդհանուր թվի մոտ **73%**-ը առաջնային է համարել այդ գործոնը: Այնուհետև նշված գործոնների մեջ մասնակիցները կարևորել են **գործազրկության կրճատումը և աշխատավարձերի բարձրացումը (53,1%)**: Այսինքն՝ դարձյալ նույն խնդիրները:

**Այլ տարբերակների** մեջ առաջարկվել են հետևյալ հիմնական գործոնները՝ քաղաքական կայունություն, ստվերային տնտեսության վերացում, ներդրումներ, քաղաքացիների իրավական պաշտպանվածություն, արտադրության խթանում, արդյունաբերության զարգացում, աղքատության կրճատում, նպաստների և թոշակների բարձրացում, անվճար բուժսպասարկում, հարկերի իջեցում, փոքր և միջին բիզնեսի աջակցում, ինտեգրում համաշխարհային տնտեսությանը, իրավական դաշտի կարգավորում, իշխանափոխություն, գյուղատնտեսության զարգացում և այլն:

**5. Բնակչությանն առավել հուզող և առավել կարևոր հարցերի շրջանակի բացահայտումը:** «Ինչի համար եք խնայում Ձեր դրամական միջոցները»\_հարցը նպատակ ունի պարզելու դրամական միջոցների գոյությունը բնակչության մեջ և նրա խնայման նպատակները: Հարցին պատասխանելու համար առաջարկվել է պատասխանների 7 տարբերակ: Պատասխանողների մեծ մասը՝ 537-ը (մոտ 47,1%-ը) նշել է. «Ձեռն խնայում, որովհետև չունեն այդպիսի հնարավորություն» պատասխանը: Հարցման արդյունքներն ըստ բնակավայրերի և հանրապետության արտահայտված են աղյուսակ 5.20-ում:



**Աղյուսակ 5.20. Համապարասիան նպատակներին ծառայեցնելու համար դրամական միջոցների խնայողության քանակական ցուցանիշները (%)**

N	Պատճառները	Պատասխանների քանակը, %					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Չեմ խնայում, որովհետև չունեմ այդպիսի հնարավորություն	388 (43,6)	36 (37,9)	8 (40)	26 (54,2)	79 (90,8)	537 (47,1)
2	Բնակարան գնելու	47 (5,3)	-	-	-	5 (5,7)	52 (4,6)
3	Մեքենա գնելու	54 (6,1)	7 (7,4)	2 (10)	1 (2,1)	2 (2,3)	66 (5,8)
4	Առանձնատուն գնելու	16 (1,8)	1 (1,1)	-	-	1 (1,1)	18 (1,6)
5	Չեմ խնայում, որովհետև ամեն ինչ ունեմ	44 (4,9)	9 (9,5)	-	1 (2,1)	4 (4,6)	58 (5,1)
6	Կրթություն ստանալու	48 (5,4)	9 (9,5)	2 (10)	3 (6,3)	-	62 (5,4)
7	Այլ տարբերակ	280 (31,5)	37 (38,9)	11 (55,0)	15 (31,3)	12 (13,8)	355 (31,2)

Աղյուսակից պարզ երևում է, որ **բնակչության զգալի մասը դրամական միջոցներ չունի խնայելու**: Հատկապես ծանր է վիճակը Տաշիրում. հարցվածների 90,8%-ը խնայելու հնարավորություն չունի:

«Չեմ խնայում, որովհետև ամեն ինչ ունեմ» պատասխանը նշել են հարցվածների 5,1%-ը, այն էլ՝ հիմնականում Երևանից:


Այլ տարբերակներ ընտրողները նշել են, որ չեն կարող խնայել, խնայում են անձնական անհրաժեշտ պարագաներ գնելու, վճար տալու, ժամփոփոխելու, ընտանիքի հոգսերը հոգալու, բուժվելու և այլնի համար:

«**Ինչն է առավել կարևոր Հայաստանի բնակչության համար**» հարցին մասնակիցների մեծ մասը՝ 562-ը կամ 49,3%-ը, պատասխանել են «**Աշխատանքի առկայությունը**», ընդ որում՝ 410-ը՝ Երևանից, որը Երևանի մասնակիցների 46,1%-ն է: Այնուհետև ամենաշատ ձայներ է հավաքել «առողջությունը» պատասխանը՝ 461 ձայն (կամ ընդհանուր հարցվածների մոտ 40,5%-ը): Այսինքն՝ մասնակիցները աշխատանքի առկայությունը և առողջությունը կարևորել են առավել շատ:

Հարցման արդյունքները՝ ըստ բնակավայրերի և հանրապետության, արտացոլված են աղյուսակ 5.21-ում, իսկ ընդհանրական տեսքով տրված է գծանկար 5.22-ում:

**Աղյուսակ 5.21.** Հայաստանի բնակչության համար առավել կարևոր գործոնների վերաբերյալ մասնակիցների կարծիքների ընդհանուր քանակական նկարագիրը, %


N	Պատճառները	Պատասխանների քանակը, %					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Առողջությունը	343 (38,6)	37 (38,9)	8 (40)	14 (29,2)	59 (67,8)	461 (40,5%)
2	Աշխատանքի առկայությունը	410 (46,1)	62 (65,3)	11 (55)	34 (70,8)	45 (51,7)	562 (49,3)
3	Երջանիկ ընտանեկան կյանքը	167 (18,8)	8 (8,4)	3 (15)	4 (8,3)	19 (21,8)	201 (17,6)
4	Առանց պատերազմի ապրելը	293 (33,0)	37 (38,9)	10 (50)	14 (29,2)	44 (50,6)	398 (34,9)
5	Առանց բռնությունների ապրելը	135 (15,2)	13 (13,7)	2 (10)	7 (14,6)	12 (13,8)	169 (14,8)
6	Բարձր կենսամակարդակը	227 (25,5)	24 (25,3)	4 (20)	14 (29,2)	13 (14,9)	282 (24,8)
7	Ազատությունը	146 (16,4)	14 (14,7)	1 (5)	5 (10,4)	16 (18,4)	182 (16,0)
8	Կրթությունը	117 (13,2)	17 (17,9)	2 (10)	10 (20,8)	13 (14,9)	159 (14,0)
9	Կրոնը	78 (8,8)	11 (11,6)	3 (15)	3 (6,3)	7 (8,0)	102 (9,0)
10	Այլ տարբերակ	115 (12,9)	6 (6,3)	1 (5)	2 (4,2)	3 (3,4)	127 (11,2)




**Գծանկար 5.22.** Հայաստանի բնակչության համար առավել կարևոր գործոնների վերաբերյալ մասնակիցների կարծիքների ցուցանիշները՝ ըստ բնակավայրերի, %

«Ցանկանում եք դառնալ սեփականատեր» հարցի պատասխանները բաժանվել են 3 խմբի՝ «այո», «ոչ» և «դժվարանում եմ պատասխանել», յուրաքանչյուր պատասխան ակնկալում է բացատրություն՝ «ինչո՞ւ»:

Հարցի վերլուծության արդյունքներն ըստ շրջանների պատկերված են գծանկար 5.29-ում, իսկ արդյունքներն ըստ պատճառների՝ գծանկար 5.23-ում:



Գծանկար 5.23. «Ցանկանում եք դառնալ սեփականատեր» հարցի պատասխանների տոկոսային նկարագիրը՝ ըստ բնակավայրերի և հանրապետության



Գծանկար 5.24. Սեփականատեր դառնալու ցանկությունը

Հաջորդ հարցը վերաբերում է մեր երկրի ապագան կերտողներին:

«Ինչպիսին եք ուզում տեսնել Ձեր երեխաներին» հարցին մասնակիցների ընդհանուր մասը պատասխանել է. «Կրթված»՝ 610-ը (53,6%-ը) և «Առողջ»՝ 539-ը (47,3%-ը): Քաղաքներից գրեթե բոլորում երրորդ տեղում է «գործունյա» լինելը, չորրորդ տեղում՝ «դաստիարակված» լինելը:


«Այլ տարբերակներ» շարքում նշվել են հետևյալ պատասխանները.

- հայրենասեր,
- ազգասեր,
- մեծերին հարգող,
- հավասարակշռված,
- հասկացող և գնահատող,
- մարդկությանը պիտանի,
- և այլն:

Հարցի պատասխաններն ըստ բնակավայրերի և հանրապետությունում տրված են աղյուսակ 5.22-ում, իսկ ընդհանրական պատկերը՝ գծանկար 5.31-ում:

Աղյուսակ 5.22. Պատասխանների տեղաբաշխումը նշված տարբերակների համաձայն՝ ըստ բնակավայրերի և հանրապետության, %

N	Պատճառը	Պատասխանների քանակը, %					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Գործունյա	316 (35,5)	21 (22,1)	8 (40,0)	14 (29,2)	28 (32,2)	387 (34,0)
2	Կրթված	462 (52,0)	53 (55,8)	15 (75,0)	29 (60,4)	51 (58,6)	610 (53,6)
3	Կամային	148 (16,6)	7 (7,4)	3 (15,0)	6 (12,5)	11 (12,6)	175 (15,4)
4	Միայն լավ հատկանիշներ ունեցող	174 (19,6)	24 (25,3)	5 (25)	7 (14,6)	18 (20,7)	228 (20,0)
5	Դաստիարակված	246 (27,7)	29 (30,5)	6 (30,0)	20 (41,7)	16 (18,4)	317 (27,8)
6	Ինքնուրույն	238 (26,8)	26 (27,4)	7 (35,0)	15 (31,3)	8 (9,2)	294 (25,8)
7	Առողջ	389 (43,8)	48 (50,5)	10 (50,0)	27 (56,3)	65 (74,7)	539 (47,3)
8	Շփվող	154 (17,3)	12 (12,6)	4 (20,0)	4 (8,33)	7 (8,0)	181 (15,9)
9	Այլ տարբերակ	214 (24,1)	29 (30,5)	8 (40,0)	12 (25,0)	16 (18,4)	279 (24,5)



Գծանկար 5.25. Պատրասխանների ընդհանրական պատկերը՝ ըստ փարբերակների

Ուրախալի է այն փաստը, որ մասնակիցների մեծ մասը առաջին հերթին ցանկանում է իրենց երեխաներին կրթված տեսնել, ինչը ապագայում բնակչության ինտելեկտուալ (մտավոր) մակարդակի բարձրացում է նախատեսում:


Հարցաշարի հաջորդ հարցը նպատակ ունի ճշտելու հեռուստատեսությամբ ցուցադրվող հաղորդումների այն շրջանակը, որն առավել գերադասելի է բնակչության մեծ մասի համար:

«Ինչ հաղորդումներ եք գերադասում դիտել հեռուստատեսությամբ» հարցման համաձայն՝ մասնակիցների մեծ մասի համար առավել գերադասելի են տեղեկատվական հաղորդումները (այդ են մատնանշել մասնակիցների 52,5%-ը) և ֆիլմերը (30,3%-ը), այնուհետև՝ զվարճալի ծրագրերն ու երաժշտական հաղորդումները:

Առավել ցայտուն պատկերը ներկայացված է աղյուսակ 5.24-ում և գծանկար 5.32-ում:

**Աղյուսակ 5.23.** Հեռուստատեսային հաղորդումների գերադասելիության աստիճանները մասնակիցների նախապայությունների համաձայն՝ ըստ բնակավայրերի և հանրապետության, %

N	Հաղորդումները	Նախապատվությունների քանակը ըստ շրջանների, %					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Տեղեկատվական	447 (50,3)	58 (61,1)	14 (70)	29 (60,4)	50 (57,5)	598 (52,5)
2	Զվարճալի	241 (27,1)	32 (33,7)	7 (35)	13 (27,1)	25 (28,7)	318 (27,9)
3	Սպորտային	151 (17,0)	17 (17,9)	4 (20)	8 (16,7)	14 (16,1)	194 (17,0)
4	Քաղաքական	118 (13,3)	15 (15,8)	2 (10,0)	8 (16,7)	14 (16,1)	157 (13,8)
5	Տնտեսական	170 (19,1)	20 (21,1)	3 (15)	4 (8,3)	7 (8,0)	204 (17,9)
6	Սոցիալական	67 (7,5)	10 (10,5)	2 (10,0)	7 (14,6)	7 (8,0)	93 (8,2)
7	Երաժշտական	192 (21,6)	38 (40,0)	6 (30)	14 (29,2)	30 (34,5)	280 (24,6)
8	Ֆիլմեր	253 (28,5)	47 (49,5)	5 (25)	18 (37,5)	22 (25,3)	345 (30,3)
9	Այլ տարբերակ	74 (8,3)	10 (10,5)	4 (20)	5 (10,4)	5 (5,7)	98 (8,6)



**Գծանկար 5.26.** Հեռուստատեսային հաղորդումների գերադասելիության ընդհանրական պատկերը

Այլ տարբերակների մեջ հարցվածները նշել են՝ երիտասարդական, ինտելեկտուալ խաղեր, տեսահոլովակներ և այլն:

35-րդ հարցով փորձ է արվում պարզելու բնակչությանն առավել անհանգստացնող խնդիրների շրջանակը:


«Ինչն է Ձեզ անհանգստացնում առավել շատ» հարցում նշված տարբերակներից, որոնք բերված են աղյուսակ 5.25-ում, առավել հուզող խնդիրներ են գների աճն ու գործազրկության սպառնալիքը: Պատասխանողներից 518-ը կամ նրանց ընդհանուր թվի 45,3%-ը ընտրել են «գների աճը» և 368-ը կամ մասնակիցերի ընդհանուր թվի 32,3%-ը՝ գործազրկության սպառնալիքը տարբերակը: Այս խնդիրները բնակչության և կառավարության համար ամենացավալի խնդիրներից են, որոնց լուծումը պայմանավորված է արտադրության զարգացմամբ և տնտեսական աճով: Այնուհետև առավել մտահոգիչ է կաշառակերությունը: Այս խնդրի քիչ թե շատ կարգավորման նպատակով կառավարությունը մշակել է հակակոռուպցիոն ծրագիր և իրականացնում է համապատասխան միջոցառումներ, որի արդյունքները կերևան մոտ ապագայում: Ներկայումս նկատվում են դրական տեղաշարժեր, և որոշ չափով սահմանափակվել են կոռուպցիայի մասշտաբները:

«Այլ պատասխաններ»-ի մեջ, որը, ի դեպ, նույնպես ծանրակշիռ է, նշվել են արտագաղթը, տնտեսական անկայուն վիճակը, կրթության նկատմամբ անտարբերությունը, իշխանությունները, կառավարության վերաբերմունքը, բանակը, մարմնավաճառությունը և այլն:

Հարցի պատասխանների արդյունքներն ըստ բնակավայրերի տրված են աղյուսակ 5.24-ում, իսկ ընդհանրական պատկերը՝ գծանկար 5.27-ում:

Աղյուսակ 5.24. *Բնակչությանն առավել անհանգստացնող խնդիրների վերաբերյալ հարցվածների կարծիքների ցուցանիշներն՝ ըստ բնակավայրերի և հանրապետության, %*

N	Խնդիրները	Պատասխանների քանակը / (%)					Ընդամենը, %
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Գների աճը	376 (42,3)	41 (43,2)	11 (55)	30 (62,5)	58 (66,7)	516 (45,3)
2	Հանցագործությունների աճը	137 (15,4)	11 (11,6)	4 (20)	7 (14,6)	23 (26,4)	182 (16,0)
3	Գործազրկության սպառնալիքը	274 (30,8)	35 (36,8)	8 (40)	20 (41,7)	31 (35,6)	368 (32,3)
4	Մշակույթի, հոգևոր արժեքների ձգնաժամը	163 (18,3)	14 (14,7)	-	9 (18,8)	6 (6,9)	192 (16,9)
5	Բժշկական սպասարկման ցածր մակարդակը	183 (20,6)	19 (20,0)	3 (15)	9 (18,8)	16 (18,4)	230 (20,2)
6	Կաշառակերությունը	184 (20,7)	23 (24,2)	5 (25,0)	12 (25,0)	34 (39,1)	258 (22,7)
7	Թմրամոլությունը	117 (13,2)	14 (14,7)	2 (10,0)	5 (10,4)	15 (17,2)	153 (13,4)
8.	Այլ տարբերակ	275 (30,9)	43 (45,3)	8 (40,0)	8 (16,7)	20 (23,0)	354 (31,1)



Գծանկար 5.27. Հուզող հարցերի ընդհանրական պատկերը՝ ըստ տոկոսների

Հարցաշարի հաջորդ 3 հարցերը վերաբերում են պետության արտաքին քաղաքականությանը: Դրանցից առաջին երկուսը շոշափում են այսօր առկա կարևորագույն խնդիրներից մեկը՝ Ղարաբաղյան հիմնախնդիրը: Առաջին հարցի նպատակն է պարզել, թե Ղարաբաղյան հարցի ինչ լուծումներ են նախընտրում մասնակիցները:

«Ձեր կարծիքով ինչպե՞ս պետք է լուծել Ղարաբաղյան հիմնախնդիրը» հարցը առաջարկում է լուծման 3 տարբերակ, ինչպես նաև հնարավորություն է տալիս առաջարկելու այլ տարբերակներ: Լուծման առաջարկվող տարբերակներն են.

1. բանակցությունների միջոցով՝ բացառելով փոխզիջումների տարբերակները,
2. բանակցությունների միջոցով՝ անհրաժեշտության դեպքում գնալով փոխզիջումների,
3. ոչ խաղաղ ճանապարհով,
4. այլ տարբերակ:

Հարցման արդյունքների համաձայն՝ մասնակիցների մեծ մասը՝ 49,2%-ը, նախընտրել է առաջին տարբերակը՝ բացառելով փոխզիջումները, 16,9%-ը՝ երկրորդը: Ուրախալի է, որ հարցվածների միայն չնչին քանակությունն է (0,6%-ը), որ նախընտրել է հարցի լուծման ոչ խաղաղ ճանապարհը: Այլ տարբերակներում հարցվողները առաջարկել են հետևյալը.

- բանակցությունների միջոցով ՄԱԿ-ի միջամտությամբ,
- օրենքի գերակայությամբ,
- ինքնաբերաբար կլուծվի,




- լուծում չեն տեսնում,
- ամեն գնով պետք է պահպանել մեր հողերը,
- դժվարանում են պատասխանել,
- տնտեսական, քաղաքական և ռազմական շահերը հաշվի առնելով,
- և այլն:

Հարցման արդյունքներն առավել տեսանելի են գծանկար 5.28-ում և աղյուսակ 5.25-ում:

**Աղյուսակ 5.25.** *Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման վերաբերյալ հարցվածների կարծիքների քանակական տեղաբաշխումը՝ ըստ բնակավայրերի և հանրապետության*

Քաղաքներ	Պատասխանները (քանակը)			
	Բանակցությունների միջոցով՝ բացառելով փոխզիջումների տարբերակը	Բանակցությունների միջոցով՝ անհրաժեշտության դեպքում գնալով փոխզիջումների	Ոչ խաղաղ ճանապարհով	Այլ տարբերակ
Երևան	423	165	2	262
Գյումրի	39	10	–	46
Եղեգնաձոր	13	2	–	6
Վանաձոր	27	6	1	11
Տաշիր	58	10	4	22
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>560</b>	<b>193</b>	<b>7</b>	<b>347</b>



**Գծանկար 5.28.** *Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման վերաբերյալ հարցվածների կարծիքների տեղաբաշխումը՝ ըստ բնակավայրերի և հանրապետության, %*

Ղարաբաղյան հիմնախնդիրը շոշափող երկրորդ հարցը վերաբերում է խնդրի լուծման ժամկետներին:


«Ձեր կարծիքով ե՞րբ կլուծվի Ղարաբաղյան հիմնախնդիրը» հարցում նախատեսված է պատասխանների 4 տարբերակ: Դրանք են՝

1. առաջիկա 3 տարիների ընթացքում,
2. առաջիկա 5 տարիների ընթացքում,
3. առաջիկա 10 տարիների ընթացքում,
4. առաջիկա 10 տարիների ընթացքում լուծում չի տրվի:

Հարցման արդյունքներն ըստ բնակավայրերի բերված են աղյուսակ 5.26-ում, իսկ ընդհանրական պատկերը տոկոսային հարաբերությամբ՝ գծանկար 5.35-ում:

Աղյուսակ 5.26. Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ժամկետների վերաբերյալ հարցման արդյունքների ամփոփումը՝ ըստ բնակավայրերի և հանրապետության, %

Քաղաքները	Պատասխանների քանակը, (%)			
	Առաջիկա 3 տարիների ընթացքում	Առաջիկա 5 տարիների ընթացքում	Առաջիկա 10 տարիների ընթացքում	Առաջիկա 10 տարիների ընթացքում լուծում չի տրվի
Երևան	95 (10,7)	103 (11,6)	169 (19,0)	506 (56,9)
Գյումրի	5 (5,3)	7 (7,4)	25 (26,3)	56 (58,9)
Եղեգնաձոր	1 (5,0)	4 (20,0)	6 (30,0)	9 (45,0)
Վանաձոր	3 (6,23)	5 (10,4)	13 (27,1)	25 (52,1)
Տաշիր	8 (9,2)	16 (18,4)	10 (11,5)	51 (58,6)
<b>Ընդամենը</b>	<b>112 (9,8)</b>	<b>135 (11,9)</b>	<b>223 (19,6)</b>	<b>647 (56,8)</b>




Գծանկար 5.29. Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ժամկետների վերաբերյալ հարցման ընդհանուր արդյունքները, %

Գծանկարից երևում է, որ հարցվածների մեծ մասը՝ 56,8%-ը, կարծում է, որ առաջիկա 10 տարիների ընթացքում հիմնախնդրին լուծում չի տրվի, այսինքն՝ Ղարաբաղյան հարցը մոտ ապագայում լուծելի խնդիր չէ:


Հարցաշարի հաջորդ հարցը հետապնդում է ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական նպատակներ և մեր հանրապետության համար կարևորագույն խնդիրներից մեկն է:

«Կո՞ղմ եք արդյոք Հայաստան-Թուրքիա սահմանի բացմանը» հարցում առաջարկվում են երեք տարբերակներ՝ «այո», «ոչ» և «այլ տարբերակ», յուրաքանչյուր պատասխան ակնկալում է պարզաբանում՝ «ինչո՞ւ»:

Հարցման արդյունքները պատճառաբանություններով բերված են գծանկար 5.30-ում, իսկ ընդհանրական պատկերը ըստ բնակավայրերի և հանրապետության՝ գծանկար 5.31-ում:



Գծանկար 5.30. Հայաստան-Թուրքիա սահմանի բացման վերաբերյալ հարցվածների պատասխանների փոկոսային ցուցանիշները՝ ըստ բնակավայրերի և հանրապետության, %



**Գծանկար 5.31.** Հայաստան-Թուրքիա սահմանի բացման վերաբերյալ հարցվածների պատասխանների քանակական ցուցանիշները՝ ըստ պարզաբանումների

Գծանկարից երևում է, որ բոլոր քաղաքներում էլ պատկերը գրեթե նույնն է, այսինքն՝ առաջնությունը տրվել է «այո» պատասխանին: Այստեղից եզրակացություն.

Մասնակիցների մեծ մասը կողմ է Հայաստան-Թուրքիա սահմանի բացմանը և հիմնականում այն կարծիքին է, որ դա կհանգեցնի առևտրատնտեսական կապերի բարելավման, տնտեսական զարգացման, գների իջեցման և այլ դրական տեղաշարժերի:

**7. Հայաստանի համար ամենակարևոր հիմնախնդիրների բացահայտում:**  
Հարցաշարի 41-րդ հարցը ընդհանրական, վերլուծական, ամփոփիչ բնույթի է: «Ձեր կարծիքով ո՞րն է ներկայումս Հայաստանի համար ամենակարևոր հիմնախնդիրը» հարցը առաջարկում է 18 տարբերակ և նպատակ ունի ճշտելու առաջին 10 կարևորագույն խնդիրները՝ առաջարկելով նշել բոլոր հնարավոր պատասխանները, դրանց տալով 1-ից մինչև 10 կարևորության գնահատականները (1՝ ամենակարևոր հիմնախնդիրը, 10՝ ամենանվազ հիմնախնդիրը):

Հարցման արդյունքներն արտացոլված են աղյուսակ 5.27-ում:

**Աղյուսակ 5.27.** Հայաստանի համար կարևոր հիմնախնդիրները՝ ըստ կարևորության աստիճանների (գնահատված 1-18 տարբերակներով)

N	Հիմնախնդիրները	Կարևորության աստիճանները					Ընդհանրական պատկերը
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
	1	2	3	4	5	6	7
1	Պետության կողմից վարվող սոցիալական քաղաքականությունը	1	6	6	4	6	4
2	Սպառողական գների կայունությունը	6	3	4	8	8	6
3	Արցախի հիմնախնդրի լուծումը	5	10	1	7	3	5
4	Խաղաղությունը	2	4	5	1	1	1
5	Աղքատության մակարդակի նվազեցումը	4	2	2	2	4	2
6	Կոռուպցիայի դեմ պայքարը	7	8	9	10	7	9
7	Քաղաքական կայունությունը	10	12	12	12	9	12
8	Աշխատատեղերի ստեղծումը	3	1	3	5	2	3
9	Կրթական համակարգը	8	7	8	6	5	7
10	Բնապահպանությունը	12	13	13	14	12	13
11	Տեռորիզմը	16	16	16	16	15	16
12	Առողջապահությունը	9	5	7	3	10	8
13	Հանցագործությունների թվի աճը	14	14	14	13	13	14
14	Պետական ծառայության համակարգը	11	11	10	11	11	11
15	Տնտեսական աճը	12	9	11	9	14	10
16	Ջրային ռեսուրսների կառավարումը	17	18	15	15	16	15
17	Զգիտեն	18	15	17	17	17	17
18	Այլ տարբերակ	15	17	18	18	18	18

Եթե աշխատենք դուրս գրել առաջին կարևորություն ունեցող 10 հիմնախնդիրներն ըստ կարևորության աստիճանների, ապա այդ աղյուսակը կունենա հետևյալ տեսքը.

Խաղաղությունը	1
Աղքատության մակարդակի նվազեցումը	2
Աշխատատեղերի ստեղծումը	3
Պետության կողմից վարվող սոցիալական քաղաքականությունը	4
Արցախի հիմնախնդրի լուծումը	5
Սպառողական գների կայունությունը	6
Կրթական համակարգը	7
Առողջապահությունը	8
Կոռուպցիայի դեմ պայքարը	9
Տնտեսական աճը	10

Աղյուսակից երևում է, որ առաջին կարևորության հարցերը, «խաղաղություն»-ից բացի, **աղքատության մակարդակի նվազեցումն է և աշխատատեղերի ստեղծումը**: Այսօր դրանք Հայաստանի բնակչությանը հուզող հարցերի «հարցն են»: Եվ գրեթե բոլոր բնակավայրերում մասնակիցները կարևորել են հենց այդ հարցերը՝ որպես ամենաառաջնային:

Հարցաշարի հաջորդ հարցը նպատակ ունի ճշտելու խմելու ջրի և ջրահեռացման դիմաց վճարումների մատչելիությունը ընտանեկան բյուջեի միջին ամսական եկամտի տեսանկյունից:


**«Որքան է կազմում Ձեր ընտանիքի կողմից ամսվա ընթացքում ծախսված խմելու ջրի և ջրահեռացման դիմաց հաշվարկված վճարի տեսակարար կշիռը ընտանեկան բյուջեի միջին ամսական եկամտի գումարում»** հարցը ենթադրում է հետևյալ պատասխանները.

1. մինչև 1%,
2. 1-2%,
3. 2-3%,
4. 3-4%,
5. 4-5%,
6. ավելի քան 5%:

Հարցման քանակական արդյունքները ըստ բնակավայրերի և հանրապետության տրված են աղյուսակ 5.28-ում, իսկ ընդհանրական պատկերը տոկոսային հարաբերությամբ՝ գծանկար 5.32-ում:

**Աղյուսակ 5.28.** *Խմելու ջրի և ջրահեռացման դիմաց վճարի տեսակարար կշիռը ընտանեկան բյուջեի միջին ամսական եկամտի կազմում*

Քաղաքները	Պատասխանների քանակը՝ ըստ տարբերակների, %					
	մինչև 1%	1-2%	2-3%	3-4%	4-5%	ավելի քան 5%
Երևան	135 (15,2)	189 (21,3)	159 (17,9)	137 (15,4)	102 (11,5)	144 (16,2)
Գյումրի	23 (24,2)	28 (29,5)	16 (16,8)	8 (8,4)	7 (7,4)	10 (10,5)
Եղեգնաձոր	2 (10)	6 (30)	3 (15)	5 (25)	2 (10)	2 (10)
Վանաձոր	8 (16,7)	6 (12,5)	10 (20,8)	5 (10,4)	7 (14,6)	10 (20,8)
Տաշիր	14 (16,1)	1 (1,2)	15 (17,2)	24 (27,6)	11 (12,6)	5 (5,8)
Ընդամենը	182 (16,0)	230 (20,2)	203 (17,8)	179 (15,7)	129 (11,3)	171 (15,0)



**Գծանկար 5.32.** *Հանրապետությունում խմելու ջրի և ջրահեռացման դիմաց վճարի տեսակարար կշիռն ընտանեկան բյուջեի միջին ամսական եկամտի կազմում, %*

Գծանկարից երևում է, որ մասնակիցների մեծ մասը ամսվա ծախսված խմելու ջրի և ջրահեռացման դիմաց վճարում է ընտանեկան բյուջեի միջին ամսական եկամտի 1-2%-ը, մեծ է նաև այն մասնակիցների թիվը, որոնք ջրի դիմաց վճարում են ամսական եկամտի ավելի քան 5%-ը (15%):


Հարցաշարի հաջորդ հարցը վերաբերում է բնապահպանական հիմնախնդրին:

«Ինչ եք կարծում, որն է Հայաստանի համար ամենակարևոր բնապահպանական հիմնախնդիրը» հարցն առաջարկված տարբերակներով և պատասխանների քանակական ցուցանիշներով բերված է աղյուսակ 5.30-ում, իսկ ընդհանրական պատկերը՝ գծանկար 5.39-ում:

Աղյուսակ 5.30. Հայաստանի համար ամենակարևոր բնապահպանական հիմնախնդիրները (քանակական ցուցանիշները՝ ըստ տարբերակների)

N	Հիմնախնդիրները	Պատասխանները / (%)					Ընդամենը, (%)
		Երևան	Գյումրի	Եղեգնաձոր	Վանաձոր	Տաշիր	
1	Ստորգետնյա ջրային ռեսուրսները	169 (19,0)	5 (5,3)	3 (15)	9 (18,8)	13 (14,9)	199 (17,5)
2	Օդի աղտոտումը	358 (40,3)	38 (40,0)	8 (40)	15 (31,3)	43 (49,4)	462 (40,6)
3	Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացումը և կենսաբազմազանության պահպանությունը	263 (29,6)	37 (38,9)	9 (45)	8 (16,7)	22 (25,3)	339 (29,8)
4	Ազգային պարկերի և արգելոցների պահպանությունը	152 (17,1)	15 (15,8)	6 (30)	5 (10,4)	12 (13,8)	190 (16,7)
5	Ճահճակալած տարածքների հետ կապված հիմնախնդիրները	64 (7,2)	2 (2,1)	1 (5)	-	8 (9,2)	75 (6,6)
6	Աղակալած հողերի հետ կապված հիմնախնդիրները	70 (7,9)	3 (3,2)	3 (15)	1 (2,1)	3 (3,5)	80 (7,0)
7	Երաշտների դեմ պաշտպանվածությունը	87 (9,8)	9 (9,5)	4 (20)	7 (14,6)	5 (5,8)	112 (9,8)
8	Հեղեղումներից պաշտպանությունը	34 (3,8)	3 (3,2)	2 (10)	6 (12,5)	8 (9,2)	53 (4,7)
9	Բնական ռեսուրսների դեգրադացիան	113 (12,7)	5 (5,3)	2 (10)	5 (10,4)	9 (10,3)	134 (11,8)
10	Չգիտեմ	74 (8,3)	12 (12,6)	-	10 (20,8)	14 (16,1)	110 (9,7)
11	Այլ տարբերակ	53 (6,0)	3 (3,2)	1 (5)	-	4 (4,6)	61 (5,4)





**Գծանկար 5.39.** Հայաստանի համար ամենակարևոր բնապահպանական հիմնախնդիրները, %

Գծանկարից երևում է, որ մասնակիցների մեծ մասը (40,6%), կարևորել է **օդի աղտոտումը, ինչպես նաև Սևանա լճի մակարդակի բարձրացումը և կենսաբազմազանության պահպանումը (29,8%-ը)**՝ որպես ամենակարևոր բնապահպանական հիմնախնդիրներ:

**Եզրակացություններ և առաջարկություններ:** Հետազոտության արդյունքների վերլուծությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին, որոնցից և բխում են կատարված առաջարկությունները:

1. Հայաստանի բնակչության համար ամենակարևոր խնդիրը **աշխատանքի առկայությունն է, աշխատատեղերի ստեղծումը:** Այդ խնդիրը կարևորել են հարցմանը մասնակցած բոլոր քաղաքներում: Աշխատատեղերի ստեղծումը երկրում կենսամակարդակի բարձրացման համար ամենաառաջնային գործոնն է: Համաձայն հարցման՝ 1139 մասնակիցներից ընդամենը 592-ն (52%) է աշխատում, ընդ որում՝ նրանցից 435-ը կամ մասնակիցների ընդհանուր թվի 38,2%-ն է, որ աշխատում է իր մասնագիտությամբ, մասնագիտությամբ չաշխատելու պատճառը համապատասխան աշխատանքի բացակայությունն է, ցածր աշխատավարձը: Մասնակիցներից աշխատանք չունեցող, բայց աշխատել ցանկացող 568-ը (հարցին պատասխանած մասնակիցների 51,7%-ը) որպես հիմնական պատճառ նշել են հենց աշխատատեղերի բացակայությունը: Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ է դառնում, որ **աշխատանքի**

**բացակայությունն ու ցածր աշխատավարձն են**, որ հանրապետությունից հեռանալու հիմնական պատճառ կարող են դառնալ:

2. Ուսումնական-կրթական ու մշակութային համակարգում իրավիճակն այսպիսին է. 17–25 տարեկանների մեջ միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում չսովորելու հիմնական պատճառը **ուսման վարձն է**: Պատկերը նույնն է նաև մշակույթի բնագավառում: Հարցվածների մեծ մասը երեխաների մշակույթով չզբաղվելը պատճառաբանել է **երաժշտական և նկարչական դպրոցների վարձավճարի բարձր լինելով**:

3. Քննարկվող հաջորդ գլոբալ հարցը մատակարարվող ծառայություններից բնակչության օգտվելու հնարավորությունն ու դրա հետ կապված հարցերն են:

- Բուժօգնականների ծառայություններից հիմնական դժգոհությունները դարձյալ կրում են ֆինանսական բնույթ: Մասնակիցների 21,3%-ը դժգոհում է դեղորայքի բարձր գներից և մասնագետ բժիշկների բացակայությունից (23,2%):
- Էլեկտրաէներգիայի մատակարարումներից և նրա սպառման գներից բնակչության (44,1%-ի) գժգոհությունների հիմնական պատճառը էլեկտրաէներգիայի բարձր գներն են:

Վերը նշված խնդիրները վկայում են բնակչության ցածր գնողունակության մասին, ինչը հետևանք է հանրապետությունում տիրող սոցիալական ծանր վիճակի, աշխատատեղերի բացակայության:

- Խմելու և ոռոգման ջրի մատակարարումից հիմնական դժգոհությունների պատճառը խմելու ջրի հաճախակի ընդհատումներն են և ջրի ոչ մաքուր լինելը: Խնդիրը, իհարկե, մոտ ապագայում լուծելի է, և այդ ուղղությամբ արդեն որոշակի աշխատանքներ կատարվում են:
- Տրանսպորտային ծառայություններից գոհ են մասնակիցների ընդամենը 26,7%-ը. դժգոհությունների հիմնական պատճառը տրանսպորտի աշխատանքի գրաֆիկն է, տրանսպորտային միջոցների ծանրաբեռնվածությունը և նրանց անբավարար քանակը: Տրանսպորտային խնդիրը լուծում կստանա, եթե երթուղիներ մտցվեն մարդատար ավտոբուսներ բոլոր ուղղություններով՝ կրճատելով փոքր մասշտաբի անսարք և շահագործման ժամկետն անցած մեքենաները և ազատելով երթուղիները ծանրաբեռնվածությունից: Առաջարկում ենք նաև սահմանել աշխատանքի հետևյալ ժամանակացույցը. աշխատանքային «պիկ» ժամերին տրանսպորտային միջոցների երթևեկության հաճախականության ավելացում՝ թույլատրելով որոշակի մեքենաների երթուղի դուրս գալ միայն այդ ժամերին (այդ ռեժիմով):

4. Քաղաքական դաշտում պատկերը տխուր է: Հարցվածների ընդհանուր թվի 65,3%-ը առկա կուսակցություններից ոչ մեկին չի տեսնում քաղաքական առաջնորդի (լիդերի) դերում, որը կարող է շտկել երկրում տիրող իրավիճակը: Կուսակցությունները, կարծում ենք, պետք է վերանայեն իրենց դիրքորոշումները, առաջ քաշեն գործուն ծրագրեր ստեղծված իրավիճակը բարելավելու համար:

Երկրի նախագահի թեկնածուի դերում նույնպես մասնակիցների մեծ մասը ընտրության թեկնածու չի տեսնում, համեմատաբար շատ ձայներ (37,5%) է հավաքել երկրի ներկայիս նախագահը:

5. Այսօր բնակչությանն առավել շատ մտահոգում է **աշխատանքի առկայությունը**: Մասնակիցների ընդհանուր թվի մոտ 50%-ը նշել է այդ գործոնը որպես բնակչությանն առավել շատ անհանգստացնող հիմնախնդիր: Մարդկանց մեջ կորել է վստահությունը վաղվա օրվա հանդեպ: Այսօր աշխատանք ունեցողը վաղը կարող է գործազուրկ դառնալ:

Մասնակիցներից շատերը (34,9%-ը) որպես բնակչությանն առավել մտահոգող հարց նշել են **առանց պատերազմի ապրելը**», ինչն անմիջականորեն կապված է Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման հետ: Մասնակիցների մեծ մասը հարցմանը մասնակցած բոլոր քաղաքներում Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը տեսնում է բանակցությունների մեջ՝ առանց փոխզիջումների, բայց այդ խնդիրն առաջիկա 10 տարիների ընթացքում լուծում չի գտնի:

6. Հայաստան-Թուրքիա սահմանի բացմանը կողմ է մասնակիցների մեծ մասը, նրանք կարծում են, որ այն կբարելավի առևտրատնտեսական կապերը, կնպաստի գների իջեցմանը, կզարգանա փոքր բիզնեսը, այսինքն՝ տնտեսական կյանքում կնկատվեն դրական տեղաշարժեր:

Կարծում ենք, որ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ապրանքների ներհոսքը Թուրքիայից կարող է հանգեցնել տեղական ապրանքների դժվար իրացման, և անհավասար մրցակցության պայմաններում կարող է տուժել հայրենական տնտեսությունը:

7. Հետազոտության հիմնական նպատակներից մեկը մեր երկրի համար 10 ամենակարևոր հիմնախնդիրների ճշտումն է: Հարցման արդյունքներով պարզ դարձավ, որ առաջին 3 տեղերում են.

- խաղաղության պահպանումը,
- աղքատության մակարդակի նվազեցումը,
- աշխատատեղերի ստեղծումը:

Ամենակարևոր բնապահպանական խնդիրներն են օդի աղտոտումը, ինչպես նաև Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացումն ու կենսաբազմազանության պահպանումը:

Այսպիսով՝ աշխատատեղերի ստեղծումը և աշխատավարձերի բարձրացումն այսօր մեր երկրի համար ամենահրատապ մարտահրավերն է: Դրանց գոնե մասնակի լուծմամբ բնակչությանը հուզող շատ հիմնախնդիրներ կմեղմանան, այդ թվում նաև աղքատության մակարդակի նվազումը: Սակայն այս խնդիրների լուծումը կախված է երկրի տնտեսական վիճակի բարելավման, արդյունաբերության զարգացման, հարկային դաշտի բարելավման, փոքր ու միջին բիզնեսի զարգացման հետ: Ներկայումս կառավարությունն այդ ուղղությամբ որոշակի քայլեր է ձեռնարկում: Նախ պետք է ձևավորել, միջին խավ, և դրան զուգընթաց հետզհետե կլուծվի նաև աշխատատեղերի խնդիրը:

## **ԳԼՈՒԽ 6. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆ ԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

### **6.1. Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի բարելավման հիմնախնդիրները**

Վերջին տարիներին անցկացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունները վկայում են, որ հանրության տրամադրությունների վրա էական ազդեցություն են թողնում երկրի տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, որոնք իրենց հերթին պայմանավորված են տնտեսության հիմնական ոլորտների վերելքներով ու վայրէջքներով:

Համընդհանուր օրինաչափություն է, որ մարդիկ գոհ են լինում ՀՀ կառավարությունից, երբ առկա է տնտեսական վերելք և, ընդհակառակը, դժգոհ են, երբ տնտեսությունը հարաբերական անկում է ունենում, ինչի հետևանքով դժվարանում են ապրուստի միջոցների ձեռքբերման պայմանները, և նկատվում է կյանքի որակի ու կենսամակարդակի զգալի նվազում: Ուստի, ամենևին էլ պատահական չէ, որ երկրի տնտեսական դրությունը մտահոգում է շատերին: Մարդկանց հատկապես մտահոգում են գործազրկության բարձր մակարդակը, նոր աշխատատեղեր ստեղծելու դժվարությունները, արտադրության ծավալների կրճատումը, ինֆլյացիայի բարձր աստիճանը, ապրանքների և ծառայությունների, հատկապես՝ պարենամթերքի և հանրային ծառայությունների գների և սակագների մակարդակի անընդհատ բարձրացումը, աղքատության խորացումը, ապագայի նկատմամբ հավատի կորուստը:

Գրեթե բոլոր երկրներում և բոլոր ժամանակներում, անկախ այն հանգամանքից, թե երկրի զարգացման ճանապարհին ինչ ծավալի ու ինչ բնույթի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և մշակութային հիմնախնդիրներ են լուծվում, շրջանառվում է այն միտքը, որ ՀՀ կառավարությունը կարող է անել ավելին՝ գործազրկության մակարդակի նվազեցման, տնտեսության մեջ կապիտալ ներդրումների ներգրավման, բնակչության իրական եկամուտների ավելացման գործում և մի շարք այլ կարևոր ոլորտներում: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս աշխատատեղերի պահպանումը և ավելացումը դարձել է կառավարության գործունեության գնահատման հիմնական չափանիշը: Աշխատատեղ չունենալը կամ այն կորցնելու ռիսկն անհանգստացնում է բոլորին, նույնիսկ նրանց, ովքեր այսօր ունեն աշխատատեղ: Այս վիճակը համամոլորակային է, քանի որ աշխարհը դարձել է անկայուն և անկանխատեսելի: Արդյունքում՝ անորոշ իրավիճակներում հայտնի չեն վաղվա իրադարձությունները, իսկ անորոշության զգացումը կորցնում է հավատն ու վստահությունն ամեն ինչի՝ ընտանիքի, իշխանության, երկրի, կյանքի և արարելու ու ընդհանրապես ապագայի նկատմամբ: Առավել ևս, որ ներկայումս (համաշ-

խարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո) աշխարհն ականատես է դարձել գործազրկության ամենաբարձր մակարդակներից մեկին, ինչն առաջին հայացքից կարող էր որակվել որպես զարմանալի և անսպասելի նորություն՝ վերջին 50 տարվա ընթացքում: Այս երևույթն ունի իր բացատրությունը՝ արտադրողականության շեշտակի բարձրացում վերջին տասնամյակներում, որը ներհատուկ չէր նախորդ դարերին: Երևույթների և իրերի այսպիսի ընթացքն ու զարգացումը անսպասելի էր, որը միանգամից առաջ բերեց բազմաթիվ սոցիալական և տնտեսական դժվարություններ: Բնական է նաև, որ նման պայմաններում և իրավիճակում երկրում կապիտալի տերերի և վարձու աշխատողների շահերը չեն համընկնում: Վերջիններս կարծում են, որ երկրի հարստությունն անարդար է բաշխված, և այս անարդարությունից էլ տուժում են հիմնականում վարձու աշխատողները, ու խորանում է աշխատանքի և կապիտալի հակասությունը: Այդ պատճառով էլ հասարակության մեջ մշտապես աճում է այն մարդկանց թվաքանակը, ովքեր կարծում են, որ վարձու աշխատողներին ավելի շատ ազատություն պետք է տրվի՝ երկրում հարստության բաշխման և վերաբաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելու և հսկողություն սահմանելու գործում:

Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային ժամանակահատվածում աչքի է ընկել ավանդաբար կրթված և որակավորում ստացած աշխատուժով: Հանրապետությունում աշխատանք չունեցող բնակչության մի մասն արդեն փնտրել և այժմ էլ շարունակում է փնտրել աշխատանք հանրապետությունից դուրս, իսկ մի մասն էլ չի աշխատում ըստ մասնագիտության: Այս և մի շարք այլ պատճառներով, որոնցից կարևորագույնը պայմանավորված է տնտեսության կառուցվածքով, հանրապետությունում առկա է աշխատուժի օգտագործման ցածր արդյունավետություն, ինչի հետևանքով աշխատանքի արտադրողականությամբ զիջում ենք ոչ միայն մյուս զարգացած, այլև նախկին համայնավարական շատ երկրներին:

Դեպի այլ երկրներ աշխատուժի արտագաղթի բարձր ցուցանիշները վկայում են նաև այն մասին, որ տնտեսությունը կարիք ունի զգալի կապիտալ ներդրումների ոչ միայն արտադրական ոլորտում, այլև սոցիալական ենթակառուցվածքներում: Կարճ ասած՝ հանրապետությունը կարիք ունի կառավարման որակի բարելավման, ինչպես նաև տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում և հասարակական կյանքում արդիականացման և բարեփոխումների:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը զարգացման այնպիսի փուլում է, երբ առևտրատնտեսական և գիտատեխնիկական կապերը բոլոր գործընկեր երկրների հետ պետք է ամրապնդվեն՝ հիմք ընդունելով փոխադարձ վստահությունը և իրականացվող գործարքների երկկողմանի շահավետությունը: Հայաստանի համար բավականին հուսալի գործընկերներ են հատկապես Եվրոպական երկրները: Նկատի ունենք այն հանգամանքը, որ մեր հանրապետությունը պետք է կարողանա իր համար կարևոր դասեր քաղել այդ երկրների զարգացման տնտեսական պատմությունից: Գտնվելով աշխարհագրական անբարենպաստ դիրքում՝ անցած կարճ ժամանակահատվածում ՀՀ-ն ամուր և կայուն կապեր է հաստատել Եվրոպական բազմաթիվ երկրների հետ՝ դրանով իսկ իրագործելով կարևոր տնտեսական ու քաղաքական նպատակներ:

Հանրապետության և եվրոպական երկրների միջև զարգացող փոխշահավետ առևտրատնտեսական ու գիտատեխնիկական համագործակցությունն անշուշտ կնպաստի երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հիմնախնդիրների լուծմանը: Այդ իսկ պատճառով էլ հատկապես երկկողմանի հարաբերությունների հիմնական ուղղությունը դեպի առևտրի և տնտեսական համագործակցության նպատակ արդեն ձեռք բերված երկկողմանի կապերի շարունակականությունն ու նոր ծրագրերի զարգացումն է:

Շուկայական տնտեսության արդի պայմաններում և մեր երկրի զարգացման յուրահատկություններից ելնելով՝ ամենևին էլ ձիշտ մոտեցում չէ տնտեսության հեղափոխական առաջընթացի նոր ուղիներ փնտրելը կամ հորինելը: Ավելի արդիական է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր նպատակային ծրագրի մշակումը: Մեր տնտեսության հիմնախնդրի լուծման ամենախելամիտ ճանապարհներից մեկն այլ երկրների զարգացման և տնտեսության կառավարման կատարելագործման փորձի վերլուծությունն է ու համապատասխան դասեր քաղելը: Անհրաժեշտ է ուսումնասիրել այն երկրների տնտեսությունների զարգացումը և փորձը, որոնք նույնպես իրենց անցած ճանապարհին զգալի վայրիվերումներ են ունեցել, սակայն կուտակելով դիմադրողականության լուրջ պաշար՝ կարողացել են դուրս գալ ստեղծված ծանր ու դժվարին սոցիալ-տնտեսական իրավիճակից:

Առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հատկապես այս երկրների տնտեսական բարեփոխումների դրական կողմերին, ինչպես նաև հաշվի առնելով մեր երկրի ազգային առանձնահատկությունները՝ հնարավոր է գտնել տնտեսության զարգացման օպտիմալ տարբերակ: Այս համատեքստում հատկապես վճռորոշ է լինելու մեր զարգացման գրադիենտի ընտրությունը «ԵվրԱզԷս»-«Եվրոպա» կողմնորոշումների համակարգում: Ինքնուրույն հետաքրքրության և շատ հիմնախնդիրների հարցում կանխորոշող լուծումներ պարունակող այս հարցում անհրաժեշտ է ունենալ խորքային պատկերացումներ աշխարհաքաղաքական հնարավոր տեղաշարժերի ու զարգացումների մասով: Այդուհանդերձ, հաշվի առնելով առաջիկա տարիների տեսանելի զարգացումները՝ մենք հակված ենք բազմակողմ կողմնորոշմանը առաջին հերթին ինչպես դեպի Արևելք, այնպես էլ Արևմուտք: Համաշխարհային տնտեսությունում զարգացման ինչպիսի ուղղություն էլ որդեգրելու լինենք, առաջին հերթին անհրաժեշտ է թողարկել այնպիսի ապրանքներ և ծառայություններ, որոնք հետաքրքրություն ու պահանջարկ են ներկայացնում արտաքին շուկաներում: Սակայն հարց է ծագում. իսկ այդպիսին է ՀՀ տնտեսությունը:

Ներկայիս հայ հասարակության և Հայաստանի տնտեսության բնորոշումներից մեկը կարող է լինել ոչ թե արտադրող, այլ «սպառող հասարակություն և տնտեսություն» արտահայտությունը:

Իսկ ինչ տարբերություն «արտադրող» և «սպառող» հասարակությունների միջև, չէ որ ի վերջո բնության մեջ չկա այնպիսի հասարակություն, որը միայն արտադրում է կամ միայն սպառում: Ավելին՝ ովքեր ծանոթ են տնտեսագիտության զարգացման աղյուսակին, գիտեն, որ որևէ երկրում տնտեսության կամ նրա ներսում ցանկացած ապրանքի կամ ծառայության վերարտադրության չորս փուլե-

րից առաջինն արտադրությունն է, իսկ վերջինը՝ սպառումը: Իսկ դա նշանակում է, որ ցանկացած արտադրություն կազմակերպվում է՝ նպատակ ունենալով սպառումը: Կամ այլ կերպ՝ վերարտադրական ցանկացած գործընթացում սպառումը արտադրության շարժիչ ուժն է և դրա վերջնական նպատակը: Սակայն մյուս կողմից՝ եթե չկա արտադրություն, և չկա դրա արդյունքը (հասկանանք թողարկված ապրանքը կամ բարիքը), ապա չի կարող լինել նաև սպառում: Արտադրության և սպառման (մյուս երկու վերարտադրական, ըստ էության, միջնորդական կամ օժանդակ նշանակություն ունեցող երկու փուլերի հետ միասին) այս դիալեկտիկական միասնությունն ու հակասությունն է ընկած յուրաքանչյուր հասարակության ապրելու և գոյատևելու հիմքում: Այդ ճանապարհով է կյանքը շարունակվում, հարատևում և վերարտադրվում: Այսինքն՝ ինչպես առանց արտադրության չկա սպառում, այնպես էլ առանց սպառման չկա արտադրություն: Սրանք նույն մեդալի երկու կողմն են կամ, ինչպես կասեին հին հույները, հասարակության զարգացման ալֆան և օմեգան (սկիզբը և վերջը): Ու թեև անհիշելի ժամանակներից մարդիկ վիճաբանում են, թե որն է ավելի կարևոր՝ արտադրությունը, թե սպառումը, սակայն այդ վեճն այդպես էլ չլուծվեց և շարունակվում է մինչ օրս՝ չբերելով և ոչ մի կողմին առավելություն կամ հաղթանակ: Զխորանալով մասնագիտական այդ գրովսկոտրուկի բոլոր կողմերի մեջ՝ ընդամենը նշենք, որ ամենևին էլ դրանք միմյանց չպետք է հակադրել կամ մեկը կարևորել մյուսից: Մանավանդ որ մարդկության ոչ հեռու անցյալն ունեցել է զարգացման՝ «արտադրողն է որոշում ամեն ինչ» բանաձևով առաջնորդվող մի ամբողջ տնտեսական-քաղաքական համակարգ (այն ընկած էր նախկին Խորհրդային Միության և մյուս համայնավարական երկրների տնտեսության զարգացման հիմքում): Պատմական ասպարեզից համայնավարության հեռանալուց հետո արդեն քսան տարի է, որ նույնիսկ նախկին համայնավարական երկրներում գործում է այլ կարգախոս՝ «Սպառողն է որոշում ամեն ինչ» (այս բանաձևը հասարակական գիտակցության մեջ հայտնի է որպես «Սպառողը միշտ իրավացի է» տառադարձմամբ): Ակնհայտորեն թե՛ աշխարհում և թե՛ մեր հանրապետությունում խորը թյուրիմացության մեջ են այդպես մտացողները, քանի որ այսպիսի մոտեցման կամ այդպիսի նշանաբանով առաջնորդվելը հանգեցնում է արտադրողի դերի թերագնահատմանը: Այսպիսի մոտեցմամբ տնտեսության կազմակերպելու հետևանքն այսօրվա աշխարհի տնտեսության տխուր վիճակն է, որը մեկ բառով կոչվում է ճգնաժամ: Խոսքը դեռևս 2008 թվականի կեսից սկսած՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի մասին է, որը ոչ թե մեղմացել է, այլ ընդհակառակը՝ ավելի խորացել և «պարտքի փոսի» մեջ է գցել այս աշխարհի խոշորագույն տնտեսաքաղաքական միություններից մեկին՝ Եվրամիությանը՝ սպառնալով ներսից պայթեցնել այդքան գովերգվող մարդկային քաղաքակրթության եվրոպական ձեռքբերումը:

Եվ եթե փորձենք հասկանալ ճգնաժամի իմաստն ավելի պարզեցված տեսանկյունից, ապա պետք է օգտագործենք տնտեսագետներին քաջ հայտնի «երկրի վճարային հաշվեկշիռ» հասկացությունը, որը բնութագրում է տվյալ երկրի ու աշխարհի տնտեսական փոխհարաբերությունների արդյունքները կամ հետևանքները: Այն կարող է լինել ակտիվ կամ դրական (երբ տվյալ երկիրն աշխարհին կամ մյուս երկրներին տալիս է ավելի շատ ապրանքներ, ծառայու-

թյուն, կապիտալ, աշխատուժ, քան ստանում է նրանից), այսինքն՝ այդ հարաբերության հետևանքը հոգուտ տվյալ երկրի է, իսկ այդ փոխհարաբերությունների հետևանքը կարող է լինել և՛ դրական, և՛ պասիվ կամ բացասական, երբ տեղի ունեն հակառակ զարգացումները:

Ցանկացած երկրի տնտեսական կապերն այլ երկրների հետ իրենց արտացոլումն են գտնում վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը տվյալ երկրի միջազգային տնտեսական հարաբերություններին մասնակցության մասին տեղեկատվության կարևոր աղբյուր է, որի միջոցով հնարավոր է բացահայտել ինչ-որ երկրի մասնակցության ծավալներն ու որակը, ինչպես նաև արտաքին տնտեսական կապերը: Վճարային հաշվեկշիռը ցույց է տալիս յուրաքանչյուր երկրի ֆինանսական վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Այն արտացոլում է ապրանքների, ծառայությունների, եկամուտների, տրանսֆերտների և ֆինանսների շարժի հետ կապված բոլոր արտաքին տնտեսական գործառնությունները, որոնք որոշակի ժամանակահատվածում իրականացվում են տվյալ երկրի ու մյուս երկրների ռեզիդենտների միջև:

Վճարային հաշվեկշիռը հնարավորություն է ընձեռում գնահատելու երկրի արժույթային և ֆինանսական վիճակը, կատարելու վերլուծություններ և դրանց հիման վրա էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացը: Այսպես՝ տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն է թողնում այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին կապիտալի միջազգային հոսքերն են: Ժամանակակից պայմաններում ինչպես միջազգային արժույթային, այնպես էլ փոխատվական կապիտալի շուկաներում գործարքների ծավալներն այնքան են ավելացել, որ մի քանի անգամ գերազանցում են միջազգային առևտրի ծավալները:

Ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում անընդհատ խորացող ու զարգացող աշխատանքի միջազգային բաժանումն ավելի ու ավելի է ուժեղացնում ազգային տնտեսությունների փոխկապվածությունն ու փոխպայմանավորվածությունը: Վերջինս իրականում դրսևորվում է ապրանքների ու ծառայությունների արտահանման ու ներմուծման, ներդրումների, դրամական միջոցների փոխանցումների և այլ գործարքների միջոցով: Դրանք միջպետական տնտեսական հարաբերություններն են, որոնք կապված են միջազգային առևտրի և միջազգային ֆինանսների հետ: Արտաքին առևտրային կապերը ենթադրում են, որ տվյալ երկրում արտադրված արտադրանքի մի մասը արտահանվում է, իսկ արտասահմանյան երկրներում արտադրված ապրանքների և ծառայությունների մի մասն էլ ներմուծվում է տվյալ երկիր:

Բացի դրանից՝ ազգային տնտեսությունները փոխկապվածության մեջ են նաև ֆինանսական գործարքների տեսանկյունից: Դա արտահայտվում է նրանով, որ այս կամ այն երկրի քաղաքացիները կարող են իրենց դրամական միջոցները պահել արտասահմանյան բանկերում, գնել արտասահմանյան ընկերությունների ու կառավարությունների կողմից թողարկված արժեթղթերը, ձեռք բերել անշարժ գույք արտասահմանում և այլն:

Յուրաքանչյուր երկիր իր տնտեսական քաղաքականությունը մշակելիս պետք է հստակ պատկերացնի մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապ-



վածության մեխանիզմը ոչ միայն իր, այլև մյուս երկրների համար: Դա հնարավորություն կտա հաջողությամբ իրականացնելու տնտեսական քաղաքականությամբ նախատեսված խնդիրները:

**Վճարային հաշվեկշիռը փաստաթուղթ է, որտեղ որոշակի ժամանակահատվածի համար (տարի, եռամսյակ, ամիս) հաշվառվում են տվյալ երկրի արտաքին տնտեսական գործունեության հետ կապված բոլոր վճարումները (ծախսերը) և մուտքերը (եկամուտները):** Այն ցույց է տալիս յուրաքանչյուր երկրի ֆինանսական դրությունը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Ինչպես երևում է սահմանումից, վճարային հաշվեկշիռը արտացոլում է ապրանքների, ծառայությունների, եկամուտների, տրանսֆերտների և ֆինանսների հետ կատարվող արտաքին տնտեսական գործարքները, որոնք իրականացվում են տվյալ և այլ երկրների ռեզիդենտների միջև որոշակի ժամանակահատվածում:

Վճարային հաշվեկշիռն արտացոլում է ոչ թե անհատական, այլ համախառն գործարքներ տվյալ երկրի և այլ երկրների միջև: Քանի որ վճարային հաշվեկշիռը բնորոշում է տվյալ երկրի ֆինանսական վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, ապա այն դառնում է մակրոտնտեսական քաղաքականության մշակման կարևոր կողմնորոշիչ: Խոսքը մասնավորապես վերաբերում է հարկաբյուջետային, դրամավարկային, արտաքին առևտրային, արժույթային և այլ քաղաքականություններին: Բացի դրանից՝ վճարային հաշվեկշիռը, ըստ էության, մակրոտնտեսական վերլուծության և կանխատեսման գործիքներից մեկն է: Դրա օգնությամբ հնարավոր է պարզել, թե ինչպես է զարգացել արտաքին առևտուրը որոշակի ժամանակահատվածում: Վճարային հաշվեկշիռն անմիջական ազդեցություն է ունենում արտադրության, զբաղվածության, սպառման և արժույթի փոխարժեքի վրա: Վճարային հաշվեկշիռը հնարավորություն է տալիս հետևելու արտասահմանյան ներդրումների ներգրավման ձևերին, արտասահմանում կատարվող ներդրումներին, երկրի արտաքին պարտքի ժամանակին մարմանը և այլն: Այն միաժամանակ ցույց է տալիս, թե երկրի կենտրոնական բանկը ինչպես է փոփոխել իր միջազգային պահուստների մակարդակը, վճարումների անհավասարակշռվածությունը:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի [8, հոդված 3] համաձայն՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, ով հարկային տարում, այսինքն՝ 12 ամսվա ցանկացած ժամանակահատվածում, ՀՀ-ում լինում է ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական ու տնտեսական շահերի կենտրոնը ՀՀ-ում է, ինչպես նաև այն ֆիզիկական անձը, ով պետական ծառայության մեջ է և ժամանակավորապես բացակայում է ՀՀ տարածքից:

Եթե ֆիզիկական անձը տվյալ երկրում ունի սեփականության օբյեկտներ (սեփականության իրավունք հողի, շինությունների և այլնի նկատմամբ), ապա նրա տնտեսական շահերի կենտրոնը տվյալ երկրում է, իսկ եթե ֆիզիկական անձը մեկ տարուց ավելի բացակայում է տվյալ երկրի տնտեսական տարածքից, ապա նա դադարում է տվյալ երկրի ռեզիդենտ լինելուց:

Վճարային հաշվեկշիռը բնութագրող հատկանիշներից մեկն էլ այն է, որ արտացոլում է «երկրի արտաքին տնտեսական վիճակը» ապրանքների կամ

ծառայությունների միջազգային շուկայում, այլ կերպ ասած՝ երկրի դերը որպես արտահանողի կամ ներմուծողի: Վճարային հաշվեկշռի մի շարք տարիների տվյալների հիման վրա կարելի է բնութագրել երկրի վիճակը արտասահմանյան ներդրումների ներգրավման տեսակետից: Այսինքն՝ որոշվում է արտաքին պարտքի հաշվեկշիռը, որը արտասահմանյան ակտիվների ու տվյալ երկրի պասիվների հարաբերակցությունն է ժամանակի որոշակի հատվածում:

Վճարային հաշվեկշռի միջոցով կարելի է պատկերացում կազմել ազգային տնտեսության մասին: Արդյունքում եթե պարզվի, որ երկրից հսկայական չափերի կապիտալ է դուրս հոսում, ապա դրանից կարելի է եզրակացնել տվյալ երկրի արժույթային և ֆոնդային շուկաների ձգնաժամային իրավիճակի մասին: Վճարային հաշվեկշիռը կազմվում է ինչպես հաշվարկային, այնպես էլ վերլուծական խնդիրների լուծման նպատակով, և դրանք միմյանց հետ սերտորեն կապված են: Վճարային հաշվեկշռի վերլուծության միջոցով կարելի է բացահայտել երկրի արտաքին տնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպման հնարավորությունները և կողմնորոշվել արտաքին տնտեսական քաղաքականությանը վերաբերող հստակ որոշումների ընդունման հարցում:

Վճարային հաշվեկշիռը բնորոշում է նաև՝ տվյալ երկիրը արտադրող է (երբ առկա է վճարային հաշվեկշռի դրական մնացորդ), թե սպառող (երբ վճարային հաշվեկշռի մնացորդը բացասական է): Եվ քանի որ մարդկային հասարակության մեջ էլ ավելի մեծ մասշտաբներով և ամրագրված կանոններով ու օրենքներով է գործում էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը (հիշենք՝ դպրոցական դասագրքերում այն սահմանվում էր որպես բնության մեջ այնպիսի իրավիճակ, երբ էներգիան ոչ մի տեղ չի կորչում, այն պահպանվում է՝ մի վիճակից անցնելով մեկ այլ վիճակի), ուստի յուրաքանչյուր երկիր իր վճարային հաշվեկշռի բացասական մնացորդը պետք է փակի կամ վճարի ինչով կարող է: Նկատենք նաև, որ տնտեսական զարգացումների հիմքում ընկած են բնության օրենքները՝ սոսկ մեկ վերապահումով պայմանավորված մարդ-գործունով, որը, արարելով հանդերձ, «խաթարում է» բնության օրենքների մաքուր տեսքով հանդես գալու հնարավորությունը:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի առյուծի բաժինը հասնում է «Ապրանքների և ծառայությունների ընթացիկ հաշվին»: Ավելի պարզ՝ վճարային այս հոդվածը ցույց է տալիս, թե ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման տարբերությունն ինչպիսին է, և եթե այդ տարբերությունը բացասական է (այսինքն՝ ավելի շատ եք ներմուծում, քան արտահանում), ապա այդ մասով ձեր վճարած փողը (դրամական հոսքը) ուղղվում է այն երկիր (կամ երկրներ), որոնցից ձեռք բերած ապրանքների և ծառայությունների համար մենք պետք է վճարենք, իսկ եթե այդ տարբերությունը դրական է, ապա մեզ են վճարելու մյուսները: Առաջին դեպքում տվյալ երկիրը հանդես է գալիս որպես գնորդ, իսկ երկրորդ դեպքում՝ վաճառող: Լավ է լինել վաճառող երկիր, քանի որ այս դեպքում մյուսներն են ձեզ վճարում, իսկ հակառակ դեպքում՝ դուք ուրիշներին:

Հարց է առաջանում. իսկ ինչո՞վ վճարել, որտեղի՞ց են առաջանում այն աղբյուրները, միջոցները, որոնց հաշվին պետք է ապահովվի մյուս երկրների հետ

համարժեք փոխանակությունը: Առաջին այդպիսի աղբյուրը երկրում արտադրված կամ թողարկված ապրանքներն ու ծառայություններն են, որոնց իրացումից ստացված միջոցներով կատարում եք մյուսներից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումը: Հայաստանի Հանրապետության համար այս ուղին «աշխատում է» մասամբ, քանի որ մեր ներմուծումը գերազանցում է արտահանմանը: Հաջորդ աղբյուրն այն է, որ Ձեր երկրից արտահանված կապիտալը, ապահովելով եկամուտներ (կամ տոկոսներ), վերադառնում է Ձեր երկիր, ինչի հաշվին էլ դուք կարողանում եք կատարել Ձեր վճարումները: Մեր երկրի համար դրանք չնչին մեծություններ են և «եղանակ» չեն ստեղծում: Ասվածն ավելի ակնառու դարձնելու նպատակով աղյուսակ 6.1-ում բերված է ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան 1995–2013 թվականներին: Տվյալներից հետևում է, որ աղյուսակում ներառված ողջ ժամանակահատվածում (19 տարի) հանրապետության ընթացիկ հաշիվը միշտ եղել է բացասական: Ավելին՝ եթե ընթացիկ հաշվի բացասական մնացորդը 1996–1998 թվականներին ավելացել է, 1998–2004 թվականներին՝ նվազել, ապա սկսած 2007 թվականից՝ այն կտրուկ ավելացել է (նախորդ տարվա համեմատությամբ՝ ավելի քան 5 անգամ), իսկ 2008 թվականին հասել է իր բարձրագույն կետին՝ 2006 թվականի ցուցանիշը գերազանցելով աննախադեպ չափերով՝ շուրջ 12 անգամ: 2008–2013 թվականներին ընթացիկ հաշվի բացասական մնացորդն ունեցել է թեև դանդաղ, սակայն կայուն նվազման միտում՝ 2013 թվականին ունենալով շուրջ 1,1 մլրդ ԱՄՆ դոլարի բացասական արժեք:

Երկրի ընթացիկ հաշվի ճեղքվածքը առաջանում է ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման տարբերությունից: Այսինքն՝ թե՛ ապրանքները և թե՛ ծառայություններն ավելի շատ են ներմուծվում, քան արտահանվում: Ըստ որում՝ 1995–2013 թվականներն ընկած ողջ ժամանակահատվածում ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների զուտ արտահանումն ունեցել է բացասական նշան:

Եթե ապրանքների և ծառայությունների ընդհանուր զուտ արտահանման (արտահանման և ներմուծման տարբերությունը) մեծությունն ընդունենք 100%, ապա 1995 թվականին այդ գործարքներից ստացված վնասի չափը ըստ էության կազմել է –426,7 մլն դոլար, որի 94,4%-ը բաժին է ընկել ապրանքների զուտ արտահանմանը, իսկ 5,6%-ը՝ ծառայությունների զուտ արտահանմանը, 1996 թվականին այդ մեծությունները կազմել են համապատասխանաբար –519,9 մլն դոլար, 90,2% և 9,8%, 2000 թվականին՝ –519,3 մլն դոլար, 89,3% և 10,7%, 2005 թվականին՝ –707,8 մլն դոլար, 83,1% և 16,9%, նախաճգնաժամային՝ 2007 թվականին՝ –1812,8 մլն դոլար, 88,3% և 12,7%, 2008 թվականին՝ –2990,6 մլն դոլար, 89,1% և 10,9%, ՀՀ-ում տնտեսական ամենաբարձր անկման տարում՝ 2009 թվականին՝ –2349,4 մլն դոլար, 88,6% և 11,4%, 2011 թվականին՝ –2389,8 մլն դոլար, 86,9% և 13,1%, 2012 թվականին՝ –2459,7 մլն դոլար, 85,8% և 14,2%, 2013 թվականին՝ 2464,9 մլն դոլար, 95,5% և 4,5%: Ինչպես տեսնում ենք բերված թվերից, հանրապետության ընթացիկ հաշվի բացասական մեծության 80–90%-ը (ըստ տարբեր տարիների) ստացվում է ապրանքների զուտ արտահանումից:

Այս համատեքստում կարող է նկատվել հետևյալ առանձնահատկությունը: Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի՝ ապրանքների գծով համադրելիությունը ապահովելու համար վճարային հաշվեկշռի ապրանքներ հողվածի արտահանման և ներմուծման ծավալները բերված են ՖՕԲ գնով (առանց բեռնափոխադրման և ապահովագրական վճարների) [33]: Ասվածից հետևում է, որ իրականում ապրանքների հաշվի բացասական մեծությունն ավելի մեծ է, քան այդ մասին նշված է վճարային հաշվեկշռում, քանի որ բեռնափոխադրումները և ապահովագրական վճարները, որպես ծախս, զգալի մեծություններ են կազմում:

**Աղյուսակ 6.1.** ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան 1995–2013 թթ., մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Ընթացիկ հաշիվ	-218,4	-290,7	-306,54	-402,95	-306,94	-278,37	-199,56	-147,88	-189,44	-19,63	-51,71
Ապրանքներ	-403,0	-469,2	-559,48	-577,49	-473,97	-463,53	-420,22	-368,76	-434,08	-457,95	-587,93
Ծառայություններ	-23,7	-50,8	-62,80	-63,26	-62,03	-55,80	-17,78	-40,69	-68,34	-98,93	-119,96
Եկամուտներ	40,0	44,7	98,52	60,40	54,94	52,90	64,46	88,21	94,49	107,42	132,52
Ընթացիկ տրանսֆերտներ	168,3	184,6	217,2	177,4	174,1	188,06	173,99	173,35	218,48	429,84	523,66
Կապիտալ և ֆինանսական հաշիվ	207,2	277,2	298,3	399,3	294,5	261,34	189,04	152,73	190,85	25,20	47,91
Կապիտալ հաշիվ	8,1	13,4	10,88	9,74	12,55	28,31	30,12	68,06	89,94	41,34	73,25
Ֆինանսական հաշիվ	199,2	263,8	287,4	389,6	281,9	233,03	158,93	84,68	100,91	-16,14	-25,34
Պահուստային ակտիվներ	-74,7	-58,9	-71,0	-52,5	-20,6	-19,19	-19,64	-81,09	-47,26	-26,33	-162,09
Մաքուր սխալներ և բացթողումներ	11,1	13,5	8,3	3,6	12,5	17,03	10,51	-4,85	-1,40	-5,58	3,81

Ցուցանիշներ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
	12	13	14	15	16	17	18	19
Ընթացիկ հաշիվ	-117,13	-589,26	-1381,82	-1368,89	-1373,17	-1108,17	-1107,94	-1098,74
Ապրանքներ	-895,86	-1600,26	-2663,53	-2081,28	-2032,55	-2077,65	-2111,13	-2352,88
Ծառայություններ	-130,39	-212,54	-327,11	-268,12	-242,18	-312,11	-348,57	-112,06
Եկամուտներ	215,17	278,78	471,19	166,59	338,65	558,54	628,5	540,80
Ընթացիկ տրանսֆերտներ	693,95	944,76	1137,63	813,92	562,92	723,05	723,27	825,40

Կապիտալ և ֆինանսական հաշիվ	132,88	591,47	1369,29	1349,55	1355,67	1137,54	951,66	1024,54
Կապիտալ հաշիվ	86,38	142,76	148,88	89,10	107,91	96,24	108,03	76,97
Ֆինանսական հաշիվ	46,50	448,71	1220,41	1260,44	1247,75	1041,30	843,63	947,57
Պահուստային ակտիվներ	-366,02	-546,16	233,52	-600,28	111,48	-132,92	-48,26	470,60
Մաքուր սխալներ և բացթողումներ	-15,76	-2,21	12,53	19,34	17,50	-29,37	156,28	74,20

**Աղբյուրը՝** Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռ 2001–2005, եր., ՀՀ ԱՎԾ, 2006, էջ 9: Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռ 2012, եր., ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 9: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվար-փետրվարին, եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 91–99:

Ընթացիկ հաշվի կարևոր մասն են կազմում եկամուտներ հողվածք, որն իր մեջ ներառում է զինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների փոխանցումները, եկամուտները ներդրումներից (ուղղակի պորտֆելային և այլ): Ընթացիկ տրանսֆերտներն իրենց հերթին բաղկացած են պետական կառավարման և այլ (մասնավոր) տրանսֆերտներից: Եվ եթե 2011 թվականին ընթացիկ տրանսֆերտների գումարը կազմել է 723,1 մլն դոլար, ապա այդ գումարից 160,3 մլն դոլարը ստացվել է պետական կառավարման համակարգով, իսկ 562,8 մլն դոլարը՝ այլ (մասնավոր) աղբյուրներից: Ըստ էության՝ խոսքը վերաբերում է մեր այն հարյուր հազարավոր քաղաքացիներին, որոնք տարբեր երկրներից դրամական փոխանցումներ (տրանսֆերտներ) են կատարում իրենց հարազատներին և բարեկամներին: Սակայն, ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, ընթացիկ հաշվի «եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները չեն փոխհատուցում «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական մեծությունները, ինչի հետևանքով էլ երկրի ընթացիկ հաշիվն ունի բացասական մեծություն:

Մեթոդաբանության առումով՝ ընթացիկ հաշվի մնացորդը, բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, որը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել սխալների և բացթողումների հոդված:

Վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածների մասին ըստ եռամսյակների պատկերացում կազմելու համար աղյուսակ 6.2– 6.3-ում բերված են համապատասխան տվյալներ ինչպես 2011–2012 թվականների, այնպես էլ 2012–2013 թվականների առաջին եռամսյակների վերաբերյալ: Հեշտ է նկատել, որ 2012 թվականի առաջին եռամսյակում ևս պահպանվել են այն հիմնական օրինաչափություններն ու միտումները, որոնք եղել են նախորդ ժամանակա-

հատվածում: Բերված աղյուսակի հիմնական արժանիքն այն է, որ լիարժեք պատկերացում է տալիս ըստ եռամսյակների վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածների ինչպես մուտքերի (դեբետ), այնպես էլ ելքերի (կրեդիտ) մասին: Ընթացիկ հաշվի «հիմնական բեռը» (աղյուսակ 6.2) ընկնում է առաջին եռամսյակին՝ տարեկան մեծության 36,9%-ը, մինչդեռ երրորդ եռամսյակին՝ միայն 15,9%-ը, այսինքն՝ երրորդ եռամսյակի համեմատությամբ առաջին եռամսյակում ընթացիկ հաշվի ձեղքվածքը 2,3 անգամ ավելի մեծ է (տե՛ս նաև աղյուսակ 6.4):

Ըստ էության՝ բերված աղյուսակների յուրաքանչյուր հոդվածից ակնառու երևում է, թե ինչպիսին է դրանց արտահանման և ներմուծման ներուժը: Այսպես՝ ընթացիկ տրանսֆերտների հոդվածի մասով երևում է, որ 2011 թվականին հանրապետություն «մուտք» եղել է 970 մլն դոլար, իսկ «ելքը» եղել է շուրջ 247 մլն դոլար: Ըստ որում՝ 2012 թ. առաջին եռամսյակում նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ ընթացիկ տրանսֆերտներն ավելացել են 18,4%-ով՝ հասնելով շուրջ 193 մլն դոլարի (աղյուսակ 6.2):

Եթե հաշվելու լինենք, թե ինչպիսին է եղել 1995–2013 թ. ընկած ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների ներմուծման բաժինը, ապա պարզ կդառնա, որ ՀՆԱ-ի մեջ ներմուծման բաժինը զգալիորեն նվազել է՝ 1995 թ. 56,4%-ի փոխարեն այն 2000 թ. կազմել է 50,5%, 2007 թ. հասել է 35,5%-ի (որը բերված ժամանակային շարքի ամենացածր ցուցանիշն է), որից հետո այն սկսել է նորից աճել և 2011 թ. կազմել է 40,9%, 2012 թ.՝ 42,8%, 2013 թ.՝ 43,0% (աղյուսակ 6.5):

**Աղյուսակ 6.2.** 2011 թ. տարեկան ձշրված և 2012 թ. հունվար–մարտ ամիսների ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածները՝ ըստ եռամսյակների, մլն դոլար

Հոդվածները	2011 թ.				2011 թ.	2012 թ. I եռ.	2012 թ. I եռ. բացարձակ փոփոխությունը 2011 թ. I եռ. նկատմամբ
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.			
	1	2	3	4	5	6	7
Ընթացիկ հաշիվ	-408,85	-334,63	-176,05	-188,64	-1108,17	-375,22	33,63
Ապրանքներ	-463,12	-499,69	-522,66	-592,18	-2077,65	-439,74	23,38
Կրեդիտ	307,42	401,42	439,40	431,78	1580,02	396,66	89,24
Դեբետ	-770,54	-901,11	-962,06	-1023,96	-3657,66	-836,40	-65,86
Ծառայություններ	-65,52	-79,33	-76,69	-90,57	-312,11	-68,60	-3,08
Կրեդիտ	148,41	186,56	269,61	222,35	826,92	153,83	5,42
Դեբետ	-213,93	-265,89	-396,31	-312,91	-1139,04	-222,43	-8,50

Եկամուտներ	-8,79	99,55	226,35	241,43	558,54	-11,15	-2,36
Կրեդիտ	147,14	273,40	388,26	453,03	1261,83	161,98	14,84
Դեբետ	-155,93	-173,85	-161,91	-211,60	-703,29	-173,13	-17,20
Ընթացիկ տրանսֆերտներ	128,58	144,85	196,95	252,68	723,05	144,27	15,69
Կրեդիտ	174,16	202,31	264,54	328,94	969,95	192,59	18,43
Դեբետ	-45,58	-57,46	-67,59	-76,26	-246,89	-48,31	-2,73
Կապիտալի և ֆինանսական հաշիվ	381,93	325,84	207,99	221,28	1137,84	329,69	-52,24
Կապիտալի հաշիվ	26,25	24,45	24,11	21,44	96,24	27,04	0,79
Կրեդիտ	28,11	31,43	31,55	28,71	119,79	32,02	3,91
Դեբետ	-1,86	-6,98	-7,44	-7,27	-23,55	-4,98	-3,12
Ֆինանսական հաշիվ	355,68	301,39	183,88	199,85	1640,80	302,65	-53,03
Ուղղակի ներդրումներ	156,03	120,35	133,03	37,54	446,96	100,50	-55,53
Պորտֆելային ներդրումներ	-10,49	-4,43	1,26	3,28	-10,38	0,00	10,40
Այլ ներդրումներ	133,40	129,10	267,99	206,67	737,15	37,05	-96,35
Պահուստային ակտիվներ	76,74	56,37	-218,39	-47,64	-132,92	165,10	88,36
Փոխառության հատուկ իրավունքներ	2,94	15,37	0,48	-41,86	-23,07	2,96	0,02
Արտարժույթային ակտիվներ	73,99	40,81	-218,87	-5,72	-109,80	162,13	88,14
Մաքուր սխալներ և բացթողումներ	26,92	8,79	-31,94	-32,65	-28,87	45,53	18,61

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-փնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-մայիսին. տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2012, էջ 94-99:

**Աղյուսակ 6.3. 2012 թ. փարեկան ձշտված և 2013 թ. հունվար-մարտ ամիսների ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածները՝ ըստ եռամսյակների, մին դոլար**

Հոդվածները	2012 թ.				2012 թ.	2013 թ. I եռ. I եռ.	2013 թ. I եռ. բացարձակ 2012 թ. I եռ. նկատմամբ
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.			
Ընթացիկ հաշիվ	-428,86	-350,25	-120,17	-208,66	-1 107,94	-349,26	79,60
Կրեդիտ	853,66	1 084,61	1 319,95	1 473,52	4 731,74	920,66	67,00
Դեբետ	1 282,52	1 434,85	1 440,12	1 682,18	5 839,67	1 269,92	-12,60
Ապրանքներ և ծառայություններ	-569,17	-622,29	-534,93	-733,32	-2 459,71	-540,17	29,00
Կրեդիտ	492,57	582,79	670,17	679,11	2 424,65	536,37	43,80
Դեբետ	1 061,74	1 205,08	1 205,11	1 412,43	4 884,36	1 076,54	14,80
Ապրանքներ	-488,83	-532,42	-457,39	-632,49	-2 111,13	-462,51	26,32
Կրեդիտ	328,01	377,78	395,34	436,66	1 537,79	361,38	33,37
Դեբետ	816,84	910,20	852,74	1 069,15	3 648,92	823,88	7,04
Ծառայություններ	-80,34	-89,87	-77,54	-100,82	-348,57	-77,67	2,67
Կրեդիտ	164,57	205,01	274,83	242,46	886,87	174,99	10,42
Դեբետ	244,90	294,88	352,37	343,28	1 235,44	252,65	7,75
Սկզբնական եկամուտներ	-11,12	119,61	238,74	281,26	628,50	28,32	39,44
Կրեդիտ	162,11	288,82	404,01	468,91	1 323,86	171,08	8,97
Դեբետ	173,23	169,21	165,26	187,65	695,36	142,76	-30,47
Երկրորդային եկամուտներ	151,42	152,43	176,02	243,39	723,27	162,60	11,18
Կրեդիտ	198,97	212,99	245,77	325,49	983,23	213,22	14,25
Դեբետ	47,55	60,56	69,75	82,10	259,96	50,62	3,07
Կապիտալի հաշիվ	26,95	18,25	32,02	30,81	108,03	13,06	-13,89
Կրեդիտ	30,17	25,17	36,94	36,17	128,44	17,49	-12,68
Դեբետ	3,22	6,91	4,92	5,36	20,41	4,43	1,21
Կապիտալ տրանսֆերտներ	26,95	18,25	32,02	30,81	108,03	13,06	-13,89
Կրեդիտ	30,17	25,17	36,94	36,17	128,44	17,49	-12,68
Դեբետ	3,22	6,91	4,92	5,36	20,41	4,43	1,21
Ֆինանսական հաշիվ	-302,99	-282,79	-14,40	-243,45	-843,63	-253,08	49,91
Ուղղակի ներդրումներ	-101,27	-74,45	-132,77	-165,10	-473,60	-58,33	42,94



Պորտֆելային ներդրումներ	-0,01	1,20	-0,49	-1,53	-0,83	0,96	0,97
Այլ ներդրումներ	-36,61	-204,78	115,75	-195,29	-320,93	-69,18	-32,57
Պահուստային ակտիվներ	-165,10	-4,75	3,12	118,47	-48,26	-126,53	38,57
Հատուկ փոխառության իրավունք	-2,96	5,99	-53,68	25,10	-25,55	-29,53	-26,57
Այլ պահուստային ակտիվներ	-162,15	-10,74	56,80	93,37	-22,71	-97,00	65,15
Մաքուր սխալներ և բացթողումներ	98,92	49,20	73,75	-65,59	156,28	83,12	-15,80

**Աղբյուրը՝** Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-մայիսին. տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 101-110:

Նշված ժամանակահատվածում ՀՀ արտահանման «պիկը» (արտահանման ծավալի և ՀՆԱ-ի հարաբերության առավելագույն մեծությունը) եղել է 2003 թ. (32,2%), որից հետո այն ունեցել է նվազման միտում, իսկ 2009 թ. այն ունեցել է ամենացածր արժեքը (8,3%), որից հետո դրսևորելով կայուն աճի միտում՝ 2011 թ. կազմել է 13,1%, ինչն, անկասկած, ցածր ցուցանիշ է: Եթե ծառայություններ/ՀՆԱ հարաբերակցությունը նշված ժամանակահատվածում գրեթե մնացել է անփոփոխ, ապա արտաքին ապրանքաշրջանառության (ապրանքների արտահանում գումարած ապրանքների ներմուծում) հարաբերությունը ՀՆԱ-ին զգալիորեն նվազել է: Այսպես, եթե արտաքին ապրանքաշրջանառության հարաբերությունը ՀՆԱ-ին 1995 թ. կազմել է շուրջ 80%, ապա 2000 թ.՝ 73,9%, 2005 թ.՝ 67,8%, 2010 թ.՝ 51,0%, 2011 թ.՝ 54,1%: 1995-2010 թթ. վերը նշված հարաբերակցությունը նվազել է 28,6 տոկոսային կետով, ըստ որում՝ ապրանքների բաժինը նշված ժամանակահատվածում նվազել է 12,5, իսկ ներմուծմանը՝ 16,1 տոկոսային կետով:

**Աղյուսակ 6.4. ՀՀ վճարային հաշվեկշիռի հիմնական ցուցանիշների շարժը 2010–2012 թթ.՝ ըստ եռամսյակների՝  
մլն ԱՄՆ դոլար**

	2010				2011				2012				2013			
	Q1	Q2	Q3	Q4	Q1	Q2	Q3	Q4	Q1	Q2	Q3	Q4	Q1	Q2	Q3	Q4
	Ընթացիկ հաշիվ	-416,71	-367,65	-269,89	-318,91	-408,85	-334,63	-176,05	-188,64	-428,30	-345,15	-121,73	-219,94	-389,1	-243,96	-129,83
Ապրանքներ	-470,80	-475,44	-508,90	-577,40	-463,12	-499,69	-522,66	-592,18	-488,41	-526,01	-549,95	-644,55	-504,21	-499,56	-528,33	-820,77
Ծառայություններ	-56,28	-60,19	-66,78	-58,94	-65,52	-79,33	-76,69	-90,57	-80,20	-91,20	-76,54	-100,06	-52,07	-37,02	-8,86	-14,11
Եկամուտներ	5,71	57,57	148,35	127,02	-8,79	99,55	226,35	241,43	-11,10	119,63	238,75	281,27	4,95	114,87	190,51	230,46
Ընթացիկ տրանսֆերտներ	104,66	110,42	157,44	190,40	128,58	144,85	196,95	252,68	151,42	152,43	176,02	243,39	247,15	379,22	501,10	608,2
Կապիտալի և ֆինանսական հաշիվ	401,47	355,52	273,18	325,49	381,97	325,90	208,09	221,58	329,48	300,79	46,40	273,22	-405,92	-254,92	804,88	-544,53
Կապիտալի հաշիվ	19,92	24,31	29,75	33,94	26,25	24,45	24,11	21,44	26,42	17,59	31,33	30,10	13,06	18,64	19,55	25,72
Ֆինանսական հաշիվ	381,56	331,21	243,43	291,55	355,72	301,45	183,98	200,14	303,06	283,20	15,07	243,12	-292,55	-248,67	-14,83	-391,52
Պահուստային ակտիվներ	51,53	75,99	15,25	-31,30	76,74	56,37	-218,39	-47,64	165,10	4,75	-3,12	-118,47	-126,43	-24,89	800,16	-178,73
Մաքուր սխալներ և բացթողումներ	15,24	12,13	-3,29	-6,58	26,88	8,73	-32,04	-32,94	98,82	44,37	75,32	-53,28	83,39	-23,35	95,45	-81,30

**Աղբյուրը՝** Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվները 2013 թ., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 13:  
Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվար-փետրվարին, եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 91–98:

Աղյուսակ 6.5. ՀՀ ՀՆԱ-ի, արդարփին ապրանքաշրջանառության և ծառայությունների շարժը 1995-2013 թթ.՝

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	1995-2013
ՀՆԱ	1287	1599	1639	1892	1845	1912	2118	2376	2807	3577	4900	6384	9206	11662	8541	9392	10142	9950	10416	101645
Արտահանում	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
Ներմուծում	300	368	330	359	383	447	540	698	904	985	1337	1408	1152	1057	710	1011	1330	1380	1480	16179
Ներմուծում	23,3	23,0	20,1	19,0	20,8	23,4	25,5	29,4	32,2	27,5	27,3	22,1	12,5	9,1	8,3	10,8	13,1	13,9	14,2	15,9
Արտադրանքային արժեքի ապրանքաշրջանառություն	726	888	953	1000	919	966	978	1107	1406	1514	1984	2329	3268	4426	3321	3782	4152	4261	4477	42457
Արտադրանքային արժեքի ապրանքաշրջանառություն	56,4	55,5	58,1	52,9	49,8	50,5	46,2	46,6	50,1	42,3	40,5	36,5	35,5	38,0	38,9	40,3	40,9	42,8	43,0	41,8
Արտադրանքային արժեքի ապրանքաշրջանառություն	1026	1256	1283	1359	1302	1413	1518	1805	2310	2499	3321	3737	4420	5483	4031	4793	5482	5641	5957	58636
Արտադրանքային արժեքի ապրանքաշրջանառություն	79,7	78,5	78,3	71,8	70,6	73,9	71,7	76,0	82,3	69,9	67,8	58,5	48,0	47,0	47,2	51,0	54,0	56,7	57,2	57,7
Ծառայություններ	...	-50,8	-62,8	-63,3	-62,0	-55,8	-17,8	-40,7	-68,3	-98,9	-120,0	-130,4	-212,5	-327,1	-268,1	-241,0	-312,1	-348,6	-112,1	-2592,3
Կրեդիտ	...	-3,2	-3,8	-3,3	-3,4	-2,9	-0,8	-1,7	-2,4	-2,8	-2,4	-2,0	-2,3	-2,8	-3,1	-2,6	-3,1	-3,5	-1,1	-2,6
Դեբետ	...	...	96,6	130,3	135,8	136,9	186,5	183,8	207,4	332,6	411,1	484,7	580,0	645,0	589,5	749,5	826,9	886,9	1157,5	7741,0
	...	...	5,9	6,9	7,4	7,2	8,8	7,7	7,4	9,3	8,4	7,6	6,3	5,5	6,9	8,0	8,2	8,9	11,1	7,6
	...	...	-159,4	-193,6	-197,8	-192,7	-204,3	-224,5	-275,7	-431,5	-531,1	-615,1	-792,6	-972,1	-857,6	-990,5	-1139,0	-1235,4	-1269,6	-10282,5
	...	...	-9,7	-10,2	-10,7	-10,1	-9,6	-9,4	-9,8	-12,1	-10,8	-9,6	-8,6	-8,3	-10,0	-10,5	-11,2	-12,4	-12,2	-10,1

\* Համարիչում մին ԱՄՆ դոլար, հայտարարում %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ:

... տվյալները բացակայում են:

1 Կազմվել է ՀՀ ԱՎԾ տվյալներով:

**Աղյուսակ 6.6. Հայաստանի Հանրապետության ապրանքների և ծառայու-  
թյունների արտահանման և ներմուծման, զույգ արտահանման,  
պարտեկան միջին փոխարժեքի և ՀՆԱ-ի շարժը 1995–2013 թթ.<sup>1</sup>**

Տարիները	Արտա- հանում	Ներմուծում	Զուտ արտահանում	ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար տարեկան միջին փո- խարժեք	ՀՆԱ, մլն ԱՄՆ դոլար	ՀՆԱ-ն բնակչու- թյան մեկ շնչի հաշ- վով, ԱՄՆ դոլար
1995	299,5/23,3*	726,1/56,4*	-426,6/33,2*	405,9	1286,7	395
1996	368,1/23,0	888,1/55,5	-520,0/32,5	413,4	1599,3	492
1997	330,2/20,1	952,5/58,1	-622,3/38,0	490,8	1638,9	506
1998	359,3/19,0	1000,0/52,8	640,7/33,9	504,9	1892,3	585
1999	383,1/20,8	919,1/49,8	-536,0/29,0	535,1	1845,5	571
2000	446,9/23,4	966,2/50,5	-519,3/27,2	539,5	1911,6	593
2001	539,6/25,1	977,6/45,4	-438,0/20,3	555,1	2153,3	659
2002	697,6/29,4	1107,1/46,6	-409,5/17,2	573,4	2376,3	740
2003	903,5/32,2	1405,9/50,1	-502,4/17,9	578,8	2807,1	874
2004	984,9/27,5	1513,6/42,3	-528,7/14,8	533,5	3576,6	1113
2005	1336,6/27,3	1983,8/40,5	-647,2/13,2	457,7	4902,8	1523
2006	1407,6/22,0	2328,5/36,5	-920,9/14,4	416,0	6386,7	1982
2007	1152,3/12,5	3267,8/35,5	-2115,5/23,0	342,1	9206,0	2853
2008	1057,2/9,1	4426,1/38,0	-3368,9/28,9	306,0	11662,0	3606
2009	710,4/10,8	3321,1/38,9	-2610,9/30,6	363,3	8541,0	2633
2010	1011,4/10,8	3782,9/40,3	-2771,5/29,5	373,7	9391,6	2879
2011	1329,5/13,1	4151,5/40,9	-2822,0/27,8	372,5	10142,0	3363
2012	1380,2/13,9	4261,2/42,8	-2881,0/29,0	401,7	9950,0	3290
2013	1480,0/14,2	4476,8/43,0	-2996,8/28,8	409,6	10416,0	3452
<b>Ընդամենը</b>	<b>16177,7/15,9</b>	<b>42455,9/41,8</b>	<b>-26278,2/25,8</b>	<b>451,2</b>	<b>101685,7</b>	<b>1689,9</b>

\* Համարիչում մլն ԱՄՆ դոլար, հայտարարում %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ:

<sup>1</sup> Կազմվել է ՀՀ ԱՎԾ տվյալներով:

Այսինքն՝ նշված ժամանակահատվածի ընթացքում հանրապետության ավելի բաց տնտեսությունը միտում ունի դառնալու փակ: Եվ եթե ապրանքների ներմուծման բաժնի նվազումը ինչպես ՀՆԱ-ի, այնպես էլ արտաքին ապրանքաշրջանառության ծավալում կարող ենք դիտարկել որպես դրական միտում վճարային հաշվեկշռի վիճակը բարելավելու տեսանկյունից, ապա նույնը չի կարելի ասել արտահանման վերաբերյալ, քանի որ վճարային հաշվեկշռի բարելավման հիմնական հողվածը արտահանման ավելացումն է: Այսպիսով՝ անցած ժամանակահատվածում հանրապետությունում նկատվել է տնտեսության հնարավորությունների նեղացում կամ փոքրացում, ինչն, անկասկած, անցանկալի երևույթ է. հարաբերականորեն ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման բաժինների նվազումը ՀՆԱ-ի կազմում վկայում են, որ ՀՀ տնտեսությունն ունի «փոքրանալու» միտում, ինչն էլ վատթարացրել է հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, որի դրսևորման գծերից հիմնականը ահագնացող և երկրի ազգային անվտանգությանը սպառնացող բնակչության արտահոսքն է դեպի այլ երկրներ՝ գլխավորապես աշխատանք փնտրելու և եկամուտներ ունենալու հեռանկարով:

Ապրանքների զուտ արտահանման փոքրացումը ՀՆԱ-ի կազմում մեկ անգամ ևս վկայում է (տես աղյուսակ 6.6-ը), որ հանրապետության տնտեսությունը ՀՆԱ-ի միավորի աճի հաշվով կորցնում է զարգացման հեռանկարը, թուլանում է տնտեսության «իմունային» համակարգը և չի նպաստում տնտեսական առաջընթացին: Ակնհայտ է նաև, որ ՀՆԱ-ի աճը չի հանգեցրել արտահանման ծավալների համապատասխան չափով ավելացման, ինչը համաշխարհային շուկայի տեսանկյունից դիտարկելու առումով վկայությունն է այն բանի, որ այդ աճի հետևանքով ձեռք բերված ապրանքները կան չեն հասցվում միջազգային շուկաներ, կան էլ դրանք պահանջարկ չունեն այդ շուկաներում: Իսկ ասվածը նշանակում է, որ ՀՀ-ում տնտեսական գործընթացների աճը պետք է դուրս բերել ազգային սահմաններից և այն դարձնել քաղաքակրթական արժեք, այն առումով, որ հանրապետության սահմաններում թողարկված բարիքները ճանաչման արժանանան միջազգային շուկաներում: Միայն արտաքին առևտրի հնարավորությունների օգտագործմամբ հնարավոր կդառնա հայկական ապրանքների ու ծառայությունների իրացումը համաշխարհային շուկայում և համապատասխան դրամական հոսքերի ավելացման միջոցով ընդլայնել հանրապետության արտադրական, գիտատեխնիկական ներուժը: Այդ կերպ կարելի է երկրի տնտեսությունը դուրս բերել դեպի ոչ մի տեղ չտանող ու «փոքրացող» տնտեսության վիճակից, այլև զարգացման մայրուղի դարձնել արտահանման ավելացումն ու համաշխարհային տնտեսության լայն և անսահմանափակ հնարավորությունների օգտագործումը:

Այսպես՝ 2000 թվականին 1995 թվականի համեմատ հանրապետության ՀՆԱ-ն ավելացել է 148,6%-ով, արտահանումը՝ 149,2%-ով, ներմուծումը՝ 133,1%-ով, այսինքն՝ նշված ժամանակահատվածում ՀՆԱ-ի 1% աճին բաժին է ընկել արտահանման 1,004% և ներմուծման՝ 0,895% աճ: 2005 թվականին 2000 թվականի համեմատությամբ այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 256,4%, 299,1%, 205,3%, 1,167%, 0,801%, 2011 թվականին 2005 թվականի համեմատությամբ՝ 206,8%, 99,5%, 209,3%, 0,481%, 1,012%, 2010 թվականին 2005 թվականի համեմատությամբ՝ 191,6%, 77,9%, 189,0%, 0,407% և 0,986%, 2013 թվականին 2010 թվականի համեմատությամբ՝ 110,9%, 146,3%, 118,3%, 1,319%, 1,067%:

Այսինքն՝ տնտեսական աճը չի ուղեկցվել (բացառություն է 2010-2013 թթ. ժամանակահատվածը) հատկապես արտահանման ավելացմամբ, այլ ընդհակառակը՝ ավելացել է ներմուծման բաժինը: ՀՆԱ-ի աճի համեմատ արտահանման հետ մնալը և ներմուծման առաջանցիկ աճը հանգեցրել է հանրապետությունից բացասական նշանով զուտ արտահանման զգալի ավելացման: Եթե 2006 թվականին 2005 թվականի համեմատությամբ զուտ արտահանման բացասական մեծությունն ավելացել է 273,7 մլն դոլարով, ապա 2007 թվականին 2006-ի համեմատ այդ տարբերությունը կազմել է 1194,6 մլն դոլար (2007/2006 թվականների հարաբերակցությունը 2006/2005 թվականների հարաբերակցությանը գերազանցել է 436,5%-ով), 2008 թվականին 2007 թվականի համեմատ՝ 1253,4 մլն դոլար (2008/2007 թվականների հարաբերակցությունը 2006/2005 թվականների հարաբերակցությանը գերազանցել է 457,9%-ով): Հետաքրքիր է նշել, որ եթե ապրանքների և ծառայությունների զուտ արտահանումը 1995-2013 թվականներ-

րին կազմել է -26,3 մլրդ դոլար, ապա միայն 2006–2011 թվականներին՝ 19,5 մլրդ դոլար, կամ այդ տարիներին բաժին է ընկել զուտ արտահանման 3/4-ը:

Եվ եթե նկատի ունենանք, որ ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածներով ստացված դրամական մուտքերը չեն փոխհատուցել «Ապրանքների» և «Ծառայությունների» հոդվածներով, ստացված մուտքերը (տե՛ս աղյուսակ 6.7-ը), ուստի երկրին մնում էր մի ուղի՝ ավելացնել արտաքին պարտքը, ինչն էլ արեց ՀՀ կառավարությունը: Այսինքն՝ ստացվում է, որ հանրապետության ներկայիս ֆինանսական վիճակը ձևավորվել է նախորդ տարիների ընթացքում, երբ հատկապես 2004 թվականից սկսած «Եկամուտներից» և «Ընթացիկ տրանսֆերտներից» ստացված մուտքերի մեծությունը չի փոխհատուցել «Ապրանքների» և «Ծառայությունների» զուտ արտահանման մեծությունը (այդ հարաբերակցությունը 2004 թ. 96,5%-ից 2009 թ-ին հասել է 41,7%-ի):

Իսկ եթե մենք շարունակենք պարտքեր կուտակել և ավելացնել դրանց ծավալը, ապա կարող ենք տնտեսությունն անվանել պարտքատար կամ «պարտքակեր»: Արդյունքում կստացվի այն, որ պարտքը, որպես տնտեսության մեջ ձևավորված հարաբերությունների հետևանք, պարզապես ժանգի նման կքայքայի ողջ տնտեսությունը: Ի վերջո՝ երբ երկիրը պարտք է վերցնում, դա նշանակում է, որ խախտվել են սեփական կամ ինքնուրույն ուժերով և միջոցներով վերարտադրվելու հատկությունները: Պարտքի բեռը պետք է լինի «խելամիտ», տնտեսությունն ի վիճակի լինի, սպորտային լեզվով ասած, բարձրացնելու: Պարտք վերցնելու հիմնական կողմերից է դրա վերադարձելիությունը, երբ հնարավոր է ոչ միայն վերադարձնել պարտքի մայր գումարը, այլև կողմերի միջև պայմանավորվածության համաձայն՝ պարտքի տոկոսները:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սովորաբար երկիրը հայտնվում է պարտքի տնտեսական «խոր փոսում», երբ երկրի տնտեսությունը զարգացնելու փոխարեն ավելացնում է ներմուծման ծավալները՝ դրանով իսկ նպաստելով այն երկրների զարգացմանը, որտեղից ներմուծում է ապրանքներն ու ծառայությունները: Եվ եթե այսպիսի մոտեցումը կրում է հետևողական, շարունակական բնույթ, ապա արդյունքում երկիրը հայտնվում է ձգնաժամում՝ «հունական աղցանի» տեսքով: Ինչ է դա: Այդ աղցանի մեջ պանիրն ամենևին էլ հունական չէ, այլ բուլղարական էժան բրինձա (ոչխարի պանիր), լոլիկը ալբանական է, սոխն ու պապրիկան (պատիճավոր կարմիր պղպեղը) ռումինական են: Նույնիսկ բուսական յուղն իսպանական է: Հունական է միայն երկու-երեք հատիկ ձիթապտուղը: Այսպիսով՝ ստացվում է, որ հունական աղցանը ամենևին էլ հունական չէ, այլ եվրամիութենական: Արդյունքում՝ Հունաստանը, ըստ էության, ոչինչ չի արտադրում: Այստեղ են թաղված «շան գլուխը» և հիմնախնդրի էությունը: Շարքային հույների կարծիքով՝ եվրամիությունն ամեն ինչ արեց, որպեսզի կուլ տա Հունաստանի տնտեսությունը [63]: Հունաստանի արտաքին պարտքն այնպիսի հսկայական չափերի է հասել, որ նույնիսկ ամենակարող և հարուստ եվրամիությունը չի կարողանում լուծել հիմնախնդիրը:

**Աղյուսակ 6.7. ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի «Եկամուտներ» և «Ընթացիկ պրահաֆերություններ» հորվածները 1996-2013 թթ. ների հարաբերությունը «Ապրանքներ» և «Ծառայություններ» հորվածներին 1996-2013 թթ.**

N	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
1	-519,9	-928,8	-640,8	-536,0	-519,3	-438,0	-409,5	-502,4	-556,8	-707,8	-1026,3	-1812,8	-2990,6	-2349,4	2274,7	-2380,8	-2459,7	-2464,9
2	229,5	315,4	237,8	229,0	241,0	238,5	261,5	313,0	537,2	656,2	909,1	1223,6	1608,8	980,5	901,6	1281,6	1351,8	1366,2
3	2/1	34,0	37,1	42,7	46,4	54,5	63,9	62,3	96,5	92,7	88,6	67,5	53,8	41,7	39,6	53,6	55,0	55,4

Կազմվել և հաշվարկվել է աղյուսակ 6.1-ի տվյալների հիման վրա:

Հնարավոր լուծումներից մեկը տեսնում են Հունաստանի Եվրամիությունից դուրս գալու մեջ, իսկ թե ինչ է լինելու դրանից հետո, ոչ ոք այդ մասին չի էլ մտածում: Ենթադրվում է, որ 2013–2014 թթ. այդ երկրի պարտքերը կհասնեն ՀՆԱ–ի մինչև 171%–ին (հին կանխատեսմամբ 153,2% էր): Այս թիվը ցույց է տալիս, որ Հունաստանը ոչ միայն չի կարողանում հաղթահարել ձգնաժամն ու դրա հետևանքները, այլ ավելի շատ է «ընկղմվում» ձգնաժամի «ճահճի» մեջ, քանի որ պարտքերը վերադարձնելու համար Հունաստանը պարզապես միջոցներ չունի: Սա իր հերթին նշանակում է, որ 2013–2014 թթ. Հունաստանում սպասվում են կոշտ տնտեսման հերթական միջոցառումներ, որոնք էլ ավելի կդժվարացնեն այդ երկրի քաղաքացիների առանց այն էլ դժվար կյանքը: Տնտեսման բեռը կրում են երկրի հասարակ քաղաքացիները, որոնք հատկապես վերջին երկու տարիների ընթացքում տնտեսական ձգնաժամի հետ անհավասար պայքարում կորցրել են իրենց հիմնական ազգային հարստությունը՝ լավատեսությունը: Այժմ նրանց մեծ մասն այլևս չի հավատում, որ կյանքը կլավանա և երկիրը դուրս կգա «պարտքային փոսից» [63]:

Վերադառնանք այն հարցի պատասխանին, թե ի վերջո ինչպիսին է մեր տնտեսությունը: Արդեն վերևում նշել ենք, որ այն մենաշնորհված, հետևաբար օլիգարխիկ է: Հայաստանն, իհարկե, այդպիսի տնտեսություն ունեցող միակ երկիրը չէ, իսկ ամենահետաքրքիրն այն է, որ տնտեսության այդպիսի իրավիճակը «բնական» և «բնականոն» համարողների թիվը գնալով ոչ թե պակասում, այլ ավելանում է: Սա ավելի քան տարօրինակ է, քանի որ սկսած դասական տնտեսագիտության ակունքներից՝ պարզ է, որ երկրի զարգացման և հատկապես տնտեսական զարգացման համար մեկ թշնամին մենաշնորհն է (մոնոպոլիան): Ինչպես վկայում է համաշխարհային փորձը, ներառյալ նաև մեր հանրապետության ոչ երկարամյա փորձը (եթե ավելի քան քսան տարին այդպիսին չէ), պետության բնականոն զարգացման համար առաջին պայմանն այդ երկրում ազատությունն է: Այս դեպքում ազատություն ասելով՝ հասկանում ենք այնպիսի իրավիճակ, երբ քո գործողություններով չես սահմանափակում մյուսների հնարավորությունները, իրավունքներն ու գործողությունները: Մինչդեռ երբ գործարարը նաև օրենսդիր է, կամ օրենսդիրը նաև գործարար է, ապա պետությունն ու նրա կառույցները ծառայում են գործարար–օրենսդիրն, գործարար–գործադիր մարմնում կամ մարմիններում աշխատողներին: Իսկ ինչ է նշանակում պետությունը կամ նրա կառույցները ծառայեցնել այս կամ այն գործարար–իշխանավոր անձին կամ անձանց: Դա նշանակում է, որ.

1. պետության կողմից ընդունվող որոշումները, օրենքները կամ մյուս իրավական ակտերը, սահմանափակելով բնակչության մեծ մասի շահերն ու իրավունքները, ընդունվում են հոգուտ նշված փոքրաթիվ անձանց,

2. օգտվելով իրենց զբաղեցրած դիրքերից և օրենքով ընձեռած հնարավորություններից (օրինակ՝ Ազգային ժողովի պատգամավորներն օժտված են անձեռնմխելիության իրավունքով)՝ իրենց շահերից բխող գործողություններ են իրականացնում (օրինակ՝ չեն վճարում օրենքով նախատես-



ված հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները կամ վճարում են միայն դրանց փոքր մասը),

3. Նշվածի արդյունքում վարկաբեկվում է թե՛ մյուս գործարարների բարի համբավը և թե՛ պետության նկատմամբ մարդկանց վստահությունը, քանի որ այն, որպես հասարակական ինստիտուտ, կոչված լինելով ծառայելու բնակչության մեծ մասին, ծառայում է միայն նրա փոքր հատվածին:

Նշված գործողությունների արդյունքում կամ ավելի ճիշտ պետության և նրա կառույցների կողմից իրենց պարտականությունները պատշաճ մակարդակով չկատարելու հետևանքով տնտեսվարման դաշտում ստեղծվում է անհավասար, հետևաբար նաև ոչ մրցակցային վիճակ: Դրա հետևանքով խաթարվում է հավասար մրցակցելու շուկայական տնտեսության կարևորագույն մոտեցումը (սկզբունքը), որով զգալի վնաս է հասցվում «չհովանավորվող» տնտեսվարողներին՝ այդպիսով ոտնահարելով հավասար մրցակցության իրավունք ունենալու և այն կիրառելու հնարավորությունը: Արդյունքում սահմանափակվում է վերջիններիս տնտեսվարելու ազատությունը, ինչն ընկած է շուկայական տնտեսության և նրա զարգացման հիմքում:

Ի դեպ՝ ՀՀ Սահմանադրության հոդված 8-ում նշված է, որ «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը», իսկ հոդված 33.1-ում ամրագրված է, որ «Շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են» [28]:

Ո՞րն է լուծումը, ելքը: Այդ մասին դեռևս 1776 թվականին դասական տնտեսագիտության հիմնադիր Ադամ Սմիթը «Ազգերի հարստության բնույթի և պատճառների մասին» հետազոտության մեջ գրել է. «Աշխարհում երկու բան անհամատեղելի է՝ թագավորելը և առևտուր անելը» (Ժամանակակից հասկացություններին համապատասխան՝ քաղաքական գործիչն ու գործարարը): Ու քանի դեռ չի արվել այս հստակ տարանջատումը, ՀՀ որևէ քաղաքացու տված ավելի շատ ազատությունը խանգարելու է մյուսներին ոչ միայն գործարարությամբ զբաղվելու գործում, այլև հանգեցնելու է նրանց գիտակցության մեջ «մենք ապրում ենք անարդար երկրում» բանաձևին, որի հետևանքն այն է լինելու, որ այդպես մտածողները արդարությունը փնտրելու են այլ երկրներում: Այլապես ճիշտ է համարվելու այն կարծիքը, որ «Թագավորում են, որ առևտուր անեն»: Իրոք, սարսափելի է հնչում այս «անմեղ» թվացող միտքը, որի բերած վնասները երկրին և դրանից տուժած մարդկանց կորուստները այնքան մեծ են, որ դրանք անչափելի են: Եվ եթե ինչ-որ առումով կարելի է դրանց արժեքային գնահատական տալ, ապա պետությանը, ժողովրդավարությանը և դրանից տուժած քաղաքացիներին հասցված բարոյական վնասն իրոք անգնահատելի է:

Նշենք նաև, որ գործարարությունը քաղաքականությունից (և հակառակը) առանձնացնելուց կամ դրանք միմյանցից անջատելու հիմնախնդիրը նոր չէ: Ավելին՝ դրա իրավական լուծման վերաբերյալ քաղաքական մոտեցումը

տրված է երկրի հիմնական օրենքում՝ գործող Սահմանադրությունում (փոփոխություններով) (հիշեցնենք նաև, որ այն ընդունվել է 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով), որտեղ հոդված 65-ում սևով սպիտակի վրա գրված է. «Պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից» [28]: Մեր իրականությունում՝ դեպքերի ճշշող մեծամասնությունում, պատգամավորները չեն օգտվում վճարովի աշխատանք կատարելու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրենց իրավասությունից, այն է՝ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանք իրականացնելուց, այլ տարբեր զարմանալի և զարտուղի ճանապարհներով (կամ առանց դրանց) զբաղվում են ձեռնարկատիրությամբ: Իսկ եթե ընդհանրապես մարդու իրավունքների և ազատությունների տեսանկյունից մոտենանք խնդրի դրվածքին, ապա պատգամավորներին օժտելով անձեռնմխելիության իմունիտետով՝ մեր քաղաքացիներին բաժանում ենք երկու խմբի (կամ տեսակի). նրանք, ովքեր ունեն այդպիսի անձեռնմխելիություն, և նրանք, ովքեր չունեն այդպիսի իրավունք<sup>1</sup>: Վերջիններս կազմում են հասարակության 99,999%-ը կամ ճշշող մեծամասնությունը, և ահա թե ինչու այս ամենը լավ հասկացող և գիտակցող երկրների մեծ մասի պառլամենտների անդամները լրացուցիչ կամ արտակարգ այլ լիազորություններ չունեն իրենց մյուս հայրենակիցների համեմատությամբ:

Մենաշնորհային կամ օլիգարխիկ տնտեսության գոյությունը մեզանում արդարացնողները հաճախ դա հիմնավորում են հայրենի տնտեսության փոքրությամբ և շուկայի նեղությամբ: Նրանց կարծիքով, եթե, օրինակ, շաքար կամ շաքարավազ ներմուծողները լինեն շատ, ոչ թե երկու կամ երեք ներկրող, ապա շուկայում այդ ապրանքատեսակների գները զգալիորեն կբարձրանան: Եվ եթե մի քանիսն են մեծաձախ գներով դրսից ներկրում, ապա այս դեպքում ապրանքների գները նվազում են, քանի որ գործում է մեծաձախ գնով շատ քանակությամբ գներու տնտեսական էֆեկտը, ըստ որի՝ դրանով միավոր ապրանքի հաշվով հարաբերականորեն ցածր գին է ստացվում, որից շահում են ոչ միայն մեծաձախ, այլև մանրաձախ գնորդները, այսինքն՝ մենք բոլորս՝ սովորական քաղաքացիները: Հասկանալի է, որ խոսքը միայն շաքարին կամ շաքարավազին չի վերաբերում, այլ բոլոր ապրանքներին, որոնք մեծ բաժին են կազմում սպառման կառուցվածքում:

«Հ ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) յուրաքանչյուր տարի հրապարակում է վիճակագրական տեղեկատվություն սպառողների կողմից

<sup>1</sup> Այդ միտքը հետևյալ կերպ է ձևակերպված ՀՀ Սահմանադրության հոդված 66-ում. «Պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության»:

հիմնականում հայցվող 25 ապրանքատեսակների ռեսուրսների վերաբերյալ<sup>1</sup>: Մեր կողմից ուսումնասիրվել և հաշվարկվել են այդ ապրանքատեսակների ռեսուրսների արժեքները (դրամով և ԱՄՆ դոլարով):

Ուսումնասիրությունը վկայում է, որ 2011 թվականին հանրապետության սպառողների կողմից հիմնականում հայցվող 25 ապրանքատեսակների ռեսուրսների արժեքը կազմել է 3290770 հազ. դոլար կամ 2011 թվականի ՀՆԱ-ի (10,1381 մլն դոլար) 32,5%-ը, իսկ 2009 թվականին այդ մեծությունը կազմել է 30,8% (2,660770 : 8,648): Նշված ապրանքատեսակների շարքում տավարի և խոզի մսի արժեքը կազմել է 535,608 մլն դոլար (ուսումնասիրվող 25 ապրանքատեսակների ընդհանուր արժեքի 16,2%-ը), իսկ ձկան արժեքի հետ միասին՝ 581,922 մլն դոլար (17,6%): «Սնեղենից» (ներառյալ ձուկը) հետո ծախսերի ամենամեծ հոդվածը բաժին է ընկնում էլեկտրաէներգիային՝ 437,529 մլն դոլար (13,3%), իսկ երրորդ տեղում է հացը՝ 378,375 մլն դոլար (11,5%): Նշված խումբ սպառողական ապրանքների բաժինը կազմում է 1397,826 մլն դոլար (42,4%), իսկ չորրորդ տեղում է ցորենը՝ 312,671 մլն դոլար (9,5%): Վերոնշյալ ապրանքատեսակների կշիռը կազմում է ուսումնասիրվող 25 ապրանքատեսակների ընդհանուր արժեքի 51,9%-ը: Բենզինին (253,900 մլն դոլար) և դիզելային վառելիքին (179,838 մլն դոլար) հետևում են շաքարավազը (177,833 մլն դոլար), ծխախոտը (177,401 մլն դոլար), ալյուրը (144,311 մլն դոլար), բուսական յուղը (119,295 մլն դոլար), ձուն (105,209 մլն դոլար): Նշված ապրանքատեսակների արժեքը գերազանցում է հարյուր մլն դոլարի սահմանագիծը:

2013 թվականին հանրապետությունում սպառողների կողմից հիմնականում հայցվող 25 ապրանքատեսակների (բացի էթիլային սպիրտից) արժեքը կազմել է 3240,1 մլն դոլար կամ 2013 թվականի ՀՆԱ-ի (10416 մլն դոլար) 31,1%-ը: Նշված ապրանքատեսակների շարքում տավարի, խոզի և հավի մսի արժեքը կազմել է 594,7 մլն դոլար (ուսումնասիրվող 24 ապրանքատեսակների ընդհանուր արժեքի 18,4%-ը), իսկ ձկան արժեքը՝ 659,910,3 հազ դոլար (20,4%): Սնեղենից (ներառյալ ձուկը) հետո, ծախսերի ամենամեծ հոդվածը բաժին է

<sup>1</sup> Ի դեպ՝ նախորդ տարիների համանման հրապարակումների (նկատի ունենք Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ որևէ թվականի հունվար-դեկտեմբերի տեղեկատվական ամսական զեկույցները) համեմատությամբ 2012 թվականին լույս տեսած «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույցում փոփոխության է ենթարկվել վերոնշյալ տեղեկատվության վերնագիրը: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թվականի հունվար-դեկտեմբերին», Եր., ՀՀ ԱՎԾ, 2010, էջ 52-ում բերված աղյուսակը վերնագրված է «Բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների ռեսուրսները»: Չվիճարկելով ՀՀ ԱՎԾ-ի կողմից կատարված այդ փոփոխությունը՝ նկատենք միայն, որ «սպառողների կողմից հիմնականում հայցվող» արտահայտությունը անհամեմատ ավելի վատն է, քան «Բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող» դարձվածքը: Ինչու՞ Նախ՝ «սպառողները» կարող են լինել ոչ միայն քաղաքացիները, այլև, օրինակ, տնտեսվարող սուբյեկտները, որոնք ոչ թե սպառման, այլ վերամշակման նպատակով կարող են ձեռք բերել ցանկում ներկայացված ապրանքատեսակները: Մինչդեռ բերված տեղեկատվության ողջ իմաստն այն է, որ ցույց տրվեն բնակչության կողմից սպառվող հիմնական ապրանքատեսակները, որոնք իրացվում են բնակչությանը մանրածախ գներով: Երկրորդ՝ «սպառման կառուցվածքում» միտքը ցույց է տալիս, որ այն սպառվել է կամ սպառվում է բնակչության կողմից, մինչդեռ սպառողների կողմից հիմնականում հայցվող արտահայտությունը ոչինչ չի ասում: Եվ, ի վերջո, գիտական աստիճան հայցելու համար գրվում են ատենախոսություններ, սակայն ապրանքատեսակ սպառելու համար երբեք չեն հայցում: Հայերենում լայնորեն տարածված և օգտագործվող «Հայցում եմ Ձեր ներողամտությունը» արտահայտությունում «հայցել» բառը, կարծում ենք, իմաստ չունի դարձնելու վիճակագրական բառեր:

ընկնում էլեկտրաէներգիային՝ 457,9 մլն դոլար (14,1%), իսկ երրորդ տեղում է հասցը՝ 369,1 մլն դոլար (11,4%)։ Նշված երեք խումբ սպառողական ապրանքների բաժինը 2013 թվականին կազմել է 1421,6 մլն դոլար (45,9%)։ Չորրորդ տեղում է ցորենը՝ 262,85 մլն դոլար արժեքով (8,1%)։ Նշված 4 ապրանքատեսակների կշիռը կազմում է ուսումնասիրվող 25 ապրանքատեսակների (բացի էթիլային սպիրտից) ընդհանուր արժեքի 54,0%-ը։ Դիզվառելիքին (162,3 մլն դոլար) և բենզինին (157,3 մլն դոլար) (որպես հիմնական ներկրվող ապրանքատեսակներ), հետևում են օդին (196,6 մլն դոլար), ծխախոտը (179,1 մլն դոլար), կոնյակը (131,0 մլն դոլար), ձուն (108,2 մլն դոլար), ալյուրը (158,4 մլն դոլար)։ Նշված բոլոր ապրանքատեսակներից յուրաքանչյուրի արժեքը գերազանցում է հարյուր մլն դոլարի սահմանագիծը<sup>1</sup>։

Արժեքային առումով 2011 թվականին 2009 թվականի համեմատ զգալիորեն ավելացել են տավարի, խոզի, հավի մսի սպառման չափերը։ Ձկան, բրնձի, մարգարիտի, օդու, ծխախոտի, էլեկտրաէներգիայի սպառման արժեքը նվազել է, իսկ մյուս ապրանքատեսակների սպառման արժեքները ավելացել են։

ՀՀ ԱՎԾ տվյալներից հետևում է, որ ինչպես 2011, այնպես էլ 2013 թվականներին նշված ապրանքատեսակներից արտահանվել է ձուկ, պանիր, սուրճ (թեև Հայաստանում սուրճ չի արտադրվում, այսինքն խոսքը՝ ներմուծված սուրճի արտահանման մասին է), շաքարավազ, մակարոնեղեն, գինի, էթիլային սպիրտ, կոնյակ, օդի, ծխախոտ, դիզելային վառելիք (վերարտահանվել է) և էլեկտրաէներգիա։ Մնացած ապրանքատեսակների ռեսուրսների ձևավորման գործում մեծ է ներմուծման բաժինը։ Այսպես՝ հավի մսի սպառման մեջ ներմուծման բաժինը շուրջ 7 անգամ (2013 թ-ին՝ 5,3) գերազանցում է արտադրվածի բաժինը, կարագը՝ 5,6 (9,2) անգամ, ցորենը՝ 1,6 (1,1), բուսական յուղը՝ 34,7 (5,7), մարգարիտը՝ 124 (659,2), շաքարավազը՝ 1,3, (դա այն դեպքում, երբ հանրապետությունում գործում է շաքարի արտադրության հզոր գործարան), մակարոնեղենը՝ 1,3 (1,2) անգամ։ Ըստ էության՝ սրանք այն ապրանքատեսակներն են, որոնց արտադրությունները պետք է առաջին հերթին կազմակերպել հանրապետությունում և դրանով իսկ նվազեցնել ներմուծման կախվածությունը՝ ապահովելով երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը և զգալի ֆինանսական միջոցների օգտագործումը հայրենական տնտեսության զարգացման ու ընդլայնման նպատակով։

Հեշտ է նաև նկատել, որ հանրապետության սպառողների կողմից հիմնականում հայցվող 24 ապրանքատեսակներից 20-ն կապված են մարդու անմիջական սննդի ապահովման հետ, իսկ մյուսները ծառայում են դրան։ Ստացվում է, որ, իրոք, մենք ունենք ոչ թե արտադրող, այլ սպառող հասարակություն, որի կողմից ստեղծված (այդ թվում՝ ներմուծված) արժեքների 1/3-ը օգտագործվում է անմիջական սննդի ապահովմանը ծառայելու համար։

Վերը ասվածից ամենևին էլ չպետք է եզրակացնել, որ հայերը դարձել են

<sup>1</sup> Հաշվարկները կատարվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թվականի հունվար-դեկտեմբերին» [6] տեղեկատվական ամսական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2014, էջ 248-ի տվյալների հիման վրա։

աշխարհի ամենասպառող ազգը: Դրանում կարելի է համոզվել՝ ծանոթանալով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրվող տեղեկատվությանը, որը վերաբերում է սպառողների կողմից օգտագործվող 25 հիմնական ապրանքատեսակներին [5]: Նշենք միայն, որ մեկ շնչի հաշվով օրական էներգետիկայի (2232 կկալ) 30,7%-ը ստացվում է հացամթերքից (օրական փաստացի սպառումը 1 շնչի հաշվով կազմում է 461,1 գրամ), ինչն աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է:

Ի դեպ՝ նշենք նաև, որ ՀՀ-ում նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը 2011 թվականին կազմել է 39987,1 դրամ (2013 թվականին՝ 42946,7 դրամ), իսկ պարենային զամբյուղի ամսական արժեքը՝ 22591,6 դրամ մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը մեկ շնչի հաշվով՝ 24263,7 դրամ: Նվազագույն ամսական աշխատավարձի չափը 2011 թ. կազմել է 32500 դրամ: Այդ թվերը 2009 թվականին կազմել են համապատասխանաբար 29203,5 դրամ, 18841,0 դրամ, այսինքն՝ 2011 թվականին պարենային զամբյուղը 2009 թվականի համեմատ ավելացել է 119,9%-ով: Համեմատության համար նշենք, որ միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ-ում 2011 թվականին կազմել է 115265 դրամ կամ հաշվարկային փոխարժեքով (309,4 դոլար), 2009 թվականին՝ 101895 դրամ (280,5 դոլար): Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2011 թվականին 2009 թվականի համեմատ դրամական արտահայտությամբ 113,1%, դոլարային արտահայտությամբ՝ 110,3%: Եթե 2011 թվականին պարենային զամբյուղը դիտարկենք դոլարային արտահայտությամբ, ապա կստացվի 60,6 դոլար (22591,6 : 372,5), 2009 թվականին՝ 51,9 դոլար (18841,0 : 363,3): Այսինքն՝ դոլարային արտահայտությամբ՝ 2011 թվականի պարենային զամբյուղի արժեքը 2009 թվականի պարենային զամբյուղի արժեքի համեմատ. ավելացել է 116,8%-ով: Երկու դեպքում էլ միջին ամսական անվանական աշխատավարձի աճը զգալիորեն հետ է մնացել պարենային զամբյուղի ամսական արժեքի աճից: Բացի այդ՝ մեկ շնչի հաշվով պարենի համար ամսական 60,6 դոլար ծախսը նույնպես ցածր ցուցանիշ է, եթե նկատենք, որ 2011 թվականին հանրապետությունում մեկ կգ տավարի մսի մանրածախ միջին գինը կազմել է 2507,8 դրամ (6,7 դոլար) 2013 թվականին՝ 2594,6 դրամ [3 և 5]:

## 6.2. Պարենի առանձին տեսակների արտադրության, արտահանման և գնագոյացման միտումները համաաշխարհային շուկայում

Պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրը և դրա լուծման ուղիների որոնումները ներկայիս աշխարհի զարգացման համամոլորակային հիմնախնդիրներից մեկն է: Մեծ թվով պետություններ կանգնած են բնակչության սննդի ապահովման խնդրի առջև, քանի որ պարենային ռեսուրսները սուղ են, իսկ մոլորակի բնակչության թվաքանակը (2013 թ. երրորդ եռամսյա-

կին՝ 7,165 մլրդ մարդ) տարեցտարի աճում է: Ստեղծված նման իրավիճակը պարենի համաշխարհային շուկայում հանգեցրել է ինչպես գյուղատնտեսական հումքի, այնպես էլ վերամշակված սննդամթերքի էական ավելացման, դրանով իսկ ավելի սրելով պարենամթերքի պաշարների առաջարկի և դրա նկատմամբ բնակչության գնողունակ պահանջարկի միջև եղած անհավասարությունը: Արդյունքում ավելացել է բնակչության պարենային զամբյուղի արժեքը, ինչպես նաև ընդհանուր ծախսերի կառուցվածքում սննդամթերքի ձեռքբերման համար կատարված ծախսերի տեսակարար կշիռը:

Պարենի պաշարների առաջարկի նվազումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնց շարքում հիմնական տեղ են զբաղեցնում հետևյալ գործոնները: Առաջին՝ գյուղատնտեսական հումքի մի մասը, որը նախկինում վերամշակվում էր սննդամթերքի, այժմ աշխարհի բազմաթիվ երկրների կողմից (հիմնականում զարգացած) օգտագործվում է վառելիք ստանալու նպատակով: Երկրորդ՝ տարերային աղետների պատճառով նվազել են ցանքատարածությունների մակերեսները: Դրանք նվազում են նաև հողատարածքների ոչ ճիշտ մշակման, ագրոտեխնիկական պայմանները չպահպանելու, էրոզիայի, աղակալման և մարդածին այլ հանգամանքներով: Բնակչության գնողունակ պահանջարկն ավելացել է հիմնականում Հարավարևելյան Ասիայի երկրներում և հիմնականում Չինաստանում, որտեղ բնակչության եկամուտների ավելացման հաշվին շուրջ 1 մլրդ մարդ ցածր եկամուտների խմբից տեղափոխվել է միջին եկամուտների խումբ, ինչն էլ զգալիորեն ավելացրել է սննդամթերքի նկատմամբ բնակչության պահանջարկը: Հատկապես 2007 թ. սկիզբ առած համաշխարհային ֆինասատնտեսական ճգնաժամից հետո, որի հետևանքով զգալիորեն նվազեց համաշխարհային տնտեսության տնտեսական աճի տեմպը, և նկատվեց արտադրական գործընթացների լճացում, որը բերեց բնակչության իրական եկամուտների էական նվազման, միաժամանակ ավելացան նաև աղքատ բնակչության գծով ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշները: Ավելին՝ աշխարհի շատ երկրներում ավելացավ սովյալների թվաքանակը: Ուստի այս և վերևում նշված մյուս գործոնները երկրների կառավարություններից պահանջում են ստեղծված իրավիճակում հանդես բերել համապատասխան նախաձեռնություններ ու իրականացնել միջոցառումներ, մշակել առանձին ծրագրեր ինչպես արգրոարդյունաբերական համալիրի զարգացման, այնպես էլ բնակչության գնողունակության բարձրացման համար: Հասկանալի է նաև, որ այդպիսի ծրագրերը կարող են տարբերվել գյուղատնտեսական հումք և պարենամթերք արտադրող ու դրանք ներմուծող երկրների համար: Մասնավորապես՝ գյուղատնտեսական հումք վերամշակող երկրների կառավարությունները պարտավոր են հաշվի առնել ոչ միայն իրենց երկրների վերամշակող արդյունաբերական կարողությունների և ընդլայնման հնարավորությունները, այլև բնակչության եկամուտների փոփոխության միտումներն ու պարենային զամբյուղի կառուցվածքը:

Հատկանշական է ընդգծել նաև այն, որ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում առկա է պարենի անվտանգության ապահովման հիմնախնդիրը, քանի որ նույնիսկ զարգացած երկրներում, որտեղ առկա են զարգացած տնտեսություն և գյուղատնտեսություն, տվյալ խնդիրը վերջնականապես լուծված չէ, որոնք այլ երկրներից ներմուծում են պարենային ապրանքներ: Պարենի սակավությունը հատկապես նկատելի է բնակչության մեծ թվաքանակ ունեցող երկրներում, ինչպիսիք են, օրինակ՝ Չինաստանը (բնակչությունը՝ 1,353,821,000 մարդ), Հնդկաստանը (բնակչությունը՝ 1,210,193,422 մարդ), ամֆրիկյան պետությունները (բնակչությունը՝ 1,032,532,934 մարդ) և մի շարք տարածաշրջաններ, որտեղ տնտեսության արտադրական ներուժն ու ռեսուրսները կենտրոնացված են հիմնականում մայրաքաղաքում և հարակից քաղաքներում: Այստեղ հատկանշական է մահացությունների աճը, որը սովի և համաճարակային հիվանդությունների պատճառով տարեցտարի ավելանում է: Հատկապես ցածր կենսամակարդակ ունեցող երկրները մեծ աջակցություն են ստանում ԱՄՆ և ԵՄ կողմից ինչպես ֆինանսական, այնպես էլ պարենի և բնափրային տեսքով, որի արդյունքում այդ երկրներում փոքր-ինչ թուլանում է սոցիալական լարվածությունը: Որպես պարենի բաղադրիչ՝ առաջնահերթ է համարվում ցորենի, եգիպտացորենի, բրնձի և կարտոֆիլի առկայությունը, որոնք լուծում են գոյատևման խնդիրը: Հատկապես վերջին տարիներին բազմաթիվ երկրներում օրհասական է դարձել բնակչությանը նվազագույն ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան սննդով ապահովելը: Նկատենք նաև, որ կերային բազայի առկայության դեպքում բնակչությանը հնարավոր է պահովել նաև մսով, ինչը գլխավորապես զարգացած երկրների բնակչության սննդակարգում կարևոր մաս է կազմում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախ ներկայացնենք համաշխարհային շուկայում պարենի հիմնական տեսակների՝ ցորենի, շաքարավազի, կաթի, կենդանական յուղի (կարագ), բուսական յուղի և այլ պարենի գծով արտադրվող ու արտահանող աշխարհի խոշոր 20 երկրների վիճակագրական ցուցանիշները և դրանց հիման վրա նաև բացահայտենք այն օրինաչափություններն ու գնագոյացման միտումները, որոնք առկա են պարենամթերքի շուկայում, և որոնց միջոցով ձևավորվում է պարենի առաջարկը ինչպես տվյալ երկրում, այնպես էլ համաշխարհային շուկայում: Նշված օրինաչափությունների ու գնային միտումների վերլուծությունը հնարավորություն է տալիս համեմատություններ կատարելու և զուգահեռներ անցկացնելու համաշխարհային ու ազգային տնտեսություններում սպառվող պարենամթերքի և գների միջև: Դա հատկապես կարևոր է անցումային տնտեսությամբ, այդ թվում՝ ՀՀ երկրներում, որտեղ ամբողջ գործիքակազմով չեն գործում շուկայական մեխանիզմները, և որոնցում տեղ գտած թերությունները շատ հաճախ փորձում են բացատրել համաշխարհային տնտեսության շեղումներով և թերություններով, բայց բնավ երբեք ազգային տնտեսությունների պետական կարգավորման բացթողումներով:

### **6.2.1. Արտադրության ու արտահանման վիճակը աշխարհի ամենաշատ հիմնական պարենամթերք արտադրող և արտահանող 20 երկրներում և դրանց գները**

Ուսումնասիրելով ցորենի արտադրության և արտահանման վերաբերյալ ներկայացված վիճակագրական ցուցանիշները (տես աղյուսակներ 6.8 և 6.9)՝ կարելի է եզրակացնել, որ ցորենի արտադրության հիմնական դերակատարներն են Չինաստանը, Հնդկաստանը, ԱՄՆ-ը, ՌԴ-ն, ինչպես նաև ԵՄ անդամ երկրները: Հատկանշական է նաև այն, որ ցորեն արտադրող և արտահանող շատ երկրներ միմյանցից խիստ տարբերվում են, իսկ նման հանգամանքը բացատրվում է նրանով, որ ամենից շատ ցորեն արտադրող երկրների արտադրանքի խոշոր ծավալները սպառվում են հենց այդ երկրների ներսում, այդ իսկ պատճառով էլ վերջիններս չեն կարող ապահովել խոշոր ծավալների համող ցորենի արտահանում: Բավական է նշել, որ ամենաշատ ցորեն արտադրող 20 երկրներից Չինաստանը, Հնդկաստանը, Թուրքիան, Իրանը, Եգիպտոսը, Լեհաստանը, Իսպանիան և Իտալիան տեղ չեն գտել ամենաշատ ցորեն արտահանող 20 երկրների ցանկում: Իսկ վերջինիս կազմում ընդգրկված Բուլղարիան, Չեխիան, Հունգարիան, Ուրուգվայը, Դանիան և Մեքսիկան ընդգրկված չեն ամենաշատ ցորեն արտադրող 20 երկրների ցանկում: Իսկ աղյուսակ 6.9-ում ընդգրկված և վերը թվարկված երկրներում, քանի որ գոյություն ունի ցորենի պաշարների որոշակի «ավելցուկ», ուստի այդ երկրները դրա մի մասը արտահանում են: Բնականաբար, նույնը չի կարելի ասել ԱՄՆ-ի մասին, քանի որ վերջինս և՛ խոշոր արտադրող է, և՛ արտահանող: Այսպես՝ 2011 թ. ցորենի արտադրության ծավալով առաջին տեղը զբաղեցրած Չինաստանի բաժինը վերը բերված 20 երկրների ընդհանուր ցուցանիշների մեջ կազմել է 19,5% (117,4 մլն տ), Հնդկաստանի բաժինը կազմել է 14,4% (86,9 մլն տ), ՌԴ-ի բաժինը՝ 9,3% (56,2 մլն տ), ԱՄՆ-ի բաժինը՝ 9,04% (54,4 մլն տ), Ֆրանսիայի բաժինը՝ 6,3% (38,0 մլն տ): Ցորենի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ առաջին տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ը, որը ցորենի արտադրության շուրջ 60,3%-ը արտահանել է այլ երկրներ, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 23,4%-ը, արժեքով՝ 25,2%-ը (32,8 մլն տ, 11,1 մլրդ ԱՄՆ դոլար): Վերջինիս հետևում են համապատասխանաբար Ֆրանսիան՝ 53%-ը կամ արտահանման 14,5%-ը և 15,3%-ը (20,3 մլն տ, 6,7 մլրդ ԱՄՆ դոլար), Ավստրալիան՝ 64%-ը, ընդհանուր արտահանման՝ 12,6%-ը և 12,9%-ը (17,6 մլն տ, 5,7 մլրդ ԱՄՆ դոլար), Կանադան՝ 65%-ը, ընդհանուր արտահանման՝ 11,6%-ը և 13%-ը (16,3 մլն տ, 5,7 մլրդ ԱՄՆ դոլար), ՌԴ-ն՝ 27%-ը, ընդհանուր արտահանման՝ 10,8%-ը և 8,3%-ը (15 մլն տ, 3,6 մլրդ ԱՄՆ դոլար): Հատկանշական է, որ ցորեն արտահանող շատ երկրներ արտահանման հետ մեկտեղ նաև ներառում են տվյալ ապրանքատեսակից՝ ցորենի տեսականին բազմազանեցնելու (դիվերսիֆիկացնելու) նպատակով: 2011 թ. ցորենի ամենաշատ արտահանում ունեցող 20 երկրներում ցորենի 1 տոննայի արժեքը ամենացածրը եղել է Ղազախստանում՝ 210,76 ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձրը՝ Մեքսիկայում՝ 357,10 ԱՄՆ դոլար:



**Աղյուսակ 6.8. Ցորենի արտադրությունը 2011 թ.**

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	Չինաստան	117410000	19,5
2	Հնդկաստան	86874000	14,4
3	ՌԴ	56239990	9,3
4	ԱՄՆ	54413310	9,0
5	Ֆրանսիա	38021000	6,3
6	Ավստրալիա	27410076	4,6
7	Կանադա	25261400	4,2
8	Պակիստան	25213800	4,2
9	Գերմանիա	22800000	3,8
10	Ղազախստան	22732000	3,8
11	Ուկրաինա	22323600	3,7
12	Թուրքիա	21800000	3,6
13	ՄԹ	15257000	2,5
14	Արգենտինա	14093728	2,3
15	Իրան	13500000	2,2
16	Լեհաստան	9339200	1,6
17	Եգիպտոս	8407126	1,4
18	Ռումինիա	7131590	1,2
19	Իսպանիա	6876657	1,1
20	Իտալիա	6622004	1,1
<b>Հնդամենը</b>		<b>601726481</b>	<b>100</b>

Աղյուսակներ 6.8–6.35–ի աղբյուրը՝ ՄԱԿ–ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության պաշտոնական կայքէջ՝ [www.faostat.fao.org](http://www.faostat.fao.org)

**Աղյուսակ 6.9. Ցորենի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	ԱՄՆ	32789893	23,4	11134659	339,58
2	Ֆրանսիա	20345934	14,5	6738299	331,19
3	Ավստրալիա	17657181	12,6	5709036	323,33
4	Կանադա	16335086	11,6	5742111	351,52
5	ՌԴ	15185953	10,8	3671176	241,75

6	Արգենտինա	8411136	6,0	2508660	298,25
7	Գերմանիա	6168890	4,4	1981035	321,13
8	Ուկրաինա	4097309	2,9	1070292	261,22
9	Ղազախստան	2891482	2,1	609419	210,76
10	Բրազիլիա	2350720	1,7	699110	297,40
11	ՄԴԹ	2287100	1,6	663553	290,13
12	Բուլղարիա	2137202	1,5	577065	270,01
13	Պակիստան	2087422	1,5	674424	323,09
14	Ռումինիա	1568735	1,1	430919	274,69
15	Չեխիա	1414881	1,0	427956	302,47
16	Հունգարիա	1246456	0,9	369476	296,42
17	Ուրուգվայ	899616	0,6	258266	287,08
18	Դանիա	886924	0,6	260121	293,28
19	Մեքսիկա	835908	0,6	298502	357,10
20	Լեհաստան	825288	0,6	274213	332,26
<b>Հոդվածներ</b>		<b>140423116</b>	<b>100,0</b>	<b>44098292</b>	<b>314,04</b>

Զվերամշակված շաքարավազի 20 հիմնական երկրների կողմից արտադրության և արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն (տես աղյուսակներ 6.10 և 6.11)՝ շաքարավազի խոշոր արտադրողներից Բրազիլիան, Հնդկաստանը, Թաիլանդը, ԱՄՆ-ը, Մեքսիկան և մի շարք այլ երկրներ միաժամանակ նաև խոշոր արտահանողներ են, որոնք ներքին շուկան արտադրությամբ ապահովման հետ մեկտեղ շաքարավազը արտահանում են այլ երկրներ: Ինչպես նկատվում է աղյուսակ 6.11-ից, Բրազիլիայի արտադրանքի 53,6%-ը արտահանել է այլ երկրներ, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 62,6%-ը, քանակով՝ 20 մլն տ, իսկ արժեքով՝ 11,5 մլրդ ԱՄՆ դոլար, որին հաջորդում են Թաիլանդը՝ համապատասխանաբար 42,7%, ընդհանուր արտահանման՝ 12,8%-ը և 11,4%-ը (4,1 մլն տ, 2,1 մլրդ ԱՄՆ դոլար), Ավստրալիան՝ 46,7%-ը, ընդհանուր արտահանման՝ 5,3%-ը և 5,4%-ը (1,7 մլն տ, 987 մլն ԱՄՆ դոլար), Գվատեմալան՝ 54,9%-ը, ընդհանուր արտահանման՝ 4%-ը և 3,5%-ը (1,3 մլն տ, 649 մլն ԱՄՆ դոլար), Հնդկաստանը՝ 3,3%-ը, ընդհանուր արտահանման՝ 2,7%-ը և 3,3%-ը (876 հազար տ, 607 մլն ԱՄՆ դոլար): Նշենք նաև, որ չմշակված շաքարավազ արտադրող խոշոր 20 երկրներից Չինաստանը (12,5 մլն տ) չի ընդգրկվել 20 խոշոր արտահանող երկրների ցանկում: Միաժամանակ չվերամշակված շաքարավազի 1 տոննայի արտահանման գների համաձայն՝ 1 տոննայի ամենաբարձր գինը եղել է Մեքսիկայում՝ 794,6 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ ԱՄՆ-ում՝ 367,81 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.10. Չվերամշակված շաքարավազի արտադրությունը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	Բրազիլիա	37582000	26,5
2	Հնդկաստան	26574000	18,7
3	Չինաստան	12519000	8,8
4	Թաիլանդ	9640000	6,8
5	ԱՄՆ	7722000	5,4
6	Մեքսիկա	5380000	3,8
7	Գերմանիա	4772452	3,4
8	ՌԴ	4753113	3,4
9	Ֆրանսիա	4709000	3,3
10	Պակիստան	4320000	3,0
11	Ավստրալիա	3662000	2,6
12	Ֆիլիպիններ	2597499	1,8
13	Թուրքիա	2391000	1,7
14	Գվատեմալա	2346108	1,7
15	Կոլումբիա	2339988	1,7
16	Ուկրաինա	2326910	1,6
17	Արգենտինա	2094273	1,5
18	Լեհաստան	2052000	1,4
19	Եգիպտոս	2024000	1,4
20	Հարավ. Աֆրիկա	1981186	1,4
<b>Ընդամենը</b>		<b>141786529</b>	<b>100,0</b>

Աղյուսակ 6.11. Չվերամշակված շաքարավազի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Բրազիլիա	20152914	62,6	11548786	573,06
2	Թաիլանդ	4122701	12,8	2093998	507,92
3	Ավստրալիա	1711488	5,3	987118	576,76
4	Գվատեմալա	1289815	4,0	648669	502,92
5	Հնդկաստան	876554	2,7	607471	693,02
6	Կուբա	639074	2,0	373941	585,13
7	Ֆիլիպիններ	580735	1,8	354853	611,04
8	Մեքսիկա	286813	0,9	227902	794,60
9	Էլ Սալվադոր	276118	0,9	132558	480,08
10	Մալավի	267982	0,8	191947	716,27
11	Սվազիլենդ	264841	0,8	135157	510,33

12	Զամբիա	257730	0,8	145686	565,27
13	Գուանա	253021	0,8	155675	615,27
14	Դոմինիկայի Հանրապ.	240566	0,7	175811	730,82
15	ԱՄՆ	212470	0,7	78148	367,81
16	Նիկարագուա	186137	0,6	109701	589,36
17	Ֆրանսիա	153148	0,5	94131	614,64
18	Միզամբիկ	151130	0,5	98897	654,38
19	Հարավ. Աֆրիկա	126849	0,4	97036	764,97
20	Ֆիջի	122542	0,4	70889	578,49
<b>Ընդամենը</b>		<b>32172628</b>	<b>100,0</b>	<b>18328374</b>	<b>569,69</b>

Ռաֆինացված շաքարավազի 20 հիմնական խոշոր արտադրող և արտահանող երկրների 2011 թ. վիճակագրական ցուցանիշների համաձայն (տես աղյուսակներ 6.12 և 6.13)՝ արտադրող և արտահանող երկրները խիստ տարբերվում են: Այսպես՝ արտադրության ծավալներով առաջին հնգյակում են ԱՄԷ-ն՝ 1,26 մլն տ (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 10,6%), Իտալիան՝ 1,2 մլն տ (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 10,2%), ԱՄՆ-ը՝ 894 հազար տ (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 7,5%), Սուդանը՝ 854 հազար տ (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 7,2%) և Բելգիան՝ 690 հազար տ (տեսակարար կշիռը ընդհանուրում՝ 5,8%): Համաձայն աղյուսակ 6.13-ի ցուցանիշների՝ ռաֆինացված շաքարավազի արտահանման ծավալներով առաջին հնգյակում են Բրազիլիան, որն ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 27,8%, արժեքով՝ 25%-ը (5,2 մլն տ, 3,39 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով), երկրորդ տեղում է Թաիլանդը՝ համապատասխանաբար 12,8%-ը և 11,4%-ը (2,3 մլն տ, 1,54 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով), Ֆրանսիան՝ 11,6%-ը և 12,3%-ը (2,2 մլն տ, 1,67 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով), Հնդկաստանը՝ 9,8%-ը և 9,6%-ը (1,8 մլն տ, 1,31 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով) և Մեքսիկան՝ 6%-ը և 5,6%-ը (1,1 մլն տ, 983 մլն ԱՄՆ դոլար արժեքով): Միաժամանակ նշենք, որ 1 տ ռաֆինացված շաքարավազի արտահանման ամենաբարձր գինը եզիպտոսում է՝ 931,78 ԱՄՆ դոլար, ամենից ցածրը՝ Թաիլանդում՝ 642,69 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.12. Ռաֆինացված շաքարավազի արտադրությունը

Ը/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	ԱՄԷ	1264795	10,7
2	Իտալիա	1209483	10,2
3	ԱՄՆ	893891	7,5
4	Սուդան	854064	7,2
5	Բելգիա	690119	5,8
6	Մեքսիկա	625873	5,3
7	Եմեն	604453	5,1

8	Ուզբեկստան	596200	5,0
9	Պաղեստին	509203	4,3
10	Շրի Լանկա	508397	4,3
11	Սիրիա	487850	4,1
12	Իսպանիա	459878	3,9
13	Նիգերիա	451524	3,8
14	Գերմանիա	427814	3,6
15	Սինգապուր	420343	3,5
16	Չիլի	415044	3,5
17	Ինդոնեզիա	405544	3,4
18	Կամբոջա	404091	3,4
19	Հոլկաստան	321163	2,7
20	Ֆրանսիա	307050	2,6
<b>Ընդամենը</b>		<b>11856779</b>	<b>100,0</b>

Աղյուսակ 6.13. Ռաֆինացված շաքարավազի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Բրազիլիա	5206237	27,8	3392877	651,69
2	Թաիլանդ	2397970	12,8	1541151	642,69
3	Ֆրանսիա	2177163	11,6	1674653	769,19
4	Հոլկաստան	1842467	9,8	1310000	711,00
5	Մեքսիկա	1123175	6,0	983860	875,96
6	Գերմանիա	941254	5,0	763162	810,79
7	Կոլումբիա	729100	3,9	512031	702,28
8	Բելգիա	546429	2,9	425316	778,36
9	ԱՄԷ	511498	2,7	343301	671,17
10	Բելառուս	389462	2,1	313914	806,02
11	Կորեայի Հանրապ.	360110	1,9	262060	727,72
12	Ալժիր	333373	1,8	265236	795,61
13	Մավրիկիոս	317988	1,7	218907	688,41
14	Լեհաստան	289280	1,5	268393	927,80
15	Մալայզիա	279000	1,5	207872	745,06
16	Եգիպտոս	277176	1,5	258291	931,87
17	Սաուդյան Արաբիա	276890	1,5	216389	781,50
18	ՄԹ	258733	1,4	208861	807,25
19	Նիդերլանդներ	246053	1,3	225162	915,10
20	Դանիա	232264	1,2	184359	793,75
<b>Ընդամենը</b>		<b>18735622</b>	<b>100,0</b>	<b>13575795</b>	<b>724,60</b>

Ուսումնասիրելով 2011 թ. 20 հիմնական երկրների կողմից կաթի արտադրության և կաթի փոշու արտահանման ցուցանիշները (տե՛ս աղյուսակներ 6.14– 6.15) կարելի է նկատել, որ արտադրող և արտահանող երկրները խիստ տարբերվում են՝ բացառությամբ ԱՄՆ-ի, Գերմանիայի, Նոր Զելանդիայի, Ֆրանսիայի, Ավստրալիայի, Նիդերլանդների և Լեհաստանի: Այսպես՝ կաթի արտադրության ծավալներով առաջին տեղում է ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը ընդհանուր ծավալում կազմել է 19,7%, որը կաթի փոշու ընդհանուր արտահանման ծավալում (1 կգ կաթի փոշին համարժեք է 8 Լ կաթին) կազմել է (89 մլն տ), երկրորդ տեղում է Հնդկաստանը՝ 12,7%-ը (57,4 մլն տ), երրորդ տեղում՝ Չինաստանը՝ 8%-ը (36,6 մլն տ), Բրազիլիան՝ 7%-ը (32 մլն տ) և ՌԴ-ն՝ 7%-ը (31,4 մլն տ): Կաթի փոշու 2011 թ. արտահանման ցուցանիշների համաձայն՝ 20 խոշոր արտահանող երկրների ցանկում առաջին տեղում է ԱՄՆ-ը, որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուր արտադրության 12,6%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 22%, արժեքով՝ 21,8% (436 հազար տ, 1,45 մլրդ ԱՄՆ դոլար), վերջինիս հաջորդում է Գերմանիան՝ համապատասխանաբար 25,7%-ը, ընդհանուր արտահանման՝ 14,8%-ը և 14,2%-ը (295 հազար տ, 946 մլն ԱՄՆ դոլար), Նոր Զելանդիան՝ 35,3%-ը, ընդհանուր արտահանման՝ 12,4%-ը և 12,9%-ը (246 հազար տ, 859 հազար ԱՄՆ դոլար), Ֆրանսիան՝ 22%-ը, ընդհանուր արտահանման՝ 10,3%-ը և 10,3%-ը (206 հազար տ, 687 մլն ԱՄՆ դոլար): Աղյուսակ 6.15-ում հինգերորդ տեղը զբաղեցնող Բելգիան ընդգրկված չէ 20 խոշոր կաթ արտադրող երկրների ցանկում, սակայն վերջինիս ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 8%-ը, իսկ արժեքով՝ 8,3%-ը (161 հազար տ, 549 մլն ԱՄՆ դոլար): Կաթի փոշու 2011 թ. 1 տոննայի արտահանման գները ամենից բարձր եղել է Բելառուսում՝ 3892,26 ԱՄՆ դոլար, և ամենից ցածրը եղել է Սինգապուրում՝ 3083,65 ԱՄՆ դոլար, սակայն հարկ է նշել, որ միայն Սաուդյան Արաբիայում է կաթի փոշու գինը եղել 1617,36 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.14. Կաթի արտադրությունը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	ԱՄՆ	89015235	19,7
2	Հնդկաստան	57400000	12,7
3	Չինաստան	36578000	8,1
4	Բրազիլիա	32096214	7,1
5	ՌԴ	31385732	6,9
6	Գերմանիա	30301359	6,7
7	Ֆրանսիա	24361094,9	5,4
8	Նոր Զելանդիա	17893848	4,0
9	ՄԹ	13849000	3,1
10	Թուրքիա	13802428	3,1
11	Պակիստան	12906000	2,9

12	Լեհաստան	12413796	2,7
13	Նիդերլանդներ	11627312	2,6
14	Արգենտինա	11206000	2,5
15	Ուկրաինա	10804000	2,4
16	Մեքսիկա	10724288	2,4
17	Իտալիա	10479053	2,3
18	Ավստրալիա	9101000	2,0
19	Կանադա	8400000	1,9
20	Ճապոնիա	7474309	1,7
<b>Ընդամենը</b>		<b>451818669</b>	<b>100,0</b>

Աղյուսակ 6.15. Կարթի փոշու արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	ԱՄՆ	436233	22,0	1451942	3328,36
2	Գերմանիա	294757	14,8	945849	3208,91
3	Նոր Զելանդիա	246113	12,4	858869	3489,73
4	Ֆրանսիա	205547	10,3	687090	3342,74
5	Բելգիա	161671	8,1	548706	3393,97
6	Ավստրալիա	126697	6,4	436404	3444,47
7	Նիդերլանդներ	115688	5,8	400646	3463,16
8	Լեհաստան	83412	4,2	273578	3279,84
9	Իռլանդիա	60849	3,1	206717	3397,21
10	Բելառուս	55181	2,8	214779	3892,26
11	Սաուդյան Արաբիա	25042	1,3	40502	1617,36
12	ՄԹ	24070	1,2	79099	3286,21
13	Ուկրաինա	22274	1,1	68938	3095,00
14	Դանիա	21259	1,1	74552	3506,84
15	Շվեդիա	20973	1,1	71447	3406,62
16	Ուրուգվայ	19280	1,0	64208	3330,29
17	Արգենտինա	18556	0,9	68659	3700,10
18	Լիտվա	17147	0,9	54874	3200,21
19	Սինգապուր	16999	0,9	52419	3083,65
20	Իսպանիա	14905	0,8	49496	3320,76
<b>Ընդամենը</b>		<b>1986653</b>	<b>100,0</b>	<b>6648774</b>	<b>3346,72</b>

Կարագի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. վիճակագրական ցուցանիշների (տե՛ս աղյուսակներ 6.16, 6.17) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարագ արտադրող խոշոր երկրները միևնույն ժամանակ նաև խոշոր արտահանողներ են: Կարագի արտադրության ծավալնե-

րով առաջին հնգյակում են ԱՄՆ-ը, որի բաժինը արտադրության ընդհանուր ծավալում կազմել է շուրջ 21% (821 հազար տ), այնուհետև Գերմանիան՝ 11%-ը (425 հազար տ), Ֆրանսիան՝ 11%-ը (424 հազար տ), Նոր Զելանդիան՝ 10%-ը (385 հազար տ) և ՌԴ-ն՝ 5,5%-ը (220 հազար տ): Կարագի արտահանման ցուցանիշներով առաջին տեղում է Նոր Զելանդիան, որը արտահանել է արտադրված կարագի 73%-ը, որն ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 21,4%-ը, արժեքով՝ 20%-ը (280 հազար տ, 1,4 մլրդ ԱՄՆ դոլար): Հարկ է նշել, որ կարագի արտահանման ծավալներով երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցնող Նիդերլանդները և Իռլանդիան արտահանման ծավալները գերազանցել են արտադրության ծավալներին 40%-ով, որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 13,5%-ը, արժեքով՝ 14,6%-ը և 20%-ով, որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուրի 12,5%-ը, արժեքով՝ 11,5%-ը, ինչը պայմանավորված է տվյալ երկրների կողմից կարագի նեմուծման և հետագայում արտահանման հանգամանքով: Միաժամանակ նշենք, որ Նիդերլանդները 2011 թ. ներկրել է 53 հազար տ կարագ, որը ամենայն հավանականությամբ հետագայում արտահանվել է: Նույնը կարելի է ասել նաև Իռլանդիայի մասին, քանի որ 2011 թ. ներկրվել է 6604 տ կարագ: Արտահանման ծավալներով չորրորդ տեղում է Բելգիան, որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուրի 8,7%-ը, արժեքով՝ 9,8%-ը (114 հազար տ, 687 մլն ԱՄՆ դոլար), որը ընդգրկված չէ կարագ արտադրող խոշոր 20 երկրների ցանկում: Հինգերորդ տեղում է Գերմանիան, որը արտահանել է արտադրության 25%-ը (107,7 հազար տ, 614 մլն ԱՄՆ դոլար արժեքով) որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուրի 8,2%-ը, արժեքով՝ 8,8%-ը: Կարագի արտահանման գների համաձայն՝ 1 տոննայի ամենաբարձր գինը եղել է Դանիայում՝ 6364,44 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Ուրուգվայում՝ 3811,99 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.16. Կարագի արտադրությունը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	ԱՄՆ	820898	20,6
2	Գերմանիա	424911	10,7
3	Ֆրանսիա	424390	10,7
4	Նոր Զելանդիա	385000	9,7
5	ՌԴ	220000	5,5
6	Լեհաստան	177500	4,5
7	Իրանի Իսլամ. Հանրապ.	171646,2	4,3
8	Թուրքիա	151827	3,8
9	Իռլանդիա	145900	3,7
10	ՄԹ	130000	3,3
11	Նիդերլանդներ	125475	3,2
12	Ավստրալիա	122486	3,1
13	Բելառուս	104207	2,6



14	Իտալիա	101925	2,6
15	Չինաստան	98009	2,5
16	Բրազիլիա	92600	2,3
17	Կանադա	86560	2,2
18	Ուկրաինա	76683	1,9
19	Ճապոնիա	62845	1,6
20	Կորեայի Հանրապ.	59006.5	1,5
<b>Ընդամենը</b>		<b>3981868,70</b>	<b>100,0</b>

Աղյուսակ 6.17. Կարագի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Նոր Զելանդիա	280409	21,4	1397339	4983,22
2	Նիդերլանդներ	175924	13,5	1020067	5798,34
3	Իռլանդիա	163781	12,5	807011	4927,38
4	Բելգիա	114297	8,7	687159	6012,05
5	Գերմանիա	107695	8,2	614075	5701,98
6	Ֆրանսիա	78457	6,0	462677	5897,20
7	Բելառուս	61878	4,7	289184	4673,45
8	ԱՄՆ	53517	4,1	234167	4375,56
9	Դանիա	50749	3,9	322989	6364,44
10	Ավստրալիա	36723	2,8	189024	5147,29
11	ՄԹ	35737	2,7	205327	5745,50
12	Լեհաստան	33668	2,6	184239	5472,23
13	Ֆինլանդիա	24700	1,9	137684	5574,25
14	Իսպանիա	22071	1,7	130636	5918,90
15	Արգենտինա	19345	1,5	85564	4423,06
16	Պորտուգալիա	13114	1,0	65662	5007,02
17	Ուրուգվայ	11340	0,9	43228	3811,99
18	Շվեյցարիա	9517	0,7	42957	4513,71
19	Իտալիա	9452	0,7	50747	5368,92
20	Չեխիա	5159	0,4	26566	5149,45
<b>Ընդամենը</b>		<b>1307533</b>	<b>100,0</b>	<b>6996302</b>	<b>5350,77</b>

Պանրի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. վիճակագրական ցուցանիշների (տե՛ս աղյուսակներ 6.18, 6.19) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացառությամբ Բելգիայի և Լիտվայի՝ մնացած երկրները միաժամանակ ընդգրկված են և՛ 20 խոշոր արտադրողների, և՛ արտահանողների ցանկում: Այսպես՝ արտադրության ծավալներով առաջին տեղում է ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը կազմել է ընդհանուր ծավալի 34%-ը (4,8 մլն տ),

Ֆրանսիան՝ համապատասխանաբար 12,4%-ը (1,8 մլն տ), Գերմանիան՝ 8,9%-ը (1,3 մլն տ), Իտալիան՝ 7,4%-ը (1 մլն տ), Նիդերլանդները՝ 5,2%-ը (7,5 մլն տ):

Պանրի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ առաջին տեղում է Գերմանիան, որի արտահանման ծավալները կազմել են արտադրության 86,5%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 21,4%-ը, արժեքով՝ 20%-ը (1 մլն տ, 4,7 մլրդ ԱՄՆ դոլար արժեքով), երկրորդ տեղում է Նիդերլանդները՝ համապատասխանաբար 91%-ը, ընդհանուր արտահանման՝ 14,4%-ը և 15,7%-ը (678 հազար տ, 3,7 մլրդ ԱՄՆ դոլար), Ֆրանսիան՝ 33,5%-ը, ընդհանուր արտահանման՝ 12,6%-ը և 14,4%-ը (594 հազար տ, 3,4 մլրդ ԱՄՆ դոլար), Իտալիան՝ 24,3%-ը, ընդհանուր արտահանման՝ 5,5%-ը և 10,4%-ը (258 հազար տ, 2,5 մլրդ ԱՄՆ դոլար), Դանիան՝ 93,5%-ը, ընդհանուր արտահանման՝ 5,5%-ը և 6%-ը (257 հազար տ, 1,4 մլրդ ԱՄՆ դոլար): Պանրի արտահանման 2011 թ. 1 տոննայի գները ամենաբարձր եղել են Շվեյցարիայում՝ 9957,78 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Սաուդյան Արաբիայում՝ 1297,43 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 46.18. Պանրի արտադրությունը, 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	ԱՄՆ	4805863	33,6
2	Ֆրանսիա	1772932	12,4
3	Գերմանիա	1268700	8,9
4	Իտալիա	1058845	7,4
5	Նիդերլանդներ	745984	5,2
6	Լեհաստան	650000	4,5
7	Արգենտինա	580300	4,1
8	ՌԻԴ	432000	3,0
9	ՄԹ	390000	2,7
10	Կանադա	378520	2,6
11	Ավստրալիա	338680	2,4
12	Նոր Զելանդիա	311200	2,2
13	Եգիպտոս	285000	2,0
14	Դանիա	274800	1,9
15	Շվեյցարիա	181674	1,3
16	Իռլանդիա	179900	1,3
17	Ուկրաինա	177897	1,2
18	Ավստրիա	155000	1,1
19	Վենեսուելա	150000	1,0
20	Բելառուս	148464	1,0
<b>Ընդամենը</b>		<b>14285759</b>	<b>100,0</b>

**Աղյուսակ 6.19. Պանրի արտահանումը և 1 տոննայի արժեքը, 2011 թ.**

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/ տոննա
1	Գերմանիա	1048632	22,32	4695330	4477,58
2	Նիդերլանդներ	678410	14,44	3733226	5502,91
3	Ֆրանսիա	594149	12,65	3411098	5741,15
4	Իտալիա	258149	5,49	2476259	9592,36
5	Դանիա	256961	5,47	1435742	5587,39
6	Սաուդյան Արաբիա	252493	5,37	327592	1297,43
7	ԱՄՆ	225933	4,81	965955	4275,40
8	Նոր Զելանդիա	174383	3,71	730734	4190,40
9	Իռլանդիա	166511	3,54	781748	4694,87
10	Ավստրալիա	132898	2,83	601223	4523,94
11	Բելառուս	122140	2,60	557310	4562,88
12	Եգիպտոս	117662	2,50	256632	2181,10
13	Լեհաստան	116196	2,47	521902	4491,57
14	Բելգիա	113033	2,41	623854	5519,22
15	ՄԹ	103776	2,21	546760	5268,66
16	Ուկրաինա	80263	1,71	444996	5544,22
17	Ավստրիա	73402	1,56	447458	6095,99
18	Լիտվա	65207	1,39	323602	4962,69
19	Արգենտինա	60626	1,29	286444	4724,77
20	Շվեյցարիա	57742	1,23	574982	9957,78
	<b>Ընդամենը</b>	<b>4698566</b>	<b>100,00</b>	<b>23742847</b>	<b>5053,21</b>

Բուսական յուղի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. ցուցանիշների համաձայն (տե՛ս աղյուսակներ 6.20, 6.21)՝ հիմնական խոշոր արտադրողները միաժամանակ նաև խոշոր արտահանողներ են: Այսպես՝ բուսական յուղի արտադրության ծավալներով խոշոր 20 երկրների շարքում առաջին տեղը զբաղեցնում է Ուկրաինան, որի արտադրության ծավալը կազմել է ընդհանուր արտադրության ծավալի 25,6%-ը (3,2 մլն տ), երկրորդ տեղում է ՌԴ-ն՝ համապատասխանաբար 20,5%-ը (2,5 մլն տ), Արգենտինան՝ 12%-ը (1,5 մլն տ), Թուրքիան՝ 6,5%-ը (806 հազար տ) և Չինաստանը՝ 4,7%-ը (580 հազար տ):

Բուսական յուղի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ առաջին տեղում է Ուկրաինան, որի արտահանման ծավալը կազմել է արտադրության 84,5%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 41%-ը, արժեքով՝ 36,2%-ը (2,7 մլն տ, 3,1 մլրդ ԱՄՆ դոլար), երկրորդ տեղում է Արգենտինան՝ համապատասխանաբար՝ 60,3%-ը, ընդհանուր արտահանման՝ 13,7%-ը և 13,2%-ը (898 հազար տ, 1,1 մլրդ ԱՄՆ դոլար), ՌԴ-ն՝ 19,4%-ը, ընդհանուր արտահան-

ման՝ 7,5%-ը և 7%-ը (493 հազար տ, 609 մլն ԱՄՆ դոլար), Ֆրանսիան՝ 85,7%-ը, ընդհանուր արտահանման՝ 6,8%-ը և 7,8%-ը (443 հազար տ, 676 մլն ԱՄՆ դոլար), և միայն Նիդերլանդներն է, որը բուսական յուղ է արտահանել արտադրությունից 2 անգամ ավելի կամ ընդհանուր արտահանման 13,7%-ը և 13,2%-ը (426 հազար տ, 629 մլն ԱՄՆ դոլար): Դա պայմանավորված է 2011 թ. 330 923 տ ներկրման ծավալներով, որը հետագայում արտահանվել է: Բուսական յուղի 1 տ արտահանման գների 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ ամենաբարձրը եղել է Բելգիայում՝ 1758,2 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Մոլդովայում՝ 1160,29 ԱՄՆ դոլար: Նշենք, որ բուսական յուղի գները տատանվել են 1160–1650 ԱՄՆ դոլարի միջակայքում (բացառությամբ Եգիպտոսի՝ 2670,39 ԱՄՆ դոլար):

Աղյուսակ 6.20. Բուսական յուղի արտադրությունը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	Ուկրաինա	3177361	25,6
2	ՌԴ	2545395	20,5
3	Արգենտինա	1489700	12,0
4	Թուրքիա	806312	6,5
5	Չինաստան	579110.25	4,7
6	Ֆրանսիա	516635	4,2
7	Իսպանիա	376771	3,0
8	Ռումինիա	360040	2,9
9	Գերմանիա	357248	2,9
10	Հունգարիա	328500	2,6
11	Հարավ. Աֆրիկա	277200	2,2
12	ԱՄՆ	223621	1,8
13	Նիդերլանդներ	221700	1,8
14	Պակիստան	184656.13	1,5
15	Իտալիա	171000	1,4
16	Մյանմար	170636	1,4
17	Ղազախստան	166652	1,3
18	Բուլղարիա	165474	1,3
19	Հնդկաստան	165000	1,3
20	Սերբիա	146513	1,2
<b>Ընդամենը</b>		<b>12429524,38</b>	<b>100,0</b>

**Աղյուսակ 6.21. Բուսական յուղի արտահանումը և 1 Կոննայի արժեքը 2011 թ.**

Հ/հ	Երկիրը	Քանակ, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Ուկրաինա	2683342	41,0	3146065	1172,44
2	Արգենտինա	898115	13,7	1144665	1274,52
3	ՌԴ	492886	7,5	608894	1235,36
4	Ֆրանսիա	442857	6,8	675501	1525,33
5	Նիդերլանդներ	425583	6,5	629404	1478,92
6	Հունգարիա	268911	4,1	410205	1525,43
7	Թուրքիա	205092	3,1	338753	1651,71
8	Ռումինիա	193792	3,0	266200	1373,64
9	Բելգիա	136098	2,1	239288	1758,20
10	Գերմանիա	121465	1,9	195506	1609,57
11	Բուլղարիա	120184	1,8	150963	1256,10
12	Իսպանիա	87889	1,3	142896	1625,87
13	Սերբիա	80004	1,2	114041	1425,44
14	Ավստրիա	67961	1,0	112135	1649,99
15	Մոլդովա	59724	0,9	69297	1160,29
16	Եգիպտոս	57890	0,9	154589	2670,39
17	Բոլիվիա	54265	0,8	66852	1231,95
18	Հարավ. Աֆրիկա	53197	0,8	87046	1636,30
19	Օման	48902	0,7	76465	1563,64
20	Մալայզիա	42891	0,7	66129	1541,792
	<b>Ընդամենը</b>	<b>6541048</b>	<b>100,0</b>	<b>8694894</b>	<b>1329,2815</b>

Ուսումնասիրելով մարզարինի 20 հիմնական երկրների կողմից արտադրության և արտահանման 2011 թ. վիճակագրական ցուցանիշները՝ կարելի է փաստել, որ հիմնական խոշոր արտադրողները միաժամանակ նաև խոշոր արտահանողներ են (տես՝ աղյուսակներ 6.22, 6.23): Այսպես՝ մարզարինի արտադրության ծավալներով 2011 թ. առաջին տեղին է զբաղեցնում ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը կազմել է ընդհանուր արտադրության ծավալի 32,7%-ը (3,9 մլն տ), որին հետևում են Պակիստանը՝ համապատասխանաբար 13,2% (1,5 մլն տ), Հնդկաստանը՝ 6,9% (827 հազ. տոննա), Գերմանիան՝ 5,6% (673 հազ. տ), Թուրքիան՝ 5,2% (623 հազ. տ): Մարզարինի արտահանման ցուցանիշներով առաջին տեղում է Ինդոնեզիան, որի արտահանման ծավալը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 23,3%-ը, իսկ արժեքով՝ 16,2%-ը (371 հազ. տ, 400 մլն ԱՄՆ դոլար), սակայն այս երկիրը ընդգրկված չէ խոշոր արտադրող 20 երկրների ցուցակում: Արտահանման ծավալներով երկրորդ տեղում է Բելգիան, որը արտահանել է արտադրության 73,4%-ը, ինչը կազմել է

ընդհանուր արտահանման ծավալի 17,9%-ը, արժեքով՝ 19,2%-ը (285 հազ. տ, 474 մլն ԱՄՆ դոլար), որին հաջորդում է Նիդերլանդները՝ համապատասխանաբար 75,4%-ը, ընդհանուր արտահանման՝ 12%-ը և 14,8%-ը (197 հազ. տ, 366 մլն ԱՄՆ դոլար), Գերմանիան՝ 16,5%-ը, ընդհանուր արտահանման՝ 7%-ը և 7,9%-ը (111 հազ. տ, 195 մլն ԱՄՆ դոլար), Լեհաստանը՝ 27%-ը, ընդհանուր արտահանման 6,8%-ը և 6,5%-ը (108 հազ. տ, 162 մլն ԱՄՆ դոլար): Մարգարինի 1 տ արտահանման գների 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ ամենից բարձր գինը եղել է ՄԹ-ում՝ 2201,75 ԱՄՆ դոլար, իսկ ամենաէժանը՝ Ինդոնեզիայում՝ 1078,32 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.22. Մարգարինի արտադրությունը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	ԱՄՆ	3900000	32,7
2	Պակիստան	1570000	13,2
3	Հնդկաստան	827000	6,9
4	Գերմանիա	673022	5,6
5	Թուրքիա	623000	5,2
6	Բրազիլիա	513600	4,3
7	Մալայզիա	482000	4,0
8	ՌԴ	432540	3,6
9	Լեհաստան	400129	3,4
10	Բելգիա	388200	3,3
11	Ճապոնիա	361900	3,0
12	Ուկրաինա	358814	3,0
13	ՄԹ	327000	2,7
14	Նիդերլանդներ	262000	2,2
15	Քենիա	200880	1,7
16	Դանիա	144100	1,2
17	Իտալիա	122000	1,0
18	Շվեդիա	117000	1,0
19	Կանադա	113000	0,9
20	Թունիս	102231,6	0,9
<b>Ընդամենը</b>		<b>11918416,6</b>	<b>100,0</b>

**Աղյուսակ 6.23. Մարզարհինի արդաահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Ինդոնեզիա	370870	23,3	399917	1078,32
2	Բելգիա	284922	17,9	473757	1662,76
3	Նիդերլանդներ	197497	12,4	366425	1855,34
4	Գերմանիա	110867	7,0	194977	1758,66
5	Լեհաստան	107937	6,8	161975	1500,64
6	Դանիա	83304	5,2	173223	2079,41
7	Թուրքիա	78976	5,0	113255	1434,04
8	Իսպանիա	42426	2,7	76961	1814,01
9	Իտալիա	37717	2,4	61508	1630,78
10	Ուկրաինա	35926	2,3	45419	1264,24
11	Բրազիլիա	35918	2,3	64583	1798,07
12	ՄԹ	31792	2,0	69998	2201,75
13	Ռումինիա	26927	1,7	39680	1473,61
14	Շվեդիա	26894	1,7	56407	2097,38
15	ԱՄՆ	26826	1,7	36899	1375,49
16	Թունիս	20242	1,3	39051	1929,21
17	Հունաստան	19849	1,2	29528	1487,63
18	Մալայզիա	18648	1,2	27556	1477,69
19	ՌԴ	17018	1,1	22054	1295,92
20	Քենիա	16786	1,1	20496	1221,02
<b>Ընդամենը</b>		<b>1591342</b>	<b>100,0</b>	<b>2473669</b>	<b>1554,45</b>

Մակարոնի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. ցուցանիշների (տե՛ս աղյուսակներ 6.24, 6.25) համաձայն՝ հիմնական խոշոր արտադրողները միաժամանակ նաև խոշոր արտահանողներ են: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մակարոնի արտադրության ծավալներով առաջին տեղն է զբաղեցնում Իտալիան, որի մակարոնեղենի արտադրության ծավալը ընդհանուր արտադրության ծավալի մեջ կազմում է 26,4%-ը (3,3 մլն տ), որին հաջորդում են համապատասխանաբար ԱՄՆ-ը՝ 15,9%-ը (2 մլն տ), Բրազիլիան՝ 10,3%-ը (1,3 մլն տ), ՌԴ-ն՝ 8,6% (1 մլն տ), Թուրքիան՝ 6,8%-ը (851 հազ. տ): Մակարոնի արտահանման ծավալներով առաջին տեղն է զբաղեցնում Իտալիան, որը արտահանել է արտադրության 53,3%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 54%-ը, արժեքով՝ 53,3%-ը (1,8 մլն տ, 2,5 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում են համապատասխանաբար Թուրքիան՝ 39,9%-ը, ընդհանուր արտահանման՝ 10,4%-ը և 5,1%-ը (3,4 մլն տ, 240 մլն ԱՄՆ դոլար), ԱՄՆ-ը՝ 6,4%-ը, ընդհանուր արտահանման՝ 3,9%-ը և 4,1%-ը (128 հազ. տ,

194 մլն ԱՄՆ դոլար), չորրորդ տեղում է Բելգիան, որն ընդգրկված չէ մակարոն արտադրող խոշոր 20 երկրների ցանկում և որի արտահանման ծավալները կազմել են մակարոնի ընդհանուր արտահանման 3,9%-ը, ընդհանուր արտահանման՝ 3,9%-ը և 6%-ը (127 հազ. տ, 194 մլն տ), այնուհետև Մեքսիկան, որն արտահանել է արտադրության ծավալի 32,6%-ը, ընդհանուր արտահանման 3,3%-ը և 1,3%-ը (108 հազար տ, 63 մլն ԱՄՆ դոլար): Մակարոնի 1 տ-ի արտահանման 2011 թ. ամենաբարձր գինը եղել է Կանադայում՝ 3214,34 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Մեքսիկայում՝ 586,88 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.24. Մակարոնի արդարադրությունը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	Իտալիա	3316728	26,4
2	ԱՄՆ	2000000	15,9
3	Բրազիլիա	1300000	10,3
4	ՌԴ	1083000	8,6
5	Թուրքիա	851830	6,8
6	Իրան	560000	4,5
7	Եգիպտոս	400000	3,2
8	Վենեսուելա	341554	2,7
9	Գերմանիա	334179	2,7
10	Մեքսիկա	330000	2,6
11	Պերու	297162	2,4
12	Արգենտինա	324437	2,6
13	Իսպանիա	252208	2,0
14	Ֆրանսիա	241933	1,9
15	Թունիս	183000	1,5
16	Կանադա	170000	1,4
17	Լեհաստան	160000	1,3
18	Հունաստան	145000	1,2
19	Ճապոնիա	144500	1,1
20	Կոլումբիա	131270	1,0
	<b>Ընդամենը</b>	<b>12566801</b>	<b>100,0</b>

Աղբյուրը՝ Մակարոնի միջազգային կազմակերպության պաշտոնական փորձագրի ցուցանիշները: Ավելի մանրամասն տե՛ս՝ [http://www.internationalpasta.org/resources/extra/file/IPO %20AGM %202012/IPOreport2012fin2stat.pdf](http://www.internationalpasta.org/resources/extra/file/IPO_%20AGM_%202012/IPOreport2012fin2stat.pdf)



**Աղյուսակ 6.25. Մսկարոնի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Իտալիա	1767119	54,0	2518465	1425,18
2	Թուրքիա	339575	10,4	240194	707,34
3	ԱՄՆ	127789	3,9	193826	1516,77
4	Բելգիա	126624	3,9	282307	2229,49
5	Մեքսիկա	107657	3,3	63181	586,88
6	Չինաստան	102126	3,1	224566	2198,91
7	Թաիլանդ	71972	2,2	153755	2136,32
8	Ֆրանսիա	62486	1,9	152710	2443,90
9	Գերմանիա	62430	1,9	142918	2289,25
10	Եգիպտոս	59024	1,8	88221	1494,66
11	Պերու	58472	1,8	48892	836,16
12	Կանադա	50061	1,5	160913	3214,34
13	Կոդ դ'Իվուար	49850	1,5	30868	619,23
14	Արգենտինա	48588	1,5	39600	815,02
15	Հունաստան	46647	1,4	48604	1041,95
16	Իսպանիա	45497	1,4	71884	1579,96
17	Ավստրիա	45124	1,4	136693	3029,27
18	Չեխիա	41642	1,3	35943	863,14
19	Իրան	32875	1,0	27991	851,45
20	Հարավ. Կորեա	28258	0,9	66175	2341,82
	<b>Ընդամենը</b>	<b>3273816</b>	<b>100,0</b>	<b>4727706</b>	<b>1444,10</b>

Աղյուսակը կազմվել է ըստ Մսկարոնի միջազգային կազմակերպության պաշտոնական տարեգրքի ցուցանիշների: Ավելի մանրամասն տե՛ս՝ <http://www.internationalpasta.org/resources/extra/file/IPO%20AGM%202012/IPOreport2012fin2stat.pdf>

Ուսումնասիրելով 20 հիմնական երկրների կողմից բրինձի արտադրության և արտահանման 2011 թ. ցուցանիշները (տե՛ս աղյուսակներ 6.26, 6.27)՝ կարելի է փաստել, որ հիմնական երկրները միաժամանակ թե՛ արտադրողներ և թե՛ արտահանողներ են: Այսպես՝ բրինձի արտադրության 2011 թ. ցուցանիշներով առաջին տեղը զբաղեցնում է Չինաստանը, որի ծավալը ընդհանուր արտադրության ծավալի մեջ կազմում է 29,8%-ը (202,6 մլն տ), այնուհետև Հնդկաստանը՝ համապատասխանաբար 23,2%-ը (157,9 մլն տ), Ինդոնեզիան՝ 9,7%-ը (65,7 մլն տ), որին հաջորդում է Բանգլադեշը՝ 7,4%-ը (50,6 մլն տ), Վիետնամը՝ 6,2%-ը (42,4 մլն տ) և Թաիլանդը՝ 5,1%-ը (34,6 մլն տ): Արտահանման ծավալներով առաջին տեղում է Թաիլանդը, որը արտահանել է արտադրության ծավալի 30,9%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 30,4%-ը, արժե-

քով՝ 29,3%-ը (10,7 մլն տ, 6,5 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում են Վիետնամը՝ համապատասխանաբար 16,8%-ը, ընդհանուր արտահանման՝ 20,3%-ը և 16,5%-ը (7,1 մլն տ, 3,6 մլրդ ԱՄՆ դոլար), Հնդկաստանը՝ 3,2%-ը, ընդհանուր արտահանման՝ 14,3%-ը և 18,4%-ը (5 մլն տ, 4,08 մլրդ ԱՄՆ դոլար), Պակիստանը՝ 37,1%-ը, ընդհանուր արտահանման՝ 9,7%-ը և 9,3%-ը (3,4 մլն տ, 2,06 մլրդ ԱՄՆ դոլար), ԱՄՆ-ը՝ 37,7%-ը, ընդհանուր արտահանման՝ 9%-ը և 9,4%-ը (3,2 մլն տ, 2,09 մլրդ ԱՄՆ դոլար): Բրնձի արտահանման 1 տ գինը 2011 թ. ամենաբարձր եղել է Նիդերլանդներում՝ 1194,62 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը Պարագվայում՝ 333,43 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.26. Բրնձի արտադրությունը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	Չինաստան	202667173	29,8
2	Հնդկաստան	157900000	23,2
3	Ինդոնեզիա	65740946	9,7
4	Բանգլադեշ	50627000	7,4
5	Վիետնամ	42398345.7	6,2
6	Թաիլանդ	34588355	5,1
7	Մյանմար	29009894	4,3
8	Ֆիլիպիններ	16684062	2,5
9	Բրազիլիա	13476994	2,0
10	Պակիստան	9194000	1,4
11	Կամբոջա	8779000	1,3
12	Ճապոնիա	8402000	1,2
13	ԱՄՆ	8388780	1,2
14	Կորեա	6304000	0,9
15	Եգիպտոս	5675027	0,8
16	Նիդերլանդներ	4567320	0,7
17	Նեպալ	4460278	0,7
18	Մադագասկար	4300185	0,6
19	Շրի Լանկա	3874800	0,6
20	Լաոս	3065760	0,5
<b>Ընդամենը</b>		<b>680103920</b>	<b>100,0</b>

**Աղյուսակ 6.27. Բրնձի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.**

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Թաիլանդ	10671194	30,4	6507473	609,82
2	Վիետնամ	7112000	20,3	3656807	514,17
3	Հնդկաստան	5004280	14,3	4081406	815,58
4	Պակիստան	3412499	9,7	2062019	604,25
5	ԱՄՆ	3165575	9,0	2087302	659,38
6	Բրազիլիա	1291598	3,7	612754	474,42
7	Արգենտինա	729411	2,1	361811	496,03
8	Իտալիա	722136	2,1	685888	949,80
9	Ուրուգվայ	572226	1,6	291100	508,72
10	Չինաստան	489104	1,4	426959	872,94
11	Ավստրալիա	277992	0,8	243306	875,23
12	Բելգիա	272482	0,8	292161	1072,22
13	Իսպանիա	246382	0,7	191582	777,58
14	Պարագվայ	225938	0,6	75334	333,43
15	Սյանմար	224239	0,6	98452	439,05
16	Կամբոջա	174045	0,5	107917	620,05
17	Նիդերլանդներ	138113	0,4	164993	1194,62
18	ՌԴ	132124	0,4	87026	658,67
19	Հունաստան	124947	0,4	87136	697,38
20	Սենեգալ	108998	0,3	52516	481,81
<b>Ընդամենը</b>		<b>35095283</b>	<b>100,0</b>	<b>22173942</b>	<b>631,82</b>

Սուրճի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. ցուցանիշների (տես աղյուսակներ 6.28, 6.29) համաձայն՝ այդ երկրները միաժամանակ թե՛ արտադրողներ և թե՛ արտահանողներ են: Սուրճի արտադրության ծավալներով 2011 թ. առաջին տեղն է զբաղեցնում Բրազիլիան, որի արտադրության ծավալը ընդհանուր արտադրության ծավալի մեջ կազմում է 34,6%-ը (2,7 մլն տ), այնուհետև Վիետնամը՝ համապատասխանաբար 16,4%-ը (1,27 մլն տ), Ինդոնեզիան՝ 8,1%-ը (634 հազ. տ), Կոլումբիան՝ 6,0%-ը (468,5 հազ. տ) և Եթովպիան՝ 4,8%-ը (370,6 հազ. տ): Սուրճի արտահանման ծավալներով առաջին տեղն է զբաղեցնում Բրազիլիան, որը արտահանել է արտադրության 66,3%-ը, ինչը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 28,2%-ը, արժեքով՝ 31%-ը (1,8 մլն տ, 8 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում է համապատասխանաբար Վիետնամը՝ 98,4%-ը, ընդհանուր արտահանման՝ 19,8%-ը և 10,7%-ը (1,3 մլն տ, 2,7 մլրդ ԱՄՆ դոլար), Կոլումբիան՝ 92,6%-ը, ընդհանուր արտահանման՝ 6,8%-ը և 10,2%-ը (434 հազ. տ, 2,6 մլրդ ԱՄՆ դոլար), չորրորդ տեղում է Գերմանիան է, որը, սակայն, ընդգրկված չէ սուրճի խոշոր արտադրող 20 երկրների ցանկում և արտահանման ծավալները կազմել են ընդհանուր ար-

տահանման ծավալի 5,5%-ը, արժեքի՝ 6,1%-ը (348,5 հազ. տ, 1,6 մլրդ ԱՄՆ դոլար), այնուհետև Ինդոնեզիան, որի արտահանման ծավալը կազմել է սուրճի արտադրության ծավալի 54,6%-ը, ընդհանուր արտահանման՝ 5,4%-ը և 4%-ը (346 հազ. տ, 1 մլրդ ԱՄՆ դոլար): Սուրճի արտահանման 1 տ գների 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ ամենաբարձրը եղել է Քենիայում՝ 6488,25 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Վիետնամում՝ 2190,72 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.28. Սուրճի արտադրությունը 2011 թ.

Ը/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	Բրազիլիա	2700440	34,6
2	Վիետնամ	1276505,9	16,4
3	Ինդոնեզիա	634000	8,1
4	Կոլումբիա	468540	6,0
5	Եթովպիա	370569	4,8
6	Պերու	331547	4,3
7	Հոնկոնգ	302000	3,9
8	Հոնդուրաս	282361	3,6
9	Գվատեմալա	242839	3,1
10	Մեքսիկա	237056	3,0
11	Ուգանդա	191371	2,5
12	Նիկարագուա	103664	1,3
13	Փղոսկրե Ափ	103000	1,3
14	Կոստա Րիկա	100083	1,3
15	Ֆիլիպիններ	88526	1,1
16	Պապուա-Նոր Գվինեա	84870	1,1
17	Էլ Սալվադոր	82095	1,1
18	Կամերուն	70000	0,9
19	Վենեսուելա	69138	0,9
20	Տանզանիա	60575	0,8
<b>Ընդամենը</b>		<b>7799179,9</b>	<b>100,0</b>

Աղյուսակ 6.29. Սուրճի արտահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Ը/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Բրազիլիա	1791207	28,2	8000416	4466,49
2	Վիետնամ	1256400	19,8	2752423	2190,72
3	Ինդոնեզիա	433646	6,8	2623212	6049,20
4	Կոլումբիա	348584	5,5	1579457	4531,07
5	Եթովպիա	346092	5,4	1034815	2990,00
6	Պերու	293638	4,6	1580372	5382,04

7	Հնդկաստան	261775	4,1	1062969	4060,62
8	Հոնդուրաս	252928	4,0	1358438	5370,85
9	Գվատեմալա	231087	3,6	677680	2932,58
10	Մեքսիկա	205244	3,2	942160	4590,44
11	Ուգանդա	185775	2,9	460327	2477,87
12	Նիկարագուա	159135	2,5	844555	5307,16
13	Փղոսկրե Ափ	112452	1,8	666445	5926,48
14	Կոստա Րիկա	102768	1,6	463528	4510,43
15	Ֆիլիպիններ	87190	1,4	429299	4923,72
16	Պապուա-Նոր Գվինեա	76400	1,2	375867	4919,73
17	Էլ Սալվադոր	63913	1,0	205903	3221,61
18	Կամերուն	63776	1,0	317745	4982,20
19	Վենեսուելա	41276	0,6	267809	6488,25
20	Տանզանիա	38708	0,6	140043	3617,93
<b>Ընդամենը</b>		<b>6351994</b>	<b>100,0</b>	<b>25783463</b>	<b>4059,11</b>

Ուսումնասիրելով 20 հիմնական երկրների կողմից տավարի մսի արտադրության և արտահանման 2011 թ. ցուցանիշները (տե՛ս աղյուսակներ 6.30, 6.31)՝ կարելի է փաստել, որ երկրները խիստ տարբերվում են, ինչը պայմանավորված է նրանով, որ տավարի միս արտադրողների արտադրանքը հիմնականում սպառվում է այդ երկրների ներսում: Այսպես՝ տավարի մսի արտադրության ծավալներով 2011 թ. առաջին տեղը զբաղեցնում է ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը ընդհանուրի մեջ կազմում է 25,4%-ը (12 մլն տ), որին հաջորդում է Բրազիլիան՝ համապատասխանաբար 19,2%-ը (9 մլն տ), Չինաստանը՝ 13,1%-ը (6,2 մլն տ), Արգենտինան՝ 5,1%-ը (2,4 մլն տ) և Ավստրալիան՝ 4,5%-ը (2,1 մլն տ): Տավարի մսի արտահանման 2011 թ. ցուցանիշներով առաջին տեղում է Գերմանիան, որը արտահանել է արտադրության 21,1%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 14,8%-ը, արժեքով՝ 15,5%-ը (247 հազար տ, 1,2 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում է Ֆրանսիան՝ համապատասխանաբար 13,4%-ը, ընդհանուր արտահանման՝ 12,6%-ը և 14%-ը (210 հազար տ, 1,1 մլրդ ԱՄՆ դոլար), երրորդ և չորրորդ տեղերը զբաղեցրած երկրները՝ Լեհաստանը և Նիդերլանդները, ընդգրկված չեն տավարի մսի արտադրող խոշոր 20 երկրների ցանկում: Այսպես՝ Լեհաստանի տավարի մսի արտահանման ծավալը ընդհանուր ծավալում կազմել է 11,5%-ը, արժեքի՝ 9,4%-ը (191 հազար տ, 756 մլն ԱՄՆ դոլար), իսկ Նիդերլանդները՝ համապատասխանաբար 9,8%-ը և 12,6%-ը (164 հազար տ, 1 մլրդ ԱՄՆ դոլար): Արտահանման ծավալով հինգերորդ տեղում է ԱՄՆ-ը, որը արտահանել է արտադրության 0,9%-ը, ինչը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 6,7%-ը, արժեքի՝ 7,3%-ը (111 հազ. տ, 593 մլն ԱՄՆ դոլար): Տավարի մսի արտահանման 1 տ գների 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ ամենաբարձրը եղել է Նիդերլանդներում՝ 6196,65 ԱՄՆ դոլար, իսկ ամենաէժանը՝ Պակիստանում՝ 2835,7 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.30. Տավարի մսի արտադրությունը 2011 թ.

Ը/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	ԱՄՆ	11983308	25,4
2	Բրազիլիա	9030000	19,2
3	Չինաստան	6182155	13,1
4	Արգենտինա	2419700	5,1
5	Ավստրալիա	2109875	4,5
6	Մեքսիկա	1803932	3,8
7	ՌԴ	1625469	3,5
8	Ֆրանսիա	1566453	3,3
9	Գերմանիա	1170376	2,5
10	Կանադա	1154240	2,4
11	Հոլկաստան	1086500	2,3
12	Իտալիա	1000374	2,1
13	ՄԹ	936000	2,0
14	Հարավ. Աֆրիկա	828609	1,8
15	Կոլումբիա	820985	1,7
16	Ուզբեկստան	763000	1,6
17	Պաղեստին	761000	1,6
18	Թուրքիա	644906	1,4
19	Նոր Զելանդիա	622676	1,3
20	Իսպանիա	604113	1,3
<b>Ընդամենը</b>		<b>47113671,3</b>	<b>100,0</b>

Աղյուսակ 6.31. Տավարի մսի արտահանումը և 1 տ-ի արժեքը 2011 թ.

Ը/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Գերմանիա	247113	14,8	1252605	5068,96
2	Ֆրանսիա	210124	12,6	1127740	5367,02
3	Լեհաստան	191107	11,5	755813	3954,92
4	Նիդերլանդներ	164164	9,8	1017267	6196,65
5	ԱՄՆ	111047	6,7	592649	5336,92
6	Բելառուս	96586	5,8	476970	4938,29
7	Իսպանիա	80971	4,9	369948	4568,90
8	Բելգիա	78948	4,7	469115	5942,08
9	ՄԹ	72572	4,4	257185	3543,86
10	Ավստրիա	54307	3,3	273799	5041,69
11	Ավստրալիա	53166	3,2	203726	3831,89
12	Իտալիա	52567	3,2	202374	3849,83

13	Իռլանդիա	51277	3,1	255157	4976,05
14	Դանիա	45336	2,7	186239	4107,97
15	Ուրուգվայ	35859	2,2	114953	3205,69
16	Կանադա	32529	2,0	167677	5154,69
17	Մեքսիկա	27817	1,7	134632	4839,92
18	Պակիստան	25295	1,5	71729	2835,70
19	Նոր Զելանդիա	23921	1,4	73853	3087,37
20	Ուկրաինա	12965	0,8	60446	4662,24
<b>Ընդամենը</b>		<b>1667671</b>	<b>100,0</b>	<b>8063877</b>	<b>4835,41</b>

Ուսումնասիրելով 20 հիմնական երկրների կողմից հավի մսի արտադրության և արտահանման 2011 թ. ցուցանիշները (տե՛ս աղյուսակներ 6.32, 6.33)՝ կարելի է նկատել, որ արտադրող և արտահանող երկրները տարբերվում են՝ բացառությամբ՝ Բրազիլիայի, ԱՄՆ-ի, Լեհաստանի, Արգենտինայի, Թուրքիայի, Միացյալ Թագավորության, Չինաստանի և Իսպանիայի: Այսպես՝ հավի մսի արտադրության ծավալներով 2011 թ. առաջին տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը ընդհանուր ծավալի մեջ կազմում է 25,3%-ը (17 մլն տ), որին հաջորդում է Չինաստանը՝ համապատասխանաբար 18%-ը (12 մլն տ), Բրազիլիան՝ 16,9%-ը (11,4 մլն տ), ՌԴ-ն՝ 4,3%-ը (2,9 մլն տ) և Մեքսիկան՝ 4,1%-ը (2,8 մլն տ): Հավի մսի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ առաջին հինգ տեղերը զբաղեցնող երկրներից միայն Բրազիլիան և ԱՄՆ-ն են ընդգրկված հավի մսի խոշոր արտադրող 20 երկրների ցանկում, որոնց արտահանման ծավալները կազմել են արտադրության ծավալի համապատասխանաբար 31,3%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 30,3%-ը, արժեքի՝ 34,1%-ը (3,6 մլն տ, 7,1 մլրդ ԱՄՆ դոլար) և 20,1%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 29,2%-ը, արժեքի՝ 19,1%-ը (3,4 մլն տ, 4 մլրդ ԱՄՆ դոլար): Հավի մսի արտահանման ծավալով երրորդ տեղում է Նիդերլանդները, որի արտահանման ծավալը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 8,4%-ը, արժեքի՝ 10,7%-ը (996 հազար տ, 2,2 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում է Հոնկոնգը՝ համապատասխանաբար 6,5%-ը և 4,1%-ը (761 հազար տ, 857 մլն ԱՄՆ դոլար), և Ֆրանսիան՝ 3,6%-ը և 5,2%-ը (426 հազ. տ, 1,1 մլրդ ԱՄՆ դոլար): Հավի մսի արտահանման 1 տ գների 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ ամենաբարձր գինը եղել է Ռուսինիայում՝ 2855,48 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Հոնկոնգում՝ 1125,66 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.32. Հավի մսի արտադրությունը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	ԱՄՆ	17111240	25,3
2	Չինաստան	12170062	18,0
3	Բրազիլիա	11421730	16,9
4	ՌԴ	2895489	4,3

5	Մեքսիկա	2765020	4,1
6	Հնդկաստան	2206000	3,3
7	Իրան	1686000	2,5
8	Արգենտինա	1649000	2,4
9	Ինդոնեզիա	1613600	2,4
10	Թուրքիա	1613309	2,4
11	Հարավ. Աֆրիկա	1485613	2,2
12	Ճապոնիա	1382000	2,0
13	ՄԹ	1353000	2,0
14	Մալայզիա	1315000	1,9
15	Թաիլանդ	1257600	1,9
16	Իսպանիա	1205749	1,8
17	Լեհաստան	1150000	1,7
18	Պերու	1084815	1,6
19	Սյանմար	1079062	1,6
20	Կոլումբիա	1075135	1,6
<b>Ընդամենը</b>		<b>67519424</b>	<b>100,0</b>

Աղյուսակ 6.33. Հավի մսի արտահանումը և 1 փոննայի արժեքը 2011 թ.

Ը/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Բրազիլիա	3569903	30,3	7063214	1978,55
2	ԱՄՆ	3445080	29,2	3958840	1149,13
3	Նիդերլանդներ	995945	8,4	2208782	2217,78
4	Հոնկոնգ	761453	6,5	857134	1125,66
5	Ֆրանսիա	426133	3,6	1081883	2538,84
6	Բելգիա	407928	3,5	948835	2325,99
7	Լեհաստան	303732	2,6	690016	2271,79
8	Գերմանիա	287543	2,4	695142	2417,52
9	Արգենտինա	266487	2,3	432099	1621,46
10	Թուրքիա	234148	2,0	380772	1626,20
11	ՄԹ	225420	1,9	358878	1592,04
12	Չինաստան	168243	1,4	431820	2566,64
13	Կանադա	124573	1,1	199312	1599,96
14	Իսպանիա	113769	1,0	207268	1821,83
15	Իտալիա	86759	0,7	219499	2529,99
16	Հունգարիա	81178	0,7	212105	2612,84
17	Չիլի	80029	0,7	219377	2741,22



18	Բելառուս	73605	0,6	154558	2099,83
19	Ռումինիա	73182	0,6	208970	2855,48
20	Դանիա	72507	0,6	171199	2361,14
<b>Ընդամենը</b>		<b>11797617</b>	<b>100,0</b>	<b>20699703</b>	<b>1754,57</b>

Խոզի մսի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2011 թ. ցուցանիշների (տես աղյուսակներ 6.34, 6.35) համաձայն՝ հիմնական երկրները միաժամանակ թե՛ արտադրողներ և թե՛ արտահանողներ են: Այսպես՝ խոզի մսի 2011 թ. արտադրության ծավալներով առաջին տեղում է Չինաստանը, որի արտադրության ծավալները ընդհանուր արտադրության ծավալում կազմել է 52,4%-ը (51,5 մլն տ), որին հաջորդում է ԱՄՆ-ը՝ համապատասխանաբար 10,5%-ը (10,3 մլն տ), Գերմանիան՝ 5,7%-ը (5,6 մլն տ), Իսպանիան՝ 3,5%-ը (3,5 մլն տ), Բրազիլիան՝ 3,4%-ը (3,4 մլն տ): Խոզի մսի արտահանման 2011 թ. ցուցանիշների համաձայն՝ առաջին տեղում է Գերմանիան, որի արտահանման ծավալը կազմել է արտադրության 18,8%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 20,6%-ը, արժեքի՝ 20,6%-ը (1,1 մլն տ, 3,4 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում է համապատասխանաբար Դանիան՝ 43,4%-ը, ընդհանուր արտահանման՝ 14,5%-ը և 15,1%-ը (747 հազար տ, 2,5 մլրդ ԱՄՆ դոլար), Կանադան՝ 37,3%-ը, ընդհանուր արտահանման՝ 14,2%-ը և 14%-ը (729 հազար տ, 2,3 մլրդ ԱՄՆ դոլար), Իսպանիան՝ 18,5%-ը, ընդհանուր արտահանման՝ 12,5%-ը և 12%-ը (641 հազար տ, 2 մլրդ ԱՄՆ դոլար), և Բրազիլիան՝ 11,2%-ը, ընդհանուր արտահանման՝ 7,3%-ը և 7,1%-ը (377 հազար տ, 1,2 մլրդ ԱՄՆ դոլար): Խոզի մսի 2011 թ. արտահանման գների ցուցանիշների 1 տ գինը ամենաբարձրը եղել է Մեքսիկայում՝ 5011,98 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ ՄԹ-ում՝ 2060,17 ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 6.34. Խոզի մսի արտադրությունը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %
1	Չինաստան	51519351	52,4
2	ԱՄՆ	10330808	10,5
3	Գերմանիա	5616074	5,7
4	Իսպանիա	3469345	3,5
5	Բրազիլիա	3369616	3,4
6	Վիետնամ	3098900	3,2
7	ՌԴ	2427636	2,5
8	Ֆրանսիա	2217950	2,3
9	Կանադա	1953550	2
10	Լեհաստան	1936300	2
11	Դանիա	1720200	1,7
12	Ֆիլիպիններ	1649300	1,7


13	Իտալիա	1601877	1,6
14	Նիդերլանդներ	1347166	1,4
15	Ճապոնիա	1267328	1,3
16	Մեքսիկա	1201998	1,2
17	Բելգիա	1108255	1,1
18	Թաիլանդ	867300	0,9
19	Կորեայի Հանրապ.	837000	0,9
20	ՄԹ	806000	0,8
<b>Ընդամենը</b>		<b>98345954</b>	<b>100,0</b>

Աղյուսակ 6.35. Խոզի մսի արդաահանումը և 1 տոննայի արժեքը 2011 թ.

Հ/հ	Երկիրը	Քանակը, տ	Տեսակարար կշիռը, %	Արժեքը, 1000 ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար/տոննա
1	Գերմանիա	1056470	20,6	3352817	3173,60
2	Դանիա	747358	14,5	2467689	3301,88
3	Կանադա	729436	14,2	2285643	3133,44
4	Իսպանիա	641350	12,5	1956029	3049,86
5	Բրազիլիա	377096	7,3	1161243	3079,44
6	Նիդերլանդներ	333692	6,5	1003872	3008,38
7	Ֆրանսիա	239137	4,7	655904	2742,80
8	Բելգիա	214824	4,2	652167	3035,82
9	Լեհաստան	146514	2,9	452298	3087,06
10	Ավստրիա	113506	2,2	386950	3409,07
11	Հունգարիա	89700	1,7	313759	3497,87
12	Իռլանդիա	76010	1,5	225577	2967,73
13	Չինաստան	71647	1,4	283435	3955,99
14	Չիլի	68015	1,3	335905	4938,69
15	Մեքսիկա	63839	1,2	319960	5011,98
16	ՄԹ	57990	1,1	119469	2060,17
17	Իտալիա	43604	0,8	125741	2883,70
18	Ֆինլանդիա	30760	0,6	94485	3071,68
19	Չեխիա	18759	0,4	68050	3627,59
20	Ավստրալիա	17244	0,3	51146	2966,02
<b>Ընդամենը</b>		<b>5136951</b>	<b>100,0</b>	<b>16312139</b>	<b>3175,45</b>

**6.2.2. Հիմնական պարենի առանձին տեսակների միջազգային գները և դրանց փոփոխությունների միտումները 2008–2013 թթ. (հունիս)**

Ցորենի միջազգային գների 2008–2013 թթ. (հունիս) ցուցանիշների (տեսն գծանկար 6.1) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գները 2009 թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել են 21,2%-ով, սակայն 2010 թ. աճել են 0,1%-ով: 2011 թ. 2010 թ. նկատմամբ նկատվել է ցորենի միջազգային գների աճ միջինը 41,3%-ով, սակայն 2012 թ. գները կրկին աճել են 0,9%-ով, 2013 թ.՝ 1,4%-ով: Ցորենի միջազգային գների վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են արտահանող երկրների կողմից էմբարգոյի կիրառումը, խոշոր արտահանող երկրում տվյալ տարում ցածր բերքատվությունը, համաշխարհային գնաձր, սպեկուլյացիան և այլն:



Գծանկար 6.1. Ցորենի միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս)  
(ԱՄՆ դոլար/տ)


6.1, 6.2, 6.4, 6.7–6.11 գծանկարները կազմվել են հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով [www.indexmundi.com](http://www.indexmundi.com) ցուցանիշները:

Այսպես, եթե ցորենի որևիցե խոշոր արտադրող և արտահանող (ԱՄՆ, Ավստրալիա, ՌԴ, Ֆրանսիա, Կանադա, Ուկրաինա կամ մեկ այլ երկիր) որոշի արգելանք սահմանել արտահանման համար, ապա միջազգային շուկայում ցորենի գները կաճեն, իսկ եթե խոշոր ցորեն ներկրողը հայտնվի արգելանքում (էմբարգո), ապա գները կիջնեն: Շուկայական գնագոյացման այս սկզբունքները գործում են նաև պարենամթերքի այլ տեսակների համար:

Որպես գների աճի պատճառ հանդիսացող ցածր բերքատվությունը իր հերթին կարող է առաջանալ չոր բնակլիմայական պայմանների (երաշտի), վնասատու կենդանիների պատճառով: Միջազգային գների աճը կարող է առաջ գալ նաև բորսայում սպասումների արդյունքում: Քանի որ պարենի շուկան շատ անկայուն է, ուստի միջազգային գների տատանումները կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդել ներքին շուկայի պարենի գների վրա:

Շաքարավազի միջազգային գների համաձայն (տեսն գծանկար 6.2)՝ 2008–2011 թթ. նկատվում է գների կայուն աճ: Այսպիսով՝ տվյալ ժամանակահատվածում գրանցվել է 11–27% աճ, որից հետո 2012–2013 թթ. գները նվազել են հա-


մապատասխանաբար 23-29%-ով: Շաքարավազի գները 2013 թ. նվազել են և միջազգային շուկայում, և հոկտեմբերի պայմանագրերը արդեն իսկ նյույորքյան բորսայում հասել են 354 ԱՄՆ դոլար/տ, իսկ լոնդոնյան բորսայում՝ 478,8 ԱՄՆ դոլար/տ: Համաձայն վերլուծաբանների՝ Բրազիլիայում և Հնդկաստանում շաքարեղեգի առատ բերքի արդյունքում միջազգային գները փոքր-ինչ նվազել են: Միաժամանակ Մաքսային միության սահմանած ներկրման տուրքերը ազդում են գների վրա, և որքան գները ցածր են, այնքան տուրքերը բարձր են, և հակառակը: Միջազգային գների անկման պարագայում հումքային գները չպետք է լինեն ինքնարժեքից բարձր, որպեսզի խթանվի տեղական արտադրությունը: Մաքսային միության սահմանվող տուրքերը որոշվում են նյույորքյան բորսայում ձևավորված գների արդյունքում և ներկայումս կազմում են 205 ԱՄՆ դոլար/տ: 2014 թ. ընթացքում հնարավոր է, որ նյույորքյան բորսայում շաքարավազի գներն աճեն և կազմեն 390 ԱՄՆ դոլար/տ: Բնականաբար, շաքարավազի մաքսատուրքը կնվազի և կկազմի 140 ԱՄՆ դոլար 1 տ հաշվով:



Գծանկար 6.2. Շաքարավազի միջազգային գները 2008-2013 թթ. (հունիս) (ԱՄՆ դոլար/տ)

Միաժամանակ, որոշ կանխատեսումների համաձայն՝ 2013-2014 թթ. ՌԴ-ում շաքարավազի արտադրության ծավալները կկրճատվեն շուրջ 20%-ով, և առաջացած բացը լրացնելու նպատակով կներկրվի շուրջ 850 հազար տ շաքարավազ:


Ինչպես երևում է գծանկար 6.3-ի տվյալներից, կաթի փոշու միջազգային գները 2009 թ. նախորդ տարվա համեմատ նվազել են 22,4%-ով, սակայն 2009-2011 թթ. գների աճ է նկատվել 2010 թ.՝ 40%, 2011 թ.՝ 15,6%: 2012 թ. գները նվազել են 13,5%-ով, սակայն 2013 թ. (հունիս) հակառակը՝ դրա գները աճել են՝ 35%-ով: Հարկ է նշել, որ 2013 թ. բնակլիմայական անբարենպաստ պայմանների արդյունքում կաթի արտադրության ծավալները կրճատվել են, ինչը հանգեցրել է գների կտրուկ աճի:



**Գծանկար 6.3.** Կաթի փոշու միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս) (ԱՄՆ դոլար/տ)


Գծանկարներ 6.3 և 6.6–ը կազմվել են հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով [www.fao.org](http://www.fao.org) ցուցանիշները:

Գծանկար 6.4–ի համաձայն՝ կարագի միջազգային գների ցուցանիշները 2009 թ. սկսած տարեցտարի աճել են. 2010 թ.՝ 173%-ով, 2011 թ.՝ 110,6%-ով, սակայն 2012 թ. գները նվազել են 26%-ով, իսկ 2013 թ. հունիս ամսին աճի տեմպը կազմել է 121%: 2013 թ. գների աճը պայմանավորված է միջազգային շուկայում կաթի արտադրության ծավալների կրճատմամբ, ինչը նպաստել է կաթնամթերքի, մասնավորապես՝ կարագի գների աճին: 2013 թ. առաջին եռամսյակում կարագի գները աճել են Օվկիանիայում շուրջ 30,77%-ով, և 1 կգ կարագի գինը 3,25 ԱՄՆ դոլարից հասել է 4,25 ԱՄՆ դոլարի: ՌԴ շուկան նույնպես արձագանքել է կարագի միջազգային գներին: Ուկրաինայում կարագի գներն աճել են 6,9%-ով, իսկ 1 կգ կարագի գինը 4,35 ԱՄՆ դոլարից աճել և կազմել է 4,65 ԱՄՆ դոլար: ԵՄ երկրներում աճը կազմել է 2,28%, 1 կգ կարագի գինը 3,51 ԱՄՆ դոլարից աճել է և կազմել 3,59 ԱՄՆ դոլար:



**Գծանկար 6.4.** Կարագի միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս) (ԱՄՆ դոլար/տ)


2008–2013 թթ. հունվար–հունիս ցուցանիշների (տե՛ս գծանկար 6.5) համաձայն՝ 2009 թ. չեղեր պանրի միջազգային գները նվազել են 30,2%-ով, իսկ 2010 թ. գները աճել են 15,4%-ով, 2011 թ.՝ 20,7%-ով: Սակայն 2012 թ. գները նվազել են 6%-ով, իսկ 2013 թ. հունվար–հունիս ամիսներին գները կրկին աճել են 1,05%-ով:



Գծանկար 6.5. Չեղեր պանրի միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս) (ԱՄՆ դոլար/լր)

Գծանկարը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով <http://www.cheesereporter.com> տվյալները:

Գծանկար 6.6–ի ցուցանիշների համաձայն՝ 2009 թ. բուսական յուղի գները կտրուկ նվազել են 43%-ով, 2010 թ. գները աճել են 13,9%-ով, 2011 թ. գները աճել են 36,7%-ով, իսկ 2012–2013 թ. հունիս ամսին գները նվազել են համապատասխանաբար 8,2%-ով և 0,8%-ով:




Գծանկար 6.6. Բուսական յուղի միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս) (ԱՄՆ դոլար/լր)

Գծանկար 6.7–ի ցուցանիշների համաձայն՝ 2009–2010 թթ. նկատվել են բրնձի գների նվազման միտումներ համապատասխանաբար 11,5%-ով և 11,7%-ով: Հաջորդ 2 տարիների ցուցանիշները վկայում են բրնձի միջազգային գների տարեցտարի աճի մասին՝ 2011 թ.՝ 5,9%, 2012 թ.՝ 5,1%, սակայն 2013 թ. նկատվել են գների անկում 3,37%-ով:




Գծանկար 6.7. Բրնձի միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս) (ԱՄՆ դոլար/լր)

Սուրձի միջազգային գների 2008–2013 թթ. ցուցանիշների (տե՛ս գծանկար 6.8) համաձայն՝ 2008–2011 թթ. գները կայուն աճել են 2009 թ.՝ 7,4%, 2010 թ. 37,2%, 2011 թ. գները հասել են գազաթնակետին՝ աճելով 40,5%-ով, որին հետևել է գների անկումը՝ 2012 թ.՝ 68,6%-ով, իսկ 2013 թ. հունվար–հունիսին՝ 80,6%-ով:




Գծանկար 6.8. Սուրձի միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս) (ԱՄՆ դոլար/լր)

Տավարի մսի միջազգային գների 2008–2013 թթ. ցուցանիշների համաձայն (տե՛ս գծանկար 4.9)՝ 2009 թ. սկսած գները կայուն աճում են: Ինչպես նկատվում է գծանկարից, 2009 թ. տավարի մսի միջազգային գները նվազել են 3%-ով, որից հետո՝ հաջորդ տարիներին, գները աճել են: Հատկապես 2010 թ. սկսած՝ գրանցվել են աճի միտումներ՝ 27,4%, 2011 թ.՝ 20,1%, իսկ 2012 թ. աճը դանդաղել է և կազմել 2,6%, 2013 թ. գները նվազել են 0,05%-ով:



Գծանկար 6.9. Տավարի մսի միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս)  
(ԱՄՆ դոլար/տ)


Հավի մսի միջազգային գների 2008–2013 թթ. ցուցանիշների (տես գծանկար 6.10) համաձայն՝ 2009 թ. գները նվազել են 2,4%-ով, սակայն 2010 թ. գների 0,3%-ով աճ է նկատվում, 2011 թ.՝ 1,7%, 2012 թ.՝ 7,9%, իսկ 2013 թ. հունվար–հունիսին՝ 8,3%:



Գծանկար 6.10. Հավի մսի միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս)  
(ԱՄՆ դոլար/տ)

Խոզի մսի 2008–2013 թթ. միջազգային գների ցուցանիշների (տես գծանկար 6.11) համաձայն՝ 2009 թ. գները կտրուկ նվազել են 16,7%-ով, սակայն 2010 թ. նկատվում է գների աճ 33,4%-ով, 2011 թ.՝ 19,6%-ով: 2012 թ. նկատվել է 7% գների անկում, սակայն 2013 թ. գները կրկին աճել են 1,5%-ով:





Գծանկար 6.11. Խոզի մսի միջազգային գները 2008–2013 թթ. (հունիս) (ԱՄՆ դոլար/տ)

Անփոփելով համաշխարհային շուկայում պարենային ապրանքների արտադրության և արտաքին առևտրի վիճակագրական ցուցանիշների վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ զարգացած, ինչպես նաև զարգացող երկրները արտադրում, ինչպես նաև արտահանում են պարենի լայն տեսականի, մասնավորապես՝ ցորեն, շաքարավազ, կաթի փոշի, կարագ, բուսական յուղ, բրինձ, տավարի, խոզի և հավի միս, որի արտադրությունը միևնույն ժամանակ մի շարք այլ երկրներում ցածր մակարդակի վրա է, և այդ պատճառով տվյալ երկրները դրանք ներկրում են բնակչության պահանջարկը բավարարելու համար: Ներկրված ապրանքների գները ազդում են նաև ներքին շուկայի գների վրա, որը հանգեցնում է սպառողական գների տատանման: Պարենամթերքի տարեցտարի գների աճի դինամիկան առաջիկա տարիներին կպահպանվի: Այսպիսով՝ կատարած վերլուծության համաձայն՝ զարգացող և զարգացած երկրներում պարենի արտադրության և արտահանման ծավալները տարեցտարի աճում են, և հիմնական երկրները պահպանում են իրենց զբաղեցրած դիրքերը:

### 6.3. Ներքին շուկայի պաշտպանության և մրցակցության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում (պարենամթերքի առանձին տեսակների օրինակով)

Ցանկացած պետության հիմնական գործառնությունների շարքում պարենային անվտանգությունն ունի կարևոր և անփոխարինելի դեր: Պետական կառույցներն այս գործում ունեն իրենց օրենսդրական և գործառնության պարտականությունները, որոնց նպատակն է ոչ միայն ստեղծել բավարար պայմաններ ու հնարավորություններ՝ մարդկանց ապահովելու անվտանգության նորմերին համապատասխանող սննդամթերքով, այլև, որը ոչ պակաս կարևոր նշանակություն ունի, նրանք պետք է ունենան բավարար գնողունակություն՝ անհրաժեշտ պա-

րենամթերք ձեռք բերելու համար: Ի վերջո՝ յուրաքանչյուր ազգի առողջության հիմնական գրավականներից է ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող առողջ սնունդը և ապրելակերպը: Քաղաքացու կողմից սպառման հիմքում ընկած են պարենային զամբյուղի արժեքը և այն ձևավորող հիմնական պարենամթերքի տեսակները: Պարենային զամբյուղը ձևավորվում է 1 շնչի հաշվով՝ ըստ օրական (տարեկան) սպառման նորմայի, որը հաշվարկված է տվյալ ժամանակամիջոցում էներգետիկայի և միավորի գնի: ՀՀ-ում պարենային զամբյուղի արժեքը 2013 թ. IV եռամսյակի միջին տարեկան կտրվածքով 1 շնչի հաշվով կազմել է 381117,6 դրամ, իսկ 2012 թ.՝ 352804,7 դրամ (2013 թ. աճը՝ 108,0%): Նվազագույն սպառողական զամբյուղի տարեկան արժեքը 2013 թ. կազմել է 674578,2 դրամ, իսկ 2012 թ. այն կազմել է 624463,3 դրամ (տե՛ս աղյուսակ 6.36): Նշված հաշվարկի հիմքում ընկած է 1 շնչի հաշվով օրական 2412,1 կկալ էներգետիկայի ապահովումը, մեկ այլ հաշվարկով (որի հիմքում ընկած է 2232,0 կկալ օրական էներգետիկան 1 շնչի հաշվով) պարենային զամբյուղի ամսական արժեքը (մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով) 2013 թ. կազմել է 24263,7 դրամ, 2012 թ.՝ 22795,3 դրամ (2013 թ. աճը՝ 106,4%), իսկ 1 մեծահասակի հաշվով 2013 թ.՝ 27019,6 դրամ, 2012 թ.՝ 25384,5 դրամ (տե՛ս աղյուսակ 6.37):

Հարկ է նշել, որ վերջին տարիներին ՀՀ սպառողական գների (ՍԳԻ), ինչպես նաև պարենային ապրանքների գների ինդեքսն աճել են համապատասխանաբար 2011 թ.՝ 107,7% և 112,3%, 2012 թ.՝ 102,6% և 102,0%, 2013 թ.՝ 105,8% և 105,8% [3]: Վերոնշյալ ցուցանիշներից կարելի է եզրակացնել, որ պարենային ապրանքների գները աճել են ՍԳԻ հետ համահունչ, սակայն պետք է փաստել, որ այս ամենը բացասաբար է ազդել սպառողների գնողունակության վրա:

Ինչպես ՀՀ-ում (աղյուսակ 6.38), այնպես էլ ԼՂՀ-ում (աղյուսակ 6.39) սպառողների կողմից հիմնականում հայցվող 25 ապրանքատեսակների ռեսուրսների շարքում 16-ը պարենամթերք են (մնացած 9 ապրանքատեսակներն են գինին, էթիլային սպիրտը, կոնյակը, օղին, գարեջուրը, ծխախոտը (սիգարետ), բենզինը, դիզելային վառելիքը, էլեկտրաէներգիան) [5], որոնք հիմնականում լրացնում են պարենային զամբյուղը: Հատկանշական է ընդգծել, որ վերջին 13-15 տարվա ընթացքում և հատկապես 2000-ական թվականներին երկնիշ տնտեսական աճի պայմաններում, 1 շնչի հաշվով օրական էներգետիկան (2412,1 կկալ) չի փոխվել: Չի փոխվել նաև պարենային զամբյուղի կազմը: Հարկ է նշել, որ ՌԴ պարենային զամբյուղը կազմված է 47 պարենամթերքից, իսկ ԱՄՆ-ում այն հասնում է 100-ի:

Մեր նպատակն է պարզել, թե ինչպես են ձևավորվում ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 13 ապրանքատեսակների ռեսուրսները և ինչ կապ գոյություն ունի նշված պարենամթերքի տեսակների համաշխարհային գների, ՀՀ ներկրվող այդ արտադրատեսակների և ՀՀ մանրածախ ցանցում վաճառվող դրանց գների միջև: Ուսումնասիրության մեջ չեն ընդգրկվել ձուկ, հաց, ձու պարենամթերքի տեսակները՝ նկատի ունենալով, որ դրանց հիմնական ռեսուրսները ձևավորում են սեփական արտադրության հաշվին, և դրանք ավելի պակաս կախվածություն ունեն դրսից, քան պարենամթերքի մնացած 13 տեսակները:

Աղյուսակ 6.38-ում բերված ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 16 ապրանքատեսակների ռեսուրսների արտահանման և ներմուծման քանակների, դրանց արժեքների և 1 կգ-ի արժեքների տվյալների վերլուծությունից կարելի է եզրակացնել.

- Ամենամեծ քաշով արտադրված ապրանքատեսակը ցորենն է, որի արտադրության աճը 2013 թ. 2008 թ-ի համեմատ կազմել է 138%, իսկ 2012 թ-ին՝ 107,7%, իսկ աճի տեմպը 2012 թ. նկատմամբ՝ 128,1%: Երկրորդ՝ ծավալային ամենամեծ քաշով արտադրված ապրանքատեսակը, որի կշռի փոփոխությունը 2012 և 2013 թվականներին 2008 թ. համեմատ, որ կազմել է աննշան մեծություն, հացն է: Երրորդ ծավալային պարենամթերքը այլուրն է, որի մեծությունը 2012 թ-ին 2008 թ. համեմատ ավելացել է 183%-ով, 2013 թ-ին 2008 թ. համեմատ կազմել է 132%, իսկ 2013 թ-ին 2012 թ. համեմատ այն կրճատվել է 27,9%-ով:
- Ամենամեծ ծավալային ներմուծվող պարենամթերքը ցորենն է, որի ներմուծումը 2012 թ-ին 2008 թ. համեմատ ավելացել է 161,3%-ով: 2013 թ. այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 116,1%, իսկ 2012 թ-ի նկատմամբ ծավալները կրճատվել են 28,1%-ով: Երկրորդ ամենաշատ ներմուծվող ապրանքատեսակը հավի միսն է, որի ներմուծումը 2013 թ-ին 2008 թ. համեմատ պակասել է 13,4%-ով: 2012 թ. այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է, 8,3%, իսկ ներմուծման աճի տեմպը 2012 թ-ի նկատմամբ կազմել է 94,4%: Երրորդ ամենաշատ ներմուծվող ապրանքատեսակը բուսական յուղն է, որի ծավալը 2013 թ. 2008 թ-ի համեմատ ավելացել է 114,7%-ով: 2012 թ. այդ ցուցանիշը ավելացել է 117,3%-ով: 2013 թ. ներմուծման ծավալի աճի տեմպը 2012 թ. նկատմամբ կազմել է 97,7%: Նկատենք նաև, որ 2012 թ. ՀՀ ներկրված երկրորդ ծավալային ամենամեծ ապրանքային տեսակը շաքարավազն է (82410,3 տ 2008 թ-ի 102263 տ-ի դիմաց, դա այն դեպքում, երբ Ախուրյանում գործում է շաքարի արտադրության գործարանը): Սակայն ինչպես նկատվում է, 2013 թ. շաքարավազի ներմուծման ծավալը կտրուկ նվազել է 2008 թ-ի նկատմամբ 21 անգամ, իսկ 2012 թ-ի նկատմամբ՝ 17 անգամ:
- 2008 թ. ՀՀ-ից ամենաշատ արտահանված ապրանքատեսակը եղել է սուրճը, 2013 թ. ամենաշատն արտահանվել է ձուկ, որի ծավալը 2008 թ-ի նկատմամբ աճել է 31 անգամ, իսկ աճի տեմպը 2012 թ-ի նկատմամբ կազմել է 123,1%, իսկ երրորդ տեղը 2013 թ. զբաղեցրել է պանիրը, որի արտադրության ծավալը 2008 թ-ի նկատմամբ աճել է 3,2 անգամ, իսկ 2012 թ. այդ ցուցանիշը աճել է 1,9 անգամ: 2013 թ. պանրի արտահանման աճի տեմպը 2012 թ-ի նկատմամբ կազմել է 170,5%:
- 2008 թ. ընդամենը ռեսուրսների (որը հավասար է արտադրության (A) և ներմուծման (B) ծավալներից հանած արտահանումը՝  $D = A + B - C$ ) մեջ ամենամեծ ծավալային ցուցանիշը պատկանում է ցորենին, այնուհետև՝ հացին, երրորդ տեղը զբաղեցրել է այլուրը: 2013 թ. ամենամեծ ծավալ է ունեցել ցորենը, ապա՝ հացը և այլուրը:

Աղյուսակ 6.39-ի տվյալներից հետևում է, որ ԼՂՀ-ում.

- 2008 թ. ամենամեծ քաշով արտադրվել է ցորեն, ապա՝ ալյուր: Այդ նույն պատկերն է եղել նաև 2013 թ.:
- 2009 թ. ԼՂՀ ամենաշատը ներմուծվել է շաքարավազ, ապա՝ հավի միս և ալյուր: 2013 թ. ամենից շատ ներմուծվել է ալյուր, ապա՝ շաքարավազ և հավի միս:
- 2009 թ. ԼՂՀ-ից ամենաշատը արտահանվել է ցորեն, ապա՝ ալյուր և մակարոնեղեն, 2013 թ.՝ համապատասխանաբար ցորեն, տավարի միս և բուսական յուղ:
- Ընդամենը ռեսուրսներում ամենամեծ բաժինը 2009 թ. ընկել է ցորենին, հացին և ալյուրին: Նույն պատկերն է նկատվել նաև 2013 թ.:

Աղյուսակ 6.40-ում բերված են ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 13 ապրանքատեսակների ռեսուրսների արտահանման և ներմուծման քանակները, արժեքները և 1 կգ արժեքները 2008–2013 թթ.: Բերված տվյալներից հետևում է, որ գրեթե բոլոր ապրանքատեսակների ռեսուրսների արտահանման և ներմուծման գները փոփոխվել են: Այսպես՝ 2013 թ. 2008 թ-ի համեմատ տավարի մսի ներմուծման 1 կգ-ի արժեքն ավելացել է 181,3%-ով (դոլարային արտահայտությամբ) և 204,4%-ով (դրամական արտահայտությամբ), խոզի մսինը՝ համապատասխանաբար 92,1% և 103,8%, թռչնի մսինը՝ 141,8% և 159,9%, կարագինը՝ 143,2% և 161,5%, պանիրինը՝ 94,9% և 107,0%, սուրճինը՝ 88,2% և 99,5%, ցորենինը՝ 105,7% և 119,2%, բրինձինը՝ 114,6% և 129,2%, ալյուրինը՝ 134,3% և 151,4%, արևածաղկի յուղինը՝ 107,1% և 120,8%, մարգարինինը՝ 103,0% և 116,2%, շաքարինը՝ 166,5% և 187,7%, մակարոնեղենինը՝ 89,5% և 100,7%-ներով: Համեմատելով 2013 թ. ցուցանիշները 2012 թ. հետ՝ կարելի է փաստել, որ հիմնականում գները աճել են, ընդ որում՝ տավարի մսի ներմուծման 1 կգ արժեքն ավելացել է 104,4%-ով (դոլարային արտահայտությամբ) և 107,9%-ով (դրամական արտահայտությամբ), խոզի մսինը՝ համապատասխանաբար 104,6% և 101,2%, թռչնի մսինը՝ 120,1% և 123,8%, կարագինը՝ 97,1% և 133,1%, պանիրինը՝ 105,6% և 99,0%, սուրճինը՝ 90,0% և 88,9%, ցորենինը՝ 114,7% և 125,9%, բրինձինը՝ 107,5% և 109,4%, ալյուրինը՝ 127,4% և 149,3%, արևածաղկի յուղինը՝ 107,0% և 110,3%, մարգարինինը՝ 94,6% և 89,1%, շաքարավազինը՝ 81,5% և 86,1%, մակարոնեղենինը՝ 101,1% և 99,5%-ներով:

Գծանկար 6.12–6.41-ում [32, 47, 11, 88] բերված են ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 10 ապրանքատեսակների համաշխարհային, ՀՀ ներմուծման և ՀՀ մանրածախ ցանցում վաճառքի գները 2008–2013 թթ.: Բերված գծանկարներից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- ՀՀ ներմուծված տավարի մսի գները զգալիորեն ցածր են համաշխարհային գներից, ինչը, սակայն, չի խոչընդոտել, որ դրանք վաճառվեն բավականին բարձր գներով: Այսպես, եթե 2008 թ. տավարի մսի 1 կգ-ի միջազգային գինը եղել է 816,91 դրամ, այն ՀՀ է ներմուծվել 510,52 դրամով, իսկ ՀՀ-ում վաճառվել է (մանրածախ ցանցում) 1589,90 դրամով կամ ներմուծված գնից 211,4%-ով ավելի: 2012 թ. այդ ցուցանիշները կազմել

են համապատասխանաբար 1664,66 դրամ, 980,72 դրամ, 2576,60 դրամ և 162,72%-ով ավելի, իսկ 2013 թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1657,92 դրամ, 2594,6 դրամ, 1043,47 դրամ և 148,7%-ով: Բերված տվյալներից հետևում է, որ ՀՀ է ներմուծվում համաշխարհային գնից զգալիորեն էժան (2012 թ.՝ 58,9%, 2013 թ.՝ 37,06%) տավարի միս: Տավարի մսի գների աճը (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար 0,7%, 6,4% և -0,4%:

- Խոզի միսը 2008 թ. ՀՀ է ներմուծվել միջազգային գնից 129% բարձր, ՀՀ-ում վաճառվել է ներմուծման գնից 154,6%-ով բարձր, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար 32,6% և 255,4% բարձր, իսկ 2013 թ.՝ համապատասխանաբար 32,6% և 200% բարձր: Խոզի մսի գների աճը (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար -10%, 6,6% և 6,6%:
- Հավի միսը 2008 թ. ՀՀ է ներմուծվել միջազգային գնից 32,8% ցածր գնով և ՀՀ-ում վաճառվել է ներմուծման գնից 154,7%-ով ավելի բարձր, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար 40%-ով ցածր և 137,8%-ով բարձր, 2013 թ.՝ 34,6%-ով ցածր և 117,7%-ով բարձր: Հավի մսի գների աճը (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար 12,1%, 22,5% և 12,3%:
- Կարագը 2008 թ. ՀՀ է ներմուծվել միջազգային գնից 5,2%-ով ցածր գնով և վաճառվել է 117,2%-ով ավելի բարձր, քան ներմուծման գինն է, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար 23%-ով բարձր և 89,9%-ով բարձր, 2013 թ.՝ 5,6%-ով ցածր և 117,5%-ով բարձր: Կարագի գների աճը (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար 13,4%, -1% և 28,9%:
- Բուսական յուղը 2008 թ. ՀՀ է ներմուծվել միջազգային գնից 9,7%-ով ցածր և վաճառվել է 113,4%-ով ավելի բարձր, քան ներմուծման գինն է, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար 13,5%-ով բարձր և 175,2%-ով բարձր, 2013 թ.՝ 2,8%-ով բարձր և 176,5%-ով բարձր: Բուսական յուղի գների աճը (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար 13,4%, -1% և 28,9%:
- Պանիրը 2008 թ-ին ՀՀ է ներմուծվել միջազգային գնից 66,2%-ով բարձր, քան համաշխարհային շուկայում դրա վաճառքի գինն է, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար 37,4%-ով բարձր, իսկ 2013 թ.՝ 37,9%-ով բարձր: Պանրի գների աճը (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար 3,9%, -7,7% և 5,9%:
- Ցորենը 2008 թ. ՀՀ է ներմուծվել միջազգային գնից 8,5%-ով բարձր և վաճառվել է 74,4%-ով ավելի բարձր, քան ներմուծման գինն է, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար 12,4%-ով ցածր և 70,1%-ով բարձր, 2013 թ.՝ 0,8%-ով ցածր և 54,2%-ով բարձր: Ցորենի գների աճը (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար -13,6%, 16,9% և 1,6%:

- Այուրը 2008 թ. ՀՀ-ում վաճառվել է ներմուծման գնից 51%-ով բարձր, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար 51%-ով բարձր, 2013 թ.՝ 32,9%-ով բարձր: Այուրի գների աճը (ՀՀ և ներմուծված) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար -14,3% և 29,9%:
- Շաքարավազ 2008 թ. ՀՀ է ներմուծվել միջազգային գնից 36%-ով ցածր և վաճառվել է 118,6%-ով ավելի բարձր, քան ներմուծման գինն է, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար՝ 2,1%-ով ցածր և 81,4%-ով բարձր, 2013 թ.՝ 3,5%-ով ցածր և 92,4%-ով բարձր: Ինչպես նկատվում է, շաքարավազի գները (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել են՝ կազմելով համապատասխանաբար -11,9%, -17% և -15,7%:
- Բրինձ 2008 թ. ՀՀ է ներմուծվել միջազգային գնից 0,4%-ով բարձր և վաճառվել է 131,4%-ով ավելի բարձր, քան ներմուծման գինն է, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար 18,4%-ով և 181,4%-ով բարձր, 2013 թ.՝ 42,9%-ով ցածր և 92,4%-ով բարձր: Բրինձի գների աճը (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար 7,6%, 9,6% և -8,8%:
- Սուրճ 2008 թ. ՀՀ է ներմուծվել միջազգային գնից 1,4%-ով ցածր և վաճառվել է 171,7%-ով ավելի բարձր, քան ներմուծման գինն է, իսկ 2012 թ.՝ համապատասխանաբար 40%-ով ցածր և 207,9%-ով բարձր, 2013 թ.՝ 28,3%-ով ցածր և 282,8%-ով բարձր: Սուրճի գների աճը (ՀՀ, ներմուծված, միջազգային) 2013 թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է համապատասխանաբար 14%, -8,3% և -23,3%:

Աղյուսակ 6.41-ում բերված է «Միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի ՀՀ ներմուծման ծավալները, արժեքները և 1 կգ գինը՝ ըստ առանձին երկրների: Աղյուսակ 6.41-ի տվյալներից հետևում է, որ 2012 թ. ՀՀ է ներմուծվել 55205,6 տ միս 88696,8 հազ. դոլար արժեքով, կամ 1 կգ արժեքը կազմել է 645,49 դրամ, ըստ որում՝ բերված միսը և դրանից պատրաստված մսնդամթերքը ներմուծվել է՝ սկսած 1,05 դոլարից (Բելգիա) մինչև 23,67 դոլար (Ավստրալիա) գներով:

2011 թ. սպառողների կողմից հիմնականում հայցվող 25 ապրանքատեսակների ռեսուրսների կազմում ՀՀ-ում արտադրված տավարի, խոզի և հավի մսի (նշված արտադրատեսակների արտադրության ցուցանիշները բերվում են սպանդային քաշով (հիմնականում արտադրվել են գյուղացիական և բնակչության օժանդակ տնտեսություններում)) կշիռները կազմել են համապատասխանաբար 37865,6, 5482,6 և 5637,8 տ կամ համատեղ 48986,0 տ: ՀՀ-ում արտադրված մսի ընդհանուր ծավալում տավարի մսի տեսակարար կշիռը կազմել է 77,3%, խոզի մսինը՝ 11,2%, հավի մսինը՝ 11,5%: Հանրապետություն ներմուծված մսի երեք տեսակների կշիռը 2011 թ. կազմել է համապատասխանաբար 10115,5 տ, 5081,6 տ և 38684,1 տ, դրանց արտահանման մեծությունները կազմել են համապատասխանաբար 0,0 (վիճակագրության պայմանականությունների առումով դա նշանակում է «չնչին մեծություն»), 0,006 տ և 0,0 տ, իսկ դրանց ռեսուրսները (արտադրություն + ներմուծում - արտահանում) կազմել են համապատասխանաբար 47981,1 տ, 10564,2 տ և 38684,1 տ կամ համատեղ 97229,4 տ

միս, որից տավարի մսի տեսակարար կշիռը կազմել է 49,3%, խոզի մսինը՝ 10,9%, հավի մսինը՝ 39,8%: Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ում արտադրված երեք տեսակի մսի տեսակարար կշիռների (համապատասխանաբար՝ 77,3%, 11,2% և 11,5%) և սպառման կառուցվածքի (համապատասխանաբար՝ 49,3%, 10,9% և 39,8%) միջև գոյություն ունի որոշակի տարբերություն, որը բացատրվում է մի շարք պատճառներով: Դրանց շարքում կարևոր դերակատարում ունեն ազգային առանձնահատկությունները (ինչը նկատվում է խոզի մսի օգտագործման ժամանակ, որի դեպքում մսի արտադրության և սպառման կառուցվածքում դրանք գրեթե հավասարակշռված են՝ կազմելով համապատասխանաբար 10,9% և 11,2%, թեև խոզի մսի ռեսուրսների քաշում արտադրության բաժինը կազմել է 51,9%, ներմուծմանը՝ 48,1%, իսկ արտահանումը վիճակագրական նշանակումներով կազմել է 0,0%): Տավարի մսի ռեսուրսների (47981,1 տ) կազմում արտադրության բաժինը կազմել է 78,9%, ներմուծմանը՝ 21,1%, արտահանմանը՝ 0,0%, մինչդեռ հանրապետությունում սպառված մսի քաշի կազմում տավարի մսի քաշի (47981,1 տ) բաժինը կազմել է 49,3%:

Հավի մսի սպառման գործում ակնհայտ է դառնում դրա գնի (մանրածախ միջին)՝ որպես գործոնի ազդեցությունը սպառողների վարքագծի վրա: Բանն այն է, որ 2011 թվականին հանրապետությունում 1 կգ հավի մսի (սերառյալ նաև հավի բուրդ) մանրածախ միջին գինը (1123,2 դրամ) տավարի մսի գնի (2507,8 դրամ) համեմատ էժան է 223,3%-ով, իսկ խոզի մսի գնի (2783,4 դրամ) համեմատ՝ 247,8%-ով, ինչն էլ վճռորոշ նշանակություն է ունեցել արտադրության ծավալի (5482,6 տ) համեմատությամբ շուրջ 8 անգամ սպառման ռեսուրսների (44321,9 տ) ավելացումը, որի պատճառով դրա տեսակարար կշիռը մսի ռեսուրսների մեջ կազմել է 45,6%:

Ընդհանուր առմամբ 2011 թ. հանրապետությունում սպառված մսի արժեքը կազմել է 197,51 մլրդ դրամ, որից տավարի մսինը՝ 120,33 մլրդ, խոզի մսինը՝ 29,40 մլրդ, հավի մսինը՝ 47,78 մլրդ կամ տոկոսային արտահայտությամբ համապատասխանաբար 60,9%, 14,9%, 24,2%: Տավարի մսի ներմուծման համար հանրապետության սպառողները այլ երկրների նմանատիպ ապրանքատեսակի ձեռքբերման համար 2011 թվականին վճարել են 20,29 մլրդ դրամ (հաշվարկման ժամանակ մանրածախ միջին գինը նվազել է հաշվարկային առևտրական վերադիրի չափով, որը ընդունվել է մանրածախ գնի 20%-ի չափով), խոզի մսի ձեռքբերման համար՝ 1,32 մլրդ, հավի մսի ձեռքբերման համար՝ 34,76 մլրդ կամ ընդամենը՝ 66,37 մլրդ դրամ կամ 2011 թ. 1 դոլարի փոխարժեքի միջին մեծությամբ (372,50 դրամ) հաշվարկված՝ 178,17 մլն դոլար: Ըստ էության, այս մեծության չափով հանրապետության սպառողները ֆինանսավորում են այն երկրների անասնապահությունը և թռչնաբուծությունը, որտեղից ներմուծվում են այդ մթերքները: Նկատենք նաև, որ 2011 թ. հանրապետության առևտրի շրջանառության մեջ մսի երեք տեսակների (տավարի, խոզի, հավի մանրածախ առևտրաշրջանառության բաժինը կազմել է 9,67%, իսկ ներմուծման ցուցանիշում՝ 12,76%:

Բերված տվյալներից ակնհայտ դարձավ, որ 2011 թ. ՀՀ ներմուծված (ներմուծման ցուցանիշները ներառում են նաև ֆիզիկական անձանց կողմից կազ-

մակերպվող առևտրի տվյալները) տավարի, խոզի և հավի մսի քաշը կազմել է 53881,2 տ (համապատասխանաբար՝ 10115,5 տ, 5081,6 տ, 38684,1 տ) [34]: Մինչդեռ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի երկնիշ դասակարգման) (Եր. ՀՀ ԱՎԾ. 2012 թ. էջ 26) [23] ըստ վիճակագրական ժողովածուի (առանց ֆիզիկական անձանց հայտարարագրերի տվյալների)՝ 2011 թ. ՀՀ-ից արտահանվել է 281,0 տ քաշով և 1195,8 մլն դոլար արժեքով «Միս և մսից ենթամթերք» (1 կգ արտահանման արժեքը կազմել է 4,25 ԱՄՆ դոլար), իսկ 2011 թ. Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել 62327,9 տ քաշով և 94702,9 մլն դոլար արժեքով «Միս և մսից ենթամթերք» (1 կգ ներմուծման արժեքը կազմել է 1,52 դոլար կամ 566,2 դրամ (2011 թ. ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը կազմել է 372,50 դրամ): Եթե նկատենք, որ 2011 թ. հանրապետությունում մանրածախ ցանցում իրացված մսի (տավարի, խոզի և հավի 1 կգ) միջին գինը կազմել է 2138,1 դրամ) [(2507,8 + 2783,4 + 1123,2) : 3], ապա ստացվում է, որ ներմուծված միսը ՀՀ-ում վաճառվում է ձեռքբերման գնից շուրջ 4 անգամ բարձր գնով: Իսկ դա նշանակում է, որ մսի նկատմամբ հանրապետությունում առկա է բարձր վճարունակ պահանջարկ և այն կարելի է բավարարել նաև հայրենական արտադրության հաշվին:

Այստեղ գների առումով անհրաժեշտ է հաշվի առնել նաև գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը, որը ՀՀ-ում 2011 թ-ին 2010 թ. նկատմամբ ավելացել է 117,1%-ով, իսկ 2012 թ-ին 2011 թ. նկատմամբ նվազել է՝ կազմելով 95%: Հետաքրքիր է նաև նշել, որ վերջին տարիներին ՀՀ-ում նկատվել է միս արտադրողների իրացման միջին գների էական աճ (տես աղյուսակ 6.42):

Այսպես՝ 2007–2011 թթ. 1 կգ տավարի միսը արտադրողների կողմից իրացվել է համապատասխանաբար 1205,8, 1263,0, 1289,7, 1815,1 և 2187,2 դրամ արժեքով (կամ 2011 թ-ին 2007 թ. համեմատ ավելացել է 181,4%-ով), ոչխարի միսը՝ համապատասխանաբար 1265,0, 1504,6, 1530,3, 2282,4 և 2633,2 դրամ (208,2%), խոզի միսը՝ 1293,2, 2169,6, 1858,4, 1900,6, և 2406,7 դրամ (186,1%):

Եթե նկատի ունենանք, որ, օրինակ, արտադրողների կողմից տավարի մսի արտադրողների իրացման 1 կգ միջին գինը ՀՀ-ում 2011 թ. կազմել է 2187,2 դրամ, իսկ մանրածախի միջին գինը՝ 2507,8 դրամ, այսինքն՝ առևտրական վերադիրը (առևտրական կազմակերպությունների ծախսերը և շահույթը) կազմել է 320,6 դրամ կամ մանրածախ գնի 14,7%-ը (խոզի մսի համար համապատասխանաբար՝ 2406,7, 2783,4, 376,7 դրամ, 13,5%), ապա ստացվում է, որ ներմուծված մսի և դրանց իրացման գների միջև ձևավորված ահռելի ձեղքվածքը (շուրջ 4 անգամ) ստանում են ոչ թե առևտրական կազմակերպությունները, այլ ներկրողները, ինչը մսի շուկայի մենաշնորհացվածության վկայության լուրջ ահազանգ է: Հետաքրքիր է նշել նաև այն, որ 2011 թ. հանրապետությունում արտադրվել է 17525,0 տ պանիր, ներմուծվել՝ 1035,3 տ, արտահանվել՝ 439,8 տ, կամ պանրի ռեսուրսների մեծությունը կազմել է 18120,5 տ, իսկ 1 կգ պանրի մանրածախ միջին գինը կազմել է 1783,2 դրամ [33]: 2011 թ. (յուղոտ) պանիր արտադրողների իրացման 1 կգ միջին գինը կազմել է 1525,1 դրամ [33] (2011 թ-ին 2007 թ.



Նկատմամբ ավելացել է 165,0%-ով, ինչը զգալիորեն ավելի ցածր է, քան վերը նշված մսի երեք տեսակների գնաճը), այսինքն՝ պանրի 1 կգ հաշվով այն իրացնող առևտրական կազմակերպությունները վաստակել են 258,1 դրամ կամ մանրածախ գնի 14,5%-ը: Այլ կերպ ասած՝ եթե տավարի և խոզի մսի, ինչպես նաև պանրի առևտրական վերադիրները գրեթե հավասար են, ապա նույնը չի կարելի ասել առավելապես ներմուծված մսի և պանրի ձեռքբերման և իրացման գների մասին: Այսինքն՝ եթե դատելու լինենք վերը բերված մեր օրինակը, ապա եզրակացությունն այն է, որ ներմուծված ապրանքները տեղական շուկայում իրացվում են մի քանի անգամ բարձր գներով, մինչդեռ հայրենական արտադրության դեպքում (երբ շուկան հագեցած է այդ ապրանքատեսակով, չի նկատվում գների թռիչքաձև արտադրություն: Այսպիսով՝ որևէ ապրանքի գների բարձրացման դեմ պայքարի ճանապարհը դրա հայրենական արտադրության ծավալների ավելացումն է, ներմուծման նվազեցումը, կամ եթե ավելանում է ներմուծումը, ապա պետք է ներմուծողների համար մշակել մրցակցային միջավայր և համապատասխան մեխանիզմներ: Վերջինիս դեպքում կարևորվում է պետության կարգավորիչ դերը, այդ թվում նաև մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործառույթները և ակտիվությունը:

Նկատենք նաև, որ ՀՀ արտաքին առևտրի «Միս և մսից ենթամթերք» խմբի արտահանման տողը 2008–2011 թթ. զգալիորեն նվազել է: Այսպես՝ 2008 թ. այն կազմել է 757,2 հազ. ԱՄՆ դոլար, 2009 թ.՝ 1164,4, 2010 թ.՝ 58,8, 2011 թ.՝ 23,8 հազ. դոլար, այսինքն՝ նշված ցուցանիշը 2011 թ.–ին 2008 թ. համեմատ նվազել է գրեթե 32 անգամ: Նշված տողի 2008 թ. և 2011 թ. ներմուծման ցուցանիշները մնացել են 88–89 մլն դոլարի սահմաններում [33]:

2011 թ. ՀՀ-ից 2,5 տ «Միս և մսից ենթամթերքը» արտահանվել է Վրաստան, իսկ այդ ապրանքախմբի ներմուծման վերաբերյալ տվյալները բերված են վերոնշյալ աղյուսակներում:

Աղյուսակ 6.41-ի տվյալներից հետևում է, որ 2011 թ. «Միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի ՀՀ ներմուծման քանակի մեջ ամենամեծ բաժինն ունեցել է ԱՄՆ-ը (ամբողջի 45,1%-ը), Բրազիլիան (17,9%) և Հնդկաստանը (17,0%): Նշված երկրների բաժինը կազմել է ներմուծման ողջ քանակի 80,0%-ը: Արժեքային արտահայտությամբ այդ երկրների բաժինը ընդհանուրի մեջ համապատասխանաբար կազմել է 30,8%-ը, 22,0% և 26,2%-ը կամ ընդամենը 79,0%-ը: Այսինքն՝ նշված երեք երկրներն են հիմնականում ձևավորում «Միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի ներմուծման արժեքը: 2011 թ. ՀՀ ներմուծված «Միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի 1 կգ արժեքը կազմել է 1,52 դոլար (567,4 դրամ), ըստ որում՝ ամենացածր արժեքն ունեցել է Բելգիայից ներմուծվածը (0,86 դոլար կամ 319,1 դրամ), իսկ ամենաբարձրը եղել է Ինդոնեզիայից ներմուծվածը (10 դոլար կամ 3725,0 դրամ), թեև այդ երկրից ներմուծվել է ընդամենը 100 կգ «Միս և մսից ենթամթերք»: ԱՄՆ-ից ներմուծված մսի 1 կգ-ի արժեքը կազմել է 1,04 դոլար (387,8 դրամ), Բրազիլիայից ներմուծվածը՝ 1,87 դոլար (697,8 դրամ), իսկ Հնդկաստանից ներմուծվածը՝ 2,35 դոլար (874,0 դրամ) կամ նշված 3 երկրներից ներմուծված «Միս և մսից ենթամթերք» ապրանքախմբի 1 կգ միջին արժեքը կազմել է 1,75 դոլար (653,1 դրամ):

Ներկայացված տվյալներից հետևում է, որ 2012 թ. ՀՀ-ից արտահանված արտադրանքի քանակը կազմել է 830,4 հազ. տ (1380,2 մլն դոլար արժեքով), իսկ ներմուծման ծավալը՝ 4054,5 հազ. տ (4261,2 մլն դոլար արժեքով) կամ ՀՀ 2012 թ. ներմուծված արտադրանքի ծավալը գերազանցել է արտահանված արտադրանքի ծավալը շուրջ 5 անգամ, իսկ արժեքային արտահայտությամբ՝ ավելի քան 3 անգամ (308,7%-ով):

Հատկանշական է, որ 2012 թ. ՀՀ-ից արտահանված «Կենդանի կենդանիներից» հիմնական բաժինը ընկել է ոչխարներին և այծերին՝ 2486,5 տ քաշով և 8550,4 հազ. դոլար արժեքով: Ներմուծված տավարի մսի (սառեցրած) 1 կգ արժեքը կազմել է 2,44 դոլար կամ 980,3 դրամ (2,44 x 401,76) [34], խոզի մսինը (թարմ, պաղեցրած կամ սառեցրած)՝ 2,42 դոլար կամ 972,6 դրամ, մսամթերքինը (տավարի, խոզի, ոչխարի)՝ 1,18 դոլար կամ 474,1 դրամ, ընտանի թռչունների մսինը և ենթամսնդամթերքինը՝ 1,25 դոլար կամ 500,9 դրամ: Ընդգծենք նաև, որ 2012 թ. ՀՀ ներմուծված խոշոր եղջերավոր անասունների սառեցրած մսի 1 կգ արժեքը տատանվել է 2,41–3,49 դոլարի միջակայքում, խոզի մսինը՝ 2,10–12,35 դոլարի, ոչխարի կամ այծի թարմ մսինը, պաղեցրած կամ սառեցրածը՝ 12,77 դոլար, մսամթերքինը (տավարի, խոզի, ոչխարի)՝ 1,17–2,12, ընտանի թռչունների մսինը և ենթամսնդամթերքինը՝ 1,02–2,72 դոլարի սահմաններում [24] (տես աղյուսակ 6.43):

Ինչպես արդեն նշել ենք ներկրված պարենային ապրանքների որակական հատկանիշները խիստ մտահոգիչ են, որը ազգային անվտանգության հիմնախնդիր է, քանի որ դրանց ցածր որակի կամ անհայտ ծագման պատճառով կարող է վտանգվել երկրի ազգաբնակչության առողջությունը: Այս առումով կարևոր ենք համարում արտաքին առևտրում պարենային ապրանքների որակի համապատասխանեցումը որակի ստանդարտներին, ինչը միտված է պարենային անվտանգության ապահովմանը: Միաժամանակ կարևորում ենք նաև ՀՀ-ի մաքսային միասնական միության անդամակցման գործընթացում ստանդարտացման և սերտիֆիկացման գործընթացները, որոնք պարտադիր են միության անդամ երկրների համար: Ինչպես հայտնի է, արդեն իսկ մշակված և հաստատված են միասնական մաքսային միության ստանդարտների սերտիֆիկացման կանոնակարգերը: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հատկապես մսամթերքի արտադրությանը և արտաքին առևտրին (հատկապես հումքի ներմուծման պարագայում), որոնք մաքսային միության անդամակցման պարագայում խիստ փոխկապակցված են լինելու, և, մեր կարծիքով, անհրաժեշտ է լինելու «օգտվել առիթից» և ներմուծել հնարավորության սահմաններում բարձրորակ հումք և արտադրանք, իսկ հետագայում վերանշակման գործընթացում օգտագործել որակյալ հումք, որը կապահովի ազգաբնակչության անվտանգությունը:

Այսօր ՀՀ մսամթերքի շուկան ոչ այնքան լավ վիճակում է, քանի որ ցանկացած սպառողի կարող է կասկածի տեղիք տալ մսամթերքի որակը, և դա պայմանավորված է մսամթերքի գներով: Այսպես, օրինակ՝ 1 կգ երշիկի գինը մանրածախ շուկայում կազմում է 1900–2500 ՀՀ դրամ, միևնույն ժամանակ տավարի մսի գինը մանրածախ շուկայում կազմում է 2500–2600 ՀՀ դրամ, իսկ գյուղատնտեսական մթերք արտադրողների կողմից վաճառվող տավարի մսի գինը 2013 թ. կազմել է 2138 ՀՀ դրամ, իսկ խոզի մսինը՝ 2392 ՀՀ դրամ: Այստեղից կարելի է

եզրակացնել, որ 2500 ՀՀ դրամ արժեքով մասնաբերքի հումքը ներկրված միս է, որի աժեքը բավականին մատչելի է: Այստեղ առաջանում են խնդիրներ՝ կապված ներկրված մսի որակական հատկանիշների հետ: Գաղտնիք չէ, որ զարգացած, ինչպես նաև զարգացող երկրներում մասնաբերք արտադրող ձեռնարկությունները արտադրանքի ու հումքի մատչելիության համար հաճախ խախտում են ընդունված չափանիշները: Նման օրինակով կարելի է ներկայացնել ՌԴ-ն, որտեղ ներկրվող ավստրիական «Landhof GesmbH & Co KG» ընկերության արտադրանքի փաթեթավորման վրա նշված 100% տավարի մսի փոխարեն հայտնաբերվել են ձիու, թռչնի միս և սոյայի սպիտակուցներ, սակայն վերոնշյալ տեսականին չի արգելվում օգտագործել արտադրության մեջ, որի դեպքում անհրաժեշտ է սպառողներին իրազեկել դրա մասին: Արգենտինայից փորձել են ներկրել միս, որը տասնյակ տարիներ պահվել է մաքսային պահեստների սառնարաններում, և ինչ-որ ռուսական մսի վերամշակող ձեռնարկություն ցանկացել էր դա օգտագործել որպես հումք: Մաքսային ծառայության տվյալներով՝ 2013 թ. առաջին կիսամյակին Հայաստան ներկրված խոշոր եղջերավոր անասունների մսի 89%-ը կամ 4,9 հազար տոննան ներկրվում է Հնդկաստանից: Բրազիլիայում այդ ցուցանիշը կազմում է 255 տ պակաս կամ ընդհանուր չափաբաժնի 4,5%-ը: Նշենք, որ տվյալ ժամանակահատվածում Արգենտինայից Հայաստան տավարի միս չի ներկրվել, իսկ գոմեշի մսի ամենախոշոր արտահանողը Հնդկաստանն է:

2012 թ. ապրիլից մինչև 2013 թ. տարվա մարտը տավարի մսի արտահանման ծավալը գերազանցել է 1,1 մլն տոննան: Պատճառը տավարի մսի խոշոր արտահանող Բրազիլիայի պասիվությունն էր: Փորձագետները մեկ այլ պատճառ են համարում Չինաստանում մսի պահանջարկի ավելացումը, իսկ Հնդկաստանից արտահանվող գոմեշի մսի մեծ չափաբաժին արտահանվում է տարբեր երկրներ, այդ թվում՝ հետխորհրդային պետություններ: Որպես կանոն՝ զարգացած երկրները գոմեշի միս չեն ներկրում կամ էլ՝ աննշան քանակով: 2013 թ. առաջին կիսամյակում Հնդկաստանից ներկրվող տավարի մսի (որը իրականում եղել է գոմեշի միս) միջին մաքսային գինը 1 կգ դիմաց կազմել է 2,49 դոլար: Բրազիլիայի ցուցանիշը մի փոքր ավելի բարձր էր՝ 2,53 դոլար: Առավել բարձր արժեքով տավարի միս Հայաստան ներմուծվել էր Բելառուսից՝ 1 կգ դիմաց 5,16 դոլար, բայց զուտ խորհրդանշական ծավալով՝ 2 տոննայից պակաս: Նշենք, որ համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2013 թ. արտադրվել է 72011,6 տ միս, որի աժի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 109,3%, իսկ մասնաբերք 2013 թ. արտադրվել է 4757 տ, որի աժի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 101,8% [35]: Հայաստանում 1 կգ տավարի մսի միջին մանրածախ գինը կազմել է 6,3 դոլարին համարժեք դրամ: ՀՀ մաքսային ծառայության վիճակագրական ցուցանիշների համաձայն՝ 2013 թ. ՀՀ է ներմուծվել 5453,3 տ (13891,8 հազար դոլար արժեքով) խոշոր եղջերավոր անասունի միս (սառեցված) և խոզի միս՝ 8136,4 տ (20594,4 հազար դոլար արժեքով) [42]: Ներմուծման նշված ցուցանիշները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել են համապատասխանաբար 34,6%-ով և 1,5%-ով: Այսպիսով՝ 2013 թ. առաջին կիսամյակում խոշոր եղջերավոր անասունների մսի ներմուծման ծավալը կազմել է ընդհանուր մսի արտադրության

ծավալի 12%-ը, իսկ խոզի մսինը՝ 18%-ը: Տավարի մսի ներմուծման ծավալները վկայում են անասնապահության մեջ առկա լուրջ խնդիրների մասին՝ սահմանափակ արոտավայրեր, գյուղացիների համար անասնակերի բարձր գին, հիվանդության պատճառով կենդանիների կորուստ: Սակայն տավարաբուծության բարելավման համար այլ երկրներից կովերի ներմուծումը պահանջում է հատուկ պայմաններ, որոնք մեր գյուղացիները ֆինանսական ռեսուրսների սղության հետևանքով չեն կարող թույլ տալ իրականանացնել: Այնպես որ, մոտ ապագայում տեղական ռեսուրսների վրա հույս դնելու անհրաժեշտություն չի լինի, և շուկայում մսի պակասը շարունակելու է համալրվել ներմուծմամբ:

Հետևաբար այս ոլորտում խնդիրներից մեկը սպառողներին տեղեկացնելն է՝ ինչ որակի միս են առաջարկում՝ փաստացի մսի, երշիկի, ապխտած մսի և այլ մսամթերքի տեսքով [49]:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2013 թ. սեպտեմբերի 5-ին հրապարակած տվյալների համաձայն («Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO)») պարենի գների ինդեքսը 2013 թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 5,1%-ով: Սա նշանակում է՝ անցած տարվա օգոստոսի համեմատ աշխարհում պարենային մթերքները էժանացել են ավելի քան 5%-ով: Միևնույն ժամանակ ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն՝ 2013 թ. օգոստոսին 2012 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ պարենամթերքը թանկացել է ավելի քան 10%-ով: Եվ դա այն դեպքում, երբ դրամի արժեզրկում 2013 թ. օգոստոսին 2012 թ. օգոստոսի նկատմամբ տեղի չի ունեցել: Այս ամենից կարելի է եզրակացնել, որ պարենամթերքը իրականում թանկացել է ոչ թե 10%-ով, այլ 15%-ով, ինչը պայմանավորված է մենաշնորհի առկայությամբ [70]:

Կատարված վերլուծությունից հետևում է, որ բնակչության սպառման կառուցվածքում ամենամեծ բաժին ունեցող պարենամթերքի շուկաները մենաշնորհված են, (աղյուսակ 6.44), որ ՀՀ պարենի ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ապրանքային շուկաների ընդհանուր թվի 38,6%-ում գործում է 1 տնտեսվարող սուբյեկտ, 31,6%-ում՝ 2, 26,3%-ում՝ 3 և միայն 3,5%-ում՝ 4, ինչի հետևանքով պարենամթերք ներմուծող տնտեսվարող սուբյեկտները ստանում են գերշահույթներ, ինչի հետևանքով ՀՀ սպառողները դրանք ձեռք են բերում բարձր գներով: Ուստի անհրաժեշտ է այդ շուկաների պետական կարգավորման լծակների ուժեղացում և դրանց կիրառում: Ընդհանրապես, ներմուծման ծավալների կրճատման մայրուղին սեփական (հայրենական) արտադրության զարգացումն է և դրա հաշվին՝ ներմուծման փոխարինումը հայրենական արտադրանքով: Գոնե հավի մսի ներմուծման բարձր ծավալների պարագայում ասվածը ակնհայտ է:

Կարգավորման հաջորդ ուղին տնտեսական մրցակցության պաշտպանության ուժեղացումն է և գործող օրենքով նախատեսված միջոցների ու լծակների կիրառումը: Երրորդ ուղին ներքին շուկայի պաշտպանությունն է, որը գործող օրենքի և արդեն ընդունված մյուս իրավական ակտերի առկայության պայմաններում ավելի մեծ դեր ու կարևորություն պետք է ունենա: Դա մեզանում կիրառվում է ավելի հաճախ ընտրանքային ձևով, թեև մրցակցության պաշտպանությունն ունի լայն հնարավորություններ և գործիքներ, որոնք լայնորեն տարածված են ու կիրառվում են աշխարհի բազմաթիվ երկրներում:

Համաշխարհային բանկի մասնագետների կողմից նույնպես կարևորվել է մրցակցության խթանումը հայկական շուկաներում: Նրանց կարծիքով՝ Հայաստանի փոքր շուկայի համար, որտեղ կան առևտրային խոչընդոտներ, տնտեսության դինամիզմի առումով որոշիչ դեր է խաղում ներքին մրցակցության բարձրացումը մասնավորապես մանրածախ առևտրի ոլորտում: Առաջարկվող ոլորտային օրենսդրական կարգավորումն օրենսդրական սահմանափակումներ է ստեղծում մանրածախ բիզնեսի զարգացման համար (որոնք կկիրառվեն խոշոր առևտրային օբյեկտների նկատմամբ): Մասնավորապես՝ մանրածախ ընկերությունների հետագա ընդլայնման հնարավորությունները կսահմանափակվեն տեղական մարմիններից հատուկ թույլտվություն ստանալու և խոշոր առևտրային օբյեկտների նկատմամբ տարածքային սահմանափակումներ կիրառելու պատճառով:

2010 թ. անցկացված պարենային ապրանքների շուկաների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանում գները զգալիորեն ավելի բարձր են, քան համեմատելի երկրներում: Միջին հաշվով Հայաստանում գները 17%-ով ավելի բարձր են, քան ԱՊՀ մյուս երկրներում: Գնային տարբերությունը կախված է ապրանքատեսակից, ընդ որում՝ որոշ ապրանքների գներն ավելի բարձր են, իսկ մյուսներինը՝ համեմատաբար ավելի ցածր: Վերլուծության ժամանակ հաշվի է առնվում մեկ շնչի հաշվարկով ՀՆԱ-ի, ներմուծման ծախսերի, ապրանքատեսակի, հարկերի և ժամանակի հետ կապված ծախսերի տարբերությունը (աղյուսակ 6.45):

Շուկայի կառուցվածքը գների մակարդակի և մրցակցության որոշման համար միակ միջոցը չէ: Պարենային ապրանքների տարբեր շուկաների կառուցվածքը սովորաբար տատանվում է, և կարող են գործել մեծ թվով ընկերություններից մինչև ընդամենը մեկ մասնակից: Օրինակ՝ սսամթերքի և կաթնամթերքի ոլորտներում կան մոտավորապես նույն չափի բազմաթիվ մրցակիցներ, մինչդեռ շաքարավազի և այլուրի շուկաներում գործում են համապատասխանաբար մեկ և երկու կարևոր ընկերություններ: Դա վկայում է, որ մրցակցության արդյունավետությունը կախված է այլ գործոններից, այդ թվում՝ արտադրական գործընթացի տնտեսական բնութագրերից, մատակարարման շղթայի աշխատանքից և ընկերությունների կողմից կիրառվող ռազմավարությունից: Միաժամանակ, գներից բացի, ընկերությունները որոշումներ են կայացնում նաև այլ փոփոխականների վերաբերյալ: Ապրանքատեսակը գնի, որակի, ոչ նյութական արժեքի, հաճախորդների սպասարկման և այլ հատկանիշների միասնական շղթա է, որն ընկերությունները կիրառում են շուկայում հաջողությամբ մրցելու համար: Սակայն գնային քաղաքականությունն ու դրանց մակարդակը միշտ չէ, որ ձգարիտ է արտացոլում մրցակցության թեժությունը, հետևաբար անհրաժեշտ է հաշվի առնել նաև ընկերությունների շուկայական վարքագիծը (տես գծանկար 6.21):

Պատշաճ իրականացվող տնտեսական մրցակցության քաղաքականությունը միտված պետք է լինի մրցակցային գործընթացին և միջոցների արդար բաշխմանը սպառնացող խնդիրների վերացմանը, անկախ ընկերությունների մեծությունից: Սեփականության կենտրոնացումն ինքնին միշտ չէ, որ հակամր-

ցակցային է, իսկ տնտեսական մրցակցության քաղաքականության իրականացումը կարևորվում է այն դեպքում, երբ տվյալ ընկերությունը, որն ունի զգալի շուկայական ազդեցություն (ինչը նշանակում է գները ինքնարժեքային շեմից բարձր մակարդակի վրա սահմանելու կարողություն), դրսևորում է այնպիսի գործելակերպ, որը խարխլում է հավասար մրցակցային դաշտ և կարող է հանգեցնել բացասական հետևանքների: Տնտեսական մրցակցության քաղաքականությունը պետք է հաշվի առնի շուկայի տեխնոլոգիական առանձնահատկությունները, քանի որ որոշ դեպքերում, ելնելով ցանցի արտաքին կապի հնարավորություններից, սպառողները կարող են նախընտրել փոքրաթիվ ընկերությունների մասնակցությամբ համակենտրոնացված շուկաները: Օրինակ՝ հաղորդակցման և ենթակառուցվածքային ծառայությունների շուկաներին, այդ թվում՝ հեռախոսակապի և երկաթուղային տրանսպորտի ոլորտներում գործող ընկերություններին բնորոշ են արտաքին կապի լայն հնարավորություններ:

**Հայաստանի Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (ՏՄՊՊՀ) կանգնած է մի շարք ինստիտուցիոնալ մարտահրավերների առջև:** ՏՄՊՊՀ-ն պատասխանատու է տնտեսական մրցակցության կանոնների կիրառման, հակամրցակցային քաղաքականության կանխարգելման համար պետք է գործի այնպես, որ ընկերություններին տրամադրվող պետական օժանդակությունը չվնասի մրցակցությանը, տնտեսական մրցակցության ընդհանուր սկզբունքների և դրանցից բխող սպասվելիք եկամտունների վերաբերյալ հանրությունն ունենա հստակ պատկերացումներ և վերահսկի այդ կանոնների կիրառումը: Այդուհանդերձ, իրավական դաշտի որոշ առանձնահատկություններ սահմանափակում են ՏՄՊՊՀ-ի գործառնությունների կիրառման արդյունավետությունը, մասնավորապես՝ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող ընկերությունների բացահայտման, պատժամիջոցների, տնտեսական միավորումների և համակենտրոնացումների որոշման հարցերում:

**Տնտեսության ոլորտներում մրցակցության խթանմանն ուղղված արդյունավետ մրցակցային քաղաքականության ապահովումը տնտեսության արդյունավետությունն է ապես բարձրացնելու կարևոր պայմաններից է:** Չափազանց կարևոր է շուկա մուտք գործելու և մրցակցելու հարցերում խոչընդոտների վերացումը: Շուկա մուտք գործելու խոչընդոտների վերացումը և մրցակցության սկզբունքների հաստատումը պետք է դառնա կառավարության ընդհանուր քաղաքականության անկյունաքարը: Ապրանքաշուկաների գործունեությունը կարգավորող իրավական դաշտի ազատականացմանն ուղղված միջոցառումներին զուգահեռ պետք է իրականացնել հակամենաշնորհային քաղաքականության և պետական օժանդակության շրջանակների բարելավում:

**2010 թ. ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում սահմանված են տնտեսական խմբերի գործունեությունը կարգավորող կարևոր դրույթներ, սակայն առանցքային ոլորտներում դեռևս անհրաժեշտ են պարզաբանումներ:** Հարկավոր է նաև ընդունել մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնցով կկարգավորվեն հետևյալ խնդիրները.

- Տնտեսական խմբերի գործունեության կարգավորում, փոխկապակցված

սեփականատերերի կողմից իրականացվող ընկերությունների ուղղակի և անուղղակի վերահսկման գնահատում ու «տնտեսվարող սուբյեկտ» հասկացության սահմանում:

- Տնտեսական անկախության գաղափարի իրագործում, որը նշանակում է, որ տնտեսվարող սուբյեկտն իրավասու և ի զորու է վարելու ինքնուրույն մրցակցային ռազմավարություն՝ չենթարկվելով որևէ այլ տնտեսվարող սուբյեկտի միջամտությանը կամ ազդեցությանը:
- Վերահսկման գաղափարի հստակեցում: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում անձանց խմբի սահմանումից բացահայտ չի բխում, որ նման խումբը որոշվում է վերահսկում իրականացնել գաղափարի հիման վրա:
- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում «տնտեսվարող սուբյեկտ» հասկացության սահմանման համար ՏՄՊՊՀ-ն պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու իր կողմից ուսումնասիրվող ընկերությունների սեփականատերերի մասին տեղեկատվությանը: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի ապահովել տեղեկատվության փոխանակում պետական և վարկային ռեգիստրների և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ: Ցանկալի կլինի ստորագրել փոխըմբռնման հուշագիր, որում կսահմանվեն գործընկեր կառույցների տրամադրության տակ գտնվող տեղեկատվությունից օգտվելու գործընթացը կարգավորող ընթացակարգերը:
- Միաձուլումների վերահսկողությունը բարելավելու նպատակով անհրաժեշտ է պարզեցնել և վերանայել դրանց վերաբերյալ ծանուցման ընթացակարգերը, ինչպես նաև ներկա չափանիշները:
- ՏՄՊՊՀ-ի տույժերի և տուգանքների ու քննչական իրավասությունների ներկա կառուցվածքը չափազանց սահմանափակ է, որպեսզի դրա միջոցով հնարավոր լինի կանխարգելել հակամրցակցային գործելակերպը: Ներկայումս քայլեր են արվում ենթաօրենսդրական ակտերում տույժերի հաշվարկման մեթոդների սահմանման ուղղությամբ [36]:
- Տնտեսական մրցակցության քաղաքականության շրջանակում գների նկատմամբ մոնիթորինգ իրականացնելիս ՏՄՊՊՀ-ն ուշադրությունը պետք է սևեռի համապատասխան շուկայում տնտեսական մրցակցության ապահովման վրա:
- ՏՄՊՊՀ-ն ոլորտը կարգավորող և այլ պետական մարմիններից անկախ քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ լիազորությունների ամրագրում:

**Ոլորտային ուսումնասիրություն. պարենային ապրանքների գները:** Համաշխարային բանկի մասնագետները ներկայացրել են Հայաստանում և տարածաշրջանի այլ երկրներում գների մակարդակի պարբերական դիտարկման արդյունքները: Պարենային մթերքների բնագավառում վերլուծության իրականացումը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով. 1. բարձր գների վերաբերյալ բողոքները հիմնականում վերաբերում են պարենային ապրանքներ-

րին, 2. դրանց տեսակարար կշիռը միջին սպառողի զամբյուղում մեծ է՝ կազմելով գրեթե նրա կեսը, 3. պատրաստի սննդամթերքի արտադրությունը կարևոր տեղ է զբաղեցնում Հայաստանի տնտեսությունում՝ կազմելով արդյունաբերական արտադրանքի գրեթե մեկ երրորդը, իսկ սննդամթերքի մանրածախ վաճառքը կազմում է ընդհանուր մանրածախ վաճառքի 60%-ը:

Դիտարկման արդյունքների հիմնական եզրահանգումներն են.

1. Էկոնոմետրիկ վերլուծության միջոցով գնահատվում է, թե արդյոք պարենային մթերքների գները Հայաստանում ավելի բարձր են, քան համեմատելի երկրներում, և եթե այո, ապա որոնք են դրա հետևանքները սպառողների բարեկեցության տեսանկյունից: Վերլուծության ժամանակ հաշվի է առնվում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի, ներկրման ծախսերի, ապրանքատեսակի և ժամանակային գործոնների տարբերությունները: Հարկ է, սակայն, նշել, որ գների համեմատումը կապված է այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են համեմատելի ապրանքատեսակների առանձնացումն ու յուրաքանչյուր երկրի շուկայում ներկայացված ապրանքների բացահայտումը:

2. Այդ իսկ պատճառով ապրանքատեսակների ընտրությունը չափազանց մանրակրկիտ է կատարվել: Պարենային ապրանքատեսակներն ընտրվել են հետևյալ չափանիշների հիման վրա. 1. տեսակարար կշիռը սպառողական զամբյուղում, 2. հանրային մտահոգությունը ապրանքատեսակի բարձր գնի կապակցման համար, 3. տվյալների առկայությունը, 4. տարբեր շուկաների հետ համադրելիությունը, 5. շուկայական պայմանների փոփոխականությունը: Անցկացվել է երկու ուսումնասիրություն՝ տարբեր երկրներում և Հայաստանի տարբեր քաղաքներում գների մակարդակների համադրումը: Երկրների համեմատության մեջ ներառված ապրանքները ներկայացնում են Հայաստանում սպառողական զամբյուղի 16,9%-ը, իսկ Հայաստանի քաղաքների՝ սպառողական զամբյուղի 25,6%-ը:

3. Մի շարք շուկաների առանձին հատվածներում մրցակցության վիճակը մտահոգիչ է: Հայաստանում տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովը անցկացրել է շաքարավազի, ցորենի ալյուրի, արևածաղկի սերմի, բուսական յուղի, ձվի և կաթնամթերքի շուկաների ուսումնասիրություն, որոնցից չորսինը կատարվել է ակնհայտ հակամրցակցային գործելակերպի պատճառով: Բացի այդ՝ մամուլի վերջին հաղորդագրություններում մտահոգություն էր արտահայտվում հացի, ձվի, տավարի մսի և շաքարավազի բարձր գների վերաբերյալ: Ուսումնասիրությունում ընդգրկվել են միայն այն ապրանքատեսակները, որոնց մասին 2005–2010 թթ. ամսական տվյալները առկա են ԱՊՀ բոլոր երկրների կամ Հայաստանի բոլոր խոշոր քաղաքների համար: Վերլուծությունում միջին գները վերաբերում են միևնույն ապրանքատեսակին, որը հնարավորություն է տալիս ուշադրությունը կենտրոնացնելու համեմատաբար միատեսակ ապրանքատեսակների վրա՝ նվազեցնելով գների խտրականությունից և ապրանքատեսակից որակական հատկանիշներից բխող տարբերությունները: Դիտարկվող ապրանքատեսակները վաճառվում են տարբեր կառուցվածք և մրցակցային պայմաններ ունեցող շուկաներում: Օրինակ՝ սնամթերքի ու կաթնամթերքի շուկաներն այնքան կենտրոնացած չեն, որքան շաքարավա-



գինը կամ ցորենինը: Շաքարավազի, ցորենի այլուրի, բրնձի և սուրճի շուկաները կախված են ներկրումից, մինչդեռ ձուն, հացը, կաթնամթերքը հիմնականում արտադրվում են երկրի ներսում (աղյուսակ 6.46):

**4. Ապրանքների ընտրության դեպքում կարևոր է դիտարկել այն երկրները, որոնց գների հետ համեմատությունը իմաստ ունի:** Տարբեր երկրներում գները կարող են տարբերվել զանազան պատճառներով, այդ թվում՝ համապատասխան տարածաշրջանում նույն ապրանքատեսակների նկատմամբ պահանջարկի և առաջարկի տարբերության պատճառով: Հայաստանում գները ցածր կամ բարձր լինելու մասին գնահատականներ տալու համար նպատակահարմար է համեմատություն անցկացնել այնպիսի երկրների հետ, որոնց տնտեսական պայմանները Հայաստանից էապես չեն տարբերվում: Այդ պատճառով համեմատվող երկրների խմբում ներկայացված են ԱՊՀ երկրները: Այդ երկրները միմյանց հետ ունեն աշխարհագրական և ընդհանուր տնտեսական կապեր, ուստի տնտեսական խոչընդոտների բացակայության դեպքում կարելի է ակնկալել, որ գներն այդ երկրներում կլինեն նույն մակարդակի վրա: Սպառողների նախընտրություններն այդ երկրներում նույնպես միմյանցից շատ չեն տարբերվում, ինչն էլ ավելի է նպաստում շուկաներում գործող գների համադրմանը: Վերջապես՝ ԱՊՀ երկրների մասին տվյալները վերցվել են մեկ աղբյուրից (ԱՊՀ վիճակագրական ծառայություն), և դրանք հավաքելիս կիրառում է նույն մեթոդաբանությունը, ինչը նույնպես նպաստում է գների մասին տեղեկատվության համադրմանը:

**5. Կարևոր է, սակայն, նշել, որ այդ երկրներից շատերում բացակայում են կատարյալ շուկայական պայմանները:** Դրանցից մի քանիսը տեղական շուկաներում մրցակցության ինտենսիվության և հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության տեսանկյունից հետնապահների շարքում են, այդ թվում՝ Ադրբեյջանը, Վրաստանը և Տաջիկստանը, որոնց վարկանիշը Հայաստանից մի քիչ է բարձր: Համադրելի երկրներում առկա անբարենպաստ տնտեսական միջավայրը նպաստում է բարձր գներին՝ վկայելով, որ հաշվարկված գների տարբերությունը կարող է իրական տարբերությունից ցածր լինել:

**6. Գյուղատնտեսությունն ու մսնդարդյունաբերությունը կարևոր տեղ են զբաղեցնում Հայաստանի տնտեսությունում, ընդ որում՝ երկրորդը մեծապես կախված է արտաքին առևտրից:** Այդ երկու ոլորտների ընդհանուր կշիռը ՀՆԱ-ում կազմում է 40%: Հայաստանը պարենային մթերքների զուտ ներկրող է, և այն գրեթե 5 անգամ գերազանցում է արտահանումը: Ներկրվող հիմնական պարենային ապրանքները պարենային զամբյուղում ներառված ապրանքատեսակներն են: Մասնավորապես՝ հացամթերքը՝ հացը, այլուրը և մակարոնեղենը կազմում են սպառողական զամբյուղի շուրջ 13%-ը (պարենային մթերքի զամբյուղի շուրջ մեկ երրորդը): Թռչնի միսը կազմում է սպառողական զամբյուղի 1,84%-ը, շաքարավազը՝ 1,44%-ը, իսկ արևածաղկի յուղը՝ 1,25%-ը:

**7. Տարբեր պարենային ապրանքների շուկաների կառուցվածքը նույնպես տարբեր է, որտեղ կարող են գործել զգալի թվով մասնակիցներից մինչև ընդամենը մեկ մասնակից:** Մասնաբերքի և կաթնամթերքի ոլորտները սպասարկվում են համեմատելի չափ ունեցող բազմաթիվ մրցակից ընկերու-

թյունների կողմից, մինչդեռ այսօրի և շաքարավազի շուկաներում համապատասխանաբար գործում են մեկ և երկու կարևոր ընկերություններ:

**8. Ընդհանուր առմամբ համեմատված ապրանքատեսակների գները Հայաստանում ավելի բարձր են, քան այլ ԱՊՀ երկրներում:** Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի, ներկրման ծախսերի, ապրանքատեսակների տարբերությունների և ժամանակի գործոնների ձգարտումից հետո պարզվում է, որ Հայաստանում գները միջինը 17%-ով ավելի բարձր են, քան ԱՊՀ այլ երկրներում (աղյուսակ 4.45): Գների տարբերությունը պայմանավորված չէ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և ներկրման պայմանների տարբերությամբ:

**9. Գների տարբերությունը պայմանավորված է ապրանքատեսակով, ընդ որում՝ որոշ ապրանքատեսակների հարաբերական գներն ավելի բարձր են, իսկ մյուսներինը՝ ավելի ցածր:** Արևածաղկի յուղի, տավարի մսի և մակարոնեղենի գները Հայաստանում չեն տարբերվում ԱՊՀ այլ երկրների գներից:

**10. Մի շարք գործոնների, այդ թվում՝ շուկայի պահանջարկի, միջազգային շուկաների հասանելիության և հարկային բեռի ձգարտումից հետո համեմատության արդյունքները չեն փոխվում:** Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն արտացոլում է յուրաքանչյուր երկրում սպառողների գնողունակությունը: Բնակչության թվով կամ ՀՆԱ-ով շուկայի մեծության ձգարտումը չի փոխում այն եզրակացությունը, որ Հայաստանում գներն ավելի բարձր են, քան ԱՊՀ այլ երկրներում: Հաշվի առնելով Հայաստանի ծովային սահմաններ չունենալը և հիմնական ջրային ուղիներից հեռավորությունը՝ որպես կարևոր գործոն կիրառվել է բեռնարկղերով (կոնտեյներներով) բեռների ներկրման գինը: Հաշվի են առնվել նաև աշխարհագրական փոփոխականները, այդ թվում՝ հեռավորությունը ծովից և այլ հիմնական ջրային ավազաններից: Հարկերի դրույքաչափերի տարբերությունները նույնպես կարող են ազդեցություն ունենալ գների մակարդակի վրա՝ ավելացնելով գործառնական ծախսերը, այդ իսկ պատճառով ընկերությունների ընդհանուր հարկային բեռի գնահատման համար կիրառվել են տարբեր հարկային մոտարկումներ:

**11. Գների տարբերությունը պայմանավորված չէ հարկային բեռով:** Պարենային ապրանքներից գանձվող հարկերը Հայաստանում ավելի ցածր են, քան ԱՊՀ այլ երկրներում: Բացի այդ՝ քանի որ որոշ երկրների պարենային ապրանքների ոլորտներում գործում են հաստատագրված վճարներ, ուստի ընդհանուր հարկային դրույքաչափերի կիրառումը վերլուծության նպատակով նպատակահարմար չէ: Հարկային բեռը տարբեր է յուրաքանչյուր պարենային ապրանքի համար և ենթակա է հարկերից ազատման տարբեր ձևեր Հայաստանում, Միլդոլայում, Բելառուսում և Ռուսաստանում: Մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, Վրաստանում և Ռուսաստանում, գործում են ԱԱՀ-ի շեմեր: Հարկային ցուցանիշները, որոնցով կարելի է դատել տնտեսության հարկման ընդհանուր մակարդակի մասին (ինչպիսիք են Doing Business-ի ընդհանուր հարկային դրույքաչափի կամ ՀՆԱ-ում ընդհանուր հարկային դրույքաչափի և

հարկային եկամտի կազմով ու տեսակարար կշռի ցուցանիշները), վիճակագրական տեսանկյունից կարող են բացատրել ԱՊՀ տարբեր երկրների գների տարբերությունները: Սակայն երբ օգտագործվում է ավելի ճշգրտող հարկային ցուցանիշ, օրինակ՝ պարենային ապրանքների ԱԱՀ-ի իջեցված մակարդակը, հարկային բեռը չի պայմանավորում գնային տարբերությունները: ԱԱՀ-ի գործոնով ճշգրտման դեպքում Հայաստանի գները 13-14%-ով ավելի բարձր են, քան ԱՊՀ այլ երկրներում:

**12. Գների վերլուծության արդյունքներից հետևում է, որ միջինից բարձր գների պատճառով սպառողների ընդհանուր եկամտային կորուստը տարեկան կազմում է շուրջ 290 միլիոն դոլար:** Նույնիսկ ենթադրելով, որ գների նվազեցման դեպքում սպառողները չեն ավելացնի պահանջարկը պարենային մթերքների նկատմամբ, նրանց տարեկան եկամտային կորուստը մեկ շնչի հաշվով կազմում է 87,7 դոլար, որը կազմում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի շուրջ 2,3%-ը և մեկ շնչին ընկնող սպառման 4,2%-ը: Միաժամանակ, գներից բացի, ընկերությունները որոշումներ են կայացնում նաև այլ փոփոխականների վերաբերյալ: Ապրանքատեսակը գնի, որակի, ոչ նյութական արժեքի, հաճախորդների սպասարկման և այլ հատկանիշների համակցություն է, որոնց շուրջ ընկերություններն ընտրություն են կատարում շուկայում հաջողությամբ մրցակցելու համար: Այն դեպքերում, երբ շուկան սահմանափակում է ընկերության՝ ձկուն գներ սահմանելու հնարավորությունները, վերջինս կարող է մրցակցել ոչ գնային փոփոխականների կարգավորման շնորհիվ: Մի ընկերություն կարող է ավելացնել իր գովազդային ծախսերը, որը հնարավորություն կտա բարձրացնելու ընկերության հեղինակությունը և նպաստելու շուկայում վաճառքի ավելացմանը, իսկ մյուսը կարող է նույն նպատակով առաջարկել ավելի որակյալ հետվաճառքային սպասարկում, մինչդեռ մեկ այլ ընկերություն կարող է բարելավել առաջարկվող ապրանքային փաթեթը (արտաքին տեսքի, փաթեթավորման բարելավման կամ հատուկ առաջարկների շնորհիվ): Հետևաբար, գների մակարդակն ու վարքագիծը միշտ չէ, որ արտացոլում են մրցակցության սրությունը, և կարիք է առաջանում անդրադառնալու շուկայավարման վարքագծին: Այս եզրահանգումը հատկապես կարևորվում է՝ հաշվի առնելով ՏՄՊՀ-ի կողմից իրականացվող տնտեսական վերլուծությունը և ընկերությունների կողմից վարվող հակամրցակցային քաղաքականության ու կառավարության միջամտությունների բացասական հետևանքների փոխարեն ուշադրության սևեռումը գների մակարդակի վրա:

**Աղյուսակ 6.36. Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2012 թ. և 2013 թ. IV եռամսյակների միջին ընթացիկ գներով**

**(հաշվարկված է ՀՀ ԱՎԾ կողմից՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի)**

	Պարենամթերքի անվանումը	Օրական սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ	Տարեկան սպառման նորման 1 շնչի հաշվով, կգ	Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ	Միավորի գինը, դրամ		Տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	
					2012	2013	2012	2013
1	Հացամթերք	0,355	-	992,2	-	-	71 892,9	73 241,0
	<i>այդ թվում՝</i>							
1.1	հաց	0,25	91,3	622,5	483,7	492,2	44 161,8	44 937,9
1.2	ալյուր	0,02	7,3	70,6	365,8	376	2 670,3	2 744,8
1.3	մակարոնեղեն	0,015	5,5	55,0	503,5	524,9	2 769,3	2 887,0
1.4	ծավարեղեն (բրինձ)	0,05	18,3	175,5	763,6	774,9	13 973,9	14 180,7
1.5	ընդեղեն (լոբեղեն)	0,02	7,3	68,6	1 139,4	1 163,1	8 317,6	8 490,6
2	Մսամթերք (տավարի միս)	0,1	36,5	203,0	2 474,3	2 554,3	90 312,0	93 232,0
3	Կաթնամթերք	-	-	339,7	-	-	71 357,4	83 059,0
	<i>այդ թվում՝</i>							
3.1	կաթ, լիտր	0,2	73,0	122,0	344,8	411,7	25 170,4	30 054,1
3.2	կաթնաշոռ	0,01	3,7	7,5	1762	2 110,3	6 519,4	7 808,1
3.3	կենդանական յուղ	0,02	7,3	143,4	3 363,6	3 920,2	24 554,3	28 617,5
3.4	պանիր	0,025	9,1	66,8	1 660,8	1 821,9	15 113,3	16 579,3
4	Կարտոֆիլ	0,25	91,3	167,5	142	165,5	12 964,6	15 110,2
5	Բանջարեղեն (կաղամբ, գլուխ սոխ )	0,3	109,5	87,0	206,2	208,4	22 578,9	22 819,8
6	Միրգ (խնձոր)	0,2	73,0	96,0	424,7	500,9	31 003,1	36 565,7
7	Շաքար	0,05	18,3	193,5	442,4	373,4	8 095,9	6 833,2
8	Չու, հատ	0,5	182,5	40,0	57,8	74,8	10 548,5	13 651,0
9	Բուսական յուղ	0,02	7,3	176,8	891,5	860,9	6 508,0	6 284,6
10	Մարգարին	0,01	3,7	72,0	1 202,4	1 218,5	4 448,9	4 508,5
11	Չուկ	0,03	11,0	44,4	2 099,5	2 346,6	23 094,5	25 812,6
	<b>Ընդամենը</b>			<b>2 412,1 կկալ</b>			<b>352 804,7</b>	<b>381 117,6</b>
<b>Պարենային զամբյուղի արժեքը</b>			<b>2012</b>		<b>2013</b>			
տարեկան կտրվածքով			352 804,7 դրամ		381 117,6 դրամ			
ամսական կտրվածքով			29 400,4 դրամ		31 759,8 դրամ			
<b>Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը</b>								
տարեկան կտրվածքով			624 464,3 դրամ (գործակից 1,77)		674 578,2 դրամ (գործակից 1,77)			
ամսական կտրվածքով			52 038,7 դրամ		56 214,9 դրամ			

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը 2012 թ. և 2013 թ. հունվար-դեկտեմբերին, եր., ՀՀ ԱՎԾ, 2013, 2014, էջ 250, 254:

**Աղյուսակ 6.37.** Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2012 թ. և 2013 թ. IV եռամսյակների միջին ընթացիկ գներով (հաշվարկված է Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ)

	Պարենամթերքի անվանումը	Օրական փաստացի սպառումը 1 շնչի հաշվով, գրամ	Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ		Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ	
1	Հացամթերք	461,1	1 355,0	7 228,2	7 397,9	8 049,2	8 238,2
2	Մսամթերք	48,3	87,6	2 633,8	2 767,3	2 933,0	3 081,7
3	Զկնամթերք	2,5	2,4	612,5	608,9	682,1	678,0
4	Կաթնամթերք	-	144,3	2 665,5	2 959,7	2 968,3	3 295,9
5	Չու	18,6	27,2	645,4	834,7	718,7	929,5
6	Յուղ և ճարպ	30,5	229,9	1 198,9	1 748,4	1 335,1	1 947,0
7	Միրգ	113,9	47,7	1 396,6	1 223,6	1 555,2	1 362,6
8	Բանջարեղեն	203,7	76,0	3 848,3	3 992,1	4 285,4	4 445,5
9	Կարտոֆիլ	145,6	109,2	619,9	722,6	690,3	804,6
10	Շաքար	24,4	94,4	324,5	273,9	361,3	305,0
11	Ոչ ալկոհոլային խմիչքներ	4,2	1,1	22,8	26,0	25,4	29,0
12	Այլ սննդամթերք	35,6	57,2	1 598,9	1 708,6	1 780,5	1 902,6
<b>Ընդամենը</b>			<b>2 232,0 կկալ</b>	<b>22 795,3</b>	<b>24 263,7</b>	<b>25 384,5</b>	<b>27019,6</b>
Պարենային զամբյուղի ամսական արժեքը				22 795,3 դրամ	24 263,7 դրամ	25 384,5 դրամ	27019,6 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը				40 347,7 դրամ	42 946,7 դրամ (գործակից 1,77)	44 930,6 դրամ (գործակից 1,77)	47824,7 դրամ (գործակից 1,77)

Աղբյուրը՝ նույն տեղում, էջ 251, 255:

**Աղյուսակ 6.38.** ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 16 ապրանքատեսակների ռեսուրսները 2008–2012 թթ. (տ)

		2008					2009				
		A	B	C	D	E	A	B	C	D	E
1	Տավարի միս	36283	15366,9	396,6	51253,3	1589,9	41147,02	10847,3	164,7	51829,6	1617,9
2	Խոզի միս	11152	7542,5	0,1	18694,4	2542,1	6213	5130,75	0,04	11343,7	2435,3
3	Հավի միս	6519,12	36213,8	0	42732,9	977,23	4911,3	27576,9	0	32488,2	1030,2
4	Չուկ	5701,1	1999,6	72,2	7628,5	2152,7	5858,6	2944,8	19,5	8783,9	2470
5	Կարագ	1245,7	4581,3	24,3	5802,7	2331,9	1007,2	1782,8	0,16	2789,8	2387,9
6	Պանիր	17229,8	760	473,8	17516	1295,1	17459,3	587,5	376,9	17669,9	1301
7	Սուրճ	-	12704,8	5718	6986,6	2496,6	-	11360,1	3334,6	8025,5	2662,3
8	Ցորեն	225734	297735,5	15	523454,2	188,7	198080,3	376825,8	0	574906,1	167,7

9	Հաց	296454	-	-	296454	447,13	297627,4	-	-	297627,4	428,7
10	Բրինձ	-	16074,3	0,8	16073,5	497,8	-	11070,1	0,05	11070,1	603
11	Այլուր	128350	18958	0	147308,1	286,7	130861,2	4157,7	0	135018,9	251,1
12	Ձու, մլն հատ	574,9	1,5	2,6	573,8	558,9	630,1	0,26	4,02	626,3	530,9
13	Բուսական յուղ, տոննա	365,9	22659,3	0,1	23025,1	998,3	954,2	22416,1	2,1	23368,2	749,1
14	Մարգարին	352,6	7196,3	0,4	7548,5	966,8	241,6	13399,7	0	13641,3	985,3
15	Շաքարավազ	3826,5	102263	0,1	106089,4	242,3	870	64824,4	0,05	65694,4	286,8
16	Մակարոնեղեն	2198,8	3499,6	0,2	5698,2	470,4	2433,3	3287,8	8,9	5712,2	438,2

2010							2011				
		A	B	C	D	E	A	B	C	D	E
1	Տավարի միս	39443,02	6078,1	28,2	45492,9	2076,1	37865,6	10115,5	0	47981,1	2507,8
2	Խոզի միս	5567	4608,8	0,1	10175,7	2352,4	5482,6	5081,6	0,006	10564,2	2783,4
3	Հավի միս	5014,7	36034,1	0	41048,8	1086	5637,8	38684,1	0	44321,9	1123,2
4	Ձուկ	5616,9	1900,9	412,7	7105,1	2658,4	7095	2220,8	1295,8	8020	2151,1
5	Կարագ	950,4	3058,5	0,04	4008,9	2705,1	809,9	4540,2	0	5350,1	3267,4
6	Պանիր	17050	725,8	496,4	17279,4	1386,2	17525	1035,3	439,8	18120,5	1783,2
7	Սուրճ	-	12381,9	1774	10607,9	2710,7	-	11841,9	1446,3	10395,6	3043,1
8	Ցորեն	183464	344660,1	0	528124,2	156,6	224081,9	356548,1	22	580608	200,6
9	Հաց	297715	-	-	297715,3	439,63	297854,4	-	-	297854,4	473,2
10	Բրինձ	-	12546,1	13,5	12532,6	647,7	-	10425	0,1	10424,9	651,1
11	Այլուր	155738	782,4	0	156520,1	260,2	156007,4	11769,9	0,1	167777,2	320,4
12	Ձու, մլն հատ	719,2	4,1	2,7	720,6	484,2	633,6	32,9	0	666,5	588
13	Բուսական յուղ	1034,3	23223,8	0,1	24258	787	696,5	23763,1	0,9	24458,7	1408,4
14	Մարգարին	237,4	12868	0	13105,4	959,3	85,9	10433,7	0	10519,6	1025,8
15	Շաքարավազ	32508,4	97752,9	2144	128117,3	343,6	72159,4	91668,4	3434	160393,8	413
16	Մակարոնեղեն	2614,8	3521,5	1,5	6134,8	447,1	3247,9	4129	47,9	7329	506,4

2012						2013					
		A	B	C	D	E	A	B	C	D	E
1	Տավարի միս	42317	8335,4	0	50652,4	2576,6	48 278,0	5 453,3	0,0	53 731,3	2 594,6
2	Խոզի միս	6127	8261,5	0	14388,5	3456,8	9 399,0	8 136,4	0,0	17 535,4	3 112,2
3	Հավի միս	6980,7	33233,7	16,3	40198,1	1191,4	5 882,6	31 375,8	46,5	37 211,9	1 335,8
4	Ձուկ	9231,4	2778,8	1827	10183	2164,4	12 010,6	2 160,4	2 249,2	11 921,8	2 240,8

5	Կարագ	645,5	4907,4	0,1	5552,8	3327,6	517,8	4 749,0	66,3	5 200,5	3 772,1
6	Պանիր	17629	1056,2	903,6	17781,2	1729,2	17 375,4	1 243,7	1 541,1	17 078,0	1 796,9
7	Սուրճ	-	10815,8	1346	9469,7	3067,8	-	12 409,1	1 272,1	11 137,0	3 498,8
8	Ցորեն	243130	480359,2	0,001	723489	187,6	311 557,4	345 571,8	0,0	657 129,2	162,1
9	Հաց	296575	-	-	296575	488,7	292 900,5	-	-	292 900,5	-
10	Բրինձ	-	10413,1	0	10413,1	713,6	-	10 271,5	0,0	10 271,5	767,6
11	Այուր	234856	1289,2	0	236145	334,2	169 424,8	896,6	0,8	170 320,6	382,1
12	Ձու, մլն հատ	658,2	0,428	0,029	658,6	582,9	615,2	21,2	0,0	636,4	698,2
13	Բուսական յուղ	2656,1	26573,1	3	29226,2	1424,9	4 550,3	25 984,2	1,2	30 533,3	1 562,2
14	Մարգարին	-	11513	0,015	11513	1158,4	19,0	12 525,3	21,6	12 522,7	1 217,1
15	Շաքարավազ	69267	82410,3	400	151277	454,3	69 625,0	4 850,2	899,2	73 576,0	400,2
16	Մակարոնեղեն	3393,4	4315,4	153,5	7555,3	519,5	4 111,0	4 825,4	155,6	8 780,8	573,7

A-ն՝ արտադրված, B-ն՝ ներմուծված, C-ն՝ արտահանված, D-ն՝ ընդամենը ռեսուրսներ ( $D=A+B-C$ ) (տ), E-ն՝ 1 կգ մանրածախ միջին գինը (դրամ):

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-փնտեսական վիճակը 2008–2013 թթ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ փարեկան տեղեկագրքեր:

**Աղյուսակ 6.39.** ԼՂՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակա-րար կշիռ ունեցող 16 պարենային սպրանքարեսակների ռեսուրսները 2009–2013 թթ. (տ)

	2009					2010					
	A	B	C	D	E	A	B	C	D	E	
1	Տավարի միս	1646,1	205,4	143,8	1707,7	1467,7	1626	359	219,7	1764,9	1902,8
2	Խոզի միս	220,3	295	80,4	434,9	2793,5	470,2	357,8	0,3	827,7	2627,8
3	Հավի միս	911,6	1212,2	607	1516,8	1100,7	618,9	799,1	287,2	1130,8	1137,1
4	Ձուկ	-	158,9	-	158,9	1731,4	-	234,3	-	234,3	1929,1
5	Կարագ	2,1	251,2	0,4	252,9	2380,0	14,2	249,8	-	264	2982,3
6	Պանիր	41,5	285,1	4	322,6	951,2	50,9	179,6	1,8	228,7	1110,2
7	Սուրճ	-	289	166,9	122,1	2294,4	-	164,5	57,5	107	2423,4
8	Ցորեն	71084,5	1053,7	8784,9	63353,3	154,4	43604	3519,6	4891,4	42232,4	166,0
9	Հաց	12967,8	146,5	-	13114,3	416,5	14291	118	-	14408,5	441,3
10	Բրինձ	-	402,1	-	402,1	564,3	-	570,4	-	570,4	585,7
11	Այուր	10117,7	1300,8	520,3	10898,2	210,8	7626	3249,8	40,4	10835,4	220,9
12	Ձու, մլն հատ	19,6	5,7	0,04	25,3	546,8	22,7	5,2	-	27,9	546,9

13	Բուսական յուղ, տ	-	831,4	-	831,4	693,1	-	994,4	-	994,4	719,5
14	Մարգարին	-	152,1	-	152,1	1100,7	-	225,8	-	225,8	1091,5
15	Շաքարավազ	-	4068,4	-	4068,4	304,3	-	3060,3	-	3060,3	362,6
16	Մակարոնեղեն	144,8	797,9	176,7	766	414,3	175,9	848,3	157,7	866,5	410,9

		2011					2012				
		A	B	C	D	E	A	B	C	D	E
1	Տավարի միս	1532,7	621,1	175,8	1978	2272,8	1493,8	680,4	158	2016,2	2504,7
2	Խոզի միս	505,3	161,9	1,5	665,7	2912,6	518,5	299,2	2,9	814,8	3625,7
3	Հավի միս	460,7	1098,8	124,8	1435	1202,7	1270,1	966,8	253,3	1983,6	1245,4
4	Չուկ	-	251,3	-	251,3	1977,9	3,7	302	-	305,7	2159
5	Կարագ	14,9	221,8	-	236,7	3432,1	22,9	232	-	254,9	3774,8
6	Պանիր	68,8	248,2	13,3	303,7	1516,2	156,9	263,3	4,3	415,9	1438,3
7	Սուրճ	-	124,3	0,2	124,1	2837,8	-	159,3	-	159,3	3134,2
8	Ցորեն	75625	991	9405,8	67211	226,9	58670,3	366,7	12207	46830	234,8
9	Հաց	16259	120,6	-	16379	484,5	17714,3	53,1	-	17767	479,9
10	Բրինձ	-	414,1	-	414,1	589,3	-	481,3	-	481,3	585,9
11	Այլուր	9396	3939,7	19	13317	267,8	9145,8	3253,3	35,5	12364	265,5
12	Չու, մլխ հատ	22,9	7	0,1	29,8	652,8	25,9	6,2	1,6	30,5	598
13	Բուսական յուղ, տ	-	935,4	-	935,4	890,2	124,5	965	7,9	1081,6	877,1
14	Մարգարին	-	132,2	-	132,2	1103,3	-	102,6	-	102,6	1232,9
15	Շաքարավազ	-	3144,8	-	3145	440,7	-	3194,4	-	3194,4	491
16	Մակարոնեղեն	317,9	840	191,1	966,8	430,9	176,2	850	118,2	908	420,9

		2013				
		A	B	C	D	E
1	Տավարի միս	3330,5	231,9	179	3383,4	2466,4
2	Խոզի միս	1185,6	265,8	5,8	1445,6	3229,2
3	Հավի միս	1164,4	899,5	31,4	2032,5	1351,3
4	Չուկ	-	321,9	-	321,9	2189,4
5	Կարագ	27,6	245,7	0,3	273	3910,7
6	Պանիր	178	198,3	41,2	335,1	1480,7
7	Սուրճ	-	138,1	-	138,1	3182,6
8	Ցորեն	46762,6	2168,3	3892,9	45038	153,15



9	Հաց	18618,8	186,3	-	18805,1	
10	Բրինձ	-	405,4	-	405,4	578,6
11	Այլուր	10311,6	3296,4	50,6	13557,4	323
12	Ձու, մլն հատ	29,6	7,5	0,4	36,7	703,4
13	Բուսական յուղ, տոննա	91,5	1033	123,9	1000,6	924,4
14	Մարգարին	-	59,2	-	59,2	1325
15	Շաքարավազ	-	1644,7	-	1644,7	428,1
16	Մակարոնեղեն	129,8	577,4	54,1	653,1	490,8

A-ն՝ արտադրված, B-ն՝ ներմուծված, C-ն՝ արտահանված, D-ն՝ ընդամենը ռեսուրսներ, E-ն՝ մանրածախ միջին գինը դրամ:

Աղբյուրը՝ ԼՂՀ ԱՎԾ, [www.stat.nkr.am](http://www.stat.nkr.am) պաշտոնական կայքէջ:

**Աղյուսակ 6.40.** ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 13 ապրանքատեսակների ռեսուրսների արտահանման և ներմուծման քանակները, արժեքները և 1 կգ արժեքները 2008–2013 թթ.

2008									
Հ/հ	Ապրանքատեսակները	Արտահանում		1 կգ արժեքը		Ներմուծում		1 կգ արժեքը	
		քանակը, տ	գումարը, հազ. դոլար	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	քանակը, տ	գումարը, հազ. դոլար	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ
1	Տավարի միս	396,60	755,60	1,91	582,93	15366,90	21595,30	1,41	510,52
2	Խոզի միս	0,10	0,90	9,00	2753,73	7542,50	20733,40	2,75	998,61
3	Թռչնի միս	0,00	0,00	-	-	38284,70	40440,10	1,06	383,73
4	Կարագ	24,30	57,50	2,37	724,00	4581,30	13539,30	2,96	1073,62
5	Պանիր	473,80	1421,10	3,00	917,72	760,00	4351,40	5,73	2079,97
6	Սուրճ	5700,70	15219,7	2,67	816,88	11984,90	30313,10	2,53	918,83
7	Ցորեն	15,00	3,00	0,20	61,19	297735,50	88653,80	0,30	108,17
8	Բրինձ	0,80	0,30	0,38	114,74	16074,30	9519,50	0,59	215,14
9	Այլուր	0	0	-	-	20407,7	10665,8	0,52	189,86
10	Արևածաղկի յուղ	0,00	0,00	-	-	18675,60	24048,80	1,29	467,80
11	Մարգարին	0,00	0,00	-	-	7196,20	10512,50	1,46	530,69
12	Շաքար	0,10	0,10	1,00	305,97	102262,90	31197,30	0,31	110,83
13	Մակարոնեղեն	0,20	0,10	0,50	152,99	3499,30	4134,10	1,18	429,18

2009									
1	Տավարի միս	164,70	333,10	2,02	734,72	10822,20	18452,90	1,71	637,13
2	Խոզի միս	0,00	0,30	-	-	5130,70	12799,60	2,49	932,17
3	Թռչնի միս	0,00	0,00	-	-	28144,60	31566,70	1,12	419,09
4	Կարագ	0,20	1,40	7,00	2542,96	1782,80	5602,90	3,14	1174,32

5	Պանիր	336,90	1113,00	3,30	1200,15	569,00	3186,20	5,60	2092,36
6	Սուրճ	3334,60	9547,00	2,86	1040,08	10697,70	24039,80	2,25	839,69
7	Ցորեն	0,00	0,00	-	-	374899,80	94183,10	0,25	93,87
8	Բրինձ	0,10	0,10	1,00	363,28	11070,80	6574,30	0,59	221,89
9	Այլուր	0	0	-	-	4157,6	1753,9	0,42	157,63
10	Արևածաղկի յուղ	0,30	0,90	3,00	1089,84	19807,50	20565,00	1,04	387,95
11	Մարգարին	0,00	0,00	-	-	13399,70	16985,80	1,27	473,66
12	Շաքար	0,10	0,00	0,00	0,00	64822,40	21112,10	0,33	121,70
13	Մակարոնեղեն	8,90	15,50	1,74	632,68	3286,20	3405,30	1,04	387,20

2010									
1	Տավարի միս	28,20	42,30	1,50	560,49	6075,30	13613,00	2,24	837,00
2	Խոզի միս	0,10	0,60	6,00	2241,96	4608,80	10996,80	2,39	893,05
3	Թռչնի միս	0,00	0,00	-	-	36434,20	39914,50	1,10	411,03
4	Կարագ	0,00	0,30	-	-	3058,50	9304,60	3,04	1135,93
5	Պանիր	496,40	1688,30	3,40	1270,85	725,70	3836,00	5,29	1976,66
6	Սուրճ	1761,90	5648,00	3,21	1197,82	11670,20	25723,30	2,20	822,05
7	Ցորեն	0,00	0,00	-	-	344660,40	87876,20	0,25	93,42
8	Բրինձ	13,50	7,00	0,52	193,75	12546,10	7155,90	0,57	212,99
9	Այլուր	0	0	-	-	782,4	317,7	0,41	153,20
10	Արևածաղկի յուղ	0,00	0,00	-	-	19505,40	19878,20	1,02	381,13
11	Մարգարին	0,00	0,00	-	-	12325,40	16861,80	1,37	511,91
12	Շաքար	2144,00	1474,90	0,69	257,05	97752,10	30811,60	0,32	119,57
13	Մակարոնեղեն	1,50	3,00	2,00	747,32	3521,20	3305,10	0,94	351,24

2011									
1	Տավարի միս	-	-	-	-	10115,50	23823,60	2,36	879,10
2	Խոզի միս	0,00	0,00	-	-	5081,60	12723,00	2,50	931,25
3	Թռչնի միս	-	-	-	-	38971,00	47003,30	1,21	450,73
4	Կարագ	-	-	-	-	4540,20	14444,20	3,18	1184,55
5	Պանիր	438,90	1850,10	4,22	1570,20	1019,20	5594,00	5,49	2045,03
6	Սուրճ	1437,70	5329,60	3,71	1380,87	11010,60	27586,10	2,51	934,98
7	Ցորեն	22,00	4,40	0,20	74,50	356038,30	90407,50	0,25	93,13
8	Բրինձ	0,10	0,30	3,00	1117,50	10424,90	6454,20	0,62	230,95
9	Այլուր	-	-	-	-	200,5	94,8	0,47	175,08
10	Արևածաղկի յուղ	0,40	0,70	1,75	651,88	20988,00	26137,40	1,25	465,63
11	Մարգարին	-	-	-	-	10412,70	17557,40	1,69	629,53
12	Շաքար	3434,00	2739,30	0,80	297,14	91668,40	53799,20	0,59	219,78
13	Մակարոնեղեն	47,90	51,90	1,08	403,61	4129,00	4360,30	1,06	394,85


2012									
1	Տավարի միս	-	-	-	-	8335,40	20347,30	2,44	966,70
2	Խոզի միս	-	-	-	-	8261,50	19999,70	2,42	1024,05
3	Թռչնի միս	16,30	45,70	2,80	1126,41	33634,70	41935,00	1,25	495,64
4	Կարագ	0,10	0,30	3,00	1205,28	4907,40	21403,70	4,36	1302,59
5	Պանիր	902,20	2334,50	2,59	1039,58	1056,10	5433,10	5,14	2248,81
6	Սուրճ	1346,10	5522,00	4,10	1648,11	10618,60	26336,20	2,48	1028,15
7	Ցորեն	0,00	0,00	-	-	477680,70	131112,70	0,27	102,41
8	Բրինձ	-	-	-	-	10412,90	6572,30	0,63	253,96
9	Այուր	-	-	-	-	1285,8	708,1	0,55	192,52
10	Արևածաղկի յուղ	-	-	-	-	23942,30	30851,60	1,29	512,03
11	Մարգարին	0,00	0,00	-	-	11510,30	18320,00	1,59	692,26
12	Շաքար	400,00	296,50	0,74	297,80	82410,10	51382,30	0,62	241,68
13	Մակարոնեղեն	153,50	120,90	0,79	316,44	4315,30	4502,90	1,04	434,20

2013									
1	Տավարի միս	-	-	-	-	5453,3	13891,8	2,55	1043,47
2	Խոզի միս	-	-	-	-	8136,4	20594,4	2,53	1036,81
3	Թռչնի միս	46,5	140,5	3,02	1237,67	31723,6	47519,3	1,50	613,58
4	Կարագ	66,345	374	5,64	2309,11	4749,0	20105,1	4,23	1734,14
5	Պանիր	1541,2	4610,1	2,99	1225,27	1243,7	6758,9	5,43	2226,08
6	Սուրճ	1233,9	4813,6	3,90	1597,98	11564,8	25802,1	2,23	913,90
7	Ցորեն	-	-	-	-	345571,8	108751,3	0,31	128,91
8	Բրինձ	-	-	-	-	10271,5	6969,5	0,68	277,94
9	Այուր	0,77	0,5	0,65	265,99	896,6	629,3	0,70	287,50
10	Արևածաղկի յուղ	0	0	1,37	562,27	23239,4	32052,6	1,38	564,96
11	Մարգարին	21,564	29,6	0,62	253,01	12503,3	18817,0	1,50	616,46
12	Շաքար	899,2	555,4	0,78	320,64	79774,5	40512,5	0,51	208,02
13	Մակարոնեղեն	155,6	121,8	1,37	562,27	4825,4	5091,4	1,06	432,20


**Աղբյուրը՝** ՀՀ արտաքին առևտուրը 2008–2013 թվականներին (ըստ արտաքին փոխադրման գործունեության ապրանքային անվանացանկի քառանիշ դասակարգման), Վիճակագրական ժողովածու, եր., ՀՀ ԱՎԾ, 2009–2013, էջ 53–57, 54–59, 59–62: ՀՀ մաքսային ծառայության [www.customs.am](http://www.customs.am) պաշտոնական կայքէջի վիճակագրական տվյալները:

2008–2014 թթ. ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ ՀՀ ԿԲ փոխարժեքը կազմել է համապատասխանաբար 305,97; 363,28; 373,66; 372,50; 401,76; 409,62 ՀՀ դրամ:


Գծանկար 6.12




Գծանկար 6.11




Գծանկար 6.14




Գծանկար 6.13




Գծանկար 6.15




Գծանկար 6.16




Գծանկար 6.17




Գծանկար 6.18



Գծանկար 6.19



Գծանկար 6.20



**Աղյուսակ 6.41. «Միս և մսից ենթամթերք» ասպրանքաբախարի ՀՀ ներմուծման ծավալները, արժեքները և 1 կգ-ի գինը՝ ըստ առանձին երկրների**

Երկրներ	2008						2009						2010					
	Ներմուծում		1 կգ արժեքը		Ներմուծում		1 կգ արժեքը		Ներմուծում		1 կգ արժեքը		Ներմուծում		1 կգ արժեքը			
	A	B	C	D	A	B	C	D	A	B	C	D	A	B	C	D		
<b>Ընդամենը</b>	<b>66107,30</b>	<b>89156,40</b>	<b>1,35</b>	<b>412,65</b>	<b>49709,10</b>	<b>69632,10</b>	<b>1,40</b>	<b>508,88</b>	<b>51065,10</b>	<b>69051,30</b>	<b>1,35</b>	<b>505,27</b>	<b>51065,10</b>	<b>69051,30</b>	<b>1,35</b>	<b>505,27</b>		
1 Անհայտ երկիր	-	-	-	-	0,60	10,60	17,67	6417,95	0,70	7,60	10,86	4056,88	0,70	7,60	10,86	4056,88		
2 Արգենտինա	125,20	244,80	1,96	598,25	305,20	582,00	1,91	692,76	50,70	62,10	1,22	457,68	50,70	62,10	1,22	457,68		
3 Ավստրալիա	-	-	-	-	74,90	114,80	1,53	556,80	224,60	208,90	0,93	347,54	224,60	208,90	0,93	347,54		
4 Ավստրիա	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
5 Բելգիա	-	-	-	-	26,40	31,40	1,19	432,08	11004,80	18511,10	1,68	628,53	11004,80	18511,10	1,68	628,53		
6 Բրազիլիա	11909,10	23704,50	1,99	609,02	12404,00	22545,90	1,82	660,31	-	-	-	-	-	-	-	-		
7 Բուլղարիա	-	-	-	-	-	-	-	-	764,00	1183,20	1,55	578,68	764,00	1183,20	1,55	578,68		
8 Բելառուս	46,00	46,00	1,00	305,97	-	-	-	-	50,70	173,10	3,41	1275,75	50,70	173,10	3,41	1275,75		
9 Կանադա	5689,00	8452,00	1,49	454,57	2408,50	3430,90	1,42	517,49	1221,70	2101,90	1,72	642,87	1221,70	2101,90	1,72	642,87		
10 Չինաստան	1002,50	2637,70	2,63	805,04	592,10	1356,10	2,29	832,03	1782,80	4028,10	2,26	844,26	1782,80	4028,10	2,26	844,26		
11 Կիպրոս	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
12 Չեխիայի Հանրապետություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
13 Դանիա	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
14 Ֆինլանդիա	-	-	-	-	0,10	5,50	55,00	19980,40	-	-	-	-	-	-	-	-		
15 Ֆրանսիա	778,50	967,30	1,24	380,17	895,40	1217,80	1,36	494,08	509,00	617,50	1,21	453,31	509,00	617,50	1,21	453,31		
16 Վրաստան	0,00	0,00	-	-	0,00	0,00	-	-	2,90	7,30	2,52	940,59	2,90	7,30	2,52	940,59		
17 Գերմանիա	159,90	254,10	1,59	486,22	24,50	28,20	1,15	418,14	198,20	288,50	1,46	543,90	198,20	288,50	1,46	543,90		
18 Հունաստան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
19 Հունկնգ	-	-	-	-	-	-	-	-	0,40	6,40	16,00	5978,56	0,40	6,40	16,00	5978,56		
20 Հունգարիա	-	-	-	-	0,00	0,80	-	-	-	-	-	-	-	-	-	-		
21 Ըսլովաստան	14623,4	20200,1	1,38	422,65	10241,30	17353,70	1,69	615,57	4899,20	10824,90	2,21	825,61	4899,20	10824,90	2,21	825,61		
22 Իտոլենցիա	0,10	3,20	32,00	9791,04	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
23 Իրանի Իսլամական Հանրապետություն	-	-	-	-	0,10	0,30	3,00	1089,84	-	-	-	-	-	-	-	-		
24 Իռլանդիա	-	-	-	-	0,10	1,10	11,00	3996,08	0,40	7,30	18,25	6819,30	0,40	7,30	18,25	6819,30		
25 Իսրայել	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		
26 Իտալիա	3012,10	4378,60	1,45	444,78	2417,60	3060,60	1,27	459,90	2750,60	3239,80	1,18	440,12	2750,60	3239,80	1,18	440,12		
27 Հորդանան	-	-	-	-	0,00	0,00	-	-	0,00	0,20	-	-	0,00	0,20	-	-		







**Աղյուսակ 6.42. Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գնները ՀՀ-ում 2008–2013 թթ. (դրամ)**

Հ/հ	Գյուղատնտեսական մթերքները	Չափի միավորը	2008	2009	2010	2011	2012	2013	2013 թ-ին 2008 թ. նկատմամբ, %
1	Ցորեն	կգ	120,5	95,5	120,9	138,9	158,2	162	134,4
2	Գարի	- „,-	104,0	94,9	121,5	145,0	159,0	166	159,6
3	Լոբի	- „,-	693,6	676,9	922,2	1020,3	941,5	1 019	146,9
4	Կարտոֆիլ	- „,-	100,7	70,9	130,0	183,9	111,9	119	118,2
5	Կաղամբ	- „,-	65,6	66,4	70,8	83,5	80,0	109	166,2
6	Գազար	- „,-	88,9	79,0	115,4	200,2	194,6	220	247,5
7	Գլուխ սոխ	- „,-	99,7	123,6	209,3	190,0	170,6	145	145,4
8	Խնձոր	- „,-	157,6	141,5	290,1	257,8	218,8	203	128,8
9	Տանձ	- „,-	282,8	209,0	503,8	307,3	332,4	342	120,9
10	Խաղող	- „,-	168,7	131,2	205,7	185,5	181,1	175	103,7
11	Ընկույզ (կեղևով)	- „,-	1 208,0	1 003,7	1 032,4	1 087,1	1 302,8	1 139	94,3
12	Մեղր	- „,-	2 663,3	2 701,2	2 851,3	2 931,8	3 175,4	3 358	126,1
13	Տավարի միս	- „,-	1 263,0	1 289,7	1 815,1	2 187,2	2 199,2	2 138	169,3
14	Ոչխարի միս	- „,-	1 504,6	1 530,3	2 282,4	2 633,2	2 599,5	2 410	160,2
15	Խոզի միս	- „,-	2 169,6	1 858,4	1 900,6	2 406,7	2 795,2	2 392	110,3
16	Պանիր (յուղոտ)	- „,-	968,0	941,5	1 054,7	1 525,1	1 490,6	1 509	155,9
17	Կաթ	լ	114,7	104,8	113,6	162,6	143,1	145	126,4
18	Մսծուն	- „,-	194,3	193,8	202,1	231,7	242,4	252	129,7
19	Չու	հատ	48,3	47,9	46,5	55,4	53,6	59	122,2
20	Միանյա խոտեր	կգ	32,8	29,2	26,8	33,6	41,7	53	161,6
21	Բազմանյա խոտեր	- „,-	39,7	35,7	44,2	45,7	62,8	53	133,5

Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-դնտեսական վիճակը 2012 թ. և 2013 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, 2013, 2014 թ. էջ 76-ի և 75-ի տվյալների հիման վրա:

**Աղյուսակ 6.43. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրն ըստ ապրանքային ենթախմբերի 2012 թ.**

Հ/հ	Ապրանքատեսակ	Քանակը, տ	Գումարը, հազ. դոլար	1 կգ արժեքը	
				դոլարով	դրամով
	<b>Ընդամենը</b>	<b>830414,7</b>	<b>1380199,2</b>	<b>4054535,2</b>	<b>4261232,7</b>
1	Խոշոր եղջերավոր անասուններ (կենդանի)	-	-	175,7	1077,9
2	Խոզեր (կենդանի)	-	-	212,2	640,2
3	Ոչխարներ, այծեր (կենդանի)	2486,5	8550,4	-	-
4	Ընտանի թռչուններ (կենդանի)	10,9	173,5	123,3	1957,1
5	Այլ կենդանիներ (կենդանի)	2,1	46,2	6,9	419,1
6	Խոշոր եղջերավոր անասունների միս (թարմ կամ պաղեցրած)	-	-	0,4	8,2
7	Տավարի միս (սառեցրած)	-	-	8335,4	20347,6
8	Խոզի միս (թարմ, պաղեցրած կամ սառեցրած)	-	-	8261,5	19999,7
9	Ոչխարի կամ այծի միս (թարմ, պաղեցրած կամ սառեցրած)	-	-	0,4	5,1
10	Մսամթերք (տավարի, խոզի, ոչխարի)	17	19	1386,1	1633,7
11	Ընտանի թռչնի միս և ենթասնդամթերք՝ դասակարգված 0105 ապրանքային դիրքում	16	46	33634,7	41935,0

12	Այլ մտերին և մսից ենթամանդամները՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	-	-	0,2	1,6
13	Խոզի և ընտանի թռչնի ժարպ (չհալեցրած)	0	0	3585,5	4752,2
14	Չորացրած, ծխելիսաշած, ապխտած միս և մսամթերք	3,4	29,9	1,5	13,6
15	Ձուկ (կենդանի)	16,9	194,0	0,5	27,3
16	Ձուկ (թարմ կամ պաղեցրած), բացառությամբ ձկան սուկին և 0304 ապրանքային դիրքի ձկների այլ միսը	1662,8	13047,5	40,3	350,6
17	Ձուկ (սառեցրած), բացառությամբ ձկան սուկին և 0304 ապրանքային դիրքի ձկների այլ միսը	164,4	1212,1	2660,0	3448,7
18	Ձկան սուկի և այլ ձկնամիս (սերտոյալ աղացած), թարմ, պաղեցրած կամ սառեցրած	0,0	0,7	78,5	153,1
19	Չորացրած, ծխելիսաշած, ապխտած ձուկ	5,6	49,8	36,0	183,9
20	Կակղամորթներ	1,7	18,1	8,0	58,3
21	Կաթ և սերուցք, չխտացրած և շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր չավելացրած	-	-	386,6	528,6
22	Խտացրած կաթ և սերուցք, կաթի փոշի, շաքար կամ քաղցրացնող այլ նյութեր ավելացրած	154,3	414,5	2679,9	7136,0
23	Թան, կտրված կաթ և կաթնասեր, յոգուրտ, կեֆիր և այլ խմորման ենթարկված կամ թթվեցրած կաթ ու կաթնասեր	7,5	14,7	946,1	1684,3
24	Կաթնային շիժուկ	-	-	457,7	682,1
25	Կարագ և այլ կաթնային յուղեր	0,1	0,3	4907,4	21403,7
26	Պանիր, կաթնաշոռ	903,6	2335,4	1056,2	5433,9
27	Թռչնի ձու կճեպով	1,7	2,9	27,1	162,0
28	Թռչնի ձու առանց կճեպի, ձվի փոշի	-	-	18,1	134,8
29	Մեղր բնական	5,0	32,2	16,8	63,3

**Աղբյուրը՝** Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին (ըստ արտաքին փոխտեսական գործունեության ապրանքային անվանացանկի քառանիշ դասակարգման), եր., ՀՀ ԱՎԾ, 2013, էջ 7-8:

**Աղյուսակ 6.44.** ՀՀ պարենի ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ապրանքային շուկաների անվանումը և փոխտեսվարող սուբյեկտների քանակը 02.10.2013 թ. դրությամբ

Հ/հ	Ապրանքային շուկայի անվանումը	Տեստավարող սուբյեկտների քանակը
1	Ձկան կեր	2
2	Իշխան և կարմրախայտ ձկնատեսակներ	1
3	Թառափազգիներ	2
4	Սուրճ	3
5	Տոմատի մածուկ	2
6	Մսի պահածո	2
7	Մինչև հինգ տարի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ	2
8	Հինգ տարուց ավելի հնեցմամբ հայկական արտադրության կոնյակներ	2
9	Գարեջուր	3
10	Շոկոլադե սալիկ	2
11	Շոկոլադե բատոն	2
12	Շոկոլադե դրաժե	2


13	Շոկոլադե մածուկ	3
14	Շոկոլադե կոնֆետներ	3
15	Շոկոլադե կոնֆետների հավաքածու (բոնբոներկա)	2
16	Բուսասերուցքային յուղերի խառնուրդներ՝ սփրեդ (յուղածո)	2
17	Մարգարին	3
18	Հավի միս	1
19	Շաքարավազ	1
20	Հավի ձու կճեպով	4
21	Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ	2
22	Արդյունահանված հանքային ջուր	2
23	Շշալցված հանքային ջուր	3
24	Լուծվող սուրճ	3
25	Պաղպաղակ	3
26	Թթվասեր	2
27	Պաստերացված և ստերիլիզացված (մանրէազերծված) կաթ	3
28	Մածուն և քամած մածուն	3
29	Յոգուրտ	3
30	Կեֆիր	3
31	Կաթնաշոռ	3
32	Կաթնաշոռի պանրիկ	2
33	Մայրական կաթին փոխարինող կերեր	3
34	Մանկական շիլաներ	3
35	Մանկական խյուսեր (այուրեներ)	2
36	Մանկական հյութեր	2
37	Ջրի սառեցման–տաքացման սարքեր	1
38	Ցորենի այլուր	2
39	Սառեցրած ձկներ	1
40	Էթիլային սպիրտ	1
41	Կարագ	1
42	Բրինձ	1
43	Արևածաղկի և եգիպտացորենի բուսական յուղ (ձեթ)	1
44	Ձիթապտղի բուսական յուղ (ձեթ)	1
45	Պահածոյացված ձիթապտուղ	1
46	Խտացրած կաթ	1
47	Մայրնեզ	1
48	Խմորիչ հացաթխման համար	1
49	Աղամաթուզ (բանան)	1
50	Խմելու ջուր	4
51	Գազավորված (կարբոնացված) քաղցրացված ըմպելիքներ	1
52	Շամպայն և փրփրուն գինիներ	1
53	Կերակրի աղ	1
54	Քարաղ (կերային)	1
55	Աղացած աղ (տեխնիկական)	1
56	Ծխախոտ ֆիլտրով	1
57	Ծխախոտ առանց ֆիլտրի	1

Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կայքերի տվյալներով:

**Աղյուսակ 6.45.** Որոշ պարենային ապրանքների գնային փարբերությունը Հայաստանում և ԱՊՀ ընտրված երկրներում 2010 թ. (%)

Հաց	36
<b>Կարագ</b>	<b>23</b>
Ձու	25
<b>Կաթ</b>	<b>33</b>
Տարեկանի հաց	45
<b>Միջին տոկոսը, որով Հայաստանում գներն ավելի ցածր են</b>	
Շաքարավազ	9

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետություն, Կուրակում, մրցակցություն և ..., ՀԲ, 2013 թ. հուլիս, էջ XXII:



**Գծանկար 6.21.** Հայաստանում մի շարք պարենային ապրանքաշուկաների համակենտրոնացման մակարդակը, Հերֆինդալի ինդեքս (ՀՀԻ)\*

Աղբյուրը՝ ՏՄՊՊՀ և հեղինակների հաշվարկներ: Շեները հաշվարկված են ըստ ԱՄՆ-ի Միաձուլումների ուղեցույցի (2010 թ.):

\* ՀՀԻ-ի մակարդակների հիման վրա (US Merger Guidelines, 2010) շուկաները սովորաբար դասակարգվում են որպես՝

- ոչ կենտրոնացված շուկաներ՝ ՀՀԻ-ն 1500-ից բարձր,
- չափավոր կենտրոնացված շուկաներ՝ ՀՀԻ-ն 1500-ից մինչև 2500,
- բարձր կենտրոնացված շուկաներ՝ ՀՀԻ-ն 2500-ից բարձր:

Մենաշնորհների դեպքում ՀՀԻ-ն հավասար է 10000-ի:

**Աղյուսակ 6.46. Հիմնական շուկայական բնութագրիչները և գների համադրման արդյունքները**

Մթերք	Ապրանքատեսակ	Միջակիցների թիվը	Ներկրման կարևորությունը	Հիմնական մասնակցի մասնաբաժինը շուկայում, %	Գները Հաստատում ԱՊՀ երկրների համեմատ (2005-2010 թթ.)
Մսամթերք	Տավարի, հավի և խոզի	Մեծ	Միջին		Տարբերությունը վիճակագրական կարևորություն չունի
Կաթնամթերք	Կաթ, պանիր	Համեմատաբար մեծ	Ցածր	44,54,	Կաթնամթերք
Հացահատիկային արտադրանք (հաց, մակարոնեղեն)	Ապիտակ հաց, տարեկանի հաց բարձր և ցածր (առաջին) տեսակի ցորենի ալյուրից	Մեծ	Ցածր	-	Հացի դեպքում ավելի բարձր են, մակարոնեղենի դեպքում էական չեն
Ցորենի ալյուր	Ցորենի ալյուր՝ բարձր և ցածր (առաջին) տեսակի	Փոքր	Բարձր	47,3	Ցորենի ալյուրի դեպքում ավելի բարձր են
Շաքարավազ	Շաքարավազ	Փոքր (մենաշնորհ)	Բարձր	99,9	ավելի բարձր են
Ձու	Հավի ձու	Համեմատաբար մեծ	Ցածր	26,06	ավելի բարձր են
Կենդանական և բուսական յուղ	Կարագ, արևածաղկի յուղ, ձիթապտղի յուղ	Համեմատաբար մեծ	Բարձր	Կարագ՝ 35,04 Արևածաղկի յուղ՝ 7,5 Ձիթապտղի յուղ՝ 66	ավելի բարձր են, սակայն տարբերությունը մեծ է միայն կարագի դեպքում

Աղբյուրը՝ Գործարարների հարցում 2009 թ., SSUՊՀ (հոկտեմբեր, 2009 թ.), UN Com Trade, NSS

## **ԳԼՈՒԽ 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆՈՒՂԻՆԵՐԸ**

### **7.1. Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները**

Արդյունաբերության և տնտեսության իրական հատվածի այլ ճյուղերի տնտեսական աճի առումով համեմատական առավելությունների առկայությունն առաջնահերթ է դարձրել գյուղատնտեսության ու գյուղի հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և լուծման ուղիների որոնումը: Ագրոպարենային համակարգը վճռորոշ դերակատարում ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և պարենային անվտանգության ապահովման գործում: 2006–2010 թթ. ագրոպարենային համակարգին բաժին է ընկնում երկրի համախառն ներքին արդյունքի մոտ 25%–ը, այդ թվում՝ ագրարային հատվածին՝ 18%–ը: Արտաքին ապրանքաշրջանառության մեջ գյուղատնտեսական արտադրատեսակների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 20%: ՀՀ-ի ամբողջ բնակչության մոտ 36%–ը (1174 հազ. մարդ) ապրում է գյուղական բնակավայրերում, իսկ հանրապետության ագրարային հատվածում զբաղված է տնտեսությունում ընդհանուր զբաղվածների 46%–ը՝ 1990 թվականի 17,7%–ի դիմաց: Սպառված պարենի ֆիզիկական ծավալների մինչև 20%–ը և էներգետիկայի մեկ երրորդը բավարարվում է 0,7 մլրդ դոլարի ներկրումների հաշվին: Պարենային անապահովության, բնակչության թերսնուցման տարածվածության կրճատման ուղիներից մեկը արտադրողականության բարձրացման հիմնախնդիրն է:

### ***Գյուղատնտեսական արտադրությունը ՀՀ տնտեսության սուկա կառուցվածքում***

Տնտեսական աճը, առավել ևս տնտեսական գործընթացների զարգացումը միայն համախառն ներքին արդյունքի աճով չի նախանշվում: Այն ընդամենը այդ գործընթացների կայուն զարգացումն ապահովող գործիքներից մեկն է: Մինչդեռ տնտեսական աճը ենթադրում է երկրի սոցիալ-տնտեսական ներուժի աճ, ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացում, կրթվածության աստիճանի բարելավում, երկրի անվտանգության տարաբնույթ խնդիրների լուծում և, վերջապես, աշխատանքի միջազգային բաժանման մեջ իրավահավասար մասնակցության ապահովում: Դրանք կյանքի կոչելու համար պահանջվում են որոշակի նախադրյալներ, սակայն կայուն ու շարժընթաց զարգացմանը համապատասխանող տնտեսություն վարելու արտադրական և սոցիալական հնարավորությունները շարունակում են մնալ խիստ անբավարար, և առայժմ առկա է այս ողջ մարտահրավերների իրական վտանգը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պարենամթերքի ձեռքբերմանը հատկացվող ֆինանսական միջոցները կազմում են ՀՀ բնակչության ընդհանուր ծախսերի համարյա 50–55%–ը: Ավելին՝ բնակչության սոցիալական այն խմբերում, որոնց եկամուտներն ապրուստի համար անհրաժեշտ նվազագույն սահմանագծից ցածր են, այդ ցուցանիշը հասնում է մինչև 70%–ի:

Գյուղատնտեսությունը իրական հատվածի այլ ճյուղերի նման մինչ այժմ պետության տնտեսական քաղաքականության հետին պլանում է և, չնայած վերջին տարիներին նկատելի դրական տեղաշարժերին, այնուամենայնիվ, շարունակում է մնալ անմխիթար վիճակում:

Արտադրանքի աճի տեմպերը ցածր են նաև սննդի արդյունաբերության բնագավառում, որի արտադրական իզոլություններն առայժմ օգտագործվում են կիսով չափ, եթե ոչ՝ ավելի պակաս:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսություններում զբաղվածների մոտ 1/3–ը խորհրդային տարիներին ագրարային հատվածում չաշխատած, ուստի աշխատանքային բավարար հմտություններ ու փորձ չունեցող քաղաքացիներ են: Այդ հանգամանքն ինքնին արդեն հարուցում է լուրջ կասկած գյուղացիական տնտեսության կացութաձևի ապրանքային բնույթի և զարգացման հեռանկարի առումով: Գյուղացիական տնտեսություններ վարող այս սոցիալական խումբն ունի այլ նպատակներ՝ ի հակադրություն գյուղացու հանրահայտ «տիրոջ զգացումի»՝ ֆերմեր-քաղաքաբնակների մեջ գերակշռում է ցանկացած միջոցներով արագ հարստանալու գաղափարը. հնարավորինս շատ հողատարածքներ վերցնել, գյուղատնտեսական տեխնիկա ու սարքավորումներ ձեռք գցել և կորզել հնարավոր առավելագույնը: Սակայն այս դեպքում գերակշռում են ոչ այնքան իրատեսական հաշվարկները, որքան ընձեռած հնարավորություններից (համարյա ձրի հող, էժան տեխնիկական միջոցներ, մատչելի ենթակառուցվածքներ և այլն) օգտվելու ինչ-որ տեղ արկածախնդրական մոտեցումը:

Հողի շուկան ձևավորվում է դանդաղ, և գյուղացիական տնտեսություններում առայժմ չի նկատվում խոշորացման միտում:

Փաստորեն, ՀՀ ագրարային հատվածում այսօր առկա են հանրային մեծ կարևորություն ունեցող և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ: Առանց դրանք լուծելու՝ հնարավոր չէ ձևավորել ագրոպարենային համակարգի հետագա կայուն և արդյունավետ զարգացման անհրաժեշտ նախադրյալներ, ինչպես նաև նոր թափ հաղորդել տնտեսության ագրարային հատվածի բարեփոխումներին:

Այդ խնդիրներից նշենք մի քանիսը.

- *Գյուղացիական տնտեսությունների արտադրարտնային ցածր կարողությունների և եկամուտների հիմնախնդիրը:*

Հողի սեփականաշնորհումից հետո հանրապետությունում ձևավորվել են ավելի քան 340 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին միջին հաշվով բաժին են ընկնում 1,4 հա գյուղատնտեսական հողատես-



քեր, այդ թվում՝ 1,1 հա վարելահող, 0,12 հա բազմամյա տնկարկներ և 0,2 հա խոտհարքեր: Ըստ հանրապետության առանձին մարզերի ու տարածաշրջանների՝ այս չափերը խիստ տատանվում են. նվազագույնը մինչև 0,61 հա՝ Արարատի մարզում (որտեղ ջրովի երկրագործության պայմաններում գյուղացիական տնտեսությունները զբաղվում են բարձրարժեք և շուկայական մեծ պահանջարկ ունեցող խաղողի ու տարբեր պտուղների, բանջարաբուստանային մշակաբույսերի աճեցմամբ), և առավելագույնը մինչև 3,0 հա՝ Սյունիքի մարզում, որտեղ բուսաբուծության ու անասնաբուծության մշակման ցածր արտադրողականության պայմաններում մասնագիտանում են խառը՝ բուսաբուծական-անասնաբուծական մթերքների արտադրության բնագավառում:

Տնտեսվարման նոր պայմաններում, երբ արմատապես փոխվել է հողօգտագործման համակարգը, և մշակովի հողատարածությունները մասնատվել են ավելի քան 1 միլիոն 284 հազար հողակտորների, առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսական արտադրության և այն սպասարկող ենթակառուցվածքների արդիականացումը: Արտադրանքի իրացման ցածր գների պատճառով չեն զարգանում նաև անասնաբուծության ենթաճյուղերը: Շատ գյուղացիական տնտեսություններում սահմանված գների մակարդակը նույնիսկ չի փոխհատուցում արտադրության վրա կատարված ծախսերը: Հիմնականում այդ պատճառով էլ այսօր յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1,5 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 1,7 գլուխ ոչխար և յուրաքանչյուր 5 տնտեսությանը՝ 1 գլուխ խոզ:

Նման պայմաններում գրեթե անհնարին են գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացումը, առաջավոր տեխնոլոգիաների կիրառումը, աշխատանքների մեքենայացումը, գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցումն ու շահութաբերության մակարդակի բարձրացումը: Գյուղացիական տնտեսություններում առայժմ գերակշռում է ցածր արտադրողականությամբ աչքի ընկնող ձեռքի աշխատանքը:

Դա է հիմնական պատճառներից մեկը, որ սակավահող մեր հանրապետությունում ագրարային հատվածի կարևորագույն և անփոխարինելի բնառեսուրսային ներուժ համարվող վարելահողերի ավելի քան մեկ երրորդը նպատակային չի օգտագործվում: Այսպես՝ վերջին հինգ տարիներին նպատակային չեն օգտագործվել միջին հաշվով շուրջ 167 հազ. հա վարելահողեր կամ դրանց ընդհանուր տարածքի ավելի քան 38%-ը: Հանրապետության 232,9 հազ. հա ոռոգելի հողատարածքներից այսօր փաստացի ոռոգվում է շուրջ 156 հազ. հա-ն, կամ գյուղատնտեսական ակտիվ շրջանառությունից դուրս են մղվել ավելի քան 76 հազ. հա բարելավված հողատարածքներ: Ընդ որում՝ գյուղատնտեսական հողատարածքների մասնատվածությունն ու գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը անհնար են դարձնում սեփականաշնորհված հողակտորներում համակարգված ցանքաշրջանառության կազմակերպումը, ոռոգման, պարարտացման և հողաբարելավման ու ագրոտեխնիկական այլ անհրաժեշտ միջոցառումների արդյունավետ իրականացումը: Այսպես՝ մեր հանրապետու-

թյունը ԱՊՀ երկրների շարքում վերջին տեղում է հանքային և օրգանական պարարտանյութերի կիրառման առումով: Վերջին տասնամյակում ավելի քան 10 անգամ կրճատվել է հանքային, գրեթե 18 անգամ՝ օրգանական պարարտանյութերի և շուրջ 10 անգամ՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ու կենդանիների պաշտպանության համար քիմիական միջոցների օգտագործումը:

ՀՀ ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլի վերջին տարիների համեմատությամբ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը բոլոր կատեգորիայի տնտեսություններում կրճատվել է ավելի քան 195,4 հազ. գլխով, խոզերինը՝ 38,3 հազարով, մանր եղջերավոր անասունները՝ 1054,3 հազարով: Այդ միտումը դիտվում է նաև բուսաբուծության առանձին ենթաճյուղերում. ծխախոտի համախառն բերքը 2012 թ-ին 1986 թ. համեմատ կրճատվել է 10,5 հազ. տոննայով (տե՛ս աղյուսակ 7.1): Բնակչության մեկ շնչի հաշվով մսի բոլոր տեսակների արտադրությունը կազմում է ընդամենը 22,1 կգ կամ 1,72 անգամ պակաս, քան ՌԴ-ում, և 1,85 անգամ պակաս, քան ամբողջ աշխարհում, և 5,92 անգամ պակաս, քան ԱՄՆ-ում [65]:

Այսօր խիստ կարևորվում են գյուղացիական տնտեսությունների ֆինանսատնտեսական և սոցիալական կացությունը և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները:

Բոլոր մակարդակներում գյուղացիական տնտեսությունների մոտ 70%-ը ժամկետանց պարտքեր ունի ռեսուրսներ մատակարարողներին, իսկ նրանց ընդհանուր պարտքը վարկատուներին համադրելի չէ գյուղատնտեսական մթերքների իրացումից ստացվող եկամուտներին:

Միայն 2010 թ. ՀՀ արդարադատության նախարարության դատական ամբաստանագրերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների օգտին բռնագանձման պահանջով հարուցվել է 18393 կատարողական վարույթ, որի արդյունքում բռնագանձման ենթակա ընդհանուր գումարի չափը կազմել է 12,6 մլրդ դրամ:

Միաժամանակ ՀՀ մարզային համապատասխան բաժիններում հարուցվել է 12109 կատարողական վարույթ:

Բավարար չէ նաև գյուղական բնակավայրերի սոցիալական ենթակառուցվածքների վիճակը: Որոշ համայնքներում (հատկապես բարձրլեռնային և սահմանամերձ տարածաշրջաններում) փակվելու սպառնալիքի տակ են հայտնվել դպրոցներ և բուժկետեր: Արդյունքում գյուղական բնակավայրերը զրկվում են զարգացման հեռանկարից և հայտնվում են վերացման եզրին: Արդյունքում սոցիալ-տնտեսական պատճառներով գրեթե վերացման եզրին են հասել սահմանամերձ և բարձրլեռնային բազմաթիվ գյուղական բնակավայրեր, իսկ հողատարածքները գրեթե չեն օգտագործվում: Չնայած հողի սեփականաշնորհումը՝ որոշ չափով կարծես թե մեղմել էր գյուղական բնակչության արտահոսքը, սակայն երիտասարդների արտահոսքը գնալով մեծանում է:

**Աղյուսակ 7.1. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքադրամությունները (հազ. հա), համախառն բերքը (հազ. տ), գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը (հազ.), անասնաբուծական մթերքների արտադրությունը (հազ. տ) և գյուղատնտեսական համախառն արտադրանքը (մլրդ դրամ)\***

Ցուցանիշներ	1986	1988	1990	1991-1995	1996-2000	2001-2005	2006-2010	2010	2011	2012
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները,	446,1	450,3	436,6	381,4	327,1	318,9	300,9	283,6	286,7	304,2
Այդ թվում՝ հացահատիկային և հատիկալնդեղեն մշակաբույսեր	135,6	133,0	138,2	178,1	187,6	202,5	172,5	159,3	157,8	172,2
Տեխնիկական մշակաբույսեր	9,7	8,5	1,9	0,9	1,2	1,2	2,1	2,4	3,2	3,5
Կարտոֆիլ	19,9	21,1	22,4	29,4	32,9	32,9	31,9	28,4	28,7	31,2
Բանջարանոցային մշակաբույսեր	18,0	18,0	18,0	21,7	20,2	21,6	24,3	23,5	25,0	25,2
Բոստան-պարենային մշակաբույսեր	3,3	4,1	4,8	3,2	3,7	3,8	5,2	4,5	5,8	5,1
Կերային մշակաբույսեր	257,9	264,8	251,3	148,1	81,8	56,9	65,6	65,5	66,2	6,7
Պտղի և հատապտղի տնկարկներ	54,0	51,4	50,2	36,1	25,2	28,2	36,8	37,7	37,1	39,3
Խաղողի տնկարկներ	32,9	31,7	29,2	25,2	17,3	14,1	16,5	17,4	16,3	17,4
<b>Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը</b>										
Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսեր	283,5	373,5	271,0	286,0	287,6	389,2	356,3	326,4	440,7	456,1
Ծխախոտ	12,3	8,8	1,7	1,0	1,3	1,6	0,2	1,4	2,4	1,8
Կարտոֆիլ	305,7	207,3	212,5	371,3	385,5	477,2	569,5	482,0	557,3	647,2
Բանջարեղեն	619,6	567,0	389,7	446,6	406,7	551,2	795,6	707,7	787,1	849,0
Բոստան-պարենային	54,0	60,5	31,4	41,4	65,0	98,1	174,4	132,5	-	-
Պտուղ և հատապտուղ	165,5	241,1	155,5	124,5	121,9	143,5	264,9	128,5	239,4	331,7
Խաղող	253,5	214,0	143,6	167,1	120,6	123,1	207,5	222,9	229,6	241,4
<b>Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, հազար գլուխ</b>										
Խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում՝	860,8	833,6	690,0	542,1	486,1	537,3	599,4	570,6	571,4	599,2
Կովեր	319,3	312,3	260,1	261,1	265,8	279,4	294,3	273,8	272,6	283,3
Խոզեր	344,3	344,1	329,3	156,7	69,5	87,3	114,9	112,6	114,8	108,1
Ոչխարներ և այծեր	1901,9	1730,0	1291,5	890,8	559,7	593,2	586,4	510,0	532,5	590,2
Ձիեր	-	-	-	8,9	12,4	11,9	12,3	10,0	10,1	9,9
Թռչուններ	12131,0	11395,0	11244,7	5508,0	3233,5	2891,8	2950,8	4134,6	3462,5	4023,5

Անասնաբուծական մթերքների արտադրությունը, հազար տոննա										
Միս (սպանդային քաշով)	113,4	113,2	145,1	97,3	85,4	92,3	66,8	70,9	71,7	73,9
Կաթ	572,7	565,9	441,9	409,5	441,9	520,7	627,9	600,9	601,5	618,2
Բուրդ (ֆիզիկական քաշով) (տ)	-	-	2831,0	2922,0	233,5	1177,8	1285,8	1340,0	1230	1280
Ձու (մլն հատ)	608,6	618,1	517,9	263,0	262,7	576,1	630,1	702,2	633,6	658,1
Կովերի միջին կարճնատվությունը (կգ)	1816	1876	1699,0	1568,4	1664,7	1874,4	2003,6	2035	2035	2036
Գյուղատնտեսական համախառն արտադրանքը, մլրդ դրամ այդ թվում՝ բուսաբուծական անասնաբուծական	1454,1	1371,6	1148,1	1116,3	330,6	427,2	602,0	637,5	-	-
	715,4	686,9	534,0	666,3	200,4	247,0	385,3	392,7	-	-
	738,7	684,7	614,1	446,6	130,2	180,1	216,9	244,9	-	-

\* Տե՛ս [12], էջ 27–28; [69], [5], էջ 4–5, 126, 129, [6], էջ 6, 7, 126, 128, [26], [53], [19]:

Հանրապետության լեռնային և սահմանամերձ տարածաշրջաններում (հատկապես գյուղական փոքր բնակավայրերում) բավականին շատ են լքված տները և չմշակվող տնամերձ և սեփականաշնորհված հողակտորները: Այսպիսով՝ լեռնային ու սահմանամերձ գյուղական մի ստվար խումբ բնակավայրեր ոչ միայն հայտնվել են վերացման եզրին, այլև զգալի չափերի հասնող սեփականաշնորհված հողակտորներ դուրս են մնացել գյուղատնտեսական ցանքաշրջանառությունից, որն էլ հանգեցրել է այդ բնակավայրերի էկոհամակարգերի խախտմանն ու առաջացրել սոցիալ–տնտեսական և ագրոէկոլոգիական անցանկալի հետևանքներ:

Միաժամանակ, վերջին տարիներին զանգվածային բնույթ է ստացել հայ գյուղացիության հոգեկերտվածքին ոչ բնորոշ մի բացասական երևույթ՝ կամովին հրաժարվում են սեփականաշնորհված հողերից ու դրանք վերադարձնում տեղական իշխանություններին: Գյուղացիական տնտեսությունների այս վարքագիծը շոշափելի չափերի հասնող ծավալների է հասել հատկապես Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Այսպես՝ 2008–2010 թթ. ընթացքում միայն Լոռու մարզում 3269 հա հողատարածքներից կամովին հրաժարվելու դիմումներ են ներկայացրել 2255 գյուղացիական տնտեսություններ, իսկ Գեղարքունիքի մարզում՝ 1074 դիմում՝ 2002 հա հողատարածքների վերաբերյալ:

Մտահոգիչ է նաև այն, որ այս քայլին դիմում են ոչ միայն գյուղից արտագաղթած ընտանիքները, այլև հայրենի գյուղում մշտական ապրողները: Լուրջ մտորելու տեղիք է տալիս այն պարագան, որ գյուղացիական տնտեսություններն այս քայլին հաճախ դիմում են սոցիալական անապահովության նպաստառուների ցուցակում հայտնվելու նպատակով: Այսինքն՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվելն այսօր այնքան անեկամտաբեր է ու անհեռանկարային, որ սոցիալական ապահովության չնչին նպաստը հայ գյուղա-

ցիության սոցիալական որոշ շերտերի համար կայուն եկամուտ ունենալու առումով ավելի նախապատվելի է:

Այսօր ՀՀ գյուղացիական տնտեսությունների մեծ մասը վերածվել է կիսաքանամթերային, իսկ մի մասն էլ՝ բնամթերային տնտեսության: Դրանք չեն ապահովում ապրանքայնության անհրաժեշտ մակարդակ: Գյուղացիական տնտեսություններում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կատարած ուսումնասիրությունները փաստում են, որ 2010 թ. հացահատիկի ու հատիկաընդեղենի ապրանքայնության մակարդակը 23,8% է, կարտոֆիլինը՝ 35,0%, պտուղ-հատապտուղներինը՝ 35,0%, կաթինը ու կաթնամթերքներինը՝ 16,0%, ձվինը՝ 40,4%, բրդինը՝ 37,9% և այլն: Համեմատաբար ապրանքայնության բարձր մակարդակ ունեն բանջարեղենը՝ 74,3%, բոստան-պարենային մշակաբույսերը՝ 91,8%, խաղողը՝ 89,7% և միսը՝ 81,0%:

Գյուղացիական տնտեսությունները սովորաբար օգտագործում են իրենց սեփականաշնորհված հողատարածքի մոտ 45-55%-ը, այսինքն՝ ձիշտ այնքանը, որով կապահովվեն անհրաժեշտ գյուղատնտեսական մթերքների սեփական կարիքները (սեփական սպառում, պարզ ապրանքափոխանակություն և մի փոքր մասի իրացում շուկայում և այլ եղանակներով): Չօգտագործվող հողերի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արմավիրի (13659,5 հա), Լոռու (9642 հա) և Գեղարքունիքի (9585 հա) մարզերում, իսկ ամենացածր ցուցանիշը՝ Շիրակում (1251 հա) և Վայոց ձորում (391 հա):

Սեփականաշնորհված փոքր հողակտորների վրա գյուղացիական տնտեսություններն արտադրություն կազմակերպելու, գյուղացիական տնտեսություն վարելու և գյուղատնտեսական մթերքներ արտադրելու ներկա մակարդակով չեն կարող ապահովել կայուն զարգացում և երաշխավորել հանրապետության բնակչության պարենային անվտանգությունը:

Սկսած 2011 թվականից՝ ՀՀ կառավարությունը սուբսիդավորում է գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքները. նախկին 24%-ի փոխարեն այսօր արդեն գյուղացիական տնտեսություններին վարկերը տրամադրվում են 14% տարեկան տոկոսադրույքով, որից 4%-ը սուբսիդավորում է պետությունը: Բարձրլեռնային և սահմանամերձ շուրջ 225 գյուղական առավել կարիքավոր համայնքներում սուբսիդավորումը կազմում է 6%:

Քանի որ տասնյակ հազարավոր գյուղացիական տնտեսություններ ներգրավված են վարկային ծրագրերում, ապա առնվազն աններելի է, որ փորձեր չեն արվում պետական մակարդակով կազմակերպել դրանց ապահովագրությունը:

Հանրապետության ագրոպարենային համակարգի արտադրատնտեսական, սոցիալական և էկոլոգիական ոլորտներում տիրող վիճակը մտահոգիչ է և կանխարգելիչ միջոցներ չձեռնարկելու դեպքում կարող է հանգեցնել՝

- ✓ գյուղական և քաղաքային բնակչության կենսամակարդակներում առաջացած ճեղքվածքի հետագա խորացման,
- ✓ գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական և ագրոէկոլոգիական իրավիճակի հետագա վատթարացման (զանգվածային գործազրկություն ու արտագաղթ, լեռնային ու սահմանամերձ գյուղական բնակավայրերի

ամայացում, սոցիալական ենթակառուցվածքների վատթարացում, էկոհամակարգերի խախտում, հողերի էրոզիա, անապատացում և այլն),

- ✓ հանրապետության բնակչության մի զգալի մասի համար (հատկապես սոցիալական անապահով խմբերի) պարենի մատչելիության նվազման,
- ✓ հանրապետության ագրարային հատվածի նյութատեխնիկական, կադրային, ազգային գենոֆոնդի և բնաէկոլոգիական ներուժի վերարտադրության խաթարման:

ՀՀ ագրոպարենային համակարգում և առաջին հերթին ագրարային հատվածում ծավալվող ճգնաժամի հիմնական պատճառները պետք է փնտրել համընդհանուր տնտեսական քաղաքականության և հատկապես պետության կողմից տնտեսության մեջ ագրարային հատվածի տեղն ու դերը թերագնահատելու մեջ:

Առաջին գործոնը, թերևս, միջճյուղային ու գնային հարաբերակցություններն են, որոնք հանրապետությունում կախված են սոցիալ-տնտեսական հնարավորություններից և բնական, առաջին հերթին՝ ագրոարտադրական ռեսուրսներից: ՀՀ-ին բնորոշ են բնառեսուրսային ներուժի ցածր ապահովվածությունը և աշխատավարձի համեմատաբար ոչ բարձր մակարդակը: Այս պայմաններում բնական ռեսուրսների (առաջին հերթին՝ էներգետիկ, հանքահումքային, ջրային, հողային, բուսականդանական և այլն) գների համաշխարհային մակարդակին մոտենալը հանգեցնելու է սպառողական ապրանքների ողջ արտադրատեխնոլոգիական շղթաների գծով նյութատեխնիկական ռեսուրսների թանկացման, այդ թվում՝ նաև գյուղատնտեսական մթերքների, հումքի ու պարենի:

Գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների արտադրության միջև գների չընդհատվող անզուգադրելիությունը մակրոտնտեսական գլխավոր բացասական գործոններից մեկն է: 2010 թ. այդ հարաբերակցությունն ավելի է վատացել. գյուղատնտեսական մթերքների ու հումքի գներն աճել են 5,2%-ով, մինչդեռ արդյունաբերական ապրանքներինը՝ 15,3%-ով: Արդյունքում միայն արդյունաբերական վերամշակման հետևանքով ագրարային հատվածում ստացված գյուղատնտեսական հումքից որպես նվազագույն գումար «դուրս է բերվում» մոտ 70,0 մլրդ դրամ (այդ թվում՝ պտուղ-բանջարեղենի հումքի վերամշակումից՝ 2,1 մլրդ դրամ, խաղողից՝ 16,8 մլրդ դրամ և կաթից՝ 40,0 մլրդ դրամ):

Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս տնտեսության ագրարային հատվածում ստեղծված եկամուտների զգալի մասը «վերցվում» է տարբեր խողովակներով: Դրա հետևանքով գյուղատնտեսական ապրանքարտադրողները չեն կարող ձեռք բերել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ, ժամանակին ու ամբողջությամբ ռեսուրսներ մատակարարողներին հատուցել և վճարել հարկեր:

Արժեզրկվել է գյուղատնտեսական աշխատանքը. հանրապետության ողջ տնտեսության մեջ նրա արժեքը 3,5–4,0 անգամ ավելի ցածր է:

Հետևաբար, գյուղի սոցիալական զարգացման և ագրարային հատվածում զբաղվածների աշխատանքի վարձատրության բարձրացման հիմնախնդիրը հանրապետության կառավարության համար պետք է լինի գերակա ուղղություն:

<sup>1</sup> Ըստ ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսության և գյուղի սոցիալական զարգացման ծրագրավորման վարչության տվյալների:

Գյուղացիական տնտեսությունների ճնշող մասը օբյեկտիվորեն չէր կարող դառնալ գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատեր, և տնտեսության փոքր չափերի պայմաններում սեփական տեխնիկա ունենալը ոչ միշտ է տնտեսապես նպատակահարմար:

Ներդրումների փոխհատուցումը տեղի է ունենում միայն 2-5 տարի հետո: Տնտեսության ագրարային հատվածում արտադրության ծավալները հնարավոր չէ արագ փոփոխել, քանի որ դա կապված է ինչպես վերարտադրության ու մասնագիտացման խորացման հետ (պտղաբուծության, խաղողագործության և տավարաբուծության բնագավառում պահանջվում է 5-7 տարի, իսկ դաշտավարության ոլորտում՝ 2-3 տարի), այնպես էլ արտադրության ինտենսիվացման գործոնների փոխազդեցությամբ (պարարտանյութերի օգտագործումը, տեխնոլոգիայի փոխարինումը, մեքենաների ու սարքավորումների կիրառումը և այլն): Հետևաբար, պահանջվում է որոշակի ժամանակահատված (լրագ) ագրարային հատվածը գների նոր մակարդակին հարմարեցնելու համար: Ուստի այն պակասեցնելիս կամ էլ ավելացնելիս գյուղատնտեսական արտադրության ծավալների և ագրարային հատվածի տնտեսական ցուցանիշների վրա անմիջապես ազդեցություն չի ունենում, քանի որ դա զգալիորեն գործում է նախկինում ստեղծված արտադրական ներուժի հաշվին:

Գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գնային հավասարությունը, նույնիսկ 1%-ով նվազեցումը կհամապատասխանի ագրարային հատվածի համախառն արտադրանքի մոտավորապես 0,3-0,5%-ով կրճատմանը: Բնակչության մեկ շնչին հասնող միջին եկամուտները 1%-ով պակասեցնելու դեպքում ագրարային հատվածի համախառն արտադրանքի արտադրությունը կկրճատվի 1,5-1,7%-ով, իսկ կապիտալ ներդրումների չափերը 1%-ով պակասեցնելու դեպքում ագրարային հատվածի համախառն արտադրանքի արտադրությունը կպակասի 0,15-0,2%-ով<sup>1</sup>:

Ձևավորված մակրոտնտեսական իրավիճակի հիման վրա կարելի է նաև կանխատեսել, որ առաջիկա 3-5 տարիներին ևս ագրոպարենային համակարգում տեղի ունեցող գործընթացները պայմանավորված են լինելու բնակչության գնողունակ պահանջարկի մեծացմամբ, ներդրումային գործունեության պետական օժանդակության չափերով ու միջոցառումային կառուցվածքային տեղաշարժերով: Դրանց կարելի է ավելացնել նաև ներժյուղային սոցիալ-տնտեսական գործընթացների ազդեցությունները՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրության ինքնավերականգնման առավել պակաս հնարավորություններով և գյուղի սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակով:

- *Աշխատանքի արտադրողականության աճի խոչընդոտները և հաղթահարման ուղիները.*

Աշխատանքի արտադրողականության ամենաբարձր ցուցանիշներ ունեցող ոլորտներն են ֆինանսական միջնորդությունը, անշարժ գույքի և գործարար ծառայությունները (44 հազ. ԱՄՆ դոլար ՀՆԱ մեկ աշխատողի հաշվով՝ արտահայտված գնողունակության համարժեքով), որին հաջորդում է շինա-

<sup>1</sup> Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության բաժնի տվյալների հիման վրա:

րարությունը: Նշված երկու ճյուղերում աշխատանքի արտադրողականությունը երկու անգամ գերազանցում է տրանսպորտի ու հեռահաղորդակցությունների, արդյունաբերության ու առևտրի, հյուրանոցների ու ռեստորանների ոլորտների ցուցանիշները և յոթ անգամ՝ ագրարային հատվածի, հանրային կառավարման, կրթության ու առողջապահության ցուցանիշները:

Տնտեսության ագրարային հատվածի աշխատանքի արտադրողականության բարձրացման համար անհրաժեշտ է պետական աջակցության մեխանիզմների համակողմանի կիրառում այն հաշվով, որ ճյուղում զբաղված աշխատուժի մի զգալի մասը վերաբաշխվի տնտեսության այլ ճյուղերում: Եթե ՀՀ-ի ագրարային հատվածում զբաղված է աշխատուժի 41,4%-ը, ապա Իսրայելում այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 2%-ը:

ՀՀ ագրարային հատվածում աշխատուժն արդյունավետ օգտագործելու, արտադրության սեզոնայնությամբ պայմանավորված անհամաչափությունը մեղմացնելու և, հետևաբար, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար տնտեսապես նպատակահարմար է գյուղական վայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության հետագա ծավալում:

Վերջին 3 տարիների ընթացքում հանրապետությունում սկսում է ձևավորվել սոցիալ-տնտեսական քաղաքականության նոր ուղղություն. դա գյուղական բնակավայրերի կայուն զարգացումն է: Այդ քաղաքականության իրականացումը հանձնարարվել է ՀՀ տարածքային կառավարման և ՀՀ գյուղատնտեսության նախարարություններին: Գյուղական բնակավայրերի կայուն զարգացման ոլորտում միջոցառումների մշակումը և արդյունավետ զարգացումը հանրապետության համար ունեն մեծ նշանակություն. առաջին՝ գյուղական տարածքների տեսակարար կշիռը, և երկրորդ՝ գյուղական բնակավայրերի բնակչության աղքատության բարձր մակարդակով պայմանավորված արտագաղթը:

Գյուղական բնակչության թվաքանակի կրճատում է դիտվում ՀՀ գրեթե բոլոր մարզերում ու տարածաշրջաններում, որի պատճառը բնական աճի նվազումն է և արտագաղթը: Գյուղական բնակչության զանգվածային արտագաղթը, որը սկսվեց 1990 թվականներից և շարունակվում է առ այսօր, փորձագիտական տարբեր գնահատականների և ուսումնասիրությունների համաձայն՝ վերջին երկու տասնամյակի ընթացքում Հայաստանը լքել են մեկ միլիոնից ավելի քաղաքացիներ, որոնց զգալի մասը գյուղի բնակիչներ են: Սա հենց զանգվածային արտագաղթ է, և ներկայումս հանրապետությունից տարեկան մոտ 25-30 հազար բնակիչ արտագաղթում է:

Իր վտանգավոր հետևանքներով առավել մտահոգիչ է արտագաղթը հեռավոր, բարձրլեռնային և սահմանամերձ գյուղական բնակավայրերից ու փոքր քաղաքներից:

Այժմ գործազուրկների ընդհանուր թվաքանակից համարյա յուրաքանչյուր չորրորդ և զբաղվածության ծառայությունների մարմիններում գրանցվածներից յուրաքանչյուր երրորդ գործազուրկը գյուղական բնակավայրերի բնակիչ է, մինչդեռ 1992 թ. համապատասխանաբար յուրաքանչյուր վեցերորդն ու հինգերորդն ունեին այդ կարգավիճակը: Չնայած վերջին տարիներին զբաղվածության և գյուղական բնակչության եկամուտների նշմարվող աճին՝ այնուամենայ-



Նիվ դրանց մակարդակը շարունակում է մնալ ցածր: 2010 թ. գյուղում ընդհանուր գործազրկությունը կազմել է 11%, մինչդեռ սոցիալական ծառայություններում գրանցվածները շուրջ 4 անգամ պակաս են: Գյուղական գործազուրկների մեծ մասը (75%-ից ավելին) չի ստանում նպաստ և սոցիալապես պաշտպանված չէ:

Գյուղական բնակիչների կյանքի պայմանները շարունակում են մնալ ոչ հրապուրիչ: Սոցիալական և ինժեներային ենթակառուցվածքները չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին: Գյուղական բնակելի ֆոնդերի հիմնական մասը չունի կոմունալ-կենցաղային տարրական հարմարություններ: Դիտվում է սոցիալական ենթակառուցվածքին պատկանող հաստատությունների թվաքանակի կրճատման, հիմնական սոցիալական ծառայությունների, կրթության և առողջապահության նվազման միտում: Փաստորեն, դադարել է գործել կենցաղային սպասարկման գյուղական ձեռնարկությունների ցանցը: Գյուղական ճանապարհատրանսպորտային գործող ցանցը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Գյուղական վայրերում նախադպրոցական հիմնարկների թվաքանակը 1995-2009 թթ. 470-ից հասել է 219-ի (52,4% կրճատում), հանրակրթական դպրոցները՝ 867-ից 860-ի (0,8%), մշակութաժամանցային կազմակերպությունները (թատրոններ, թանգարանային գործունեություն, սպորտային կազմակերպություններ և այլ)՝ 317-ից մինչև 238-ի (24,9%), գրադարանները՝ 968-ից մինչև 796-ի (17,8%), տեղամասային հիվանդանոցները՝ 243-ից մինչև 218-ի (10,3%) [29, 38]:

Զարգացած երկրներում գյուղական բնակավայրերի այդպիսի զանգվածային կրճատում տեղի չի ունենում: Այսպես՝ 1960-ական թվականների կեսերին Արևմուտքի զարգացած երկրներում դրսևորվեց հասարակության ապաուրբանիզացման ընդհանուր միտում:

Պետք է մտածել գյուղական տարածքների զարգացման կազմակերպական այլընտրանքային մեխանիզմների մասին: Խոսքը հատկապես լեռնային մարզերում ու տարածաշրջաններում ֆերմերային տնտեսությունների կազմակերպման ու համայնական տոհմային հողօգտագործման վերականգնման, ոչ գյուղատնտեսական գործունեության զարգացման, այդ թվում նաև փոքր ու միջին ձեռներեցության միջոցով տարածքի հանգստյան և պատմամշակութային օջախները վերականգնելու ու օգտագործելու մասին է: Ուստի անհրաժեշտ է ստեղծել նոր գյուղական ենթակառուցվածքներ՝ խորհրդատվական կենտրոնների ցանց, ցուցադրական տնտեսություններ, վաճառահանման և մատակարարման կոոպերատիվներ և այլն: Հենց այս մեթոդներով է հնարավոր բարելավել գյուղական բնակչության մուտքը դեպի ռեսուրսների ու պարենամթերքների շուկաներ և հաղթահարել գյուղի զարգացման ներձյուղային կառուցվածքում տիրող անմխիթար վիճակը:

Ագրարային քաղաքականության ուղղորդումը վերոհիշյալ խնդիրների հաղթահարմանը կարող է նպաստել գյուղական տարածքների կայուն զարգացմանը, որն էլ իր հերթին կապահովի տնտեսության ագրարային հատվածի արդյունավետ աճը, գյուղական բնակչության կենսամակարդակի ու կյանքի որակի բարելավման բարձրացումը, աջակցությունը էկոլոգիական հավասարակշռությանը և գյուղական վայրերում ագրոլանդաֆոնների պահպանմանը ու բարելավմանը:

• **Գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնահարցերը.**

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լիարժեք չեն գործում գյուղատնտեսական մթերքների իրացման, վերամշակման և պահեստավորման ենթակառուցվածքներն ու ստորաբաժանումները:

Արտադրված գյուղատնտեսական մթերքների մի զգալի մասը (հացահատիկի 42,5%-ը, կաթի և կաթնամթերքի 42%-ը, պտղի, կարտոֆիլի և բանջարեղենի 20-28%-ը) օգտագործվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ 20-25%-ը իրացվում է պարզ ապրանքափոխանակության, շուկայում կամ էլ այլ ուղիներով:

Անբավարար է գյուղատնտեսական մթերքների վերամշակման գործը: Վերջին չորս տարիներին հանրապետության բոլոր վերամշակող ձեռնարկությունները միջին տարեկան կտրվածքով վերամշակել են արտադրված բանջարեղենի 5,5%-ը, պտղի՝ 5,7%-ը և խաղողի՝ 67-68%-ը:

Չափազանց անհանգստացնող են գյուղատնտեսական մթերքների արտահանման ցուցանիշները: Վերջին տարիներին արտահանվել է հանրապետությունում արտադրված բանջարեղենի ընդամենը 1%-ը, պտղի՝ 2,5-3%-ը և խաղողի՝ 1-1,5%-ը:

2010 թ. տվյալներով հանրապետության պարենամթերքի ներմուծումը 3,6 անգամ գերազանցում է արտահանման ծավալները: Ծայրաստիճան անբավարար են ներմուծվող գյուղատնտեսական մթերքները տեղական արտադրության մթերքներով փոխարինելու աշխատանքի տեմպերը:

Գյուղատնտեսական մթերքների, հումքի և պարենի թերարտադրության պարագայում նույնիսկ հանրապետությունում առկա են դրանց իրացման խնդիրներ: Գյուղատնտեսական մթերքների իրացման ոլորտում ձևավորվել են սովետային մեծածախ «միջնորդներ», որոնք, օգտվելով գյուղացիական տնտեսությունների մասնատվածությունից, անկազմակերպվածությունից և բերքի իրացման առումով անելանելի վիճակից (սառնարանային տնտեսության բացակայությունը գյուղացուն զրկում է բերքը պահելու, հարմար պահի շուկա հանելու և իրացման ավելի ձկուն մարտավարություն իրականացնելու հնարավորությունից՝ նրան ուղղակի կախվածության մեջ դնելով միջնորդներից), պարտադրելով նրանց արտադրանքի գնման նվազագույն գներ, գյուղացիներից ձեռք են բերում դրանք և վերավաճառում սպառողներին մի քանի անգամ բարձր գնով: Գյուղատնտեսական մթերքների ու հումքի իրացման ոլորտում ձևավորված եկամուտների չնչին մասն է (10-15%) բաժին ընկնում այդ արժեքը ստեղծող արտադրողին՝ գյուղացուն՝ նրան չափահովելով նույնիսկ պարզ վերարտադրության համար նվազագույն միջոցներով: Պատահական չէ, որ վերջին տարիներին գյուղատնտեսական մթերքների ճնշող մասի գների շեշտակի աճն անգամ (որոշ ապրանքատեսակների գները 2010 թ. փետրվար - 2011 թ. փետրվար ժամանակաշրջանում աճել են ավելին քան 40%-ով) շոշափելիորեն չավելացրեց գյուղացիական տնտեսությունների եկամուտները, որը կարող էր նպաստել գյուղատնտեսական ապրանքարտադրողների շրջանում տնտեսական աշխուժացմանը, քանի որ գնաճի հետևանքով ձևավորված ֆինանսական ռեսուրսների աճի հիմնական մասը փաստորեն բաժին հասավ ոչ արտադրող միջնորդներին:

ՀՀ-ի տարբեր մարզերում արդեն ստեղծվում են գյուղատնտեսական մթերքների և հումքի պահեստավորման ու վերամշակման լոգիստական կենտրոններ, որոնց գլխավոր նպատակը տեղական փոքր գյուղատնտեսական ապրանքարտադրողների արդյունքը մթերելու, վերամշակելու և պահեստավորելու խնդիրների լուծումն է: Պլանավորվում է պտուղ-բանջարեղենը պահպանելու համար հիմնել արդիական պահեստարաններ, արտադրանքի առաջնային և երկրորդային վերամշակման համար ձեռք բերել հոսքագծեր, զետեղարաններ, չափաճրարման արտադրամասեր, ավտոտրանսպորտ և այլն: Դա թույլ կտա փոքր և միջին գյուղատնտեսական ապրանքարտադրողների համար ստեղծել նյութատեխնիկական բազա:

Այդ նպատակով «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում ստեղծվելիք ազատ տնտեսական գոտու բաղադրիչ համարվող սառնարանային համալիրը՝ նախատեսված մինչև 500 տ գյուղատնտեսական արտադրանք պահեստավորելու համար, կոչված է այդ հիմնախնդրի լուծմանը:

Հանրահայտ ճշմարտություն է, որ գյուղատնտեսական մթերքների, հումքի և պարենի արտադրության ոլորտում առանց ագրարային գիտության վերջին նվաճումների ու նորագույն տեխնոլոգիաների ներդրման և կադրային ապահովման, հնարավոր չէ ունենալ արդյունավետ ու մրցունակ ագրարային հատված: Հետևաբար, գյուղացիական և ուրիշ կատեգորիայի տնտեսություններին գյուղատնտեսական արդյունավետ խորհրդատվական ծառայությունների մատուցումը քննարկվող ոլորտի ամենաառանցքային խնդիրներից մեկն է:

Այդուհանդերձ, մեր գյուղացիների մասնագիտական իմացության, նորագույն տեխնոլոգիաներին իրագեկման, աշխատանքի շուկայում մրցունակ մասնագետների պատրաստման և վերապատրաստման ապահովվածության մակարդակը շարունակում է մնալ մտահոգիչ: Իսկ հիմնական պատճառն այն է, որ խորհրդատվական ծառայություններ մատուցելու գործող համակարգը չի համապատասխանում տնտեսության ագրարային հատվածի արդի պահանջներին. այնտեղ ընդգրկված մասնագետների գործունեությունը պայմանավորված չէ գիտական նվաճումների, նոուհաունների և ագրոտեխնոլոգիական նորագույն լուծումների ներդրման հաշվին գյուղացիական ու ֆերմերային տնտեսությունների եկամուտների ավելացման շահագրգռվածությամբ: Այսինքն՝ այդ շահագրգռվածությունն ավելի շոշափելի կարող է լինել, երբ խորհրդատվական ծառայությունների սպառողները ոչ թե առանձին փոքր գյուղացիական տնտեսություններ են, այլ կայացած և շահագրգիռ միավորումներ:

- *Գյուղացիական տնտեսությունների համագործակցության՝ կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը.*

Ագրարային հատվածում պետական քաղաքականությունը կտրուկ փոփոխության կարիք ունի: Դրա առանցքային նպատակը պետք է լինի մասնատված և փոքր չափերի գյուղատնտեսական ապրանքարտադրողներին ընդհանուր հետաքրքրությունների ու շահերի շուրջ միավորելը՝ պահպանելով նրանց տնտեսական ինքնուրույնությունն ու ազատությունը:

ՀՀ տնտեսության ագրարային հատվածում մանր ապրանքային արտադրությունը խոշորացնելու պայմաններում ագրոպարենային համակարգի զարգաց-

ման համակողմանի ուսումնասիրությունը վկայում է ինչպես արտադրության, այնպես էլ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, պահեստավորման և իրացման ոլորտներում գյուղատնտեսական կոոպերացիայի հիման վրա գյուղացիական տնտեսությունների միավորման անհրաժեշտությունը: Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև գյուղացիական տնտեսությունների փոքր և մասնատված հողակտորների վրա առավել ևս պարզունակ գործիքների ու ձեռքի աշխատանքի միջոցով դժվար է ոչ միայն ապրանքային արտադրություն ապահովումը, այլև ընդհանրապես արդյունավետ գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելը:

Միջազգային և ամենից առաջ զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ պետական քաղաքականությունը տնտեսության ագրարային հատվածում չի կարող լինել արդյունավետ և զարգացում խոստացող, եթե այն չի խարսխված գյուղացիական տնտեսությունների հորիզոնական ու ուղղահայաց կոոպերացիայի վրա, որը ոչ միայն պաշտպանվում, այլև ուղղակիորեն խրախուսվում է պետության կողմից:

Պարտադիր չէ ստեղծել կառավարչական առանձնացված մարմիններ (վարչություն, տնօրինություն և այլն): Դրանք լավագույնս լուծվում են կոոպերացիայի տարբեր ձևերի շրջանակներում և հատկապես ձևավորման նախնական փուլում գյուղացիական տնտեսությունների ոչ առևտրային միավորների ու ընկերությունների միջոցով: Գյուղացիական տնտեսությունների ուղղահայաց կոոպերացիան հնարավորություն է տալիս ստեղծելու սպառողական, վարկային, ապահովագրական, վերամշակման, մեծածախ առևտրի, խորհրդատվական և այլ կոոպերատիվներ:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ կոոպերատիվները գործնականում դառնում են տնտեսության ագրարային հատվածում մենաշնորհային դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներին հակադրվելու լավագույն միջոցներից մեկը:

«Տնտեսության ագրարային հատվածի զարգացման այժմյան փուլում կարևորվում է գյուղատնտեսական կոոպերացիայի խթանումը, որի դեպքում բազմաթիվ գյուղացիական փոքր տնտեսություններ կամավորության հիմունքներով միավորվում են իրենց միատեսակ գյուղատնտեսական միջոցներով՝ գյուղական վայրերում ձևավորելով կոլեկտիվներ (գյուղացիական միավորումներ ու ընկերություններ) և համատեղ իրականացնում գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում, պահեստավորում և իրացում՝ կատարելով աշխատանքի միևնույն կամ տարբեր, բայց փոխկապակցված արտադրատեխնոլոգիական գործընթացներ:

Կոոպերացիայի զարգացման պայմաններում հողերի խոշորացման ակնկալվող դրական արդյունքներից բացի՝ կնվազի աղքատությունը գյուղական վայրերում (հատկապես լեռնային ու սահմանամերձ տարածաշրջաններում), կբարելավվի գյուղացիների սոցիալական վիճակը, գյուղերում կստեղծվեն ապրելու և աշխատելու նորմալ պայմաններ, կձևավորվի գյուղացիների միջին խավ, կպաշտպանվեն գյուղացիների իրավունքներն ու շահերը, կխթանվեն գյուղատնտեսական մթերքների, հումքի և պարենի իրացման, մատակարարման ու

սպասարկման կոոպերատիվների ձևավորումը և արդյունավետ գործունեությունը, կավելանա գյուղական բնակավայրերում զբաղվածության մակարդակը, գյուղացիները ի վիճակի կլինեն ժամանակին վճարելու հարկերը և ներդնելու գյուղատնտեսական ապահովագրման համակարգը:

Ներկայումս ՀՀ-ում առավել արդյունավետ է սպառողական կոոպերատիվների գործունեությունը: Փորձը ցույց է տալիս, որ գյուղացիների գերակշռող մասը խուսափում է արտադրական կոոպերատիվին անդամակցելուց: Դրա համար նրանք որոշակի հիմքեր ունեն, քանի որ խորհրդային յոթ տասնամյակների տարիներին արդեն ճաշակել են ունեզրկման և կոլտնտեսային ոչ արդյունավետ համակարգի դառնությունները: Իհարկե, արտադրական կոոպերատիվը նախկին կոլտնտեսությունը չէ, բայց եթե հաշվի առնենք, որ պետությունն էլ այլևս չի կարող ապահովել նյութատեխնիկական մատակարարումների, երաշխավորված գնումների, վնասների փոխհատուցման և այլ արտոնությունների տրամադրման նախկին պայմանները, ապա գյուղացիների մտավախությունը առավել հասկանալի է դառնում: Բացի այդ՝ պետք է վերանայել այն մտայնությունը, որ փոքր հողակտորներ ունեցող, աղքատ գյուղացիների միավորումը արտադրական կոոպերատիվում ի զորու է լուծելու նրանց հիմնախնդիրները: Միանգամայն այլ է, որ այդ գյուղացիական տնտեսությունները ներգրավվեն սպառողական կոոպերատիվի կազմում և համատեղ լուծեն ներդրումների, մեծածախ գնումների, արտադրանքի իրացման, ագրովերամշակման, մասնագիտական ապահովման, վարկավորման, ապահովագրության և այլ խնդիրներ: Մեր կարծիքով սպառողական կոոպերացիայի զարգացումն այն ուղին է, որը որոշակի հանգրվանում կստեղծի պայմաններ ու վստահություն նաև արտադրական կոոպերատիվների ձևավորման, տնտեսությունների խոշորացման և հողերի միավորման համար:

ՀՀ-ում ձևավորված յուրահատուկ՝ առանց արտաքին ներարկումների գրեթե անկենսունակ տնտեսական կառույցի էական մասը հանդիսացող գյուղատնտեսությունը հրատապ բարեփոխումների կարիք ունի: Եվ, մեր համոզմամբ, վերը նշված առաջարկների հաշվի առնումը տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ կօժանդակի տնտեսական և սոցիալական հայտնի հիմնախնդիրների լուծմանը:

## 7.2. Հողօգտագործման ու ջրօգտագործման ազգային ծրագրի (ՀԶԱԾ) մշակման հարցի շուրջ

ՀՀ տնտեսության կայուն առաջընթացի ապահովման առաջնահերթություններից մեկը հողօգտագործման ու ջրօգտագործման ազգային պետական ծրագրի (ՀԶԱԾ) կենսագործումն է լինելու:

«Եթե հաջողվեր ժողովել մեր երկրի տարեկան բյուջեին համազոր դրամագլուխ, այն տնտեսության հոր ոլորտներում կներդնեիք» հնարավոր հարցին մեր պատասխանն աներկբա է՝ նախ և առաջ գյուղատնտեսությունում: Այս պնդումը կատարում ենք՝ քաջ գիտակցելով, որ կլինեն բազմաթիվ ընդդիմախոսներ, ովքեր գյուղատնտեսության ոլորտի ընտրությունն առնվազն վիճահարույց կհամարեն, քանի որ այն խիստ ռիսկային է: ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաներին ու

գիտելիքահենք տնտեսությանը նախապատվություն տալը տեսանելի հորիզոնում խիստ ցանկալի, սակայն մեծ արդյունքների ակնկալությունն իրատեսական չէ մեկ պարզ պատճառով՝ բացակայում են անհրաժեշտ տեխնոլոգիաները, գիտակրթական համակարգերն ու կենտրոնները<sup>1</sup>: Խելամիտ մոտեցման դեպքում որոշ բարձր տեխնոլոգիաներ կարող են արդյունավետ կիրառում գտնել նաև գյուղատնտեսության ոլորտում՝ հողօգտագործման, ջրօգտագործման մեջ: Ի վերջո՝ զարգացած և նորարարություններով առանձնացող երկրների դասակարգումը վկայում է, որ ընդգծված առաջընթաց ունեն այն երկրները, որոնք նախ և առաջ հաջողություններ են արձանագրել ավանդական ռեսուրսների օգտագործման բնագավառում:

Ներկա ոչ բարվոք տնտեսության ոլորտում բեկում մտցնելու համար գոյություն չունի ներդրումային առավել հավակնոտ ու մասշտաբային այլընտրանք, քան ավանդական ռեսուրսների՝ մեր երկրի հողի, ջրի, «մեզ բաժին հասած» արևի էներգիայի ու մարդկային կապիտալի պաշարամիջոցների արդյունավետ օգտագործումը: Միջակցային այլընտրանք կարող էր հանդիսանալ հզոր ատոմակայանի կառուցումը:

Սույն հրապարակման առանցքային տրենդը կամ հիմնական գաղափարն այն է, որ Հայաստանի զարգացման ներկա փուլում տնտեսության պետական կարգավորման ու հատկապես խնդրո առարկա՝ գյուղատնտեսության ոլորտին ու գյուղի զարգացման խնդիրներին պետության՝ շատ դեպքերում անհաղորդ լինելը ոչ միայն չի բխում մեր երկրի ազգային շահերից, այլև կորստաբեր է ՀԶԱԾ-ի կենսագործման հապաղման պարագայում: Տնտեսության անափ լիբերալացումը, եթե չի ուղղորդվում առաջընթացի ապահովման համապարփակ լուծումներով, կարող է առանձին դեպքերում կործանարար հետևանք ունենալ, ինչպես դա եղավ մեզ մոտ և շարունակվում է հողօգտագործման (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և ջրօգտագործման բնագավառներում:

Շուկայական տարերքին կուլ չգնալու և տնտեսվարմանը անհարկի միջամտությունից խուսափելու համար, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, անհրաժեշտ է ճիշտ դիրքավորվել տնտեսության պետական կարգավորման բազմավեկտոր ուղղություններում՝ սկսած արդյունքների ստեղծումից մինչև դրանց բաշխումն ու վերաբաշխումը: Ճիշտ դիրքավորումը, որն, ի դեպ, միտված է տնտեսության արդյունավետ ու մրցունակ կառուցվածք ունենալուն, վճռորոշ է եղել ոչ միայն անցումային, այլև զարգացած երկրների համար:

Պետության կամ պետական հատվածի չափերի մասին դատողությունները կարող են տարբեր լինել: Հաճախ դա կախված է քննարկման նպատակից կամ համատեքստից, այսինքն՝ թե ինչ խնդիրների է վերաբերում քննարկումը՝ համախառն թողարկմանը, աշխատանքի շուկային, ներդրումների ծավալներին ու ուղղություններին և այլն, շատ անգամ էլ մենք պետության չափը կարող ենք գնահատել հենց այդ իրողություններին համապատասխան:

<sup>1</sup> «Հարտաքին առևտրի հաշվեկշիռը տեղեկատվական տեխնոլոգիաների և սպառողական էլեկտրոնիկայի գծով 2005–2012 թթ. բացասական է: Ավելին՝ բարձր տեխնոլոգիաների ներմուծումն ավելի քան քսան անգամ գերազանցում է արտահանմանը, իսկ դրա բաժինը չի գերազանցում ընդհանուր արտահանման 1%-ը: Սա այն դեպքում, երբ բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը համարվում է տնտեսության գերակա ուղղություններից մեկը:

Հայաստանի Հանրապետությունում պետությունը մեծ չէ, տիրապետող է այն տեսակետը, որ անզամ ավելի փոքր է, քան անհրաժեշտ: Սակայն այդ մասին առավել լրիվ պատկերացում կազմելու համար հարկավոր է Հայաստանի Հանրապետության պետական հատվածը չափել այլ երկրների համատեքստում (տես աղյուսակ 7.2): Համեմատությունը հաստատում է, որ Հայաստանը պետությանը հատուկ բնութագրիչների առումով փոքր է (պետական հատվածի չափերը, հարկային եկամուտներ ՀՆԱ հարաբերակցությունը և այլն), ուստի պետական հատվածի ազդեցությունը տնտեսության վրա ևս չի կարող մեծ լինել:

Համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող խիստ հակասական գործընթացները, որոնք մասնավորաբար դրսևորվում են ծախսերի ու արդյունքների անհամաչափություններով, չեն շրջանցում ՀՀ տնտեսությունը, ուստի չեն փոխում ՀՀ առջև ծառայած նվազագույն խնդիրը՝ մեծացնել դիմադրողականությունը հաղթահարելու տնտեսության տարատեսակ ձգնաժամերը: Հանրային կյանքում, տնտեսությունում ձգնաժամերի հաղթահարումը և, ընդհանրապես ապաքինման գործընթացը բազմապրոֆիլ ու բազմաֆունկցիոնալ է: Եթե բնության մեջ թույլը, տկարը ենթակա է սանմաքրման, ապա տնտեսության մեջ մասնակի առողջացումն իրականացվում է հատուկ ծրագրային գործընթացների կիրառմամբ: Ի դեպ՝ մասնակ կարող է ձանաչվել և՛ երկիրը, և՛ ընկերությունը, ինչպես նաև տնտեսության մի ամբողջ ոլորտ: Միտեցումների ընդհանրական եղանակների պարագայում հակաձգնաժամային ներագրման ու առողջացման մեթոդներն են տարբեր:

Աղյուսակ 7.2. Պետական հատվածի չափը մի շարք երկրներում 2004 թ. (ՀՆԱ-ի մեջ, %)

Երկրներ	Ավելացված արժեք	Եկամուտներ	Ծախսեր	Սպառում
Հայաստան	6	15	17	11
Շվեդիա	19	58	57	27
Դանիա	20	57	55	27
Ֆրանսիա	16	50	53	24
Նորվեգիա	16	58	46	22
Ֆինլանդիա	16	53	51	23
Մեծ Բրիտանիա	11	41	44	21
Գերմանիա	9	43	47	19
Եվրամիության 15 երկիր	13	45	47	21
ԱՄՆ	11	32	36	16
Ճապոնիա	9	30	38	18
Ռուսաստան	9	37	34	16
Ուկրաինա	11	36	40	18
Չեխիա	12	41	44	22

Աղբյուրը՝ [57]:

ՀՀ տնտեսության վերելքի ռազմավարության նախապայմանը մրցակցային բարենպաստ միջավայր ստեղծելուն զուգընթաց տնտեսությունում մրցունակ կառուցվածքի ձևավորումն է, որը կարող է խարսխվել հողօգտագործման ու ջրօգտագործման ազգային պետական ծրագրի վրա: Վերջինիս մշակումը հնարավորություն կընձեռի ունենալու ոլորտի զարգացման նպատակային ուղեգիծ՝ հրաժարվելով անցած տարիներին իրականացված պահանջարկային կարճաժամկետ կարգավորման (այն էլ՝ ոչ համալիր) քաղաքականությունից:

### **ՀԶԱԾ-ի պահանջվածությունը**

Անկախությունից ի վեր այդպես էլ չի ձևավորվել գիտականորեն հիմնավորված ու հետևողականորեն կենսագործվող **զարգացման ամբողջական տեսլական** երկրի տնտեսության երկարաժամկետ զարգացման կտրվածքով, որում առանձնացվեր կոնկրետ ոլորտի, տվյալ դեպքում՝ գյուղատնտեսության ու գյուղի զարգացմանն ուղղված համակարգված գործողությունների ամբողջական փաթեթ, որոնք պետք է մշակվեն ու գործադրվեն՝ առավելագույնս հաշվի առնելով երկրաքաղաքական, ազգային անվտանգության, ռեսուրսային (պաշարամիջոցների), սոցիալ-հոգեբանական, նոր մշակույթի ձևավորման, համեմատական առավելությունների և այլ առանձնահատկություններ: Հետևաբար, ՀԶԱԾ-ի դրույթները պետք է մշակվեն ու գործադրվեն այս համատեքստում:

Որքան էլ ռեսուրսները սահմանափակ լինեն, միշտ կան դրանց վատ, լավ կամ առավել լավ օգտագործման չափանիշներն ու հնարավոր լուծումները: Ազգային շահի համատեքստում (առողջ սերունդ, պաշտպանունակություն, տնտեսական անվտանգություն, արտադրանքի մրցունակություն և այլն) առաջադրվող նպատակների ու բնագծերի հասանելիությունն ապահովող ենթածրագրերը բազմազան են՝ «Պարեն», «Էներգետիկա», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Կրթություն, առողջապահություն և մշակույթ» և այլն, և այս ցանկում՝ «ՀԶԱԾ»-ի ընդգրկումը, ապա և դրանց մանրակրկիտ մշակումն ու իրագործումը կդառնան վերելքի ռազմավարության գործուն միջոց:

Ինչպես իրավացիորեն նշվում է, «դեպի զարգացում անցման և տնտեսությունում էական կառուցվածքային տեղաշարժերի միջոցով է միայն հնարավոր ապահովել իրատեսական համարվող 5-7%-ից բարձր տնտեսական աճ: Կարելի է նշել, որ Հայաստանի տնտեսությունն ունի 4-4,5%-անոց աճի միջնաժամկետ տրենդը գերազանցելու ներուժ, որը, սակայն, կարող է իրականանալ միայն ուղղորդված ջանքերի շնորհիվ: Այս առումով ՀՀ Կառավարության ծրագրում նախանշված 5-7%-անոց միջինժամկետ աճը թե՛ հասանելի է, թե՛ հավակնոտ, քանի որ առանց նոր փոփոխությունների՝ իներցիայով գրեթե անհնար կլինի ոչ միայն 5-7%-անոց աճն ապահովելը, այլև տրենդային 4-4,5 ցուցանիշին հասնելը» [58]: Ողջ խնդիրը, սակայն, այն է, որ նշված 5-7% աճը ոչ մի կերպ չպետք է դառնա նպատակային բնագիծ: Դեպի զարգացում անցումն ապահովելու, ստեղծված իրավիճակում բեկում մտցնելու, ՀՀ կառավարության ծրագրային խնդիրների ու առաջնահերթությունների շարքում չթերագնահատելով մյուս նպատակային ծրագրերի դերը՝ ՀԶԱԾ-ն պետք է դիտվի մեր հասարակության



դեռևս չարժևորված, սակայն իրական առաջընթաց պարունակող մակրոտնտեսական կայունացման ու զարգացման բազային երաշխիք:

Բանն այն է, որ իրականացվող ոչ բավարար տնտեսական քաղաքականության պատճառով սկսած 1992 թ-ից՝ ՀՀ անհրաժեշտ տնտեսական աճը և սոցիալական առաջընթացը հետաձգվել են անորոշ ժամանակով, հանգեցրել մակրոտնտեսական իռացիոնալ կայունության: Դեռևս չեն ապահովվում տնտեսական կայուն աճը գործազրկության ցածր մակարդակում (ներքին հավասարակշռություն) և դրամական միջոցների ցանկալի ներհոսքը (արտաքին հավասարակշռություն) [58]: Այս ամենի ակունքները պետք է փնտրել նաև ՀԶԱԾ-ի հիմնադրույթների բացակայությամբ: ՀԶԱԾ-ի պահանջվածության առումով, ինչպես նշվել է, ոչ պակաս կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ տնտեսության ագրարային հատվածին բնորոշ են անընդհատ ծագող, առաջացող ռիսկերը, որոնք պետք է հնարավորինս չեզոքացվեն:

Կառավարվող ռիսկայնությամբ, բարձր արտադրողականությամբ գյուղատնտեսությանը ներհատուկ է համեմատական առավելությունը: Բարեբախտաբար, ՀՀ-ն կորցրել է երբեմնի համեմատական առավելություններից մեկը՝ էժան աշխատուժի երկիր լինելը: Միջին աշխատավարձը արդեն գերազանցում է 160 հազար դրամը: Մեր ավանդական ռեսուրսների՝ հողի, ջրի, ու մարդկային կապիտալի հնարավորությունների ու տնտեսական բավարար մեխանիզմների գործադրման շնորհիվ Հայաստան երկիրը կարող է վերածվել անդաստանի:

Այս հրապարակման մեջ չենք անդրադառնալու գյուղկոոպերացիայի ու ագրարային տնտեսվարման այլ ձևերի զարգացման, գյուղմթերքների իրացման և, վերջապես, գյուղական բնակավայրերի կայուն զարգացման խնդիրներին, որոնք դարձել են առանձին ուսումնասիրության առարկա [14]: Շատ խնդիրների լուծումը առանձնահատուկ մոտեցումների մշակումներ է պահանջում՝ երբեմն փոխառելով այլ ոլորտների, ինչպես, օրինակ՝ բնական մենաշնորհների կարգավորման մեխանիզմները: Գյուղատնտեսության ոլորտում աննպատակահարմար է յուրաքանչյուր ֆերմերի կցել հակակարկտային իր կայանը, ինչպես անիմաստ է յուրաքանչյուր ջրասպառողի համար առանձին ջրատարի կառուցումը:

Բնական հարց կարող է առաջանալ. ՀԶԱԾ ծրագիրը չի արտացոլվում արդյոք ՀՀ կառավարության կանխագծումներում, հատկապես երբ նրա կողմից ընդունվել է «ՀՀ գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը» հայեցակարգը: Նախ նկատենք, որ ՀԶԱԾ-ն իր բնույթով համալիր նպատակային ծրագիր է, որը կոչված է լինելու ՀՀ համեմատական առավելությունների կարևոր բաղադրիչները տնտեսության մեջ առավելագույնս ներգրավելու, ոլորտում տնտեսական շրջապտույտը վաճառքի և մատակարարման ամբողջական շղթաներով, ժամկետայնության նախանշումով ու իրականացման բավարար մեխանիզմներով ամրագրելու միջոցով, և վերջապես՝ արդյունավետությունը գնահատելով՝ ձեռք բերել առավելագույն արդյունքներ: Երկրորդը՝ հիշատակված փաստաթուղթը դեռևս չի ներառում մոդելներով հիմնավորված արդյունավետ ռեսուրսօգտագործման կանխատեսումային սցենարներ, որոնք կարող են նպաստել երկրի տնտեսական վերելքին՝ երկարատև կայուն տնտեսական աճի նախադրյալներ ստեղծելու առումով:

**ՀՁԱԾ-ի թիրախային հիմնական ուղղությունների** թվում են ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, բնակչության տարաբնակեցման կարգավորումը, աղքատության կրճատումը, ՀՀ-ից ապրանքների ու ծառայությունների արտահանման խթանումը:

**Ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, արտագաղթի կանխումն ու ներգաղթի խրախուսումը<sup>1</sup>:** Անկախության առաջին տասնամյակում ի չիք դարձան նախընթաց 20-ամյակում ձևավորված ՀՀ բնակչության ընդլայնված վերարտադրությունն ապահովող բնութագրական հայտանիշները՝ բնակչության բարենպաստ կառուցվածքը, միջպետական արտագաղթի ոչ մեծ բացասական մնացորդը և այլն, որոնց պատճառով աստիճանաբար առաջացավ ճգնաժամային իրավիճակ: Ստեղծված վիճակը չչտկելու և ճակատագրի քմահաճույքին թողնելու պարագայում կարող են խարխուլվել ազգային անվտանգության հիմքերը:

Բնակչության շարունակվող արտագաղթի աճող ծավալները հանգեցրին այն բանին, որ ՀՀ 2011 թ. Մարդահամարի տվյալների դիտարկման պահին (12 հոկտեմբեր, 2011 թ.) բնակչության թվաքանակը կազմել է ընդամենը 3018,9 հազար մարդ, մինչդեռ եթե չլիներ բնակչության մշտական արտահոսքը, ապա 2012 թ. սկզբին ՀՀ բնակչությունը կկազմեր 3339 հազար մարդ (3213 հազար մարդ՝ ըստ 2001 թ. մարդահամարի + 126 հազար մարդ՝ 2002–2011 թթ. բնակչության բնական աճը): Պայմանավորված 2001 թ. և 2011 թ. մարդահամարների միջև ընկած 10-ամյա ժամանակահատվածում երկրից անընդհատ արտագաղթածների շարժի բնույթով՝ տեղի է ունեցել ըստ սեռի բաշխման և տարիքային կառուցվածքի խաթարում, այդ թվում՝ ծերացման երևույթի ոչ բնական արագացում: ՀՁԱԾ-ի թիրախային ուղղություններից մեկը բնակչության արտագաղթի կանխումն ու ներգաղթի խթանումն է լինելու, քանի որ երբ խորամուխ ենք լինում այն ծնող պատճառների մեջ, տեսանելի են դառնում անհապաղ լուծում պահանջող հիմնախնդրի կարգավորման ուղիները:

Երկրից արտագաղթի պատճառների շարքում են ինչպես արտաժին, այնպես էլ ներքին գործոնները: Արտաժին գործոններից առանձնանում են՝

- տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական մարտահրավերները՝ հատկապես Արցախի չկարգավորված հիմնախնդիրը,
- Հայաստանի ապաշրջափակման հեռանկարի անորոշությունը,
- սոցիալական անարդարությունը և այլն:

Ներքին գործոնները բազմապրոֆիլ են՝ ի պատասխան մեկնելու պատճառների վերաբերյալ՝ հարցվածների 2/3-ը հիմնականում «աշխատանք չկա», «հեռանկար չկա» պատասխաններն է տալիս, ապա հավելում՝ «արդարություն չկա», «ապրուստ չկա»: ՀՁԱԾ-ը այս կենսախնդրի լուծման հարցում կունենա առանցքային նշանակություն:

**ՀՀ տարաբնակեցման համակարգերը** արմատապես փոխվել են. չեն գործում նախկինում կիրառվող վարչահրամայական մեթոդները (գյուղական բնակավայրերում մասնաճյուղերի ստեղծում և այլն), և այդ բացը բավարար չափով չի լրացվում ինքնակազմակերպման ու կառավարման գործընթացներով:

<sup>1</sup> Այս ենթահատվածը շարադրված է տնտեսագիտության թեկնածու Ռ. Եգանյանի հետ համատեղ:

Գյուղական վայրերը մոտավոր հաշվարկներով զբաղեցնում են մեր հանրապետության տարածքի 2/3-ը: Մոտ 950 գյուղական բնակավայրերում ապրում է 1174,1 հազ. մարդ (բնակչության ընդհանուր թվաքանակի 36,0%-ը): Գյուղական տնտեսության հիմնական ճյուղերն են ագրարային հատվածը և անտառային տնտեսությունը, որտեղ, ըստ 2010 թ. տվյալների, զբաղված է գյուղական բնակչության 48%-ը: Արդյունաբերությունում աշխատում է գյուղական բնակչության 12,6%-ը, տրանսպորտի ու կապի ճյուղերում՝ 6,1%-ը, շինարարությունում՝ 3,5%-ը, առևտրի, հասարակական սննդի և արտադրանքի մթերման ոլորտում՝ 9,5%-ը, այլ ճյուղերում (հիմնականում սոցիալական ենթակառուցվածքների ու կառավարման ոլորտներում)՝ 20,3%-ը:

ՀՀ մարզերում նկատվում է առանձին համայնքների դատարկման ու ծնելիության նվազման միտում: 2013 թ. առաջին դասարան չի ձևավորվել Լոռու 6 և Սյունիքի 14 համայնքներում, իսկ 8 համայնք ունի ընդամենը 1 առաջին դասարանցի:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ երկրներում (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա և ուրիշներ) գյուղատնտեսական տարածաշրջան են համարվում 1 քառ. կմ-ի վրա 150 բնակչից պակաս խտությամբ գյուղական համայնքները, և տարածքային մակարդակով առանձնացվում են գյուղական տարածքներ (ապրում է բնակչության 50%-ից ավելին), առավելապես գյուղական տարածքներ (15-50%), առավելապես քաղաքային տարածքներ (15%-ից պակաս): ՀՀ-ում նման չափանիշներ չեն սահմանվել: Այնուամենայնիվ, ՀՀ մարզերի դասակարգումն ըստ ՏՀԶԿ չափանիշների ցույց է տալիս, որ դրանց ճնշող մասը գյուղական է:

Խիստ բազմազան են գյուղական բնակավայրերի գործառույթները.

- արտադրական՝ հասարակության պահանջումներին բավարարումը սննդամթերքով, իսկ արդյունաբերությանը՝ հումքով,
- ազգային-մշակութային ավանդույթների պահպանում և գյուղական բնակավայրերում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանություն,
- բնապահպանական՝ ագրոկենսահամակեցություններում էկոլոգիական հավասարակշռության պահպանում և հանրապետության լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների, արգելավայրերի, ազգային պարկերի և հատուկ պահպանվող այլ տարածքների նկատմամբ պետական հոգաճություն,
- տարածքի նկատմամբ սոցիալական ու անվտանգության հսկողություն:

Վերոհիշյալ գործառույթների իրականացումը ինչպես ողջ հանրապետության, այնպես էլ տնտեսության ագրարային հատվածի հաջող զարգացման կարևորագույն գրավականն է [14, էջ 34, 35, 36]:

Ըստ տարաբնակեցման «մարդակենտրոն» մոտեցման [52] չափանիշների՝ ՀՀԱԾ-ն կարևորագույն նշանակություն է ստանում, քանզի այն նպաստելու է հավասար կենսամիջավայրի ստեղծմանը՝ անկախ բնակավայրի մեծությունից, դիրքից և այն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համեմատաբար բարենպաստ կենսամակարդակը բնութագրական է 2 հազարից ավելի բնակիչ ունեցող համայնքներում: ՀՀ բարձրլեռնային 113 գյուղական համայնքներից միայն 13-ն ունեն 2 հազարից ավելի բնակչություն: ՀՀԱԾ-ն պետք է

առաջադրի ոչ ստանդարտ լուծումներ նշված համայնքների վիճակը բարելավելու առումով:

**Բնակչության աղքատության կրճատումը:** 2000 թ. սկզբներից աղքատության մակարդակն էապես կրճատվեց, փոքրացավ նաև խզումը գյուղական և քաղաքային վայրերի միջև: 21-րդ դարի 1-ին տասնամյակի վերջի տնտեսական ճգնաժամը որոշ չափով չեզոքացրեց նախորդ տարիներին ձեռք բերված դրական արդյունքները: Անհանգստացնող է մեկ այլ կարևոր հանգամանք. առկա 35% աղքատությունը ուղեկցվում է եկամուտների գերբևեռացմամբ. ըստ Ջինիի գործակցի՝ գերբևեռացումը 0,5 մակարդակում է:

Միևնույն ժամանակ, աղքատության մակարդակն էապես տարբեր է մարզային կտրվածքով: Շիրակի մարզը, որը բարձրլեռնային գոտում է, աղքատության տեսակետից ամենախոցելին է: Տավուշի մարզը հանքային ջրերի ու գինեգործության արդյունաբերության և անտառային տնտեսության շնորհիվ առավել բարվոք վիճակում է: Ազգային միջինից ցածր աղքատության մակարդակ ունեցող մարզերն ավելի դիմակայուն եղան 2009 թ. ճգնաժամի հետևանքներին: Պատկերը հակառակն է այն մարզերում, որտեղ աղքատության մակարդակը գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը: Աղքատության մակարդակն առավել բարձր է Լոռու, Վայոց ձորի և Արարատի մարզերում [18]:

Գյուղական աղքատության բարձր մակարդակի պատճառներից են մեկուսացվածությունը և գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածությունը բանուկ հաղորդակցական ուղիներից: Լեռնային համայնքներում գյուղական աղքատության մակարդակն աճում է բարձրությունը զուգահեռ. 1700 մետրից բարձր տարածքներում այն 34,7% է, 1300 մետրից ցածր տարածքներում՝ 27,1%, իսկ 1300–1700 մետր բարձրություններում՝ 29,5%: Հողատարածքից զուրկ գյուղական բնակչության շրջանում աղքատությունը 40,6% է, մինչև 0,2 հա հողատարածք ունեցողների աղքատությունը չի գերազանցում 30%-ը:

Նշված հիմնախնդիրները մատնանշում են տարածքային զարգացման նպատակայնության բարձրացման կարևորությունը: Լեռնային, նախալեռնային և սահմանամերձ բնակավայրերի համար կիրառելի են ԵՄ-ի գյուղական տարածքների զարգացման քաղաքականությունը և ԵՄ-ի ներազդման գործիքակազմը. 1) նպատակային զանազան արտադրական ներդրումային ծրագրեր, 2) տարածքների հասանելիության և կենցաղային պայմանների որակի բարելավմանը նպաստող ծրագրերում և ենթակառուցվածքներում պետական ներդրումներ, 3) բնական դժվար պայմաններ ունեցող բնակչության ծանր կենսավիճակը մեղմելու նպատակով պետության կողմից տրամադրվող նյութական փոխհատուցում և այդ տարածքներում ֆերմերային տնտեսությունների էկոլոգիապես մաքուր արտադրությունը պահպանելու նպատակով պետական ֆինանսավորում:

**Արտահանման խթանումը:** Ներկայումս ՀՀ արտահանումը հիմնված է ռեսուրսատար ապրանքների վրա: Ընդամենը երեք հիմնական ապրանքախմբերով (մետաղներ, թանկարժեք քարեր, ալկոհոլային խմիչքներ) ապահովվում է արտահանման ավելի քան երկու երրորդը:

Արտահանման ծավալներում հանքանյութի և մետաղների մասնաբաժնի ցուցանիշով Հայաստանն ամենաբարձր դիրքերում է: Իրավիճակը խիստ փխրուն է դարձնում այս ուղղությամբ արտահանման ընդլայնման միտումը. նկատի ունենք համաշխարհային շուկայում չվերամշակված հանքանյութի և մետաղների գների հնարավոր փոփոխությունները: Արտահանման առաջանցիկ աճի հնարավորությունները կարելի է տեսնել ստորև բերված 7.3 աղյուսակում: Գյուղատնտեսական արտադրանքի, պատրաստի սննդամթերքի և շինանյութերի արտադրությունները աճի մեծ ներուժ են պարունակում: Առանձնակի դերակատարում է վերապահվելու ՀՀԱԾ-ի վերամշակող, գյուղատնտեսական արտադրություններին, այդ թվում՝ խոշորամասշտաբ ջերմոցային տնտեսություններին:

**Աղյուսակ 7.3.** *Արտահանման տեսակարար կշիռը համապարասխան ճյուղերի համախառն թողարկման մեջ 2006–2010 թթթ., %*

Արտադրանքի տեսակը	2006	2007	2008	2009	2010
Գյուղատնտեսական արտադրանք	2,0	1,5	1,5	2,3	2,3
Պատրաստի սննդամթերք	19,4	22,3	20,4	5,5	17,6
Հանքահումքային արտադրանք	50,1	51,8	50,1	57,0	71,0
Շինանյութ	12,5	18,0	9,0	12,6	12,1
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	97,9	97,5	85,7	79,7	87,8

Աղբյուրը՝ [76]

Արտաքին ապրանքաշրջանառության մեջ գյուղատնտեսական արտադրատեսակների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 20%:

ՀՀ արտահանման միջին հակվածության մակարդակը սուսկ ձևավորված ճյուղային կառուցվածքի հետևանք չէ: Ի վերջո՝ հավելյալ տնտեսական աճի պայմաններ պետք է ստեղծվեն ավանդաբար արտահանելի հատվածը ներկայացնող հանքահումքային, ֆինանսական, ծրագրավորման ծառայությունների և այլ ոլորտներում, քանի որ արտադրողականության միջազգային տարբերությունները արտացոլվում են հենց արտահանելի հատվածում: Արտահանման հակվածության արդյունարար պատկերացում կարելի է ունենալ համապատասխան ցուցանիշների միջոցով, որը բերված է աղյուսակ 7.4-ում:

Արտաքին առևտրաշրջանառության ծավալների ավելացմանն ու կառուցվածքի բարելավմանն ուղղված հիմնարար լուծումները, ինստիտուցիոնալ խնդիրներին զուգահեռ, պահանջում են երաշխավորությունների մշակում այնպիսի համալուծ հիմնախնդիրների շրջանակում, ինչպիսիք են՝

- ֆինանսական միջնորդման ավելացմամբ տոկոսադրույքի և փոխարժեքի լծակների արդյունավետ փոխգործակցումը այն հաշվով, որ հնարավորինս թուլացվի փոխարժեքի ազդեցությունը,

- «անհնարինության երրորդություն» խնդրի լուծումը, երբ անհրաժեշտ է դառնում ընտրություն կատարելու կապիտալի սահմանափակումների, փոխարժեքի կայունության և գնաճի կայունության միջև [13, էջ 18, 19, 20]:

Այս բնագավառում որոշակի գործ արդեն արվում է: ՀՀ կառավարության գերակայություններում ներառված է արտահանմանը միտված արդյունաբերական քաղաքականության իրականացումը, ընտրված են արտահանման առաջնային ոլորտները:

**Աղյուսակ 7.4. Արտահանման հակվածությունը (ապրանքների ու ծառայությունների արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում) և շնչային ՀՆԱ-ն ՀՀ սահմանակից և Մաքսային միության անդամ երկրներում ու Իսրայելում**

Երկիրը	Արտահանման հակվածությունը					ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով՝ ըստ գնողունակության համարժեքության (\$)				
	1998	2008	2010	2011	2012	1998	2008	2010	2011	2012
Հայաստան	19,0	15,0	20,8	23,8	25,1	1779	8055	7242	7730	8417
Ադրբեջան	22,7	65,8	54,3	56,4	53,7	1821	8653	9800	9869	10125
Վրաստան	16,5	28,6	35,0	36,3	38,4	2018	4872	5002	5417	5806
Թուրքիա	21,3	23,9	21,2	24,0	26,4	8730	15178	15965	17242	18348
Իրան	13,6	30	28	29	18	6161	11159	12677	13174	12986
ՌԴ	31,2	31,3	29,2	30,4	29,4	5493	20276	20770	22408	23501
Ղազախստան	30,3	57,2	44,0	49,5	47,6	4063	11293	12010	12977	13667
Բելառուս	59,1	60,9	54,3	81,1	81,6	4529	12455	13758	14826	15327
Իսրայել	29,9	40,3	35,0	35,5	36,2	20891	25600	28818	30622	31869

Աղբյուրը՝ World Bank, World Development Indicators 2013: Իրանի արտահանման հակվածության 2008–2012 թթ. տվյալները՝ ըստ United Nations, National Accounts Main Aggregates Database, 2013: Իրանի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 2010–2012 թթ. տվյալները՝ ըստ IMF, World Economic Outlook Database 2013:

Ակնհայտ է, որ արտահանման ընդլայնման հիմնախնդիրը հնարավոր է լուծել նախ մեր ունեցած մարդկային, հողային, ջրային ռեսուրսներն առավել գործադրելու միջոցով, որին պետք է ուղղված լինի բանկային և ֆինանսական ենթակառուցվածքների գործունեությունը: Արտահանումը պետք է խթանել էժան փոխառու միջոցներով՝ արտոնագրային, ապահովագրական, լիզինգային և ներազդման այլ լծակներով (օրինակ՝ հարկային ոլորտում շահութահարկերի դրույքաչափերը իջեցնելով՝ պայմանավորված թողարկման արտահանելի ծավալով): Նպատակադրումը ենթադրում է արտահանման տեմպերի առաջանցիկություն ՀՆԱ-ից այն հաշվով, որ առաջիկա 10–15 տարիների կտրվածքով արտահանման ծավալները կազմեն ՀՆԱ-ի 30–40%-ը (ներկայիս 10%-ի փոխարեն):

ՀՀ կառավարության ծրագրի հաջող իրագործման գրավականը պետք է լինի նաև այնպիսի ենթակառուցվածքների ստեղծումը, որոնք կնպաստեն դրան մասնավորապես *պեդրություն — մասնավոր հարված* համագործակցության շրջանակներում:

**ՀԶԱԾ պաշարամիջոցները: Հողային ռեսուրսները:** ՀՀ-ն բնութագրվում է առավել լեռնային բնապատկերով, սահմանափակ գյուղատնտեսական նշանակության հողերով՝ 2,1 մլն հա՝ երկրի 2,97 մլն հա հողատարածքից:

Մինչև հողի լայնածավալ մասնավորեցումը, ի դեպ, մեր երկիրն առաջինն էր ԱՊՀ տարածքում. 1990 թ. դրությամբ հողօգտագործումը իրականացվում էր 283 կոլտնտեսություններում (գբաղեցնում էին 628 հազ. հա, մեկ կոլտնտեսությանը բաժին էր ընկնում միջինը 2219,1 հա) և 628 սովխոզներում (յուրաքանչյուրը՝ միջինը 2610,9 հա հողակտոր): Կոլտնտեսությունների ու սովխոզների տնօրինությանն էր տրված 2267 հազ. հա, այսինքն՝ հանրապետության ընդհանուր տարածքի 76,3%-ը: Թվերը ցույց են տալիս, որ նախքան մասնավորեցումը հողակտորներն ըստ չափերի ու կառուցվածքի առումով առավել արդյունավետ էին:

1997 թ. հողի հաշվեկշռի համաձայն՝ ՀՀ հողային ֆոնդը ներառում էր գյուղատնտեսության հողեր՝ 1329638 հա ընդհանուր տարածքով: Մասնավորեցված հողերի շուրջ 78%-ը բաժանված էր 2-4 հողակտորների, և այն մտայնությունը, որ տնտեսությունների միջև կունենանք մրցակցություն, շատ պարզունակ էր, քանի որ կրճատվեց դրանց մշակման արդյունավետությունը, հետևաբար՝ արտադրողականությունը: Մեկ ամբողջական հողակտոր ուներ 332 հազար գյուղացիական տնտեսություններից ընդամենը 4,7%-ը: **Հողակտորների մասնատվածությունը** արդյունավետ հողօգտագործման լուրջ խոչընդոտ է դարձել:

Հողակտորների մասնատվածության հիմնախնդրի լուծումը իրագործելի է հողի շուկաների գործառնման միջոցով (հատկապես վարձակալական ձևի կիրառմամբ): Այս ասպարեզում վերջին տարիներին նկատվում է պահանջարկի աշխուժացում, չնայած արժանահավատ վիճակագրությունը բացակայում է:

Հողերի լքվածությունն ու թերօգտագործումը (օգտագործվում է ընդհանուր վարելահողերի ընդամենը երկու երրորդը, գյուղնշանակության հողերի մոտ 20%-ը անմշակ է, մարգագետինների միայն 55-60%-ն է հնձվում և այլն): Չնայած արոտավայրերի հարաբերական առատությանը՝ հողագործության համեմատ անասնաբուծության թույլ զարգացվածությունը կառուցվածքային և սոցիալ-տնտեսական պատճառների հետևանք է [13]: Այս հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները պետք է վերհանվեն ու ներառվեն ՀԶԱԾ-ում՝ լայնորեն կիրառելով դրական միջազգային փորձը: Այս առումով դիտարժան են որոշ երկրների (հարևան սահմանակից, Մաքսային միության և Իսրայելի) համեմատական բնութագրերը գյուղատնտեսական հիմնական ցուցանիշների կտրվածքով (տես աղյուսակ 7.5):

Աղյուսակ 7.5. Գյուղատնտեսական հիմնական ցուցանիշները որոշ երկրներում 2011 թ.

N	Ցուցանիշ	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան	Իրան	Թուրքիա	ՌԴ	Բելառուս	Ղազախստան	Իսրայել
1	Հողային տարածքներ (կմ <sup>2</sup> )	28480	69490	82658	1628550	769630	16376870	202910	2699700	21640
2	Գյուղատնտեսական հողերի տեսակարար կշիռը ընդհանուր տարածքում (%)	60,1	35,5	57,7	30,1	49,7	13,1	43,7	77,5	24,1
3	1 շնչին ընկնող վարելահողերը (հա)	0,15	0,09	0,21	0,23	0,28	0,85	0,58	1,45	0,04
4	Վարելահողերի տեսակարար կշիռը ընդհանուր տարածքի մեջ (%)	15,1	6	22,8	10,8	26,7	7,4	27,2	8,9	14
5	Գյուղատնտեսության ավելացրած արժեքը ՀՆԱ-ում (%)	21	9	6	-	9	4	10	6	-
6	1 աշխատողի հաշվով գյուղատնտեսության ավելացրած արժեքը (2005 թ. ԱՄՆ դոլարով)	6942	2531	1379	-	6264	6257	7924	4223	-
7	Գյուղական բնակչության տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության մեջ (%)	36	47	46	31	28	26	25	46	8
8	Զբաղվածությունը գյուղատնտեսությունում (% ընդհանուր զբաղվածների)	39 1	-	38	19,5 2	24	10*	-	27	2*
9	Անասնապահական արտադրության ինդեքս (2004-2006 թթ. 100%)	120,8	70,4	154	98,3	138,7	121	134,7	117,5	112,1
10	Գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ վարելահողերի 100 կմ <sup>2</sup> հաշվով	325 1	-	-	148,6 2	547,5 3	27,1*	86,8*	-	-

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայք. <http://data.worldbank.org/indicator>

\* Բերված են 2009 թ. տվյալները:

\* Բերված են 2010 թ. տվյալները:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք. <http://armstat.am>:

Իրև վիճակագրական ծառայության պաշտոնական կայք. <http://amar.sci.org.ir>:

Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի պաշտոնական կայք. <http://www.turkstat.gov.tr>:



**Ջրային ռեսուրսները:** Դեռևս 2000 թ. խմելու ջրի առաջարկը և պահանջարկը համաշխարհային մասշտաբով հավասարվեցին, և այժմ առաջանցիկ պահանջարկով անհավասարակշռվածությունը տարեցտարի մեծանում է: Այս ամենը վկայում է ջրի՝ որպես անփոխարինելի բնական ռեսուրսի կարևորության մասին: Ջրի պահանջարկը ժամանակի ընթացքում անընդհատ աճում է, և աշխարհի մի շարք տարածաշրջաններում հաճախադեպ են դարձել միջպետական բախումները ջրի համար:

Հայաստանի Հանրապետության հարաբերական և տարածաշրջանային կարևորագույն առավելություններից մեկը ստորերկրյա և մակերևութային ջրերն են: Բավական է նշել, որ ՀՀ տարածքում տարեկան ձևավորվում է (առանց ստորերկրյա պաշարների) 7,5 մլրդ խոր. մ ջուր, որից օգտագործվում է ընդամենը 2,5 միլիարդը: Ստրատեգիական այդ ռեսուրսի մնացած քանակությունը, փաստորեն, «արտահանվում է» հարևան երկրներ գրոյական գնով: Այս ամենը թելադրում է Հայաստանի Հանրապետությունում ունենալ ՀԶԱԾ-ի շրջանակներում գործող ջրային ռեսուրսների օգտագործման և կառավարման ենթաձրագիր, որտեղ կսահմանվեն այն միջոցառումները, որոնց իրականացմամբ կարելի է հասնել ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման:

Ջրօգտագործման բնագավառում առանձնակի կարևորություն է ստանում ՀՀ-ից խմելու ջրի արտահանման ծավալների ավելացումը [17]: Խմելու ջուրը արտերկրում դարձել է ռազմավարական կարևոր ապրանքատեսակներից մեկը (1 լ վաճառվում է 0,37 դոլար մանրածախ գնով), իսկ պահանջարկը աշխարհում անընդհատ ավելանում է: Կանխատեսվում է, որ 2011–2021 թթ. շալցված ջրի համաշխարհային ծավալը հասնելու է 440 մլրդ լ կամ աճելու է շուրջ 170%-ով:

Ջրօգտագործման էֆեկտը ակնառու է դառնում տնտեսական բազմապատկման հետևյալ օրինակով՝ 10 մլրդ լ արտահանման դեպքում կունենանք 3,7 մլրդ դոլարի ներհոսք: Այն ՀՀ արտահանման 2012 թ. ամբողջ ծավալի բերած եկամուտը կգերազանցի ավելի քան 2,5 անգամ: Եթե հանրապետությունից խմելու ջրի արտահանման ծավալը հասցվի 10 մլրդ լիտրի, ապա այն կկազմի համաշխարհային շուկայի խմելու ջրի 3,3%-ից մինչև 2,3%-ը (2021 թ. պահանջարկի դեպքում):

ՀՀ-ից արտահանվող խմելու ջրի ծավալների կտրուկ ավելացման և այդ նպատակներին հասնելու տարաբնույթ հիմնախնդիրների շարքում կարևորվելու են հայկական խմելու ջրերի արտահանման ներուժի գույքագրումը, շուկաների բացահայտումը, պահանջարկի մարքեթինգը, սպառողների խմբերի սեգմենտավորումը և մատուցվող (վաճառվող) խմելու ջրի տեսակի (գազավորված թե անգազ) ու տարայի ծավալի մեծության ընտրությունը, առևտրային կազմակերպությունների հետ խմելու ջրերի վաճառքի երկարաժամկետ պայմանագրերի կնքումը, ըստ ժամկետայնության շուկայի սեգմենտավորումը, տրանսպորտային միջոցների ընտրությունը, խմելու ջուր շալցնող կազմակերպությունների հետ պայմանավորվածությունների ձեռքբերումը և այլն:

Հայկական խմելու ջրերի արտահանումն ընդլայնելու ու խթանելու ուղիների հարցը քննարկելիս կարող են դիտարկվել.

- Արտահանում՝ ներկայումս գործող պայմաններով և սխեմաներով:

- Արտահանում՝ իզոթերմիկ-իզոբար վազոն-ցիստեռններով: Այս պրակտիկան գործել է նախկին ԽՍՀՄ օրոք, երբ հայկական հանքային ջրերը իզոթերմիկ-իզոբար ցիստեռն-վազոններով (60 տ տարողությամբ) Հայաստանից տեղափոխվում և շալցվում էին Միտիշչիի ոչ ալկոհոլային խմիչքների գործարանում: Նկատենք նաև, որ Ռուսաստանի եվրոպական մասում խմելու հանքային ջրեր չկան, ուստի հայկական հանքային ջրերը մեծ պահանջարկ կունենան ՌԴ-ում՝ հատկապես խոշոր մետալուրգիական կազմակերպություններում:
- Հանքային ջրերից կորզել դրանց կազմի մեջ մտնող հանքային նյութերը և արտահանել: Հանքային նյութերի առանձնացման տեխնոլոգիան մշակել են հարևան Վրաստանում, ըստ որի՝ մեծ արագությամբ պտտվող սկավառակի վրա վերևից կաթում է հանքային ջուրը, ջրի և պտտվող սկավառակի «հանդիպման» շնորհիվ կաթիլները բաժանվում են հազարավոր մասնիկների և «ցրվում», իսկ բարձր ջերմաստիճանի պայմաններում ջուրը գոլորշանում է, իսկ ջրում եղած հանքային նյութերը փոշու տեսքով «նստում» են սարքի հատակին: Ստացված փոշին կարող է սպառման կամ օգտագործման վայրերում լուծվել ջրում և օգտագործվել խմելու կամ բուժական լոգանք ընդունելու համար: Հանքային ջրերից նյութերի կորզումը աչքի է ընկնում բարձր արդյունավետությամբ, քանի որ 0,5 և հանքային ջրից անջատվում է 3-5 գ հանքային նյութ: Բացի այդ՝ հանքային ջրերը ապակյա շերտով տեղափոխելու համար անհրաժեշտ են երկաթուղային վազոնները, իսկ դա 600 կմ-ից ավելի հեռավորության դեպքում տնտեսապես ձեռնառու չէ:
- Հայկական խմելու ջրերը կարող են սպառման շուկա հասցվել նաև խողովակաշարերով: Նման եղանակով ՀՀ-ից հատկապես դեպի արաբական աշխարհի երկրներ փոխադրված ջուրը կարող է ավելի փոքր ծավալներով հասցվել սպառողին՝ տեղում կազմակերպելով դրանց տարայավորումը: Ամեն դեպքում խմելու ջրի արտահանման այս կամ այն եղանակի ընտրությունը պետք է հիմնավորվի համապատասխան մասնագիտական հաշվարկներով:

Սևանա լճի քաղցրահամ ջրի ծավալները երաշխիքն են, որ ՀՀ-ն ի վիճակի է ապահովելու արտահանվող խմելու ջրի մեծ ծավալներ՝ ջուրը դարձնելով արտահանման գերակա ճյուղերից մեկը և ՀՀ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման կարևորագույն աղբյուր [1, էջ 615]:

**Հայաստանի հելիոֆիկացիան և գյուղատնտեսությունը:** Տնտեսության շեշտակի վերելքի ակնկալությունը իրապես պայմանավորված է բարձր արտադրողականության ու արդիական տեխնոլոգիաներ կիրառող ճյուղերով, որը բնավ չի նշանակում, որ գյուղատնտեսությանը պետք չէ այդ ամենը: Հանդիսանալով արդյունաբերական հեղափոխությունների առաջամարտիկը՝ գյուղատնտեսությունը չի կորցրել իր գեներացնող դերը հետինդուստրիալ տնտեսություններում: Գենային ճարտարագիտության, կենսատեխնոլոգիաների ու ինտենսիվ տեխնոլոգիաների (էլեկտրոնիկա, ռոբոտատեխնիկա և այլն) ներդրմանը զուգընթաց չպետք է անտեսել հելիոֆիկացիայի նպաստավոր հնարավորությունները:

Արևային տեխնիկայի զարգացման հայկական տարբերակը<sup>1</sup> էապես տարբերվում է այլ երկրներում կատարվող աշխատանքներից առաջին հերթին իր մոտիվացիայով: Եթե համաշխարհային տնտեսության մեջ այն դիտվում է որպես գործող ատոմակայանների և ջերմակայանների այլընտրանք, և միաժամանակ արևային էներգետիկան ուղղորդվում է դեպի էներգախնայողության ռեժիմ, ապա հայկական տարբերակում շեշտը դրվում է արևային տեխնիկայի տեխնոլոգիական առանձնահատկությունների վրա: Մասնավորապես.

- Հելիոտեխնիկան՝ որպես գյուղատնտեսության մեջ կիրառելի բարձր տեխնոլոգիա՝ գյուղմթերքներ վերամշակելու և էլիտար շուկաներին էկոլոգիապես մաքուր սննդամթերք մատակարարելու համար:
- Ֆունիգացիայի և թունաքիմիկատների ակտիվացման համար էկոլոգիապես մաքուր և հասանելի միջոց:
- Հեռավոր և սահմանամերձ գյուղերում արտադրված գյուղմթերքները նախնական վերամշակումից հետո ստացված կիսաֆաբրիկատ խտանյութերը ապրանքային վերջնական տեսքի բերելու նպատակով վերամշակող կազմակերպություններ տեղափոխելու համար տեխնոլոգիապես նախընտրելի ձև:
- Գյուղում սոցիալ-տնտեսական և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման միջոց, աղբահանությունն ու աղբի վերամշակումը տեղում կազմակերպելու ձև, դպրոցների, հիվանդանոցների ու մանկապարտեզների ջեռուցման էժան և հուսալի եղանակ:
- Ոռոգման ընդհանուր համակարգերի անխափան աշխատանքը ապահովելու և գյուղատնտեսության մեջ կաթիլային ոռոգման եղանակը ներդնելու հասանելի միջոց:
- Գոմաղբից էժան և բարձրորակ բիոպարարտանյութեր ստանալու տեխնոլոգիա:
- Կիոտոյի համաձայնագրի սահմաններում ածխաթթու գազի արտանետումների նվազեցում և այրվող թթվածնի խնայում:

Կան արևային տեխնիկան և տեխնոլոգիաները գյուղատնտեսության մեջ կիրառելու բազմաթիվ այլ ուղղություններ, որոնց զարգացումը թույլ կտա օգտագործել նաև հարևան երկրների, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության և Իրանի գյուղմթերքների հսկայածավալ հումքային բազան՝ դեպի աշխարհի էլիտար շուկաներ էկոլոգիապես մաքուր սնունդ առաքելու համար:

Արդեն առկա են արևային տեխնոլոգիաների կիրառմամբ «Արևային քաղցրավենիքի», «Արևային խտացրած կաթի», «Արևային պանրի», «Արևային հյութերի», «Արևային մուրաբաների», «Արևային կոնյակի», «Արևային լավաշի» և այլնի գանգվածային արտադրություններ կազմակերպելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները: Մեծ հեռանկար է խոստանում տարբեր երկրների լողափերում և տուրիստական կենտրոններում «Հայկական արևային խոհանոցներ» կազմակերպելու գաղափարը: Միայն այստեղ օգտագործվելիք արևային տեխ-

<sup>1</sup> Այն մշակվում է և գործնական կիրառությունների փորձարարական փուլում է, որը ղեկավարվում է տեխնիկական գիտությունների դոկտոր Վ. Համազասայանի կողմից:

Նիկայի շուկայի ծավալները ահռելի են: Գյուղի և գյուղատնտեսության հելիոֆիկացիան հնարավոր չէ պատկերացնել առանց ժամանակակից հելիոտեխնիկական արդյունաբերության, որը հելիոֆիկացիայի ծրագրի հեղինակները մտադիր են կազմակերպել աղետի գոտում: Հելիոֆիկացիան Հայաստանին հնարավորություն կընձեռի լուծելու իր էներգետիկ անվտանգության խնդիրները, ստանալու արևի «կանաչ» էներգիա:

**ՀՁԱԾ-ի իրականացման ճանապարհային քարտեզը:** ՀՁԱԾ-ի վերջնականատակը ռեսուրսների արդյունավետ օգտագործումն է՝ հողի, ջրի, արևի ու մարդկային կապիտալի բաղադրիչներով:

Իր ընդգրկունությամբ և վերը նախանշված թիրախային ուղղությունների նպատակայնությամբ ՀՁԱԾ-ն կարող է հավակնել «Ազգային պետական ծրագիր» կարգավիճակին: Ծրագիրը ենթադրվում է իրագործել հետևյալ համալուծ խնդիրների միջոցով.

- ՀՁԱԾ-ի հայեցակարգի և ծրագրի մշակում,
- ՀՁԱԾ-ի կենսագործումը կազմակերպելու խնդիրների (ամրագրված միջոցառումների պլանով) մշակում, որում արտացոլված կլինեն իրականացնող ինստիտուտները, ֆինանսական ապահովման աղբյուրները և սպասվելիք արդյունքները՝ ըստ ժամկետների:

ՀՁԱԾ գործարկման լավագույն միջոց կարող է լինել Պետական ներդրումային հիմնադրամի ստեղծումը, որը մասնակցություն կունենա մասնավոր հատվածի ներդրումային այնպիսի բիզնես նախագծերում, որոնք նպատակաուղղված կլինեն նաև արտահանման աճին: Նմանատիպ ծրագիր պետականորեն կյանքի է կոչվել Իսրայելում 1993 թ.՝ ՅՈՋՄԱ անունով, սատարել է վենչուրային ու մասնավոր բաժնեմասնակցային նախաձեռնությունները:

Առաջադրվող ՀՁԱԾ ազգային պետական ծրագրի կենսագործման համար հանրապետությունում առկա է գիտական սպասարկման անհրաժեշտ ներուժը:

### 7.3. Խմելու ջուրը որպես միջազգային առևտրի ապրանք.

#### ՀՀ արտահանման հնարավորությունները

Առանձին ապրանքատեսակների և ծառայությունների համաշխարհային շուկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես վերջին 20-30 տարիների ընթացքում այդ ոլորտում տեղի են ունեցել խոր և համապարփակ փոփոխություններ: Պահանջարկից կախված՝ երևան են եկել նոր ապրանքատեսակներ, և ընդհակառակը՝ պահանջարկ չունենալու պատճառով դրանց մի մասը աստիճանաբար «հեռանում» է շուկայից:

Վերջին տարիների համաշխարհային շուկայի կարևոր ապրանքատեսակներից է խմելու ջուրը, որը հետզհետե ավելի ու ավելի մեծ ծավալներ և հատվածներ է գրավում ամենատարբեր երկրների արտահանման ու ներմուծման ապրանքաշրջանառության մեջ: Կարող ենք նաև համոզված պնդել, որ առաջիկայում ևս խմելու ջրի ծավալները զգալիորեն կավելանան: Ակներև է այն փաստը, որ առանձին երկրներում խմելու ջրով բնակչության պահանջմունք-

Ների բավարարումը խիստ խնդրահարույց է, և այդ երկրներն ամենատարբեր ուղիներ են փնտրում այդ հիմնախնդիրը լուծելու համար: Օրինակ՝ 1970–ական թվականներին արաբական երկրների պահանջարկը խմելու ջրով բավարարելու ուղիների մեջ նշվում էին Անտարկտիդայի այսբերգները, որոնք քաշելով հասցնում էին մինչև Արաբական թերակղզի և դրանք շշալցնելով հասցնում բնակչությանը: Մյուս կողմից էլ այն երկրները, որոնք հարուստ են խմելու ջրի պաշարներով, կարող են օգտվել համաշխարհային շուկայում ստեղծված իրավիճակից և դրանցից ստանալ արտարժույթային մուտքեր, ինչն անհրաժեշտ է հանրապետության արտաքին առևտրի բացասական մնացորդը նվազեցնելու համար: Բավական է նշել, որ 2008 թ. ՀՀ–ից արտահանման ծավալը կազմել է 1057,2 մլն դոլար, ներմուծմանը՝ 4426,1 մլն դոլար (արտաքին առևտրի բացասական մնացորդը կազմել է 3368,9 մլն դոլար), 2009 թ. այդ մեծությունները կազմել են համապատասխանաբար 710,2 մլն դոլար, 3321,1 մլն դոլար (բացասական մնացորդը՝ 2610,9 մլն դոլար), 2010 թ.՝ 1041,1 մլն դոլար, 3749,0 մլն դոլար (մնացորդը՝ -2707,9 մլն դոլար), 2011 թ.՝ 1334,3 մլն դոլար, 4145,3 մլն դոլար, (մնացորդը՝ -2811,0 մլն դոլար) [23, էջ 23], 2012 թ.՝ 1380,2 մլն դոլար, 4261,2 մլն դոլար, (մնացորդը՝ -2881,0 մլն դոլար) 2013 թ.՝ 1480,0 մլն դոլար, 4476,8 մլն դոլար (մնացորդը՝ -2996,8 մլն դոլար) [35]:

**ա) Խմելու ջրի շշալցման համաշխարհային զարգացումները և կանխապետումները**

1. ՀՀ–ից խմելու ջրի արտահանման հնարավորությունների ընդլայնման տեսանկյունից կարևոր է, որ ներկայացնենք դրա համաշխարհային շուկայում տեղի ունեցող զարգացումները, և դրանց համահունչ քննարկենք շշալցվող ջրի սպառման դինամիկան: Համաշխարհային ուրբանիզացիայի և էկոլոգիական աղտոտվածության աճին զուգահեռ՝ այսօր ամբողջ աշխարհում խմելու ջրի խնդիրն ավելի ու ավելի է սրվում, ինչի արդյունքում շշալցված ջուրը դառնում է պահանջված ապրանք, իսկ դրա արտադրությունը՝ շահութաբեր ու հեռանկարային բիզնեսի ճյուղ: Խմելու ջուրն այն հազվագյուտ ռեսուրսներից է, որով հարուստ է մեր երկիրը: Խմելու ջրի, մասնավորապես շշալցված ջրի արտադրությունը մեր երկրում սկսում է նոր մասշտաբներ ու որակներ ձեռք բերել: Վերջին շրջանում շուկայի այս հատվածում նկատվում է մրցակցության սրում, նոր խաղորդներ են ի հայտ գալիս, ինչն էլ հանգեցնում է շուկայի հազեցվածության մակարդակի բարձրացմանը: Այնուամենայնիվ, մենք դեռևս շշալցված ջուրը համաշխարհային շուկայում ներկայացնելու չլուծված խնդիր ունենք, ինչը հատկապես կարևոր է համաշխարհային շուկայի իրավիճակի շատ արագ փոխվելու համատեքստում: Վերջին 10 տարիների ընթացքում շշալցված ջրի սպառումն աշխարհում աճել է ավելի քան 2,4 անգամ՝ 90 մլրդ լիտրից (1999 թ.) հասնելով 215 մլրդ լիտրի (2009 թ.), իսկ շուկայի ծավալը գումարային արտահայտությամբ այդ նույն ժամանակահատվածում աճել է ավելի առաջանցիկ տեմպերով՝ 22 մլրդ դոլարից հասնելով 80 մլրդ դոլարի, այսինքն՝ ավելի քան 3,6 անգամ: Սա նշանակում է, որ տեղի է ունեցել խմելու ջրի զգալի թանկացում: Ըստ այդմ, եթե 1999 թ. 1 լիտր շշալցված ջուրը միջինը արժեցել է 0,24 դոլար, ապա 10 տարի

անց՝ 0,37 դոլար: Ի դեպ՝ 2009 թ. դոլար/դրամ միջին փոխարժեքով այն կազմել է շուրջ 135 դրամ կամ 0,34 դոլար<sup>1</sup>: Հայաստանում 1 լիտրի արժեքը տարբեր տարողության տարաների, ինչպես նաև տարբեր ապրանքանիշերի դեպքում տատանվում է 80–240 դրամի սահմաններում, իսկ ավելի շատ սպառվում են հենց 0,5 լիտր տարողությամբ տարաները, որոնց արժեքը տատանվում է 100–150 դրամի սահմաններում (1 լիտրը՝ 200–300 դրամ կամ դոլարի ներկայիս կուրսով՝ 0,48–0,71 դոլար): Այսինքն՝ շալցված ջրի գինը միջազգային շուկաներում գրեթե 1,5–2 անգամ ավելի էժան է հայկական շուկայում գործող առկա գներից: Սա նշանակում է, որ «ջրերի երկիր» Հայաստանում ջուրը վաճառվում է «միջազգային գնային չափանիշներից» զգալիորեն թանկ: Այսպիսով՝ աշխարհում մեկ մարդու կողմից միջինը սպառվում է տարեկան 32 լիտր շալցված ջուր, որի համար ծախսվում է 12 դոլարին համարժեք գումար: Առանձին երկրներում մեկ շնչին բաժին է ընկնում ավելի քան 230 լիտր շալցված ջուր: Փորձագետների գնահատականներով՝ առաջիկա տարիներին ևս շալցված ջրի նկատմամբ պահանջարկը շարունակելու է աճել, քանի որ ողջ աշխարհում խմելու ջրի խնդիրն ավելի է սրվում, իսկ երկրների կառավարությունները պարզապես ի վիճակի չեն հաղթահարելու այդ խնդիրները [72]:

Ըստ Beverage Marketing Corporation-ի՝ աշխարհում շալցված ջրերի ամենանմեծ շուկան ԱՄՆ-ն է՝ շուրջ 16% մասնաբաժնով: Ընդհանուր առմամբ Հյուսիսային Ամերիկային բաժին է ընկնում համաշխարհային իրացման 30,3%-ը: Մեծությամբ երկրորդ աշխարհամասը Եվրոպան է՝ 28,9% մասնաբաժնով, 27,1%-ը բաժին է ընկնում Ասիային և միայն 13,7%-ը՝ մնացյալ աշխարհին: Թեև ավանդաբար շալցված ջրերի շուկայում թելադրող են եղել զարգացած երկրները, այնուամենայնիվ, վերջին տասնամյակի ընթացքում սկսել են իրենց խոսքն ասել նաև զարգացող երկրները: Միայն 2005–2008 թթ. ընկած ժամանակահատվածում ավելի քան 2 անգամ աճել է Չինաստանի պահանջարկն այս ապրանքատեսակի նկատմամբ, նույն ժամանակահատվածում Ինդոնեզիայի աճը կազմել է 1,6, իսկ Մեքսիկայինը՝ 1,5 անգամ: Ի դեպ՝ վերջինս համարվում է մեկ շնչի հաշվարկով շալցված ջրի սպառումով առաջատարն աշխարհում, և ըստ վիճակագրական տվյալների՝ 2009 թ. այս երկրում այդ ցուցանիշը կազմել է ավելի քան 230 լիտր: Նույն ցուցանիշով աշխարհի առաջատար երկրներից են Արևմտյան Եվրոպայի երկրները՝ Իտալիան, Բելգիան, Գերմանիան, Ֆրանսիան, Իսպանիան: Շալցված ջուր շատ են խմում նաև Մերձավոր Արևելքի երկրներում՝ ԱՄԷ, Լիբանան, Կատար, Սաուդյան Արաբիա և այլն [73]:

Ընդհանուր առմամբ համաշխարհային շուկայում ունեցած տեսակարար կշռի առումով աշխարհի առաջատար 6 երկրներից 4-ը զարգացող երկրներն են: Զարմանալին Մեքսիկայի 2-րդ տեղում գտնվելն է և Չինաստանի «լրջագույն հավակնությունները»:

Եվ չնայած շալցված ջրերի համաշխարհային շուկան ծավալային առումով շատ արագ փոխում է իր աշխարհագրությունը՝ Եվրոպական երկրներին զրկե-

<sup>1</sup> 2009 թվականին դրամ/դոլար միջին տարեկան փոխարժեքը կազմել է 363,28 [20]: Համեմատության համար նշենք, որ այդ մեծությունը 2013 թվականին կազմել է 409,63 դրամ [35]:

լով «հիմնական շուկաների» նախկին պիտակից, այնուամենայնիվ, առայժմ հենց այստեղ են մեկ շնչի հաշվով ամենաշատ շշալցված ջուր սպառող աշխարհի 20 երկրներից 13-ը:

2. Աշխարհում շշալցված ջրերի նկատմամբ աճող հետաքրքրության մասին են վկայում նաև շշալցված ջրի սպառման ծավալները՝ մյուս խմիչքների համեմատ: Մասնավորապես, ըստ վիճակագրության վերջին տասնամյակում շշալցված ջրերի ամենամեծ շուկայում՝ ԱՄՆ-ում, այդ ապրանքատեսակի սպառումը 2-րդ տեղում է հայտնվել խմիչքների շարքում, մինչդեռ ընդամենը 10 տարի առաջ 5-րդն էր: Այս տարիների ընթացքում շշալցված ջուրը հասցրել է գերազանցել գարեջրին, սուրճին ու կաթին, և ներկայումս այն զիջում է միայն գազավորված զովացուցիչ խմիչքներին: Այսպես՝ 2000 թ. ԱՄՆ-ում սպառվել է 57 մլրդ լիտր գազավորված զովացուցիչ ըմպելիք, ինչը կազմել է բոլոր խմիչքների 28%-ը, և դա այն դեպքում, երբ շշալցված ջրերինը ընդամենը 9% էր կամ 18 մլրդ լիտր: 2008 թ. արդյունքներով՝ արդեն գազավորված զովացուցիչ խմիչքների սպառումը նվազեց մինչև 53 մլրդ լիտր, իսկ շշալցված ջրերի սպառումն ընդհակառակը՝ հասավ 33 մլրդ լիտրի (խմիչքների ընդհանուր սպառման շուրջ 15%-ը) [72]: Շշալցված ջրերի համաշխարհային շուկայում գործում են հստակ ընդգծված հսկաներ, որոնցից են Nestle-ն, Danonc-ը, Coca-Cola-ն և Pepsi Cola-ն: Վերջիններին, միասին վերցրած, բաժին է ընկնում համաշխարհային շրջանառության ավելի քան 35%-ը: Առաջատարը Nestle-ն է՝ 12%, 2-րդ տեղում է Danonc-ը՝ 85%: Ըստ փորձագիտական գնահատումների առաջիկա 5 տարիների ընթացքում սննդարտադրության մեջ մասնագիտացված բազմապրոֆիլ այս ընկերություններն իրենց ուշադրությունը սևեռելու են հենց ջրի արտադրության խնդիրների վրա, ինչն էլ իր հերթին նպաստելու է համաշխարհային շուկայում այս ընկերությունների դերի ու շուկայի համակենտրոնացման աստիճանի մեծացմանը: Ընդհանուր առմամբ իրացման ծավալներով աշխարհի առաջատար 10 բրենդներից 8-ը պատկանում է «մեծ քառյակին»՝ Danonc-ին և Nestle-ին՝ 3-ական, իսկ Coca-Cola-ին և Pepsi Cola-ին՝ 2-ական: Աշխարհում ամենամեծ իրացում ունեցող առաջատար հնգյակը կազմում են՝ Aqua (Danonc), Pure, Lile (Nestle), Wahaha (Danonc), Aquafina (Pepsi Cola) ապրանքանիշերը [73]:

Ի դեպ՝ «շշալցված ջուր» հասկացության տակ նկատի է առնվում ինչպես աղբյուրի (չգազավորված), այնպես էլ հանքային (գազավորված) ջուրը: Գազավորված շշալցված ջուրը բավականին փոքր տեսակարար կշիռ ունի ընդհանուրի մեջ՝ ամբողջ աշխարհում սպառվող շշալցված ջրերի միայն 10%-ն է գազավորված: Ընդհանուր առմամբ այս համամասնությունը որոշակի շեղումներով պահպանվում է ամբողջ աշխարհում: Այնուամենայնիվ, կան երկրներ, որտեղ հանքային ջուրը համաշխարհային միջինից ավելի է սպառվում, դրա պատճառը ճաշելու ժամանակ հանքային ջրի օգտագործման սովորույթն է կամ աղբյուրի ջրի օգտագործման ցածր մակարդակը: Այդպիսի երկրներից են Արգենտինան, Չիլին, Ուրուգվայը, Նիդերլանդները, Գերմանիան, ինչպես նաև Հայաստանը:

Ինչ վերաբերում է տարաների բաղադրությանը, ապա ամբողջ աշխարհում նախապատվությունը տրվում է ոչ թե ապակե, այլ պլաստիկ շշերին՝ բացառությամբ, թերևս, միայն Գերմանիայի՝ պայմանավորված տեղի աղբահանման վե-

րաբերյալ օրենքների պահանջներով: Այնուամենայնիվ, Գերմանիայում ինչպես նաև Մեծ Բրիտանիայում, որտեղ ապակե շշերը մեծ տեսակարար կշիռ ունեն, պլաստիկն արագ տեմպերով զարգացում է ապրում:

Աղյուսակ 7.6. Աշխարհի առաջարար երկրներն՝ ըստ շշայցված ջրի սպառման 2003–2008 թթ., մլրդ լիտր [73]

Ը/հ	Երկրներ	2003	2008	Հավելածի տեմպ, %	Տեսակարար կշիռը
1	ԱՄՆ	23,73	32,90	38,6	16,4
2	Մեքսիկա	16,50	24,31	47,3	12,3
3	Չինաստան	9,55	17,71	85,4	9,9
4	Բրազիլիա	10,76	14,29	32,9	7,2
5	Իտալիա	10,35	11,99	15,8	6,0
6	Ինդոնեզիա	6,95	10,98	58,0	5,5
7	Գերմանիա	9,95	10,84	8,9	5,4
8	Ֆրանսիա	8,91	8,49	-4,7	4,2
9	Թաիլանդ	4,93	8,46	71,6	3,2
10	Իսպանիա	5,10	4,89	-4,1	2,5
<b>Առաջին 10 երկրները</b>		<b>106,73</b>	<b>144,86</b>	<b>35,7</b>	<b>72,6</b>
<b>Մնացած երկրները</b>		<b>37,54</b>	<b>54,62</b>	<b>45,5</b>	<b>27,4</b>
<b>Աշխարհը</b>		<b>144,27</b>	<b>199,48</b>	<b>38,3</b>	<b>100,0</b>

Աղյուսակ 7.7. Աշխարհի առաջարար երկրները՝ ըստ մեկ շնչին ընկնող շշայցված ջրի սպառման 2003–2008 թթ., մլրդ լիտր [73]

Ը/հ	Երկրներ	2003	2008	Հավելածի տեմպ, %	Միջինը, մլրդ լիտր
1	Մեքսիկա	157,1	223,7	42,4	7,5
2	Իտալիա	178,3	204,4	14,6	6,8
3	ԱՄԷ	96,1	150,3	56,3	5,0
4	Բելգիա	132,9	147,6	11,1	4,9
5	Գերմանիա	120,7	131,7	9,1	4,4
6	Ֆրանսիա	148,0	131,0	-11,5	4,4
7	Իսպանիա	126,8	120,7	-4,8	4,0
8	Լիբանան	96,1	115,4	20,1	3,9
9	Հունգարիա	61,3	110,6	80,2	3,7
10	ԱՄՆ	81,8	107,9	31,9	3,6
11	Շվեյցարիա	98,1	99,5	3,5	3,3
12	Ավստրիա	85,9	98,8	15,0	3,3
13	Թաիլանդ	76,8	98,4	28,1	3,3




14	Սլովենիա	78,0	98,4	28,2	3,3
15	Չեխիա	84,0	96,9	15,3	3,2
16	Կատար	74,2	96,9	30,0	3,2
17	Սաուդյան Արաբիա	88,2	95,4	8,2	3,2
18	Խորվաթիա	62,1	94,6	52,4	3,2
19	Կիպրոս	86,3	90,6	5,3	3,0
20	Բուլղարիա	43,1	87,4	102,3	2,9
<b>Համաշխարհային միջինը</b>		<b>22,7</b>	<b>29,9</b>	<b>31,7</b>	<b>4,1</b>

Խմելու ջրի առևտրի կարևորության մասին է խոսում նաև այն փաստը, որ վերջին տարիներին դրան են նվիրվում համաշխարհային գիտաժողովներ: Այսպես՝ 2012 թ. հոկտեմբերի 8–10–ը Բարսելոնայում կայացել է շշալցված ջրին նվիրված համաշխարհային 9–րդ կոնգրեսը [78], որի մանրամասներին կարելի է ծանոթանալ [79] կայքէջում:

Շշալցված ջրի համաշխարհային շուկայի վերլուծությունը (2006–2011 թթ.) բացահայտել է հետևյալ միտումները և օրինաչափությունները.


- շշալցված ջրի համաշխարհային ծավալը 2006 թվականին 192,8 մլն լիտրից 2011 թվականին հասել է 261,8 մլն լիտրի, կամ հավելաճի տեմպը կազմել է 135,8% (գծանկար 7.1),
- եթե 2006 թվականին շշալցված ջրի 50,9%–ը իրացվել է չգազավորված մինչև 10 լիտրանոց տարաներով, 33,0%–ը՝ 10 լիտրից ավելի տարողությամբ չգազավորված, 16,1%–ը՝ գազավորված տարաներով, ապա 2011 թվականին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 51,6%, 36,0% և 12,4% (գծանկար 7.2),
- 2010–2011 թ. ամենաշատ ջուր շշալցվող 10 երկրների առաջատարը Չինաստանն է (որտեղ 2011 թվականին 2010 թվականի համեմատ սպառման ծավալն ավելացել է 17,8%–ով), որին հետևում են ԱՄՆ–ը, Մեքսիկան, Ինդոնեզիան (աճի ամենաբարձր՝ 23,9%), Գերմանիան, Բրազիլիան, Իտալիան, Թուրքիան, Հնդկաստանը և Ֆրանսիան (գծանկար 7.3): Հատկանշական է նաև, որ նշված բոլոր երկրներում շշալցված ջրի ծավալները ավելացել են,
- եթե 2006 թ. շշալցված ջրի համաշխարհային ամենամեծ տարածաշրջանը Արևմտյան Եվրոպան էր (24,6%), ապա 2011 թվականին առաջատար է դարձել Ասիական–խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը՝ 32,8%, (գծանկար 7.4),
- շշալցված ջրի 2007–2011 թթ. միջին տարեկան ծավալներով առաջատարը Ասիական–խաղաղօվկիանոսյան տարածաշրջանն ու Աֆրիկան են, որոնք միևնույն ժամանակ 2011 թ. տվյալներով 1 շնչին հասնող շշալցված ջրի ծավալներով 10–12 անգամ հետ են մնում Հյուսիսային Ամերիկայից և Արևմտյան Եվրոպայից (գծանկար 7.5),

- Արևմտյան Եվրոպայի երկրներում նույնպես նկատվել է շշալցված ջրի ծավալների ավելացում, որը 2011 թ. հասել է 48,1 մլրդ լիտրի (գծանկար 7.6),
- Արևմտյան Եվրոպայի երկրներում 2011 թ. շշալցված ջրի ամենամեծ բաժինը հասնում է Գերմանիային (28%), Իտալիային (23,8%), Ֆրանսիային (16,4%), Իսպանիային (12,9%), Միացյալ Թագավորությանը (4,4%), Հունաստանին (3,5%), Պորտուգալիային (2,3%), Շվեյցարիային (1,9%) (գծանկար 7.7),
- Իսպանիայում շշալցված ջրի ծավալը 2006–2011 թթ. մնացել է անփոփոխ՝ 6,2 մլրդ լիտր (գծանկար 7.8), որտեղ ջուրը շշալցված է մինչև 2 լիտր (57,5%) և 2–10 լիտրանոց (34,8%) (գծանկար 7.9),
- կատարված կանխատեսումները ցույց են տալիս, որ 2011–2021 թվականներին շշալցված ջրի համաշխարհային ծավալներն ավելանալու են շուրջ 170%-ով և 2011 թ. հասնելու են 440 մլրդ լիտրի (գծանկար 7.10):




**Գծանկար 7.1.** Շշալցված ջրի համաշխարհային ծավալը 2006–2011 թթ. (90 երկրների համար), մլրդ լիտր

Խմելու ջրի այս և հեղուկ գծանկարների աղբյուրը [www.zenithinternational.com](http://www.zenithinternational.com) կայքում տեղադրված տեղեկատվությունն է՝ “2012 Global Bottled Water Congress and market trends”:



Գծանկար 7.2. Շշալցված ջուրը՝ ըստ տեսակների 2006–2011 թթ. (90 երկրների համար), մլրդ լիտր

Աղբյուրը՝ [www.zenithinternational.com](http://www.zenithinternational.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը՝ “2012 Global Bottled Water Congress and market trends”:



Գծանկար 7.3. Շշալցված ջրի օգտագործման ոլորտում 10 առաջադաս երկրները 2010–2011 թվականներին (90 երկրների մեջ), մլրդ լիտր

Աղբյուրը՝ [www.zenithinternational.com](http://www.zenithinternational.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը՝ “2012 Global Bottled Water Congress and market trends”:

**2011–2012 թվականների համընդհանուր միտումները.**


1. Շշալցված ջրի ընդհանուր ծավալը գերազանցում է կարբոնացված ջրի ծավալին, և շուկայի հենց այդ հատվածն է ապահովում արտադրության ծավալների աճը: Մինչդեռ գները պահպանվում են ցածր մակարդակի վրա, մասնավոր ընկերությունները ավելացնում են իրենց ներկայությունը զարգացող շուկաներում:

2. Շշալցված ջրի համընդհանուր շուկան բաժանված է չորս խոշորագույն միջազգային ընկերությունների միջև, որոնք ապահովում են արտադրության ծավալների մեկ երրորդ մասը: Միևնույն ժամանակ ի հայտ են գալիս մի շարք տարածաշրջանային կազմակերպություններ, որոնցից կարող ենք նշել Wahaha-ն և Suntory-ն՝ Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, SAB Miller-ը՝ Աֆրիկայում:

3. Բնապահպանական հիմնախնդիրներին մինչ այժմ երկրորդային նշանակություն է տրվում, իսկ ջրի գնային մատչելիությունը սպառման (վաճառքների ծավալի ավելացման) հիմնական խթանիչն է:


4. Բնապահպանական տեսանկյունից անվտանգ փաթեթավորումը (շշալցումը) զգալի ազդեցություն է ունենալու արդյունաբերության այս ճյուղի ապագայի վրա:

5. Շշալցված ջրի որակի տեսանկյունից մեծ նշանակություն է տրվում առողջության վրա ազդեցության և հիդրատացիայի հիմնախնդիրին, սակայն այս ոլորտում զգալի մրցակցություն գոյություն ունի այլ «առողջ» թույլ ընկերությունների արտադրության ոլորտում նորարարությունների միջև:




**Գծանկար 7.4.** Շշալցված ջրի օգտագործումը՝ ըստ տարածաշրջանների 2006–2011 թթ. (90 երկրների մեջ), մլրդ լիտր

Աղբյուրը՝ [www.zenithinternational.com](http://www.zenithinternational.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը՝ “2012 Global Bottled Water Congress and market trends”:




Գծանկար 7.5 Արևմտյան Եվրոպայում շաղցված ջրի ծավալները 2006–2011 թվականներին

Աղբյուրը՝ [www.zenithinternational.com](http://www.zenithinternational.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը՝ “2012 Global Bottled Water Congress and market trends”:




Գծանկար 7.6. Արևմտյան Եվրոպայի երկրները՝ ըստ շաղցված ջրի ծավալների, 2011 թ.

Աղբյուրը՝ [www.zenithinternational.com](http://www.zenithinternational.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը՝ “2012 Global Bottled Water Congress and market trends”:




Գծանկար 7.7. Իսպանիայում շաղցված ջրի ծավալները 2006–2011 թթ., մլրդ լիտր

Աղբյուր՝ [www.zenithinternational.com](http://www.zenithinternational.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը՝ “2012 Global Bottled Water Congress and market trends”:



Գծանկար 7.8. Իսպանիայում շաղցված ջրի շուկայի հատվածները 2011 թվականին

Աղբյուր՝ [www.zenithinternational.com](http://www.zenithinternational.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը՝ “2012 Global Bottled Water Congress and market trends”:



**Գծանկար 7.9.** Շշալցված ջրի համաշխարհային կանխարեսումները 2011–2021 թթ. (90 երկրների համար), մլրդ լիտր

**Աղբյուրը՝** [www.zenithinternational.com](http://www.zenithinternational.com) կայքում տեղադրված տեղեկատվությունը՝ “2012 Global Bottled Water Congress and market trends”:

**Ամփոփում և ապագա զարգացումներ**

1. Ասիական–խաղաղօվկիանոսյան, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի զարգացող տարածաշրջանները կմնան շշալցված ջրի ծավալների աճի հիմնական գործոնները՝ քաղաքային բնակավայրերի կենտրոնացման և տնտեսական կայունության շնորհիվ:

2. Զրի անվտանգության մասին տեղեկացվածության մեծացումը և ջրամատակարարման ցանցով ստացվող ջրի պակասը այս շուկաների հետագա աճի հիմնական գործոններն են:

3. Կանխատեսվում է, որ ջրի մեծածախ շուկայի հատվածը մոտակա հինգ տարիների ընթացքում աճելու է արագընթաց տեմպերով:

4. Փոքր չափերի փաթեթավորմամբ չգազավորված ջրի օգտագործման շահավետությունը բարձրանում է առողջության համար օգտակարության և անմիջապես օգտագործման համար պիտանելիության տեսանկյուններից:

5. Զրի փաթեթավորման ոլորտում նորարարական մոտեցումներն են երաշխավորում տվյալ շուկայում առաջխաղացման հաջողությունը:

6. Կանխատեսվում է (սպասվում է) ջրի շշալցման արդյունաբերության կենտրոնացում, որի ընթացքում խոշոր ընկերությունները ձեռք կբերեն փոքր ընկերությունների բաժնետոմսերը կամ իրենց հովանու տակ կվերցնեն վերջիններիս՝ նպատակ ունենալով էլ ավելի մեծացնելու սեփական հզորություններն ու արտադրանքի տեսականին (պորտֆելը), ինչպես նաև ամրապնդվել ավելի թույլ զարգացած տարածաշրջանների շուկաներում [75]:

### բ) Խմելու ջրերի արդյունաբերական լցումը Հայաստանի Հանրապետությունում

Խմելու ջրի առևտրի համաշխարհային վերջին համայնապատկերին հետաքրքիր է դիտարկել, թե ինչ միտումներ կան հայկական շուկայում և որքանով են «ջրերի երկիր» Հայաստանում արտադրողներն «աղեկվատ» արձագանքում համաշխարհային միտումներին:

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալների՝ 2009 թ. Հայաստանում արտադրվել է 4,59 մլրդ դրամի (12,6 մլն դոլար) և իրացվել է 4,36 մլրդ դրամի (12 մլն դոլար) շալցված ջուր, որից 803 մլն դրամի (շուրջ 2,12 մլն դոլար)՝ արտադրանքը իրացվել է ԱՊՀ, իսկ ընդամենը 117 մլն դրամինը (շուրջ 0,32 մլն դոլար) արտասահմանյան այլ երկրներում [35]:

Այսինքն՝ Հայաստանում արտադրված շալցված ջրերի ընդամենը 20%-ն է արտահանվում, որից 17,5%-ը՝ ԱՊՀ, 2,5%-ը՝ արտասահմանյան այլ երկրներ, իսկ մնացած շուրջ 80%-ը սպառվում է ներքին շուկայում:

Ի դեպ՝ 2009 թ. մեր երկրում այս ոլորտի զգալի անկում է գրանցվել: 2008 թ. համեմատ արտադրությունը պակասել է 18,6%-ով, իսկ իրացումը՝ 23,5%-ով: Հատկապես նվազել է արտահանումը շուրջ 34%-ով [50]: Ընդ որում՝ դեպի ԱՊՀ շուկաներ արտահանումը նվազել է շուրջ 40%-ով, մինչդեռ դրան հակառակ՝ այլ շուկաներ արտահանումն աճել է 65%-ով, թեև փոքր կշռի պատճառով էական ազդեցություն չի ունեցել ընդհանուր պատկերի վրա: Ի դեպ՝ ի տարբերություն Հայաստանի՝ ամբողջ աշխարհում շալցված ջրի ոլորտն աճ է արձանագրել 7,5%-ով: Բնեղեն արտահայտությամբ՝ 2009 թ. մեր երկրում արտադրվել է 33,8 մլն լիտր շալցված ջուր, որը 27%-ով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից:

2008 թ-ին 2007 թ-ի համեմատ արտադրվել և իրացվել է գումարային առումով 13%-ով և բնեղեն արտահայտությամբ 16%-ով ավելի շատ շալցված ջուր, ինչը փաստում է, որ 2009 թ. գրանցված անկումը հիմնականում ձգնաժամի հետևանք է:

Մյուս կարևոր հանգամանքը 2008 թ. հոկտեմբերի վերջին շալցված ջրերի շուկայի խոշորագույն մասնակիցներից մեկի՝ «Բջնիի» ժամանակավոր փակումն էր, ինչն ուղեկցվեց արտադրության դադարով, իրացման շղթայի խաթարմամբ, իսկ ավելի ուշ՝ սեփականատիրոջ փոփոխությամբ:


Նկատենք, որ ի տարբերություն ամբողջ աշխարհի՝ Հայաստանում արտադրվող և իրացվող շալցված ջրի մեծ մասը գազավորված, այսինքն՝ հանքային ջուրն է: 2009 թ. տվյալներով՝ այն կազմել է ընդհանուրի 75%-ը: Այսինքն՝ սովորական չգազավորված ջուրն ընդհանուր իրացման մեջ 25% է կազմում, մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, ամբողջ աշխարհում շալցված ջրի սպառումը կատարվում է 90/10 հարաբերակցությամբ՝ ի օգուտ սովորական ոչ գազավորված ջրի: Թերևս մեր երկրում հենց այսպիսի հարաբերակցությունն է պատճառը, որ ԱՎԾ-ն մինչև 2007 թ. ներառյալ շալցված ջրի վերաբերյալ իր հաշվետվություններում առանձնացված տողով ներկայացրել է միայն հանքային ջրի վերաբերյալ վիճակագրությունը՝ ներկայացնելով այն «հանքային ջուր» տողով, մինչդեռ 2008-ից սկսած՝ առանձին տողով ներկայացվել է նաև «աղբյուրի ջուրը»: Այսպիսի հարաբերությունը բացատրվում է Հայաստանում ծորակի ջրին




տրվող դեռևս բարձր նախապատվությամբ: Ջրի որակով մտահոգված մեր քաղաքացիները շատ դեպքերում բավարարվում են իրենց ծորակների վրա արտասահմանյան արտադրության ֆիլտրացիոն համակարգեր տեղադրելով և արդյունքում ստանում են համեմատաբար որակյալ խմելու ջուր:

Չմոռանանք նաև, որ ընդամենը 10–12 տարի առաջ, երբ խանութներում սկսեցին հայտնվել սովորական շշալցված ջրի առաջին օրինակները, մեզանից շատերը առնվազն տարօրինակ համարեցին այն միտքը, որ «ջուրը կարելի է շշալցնել ու վաճառել»: Բայց ժամանակը ցույց տվեց, որ դա գուցե այդ ժամանակ մեծ պահանջարկ չվայելող, բայց երկարաժամկետ հատվածի համար հեռանկարային գործունեություն է:

2003–2008 թթ. շշալցված ջրի սպառումը Հայաստանի ներքին շուկայում բնեղեն արտահայտությամբ աճել է շուրջ 125%-ով: Ամբողջ աշխարհի կտրվածքով այդ աճը նույն ժամանակահատվածում կազմել է 38%: Այսինքն՝ այդ ընթացքում Հայաստանում շշալցված ջրի սպառումն աճել է համաշխարհային միջինից շատ ավելի արագ տեմպերով: Այս երևույթը բնորոշ է խմելու ջրի ռեսուրսներով հարուստ զարգացող երկրներին, ինչպիսիք են, օրինակ՝ Բուլղարիան (102,6%), Հունգարիան (80,2%), Խորվաթիան (52,4%) և այլն: Այնուամենայնիվ, Հայաստանը շարունակում է բավականին հեռու մնալ 1 բնակչի հաշվով սպառվող խմելու ջրի համաշխարհային միջին ցուցանիշից, որը 2008 թ. տվյալներով կազմել է 30 լիտր, մինչդեռ մեզ մոտ այն կազմել է 8,5–9 լիտր: Սա նշանակում է, որ Հայաստանի ներքին շուկան դեռևս բավականին մեծ պոտենցիալ ունի հատկապես չգազավորված ջրերի սպառման մասով:



Գծանկար 7.10. Հայաստանում արտադրված շշալցված ջրերի իրացման ծավալները և շուկաները 2001–2009 թթ., մլն դրամ [7]



**Գծանկար 7.11.** Հայաստանից շտապված ջրերի արտահանման հիմնական շուկաները 2006–2009 թթ., մլն դրամ.  
 1. այլ, 2. Վրաստան, 3. Ուկրաինիա, 4. ԱՄՆ, 5. Ռուսաստան

Վերը նշված աճին մեծապես նպաստել է նաև գրասենյակներում, ինչպես նաև բնակարաններում դիսպենսեր սարքերի (կուլերների) միջոցով խմելու ջրի սպառումը: Ի դեպ՝ այս սեգմենտում ավանդաբար առաջատար է եղել «ՄԳԱ Վոթըր» ընկերությունը՝ «Մաքուր ջուր» ապրանքանիշով, որը սկզբնական շրջանում շուկայում միայնակ էր գործում, սակայն ավելի ուշ շուկա մտավ մեկ այլ խոշոր խաղորդ՝ «Ջերմուկ գրուպը»՝ «Բյուրեղ» ապրանքանիշով:

Չնայած ներքին շուկայում սպառման դրական դինամիկային՝ հայկական շտապված ջրերի ինդուստրիան առավելապես ներքին շուկայի վրա չէ, որ պետք է հիմնվի (գծանկար 7.11): Ընդհակառակը՝ ավելի մեծ շեշտադրում պետք է արվի հենց արտահանման հնարավորությունների վրա: Ի դեպ՝ այդպես էլ կա, որովհետև հատկապես վերջին մի քանի տարիներին այս շուկա մուտք գործած կամ արտադրական հզորություններն ընդլայնած ընկերությունների ներդրումները մեծ մասամբ արվել են արտաքին շուկաներում տեղ գտնելու հեռանկարներով:

**Աղյուսակ 7.8.** Հայաստանում արտադրված շտապված ջրերի իրացման ծավալների փարեկան աճը 2002–2010 թթ., %

Տարեթիվ	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Ընդամենը	0,3	27,0	9,6	20,9	29,4	32,2	18,8	-23,5	51,3
Ներքին շուկա	1,3	16,3	8,5	22,7	22,4	25,3	27,1	-20,1	-48,5
ԱՊՀ	43,4	60,4	49,1	28,2	92,9	66,9	-5,2	-39,2	3,9 անգ.
Այլ երկրներ	-38,2	133,6	-21,7	-11,1	-45,7	-83,8	401,3%	65,2	-30,7

**Աղյուսակ 7.9. Հայաստանում արտադրված շալցված ջրերի իրացման շուկաների կառուցվածքը 2001–2010 թթ.**

Տարեթիվ	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010 (1)
Ներքին շուկա	84,8	85,6	78,4	77,6	78,8	74,65	70,65	75,65	78,9	72,2
ԱՊՀ	5,9	8,5	10,7	14,6	15,4	23,0	29,1	23,2	18,4	26,6
Այլ երկրներ	9,3	5,9	10,9	7,8	5,7	2,4	0,3	1,2	2,7	1,2
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Ի դեպ՝ 2000 թ. սկսած արտահանումը զգալի աճ է արձանագրում: 1999 թ. 1,1 մլն լիտր շալցված ջրի համեմատ 2008 թ. արտահանվել է արդեն 14,4 մլն լիտր, այսինքն՝ 10 տարվա ընթացքում արտահանումն աճել է ավելի քան 13 անգամ՝ տարեկան կտրվածքով միջինը արձանագրելով շուրջ 40% աճ: Արտահանման շարունակական աճին չի խանգարել անգամ այդ տարիների ընթացքում դրամի զգալի արժեզրկումը: Արտահանման աճը, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված, խաթարվեց միայն 2009 թ.՝ բնեղեն արտահայտությամբ կրճատվելով 46%-ով՝ դրամային արտահայտությամբ կազմելով շուրջ 35%: Իսկ ահա 2010 թ. առաջին կիսամյակի տվյալներն արդեն իսկ հուսադրող են, որովհետև 2009 թ. առաջին կիսամյակի հետ համեմատած՝ տարեկան աճել են ավելի քան 3,2 անգամ՝ դրամով արտահայտված, այն դեպքում, երբ ներքին շուկայում իրացման աճը կազմել է ընդամենը 25%:

Արտահանման հիմնական ուղղություններն են Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Ուկրաինան և Վրաստանը: Ավանդաբար արտահանման առյուծի բաժինը Ռուսաստանին է՝ 2006–2009 թթ. տվյալներով՝ 85,6% [50]:

Բավականին հետաքրքիր տեմպերով է զարգանում նաև շալցված ջրի ներկրումը Հայաստան: Մասնավորապես 2003–2009 թթ. ժամանակահատվածում ներկրումը 8000 լիտր ծավալից հասել է 323000 լիտրի, այսինքն՝ աճել է շուրջ 40 անգամ: Ներկրումը չի նվազել անգամ «ճգնաժամային 2009 թ.» ընթացքում՝ արձանագրելով 12 տոկոսանոց աճ: Ներկրման այսպիսի աճը բացատրվում է Վրաստանից, Իտալիայից և Ֆրանսիայից շալցված ջրերի ներմուծման աճով: Մասնավորապես 2007 թ-ից սկսած՝ ավելացել են վրացական Borjomi, ինչպես նաև եվրոպական San Pellegrino, Perrier, Evian և Vittel ապրանքանիշերով հանքային ջրերի ներմուծման ծավալները: Այնուամենայնիվ, ներմուծված ջուրը ներքին շուկայում իրացման 1%-ից էլ պակաս մասն է կազմում: Այսպիսով՝ մեր ուսումնասիրություններն ինչպես միջազգային, այնպես էլ ներքին շուկաների մասով ցույց են տալիս, որ շալցված ջրերի արտադրության ոլորտը արագ տեմպերով զարգացող, իսկ երկարաժամկետ հատվածում մեծ հեռանկար ունեցող ոլորտ է: Դրա մասին է վկայում նաև վերջին 1–2 տարիների ընթացքում ոլորտի նկատմամբ ցուցաբերած աննախադեպ մեծ ներդրումային հետաքրքրությունը, որը, համաշխարհային տնտեսական ճգնաժամով պայմանավորված, որոշակի «հապաղումով» հանդերձ, ներկայում ակնհայտորեն աճող միտում ունի: Հայաստանում 7 ամենաշատ վաճառվող ջրերի մասին տեղեկությունները բերված են աղյուսակ 7.10-ում և 7.11-ում:

**Աղյուսակ 7.10.** Հայաստանում 7 ամենաշարք վաճառվող ջրերը, 0,5 լ շիշ՝ հանքային (գազով)

Ջերմուկ	Բջնի	Արզնի	Դիլիջան Ֆրոլովա	Դիլիջան	Սթար	Բոնակվա
56691	26979	10934	6865	2777	1603	1380

Հայաստանի գործարարների մասնակցությամբ ընթացքի մեջ գտնվող ներդրումային խոշոր ծրագրերից թերևս ամենախոշորը Կոտայքի մարզում Արտավազ համայնքի մոտակայքում իրականացվող ծրագիրն է, որի շրջանակներում 40 հա տարածքի վրա պետք է կառուցվի շշալցված ջրերի նոր գործարան: Ըվեյցարական «Սվիս Ռեաո Էս Էյ» ներդրումային ընկերության անունից հանդես եկող ներդրումներն արդեն իսկ սկսել են իրենց ծրագիրը: ՀՀ կառավարությունն ընկերությանը երկարաժամկետ վարձակալության հիմունքներով տրամադրելու նպատակով արդեն իսկ գերակա շահ է ճանաչել Արտավազի 1400 հա հողատարածքի նկատմամբ, որոնց մի մասը նաև գյուղացիական նշանակության սեփականաշնորհված հողեր էին: Ընկերության սեփականատերերի թվում նշվում է շվեյցարական ընկերության նախագահի՝ Սաուդյան Արաբիայի շեյխ Մուհամմեդ Մուսալլամիի անունը: Ընկերությունը պարտավորվել է կառուցել բարձր տեխնոլոգիական գործարան, որը կարտահանի տարեկան 40 մլն լիտր շշալցված ջուր: Ընկերությունն իր ծրագրում որպես թիրախային շուկա նշել է ՌԴ-ն և ԵՄ շուկան, ծրագրի երրորդ փուլում՝ Իրանը և Պարսից ծոցի ավազանի երկրները: Ընկերությունը շշալցված ջուրն արտահանելու է Հայաստանի «Հազվագյուտ ջուր» («Rare Water») բրենդային անվամբ: Ըստ Էկոնոմիկայի նախարարության տրամադրած տեղեկատվության՝ ծրագրից մինչև 50 մլն դոլարի ներդրում է ակնկալվում, ինչպես նաև 100–150 աշխատատեղ արտադրամասում:

Ի դեպ՝ Հայաստանի մեկ այլ ծրագիր է իրականացվում Բուլղարիայում, որտեղ կառուցվող ջրերի գործարանի թողարկման ծավալները լինելու են օրական 1 մլն շիշ, որի իրացման հիմնական շուկան լինելու է Եվրոպան:

Մյուս խոշոր ծրագիրն իրականացվում է հայ-գերմանական համատեղ կապիտալով Արտաշատ քաղաքում կառուցված գործարանի միջոցով, որտեղ պետք է շշալցվի Վեդի քաղաքին հարող տարածքներում առկա հանքային ջուրը, ինչպես նաև չգազավորված աղբյուրի ջուր և արտահանվի հիմնականում ԵՄ: Դեռևս կառուցման ընթացքում գտնվող գործարանի շինության տեսքից կարելի է ենթադրել, որ ծրագիրը բավական խոշոր է և իրագործման փուլում է: Ուրիշ մանրամասներ ձշտել մեզ չհաջողվեց:

10–15 մլն դոլար գնահատվող մեկ ուրիշ նախագիծ էլ իրականացվում է Աշտարակի տարածաշրջանում:

**Աղյուսակ 7.11.** 7 ամենաշարք վաճառվող ջրերը, 0,5 լ շիշ՝ աղբյուրի (առանց գազի)

Բյուրեղ	Նոյ	Սթար	Բոնակվա	Դիլիջան	Այգ	Արար
36444	24525	11244	2159	2149	871	5

Բացի վերը նշվածներից՝ շուկայում արդեն իսկ հայտնվել են նոր անուններ: Երկու տարի էլ չկա, ինչ բավականին հաջողությամբ շշալցված ջրերի շուկա մտավ «Գառնի Կրիստալ լայն» ջուրը: Ի դեպ՝ մինչ այդ ընկերությունը հանդես էր գալիս «Գառնի Կոլա» անունով զովացուցիչ խմիչքների արտադրությամբ:

Զովացուցիչ ըմպելիքների մեկ այլ արտադրող «Յունիոն» ընկերությունը, որն արդեն 10 տարուց ավելի է՝ շուկային է ներկայացնում «Հայ Կոլա» զովացուցիչ ըմպելիքները, ընդամենը մի քանի ամիս է, ինչ սկսել է «Զուլալ» անունով ջրի արտադրությունը: Ընկերության ջրի շուկա մտնելու քայլը բացատրվում է շուկայում արդեն իսկ ձեռք բերած փորձառությամբ և շշալցված ջրի արտադրության հեռանկարային բիզնես լինելու հանգամանքով: Ընկերությունը դեռ 6 տարի առաջ էր գրանցել «Զուլալ» ապրանքանիշը՝ հատկապես հաշվի առնելով դրա բառարանային ծագումնաբանությունը, այսինքն՝ ոչ միայն հայերենում այլև արաբերենում, պարսկերենում և թուրքերենում «մաքուր, պարզ» իմաստն ունենալու հանգամանքը՝ ապագայում հիմնական պոտենցիալ շուկաներ համարելով նաև նշված լեզուներով խոսող երկրները: Ընկերության աղբյուրները Լոռու մարզի Ստեփանավանի շրջանի Կաթնաղբյուր բնակավայրի տարածքում են: Ներկայում արտադրվում է երկու տեսակի «Զուլալ»՝ հանքային գազով և աղբյուրի՝ առանց գազի:

«Զուլալն» առայժմ իրացվում է հայկական շուկայում, արտասահմանյան ծրագրերը դեռևս մշակման փուլում են: Ընկերության առավելությունը ներքին շուկայում այն է, որ արդեն իսկ կա ստեղծված բաշխման համակարգ, և վաճառակետերում առկա է սառնարանների մեծ ցանց, որի միջոցով էլ «Հայ Կոլայի» հետ միասին իրացվում է ապրանքը: Նախատեսվում է առանձին սառնարանների տեղակայում միայն «Զուլալ»-ի համար: Միայն արտահանման դեպքում այս ուղղությամբ արված ներդրումներն արդարացված կլինեն՝ հատկապես հաշվի առնելով ներքին շուկայում առկա մրցակցության բավականին բարձր մակարդակը: «Յունիոնն» արդեն իսկ արտահանման փորձ ունի՝ «Հայ Կոլա» պարբերաբար արտահանվում է ԱՄՆ, ինչպես նաև տարբեր ժամանակներում արտահանվել է Իրան և Կիպրոս: Զրի պոտենցիալ շուկաներ են համարվում Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Իրանը և արաբական որոշ երկրներ:

Ոլորտի խոշոր ներկայացուցիչներից են նաև «Էմ Այ Բի Քոնսալթինգ» ընկերությունը, որը շուկայում ներկայանում է «Դիլիջան Ֆրոլովա» ապրանքանիշով: Ընկերությունը ստեղծվել է 3 տարի առաջ «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջրերի գործարանը ձեռք բերելու արդյունքում: Այդ ընթացքում կատարելապես վերազինվել են արտադրական հոսքագծերն ու փաթեթավորման սարքերը, ամբողջությամբ վերանորոգվել են ջրագծերը: Իսկ որպես գործունեության ընթացքում ամենամեծ ձեռքբերում պետք է նշել արտահանման կազմակերպումը դեպի ՌԴ և այնտեղ ներկայացուցչության հիմնումը:

Առայժմ ընկերությունն արտադրում է միայն հանքային գազավորված ջուր, սակայն առաջիկայում նախատեսվում է սովորական աղբյուրի ջրի շշալցում:

Արտահանումն առայժմ սահմանափակվում է Մոսկվայում, սակայն մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Ռուսաստանի հարավային մարզերը, ինչպես նաև Ուկրաինան, Իրանը, ԱՄԷ-ն և ԱՄՆ-ը: Արտահանումը ներկայում կազմում

է ընդհանուր իրացման շուրջ 30%-ը, սակայն աճելու մեծ միտում ունի: Ձեռնարկությունում իրականացված ներդրումները կհամարվեն արդարացված, եթե արտահանման միջոցով իրացման ծավալներն աճեն և հասնեն «հատուցելի մակարդակի»: Ներքին շուկան պարտադիր, բայց ոչ բավարար պայման է: Իսկ իրականացված ներդրումների հետվերադարձելիության մասին մտածել՝ տեսադաշտում ունենալով միայն ներքին շուկան, ուղղակի միամտություն է:

Ի դեպ՝ պատվերով շալցումը բավականին տարածված պրակտիկա է: Այդ մեխանիզմով արդեն մի քանի ամիս է Հայաստանից Ռուսաստան «Տաշիր» ապրանքանիշով ջուր է արտահանում համանուն ընկերությունը:

Այլ կերպ է նաև շուկա մտել «Ալֆա Ակվա» ջուրը: Վերջինիս արտադրող «Պոզիտիվ» ընկերությունը այս ոլորտ է մուտք գործել ոչ թե «մասշտաբային» բիզնես անելու համար, այլ նախ հասկանալու այնտեղ գործող հիմնական միտումներն ու շուկայական տրամաբանությունը: Այդ նպատակով փորձարկել են տարբեր աղբյուրների ջրեր և ի վերջո կանգ առել լավագույն ընտրության վրա՝ ի դեմս «Հայկազ և Լուսինե» ընկերության շալցրած ջրի:

Ընկերության արտադրած ջուրն արժանացել է նույնիսկ ակվաթերապիայով զբաղվող ռուսական առողջարարական կենտրոնի ուշադրությանը, որը Հայաստանում տարբեր ջրեր ուսումնասիրելուց հետո եզրակացրել է, որ այն ամենահամապատասխանն է մարդու օրգանիզմին:

Թեև հայկական շալցված ջրերի հիմնական թիրախն արտահանումն է, այնուամենայնիվ, ներկա պահին դրա մեծ մասն իրացվում է ներքին շուկայում, և այստեղ լուրջ պայքար է գնում շուկայական տարածքի համար:

Ներկայումս շուկայի բաժանումը կատարված է մոտավորապես հետևյալ կերպ. հանքային ջրերի սեգմենտում ըստ հաջորդականության առաջատարներ են «Ջերմուկը», «Բջնին», «Արզնին» և «Դիլիջանի Ֆրոլովան», աղբյուրի ջրերի սեգմենտում առյուծի բաժինը «Բյուրեղ» և «Նոյ» ջրերինն է, իսկ դիսպենսեր սարքերի միջոցով իրացվող ջրերի ոլորտում առաջատար է «Մաքուր ջուրը»: Չնայած ձևավորված որոշակի «ստատուս քվոյին»՝ մրցակցությունը շարունակում է սրվել:

Ի դեպ՝ տուն և աշխատասենյակ առաքվող (Home and office delivery) շալցված ջուրը ամբողջ աշխարհում կազմում է ընդհանուր առմամբ սպառվող ջրի շուրջ 1/3-ը, ինչը, այնուամենայնիվ, համեստ արդյունք է համարվում (չնայած կան երկրներ, օրինակ՝ Մեքսիկան, որտեղ այն գերազանցում է 70%-ը): Համեմատաբար ցածր այս ցուցանիշն առաջին հերթին բացատրվում է մինչ այժմ շալցված ջուր արտադրողների կողմից այս սեգմենտի նկատմամբ ոչ բավարար ուշադրությամբ, ինչը, սակայն, արդեն իսկ փոխվելու միտում ունի, քանի որ ամբողջ աշխարհում այս սեգմենտում նույնիսկ իսկական «բրենդային պատերազմ» է գնում, և առաջիկա տարիներին սպասվում են նոր «հստակեցումներ»: Թեև Հայաստանի համար տվյալները բացակայում են, այնուամենայնիվ, մեր դիտարկումներով, այն շատ ավելի պակաս է համաշխարհային միջինից:

3. Շալցված ջրերի արտադրության և առավել ևս արտահանման ծավալները Հայաստանում դեռևս բավական համեստ ցուցանիշներով են արտահայտվում [35]: Ըստ ՄԱԿ-ի վիճակագրական դիվիզիայի ապրանքային առևտրի ծա-

ռայության (UN Comtrade) տվյալների՝ Հայաստանից 2008 թ. արտահանվել է 5 մլն դոլարի (ըստ ՀՀ ԱՎԾ-ի 1,39 մլրդ դրամի), իսկ 2009 թ.՝ 3 մլն դոլարի (ըստ ՀՀ ԱՎԾ-ի՝ 0,92 մլրդ դրամի) արտադրանք, ինչը կազմում է Հայաստանի՝ առանց այն էլ «համեստ» արտահանման ընդամենը 0,4–0,5%-ը [57]: Այնուամենայնիվ, ինչպես տեսանք, այն արագ զարգացող ոլորտ է և բոլոր հնարավորություններն ունի առաջիկա տասնամյակներին համաշխարհային մակարդակով ռազմավարական նշանակության ինդուստրիայի վերածվելու համար: Այդ համատեքստում շատ կարևոր է մեր ընկերությունների կողմից «պահի գիտակցում» ու «ճիշտ դիրքավորումը» համաշխարհային շուկայում: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ Հայաստանում խմելու ջրի աղբյուրների «թողունակությունը» տարբեր մասնագիտական հաշվարկներով կազմում է տարեկան 1,5–2 մլրդ տոննա [7], մինչդեռ շալցվում է 50 մլն-ից էլ պակաս ջուր, այսինքն՝ 2,5–3,5%-ը: Իհարկե, ջրի մեծ մասը բնակչությունը սպառում է սովորական ջրաբաշխիչ ցանցերի միջոցով, բայց զգալի մասը պարզապես «թափվում է ջուրը»:

Վերը նշված կոնգրեսի օրակարգի հիմնական հարցերն են եղել խմելու ջրի տարածաշրջանային շուկաների զարգացման հեռանկարները, դրա համաշխարհային շուկայի հեռանկարները, խմելու ջրի տարայավորման նոր նյութերը, անցումային շուկաների ներքին պահանջարկի աճը, սպառողների նախապատվությունների հաշվի առնելը, արտադրության նորամուծությունները, որպես ապագայի աճի հիմնական բանալի, շալցված ջրի այլընտրանքները, հաճելի համ (հոտ) և նպատակային կիրառություն ունեցող ջրերի ծավալների ավելացումը: Կոնգրեսի օրակարգի հարցերի թվարկումը հուշում է նաև, թե այդ ոլորտում համաշխարհային նշանակության ինչ հիմնախնդիրներ կան և ինչպես են տեսնում դրանց հետագա զարգացումներն ու լուծումները:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ արտաքին առևտրի խմելու ջրերի, այդ թվում՝ հանքային, արտաքին առևտրի դասակարգման ապրանքային անվանացանկի քառանիշ դասակարգման համաձայն՝ այդ հաշվառումն իրականացվում է «2201» ծածկագրի՝ «Ջրեր, բնական կամ արհեստական հանքային ջուր և ըմպելիք (առանց շաքարի)» և «2202» ծածկագրի՝ «Հանքային ջուր և ըմպելիք (շաքարով)» [23]: Չնայած ոչ ոք չի ժխտում, որ խմելու ջրերը ըմպելիք են, սակայն կարծում ենք՝ ժամանակն է, որ խմելու ջրերը, այդ թվում՝ հանքային, առանձնացվեն ներկայի գործող ապրանքային խմբի ներսում՝ դրանք ցույց տալով առանձին ենթախմբով (պահպանելով, իհարկե, արտաքին առևտրային գործունեության ծածկագրումը): Այլապես, այդ նույն վիճակագրության համաձայն, 2011 թվականին «2201» ծածկագրով ապրանքային ենթախմբում ՀՀ-ից արտահանումը կազմել է 13294,5 տոննա՝ 5714,0 հազ. դոլար արժեքով, իսկ ներմուծումը՝ համապատասխանաբար 352,5 տոննա և 312,5 հազ. դոլար, իսկ «2201» ծածկագրով ապրանքային ենթախմբով արտահանման ցուցանիշները կազմել են 2880,9 տոննա և 2821,1 հազ. դոլար, իսկ ներմուծմանը՝ համապատասխանաբար 15628,2 տոննա և 12210,2 հազ. ԱՄՆ դոլար: Հասկանալի է, որ նման դասակարգման պայմաններում շատ դժվար է որոշել խմելու ջրի և մնացած ըմպելիքների տարանջատումը, ուստի ճիշտ կլինի, որ, ինչպես արդեն նշել ենք վերևում, դրանք ցույց տրվեն առանձին: Իսկ եթե փորձենք «2201» և «2202» ծածկագրերով

ապրանքային ենթախմբերը գումարենք, ապա կունենանք հետևյալ պատկերը. 2011 թ. ՀՀ-ից նշված երկու ծածկագրերով արտահանվել են 16175,4 տոննա քաշով և 8535,1 հազ. դոլար արժեքով ապրանքներ, իսկ ներմուծվել՝ 15980,7 տոննա քաշով և 12522,7 հազ. դոլար արժեքով ապրանքներ [23]: Ստացվում է հետաքրքիր և միաժամանակ տարօրինակ իրավիճակ այն առումով, որ ՀՀ-ն, հարուստ լինելով խմելու ջրերով և ընպելիքներ պատրաստելու հնարավորություններով (ընպելիքների պատրաստման հիմքում ընկած է խմելու ջուրը) միայն 2011 թ. շուրջ 4 մլն դոլարի չափով նշված ապրանքային ենթախմբերի հաշվով ունի առևտրային բացասական հաշվեկշռի մնացորդ: Ստացվում է, որ ամեն տարի այդ չափով հայրենական տնտեսությունը զարգացնելու փոխարեն, ներդրումներ ենք կատարում այլ երկրներում: Նման երևույթը մեկ անգամ ևս բացատրում է, թե ինչու ՀՀ-ում ավելի ձեռնտու է ներմուծել, քան թե արտահանել: Սրա հիմքում ընկած է այն հանգամանքը, որ ներկայիս դոլար/դրամ փոխարժեքի պայմաններում ՀՀ-ում խմելու ջուրը 2 անգամ ավելի թանկ է, քան աշխարհի մյուս երկրներում: Այս խնդրի լուծման ուղիներից մեկը հայկական դրամի արժեզրկումն է, որպեսզի կարողանանք ավելացնել ընդհանրապես հանրապետությունից արտահանումը և, մասնավորապես, խմելու ջրերի արտահանումը:

#### 7.4. ՀՀ բնակչության արտագաղթի հակվածության գործոնային վերլուծություն

Հայաստանի միգրացիոն իրավիճակը կտրուկ փոփոխությունների ենթարկվեց 1980-ական թվականների վերջերից սկսած՝ պայմանավորված 1988 թ. Սպիտակի երկրաշարժով, ԽՍՀՄ փլուզման հետևանքով քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի վերափոխումներով ու Ղարաբաղյան պատերազմի ծանր հետևանքներով:

Հարկ ենք համարում շեշտել, որ վերջին քսան տարիների ընթացքում էապես փոխվել են Հայաստանի Հանրապետության միգրացիոն հոսքերը, դրանց դրդապատճառներն ու հետևանքները, միգրացիոն գործընթացների մեջ ներգրավված խմբերն ու նրանց խնդիրները: Նշված փոփոխությունները պահանջում են միգրացիոն հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրություն և առկա բոլոր կապերի վերհանում: Միայն այդ ճանապարհով է հնարավոր մշակել արդյունավետ պետական միգրացիոն քաղաքականություն:

1991 թ. անկախացմանը նախորդած ու հաջորդած տարիներին Հայաստանի Հանրապետությունը ստիպված է եղել դիմագրավել ինտենսիվ միգրացիոն գործընթացներով պայմանավորված բազմապիսի մարտահրավերների: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը միգրացիայի պետական արդյունավետ կարգավորման հիմնախնդրի լուծումը սահմանել է որպես իր գործունեության առանցքային ուղղություններից մեկը [51]:

Աղյուսակ 7.12-ում ներկայացված են 1992-2013 թթ. Հայաստանի Հանրապետությունից մեկնաձևների և ժամանաձևների տվյալները:



**Աղյուսակ 7.12. ՀՀ-ից մեկնածներն ու ՀՀ ժամանածները 1992–2011 թթ., հազար մարդ**

Տարի	Ժամանածներ	Մեկնածներ	Միզբացիոն սալը (+,-)
1992	636,9	865,5	-228,6
1993	689,9	831,0	-141,1
1994	470,0	597,8	-127,8
1995	469,5	507,0	-37,5
1996	496,9	517,4	-20,5
1997	473,6	504,9	-31,3
1998	415,3	439,7	-24,4
1999	311,4	318,6	-7,2
2000	399,7	457,2	-57,5
2001	508,2	568,6	-60,4
2002	590,7	593,4	-2,7
2003	618,3	628,5	-10,2
2004	739,9	737,8	2,1
2005	845,8	833,3	12,5
2006	983,7	962,0	21,7
2007	1293,6	1296,8	-3,2
2008	1397,2	1420,2	-23,0
2009	1432,0	1457,0	-25,0
2010	1754,2	1800,9	-46,7
2011	1945,1	1988,9	-43,8
2012	2191,9	2234,7	-42,8
2013	2476,3	2507,5	-31,2

**Աղբյուրը՝** ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր Միզբացիոն պետական ծառայության հրապարակումները:

1988–2001 թթ. հանրապետությունից արտագաղթել են մինչև 1,0–1,1 մլն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ [37], ինչը կազմում է մշտական բնակչության ներկայիս թվի 1/3–ից ավելին: Ակնհայտ է, որ նման մասսայական երևույթն էական ազդեցություն է ունեցել և դեռ երկար կունենա երկրի իրողությունների վրա: Ազդեցությունը հատկապես մեծ է ժողովրդագրական պատկերի վրա: Կտրուկ փոփոխություն կրեց ինչպես ժողովրդագրական կազմը, այնպես էլ բնակչության սեռատարիքային կառուցվածքը: Ծնելիությունը նվազեց շուրջ 2,2, իսկ ամուսնությունների թիվը՝ գրեթե երկու անգամ [32, 37]:

2002–2007 թթ. արտաքին միզբացիոն տեղաշարժերի ծավալները կազմել են՝ արտահոսք՝ մոտ 750 հազար մարդ, ներհոսք՝ գրեթե 600 հազար մարդ, բացասական մնացորդ՝ շուրջ 150 հազար մարդ [37]: Այս շրջանում տարեկան միջին հաշվով արտաքին միզբացիոն բացասական մնացորդը կազմել է

գրեթե 25 հազար, որոնցից շուրջ 9 հազարը էմիգրացվել է մշտապես (դուրս են եկել մշտական հաշվառումից), իսկ 15–20 հազարը աշխատանքային միգրանտներն են, որոնք չեն վերադարձել և շարունակում են մնալ ընդունող երկրներում: Այսինքն՝ նշված ժամանակաշրջանի ընթացքում առաջացել են այդպիսի անձանց շուրջ 110 հազարի հասնող «կուտակումներ», սակայն չի կարելի բացառել հետագայում նրանց վերադարձը հայրենիք [37]:

Մյուս կողմից՝ խոսելով միգրացիայի հետևանքների մասին՝ հարկ է նշել, որ էմիգրանտների կողմից երկիր փոխանցվող դրամական միջոցները էապես մեղմեցին և շարունակում են մեղմել բնակչության անվճարունակության խնդիրը, սոցիալական և կենցաղային շատ խնդիրներ:

Ակներև է մի բան, որ վերջին քսան տարիների ընթացքում արտագաղթածները հազիվ թե մասսայաբար՝ խոշոր խմբերով վերադառնան: Բայց մյուս կողմից էլ էական է նրանց՝ հայրենիքի հետ ունեցած կապը (դրամական փոխանցումներ, անշարժ գույքի տեսքով սեփականության առկայություն և այլն), ինչը թույլ չի տալիս բացառել այս սեգմենտի ո՛չ որոշ ռեէմիգրացիոն հավանականությունը և ո՛չ էլ արտահոսքածին դերը:

«Հ միգրացիոն հոսքերում ավանդաբար իր ուրույն տեղն է ունեցել սեզոնային աշխատանքային միգրացիան (գարուն–աշուն): Այս հոսքը, որն առավելապես Ռուսաստանի Դաշնություն և Նախկին ԽՍՀՄ երկրներ է ուղղված, ընդամենը գոյատևման և «օրվա հացի» խնդիր է լուծում: Այս սեզոնային միգրանտները հիմնականում զբաղված են շինարարության, տրանսպորտի, առևտրի և սպասարկման ոլորտներում և կատարում են, որպես կանոն, ցածր որակավորում պահանջող աշխատանք: Այս միգրանտները բազմաթիվ խնդիրների են առնչվում՝ սկսած վճարման ուշացման, մասնակի և երբեմն նաև բոլորովին չվճարման, աշխատանքային շահագործման խնդիրներից, որոնք հետևանք են աշխատանքի բանավոր պայմանավորվածությունների, և վերջացրած մուտքի երկրներում անօրինական վիճակում հայտնվելը: Նշված խնդիրները էլ ավելի կարևոր են դարձնում սեզոնային աշխատանքային միգրացիայի գործընթացներում պետության միջամտությունը, այդ խնդիրների համապատասխան օրենսդրական կարգավորում տալը:

Կասկածից վեր է միայն այն, որ մոտ ապագայում արտաքին միգրացիոն հոսքերը զգալի չափով կանխորոշվելու են արտերկրում կուտակված աշխատանքային տևական միգրանտների հետագա միգրացիոն վարքագծով: Չի բացառվում ինչպես նրանց մեծ մասի մշտական բնակչության մնալը, այնպես էլ իրենց ընտանիքների տեղափոխումը: Արդյունքում՝ առաջիկա 5–10 տարիներին Հայաստանի Հանրապետությունից կարող են էմիգրացվել շուրջ 300 հազար քաղաքացիներ: Նման սցենարը բոլոր առումներով ոչ միայն անցանկալի է, այլև կարող է աղետալի լինել:

Այսպիսով՝ չնայած սրության աստիճանի որոշ մեղմմանը՝ Հայաստանի ներկայիս միգրացիոն իրավիճակն ընդհանուր առմամբ շարունակում է մնալ բարդ, ուստի և պահանջում է հրատապ լուծումներ: Դրա պատճառներն են աշխատատեղերի և արժանավայել գոյատևման համար անհրաժեշտ եկամուտների բացակայությունը, սոցիալ–տնտեսական ոլորտում առկա հիմնախնդիր–

ները, տարածքային զարգացման անհամաչափության խնդիրները, ապագայի նկատմամբ վստահության բացակայությունը:

Հայաստանի Հանրապետության արդի միգրացիոն գործընթացների ժողովրդագրական բացասական հետևանքներն են՝

- մշտական բնակչության թվի աճի դանդաղում և առկա բնակչության թվի նվազում,
- բնակչության (հատկապես գյուղական բնակչության)՝ ըստ սեռի և տարիքի բաշխման համամասնությունների խաթարում՝ վերարտադրողական տարիքի անձանց բացարձակ թվի և տեսակարար կշռի նվազում,
- սեռերի հարաբերակցության խախտում ու դրանով պայմանավորված՝ վերարտադրության գործընթացների բարդացում,
- բնակչության ծերացման արագացում,
- արտագնա աշխատանքային միգրանտների տևական բացակայության պատճառով ընտանիքի կայունության նվազում, ամուսնաընտանեկան հարաբերությունների համակարգի խաթարում, աճող սերնդի դաստիարակության և սոցիալացման խնդիրների սրում,
- սահմանամերձ ու հեռավոր տարածաշրջանների բնակչության թվաքանակի նվազում, գյուղական և փոքր ու միջին քաղաքային բնակավայրերի տնտեսական և սոցիալական ներուժի նվազում,
- երկրի բնակչության՝ երևանում և երևանամերձ մարզերում կենտրոնացման շարունակում և այլն:

Հայտնի է, որ պետության հզորության հարցում, ի թիվս այլ գործոնների, առանցքային նշանակություն ունեն ժողովրդագրական բնութագրիչները: Գիտականորեն հիմնավորված է, որ ազգային հզորությունը կարող է ներկայացվել հետևյալ բանաձևով [9]:

$$ԱՀ = (ԲԺՏԲ + ՏԿ + ՌԿ) \times (ՄՆ + ԱՍԿ)$$

ԱՀ-ն ազգային հզորությունն է,

ԲԺՏԲ-ն՝ բնակչության ժողովրդագրական և տարածքային բնութագրիչները,

ՏԿ-ն՝ տնտեսական կարողությունը,

ՌԿ-ն՝ ռազմական կարողությունը,

ՄՆ-ն ստրատեգիական նպատակը,

ԱՍԿ-ն՝ ազգային ստրատեգիային հետամուտ լինելու կամքը:

Բանաձևը ցույց է տալիս, թե որքան փոխկապակցված են առօրյա կյանքում առաջին հայացքից միմյանց հետ առնչություն չունեցող աշխատավարձի մեծությունն ու պետության ռազմական կարողությունը, հարկային համակարգն ու տարածքի օգտագործման մակարդակը և այլն [9]: Իրականում հենց այդ փոխկապակցությունն է պահանջում, որ երկրի առջև ծառայած յուրաքանչյուր հիմնախնդրի լուծում լինի համակարգային: Այդպես է նաև արտագաղթի հիմնախնդրի պարագայում: Խնդիրը պետք է ուսումնասիրվի համակողմանիորեն՝ հաշվի առնելով դրա վրա ազդող բոլոր գործոններն ու դրանից ծագող բոլոր հետևանքները:

Մեր օրերում միգրացիան դարձել է ցանցային և մշակութափոխանակական երևույթ, որը շատ դժվար է սահմանափակել կամ հաղթահարել: Հիմնական խնդիրն այն է, որ միգրացիան ինքնին միգրածին է. այլ կերպ ասած՝ ցանկացած միգրացիոն ակտ փոխում է այն սոցիալական միջավայրը, որում ընդունվում է միգրացիայի մասին որոշումը: Այստեղ վտանգ կա, քանի որ երբ համայնքում սոցիալական կապերը կրիտիկական մակարդակի են հասնում, միգրացիան ինքնավերարտադրվում է և դառնում հավերժական երևույթ [61]:

Այսպիսով՝ միգրացիոն իրավիճակի վերլուծությունից հետևում է, որ միգրացիոն հիմնախնդիրները ենթակա չեն ինքնակարգավորման: Ավելին՝ համարժեք և արդյունավետ պետական միջամտության բացակայությունը հավանական է դարձնում դրանց հետագա սրումը:

Պետությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ բարելավելու միգրացիոն գործընթացների հետևանքով առաջացած ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակը: Իսկ դա պահանջում է Հայաստանի Հանրապետության բնակչության աճի խթանմանը, բնակչության սեռատարիքային արդյունավետ համամասնությունների ձևավորմանը նպաստող պետական քաղաքականության իրականացում: Ժողովրդագրական բացասական միտումները դասվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների շարքին [46]: Հայաստանի Հանրապետության բնակչության սեռատարիքային անհամամասնությունները վերացնելու ուղղությամբ կարևոր է երկրից հեռացած վերարտադրողական տարիքի տղամարդկանց կայուն ներհոսքի ապահովումը, արտահոսքի կանխարգելմանը նպաստող սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացումը: Հայաստանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակը բնութագրվում է որպես «գրոյական» վերարտադրության իրավիճակ և, որպես կառավարության հիմնական գերակայություններից մեկը, նախանշված է ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես ծնելիության աճի ու երիտասարդ ընտանիքների աջակցությանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը [25]:

Հետխորհրդային շրջանում միգրացիոն երևույթների աշխուժացմանը զուգընթաց հրատապ դարձավ միգրացիոն գործընթացների պետական կարգավորման անհրաժեշտությունը: Ուստի պետական կառավարման համակարգում ստեղծվեց հատուկ մարմին, որը պետք է զբաղվեր միգրացիոն խնդիրներով: Ճիշտ է՝ իր գոյության ավելի քան 20 տարիների ընթացքում միգրացիոն ծառայությունը տարաբնույթ անվանումներ ու գերատեսչական պատկանելություն է ունեցել, այն մշտապես կոչված է եղել միգրանտների խնդիրներով զբաղվելուն, համապատասխան միգրացիոն քաղաքականություն մշակելուն և այն կյանքի կոչելուն:

Կարևոր է նաև հիշատակել, որ պետական կառավարման համակարգում համապատասխան մարմինների ձևավորմանը զուգընթաց Հայաստանը ձեռնամուխ եղավ միգրացիոն խնդիրների կարգավորման իրավական դաշտի ստեղծմանը: Առաջին հերթին՝ անկախացման հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետությունը միացավ ՄԱԿ-ի «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» [82], Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների և հիմնա-

րար ազատությունների պաշտպանության մասին» [83] 1950 թ., Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատանքի և զբաղմունքների բնագավառում խտրականության մասին» [69] կոնվենցիաներին: Այս կոնվենցիաներին միանալով՝ Հայաստանը հաստատեց միջազգային իրավունքի հիմնարար նորմերին համահունչ միգրացիոն քաղաքականություն իրականացնելու պատրաստականությունը: Հայաստանի Հանրապետությունը միացել է նաև բազմաթիվ այլ բազմակողմ համաձայնագրերի:

Մեր երկիրը միգրացիոն գործընթացները պատշաճ կանոնակարգելու և միգրացիոն հոսքերը արդյունավետ կառավարելու նպատակով, ինչպես նաև կարևորելով այս ոլորտներում այլ երկրների հետ համաձայնեցված գործողությունների իրականացումն ու համագործակցությունը՝ կնքել է երկկողմ համաձայնագրեր Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Բելառուսի Հանրապետության, Ուկրաինայի, Չեխիայի Հանրապետության, Նորվեգիայի Թագավորության, Բենիլյուքսի պետությունների, Շվեդիայի Թագավորության, Բուլղարիայի Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Շվեյցարիայի Դաշնային Խորհրդի, Դանիայի Թագավորության հետ:

Անշուշտ պակաս կարևոր չէր նաև ազգային օրենսդրության մշակումը և դրա հետագա կատարելագործումը: Այս առումով հատկանշական էր հատկապես «Քաղաքական ապաստանի մասին», «1988–1992 թվականներին Ադրբեյջանի Հանրապետությունից բռնազաղթած փախստականների համար կառուցված բնակարանների սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին», «Փախստականների և ապաստանի մասին» և «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքները:

Ինստիտուցիոնալ հենքից ու իրավական կարգավորումից զատ՝ վերջին քսան տարիների ընթացքում թե՛ պետական և միջազգային կառույցների, թե՛ անհատ հետազոտողների կողմից մշտապես հետազոտվել են միգրացիոն երևույթները, և փորձ է արվել բացահայտելու դրանց հիմնական դրդապատճառներն ու մատնանշելու դրանց բացասական հետևանքների վերացման ուղիները: Միաժամանակ հարկ է նշել, որ միգրացիոն գործընթացները ուսումնասիրվել են այս կամ այն երևույթի վրա ունեցած ազդեցությունը գնահատելու համատեքստում: Որոշ հետազոտություններում խնդիր է դրվել ուսումնասիրելու միգրացիայի և մասնավոր տրանսֆերտների կապը, այլ հետազոտողներ վերլուծել են միգրացիայի ՀՆԱ–ի փոփոխության վրա ունեցած ազդեցությունը, երրորդները միգրացիոն խնդիրները ուսումնասիրում են առավելապես աշխատանքային միգրացիայի տեսանկյունից և այլն<sup>1</sup>:

Մեր նպատակն է բացահայտել ՀՀ արտագաղթի հիմնական կառուցվածքը, միտումները, ուղղությունները, ինչպես նաև դրդապատճառները և դրանց հիման վրա հանդես գալ պետական քաղաքականության մեջ երկարաժամկետ հատվածում բնակչության աճը խթանող և արտագաղթը զսպող առաջարկներով:

Հետազոտության իրագործման համար կիրառվել է **քանակական և որակական հետազոտական մեթոդը**:

<sup>1</sup> Հատկապես արժանահիշատակ են հետևյալ հետազոտությունները. [54, 61, 62, 66, 67, 68, 76]:

Քանակական հետազոտության հիմքում ՀՀ ողջ տարածքում կատարված հարցումն է, որը պատվիրել է Եվրոպական վերապատրաստումների հիմնադրամը (ETF, [www.etf.eu](http://www.etf.eu)) և իրագործել Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոն-Հայաստանը (CRRC Armenia, [www.crrc.am](http://www.crrc.am)): Հարցումն անց է կացվել ՀՀ ողջ տարածքով: Նախապես սահմանված մեթոդաբանությամբ ընտրանքում ընդգրկվել է 2630 և 1426 պատասխանող<sup>1</sup>: Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2011 թ. դեկտեմբերի 13–29–ը և 2012 թ. հունվարի 07–30–ը:

Հետազոտության շրջանակներում ՀՀ բնակչությանը դասակարգվել է երեք խմբերի՝ «չմեկնածների», «պոտենցիալ» և «վերադարձած» էմիգրանտների:

«**Չմեկնած**» է համարվել այն անձը, որը՝

- եղել է 18–50 տարիքային միջակայքում,
- վերջին տասը տարիների ընթացքում չի աշխատել արտերկրում կամ աշխատել է երեք ամսից ոչ ավելի ժամանակահատված,
- պատրաստ է եղել և հասանելի քանակական հարցմանը մասնակցելու համար:

«**Վերադարձած**» էմիգրանտ է համարվել այն անձը, ով՝

- մեկնել է Հայաստանից 18 և ավելի տարիքում,
- արտերկրում անդադար աշխատել է առնվազն երեք ամիս ժամանակահատված,
- վերադարձել է Հայաստան ոչ ավելի, քան տասը տարի առաջ,
- պատրաստ է եղել և հասանելի քանակական հարցմանը մասնակցելու համար:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ «չմեկնածների» խմբում 34%–ը մտադրություն ունի մեկնելու Հայաստանից, ավելին՝ այդ մարդկանց 79,3%–ը հավանական է համարում առաջիկա երկու տարում երկրի լքումը: «Վերադարձածների» խմբում, ի տարբերություն «չմեկնածների», կրկին մեկնելու մտադրություն են հայտնել գերակշիռ մասը՝ 68,4%–ը, իսկ առաջիկա երկու տարվա ընթացքում երկրի լքումը հավանական է համարում նրանց 65,7%–ը:


Ելնելով ստացված պատկերից՝ մեր հետազոտության տրամաբանության շրջանակներում «չմեկնածների» և «վերադարձածների» խմբում առանձնացրել ենք «**պոտենցիալ էմիգրանտ**» կատեգորիան, որը մեր սահմանմամբ համարվել է այն անձը, որը՝

- մասնակցել է քանակական հարցմանը՝ որպես «չմեկնած» կամ «վերադարձած» խմբերից մեկի ռեսպոնդենտ,
- հայտնել է Հայաստանից առաջիկա երկու տարում իր մեկնելու մտադրության մասին՝ ելնելով հարցաթերթի ձևաչափից խիստ հավանական և բավականին հավանական պատասխանների միջոցով<sup>2</sup>:


<sup>1</sup> Հարցման մեթոդաբանությանը կարելի է ծանոթանալ հարցման արդյունքները ամփոփող զեկույցում՝ տե՛ս <http://www.crrc.am/research-and-surveys/ongoing-projects/migration-and-skills?lang=hy> (15. 10.2013): Կայքում զետեղված են նաև հարցման արդյունքները ամփոփող տվյալների շտեմարանները SPSS ֆորմատով, որոնք հիմք են հանդիսացել մեր հետազոտության իրականացման համար:

<sup>2</sup> Նշենք, որ հարցման շրջանակներում նույնպես կիրառվել է պոտենցիալ էմիգրանտ եզրը, սակայն այլ համատեքստում: Մասնավորապես՝ հարցման ընթացքում պոտենցիալ էմիգրանտ է համարվել այն ռեսպոնդենտը, որը վերադարձածների խմբից չէ: Մեր հետազոտության շրջանակներում դրանց անվանել ենք չմեկնածներ:

Գծանկար 7.12-ը և 7.13-ը ցույց են տալիս «չմեկնաձների» և «վերադարձածների» խմբերում առաջիկա երկու տարիներին մեկնելու մտադրությունները:



Գծանկար 7.12. «Չմեկնաձների» առաջիկա երկու տարիներին Հայաստանից մեկնելու մտադրությունները (տոկոսներով)




Գծանկար 7.13. «Վերադարձածների» առաջիկա երկու տարիներին Հայաստանից մեկնելու մտադրությունները (տոկոսներով)

Այսպիսով՝ համաձայն գծանկար 7.12-ի և 7.13-ի՝ «չմեկնաձների» 27%-ը, իսկ «վերադարձածների» 65,7%-ը «պոտենցիալ» էմիգրանտներ են:

Ակնհայտ է, որ հետազոտության շրջանակներում մատնանշված «պոտենցիալ» էմիգրանտների խումբը ամենից կրիտիկականն է, քանի որ ներառում է մեծ քանակությամբ մարդկանց, որոնք մտադիր են առաջիկայում լքել երկիրը: Հետևաբար, մեր կողմից փորձ է արվել պարզելու, թե ինչպիսի նկարագիր ունեն այս խմբի մարդիկ, այն է՝ ինչ զբաղվածություն, տարիքային կառուցվածք, եկամտի և կրթության մակարդակ ունեն վերջիններս:


Գծանկար 7.14-ը ցույց է տալիս «չմեկնաձներ» խմբում մեկնելու ցանկությունն արտահայտածների՝ առաջիկա երկու տարում մեկնելու մտադրվածությունը՝ ըստ կրթության մակարդակի<sup>1</sup>:

<sup>1</sup> Նկատենք, որ բարձրագույն, միջին և նվազագույն կրթության մակարդակին համապատասխանում են հետևյալ սահմանումները. 1. բարձրագույն կրթություն՝ ստացել է բարձրագույն կրթության ավարտական հավաստագիր և/կամ գիտական աստիճանը հաստատող հավաստագիր, 2. միջին՝ ստացել է միջին-մասնագիտական կրթական հաստատության ավարտական հավաստագիր և/կամ ավագ դպրոցն ավարտելու մասին հավաստագիր, 3. նվազագույն՝ ստացել է ութամյա կամ ավելի ցածր կրթության հավաստագիր:



Գծանկար 7.14. «Հմեկնածների» խմբում մեկնելու ցանկություն արտահայտածների՝ առաջիկա երկու տարում մեկնելու մտադրվածությունը ըստ կրթության մակարդակի

Հետազոտության շրջանակներում վերլուծել ենք «Հմեկնածների» խմբի անդամների տարիքային կառուցվածքը: Այդ նպատակով խմբի անդամներին խմբավորել ենք 18–30, 31–40 և 41–50 տարիքային խմբերում:




Գծանկար 7.15. «Հմեկնածների» խմբում առաջիկա երկու տարիների մեկնելու հավանականությունն ըստ տարիքային խմբի (տոկոսներով)

Ինչպես վկայում է գծանկար 7.15-ը, «Հմեկնածների» խմբում «պոտենցիալ» էմիգրանտներն առաջին հերթին պատկանում են 18–30, ապա՝ 41–50 տարիքային խմբին:

«Հմեկնածների» խմբում ներկայումս զբաղվածներից մեկնելու ցանկություն են հայտնել 32,9%-ը, որը համահունչ է ընդհանուր առմամբ մեկնել ցանկացողների տեսակարար կշռին՝ անկախ աշխատանք ունենալուց: Գծանկար 7.16-ի միջոցով գնահատել ենք աշխատանք ունեցող «պոտենցիալ» էմիգրանտների քանակը մեկնելու մտադրություն ունեցողների մոտ:






**Գծանկար 7.16.** *Ներկայումս աշխատանք ունեցող «չմեկնածների» առաջիկա երկու տարիներին Հայաստանից մեկնելու մտադրությունները (տոկոսներով)*


Այսպիսով՝ աշխատանք ունեցող «պոտենցիալ» էմիգրանտ են «չմեկնածների» 25,7%-ը (որոնք աշխատանք ունեցող և մեկնելու մտադրություն ունեցողների 78%-ն են):

Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ «պոտենցիալ» էմիգրանտների և աշխատանք ունեցող «պոտենցիալ» էմիգրանտների խմբերում մեկնելու մտադրվածությունները հիմնականում համասեռ բաշխում ունեն, ուստի աշխատանք ունենալը էական նշանակություն չունի մեկնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար: Ստացվում է, որ այսօր արդեն հայրենիքում աշխատանք ունենալը դեռևս բավարար չէ սեփական երկիրը լքելու մասին մտորելու և այն պլանավորելու համար. գոյություն ունեն այլ դրդապատճառներ:



**Գծանկար 7.17.** *«Չմեկնածների» խմբում աշխատանք և մեկնելու ցանկություն ունեցողների կրթության մակարդակի և կատարած աշխատանքում ունեցած որակավորման օգտագործման համադրումը (տոկոսներով՝ ըստ կրթության մակարդակի)*


Համաձայն գծանկար 7.17-ի՝ աշխատանք և մեկնելու ցանկություն ունեցողների խմբում բարձրագույն և միջին-մասնագիտական կրթություն ունեցողների մոտ կեսը նշել է, որ իր որակավորումն առավել է, քան նրանից պահանջվում է իր կատարած աշխատանքի շրջանակներում, որը հանգեցնում է անբավարարվածության:



Գծանկար 7.18. «Վերադարձածների» խմբում առաջիկա երկու տարիների կրկին մեկնելու մտադրությունը՝ ըստ տարիքային կազմի (տոկոսներով)


Գծանկար 7.19-ից երևում է, որ առաջիկա երկու տարիներին մեկնելու մտադրությունները, հետևաբար նաև այս խմբում «պոտենցիալ» էմիգրանտները ըստ տարիքային կազմի համասեռ են:

Հետազոտությունը ցույց է տվել, որ «վերադարձած» էմիգրանտների մոտ 1/3-ը միայն հայրենիքում աշխատանք ունի:



Գծանկար 7.19. «Վերադարձածների» կրկին մեկնելու ցանկություններն ըստ վերադառնալուց հետո հայրենիքում աշխատանքի առկայության (տոկոսներով)

Համաձայն գծանկար 7.19-ի՝ «վերադարձած» էմիգրանտների խմբում աշխատանք ունեցողների կեսը կրկին ցանկություն ունի մեկնելու հայրենիքից, մինչդեռ չաշխատողների խմբում այդ մարդկանց բաժինը հասնում է մոտ ընդհանուր չաշխատողների 3/4-ին:



**Գծանկար 7.20.** «Վերադարձած» աշխատող էմիգրանտների աշխատավարձի մակարդակի հարաբերակցությունը առաջիկա երկու տարիներին նրանց մեկնելու մտադրություններին (տոկոսներով՝ ըստ աշխատավարձի մակարդակի)

Դատելով գծանկար 7.20–ի տվյալներից՝ աշխատողների աշխատավարձի մակարդակի ավելացմանը զուգընթաց նրանց՝ մեկնելու մտադրություններն ավելանում են: Ավելին՝ ավելանում է նաև այդ մարդկանց մեջ «պոտենցիալ» էմիգրանտների տեսակարար կշիռը: Հետևաբար, այսպիսի օրինաչափությունը միանշանակորեն վկայում է, որ աշխատավարձի ավելացումը բավարար չէ երկիրը չլքելու մտադրության առումով:

Այսպիսով՝ հետազոտության շրջանակներում պարզ է դարձել, որ թե՛ «չմեկնածների», թե՛ մեկնածների խմբերում զգալի է արտագաղթելու ցանկություն ունեցող մեր հայրենակիցների թվաքանակը: Ավելին՝ տարիքը, կրթության մակարդակը, զբաղվածությունը և եկամտի չափը նշանակալի ազդեցություն չունեն մեկնելու մտադրության վրա: Հետազոտության ընթացքում նաև պարզվել է, որ չնայած «վերադարձած» էմիգրանտների խմբում զգալի մաս են կազմում միջինից բարձր տարիքային խմբում գտնվող և «սեզոնային» էմիգրանտ հանդիսացող տղամարդիկ, պակաս չեն նաև երիտասարդ կանանց և բարձրագույն կրթամակարդակ ունեցողների արտագաղթելու մտադրվածությունները: Մյուս կողմից՝ «չմեկնածների» խմբում հիմնականում մեկնելու մտադրվածություն են հայտնում երիտասարդները՝ կրկին անկախ տարիքային խմբից, աշխատավարձից և աշխատանք ունենալու փաստից: Սակայն այս եզրակացությունները բավականաչափ հիմնավոր չեն, քանի դեռ չի պարզվել դրանց վիճակագրական նշանակալիությունը: Այդ նպատակով իրականացվել են նաև որոշ վարկածների ստուգումներ՝ սահմանային ազդեցությունը գնահատող Probit ռեգրեսիոն մոդելի միջոցով: Վարկածների ստուգման մանրամասներին կարելի է ծանոթանալ «Միգրացիա. միտումներ, հեռանկարներ» հետազոտական աշխատանքում [16]: Նշենք միայն հետազոտության արդյունքներից մի քանիսը.

- «Չմեկնածների» խմբում տղամարդիկ առավել հակված են մեկնելու, քան կանայք, մինչդեռ «վերադարձած» էմիգրանտների խմբում կանայք առավել հակված են մեկնելու, քան տղամարդիկ:
- «Չմեկնածների» խմբում աշխատանք ունենալու հանգամանքը նշանակալի ազդեցություն չի թողնում Հայաստանից արտագաղթելու մտադ-

րության վրա: Իսկ ահա «վերադարձած» էմիգրանտների շրջանում աշխատանքի առկայությունը էապես նվազեցնում է մեկնելու հավանականությունը:

- Թե՛ «չմեկնածների», թե՛ «վերադարձած» էմիգրանտների եկամտի փոփոխությունը նրանց մեկնելու մտադրության վրա ազդեցություն ունի, սակայն կապը շատ թույլ է:
- Թե՛ «չմեկնածների», թե՛ «վերադարձած» էմիգրանտների կրթության մակարդակը նշանակալի ազդեցություն չունի Հայաստանից արտագաղթելու մտադրության վրա:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ ներկայումս արտագաղթը իր որակական և քանակական բնութագրմամբ ստանում է միանգամայն նոր տեսք: Այսպես՝ միգրացիայի հակված են առավելապես երիտասարդները և միջին տարիքի կանայք: Մյուս կողմից՝ մեկնելու պատճառները սոսկ աշխատանքի բացակայությունից տեղափոխվում են դեպի երկարաժամկետ պլանավորում, կյանքի որակի բարձրացում: Իսկ դա նշանակում է, որ մեր երկրում ապագայում գնալով նվազելու է ծնելիության աժի տեմպը, և պահպանվելու է հասարակության միջին տարիքի բարձրացման միտումը: Իսկ այսպիսի երևույթը էապես նվազեցնելու է երկրում իրականացվող բոլոր տնտեսական բարեփոխումների արդյունավետությունը՝ բիզնես միջավայրի բարելավում, կենսաթոշակային բարեփոխումներ, ապահովագրական ոլորտի զարգացում և այլն: Մյուս կողմից՝ այս երևույթը ավելացնելու է անվտանգությանն առնչվող հիմնախնդիրները: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու երևույթի խորքային պատճառների վերլուծություն, ինչպես նաև միջոցառումներ ձեռնարկել դրա կանխարգելման ուղղությամբ:

Նախ՝ արտագաղթի ծավալների կրճատման ուղղությամբ պետության վարած քաղաքականությունը պետք է ելնի այն իրողությունից, որ արտագաղթել ցանկացողները ներկայումս առաջնորդվում են երկարաժամկետ պլանավորմամբ: Սա նշանակում է, որ առավելապես պետք է ուշադրություն դարձվի բնակչության կողմից պետության նկատմամբ վստահության բարձրացման խնդիրներին: Ակներև է մի բան, որ չնայած վերջին տարիներին պետության կողմից իրականացվել են և շարունակում են իրականացվել բարեփոխումներ հասարակական-տնտեսական տարաբնույթ ոլորտներում (հարկային վարչարարություն, գործարար միջավայրի բարելավում, դատաիրավական համակարգ, խոսքի ազատություն, պետական կառավարման թափանցիկություն և այլն), այնուամենայնիվ, այս բարեփոխումները դանդաղ են ընթանում, ինչը մեծացնում է անորոշությունն ու հիասթափություն է առաջացնում բնակչության լայն շերտերի, հատկապես երիտասարդների շրջանում: Ուստի պետական քաղաքականությունը, նրա գերակայություններն ու հիմնական նպատակները պետք է առաջին հերթին հասանելի ու հասկանալի լինեն բնակչության համար: Բացի այդ՝ պետք է ներկայացվեն հստակ տեսլականներ ու ամենօրյա աշխատանքով ապացուցվեն դրանց կենսունակությունը: Այս առումով խիստ կարևոր է բնակչության լայն զանգվածներին իրազեկել իրականացվող ծրագրերի մա-

սին, բացատրել դրանց կարևորությունն ու մատնանշել այդ ծրագրերից ակնկալվող արդյունքները: Սա, անկասկած, բնակչության մոտ լրացուցիչ հավատ և վստահություն կներշնչի վաղվա օրվա նկատմամբ: Այնուամենայնիվ, պետք է այնպես անել, որպեսզի հասարակությունը ոչ թե լինի իրականացվող ծրագրերի «հանդիսատեսը», այլև ակտիվորեն ներգարավված լինի դրանց իրականացման գործին: Հասարակության մտածելակերպի մեջ պետք է արմատավորվի սեփական երկրի նկատմամբ պատասխանատվության և պահանջատիրության գաղափարը:

Մյուս կարևոր խնդիրը բնակչության զբաղվածության ապահովումն է: Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշխատաշուկայի խնդիրները ուղղակիորեն ազդում են միգրացիոն տրամադրվածության վրա: Վերադարձած էմիգրանտները երկրից մեկնելու կարևորագույն դրդապատճառ են նշում հենց աշխատատեղերի բացակայությունը: Երիտասարդների շրջանում կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ մեկնելու խիստ հակվածություն ունեցող երիտասարդների ճնշող մեծամասնությունը բնական և ճշգրիտ գիտությունների (սակ առողջապահության) ներկայացուցիչներ են: Սա, բնականաբար, պայմանավորված է աշխատաշուկայի խնդիրներով՝ տվյալ մասնագիտությունների գծով աշխատատեղերի բացակայությամբ: Այս մասնագիտությամբ մարդիկ հիմնականում հակված չեն զբաղվելու իրենց մասնագիտությունից տարբեր աշխատանքային գործունեությամբ և ՀՀ-ում բախվելով իրենց մասնագիտությամբ աշխատելու անհնարինությանը՝ նրանք բռնում են արտագաղթի ճանապարհը: Աշխատաշուկայում, բացի աշխատատեղերի բացակայության խնդրից, ևս մի խնդիր կա. հատկապես միջին և բարձր կրթամակարդակ և մեկնելու ցանկություն ունեցող անձանց մոտ կա անբավարարվածության զգացում: Այսինքն՝ չնայած որ անձը ապահովված է աշխատանքով, բայց և այնպես. նա ցանկանում է մեկնել, քանի որ կատարում է իր որակավորումից ցածր որակավորում պահանջող աշխատանք:

Փաստորեն՝ պետությունը այս առումով երկու խնդիր պետք է լուծի. նախ՝ բարենպաստ գործարար միջավայրի ստեղծում, որի շնորհիվ նախ կավելանան աշխատատեղերը, և երկրորդ՝ կապահովվի աշխատատեղերի և աշխատողների որակավորումների համապատասխանությունը: Աշխատատեղերի ավելացումը ենթադրում է սպառման շուկաների ընդլայնում, իսկ դա հնարավոր է ինտեգրացիոն գործընթացների ակտիվացմամբ:

Խիստ կարևոր է նաև բուհ-աշխատաշուկա կապի ապահովման խնդիրը: Այսօր ուսանողի համար կրթության գործընթացը որոշ առումով ինքնանպատակ է դառնում, քանի որ «լավ կրթություն – լավ աշխատանք – բարեկեցիկ կյանք» արժեքային շղթայում չի երաշխավորում 2-րդ փուլը, այսինքն՝ աշխատանք ունենալը: Մեծ է ճեղքվածքը աշխատանքի շուկայի և կրթության միջև: Գործատուն չի հստակեցնում իր պահանջները կրթության ոլորտից, իսկ կրթության ոլորտն էլ չի գործում թիրախային քաղաքականությամբ: Ուրեմն՝ մոտիվացիայի բարձրացման տեսանկյունից խիստ նպատակահարմար է, որ նվազի բուհի և աշխատաշուկայի միջև ճեղքվածքը:

Կրթական հաստատությունները իրենց ռազմավարության հիմքում պետք է դնեն ուսանողի և աշխատաշուկայի փոխգործակցության մեխանիզմները: Այդ նպատակով նրանք պետք է ձեռնամուխ լինեն ուսումնական համագործակցային ծրագրերի ներդրմանը, որոնք կկառուցվեն աշխատաշուկայի (բիզնեսի, տարբեր պետական ինստիտուցիոնալ կառույցների) հետ համատեղ: Գործնականում դա կարող է արտահայտվել այսպես. ուսումնառության գործընթացում ուսանողները իրենց դասընթացների մի մասը անց են կացնում այդպիսի հաստատություններում՝ կոնկրետ խնդիրների ուղղությամբ աշխատելով: Դրանք, անկասկած, արդյունավետ կարող են լինել թե՛ կրթության որակի բարձրացման, թե՛ ուսանողների և դասախոսների մոտիվացիայի ավելացման տեսանկյունից: Այսպիսի համալիր միջոցառումների իրականացումը պետք է ուղեկցվի պետության կողմից նպատակային ոլորտների հետ համատեղ աջակցող քաղաքականության իրագործմամբ, արդյունքում՝ ուսանողները հեշտորեն աշխատանք կգտնեն այդ կառույցներում: Այստեղ հատկապես կարևոր է նաև պետության՝ որպես կրթության ոլորտի կարգավորիչի ակտիվ դերակատարումը: Անհրաժեշտ ենք համարում կրթության ֆինանսավորումն ապահովել ոչ միայն բյուջետային միջոցներից հատկացումների ավելացման հաշվին, այլև պետության կողմից բարեգործական հիմնադրամների և գործատուների կրթահամակարգ մուտքի խրախուսման ու համակարգման միջոցով: Այս տեսակի ծրագրերի հաջողության պարագայում սրանք կդառնան զանգվածային և կնպաստեն ակադեմիական միջավայրում արժեհամակարգերի վերափոխմանը՝ նվազեցնելով երիտասարդների արտագաղթի միտումները:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում արտագաղթի ծավալների կրճատման նպատակով կառավարությունը առաջնային ուշադրություն պետք է դարձնի հետևյալ խնդիրներին.

1. Իրականացվող պետական քաղաքականությունը պետք է հնարավորինս հասանելի ու հասկանալի դարձնի բնակչության համար:

2. Բարենպաստ գործարար միջավայրի ստեղծում, որի միջոցով պետք է խրախուսվի աշխատատեղերի ավելացումը և ապահովվի աշխատատեղերի և աշխատողների որակավորումների համապատասխանությունը:

3. Բուհ-աշխատաշուկա կապի ապահովում և սերտացում, որպեսզի կրճատվի աշխատանքի շուկայի և կրթության միջև ձեղքվածքը:

## **ԳԼՈՒԽ 8. ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵԿՏՈՐՆԵՐԸ**

### **8.1. Հարավկովկասյան երկրների արտաքին առևտրի համեմատական առավելությունների դրսևորման առանձնահատկությունները**

Երկրի հարաբերական առավելությունների տեսությունը նախատեսում է որոշակի արտարահումներ կամ այնպիսի իդեալական պայմանների ենթադրություն, որոնք իրական կյանքում հազվադեպ են տեղի ունենում: Խոսքն ամենից առաջ երկրների միջև արտադրության գործոնների՝ ապրանքների, աշխատուժի, կապիտալի, տեխնոլոգիաների, ձեռնարկատիրական հմտությունների և գիտելիքների ազատ տեղաշարժի մասին է, ինչը նշանակում է, որ երկրից երկիր տեղափոխվելու համար նշված գործոնների ճանապարհին չկան այնպիսի խոչընդոտներ, որոնք դժվարացնում կամ էլ գործնականում անհնար են դարձնում այդպիսի տեղաշարժը: Խոսքը վերաբերում է ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական արգելքներին, որոնք կարող են ունենալ դրսևորման տարբեր, այդ թվում նաև ծայրահեղ ձևեր: Արտադրության գործոնների շարժը կարելի է ինչպես հեշտացնել, այնպես էլ դժվարացնել՝ ընդհուպ հասնելով այնպիսի մակարդակի, որ դադարեցվի երկրների միջև դրանց փոխանակությունը: Երկրների միջև արտաքին առևտրաշրջանառությունը հնարավոր է նաև միջնորդ կամ տարանցիկ (տրանզիտ) երկրների միջոցով: Արտաքին առևտրի կանոնակարգման պրակտիկայում կիրառվում են տնտեսական երկու խումբ՝ սակագնային և ոչ սակագնային գործիքներ, որոնց օգնությամբ կարելի է նպաստավոր կամ անբարենպաստ դարձնել արտաքին տնտեսական ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարաբերությունները: Երկու կամ մի քանի երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները կարող են դադարեցվել, պատկերավոր ասած՝ փշալարերի միջոցով (երբ փակվում է սահմանը), կամ էլ տնտեսական այնպիսի գործիքներ կիրառելով, երբ տնտեսապես անհիմաստ է դառնում տվյալ երկրից ապրանք(ներ)ի ներմուծումը կամ արտահանումը: Ըստ էության՝ Հարավային Կովկասում մենք գործ ունենք խաթարված, նորմայից շեղված արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների հետ, ինչի հետևանքով տարածաշրջանային առևտրային համագործակցությունը հարևան երկրների միջև չի ենթարկվում համընդհանուր ճանաչման և կիրառություն ստացած արտաքին առևտրում երկրների հարաբերական առավելությունների իրացման տեսության օրինաչափություններին:

Փոխանակության մասնակիցները ապահովում են անհրաժեշտ եկամուտ այս որոշակի արդյունքների արտադրության մեջ մասնագիտանալով: Այդ դեպքում անհատների խմբերը, շրջանները, երկրները կարող են մեծացնել թողարկումը, կրճատել միավոր արտադրանքի ծախսերը, ինչը հնարավորություն է տալիս փոխանակության միջոցով ձեռք բերելու այն բարիքները, որոնք նրանք կարող էին արտադրել աելի մեծ ծախսերով: Փոխանակության բոլոր մասնակիցներն ապահովում են եկամտի աճ: Տնտեսագետներն այս սկզբունքն անվանում են հարաբերական առավելության օրենք:

Ինչպես հայտնի է, աշխատանքի միջազգային մասնագիտացման մակարդակի չափման մեթոդներից մեկը հարաբերական առավելությունների գործակիցների (ՀԱԳ) հաշվարկումն է, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՀԱԳ} = \frac{Ա-Ն}{Ա+Ն},$$

որտեղ՝ Ա-ն արտահանման ծավալն է, իսկ Ն-ն՝ ներմուծման:

Այս ցուցանիշը [-1,+1] միջակայքում է, ընդ որում՝ -1-ի դեպքում երկրները բացառապես ներմուծող են, +1-ի դեպքում՝ արտահանող: Ըստ որում՝ որքան ՀԱԳ-ի մեծությունը մոտ է 1-ին, այնքան սերտ է այդ երկրների միջև արտաքին առևտուրը, հետևաբար մեծ է նաև երկրների միջև տնտեսությունների մասնագիտացման մակարդակը, հետևաբար նաև նրանց միջև կախվածությունը՝ որպես իրացման շուկաների [3, էջ 20-23]:

Ադյուսակ 8.1-ի տվյալներից երևում է, որ ինչպես Հարավային Կովկասի երեք հանրապետությունների, այնպես էլ ՀՀ մյուս հարևանների համար բնորոշ է փոխադարձ առևտրի խիստ ցածր մակարդակը, որը կազմում է արտաքին առևտրի միայն չնչին մասը: Վրաստանի հետ կարծես ապրանքաշրջանառությունը պետք է ավելի տպավորիչ լիներ, մանավանդ որ այդ երկիրը հիմնական կապուղիներից մեկն է Հայաստանի և արտաքին աշխարհի միջև, և առևտրային ճանապարհները, ինչպես հայտնի է, կապում են Հայաստանն իր հիմնական առևտրային գործընկերների հետ, բացի Իրանից, նաև Վրաստանի միջոցով:





Թուրքիա	98179,3	2144,3	2,2	4169,1	4,2	139456,1	1039,5	0,7	4445,4	3,2
<b>Ընդամենը</b>	<b>113723,4</b>	<b>2809,2</b>	<b>2,47</b>	<b>5273,6</b>	<b>4,64</b>	<b>152643,4</b>	<b>1609,7</b>	<b>1,05</b>	<b>7111,9</b>	<b>4,66</b>
<b>2010</b>										
Հայաստան	973,6	48,2	5,0	88,5	9,1	3606,9	49,7	1,4	478,0	13,3
Վրաստան	1278,0	176,8	13,8	391,8	30,7	4747,1	568,2	12,0	1484,3	26,8
Ադրբեջան	20765,3	411,0	2,0	706,8	3,4	6092,0	50,4	0,8	940,1	15,4
Իրան	25418,3	562,6	2,2	1391,4	5,5	53328,5	184,5	0,3	2508,1	4,7
Թուրքիա	109670,1	2320,7	2,1	5364,1	4,9	185523,7	1158,3	0,6	8803,1	4,7
<b>Ընդամենը</b>	<b>158105,3</b>	<b>3519,3</b>	<b>5,92</b>	<b>7942,6</b>	<b>5,0</b>	<b>253298,2</b>	<b>2011,1</b>	<b>0,79</b>	<b>14213,6</b>	<b>5,61</b>
<b>2011*</b>										
Հայաստան	1334,3	61,9	4,6	169,2	12,7	4145,3	247,0	6,0	680,7	16,4
Վրաստան	1990,8	282,0	14,2	520,0	26,1	6389,0	711,0	11,1	1979,6	31,0
Ադրբեջան	26480,2	535,3	2,0	1135,9	4,3	9732,9	89,5	0,9	3844,6	-
Իրան	112645,6	440,9	0,4	12902,4	11,5	59421,6	255,0	0,4	6,5	-
Թուրքիա	134915,3	3156,8	2,3	6746,5	5,0	240838,9	576,7	0,2	13038,2	5,4
<b>Ընդամենը</b>	<b>277366,2</b>	<b>4476,9</b>	<b>1,6</b>	<b>21474,0</b>	<b>7,7</b>	<b>320527,7</b>	<b>1879,2</b>	<b>0,6</b>	<b>19549,6</b>	<b>6,1</b>
<b>2012*</b>										
Հայաստան	1428,1	81,6	5,7	180,3	12,6	4266,8	49,1	1,1	482,5	11,3
Վրաստան	1674,4	310,1	18,5	452,1	27,0	7184,8	741,8	10,3	2158,8	30,0
Ադրբեջան	23827,2	570,7	2,4	1258,1	5,3	9641,7	129,9	1,3	1826,8	18,9
Իրան	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թուրքիա	152560,8	3841,7	2,5	13764,4	9,0	236536,9	520,2	0,2	12484,8	5,3
<b>Ընդամենը</b>	<b>179490,5</b>	<b>4804,1</b>	<b>2,7</b>	<b>15654,9</b>	<b>8,7</b>	<b>257630,2</b>	<b>1441,0</b>	<b>0,6</b>	<b>16952,9</b>	<b>6,6</b>

Կազմվել և հաշվարկվել է [www.armstat.am](http://www.armstat.am) և [www.intracen.org](http://www.intracen.org) կայքերի տվյալների հիման վրա:

\* Կազմվել և հաշվարկվել է [www.armstat.am](http://www.armstat.am) և [www.trademap.org](http://www.trademap.org) կայքերի տվյալների հիման վրա:

**Ծանոթություն:** Իրանի հարևան երկրները՝ Ադրբեջան, Աֆղանստան, Թուրքիա, Թուրքմենստան, Իրաք, Պակիստան, Սիրիա, Վրաստան, Հայաստան, Քուվեյթ:

Թուրքիայի հարևան երկրները՝ Ադրբեջան, Բուլղարիա, Իրան, Կիպրոս, Հայաստան, Հունաստան, Սաուդյան Արաբիա, Սիրիա, Վրաստան,

Վրաստանի հարևան երկրները՝ ՌԴ, Ադրբեջան, Հայաստան, Թուրքիա, Իրան:

Ադրբեջանի հարևան երկրները՝ ՌԴ, Վրաստան, Հայաստան, Թուրքիա, Իրան:

Իրանի վերաբերյալ 2007–2009 և 2012 թվականների տվյալները բացակայում են:

Աղյուսակ 8.1-ի տվյալներից հետևում է.

- Հարավային Կովկասի երեք հանրապետություններից ինչպես այդ հանրապետությունների միջև, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մյուս հարևանների հետ և՛ արտահանման, և՛ ներմուծման գործում ամենաբարձր ցուցանիշներն ունի Վրաստանը: Այսպես՝ 2005 թվականին Վրաստանի արտահանման ծավալները դեպի Հարավային Կովկասի երկրներ կազմել են 122,9 մլն դոլար (կամ արտահանման ծավալի 14,5%-ը), այն դեպքում, երբ Հայաստանի համար այդ ցուցանիշը կազ-

մել է 34,1 մլն դոլար (ընդամենը՝ արտահանման 3,5%-ը), իսկ Ադրբեջանի համար՝ 0,7 մլն դոլար (ինչն այդ երկրի արտահանման ընդհանուր գումարի նկատմամբ այնքան փոքր է, որ նույնիսկ տոկոսի մաս չի կազմում): Այսինքն՝ Ադրբեջանի համար Հարավկովկասյան տարածաշրջանը ոչ միայն էական, այլ նույնիսկ տասներորդական նշանակություն չունի: Այլ կերպ ասած՝ Ադրբեջանն իր նավթի և գազի շնորհիվ պահանջված է աշխարհի մյուս երկրների կողմից, քան Հայաստանը և Վրաստանը միասին վերցրած: Այստեղից էլ հետևում է աշխարհի մյուս երկրների համար Ադրբեջանի կարևորությունը և նշանակությունը, քան թե նրա Հարավկովկասյան երկու հանրապետությունների:

Էլ ավելի մեծ է Վրաստանի դերը ՀՀ հարևան երկրների հետ արտաքին առևտրում: Այսպես՝ 2005 թվականին Վրաստանի արտահանման ծավալի շուրջ կեսը՝ 402,7 մլն դոլար (47,6%-ը), բաժին է հասել ՀՀ-ին և նրա հարևաններին, այն դեպքում, երբ Հայաստանի համար այդ ցուցանիշը կազմել է 77,8 մլն դոլար (8,0%), իսկ Ադրբեջանի համար՝ 6,2 մլն դոլար (0,07%):

Գրեթե համանման պատկեր է նաև ներմուծման ցուցանիշների մասով:

- 2006–2007 թվականներին ուժեղացել է Ադրբեջանի ինտեգրման աստիճանը ինչպես Վրաստանի, այնպես էլ Իրանի և Թուրքիայի հետ:
- Տարածաշրջանային համագործակցության առումով Իրանի և Թուրքիայի արտահանման և ներմուծման զգալի ծավալների պայմաններում Հայաստանի հարևան երկրների շուկաները փոքր են, ուստի և նշված երկրների արտաքին առևտրի ցուցանիշները բավականին համեստ են:
- Եթե նկատենք, որ 2007–2009 թվականներին Իրանի արտաքին առևտրի ցուցանիշների բացակայության պայմաններում ներկայացված պատկերը ամբողջական չէ, ապա այնուհանդերձ կարելի է եզրակացնել, որ ՀՀ և հարևան երկրների միջև ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ներտարածաշրջանային ցուցանիշներն ունեցել են թեև դանդաղ, սակայն աճման միտում: Այսպես՝ արտահանման ցուցանիշը ՀՀ և հարևան երկրների համար Հարավային Կովկասի երկրներ 2005 թ. կազմել է 1,26%, ՀՀ հարևան երկրներ՝ 8,53%, 2006 թ.՝ համապատասխանաբար 1,65% և 10,64%, 2007 թ.՝ 2,10% և 12,19%, 2008 թ.՝ 1,94% և 9,72%, 2009 թ.՝ 2,47% և 11,48%, իսկ 2010 թ.՝ 2,22% և 15,28%:
- Ներմուծման ծավալները նույնպես, հատկապես ՀՀ հարևան երկրների հետ առևտրում, թեև ունեցել են աճի միտում, սակայն աճն ավելի ցածր է եղել, քան արտահանման դեպքում: Այլ կերպ ասած՝ ՀՀ-ն նրա հարևանների համար որպես ներտարածաշրջանային շուկա ավելի «զայթակղիչ» է արտահանման, քան ներմուծման տեսանկյունից, ինչն, անկասկած, թուլացնում է հետագա համագործակցության խորացման հնարավորությունները և ներուժը:

Վերը բերվածից կարելի է նաև եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության և նրա հարևանների հետ առևտրի համագործակցությունից ամենից շատ շահում է Վրաստանը, սակայն ո՛չ Հայաստանը և ո՛չ էլ Ադրբեջանը, ինչը

վերջիններիս միջև հայտնի հակամարտության անմիջական հետևանքն է:

Աղյուսակ 8.2-ում բերված են ՀՀ և հարևան երկրների միջև արտաքին առևտրի հարաբերական առավելությունների գործակիցները (ՀԱԳ) 2005–2012 թթ. առանձին տարիներին և դրանց միջին արժեքը 2005–2012 թթ.:

Հետաքրքիր է նշել, որ 2005–2012 թթ. ՀԱԳ միջին արժեքը ՀՀ և հարևան երկրների միջև, բացի Ադրբեջանից, մյուս երկրների համար ունեցել է բացասական մեծություն, ինչը նշանակում է, որ այդ ժամանակահատվածում նշված երկրների միջև ներմուծման ցուցանիշը գերազանցել է արտահանման ցուցանիշին: Ընդգծենք նաև, որ Իրանի պարագայում այդ գործակիցն ունեցել է –1,0 մեծություն, թեև Հայաստանի հետ Իրանի արտաքին առևտուրը ունեցել է միշտ դրական, իսկ Հայաստանի համար՝ բացառապես բացասական մեծություն: Տվյալները վկայում են նաև, որ թեև դե յուրե Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները պաշտոնապես փակված են, սակայն նրանց միջև միջնորդավորված երրորդ երկրի՝ Վրաստանի միջոցով իրականացվում է արտաքին տնտեսական գործունեություն, որի արդյունքում ՀՀ արտաքին առևտրի ՀԱԳ-երը Թուրքիայի հետ մոտ են –1-ին, ինչը վկայում է, որ ՀՀ-ն հիմնականում ներմուծում է այդ երկրից, իսկ այդ երկիր ՀՀ արտահանումն այնքան աննշան է, որ այդ առևտրի արդյունքում մեր հանրապետությունը հանդես է գալիս որպես գրեթե 100%-անոց ներմուծող երկիր: Ի դեպ՝ Թուրքիայի հետ Ադրբեջանի արտաքին առևտրի ՀԱԳ-ը դրական է: Նույնը նաև Ադրբեջանի և Վրաստանի միջև է, իսկ Հայաստանի և Վրաստանի միջև արտաքին առևտրի ՀԱԳ-ի 2005–2012 թթ. միջին արժեքը եղել է դրական, ինչը խոսում է այն մասին, որ Հայաստանից Վրաստան արտահանումը գերազանցում է այդ երկրների միջև ներմուծման ծավալները (տես նաև հավելված 9):

Իսկ ընդհանրապես հարց է ծագում՝ ինչն է ավելի շատ ընդունված աշխարհում՝ ավելի շատ առևտուր անել հարևանների, թե՞ ավելի հեռավոր երկրների հետ: Այդ հարցին պատասխանելու նպատակով կազմվել է աղյուսակ 8.3-ը, որտեղ բերված են կամայական ձևով ընտրված աշխարհի 35 երկրների հարևանների հետ արտահանման և ներմուծման ծավալներ ու դրանց բաժինը ընդամենը արտահանման և ներմուծման մեջ 2005, 2010 և 2012 թվականներին: Հատկանշական է, որ բերված 35 երկրների համար եթե հարևան երկրների արտահանման բաժինը 2005 թվականին կազմել է 20,60%, իսկ ներմուծումը՝ 16,73%, ապա 2010 թվականին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 22,49% և 8,94%: Այսինքն՝ եթե նշված երկրների և նրանց հարևանների միջև արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2005 թ. կազմել է 37,33%, ապա այդ ցուցանիշը 2010 թ. կազմել է 31,43%, այսինքն՝ 2010 թ. 2005 թ-ի համեմատ այն ունեցել է նվազման միտում:

**Աղյուսակ 8.2. Հայաստանի Հանրապետության և հարևան երկրների արտաքին առևտրի ՀԱԳ-երը՝ ըստ 2005–20012 թթ.**

երկրները	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	ՀԱԳ-երի 2005–2012 թթ. միջին արժեքը
<b>Հայաստան</b>									
Վրաստան	0,418	0,213	0,309	0,247	0,127	-0,051	-0,038	0,233	0,182
Թուրքիա	-0,929	-0,952	-0,955	-0,986	-0,987	-0,988	-0,997	-0,998	-0,974
Իրան	-0,515	-0,588	-0,573	-0,78	-0,662	-0,404	-0,394	-0,399	-0,539
Ընդամենը	-0,385	-0,478	-0,422	-0,654	-0,628	-0,549	-0,514	-0,498	-0,516
<b>Վրաստան</b>									
Հայաստան	-0,418	-0,213	-0,309	-0,247	-0,127	0,051	0,581	0,575	-0,013
Ադրբեջան	-0,474	-0,566	-0,471	-0,495	-0,432	-0,649	-0,178	-0,005	-0,409
Իրան	-0,721	-0,875	-0,792	-0,686	-0,665	-0,644	-0,600	-0,678	-0,708
Թուրքիա	-0,397	-0,616	-0,61	-0,554	-0,554	-0,618	-0,697	-0,814	-0,608
Ընդամենը	-0,400	-0,523	-0,477	-0,464	-0,479	-0,582	-0,526	-0,535	-0,498
<b>Ադրբեջան</b>									
Վրաստան	0,474	0,566	0,471	0,495	0,432	0,649	0,714	0,629	0,554
Իրան	-1,000	0,550	0,610	0,571	0,068	0,028	-0,051	-0,338	0,055
Թուրքիա	-0,320	-0,343	-0,521	-0,285	-0,307	-0,284	-0,482	-0,434	-0,372
Ընդամենը	-0,971	0,302	0,397	0,213	-0,276	-0,142	0,462	0,424	0,051
<b>Իրան</b>									
Ադրբեջան	1,000	-0,550	-0,610	-0,571	-0,068	-0,028	0,831	-	0,001
Թուրքիա	0,583	0,681	0,642	0,603	0,254	0,431	-0,373	-	0,353
Հայաստան	0,515	0,588	0,573	0,780	0,662	0,404	0,526	-	0,506
Վրաստան	0,721	0,875	0,792	0,686	0,665	0,644	0,702	-	0,636
Ընդամենը	-0,072	0,986	-	-	-	-0,286	0,313	-	0,118
<b>Թուրքիա</b>									
Ադրբեջան	0,320	0,343	0,521	0,285	0,300	0,284	0,775	0,768	0,450
Իրան	-0,583	-0,681	-0,642	-0,603	-0,254	-0,431	-0,553	-0,093	-0,480
Հայաստան	0,929	0,952	0,955	0,986	0,987	0,988	0,242	0,041	0,760
Վրաստան	0,397	0,616	0,61	0,554	0,554	0,618	0,553	0,749	0,581
Ընդամենը	-0,405	-0,488	-0,395	-0,346	-0,032	-0,243	-0,282	-0,216	-0,301

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է [www.armstat.am](http://www.armstat.am), [www.intracen.org](http://www.intracen.org) և [www.trademapp.org](http://www.trademapp.org) կայքերի տվյալների հիման վրա:

**Աղյուսակ 8.3.** Աշխարհի առանձին երկրների հարևանների հետ արդաահանման ու ներմուծման ծավալները և դրանց բաժինը ընդամենը արդահանման և ներմուծման մեջ՝ ըստ 2005, 2010 և 2012 թվականների

Հ/հ	Երկրներ	Ընդամենը արտահանում	Հարևան երկրներ	%–ով ընդամենի նկատմամբ	Ընդամենը ներմուծում, մլն դոլար	Հարևան երկրներից	%–ով՝ ընդամենի նկատմամբ
		մլն դոլար	մլն դոլար		մլն դոլար		
	1	2	3	4	5	6	7
<b>2005</b>							
1	Ադրբեջան	8318,7	6,2	0,1	7806,6	351,1	4,5
2	Ավստրիա	115576,6	63155,3	54,6	113165,8	68183,4	60,3
3	Արգենտինա	40085,2	12575,5	31,4	28688,4	12609,8	44,0
4	Բելգիա	329565,9	161324,1	49,0	316054	148275,9	46,9
5	Բուլղարիա	9075,6	2333,7	25,7	15101,9	2009,3	13,3
6	Բրազիլիա	114701,5	7879,1	6,9	73191,9	2747,1	3,8
7	Գայանա	3017,7	0,6	0	4694,9	110,8	2,4
8	Գերմանիա	965305,3	376677	39,0	768147,6	286361,4	37,3
9	Դանիա	75298,4	27121	36,0	78504,4	30177	38,4
10	Դոմինիկայի Հանրապետություն	5316,1	177,1	3,3	6544,7	22,9	0,4
11	Եգիպտոս	22786,7	580,2	2,5	50322,4	112,7	0,2
12	Թուրքիա	69942,5	6292,7	9,0	113850,5	8169,1	7,2
13	Իսպանիա	385596,9	56596,8	14,7	579221,6	57950,6	10
14	Իսրայել	42770,7	212,1	0,5	45032,4	63,5	0,1
15	Իրան	37339,7	3240,4	8,7	38072,4	1391,6	3,7
16	Լատվիա	5228,6	1664,9	31,8	8734	3206,1	36,7
17	Լյուքսեմբուրգ	12278,2	6860,9	55,9	16959,7	12445,4	73,4
18	Կոդ դ'Իվուար	6594,1	473,3	7,2	5671,3	26,2	0,5
19	Կոստա Ռիկա	6591,8	459,4	7,0	8484,7	170,2	2
20	Հայաստան	882,8	59,7	6,8	1641,4	193,4	11,8
21	Հունգարիա	61446,5	10036,3	16,3	64992,2	7983,6	12,3
22	Ղազախստան	27096,5	5834,3	21,5	17224,7	8257,4	47,9
23	Միացյալ Թագավորություն	768464,8	29410,3	3,8	1003948	18225,8	1,8
24	Նիդերլանդներ	337600,0	124187,0	36,8	298277,8	92642,7	31,1
25	Ուզբեկստան	3664,2	314,6	8,6	3225,9	259,7	8,0
26	Չիլի	85659,9	289,1	0,3	57700,9	263,1	0,5

27	Պերու	16386,8	2032,4	12,4	12241,1	2666,5	21,8
28	Պորտուգալիա	112214,8	123	0,1	179961,7	156,6	0,1
29	Ռուսաստանի Դաշնություն	234467	71985,2	30,7	96712,9	38002,1	39,3
30	Սաուդյան Արաբիա	163480,1	1249,5	0,8	56606	223,7	0,4
31	Սերբիա	12760,6	1852,7	14,5	25125,3	2046,5	8,1
32	Սինգապուր	214952,1	52487,9	24,4	182582,2	37781,8	20,7
33	Սլովենիա	17027,5	3416,1	20,1	18338,6	2909,5	15,9
34	Վրաստան	845,7	402,7	47,6	2435,6	963,6	39,6
35	Ֆինլանդիա	768464,8	15823,7	2,1	1003948	40137,2	4,0
<b>Հնդամենը</b>		<b>5080804,3</b>	<b>1047135,0</b>	<b>20,6</b>	<b>5303212,0</b>	<b>887097,3</b>	<b>16,73</b>
<b>2010</b>							
1	Ադրբեջան	20765,3	1480,4	7,1	6092	2085,1	34,2
2	Ավստրիա	146873,9	77425,8	52,7	140457,9	83602,2	59,5
3	Արգենտինա	55669	18791,2	33,8	40258	13719,2	34,1
4	Բելգիա	401646,3	193796,4	48,3	384924,2	181185	47,1
5	Բուլղարիա	15389,7	4161,6	25,7	20031,8	3159,9	15,8
6	Բրազիլիա	190919,1	14494,9	7,6	178876,4	7298,8	4,1
7	Գայանա	4887,6	0,6	0	7768,8	213,3	2,7
8	Գերմանիա	1257935,5	504933,5	40,1	1051991,5	401861,4	38,2
9	Դանիա	78300	26841,8	34,3	77233,5	28672,6	37,1
10	Դոմինիկայի Հանրապետություն	5184,2	869,3	16,8	14057,1	16,2	0,1
11	Եգիպտոս	23219,9	627,2	2,7	51723,6	120,1	0,2
12	Թուրքիա	109670,5	13365,1	12,2	185523,699	15205,37	8,2
13	Իսպանիա	492530,7	68016,6	13,8	631094,4	63461,6	10,1
14	Իսրայել	58414,6	333,7	0,6	59190,9	159	0,3
15	Իրան	25418,3	8774,4	34,5	53328,5	3197	6,0
16	Լատվիա	9376,4	4271,9	45,6	11399,6	4240,1	37,2
17	Լյուքսեմբուրգ	13436	7956,9	59,2	18451,6	13324,4	72,2
18	Կոդ դ'Իվուար	8608,7	112,2	1,3	6795546	46069	0,7
19	Կոստա Ռիկա	8298,4	809,1	9,7	12193,7	327,2	2,7
20	Հայաստան	973,6	88,5	9,1	3606,9	478	13,3
21	Հունգարիա	94465,9	19772,3	20,9	85946	1349,9	1,6
22	Ղազախստան	42784,2	10826,9	25,3	28288,6	12948,4	45,8
23	Միացյալ Թագավորություն	809420,3	25140,5	3,1	1110292	19725,8	1,8

24	Նիդերլանդներ	511725,2	203453,6	39,8	465045,4	116758,6	25,1
25	Ուզբեկստան	5033,6	93,8	1,9	7040,2	40,2	0,6
26	Չիլի	157779,1	603	0,4	135663,3	761,2	0,6
27	Պերու	34157,3	3516,3	10,3	29154,1	4955,1	17,0
28	Պորտուգալիա	143598,7	160,7	0,1	221239	120,6	0,1
29	Ռուսաստանի Դաշնություն	318417,4	88868,4	27,9	208453,3	80496,1	38,6
30	Սաուդյան Արաբիա	-	-	-	98989	365,9	0,4
31	Սերբիա	19582,3	3199,4	16,3	33312,7	3251,3	9,8
32	Սինգապուր	329920,1	74993,8	22,7	279847,9	53203,6	19
33	Սլովենիա	23736,1	4312,1	18,2	25245	3842,9	15,2
34	Վրաստան	1278	414,8	32,5	4747,1	1746,2	36,8
35	Ֆինլանդիա	809420,3	18199,2	2,2	1110292	47175	4,2
<b>Ընդամենը</b>		<b>6228836,0</b>	<b>1400706,0</b>	<b>22,49</b>	<b>13587306,0</b>	<b>1215136,0</b>	<b>8,94</b>
<b>2012</b>							
1	Ադրբեջան	23827,2	2217,9	9,3	9641,7	3205,2	33,2
2	Ավստրիա	158821,0	79176,6	49,9	92113,9	25362,0	27,5
3	Արգենտինա	80927,1	7384,5	9,1	68507,5	2897,6	4,2
4	Բելգիա	446854,4	203359,9	45,5	437882,7	198576,9	45,3
5	Բուլղարիա	26698,8	5047,0	18,9	34279,9	4256,1	12,4
6	Բրազիլիա	242579,8	34674,9	14,3	223149,1	26234,2	11,8
7	Գայանա	1045,3	169,0	16,2	1878,4	157,7	8,4
8	Գերմանիա	1416184,2	540316,7	38,2	1173287,6	445137,3	37,9
9	Դանիա	105562,1	28409,7	26,9	92113,9	31283,4	34,0
10	Դոմինիկայի Հանրապետու- թյուն	6902,5	986,9	14,3	19200,5	0,9	0,0
11	Եգիպտոս	29417,0	6778,8	23,0	69865,6	25135,9	36,0
12	Թուրքիա	152536,7	17353,7	11,4	236544,5	18846,4	8,0
13	Իսպանիա	285936,4	66953,3	23,4	325835,2	45421,5	13,9
14	Իսրայել	63140,6	361,2	0,6	73112,1	265,9	0,4
15	Իրան	-	-	-	-	-	-
16	Լատվիա	12685,5	5362,2	42,3	16082,4	6528,1	40,6
17	Լյուքսեմբուրգ	13691,9	7537,6	55,1	24011,0	14424,2	60,1
18	Կոդ դ'իվուար	-	-	-	-	-	-
19	Կոստա Ռիկա	11250,8	1085,2	9,6	18356,0	681,8	3,7
20	Հայաստան	1428,1	172,5	12,1	4266,9	481,1	11,3



21	Հունգարիա	103006,0	24882,8	24,2	94266,2	17782,0	18,9
22	Ղազախստան	92281,5	8980,5	9,7	44538,1	18439,7	41,4
23	Միացյալ Թագավորություն	481225,8	25521,0	5,3	689137,0	19481,3	2,8
24	Նիդերլանդներ	554677,9	199878,5	36,0	501134,3	128482,3	25,6
25	Ուզբեկստան	4956,7	880,4	17,8	10723,5	1533,8	14,3
26	Չիլի	78277,0	4432,8	5,7	79461,5	7594,1	9,6
27	Պերու	45946,2	5836,2	12,7	42274,3	7908,0	18,7
28	Պորտուգալիա	58379,0	13128,9	22,5	72292,6	19687,2	27,2
29	Ռուսաստանի Դաշնություն	524766,4	148793,8	28,4	316192,9	129029,0	40,8
30	Սաուդյան Արաբիա	-	-	-	-	-	-
31	Սերբիա	11353,1	3207,6	28,3	19013,2	3066,3	16,1
32	Սինգապուր	408393,0	93630,0	22,9	379722,9	60596,4	16,0
33	Սլովենիա	27080,0	4678,5	17,3	28382,6	4389,4	15,5
34	Վրաստան	2377,5	1076,4	45,3	7839,6	2570,7	32,8
35	Ֆինլանդիա	72974,5	11664,7	16,0	76089,0	18066,4	23,7
	<b>Ընդամենը</b>	<b>5545184</b>	<b>1553940</b>	<b>28,0</b>	<b>5281197</b>	<b>1287523</b>	<b>24,4</b>

Աղյուսակը կազմվել է հաշվարկվել է [www.internationaltradecentre.com](http://www.internationaltradecentre.com), [www.armstat.am](http://www.armstat.am), [www.intracen.org](http://www.intracen.org), [www.wikipedia.org](http://www.wikipedia.org) կայքերի տվյալների հիման վրա:

**Ծանոթագրություն:** \*2008 թ. տվյալներով, \*\* 2006 թ. տվյալներով, \*\*\* 2009 թ. տվյալներով:

Անհրաժեշտ է նշել, որ 2005 թ. աղյուսակ 8.3-ում ընդգրկված երկրներում դեպի հարևան երկրներ արտահանման բաժինները (%-ով՝ ընդամենի նկատմամբ) տատանվել են խիստ լայն միջակայքով՝ սկսած գրեթե զրոյական տոկոսից (Գայանա) մինչև 55,9% (Լյուքսեմբուրգ): Այդ ցուցանիշը 2010 թվականին նորից եղել է գրեթե զրոյական մակարդակից (Գայանա) մինչև 59,7% (Լյուքսեմբուրգ) սահմաններում: Հարևան երկրներից ներմուծումների բաժինները (%-ով՝ ընդամենի նկատմամբ) եթե 2005 թ. տատանվել է 0,1%-ից (Իսրայել) մինչև 73,4% (Լյուքսեմբուրգ), ապա 2010 թվականին այդ ցուցանիշը տատանվել է 0,1%-ից (Դոմինիկյայի Հանրապետություն) մինչև 59,5%-ի միջակայքում (Ավստրիա): Աղյուսակ 8.3-ի ցանկում ընդգրկված են նաև դեպի ծով ելք չունեցող 8 երկիր՝ Ավստրիա, Լյուքսեմբուրգ, Հունգարիա, Սերբիա (Եվրոպական չորս երկիր), Ադրբեջան, Հայաստան, Ղազախստան, Ուզբեկստան (ասիական չորս երկիր):

Ակնհայտորեն երևում է, որ Եվրոպայում գտնվող՝ դեպի ծով ելք չունեցող Ավստրիան, Լյուքսեմբուրգը, Հունգարիան, Սերբիան ակտիվորեն համագործակցում են հարևան երկրների հետ: Այսպես՝ 2005 թ. Ավստրիայի արտահանման բաժինը հարևան երկրներ կազմել է 54,6%, ներմուծմանը՝ 60,3% (համապատաս-

խանաբար ընդամենը արտահանման և ընդամենը ներմուծման նկատմամբ), Լյուքսեմբուրգում՝ համապատասխանաբար 55,9% և 73,4%, Հունգարիայում՝ 16,3% և 12,3%, Սերբիայում՝ 14,5% և 8,1%: Այդ ցուցանիշները 2010 թ կազմել են Ավստրիայում՝ համապատասխանաբար 52,7% և 59,5% Լյուքսեմբուրգում՝ 59,2% և 72,2%, Հունգարիայում՝ 20,9% և 1,6%, Սերբիայում՝ 16,3% և 9,8%, 2012 թ. համապատասխանաբար ըստ երկրների՝ 49,9% և 27,5%, 55,1% և 60,1%, 24,2% և 18,9%, 28,3% և 16,1%: Կամ նշված 4 եվրոպական երկրներին հարևանների հետ արտաքին առևտրին (արտահանում և ներմուծում) 2005 թ. բաժին է ընկել արտաքին առևտրաշրջանառության 40,9%-ը, 2010 թվականին՝ 38,0%-ը, 2012 թ.՝ 34,0%-ը:

Դեպի ծով ելք չունեցող՝ Ասիայում գտնվող Ադրբեջանը, Հայաստանը, Ղազախստանը և Ուզբեկստանը նույնպես համագործակցում են հարևան երկրների հետ: Այսպես՝ Ադրբեջանի արտահանման բաժինը հարևան երկրներ 2005 թ. կազմել է 6,2%, ներմուծմանը՝ 4,5% (համապատասխանաբար ընդամենը արտահանման և ընդամենը ներմուծման նկատմամբ) Հայաստանում՝ համապատասխանաբար 6,8% և 11,8%, Ղազախստանում՝ 21,5% և 47,9%, Ուզբեկստանում՝ 8,6% և 8,0%: Այդ ցուցանիշները 2010 թ. կազմել են Ադրբեջանում՝ համապատասխանաբար 7,1% և 34,2%, Հայաստանում՝ 9,1% և 13,3%, Ղազախստանում՝ 25,3% և 45,8%, Ուզբեկստանում՝ 1,9% և 0,6%, 2012 թ. համապատասխանաբար ըստ երկրների՝ 9,3% և 33,2%, 12,1% և 11,3%, 9,7% և 41,4%, 17,8% և 14,3%: Կամ նշված 4 ասիական երկրներին հարևանների հետ արտաքին առևտրին (արտահանում և ներմուծում) 2005 թ.՝ բաժին է ընկել արտաքին առևտրաշրջանառության 21,9%-ը, 2010 թ.՝ 24,5%-ը, 2012 թ.՝ 29,9%-ը: Այդպիսով՝ դեպի ծով ելք չունեցող Ասիայում գտնվող չորս երկրների արտաքին առևտրի շրջանառությունը 2005 թ. շուրջ երկու անգամ, իսկ 2010 թ.՝ 1,55 անգամ զիջել է եվրոպայում գտնվող համանման չորս երկրների ցուցանիշին, իսկ 2012 թ.՝ 113,7%-ով:

Դեպի ծով ելք չունեցող 8 երկրների արտաքին առևտրաշրջանառության միջին ցուցանիշը հարևան երկրների հետ 2005–2012 թթ., ըստ էության, էական փոփոխություններ չի կրել՝ մնալով գրեթե միևնույն մակարդակի վրա (արտաքին առևտրաշրջանառության մեկ երրորդից մի փոքր ավելի), իսկ 2012 թ-ին այն կազմել է 29,8%:

Դեպի ծով ելք չունեցող եվրոպական նշված 4 և աղյուսակ 8.3-ում բերված երկրների հարևանների հետ արտահանման և ներմուծման ծավալների և ընդամենը արտահանման և ներմուծման մեջ դրանց բաժինը տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ նշված չորս երկրների հարևան երկրներ արտահանման բաժինը 2005 թ. (40,5%-ը) շուրջ 2 անգամ ավելի բարձր է եղել, քան աղյուսակում բերված 35 երկրների համապատասխան ցուցանիշը (20,6%-ը), ներմուծումը՝ շուրջ 2,5 անգամ (41,60 : 16,73), 2010 թ.՝ համապատասխանաբար 1,8 անգամ (39,5 : 22,49) և 4,1 անգամ (36,50 : 8,94) :

Պետք է նաև նկատել, որ եվրոպական երկրներում դիտվում է հարևանների հետ արտաքին առևտրի ինտենսիվ կապեր: Օրինակ՝ 2005 թ. Բելգիայի արտահանման 49,0%-ը, իսկ ներմուծման 46,9%-ը բաժին է ընկել հարևան երկրներին, Բուլղարիային՝ համապատասխանաբար 25,7% և 13,3%, Գերմանիային՝ 39,0% և 37,3%, Դանիային՝ 36,0% և 38,4%, Լատվիային՝ 31,8% և 36,7%,

Նեղերլանդներին՝ 36,8% և 31,1%, Ռուսաստանի Դաշնությանը՝ 30,7% և 39,3%: Այդ ցուցանիշները 2010 թ. կազմել են համապատասխանաբար Բելգիայի արտահանման 48,5%-ը և ներմուծման 47,1%-ը, Բուլղարիայի՝ 25,7%-ը և 15,8%-ը, Գերմանիայի՝ 4,01%-ը և 38,2%-ը, Դանիայի՝ 34,3%-ը և 37,1%-ը, Լատվիայի՝ 45,6%-ը և 37,2%-ը, Նիդերլանդների՝ 39,8%-ը և 25,1%-ը, Ռուսաստանի Դաշնության՝ 27,9%-ը և 38,6%-ը:

Հարավային Կովկասի երեք հանրապետությունների համար հարևանների հետ արտաքին առևտրի (արտահանման և ներմուծման) ցուցանիշները 2005 թ. կազմել են արտահանման ընդամենը 4,7%-ը և ներմուծման ընդամենը 9,7%-ը, 2010 թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 8,6% և 29,8%, 2005 թ.՝ Հարավկովկասյան երեք հանրապետությունների արտաքին առևտրի 7,4%-ը, իսկ 2010 թ. 16,8%-ը բաժին է հասել հարևաններին (տե՛ս նաև հավելված 10):

Հարավային Կովկասի 3 հանրապետությունների, դեպի ծով ելք չունեցող 8 երկրների, այդ թվում՝ Եվրոպական 4 և ասիական 4 և աղյուսակ 8.3-ում բերված 35 երկրների ցուցանիշների համադրումը վկայում է, որ 2005 թ. դեպի ծով ելք չունեցող չորս եվրոպական երկրների հարևանների հետ արտաքին առևտրի ցուցանիշները գերազանցել են հարավկովկասյան երեք հանրապետությունների համապատասխան ցուցանիշը 5,5 անգամ, աղյուսակ 8.3-ում բերված 35 երկրների համապատասխան ցուցանիշը գերազանցել է հարավկովկասյան երեք հանրապետությունների ցուցանիշը 2,5 անգամ, 2010 թ. այդ ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 2,3 անգամ և 0,79 անգամ (տե՛ս նաև աղյուսակ 8.4-ը):

**Աղյուսակ 8.4.** Հարավային Կովկասի երեք հանրապետությունների, դեպի ծով ելք չունեցող 8 երկրների և աղյուսակ 8.3-ում բերված 35 երկրների՝ հարևան երկրների հետ արտաքին առևտրի ցուցանիշների բաժինները ընդամենը արտաքին առևտրաշրջանառության մեջ 2005, 2010 և 2012 թվականներին, %-ով

Հ/հ	Երկրների խմբերը	2005	2010	2012
1	Հարավային Կովկասի երեք հանրապետությունները	7,4	16,8	19,7
2	Դեպի ծով ելք չունեցող՝	35,7	35,6	29,8
	2.1. Եվրոպական չորս երկրները	40,9	38,0	34,0
	2.2. Ասիական չորս երկրները	21,9	24,5	29,9
3	35 երկրներ	18,6	13,2	26,2

**Ծանոթություն:** Կազմվել է աղյուսակ 8.3-ի տվյալների հիման վրա:

2005 թվականին դեպի ծով ելք չունեցող ասիական չորս երկրների հարևանների հետ արտաքին առևտրի ցուցանիշները գերազանցել են հարավկովկասյան երեք հանրապետությունների համապատասխան ցուցանիշը շուրջ 3 անգամ, իսկ դեպի ծով ելք չունեցող 8 երկրների համապատասխան ցուցանիշը գերազանցել է հարավկովկասյան երեք հանրապետությունների ցուցանի-

շին 4,8 անգամ (2010 թ. այդ ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 1,5 անգամ և 2,1 անգամ):

Արտաքին առևտրի տվյալների վերլուծությունից հետևում է, որ դեպի ծով ելք չունեցող երկրների հարևանների հետ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշները զգալիորեն բարձր են, քան ծով ելք ունեցող երկրներում, ինչը վկայում է, որ ծովային սահման չունենալու հանգամանքը պարտադրում է ավելի սերտ համագործակցություն իրականացնել հարևանների հետ, և դրանով իսկ փոխհատուցելով այն ծախսերը, որոնք կապված են դեպի ծով ելք ունենալու դժվարությունների և ենթակառուցվածքների հետ: Այս ընդհանուր օրինաչափությունից Հայաստանի և Ադրբեյջանի արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշների շեղումը պայմանավորված է քաղաքական պատճառով, ուստի և իր հիմքում չունի որևէ տնտեսական բացատրություն:

## 8.2. ՀՀ և ԼՂՀ արտաքին առևտրի վրա տնտեսական միությունների ազդեցությունների հիմնախնդիրները

Համաշխարհային տնտեսության գլոբալացման և տնտեսական ինտեգրման խորացման պայմաններում օրըստօրե մեծանում է ամենատարբեր տնտեսական միությունների դերը, և ինչ-որ առումով կարելի է խոսել երկրագնդի տարածքի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար նրանց միջև սրվող պայքարի մասին: Ներկայումս աշխարհում դժվար է գտնել այնպիսի ազգային պետություն, որն ընդգրկված չլինի այս կամ այն տնտեսական խմբավորման կամ միության (բլոկի) մեջ: Նման իրավիճակի հիմքը աշխատանքի մասնագիտացման և կոոպերացման միջազգային մակարդակի բարձրացումն է, ինչի հետևանքով մեծանում է պետությունների տնտեսությունների բացության աստիճանը: Միջազգային նման երևույթների շարժման հիմքում ընկած են արտաքին առևտրի բացարձակ և հարաբերական առավելությունները: Եվ եթե առաջինի դեպքում աշխարհում ձևավորված առավելություններն ունեն սահմանափակումներ (հատկապես աշխարհագրական, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական ռեսուրսների ու պայմանների մասերով), ապա երկրորդ առավելությունները գործնականում անսահման են և պետք է հասնել դրանց բացահայտմանն ու կիրառմանը: Դրանով իսկ արտաքին առևտուրը կրթի ինչպես երկուստեք (երկկողմանի առևտրի ժամանակ), այնպես էլ բազմակողմ (բազմակողմ առևտրի ժամանակ) դրական էֆեկտներ:

Համաշխարհային տնտեսության հարաբերական առավելությունների բացահայտման դարաշրջանում (իսկ իրականում հենց այդպիսին է զարգացման արդի ժամանակահատվածը) միջազգային տնտեսական ասպարեզում բախվում են ոչ միայն առանձին տնտեսական միությունների շահերն ու նպատակները, այլև հաճախ դրանք խաչաձևվում են: Այդ կատաղի մրցավազքի մեջ կարող են տուժել առանձնապես փոքր ազգային տնտեսություն ունեցող երկրները, քանի որ այդ պայմաններում գործում է «նուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր» հնադարյան մոտեցումը: Իրավիճակը ծանրանում է նաև նրանով, որ չկողմնո-

որոշված կամ դեռևս այս կամ այն տնտեսական միությանը չմիացած ազգային տնտեսությունների համար վերջնական որոշման վրա ազդում են ոչ միայն տնտեսական ճիշտ հաշվարկներ կատարելու հնարավորությունները, այլև քաղաքական, տարածաշրջանային, աշխարհաքաղաքական և այլ գործոնները: Այսինքն՝ շատ քիչ է լինում, որ նման ճակատագրական որոշումը ունենա զուտ միայն տնտեսական, քաղաքական կամ մեկ այլ բնույթ: Առավել ևս, որ այդ գործոնների համակարգը անորոշության մեջ է այն առումով, որ մի դեպքում կարևոր և առաջնային են դառնում տնտեսական, մեկ այլ դեպքում՝ քաղաքական, երրորդ դեպքում՝ տարածաշրջանային դրդապատճառները և այդպես շարունակ: Անկասկած է, որ լավագույն տարբերակը բոլոր հանգամանքները համալիր ձևով հաշվի առնելն է, սակայն այս դեպքում էլ միշտ չէ, որ կարելի է հասնել ցանկալի արդյունքների:

ՀՀ-ն նույնպես հայտնվեց կողմնորոշվելու երկրնտրանքի առջև՝ դեպի ԵՄ, թե՛ Եվրասիական տնտեսական համագործակցություն (ԵվրԱզԷՍ): Ավելին՝ այս հարցը երկար ժամանակ դարձել էր սուր քննարկումների առարկա: 2013 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի՝ Մոսկվայում արված քաղաքական հայտարարության համաձայն՝ ՀՀ-ն միանալու է Մաքսային միությանը (ՄՄ), որի կազմի մեջ ներկայումս ՌԴ-ն, Բելառուսը և Ղազախստանն են: Իսկ ինչպիսին է եղել այդ որոշման ժամանակ տնտեսական գործոնի դերը, որովհետև շատ հաճախ Մաքսային միությանը միանալու ՀՀ որոշումը մեկնաբանվում է որպես տնտեսական անհրաժեշտություն, որն այլընտրանք չունի: Այդ նպատակով պարզենք ՀՀ արտաքին առևտրի վրա տնտեսական միությունների ազդեցության վիճակը և փորձենք հասկանալ, թե ի վերջո ՀՀ-ի համար ճակատագրական հանդիսացող այդ որոշման վրա ինչպիսին է եղել տնտեսական գործոնի դերը:

Այդ նպատակով նախ և առաջ քննարկենք ՀՀ և ԼՂՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան 2008–2013 թթ. ժամանակահատվածում (աղյուսակ 8.5):


**Աղյուսակ 8.5. ՀՀ և ԼՂՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան 2008–2013 թթ.**

		2008	2009	2010	2011	2012	2013
Տնտեսական աճ	ՀՀ	6,9	-14,1	2,2	4,7	7,2	3,5
	ԼՂՀ	14,3	13,1	5,5	9,1	9,9	9,3
<b>ՀՆԱ ճյուղային կառուցվածքը</b>							
Արդյունաբերություն	ՀՀ	13,1	13,6	15,6	17,2	16,5	17,3
	ԼՂՀ	13,9	16,4	17,2	16,2	13,6	13,3
Շինարարություն	ՀՀ	25,3	18,6	17,0	13,0	11,7	10,3
	ԼՂՀ	9,8	11,1	12,4	11,0	8,7	9,2
Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	ՀՀ	16,3	16,9	17,1	20,3	19,0	19,2
	ԼՂՀ	16,1	13,9	11,3	12,8	14,5	14,2
Ծառայություններ	ՀՀ	35,4	41,9	40,8	41,1	44,0	44,2
	ԼՂՀ	54,0	53,7	55,0	57,4	61,2	62,8

ՀՆԱ 1 շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	ՀՀ	126,4	73,9	106,7	109,1	104,3	104,8
	ԼՂՀ	136,7	97,8	110,6	114,1	101,3	109,1
Հարկեր / ՀՆԱ (%)	ՀՀ	16,8	16,0	16,6	16,7	17,1	15,4
	ԼՂՀ	14,3	13,0	12,8	12,3	12,4	10,8
Վարկեր / ՀՆԱ (%)	ՀՀ	17,6	23,1	25,8	33,1	38,2	41,6
	ԼՂՀ	19,9	28,3	35,7	43,9	52,6	49,2
Ավանդներ / ՀՆԱ (%)	ՀՀ	5,7	9,3	10,3	12,8	16,0	18,5
	ԼՂՀ	7,8	8,9	9,2	10,2	13,2	15,2
Արտահանում / ՀՆԱ (%)	ՀՀ	9,2	8,2	10,9	13,1	14,4	14,2
	ԼՂՀ	19,3	20,7	23,5	21,9	15,5	14,5
Ներմուծում ՀՆԱ%	ՀՀ	37,8	38,5	40,7	41,0	42,9	42,9
	ԼՂՀ	87,7	84,4	85,9	86,2	78,1	65,3

Այս և հետագա աղյուսակների և գծանկարների կազմման համար հիմք են հանդիսացել ՀՀ և ԼՂՀ ԱՎԾ տվյալները:

2008–2013 թթ. ԼՂՀ–ում արձանագրվել է միջինում տարեկան 10,2% տնտեսական աճ, որին մասնակցում էին տնտեսության համարյա բոլոր հիմնական ճյուղերը, իսկ ՀՀ–ում արձանագրվել է միջինում տարեկան 1,7% տնտեսական աճ, այն դեպքում, երբ 2009 թ. ՀՀ տնտեսությունում արձանագրվեց 14,1% անկում (տես գծանկար 8.1):




Գծանկար 8.1. Համախառն ներքին արդյունքի դինամիկան (%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ)


ԼՂՀ–ում ՀՆԱ–ում հիմնական ճյուղերից առաջատարը արդյունաբերությունն է (2008–2013 թթ. միջին աճը կազմել է 15,1%), հատկապես հանքարդյունաբերությունը, որտեղ կատարվում են մեծ ներդրումներ՝ ուղղված օգտակար հանածոների պաշարների ուսումնասիրման ու արդյունավետ շահագործման աշխատանքների կազմակերպմանը:

Ոլորտը կարևոր նշանակություն ունի հատկապես աշխատատեղերի ստեղծման, տնտեսական աճի և բյուջետային մուտքերի ապահովման գործում:

Ծառայությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում 2008 թ. կազմել է 35,4% ՀՀ-ում, որը 2013 թ. 2008 թ. համեմատ աճել է 8,8 տոկոսային կետով, իսկ ԼՂՀ-ում 2008 թ. կազմել է 54,0%, 2013 թ. 2008 թ. համեմատ աճել է 8,8 տոկոսային կետով, պայմանավորված է վերջին վեց տարիներին ծառայությունների նկատմամբ բարձր պահանջարկով, որը արդյունք է եկամուտների բարձր աճի (գծանկար 8.2):



Գծանկար 8.2. Արդարավրված համախառն ներքին արդյունքի կառուցվածքը ՀՀ-ում և ԼՂՀ-ում (%)



Գծանկար 8.3. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ԼՂՀ-ում և ՀՀ-ում (ԱՄՆ դոլար)

Հարկ է նշել, որ ԼՂՀ-ում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը շուրջ 18%-ով գիջում է ՀՀ համապատասխան ցուցանիշին, ինչը պայմանավորված է 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշների տարբերությամբ:

Տնտեսության զարգացման նշված միտումներով պայմանավորված մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն դուրսային արտահայտությամբ 2008 թ. ԼՂՀ-ում կազմել է 2036,5 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ-ում՝ 3605,9 ԱՄՆ դոլար: Սակայն այն կտրուկ նվազեց 2009 թ. (հատկապես ՀՀ-ում), իսկ հետզհետեամային ժամանակահատվածում սկսեց աստիճանաբար վերականգնվել: 2013 թ. այն կազմեց ԼՂՀ-ում 2777,9 ԱՄՆ դոլար, ՀՀ-ում՝ 3447,0 ԱՄՆ դոլար (գծանկար 8.3):

**Աղյուսակ 8.6. ՀՀ և ԼՂՀ տնտեսությունների հիմնական ճյուղերի իրական աճի ցուցանիշները (նախորդ տարվա համեմատ, %)**

		2008	2009	2010	2011	2012	2013
Արդյունաբերություն	ՀՀ	101,7	92,4	109,7	113,9	108,8	106,8
	ԼՂՀ	111,6	115,6	105,3	100,8	99,2	110,0
Շինարարություն	ՀՀ	103,1	62,6	97,5	91,1	100,2	91,9
	ԼՂՀ	124,2	133,5	124,0	101,4	87,4	118,1
Գյուղատնտեսություն	ՀՀ	103,1	99,5	86,4	113,8	109,5	107,1
	ԼՂՀ	125,4	101,1	88,7	120,1	123,9	109,2
Ծառայություններ	ՀՀ	113,8	100,9	103,4	106,1	110,8	103,6
	ԼՂՀ	128,3	117,1	107,4	108,3	110,2	102,5
որից՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական ծառայություններ	ՀՀ	106,6	83,5	104,5	110,6	103,1	119,4
	ԼՂՀ	94,8	140,1	54,2	132,5	144,4	123,2
Զբոսաշրջություն	ՀՀ	109,4	103,0	118,9	110,8	111,3	109,7
	ԼՂՀ	114,7	103,6	142,9	143,4	136,9	104,9

2008–2013 թթ. արդյունաբերության ճյուղում տարեկան միջին հաշվով ԼՂՀ-ում գրանցվել է 7,1%, իսկ ՀՀ-ում՝ 5,5% իրական հավելած: Արդյունաբերության ոլորտի աճին հիմնականում նպաստել է ԼՂՀ-ում մանրի արդյունաբերությունը, որի զարգացումը կապված է հիմնականում տեղական գյուղատնտեսական մթերքների վերամշակման հետ: Մանրի արդյունաբերության արտադրանքի ծավալը, 2008 թ. սկսած, անընդմեջ աճել է՝ իրական արտահայտությամբ միջին տարեկան կտրվածքով ապահովելով 39,0% աճ:

ԼՂՀ-ում վերջին հինգ տարիների ընթացքում շինարարության ծավալը տարեկան միջին կտրվածքով աճել է 14,8%-ով՝ արձանագրելով ամենաբարձր աճի տեմպ 2009 թ.՝ 33,5%: 2008–2013 թթ. շինարարության ծավալների աճին նպաստել է ԼՂՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների աճը (39,5%-ը իրականացվել է պետական բյուջեի միջոցների հաշվին), ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները կրճատվել են:



Շինարարական աշխատանքներն ըստ տնտեսության ճյուղերի հիմնականում իրականացվել են կոմունալ (19,5%), բնակարանային տնտեսության (18,3%) և տրանսպորտի և կապի ոլորտում (13,1%):

ԼՂՀ-ում 2008–2013 թթ. գյուղատնտեսության ճյուղի տարեկան միջին աճը կազմել է 11,4% (ի տարբերություն դրանց նախորդող հինգ տարիների՝ 2007–2011 թթ., երբ միջին տարեկան աճը կազմել է 8,8%): Նշված ժամանակահատվածում իրական աճի տարեկան ցուցանիշները դրսևորել են անկայուն վարքագիծ, որի հիմնական պատճառը բուսաբուծության արտադրանքի տատանումներն են (–19,7%-ից մինչև 39,4%): Անասնաբուծության արտադրանքի տարեկան ծավալները 2008–2013 թթ. ընթացքում հիմնականում ապահովել են կայուն աճ, որը միջինում կազմել է 5,6%:

ԼՂՀ-ում 2012 թվականին գյուղատնտեսության աճը 23,9%-ով պայմանավորված է բուսաբուծության համախառն արտադրանքի ցուցանիշի 32,8% աճով, ընդ որում՝ նման բարձր աճն ապահովվել է հիմնականում ի հաշիվ հացահատիկի արտադրության, որը նպաստել է բուսաբուծության աճին (աղյուսակ 8.2):

Աղյուսակ 8.3-ում բերված են ՀՀ և ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշները և դրանց աճի տեմպերը 2008–2013 թթ.: Այդ տվյալներից հետևում է, որ 2008–2013 թթ. ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում եղել են զարգացման բավականին դինամիկ ցուցանիշներ, որոնք վկայում են նաև արտաքին աշխարհի հետ ապրանքների և ծառայությունների համապատասխան շուկաների առկայությանը, ինչը նպաստել է տնտեսական աճին:

**Աղյուսակ 8.7. ՀՀ և ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշները 2008–2013 թթ.**

Ցուցանիշները	Երկիր	2. մ.	2008	2009	2010	2011	2012	2013
Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)	ՀՀ	մլրդ. դրամ	3568,2	3141,7	3460,2	3776,4	3981,5	4266,8
Աճի տեմպը		%-ով	106,9	85,9	102,2	104,7	107,2	103,5
Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)	ԼՂՀ	մլրդ. դրամ	87,1	102,3	118,2	135,5	150,0	168,6
Աճի տեմպը		%-ով	114,3	113,1	105,5	109,1	109,9	109,3
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	ՀՀ	հազ. դրամ	1103,3	968,5	1062,7	1155,4	1313,5	1411,9
Աճի տեմպը		%-ով	113,0	87,8	109,7	108,7	113,7	106,8
Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)	ԼՂՀ	հազ. դրամ	623,1	723,7	823,2	936,1	1023,0	1137,9
Աճի տեմպը		%-ով	122,2	116,1	113,7	113,7	109,3	111,2
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	ՀՀ	ԱՄՆ դոլար	3606,1	2666,1	2844,0	3101,8	3269,0	3447
Աճի տեմպը		%-ով	126,4	73,9	106,7	109,1	104,3	104,8

ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	ԼՂՀ	ԱՄՆ դոլար	2036,5	1992,2	2203,1	2513,1	2546,1	2777,9
Աճի տեմպը		%-ով	136,7	97,8	110,6	114,1	101,3	109,1
Դեֆյատոր	ՀՀ	%	105,9	102,6	107,8	104,2	98,4	103,2
Դեֆյատոր	ԼՂՀ	%	107,8	103,9	109,5	105,1	100,7	102,8
Արդյունաբերություն	ՀՀ	մլրդ դրամ	739,3	669,4	824,4	999,0	1120,5	1240,6
Աճի տեմպը		%-ով	101,7	92,4	109,7	113,9	108,8	106,8
Արդյունաբերություն	ԼՂՀ	մլրդ դրամ	25,3	34,1	43,0	45,8	40,9	44,3
Աճի տեմպը		%-ով	111,6	115,6	105,3	100,8	99,2	110,0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	ՀՀ	մլրդ դրամ	628,1	552,1	636,7	795,0	840,4	918,6
Աճի տեմպը		%-ով	101,3	99,5	86,4	113,9	109,5	107,1
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	ԼՂՀ	մլրդ դրամ	31,2	30,7	32,1	39,9	50,3	55,2
Աճի տեմպը		%-ով	125,4	101,1	88,7	120,1	123,9	109,2
Շինարարության ծավալը	ՀՀ	մլրդ դրամ	858,7	579,7	588,8	504,8	469,7	442,3
Աճի տեմպը		%-ով	103,1	62,6	97,5	91,1	100,2	91,9
Շինարարության ծավալը	ԼՂՀ	մլրդ դրամ	25,8	34,5	42,8	43,4	37,9	45,2
Աճի տեմպը		%-ով	124,2	133,5	124,0	101,4	87,4	118,1
Մանրաձախ ապրանքաշրջանառության ծավալը	ՀՀ	մլրդ դրամ	1059,6	1065,5	1162,3	1302,3	1378,0	1454,7
Աճի տեմպը		%-ով	104,4	100,1	100,3	102,0	102,3	101,0
Մանրաձախ ապրանքաշրջանառության ծավալը	ԼՂՀ	մլրդ դրամ	62,5	69,2	81,3	95,4	105,0	113,5
Աճի տեմպը		%-ով	103,2	110,5	108,2	107,3	108,7	103,3
Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ծավալը	ՀՀ	մլրդ դրամ	731,7	737,6	791,2	865,6	972,6	1022,8
Աճի տեմպը		%-ով	113,8	100,9	103,4	106,1	110,8	103,6
Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ծավալը	ԼՂՀ	մլրդ դրամ	11,3	14,5	17,1	15,0	17,2	18,6
Աճի տեմպը		%-ով	128,3	117,1	107,4	108,3	110,2	102,5
Աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	ՀՀ	դրամ	87406	96 019	102 652	108 092	121 374	158967
Աճի տեմպը		%-ով	117,8	109,9	106,9	105,3	105,1	106,5

Աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	ԼՂՀ	դրամ	80480	88768	92736	98453	102777	111580
Աճի տեմպը		%-ով	117,3	110,3	104,5	106,2	104,4	108,6
Պետական բյուջեի եկամուտները	ՀՀ	մլն դրամ	785355,0	689995,1	780439,4	880851,0	939388,1	1066486,9
Աճի տեմպը		%-ով	137,8	87,9	113,1	112,9	106,6	113,5
Պետական բյուջեի եկամուտները	ԼՂՀ	մլն դրամ	19911,7	21250,8	23807,5	25756,4	28755,6	27919,3
Աճի տեմպը		%-ով	171,1	106,7	112,0	108,2	111,6	97,1
Պետական բյուջեի ծախսերը	ՀՀ	մլն. դրամ	810574,5	929108,6	954316,5	986509,2	1001049,7	1024985,2
Աճի տեմպը		%-ով	136,5	114,6	102,7	103,4	101,5	102,4
Պետական բյուջեի ծախսերը	ԼՂՀ	մլն դրամ	50074,7	55098,5	62182,4	67377,0	67343,8	69623,2
Աճի տեմպը		%-ով	162,4	110,0	112,9	108,4	100,0	103,4
Պետական բյուջեի հարկային եկամուտներ	ՀՀ	մլն դրամ	598794,3	503326,5	574064,4	631593,1	682456,8	658624,0
Աճի տեմպը		%-ով	123,8	84,1	114,1	110,0	108,1	96,5
Պետական բյուջեի հարկային եկամուտներ	ԼՂՀ	մլն դրամ	12462,5	13305,6	15122,7	16659,8	18534,5	17884,4
Աճի տեմպը		%-ով	124,8	106,8	113,7	110,2	111,3	96,5
Վարկային ներդրումներ (ընդգրկված չեն ժամկետանց և երկարաձգված վարկերը)	ՀՀ	մլն դրամ	628694	724851	891850	1250404	1527886	1776571
Աճի տեմպը		%-ով	148,9	115,3	123,0	140,2	122,2	116,3
Վարկային ներդրումներ (ներառյալ միջբանկային վարկերը)	ԼՂՀ	մլն. դրամ	17334,2	28994,7	42229,4	59437,1	78927,3	82162,4
Աճի տեմպը		%-ով	170,3	167,3	145,6	140,7	132,8	104,1
Ավանդների գումարը (մնացորդը)	ՀՀ	մլն. դրամ	201939	291619	356325	483592	638349	790227
Աճի տեմպը		%-ով	116,7	144,4	122,2	135,7	132,0	123,8
Ավանդների գումարը (մնացորդը)	ԼՂՀ	մլն. դրամ	6796,9	9113,9	10855,9	13879,0	19762,8	25608,9
Աճի տեմպը		%-ով	134,3	134,1	119,1	127,8	142,4	117,2
Արտաքին առևտրաշրջանառությունը	ՀՀ	մլն. ԱՄՆ դոլար	5483,3	4 031,3	4 790,0	5 479,6	5 694,9	5956,8
Աճի տեմպը		%-ով	124,1	73,5	118,8	114,4	103,9	105,6
Արտաքին առևտրաշրջանառությունը	ԼՂՀ	մլն. ԱՄՆ դոլար	305,1	294,0	348,2	392,7	349,0	328,5
Աճի տեմպը		%-ով	110,0	96,4	118,5	112,8	88,9	94,1

Արտահանում	ՀՀ	մլն. ԱՄՆ դոլար	1057,2	710,2	1 041,1	1 334,3	1 428,1	1480,0
Աճի տեմպը		%-ով	91,7	67,2	146,6	128,2	107,0	107,2
Արտահանում	ԼՂՀ	մլն. ԱՄՆ դոլար	55,1	57,3	74,8	79,6	57,8	59,6
Աճի տեմպը		%-ով	75,9	104,1	130,5	106,4	72,6	103,2
Ներմուծում	ՀՀ	մլն. ԱՄՆ դոլար	4426,1	3 321,1	3 748,9	4 145,3	4 266,8	4476,8
Աճի տեմպը		%-ով	135,4	75,0	112,9	110,6	102,9	105,1
Ներմուծում	ԼՂՀ	մլն. ԱՄՆ դոլար	250,0	236,6	273,4	313,1	291,2	268,8
Աճի տեմպը		%-ով	122,0	94,7	115,5	114,5	93,0	92,3

